

[illegible]

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ
ԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ,
ԵՐԱՆԵԼՈՅՆ
ՄԵԾԻՆ ԱԼԲԵՐՏԻ:

282
Կ-33
175
1961 թ.

Թարգմանեցեալ 'ի վաղնջուց ժամանակաց, 'ի մեծամեծաց վարդապետաց մերոց, 'ի լատին լեզուէ
'ի հայ բարբառ:

Եւ նորոգեալս՝ 'ի լոյս ածեցեալ, և սրբագրեցեալ, ըստ հնոց օրինակաց. և ըստ նախատպին իւրոյ, հոգաբարձութբ և աշխատութբ՝ Մխիթարայ
Վարդապետի Սեբաստացւոյ:

Եւ տպագրեցեալ՝ արդեամբք՝ և ծախիւք, Պարոն Սարգսի, որդւոյ տիրացու Գէորգի Կոստանդինուպօլսեցւոյ:

Ի փառս մեծագոյնս ԱԾ, և 'ի պատիւ ամենօրհնեցելոյ կուսին Մարիամու:

Ի հայրապետութեն Տն Աղէքսանդրու, ամենից Հայոց Կաթուղիկոսի:

Յամի Տն 1715. իսկ 'ի Թուին Հայոց. ռճկդ.
Յուլիսի 22.

* * *

Ի ՎԵՆԵՏԻԿ:

'Ի տպարանի Անտոնի Պօրթօլի:

Հրամանաւ մեծաւորաց:

ԲԱ՛Ն ԱՌ Ը՛ՆԹԵՐՑՈՂՍ

Ի բանիլն Աստուածաբանութեան մեծին Աղեքսանդրի , գոլով քաղաքի բազմաց . նախնիքն մեր՝ ոչ 'ի սէր այլոց գիտութեանց օգտակարից՝ այնպէս՝ և 'ի սէր սորին վառեցան : Եւ 'ի ձեռն բազմաց արդիւնաւորաց աշխատութեանց , հաւատարմաբար՝ և հանճարեղապէս՝ թարգմանեցին զսա , 'ի յունին լեզուէ 'ի հայկական բարբառ , 'ի մեծն Հայաստան , նախ քան զչորեք հարիւր ամ : Եւ անտի օրինակ մեղրածորան , և ամենագով գրքոյս այսորիկ , ծաւալեցաւ 'ի մէջ ազգիս մերոյ : Բայց զի գրագիրք հետևողք , որք 'ի յօրինակեցելոցն՝ օրինակէին , գոլով անհմուտք արհեստի քերթողութեան , և անհոգացեալք , բազմի՛ցս սխալեցան՝ 'ի կէտադրութեան , և 'ի նախադրութիւնս , և մանաւանդ՝ 'ի յառոգանութիւնս , և յուրէք յուրէք՝ 'ի տառս , և 'ի բառս . և մերթ մոռացան և զտողս ոմանս , ոչ և երբեք 'ի զանազան օրինակս , որք մինչ այսօրիկ , իրերաց ոչ համաձայնեին : Եւ անհոգանային յետ գրելոյն՝ սրբագրել զսխալեցեալսն , զի մի՛ կրկնախառք լինիցին , և մանաւանդ՝ զի մի՛ պակասիցին լուսանցք , և տողք գրոցն , և այնու ընդունիցին զբամբասանս : Բայց զի գրեանք Աստուածաբանականի ուսման , գոլով նրբագունեղք , 'ի սակաւուց սխալմանց՝ տառից , կամ առոգանութեանց , զմեծամեծս այլայլութիւնս , և զմթացուցմունս բանից՝ ներընդունին , ըստ օրինակի փափկասնոյ մարմնոյ , որ 'ի սակաւուց ցաւոց՝ մեծամեծ՝ վտանգաւորի . որոյ վասն , և բազումք 'ի յուսուցանողաց՝ կրէին զմեծամեծս դժուարութիւնս , առ հասկացումն սորին : Ուստի յառ տեսեալ զայս՝ մերայնոց բանասիրաց վերապատուեցելոց վարդապետաց , յոգոց հանէին , և բաղձային , զի գտցեալ յումեմնէ բանասիրէ աշխատասիրեալ սրբագրիցի , ըստ հնոց օրինակաց , և ըստ նախատպին իւրոյ , և այնպէս տպագրիցի , որով և առ համայնս տարածիցի : Ընդ որոց՝ բաղձայի և ես՝ յետնեալս ամենից բանասիրաց , Մխիթար Վարդապետ Սեբաստեան , որ 'ի տիս մանկութեան իմոյ , սովիմք վարժեցայ , և խանդակաթ սրտիւ յաւէտ՝ 'ի սէր սորին վառեցայ : Ուստի զկնի բազմանցից ժամանակաց , և 'ի հանդիպման կարեւորութեանց , առիթեցեալ 'ի սիրոյ , յանձն առի աշխատիլ առ սրբագրութիւն սորին, հանդերձ աշակերտաւ իմով՝ ովհաննիսիւ վարդապետիւ սեբաստացւով : Եւ ընդ երկար ժամանակս՝ աշխատասիրեալ մեր՝ հազիւ կարացաք 'ի լոյս ածել , մաքրել 'ի սխալմանց գրչաց , եւ խառնքսել հանդերձ առողջութեամբ , եւ այլովք պիտանաւորօք առ բանն . ըստ որում էին բազմազան հին օրինակքն , եւ մանաւանդ նախատիպն : Բայց զի մի՛ քամահօղք բեղմնաւորաց աշխատութեանց թարգմանչաց սորին գտանիցիմք , զանց արարաք զայնոքիւք ոմամբք , որք ոչ ըստ նորոց քերականութեանց են եդեալք , ի մերացմունս բայից , եւ կամ 'ի յայլս , զի այնոքիւք՝ զօրութիւք բանից ոչ նուազին , այլ մանաւանդ քաղցրաբանութիւք պատճառին , առ յոր վախճան՝ նախնիք մերք եւս թոյլ ետուն , եւ փոխանակ գնելոյ , որոշեցեալ , գոյնաւորեցեալ , լնանեցեալ , եւ այլք նմանք , եդին՝ որոշեալ , գոյնաւորեալ , լցեալ : Եւ փոխանակ գնելոյ , սրբոց գրոց , բարեաց արանց . եդին՝ սուրբ գրոց , բարի արանց , եւ այլք նմանք : Վասն աղաչեմք զընթերցօղ վարդապետսն , զի զնմանատութիւն մեր՝ որ քան առ յայնս՝ անբաւիրս արարացեն , զի ոչ թէ՝ ոչ ճանաչելով զայնպիսին՝ զանցարարաք , այլ՝ զի մի՛ ամբաստանեալք գտանիցիմք , զխոտակս նախնեաց խախտելով , քան զոր չէք յանդգնագոյն , թոյլ թողաք զնա , եւ մանաւանդ՝ մինչ գոյացութիւն բանին , զո՛չ իմն նուազ առ բերէին : Եւ յորժամ որ քան առ բան սրբագրութեան յառաջացաւ գործն , անկարելութիւք ծախից , առ տպագրութիւն սորին , նախաժամանեցին մեզ : Սակայն՝ Աստուած որ առատանէ պարգեւօք , եւ ոչ ընդ վայր հարկանէ զբարի բաղձանս ծառայից իւրոց , շարժեաց զսիրտ պարոն Սարգսի , որդւոյ տիրացու գէորգի Կոստանդինուպօլսեցւոյ , 'ի սէր տպագրութեան սորին , որոյ ծախիւքն տպագրեցաւ , եւ 'ի լոյս ածեցեալ եղեւ : Արդ՝ խնդրեմք 'ի բնաւից բարեսիրաց ընթերցողաց այսորիկ Աստուածաբանականի մատենի , զի արժանի յիշման առ Տէր համարեսջիք զբնաւս զաշխատօղս 'ի սմին , եւ զտուօղս ծախից տպագրութեան , եւ դուք յիշեալք լինիջիք 'ի Քրիստոսէ , 'ի փառս իւր , որ է օրհնեալ 'ի համայնս յաւիտեանս : Ամէն :

Ակն լուսոյ՝ արփին պայծառ,
  Ածայնոց ուսմանցն ճառ:
  խոնարհ մնաց՝, թէ և չէ՛ն վառ,
  լուսաւորման լինի պատճառ:
Իսկ այնք որք են գիտնաց անտառ,
  հպարտութեք ցուցեալք կայտառ:
  տովամ չիջին՝ թէ և են վառ,
  զի ո՛չ ինչ պիղծ՝ է ընդ այս խառ:
Տե՛ս դու եղբայր՝ և 'ի միտ ա՛ռ,
  'ի յուսմանէ մի՛ լինիր սառ:
  խոնարհեցո՛ զմիտս քո յար՝,
  զոչ գիտելեացդ՝ հարց և փորձ ա՛ռ:
Զգործս իմաստնոց, նախ 'ի կի՛ր առ,
  որք տրամադրեն առ յայս՝ նուրբ ճառ:
  պատուեա՛ զգիտնոց արանց կաճառ,
  զքեզ ոչ գիտող յար 'ի միտ ա՛ռ:
Զոր ասացի՝ թէ ըմբռնես,
  արդիւնաբար՝ 'ի գործ ածես:
  լուսաւորեալ զքեզ տեսցես,
  և անդրադոյնս՝ յառաջեսցես:
Բայց թէ 'ի քեզ տրամաբանես.
  և զոր կարծես յայն յենեալես.
  ծանիր զի այս՝ օգուտ չէ՛ քեզ.
  մինչև գիտնոց խոնարհեսցես:
Զի թէ զխոնարհ դուռն ո՛չ տեսցես.
  որով ըզքեզ կոր առնիցես.
  ծանիր զի յա՛ր զարկուցանես.
  զքոյդ գլուխ և վնասես:
Ուստի ջանիւ կրթեա՛ զքեզ.
  'ի կեանս քո ո՛րքան կարես.
  զի հեզ սրտիւ զարգանայցես.
  որ քան զիմաստս յառաջեսցես:
Զի գիտութեն աղբիւրն է՛ հեզ.
  ո՛ղ վարուք իւր ուսոյց մեզ.
  ուստի յայնժամ օգտէ սա քեզ.
  երբ լինիցիս աշակերտ հեզ:
Նա և յաւէտ աղօթեսցես.
  զկոյսն միջնորդ քեզ ունեսցես.
  զի ո՛չ շնորհ ինչ տրի քեզ.
  թէ կոյսն իցէ զքէն անտես:

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՒԱՔՈՒՄՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ,

ԵՐԱՆԵԼՈՅՆ ԱԼԲԵՐՏԻ ՄԵԾԻ· ՌԱԹԻՍՓՕՆԱՑՈՑ 'ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի ԿԱՐԳԷ ՔԱՐՈԶՈՂԱՑ·

Շարակարգեցեալ 'ի եօթն գիրս ։

Յառաջաբանութի Հեղինակին , Առ ընդհանուր գործն ։

Ան զի գերազանցութի՟ Ա՟ծաբանականի ճշմարտութե՟ , է՛ 'նշոյլ վերին ճառագայթի· լուսաւորիչ մտաց , և խրախութի՟ արքունական փափկութե՟ց · յագեցուցանող ախորժակաց ։ Նմին իրի պատշաճ համարեցայ , ժողովել զհամառօտ հաւաքումն, 'ի գրելոց Ա՟ծաբանից մեծամեծաց , որով խորշեսցի երկարաբանութի՟՝ մայրն ձանձրութե՟ ։ Այլ սակայն տացի ճանապարհ՝ և առիթ իմաստնոց՝ , առ 'ի յօրինել զայլովս ։ Վ՟ զի Ա՟ծաբանութի՟՝ է՝ իշխանն և դշխոյ ա՟մ գիտութեց , որոյ այլք արհեստք , իբրև զնաժիշտ ծառայեն ։ Քան զի 'ի բնականաց իրողութեանց զայնս միայն ունու 'ի կիրառու՟մն իւր , յորոց կարասցէ կազմել հայելի ինքեան , 'ի յորում նկատեսցէ զարարիչն ։ Այսէ գիտութի՟ գիտութեց , որ բարձրագոյն քան զա՟մ իմաստասիրական տեսութիս , և վեհ նախամեծար քան զա՟մն , պատուով , և օգտակարութե՟ ։ Եւ քանզի իմաստասիրութի՟ յերիս բաժանի , այսինքն , 'ի բնական , 'ի բանական , և 'ի բարոյական ։ Արդ՝ բնականն՝ ուսուցանէ ճանաչել զստեղծուածս , այլ ոչ զստեղծօղն , և թէպէտ բանականն ուսուցանէ առնել զմարդիկ աքիլեբերան, այլ ոչ զգե՟ն ։ Եւ բարոյականն թէպէտ՝ ուսուցանէ ստանալ զսովորական առաքինութիւն, այլ ոչ զսէրն ։ Իսկ մեր խնամատարութիւն, այսինքն, Ածաբանական Ճշմարտութիւն, ներգործէ զայս ամ· քանզի ուսուցանէ ճանաչել զԱծ, ընդ դիմանալ գինւաց, և բրտնաջան աշխատութբ կրթիլ 'ի գործ սիրոյ ։ Սա՛ է շտեմարան Ածայնոց օշարակաց, հեշտալի քան զխորիսխ մեղու ։ Սա՛ է գանձ, և բաղձալի քան զոսկի, և քան զականս պատուականս ։ Սա է աղբիւր՝ հոսեալ 'ի տեղւոջէն փափկութե, ոռոգել զդրախտն՝ զինուորեալս եկեղեցի ։

Արդ՝ զվարդապետութիւնս զայս՝, բաժանեցուք 'ի գիրս, Է· և զնիւթ սոցա՝ յիւրաքանչիւրում՝ յատուկ ցանկով նշանակեցուք ։ Առաջին յաղագս Ածային բնութեն ։ Բ· յաղագս գործոց ամենագործողին ։ Գ· յաղագս ապականութե մեղաց ։ Դ· յաղագս մարդեղութեանն Քի ։ Ե· յաղագս սրբարարութե շնորհաց ։ Զ· յաղագս զօրութեան խորհրդոց ։ Է· յաղագս վերջին ժամանակաց, և պատժոց չարաց, և վարձուց երանելեաց ։

Արդ՝ եթէ յուրեք սխալեցայ 'ի գիրս յայս՝, թողութե շնորհել ինձ, զի տգիտութբ արարի ։ Իսկ առ որ ուղղապէս՝ առաջնորդեցի, 'ի գովե՛ստ շնորհացն Յի Քի լիցի, որոյ պատիւ, և ամենօրհնելոյ մօրն իւրոյ, հաւաքեցի զնշանագրութիւնս զայս ։

Ցանկ գլխոց, Առաջնոյ գրքոյն, որ յաղագս Ածային բնութեան ։

Նախ թէ՝ է՛ Ած ։
Բ· Յաղագս թէ մի է Ած ։
Գ· Յաղագս թէ մի միայն է սկիզբն ։
Դ· Յաղագս թէ է՛ հայր ։
Ե· Յաղագս թէ է՛ որդի ։
Զ· Յաղագս թէ որդի է՛ պատկեր հօր ։
Է· Յաղագս թէ է՛ ոգի սբ ։
Ը· Յաղագս թէ ոգի սբ՝ է՛ սէր՝ հօր և որդւոյ ։
Թ· Յաղագս թէ ոգին սբ՝ է՛ սէր և պարգև սբց ։
Ժ· Յաղագս թէ 'ի յերրորդութի անձանցն, է՛ միութի էութե ։
Ժա· Յաղագս թէ բազմադիմի է երրորդութիւնն ։
Ժբ· Յաղագս թէ է՛ համահաւասարութիւն 'ի յանձինս ։
Ժգ· Յաղագս զանազանութե, որ 'ի մէջ անձին և էութեանն ։
Ժդ· Յաղագս անչափութե Այ ։
Ժե· Յաղագս անհնութեան Այ ։
Ժզ· Յաղագս անըմբռնութեան Այ ։
Ժէ· Յաղագս անպարագրութեան Այ ։

Ժը. Յաղագս յաւիտենականութեան ԱՅ:
Ժթ. Յաղագս անփոփոխութեան ԱՅ:
Ի. Յաղագս պարզութեան ԱՅ:
Իա. Յաղագս գերազանցութեան ԱՅ:
Իբ. Յաղագս ծանօթութեանց ԱՅ:
Իգ. Յաղագս Ածային անուանց:
Իդ. Յաղագս թէ ԱԾ է՝ անճառելի:
Իե. Յաղագս նախադաղափարացն, և դպրութեան կենաց:
Իզ. Յաղագս յատկացելոց՝ Ածային անձանց:
Իէ. Յաղագս կարողութեն ԱՅ:
Իը. Յաղագս զօրութեան սքանչելեաց:
Իթ. Յաղագս գիտուե ԱՅ:
Լ. Յաղագս նախասահմանութեան ԱՅ:
Լա. Յաղագս նախագիտութեան, և անարգութեան:
Լբ. Յաղագս կամացն ԱՅ:
Լգ. Յաղագս արդարութեան ԱՅ:
Լդ. Յաղագս ողորմութեն ԱՅ:



Տեսլեամբ Սրբոյ Երրորդութեան· որք ըղձային յարքայութեան ։

ՀԱՒԱՔՈՒՄՆ

Աստուածաբանական ճշմարտութեան.

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ.

Յաղագս Ա՟ծային բնութեան:

Յաղագս՝ թէ է՛ Ա՟ծ: Գլուխ Առաջին:

Արդ՝ եթէ է՛ Ա՟ծ, բազում կերպիւ ցուցանի: Քանզի վկայէ զայս՝ ուղղափառ հաւատոյն, խօսին գիրք ս՟բք, համաձայնութիւնք արարածոցս առ նա, զնոյն ցուցանեն, նա և ս՟բք քարոզեն, առեղծուածք աղաղակեն. և բնական առարկութիւն ենթադատէ: Արդ՝ եթէ գոյ Ա՟ծ, հաւատոյն վկայէ, զի հաւատոյն ուղղափառ, հաւատոյ զա՟ծ, հաւատոյ 'ի յա՟ծ, և հաւատոյ Ա՟յ: Իսկ հաւատալ զա՟ծ, է՛ հաւատալ գոլ զնա, և հաւատալ 'ի յա՟ծ, է՛, ընդ հաւատալն սիրել զնա, և սիրելով երթալ 'ի նա, և յօդիլ 'ի յանդամս ն՟ր: Եւ հաւատալ ա՟յ, է՛ հաւատալ բանից ն՟ր: Արդ՝ առաջին, և երրորդն՝ է բարեաց և չարաց. իսկ երկրորդն՝ բարեաց միայն: Քանզի հաւատալ զա՟ծ, և հաւատալ ա՟յ. բարեաց և չարաց հասարակ է, այլ հաւատալ 'ի յա՟ծ՝ յատուկ միայն բարեաց՝ է: Եւ զի Ա՟ծ միայն ունի զկատարեալ գոլ. քանզի ա՛յն է կատարեալ՝ որոյ ոչի՛նչ է արտաքոյ. ուստի զի գոյն մեր՝ ունի ինչ արտաքոյ ինքեան, նմի՛ն իրի, անկատար է։ Զի պակասի մեզ ինչ, որ ՚ի գոյոյն մերմէ արդէն էանց, և կամ դեռևս գալոցէ։ Այլ ա̃ծային գոյն՝ վս զի բովանդակին է՛ համանգամայն, և ոչի՛նչ ՚ի նմա՛նէ է՛ անցեալ կամ հանդերձեալ, վսկ և կատարելագոյն իսկ է։ Երկրորդ՝ գոլ զա̃ծ, խօսին գիրք սբք՝ ըստ սաղմոսին՝ որ ասէ, սաղ. 89. 2. յաւիտենից մինչև յաւիտեանս՝ դուես։ Եւ ելից, որէն՝ առաքեաց զիս. ելից. 3. 14. և յոհան դամասկացին ասէ, եթէ յամ անուանց ասացելոցս զա̃յ, նախկինագոյն է որէնն։ Երրորդ, գոլ զա̃ծ, համեմատութիւք արարածոցս առնա, զնոյն ցուցանեն։ Քանզի այն քան ճշմարիտ գոլ ունի Ա̃ծ, մինչ զի մերս գոլ, նորուն գոլոյն համեմատեալ՝ ոչի՛նչէ, վասն զի Ա̃ծ իւրով ներկայական գոլովն, ա̃մ իրողութեց տայ զգոլ, այնպէս՝ մինչ զի թէ արտաքարկեցէր զինքն ՚ի յէից, ոչ եղեալք են յոչնչէ, այնո̃ ոչինչ դառնային բնաւքն։ Ուստի ասէ գրիգոր, եթէ ա̃մ մարդկայինք, որք արդարք, և գեղեցիկք, համեմատելով՝ Ա̃Յ արդարութեն. և գեղեցկութեն. ո՛չէն արդարք, և ոչ գեղեցիկք, նա և ամենևին իսկ ոչեն։ Չորրորդ՝ գոլ զա̃ծ, սբք քարոզեն, քանզի ասէ անսելմոս, համառօտմբ զա̃ծ գոլ այնպիսի իր, քան զոր ոչի՛նչ մեծագոյն կարէ մտածիլ։ Ա Եւ դիոնէսիոս ասէ, թէ գոլ ամենեցուն է՛ վեհագոյն գոյացական ա̃ծութիւն, այլ զայս իմա պատճառաբար, և ոչ ձևաւորէն։ Դարձեալ ասէ օգոստինոս, թէ ա՛յն ունի առաւել գոլ, որ կարի՛ իմն հեռանայ ՚ի յոչգոլոյն, այսինքն, որ ո՛չ ունի գոլ՝ զկնի գոլոյ՝ և ոչ գոլ՝ զկնի ոչ գոլոյ, նա և ո՛չ կարէ մտածիլ ոչ գոլն։ Հինգերորդ, գոլ զա̃ծ՝ ա̃մ առեղծուածք աղաղակեն, զի ա̃մքն կերպիւքն իւրեանց ասե՛ն, նա՛ արար զմեզ, և ո՛չ մեք զմեզ, վասն զի ինքն ա̃ծ է՛ ձայն բնութեան. որով ա̃մ գեղեցիկք, Բ վկայեն զնմանէ, և ս գեղեցկագոյն գոլ. քաղցունքն՝ և ս քաղցրագոյն, բարձունքն՝ և ս բարձրագոյն, մաքուրքն՝, և ս մաքրագոյն, կարողքն՝ և ս կարողագոյն, և այլք այնպիսիք։ Քանզի ո̃չ ՚ի վերին դաւառն, ա̃ծ է՛ հայելի, ՚ի յորում լուսաւորյլին առեղծուածքս, այնպէս անդրադարձեալ ՚ի ճառագայթի կենդաղոյս, առեղծուածքս՝ են հայելի, որով ա̃ծ ճանաչի, ըստ

առաքելոյն որ ասէ , այժմ տեսանեմք ընդ հայելի : 1. կորն.
Եւ դարձեալ՝ աներևոյթքն այ՟ , իմացեալ ճանաչին 13. 12.
արարածովքս : Վեցերորդ , գոլ զա՟ծ , բնական առար- հռոմ. 1.
կութին ենթադասէ , որ պատճառելեաւն՝ ածէ ՚ի 20.
ճանաչումն պատճառին : Քան զի ամ՟ ստեղծեցեալ , կարօտանայ այլում ումեք , զի իցէ , և նոյնն՝ դարձեալ այլում , զի իցէ , և ըստ այսմ , կամ յառաջեացի յանհունս , և կամ լինիցի անդ՝ բոլորակ , և կամ հասանիցի առ իմն , որ ոչ իցէ պատճառեցեալ , այլ ամենեցունց պատճառ : Իսկ բոլորակն՝ ոչ լինի յեղական իրս , քան զի հարկ լինէր , զի մի և նոյնն՝ լինիցէր ինքեան՝ առաջին , և վերջին , որ է անկարելի : Դարձեալ՝ ոչ լինի յառաջանալ ՚ի յանհունս՝ . զի բնութի փախչի ՚ի յանհնոյ , զի և հասարակութիւն ստեղծուածոյս ամ՟ է՝ պատճառեցեալ , թէ իցէ հունաւոր , և թէ իցէ անհուն : Ապաուրեմն , զի իցէ՛ , կարօտանայ այլում , որ լինիցի արտաքոյ հասարակութեան պատճառելեացս , և այս է ա՟ծ՝ յորմէ արտահոսին ամենեքեանք :

Յաղագս թէ մի է՛ Ա՟ծ : Գլ : Բ.

Մի գոլ Ա՟ծ , ցուցանի նախ վկայութբ՟ սբ՟ օրի. 32.
գրոց , քան զի ասէ երկրորդ օրէնքն , 39. Ա
տեսէ՛ք , զի ես եմ միայն , և չիք այլ
ա՟ծ : Եւ առաքեալն ասէ՝ մի է՛ ա՟ծ , և եփես. 4.
մի հաւատ , և մի մկրտութի : Եւ պօէ- 5.
ցիոս ասէ , թէ կարելի է ասել , և ա միադոյն է . քանզի այն է միշտ , և միով եղանակաւ , որ ոչ ունի ՚յինքեան , եթէ ոչ զինքն : Եւ այն է՛ ճշմարիտ մի , ՚ի յորում ոչ գոյ թիւ , և ոչ ինչ է այլ ՚ի նմա , բայց յայնմանէ որ է՛ : Նոյնն , ցուցանի և առարկութբ՟ , զի պարզ տեսակ ածութեն՟ . եթէ ոչ լինէր մի և նոյն թուով , այլ հաղորդելի բազմաց , որպէս տեսակ սոկրատի , և պղատոնի , արդէն զոյգիւր յաւելմամբ ինչ՝ առ գոյն եղական . և ըստ այսմ բաղադրիւր ընդ այլում , և ոչ լինէր պարզագունեղ , որ է սուտ : Քանզի ծայրագոյն բարւոյն , ոչ կարէ լինել յաւելումն ինչ՝ ՚ի գոլոյն բոլորովին պարզ : Արդ՝ գիտելի է , զի մին ըստ այնմ որ սկիզբն է թուոյ , ոչ պատշաճի Ա՟Յ . իսկ ըստ այնմ ,

որ անդրադառնայ ընդ էակին, առաւել յարմարի այ՟;
քան այլոց ստեղծեցեալ իրի. վասն զի մինչ մին է՛ անբաժանելի
յինքեան, և բաժանեալ յայլոց. այս՝
միայն 'ի յած՟ կատարելագոյն գտանի. քան զի 'ի յայլսմ՟,
իմանի բաժանումն ինչ, կամ ներգործութե՟,
Բ և կամ զօրութե՟ : Չի յորժամ միութիւն որ է սկիզբն
թուոց, ասի զայ՟, զոչ ինչ դնէ, այլ պակասեցուցանէ՝
ոպ՟ ասեն ոմանք : Ուստի ընդ ասելն, թէ մի է
Ած, իմացեալ լինի թէ ոչ են բազումք : Այլ արդ՝
ասի ինչ ոչ լինել մի, երեք կերպիւ : Նախ, բազմութե՟
տեսակաց, ոպ՟ հրեշտակք, և աստեղք, որք են մի
սեռիւ, բայց զանազանին տեսակաւ : Երկրորդ՝ փոփոխմամբ,
ըստ այնմ որ մի մարդ՝ փոփոխի բազմադիմի.
զի երբեմն հիւանդ է, և երբեմն առողջ,
երբեմն մեծատուն, և երբեմն աղքատ : Երրորդ՝
անձամբ՝ ըստ նոյնոյ տեսակի, ըստ այնմ որ մի ոմն
մարդ՝ է՛ բազում 'ի յորդիս, որք սերին 'ի նմանէ :
Այլ ոչ որք յասացելոցս է՛ 'ի յած՟. Քան զի վս՟ առաջնոյն
ունիմք զընդդէմն, 'ի դաւանութե՟ աթանասի, այս է
հաւատ ուղղափառ, զի զմի ած՟ յերրորդութեան, և
սաղ. զերրորդութի՟ 'ի միութե՟ պատուեսցուք : Վասն երկրորդին.
101. 27. 'ի սաղմոսն՝ որ ասէ, նոքա կորնչին և այլն:
Եւ բեռնարդոս ասէ. ոչ 'ի ժամանակէն ունի ած՟
զյայլայլումն, և ոչ 'ի գոյացութե՟ զյայլայլութի՟ : Եւ
լեօն պապն ասէ՝ պարզ բնութեն ածայնոյ, ոչինչ յաւելուլ
կամ պակասել կարէ : Վս՟ երրորդին՝ դարձեալ
սաղ. 80. 'ի սաղմոսն որ ասէ, ոչ եղիցի 'ի քեզ ած՟ նոր, այսինքն,
10. առ ժամայն կազմեալ կամ ծնեալ : Արդ զածութին
երեք ազգ մարդիկ ամբարիշտք բազմացուցանեն,
նախ ամ՟ կռապաշտք, ոպ՟ ասէ սաղմոս. ամ՟
սաղ. 95. կուռք հեթանոսաց դևքեն : Երկրորդ՝ կախարդքն,
5. որք տան զզօրութի՟ ձևոց ոմանց՝ և այսպիսեաց յիմարութեց :
Երրորդ՝ մարմնասէր մարդիկք. ըստ որում,
որովայնամոլք պաշտեն զորովայնն, ըստ առաքելոյն.
փիլիպ. 3. որոց ած՟ որովայնն է : Եւ ագահք՝ որք 'ի վեր քան
19. զամ՟ սիրեն զարծաթ, ուստի ասէ առաքեալն, արծաթսիրութի՟,
եփես. 5. որ է երկրորդ կռապաշտութի՟ :
5. Ապաուրեմն է՛ 'ի յած՟ ճշմարիտ միութի՟, վս՟ պարզութեն,
եզականութեն, և անփոփոխութեանն, և վս՟
նմանութե՟ ստեղծական միութե՟, զի ոպ՟ միութին ոչ
յումեքէ լինի. և ամ՟ բազմութի՟ 'ի նմանէ արտահոսի.
այսպէս ած՝ ոչ յումեքէ, և ամ՟ 'ի նմանէ :

Դարձեալ՝ ո՟պ միութիւն՝ յինքենէ ծնանի զմիութիւն. այսպէս ա՟ծ հայր, ծնանի յինքենէ զայլ ինքն, ո՟պ ասէ օգոստինոս, այսինքն, զայլ նման ինքեան, և կամ զայլ յինքենէ, այսէ զորդին: Եւ գիտելի է՝ զի ա՟ծ անունն՝ առեալ լինի երեք կերպիւ, այսինքն, բնականաբար, նմանաբար, և կոչմամբ: Ըստ առաջնոյ կերպին՝ միայն ա՟յ յարմարի. և ըստ երկրորդին՝ բարի մարդկանց, որք են հաղորդակիցք ա՟ծային բարեաց, Ելից. 7. 1 ՚ի ձեռն նախախնամական շնորհաց. կամ ուսմամբ, կամ առաջնորդական իշխանութ՟բ. կամ կարողութ՟բ սքանչելագործութ՟ե. ըստ սաղմոսին որ ասէ՝ Ես ասացի թէ ա՟ծք էք: Իսկ ըստ երրորդին, Սաղ. 81. 6. ասին ա՟ծք կուռքն. այսինքն, անուամբ միայն, զի իր անուանն, այսինքն, ա՟ծութիւն ոչ պատկանի նոցին: Եւ ըստ առաջնոյ կերպին՝ անունս այս՝ ա՟ծ ՝ ոչ ունի զբազմաւորական ըստ ինքեան. մինչդեռ միայն մի ա՟ծ ճշմարիտ, և ոչ ա՟ծութիւն ընդունի զտարբերորոշումն. Իսկ ըստ երկրորդին, և երրորդին, ունի զբազմաւորական:

Ցաղագս թէ միայն՝ մի է՝ սկիզբն: Գլ. Գ.

Որպէս մի է ա՟ծ, այսպ՟ս՝ մի միայն է սկիզբն, որ ցուցանի բազում առարկութեամբ: Նախ՝ այսպէս, քանզի եթէ են երկու Ա սկզբունք, այսինքն, մինն գերագոյն բարի, և միւսն ծայրագոյն չար, կամ հաղորդին ՚ի կայանալն ըստ ինքեան (ո՟պ սոկրատէս՝ և պղատոն, եթէ համանգամայն են, հաղորդին ՚ի գոլն) կամ ոչ. եթէ ոչ, ապա ուրեմն մին ՚ի նոցանէ, լինի էակ այլով, և ըստ այսմ՝ ոչ լինիցին երկու սկզբունք: Եւ եթէ հաղորդին՝ մինչ կայանալն ըստ ինքեան իցէ՝ բարի. իսկ չարն՝ իցէր առանձին չար՝ եթէ ոչ ունիցէր զայն բարի, ուրեմն ոչէ ծայրագոյն չար. վասն զի եթէ ունիցէր զըստ ինքեան գոլ, այս գոլս՝ որ է բարի. ոչ թողլ տայր գոլ ծայրագոյն չար: Երկրորդ՝ չորք իրք գտանին ՚ի ստեղծուածս. այսինքն, բազմութ՟ի. Բ կարգ, անկատարութ՟ի, և կապակցութ՟ի, և ըստ իւրաքանչիւրոց սոցին, համառօտ՝ գոլ մի սկիզբն. քանզի ա՟մ բազմութ՟ի, ըստ գիտնականի, ունի զսկիզբն ՚ի միութէ , ապաուրեմն՝ հարկէ զի մի լինիցի սկիզբն ամ բազմութե : Դարձեալ՝ ամ կարգ մինչ ունի զառաջին, և զվերջին , պիտոյէ զի ունիցի զմի սկիզբ : Դարձեալ ըստ պօէցիոսի , ամ անկատար՝ առնու զսկիզբն 'ի յումեմնէ պարզաբար կատարեցելոյ , և այսէ ած մեր : Դարձեալ՝ ամ կապակցութի զանազանից , ունի զմի իմն սկիզբ՝ կապակցութե իւրոյ , և պահպանութե , և այնէ ած : Դարձեալ՝ եթէ լինէր մի ծայրագոյն չար , յորմէ եկանէին ամք չարք , հետևիւր՝ զի Քս ըստ մարմնոյն , լինէր յայնմանէ սկզբէ , վասն գոլոյն 'ի նմա՝ չար պատճոյն , որ է կարի իմն զազրալուր , ապաուրեմն յայտէ յասացելոցս . թէ ած է նախիկին , և ծայրագոյն , և մի միայն սկիզբ . ըստ պատճոյ յառաջնակայութե , և արժանաւորութե , և ըստ պատճառութեան :

Յաղագս թէ է՛ հայր : Գլ. Դ.

Ա ՅԱւիտենական գոլ հայր , ցուցանի այսու , քանզի ած է՛ ամենակարող ամենիմաստ , և ամենաբարի , կարէ գիտէ , և կամի զինքն գերագոյնապէս հաղորդել , իսկ այս է՛ տալ այլում զէութի մեծութե իւրոյ , ապաուրեմն ած հայր , 'ի յաւիտենից ծնաւ զորդի հաւասար իւր , որում և հաղորդեաց իսկ զէութի ածութե իւրոյ : Զի ասէ Տր , 'ի ձեռն եսայեայ , ես որ պարգևեմ զծնունդ այլոց , ես ինքն ամո՛ւլ լիցեմ , իբրու ասիցէ , ո՛չ : Եւ հայր բազում օրինակաւ առեալ լինի , քանզի նախ ասի հայր , վն յաւիտենական ծննդեանն , ըստ եսայեայ որ ասէ , թէ զազգատոհմն նր ո՞ պատմեսցէ : Երկրորդ՝ ըստ նախասահմանութե , յեփեսաց . ա . շնորհք ընդ ձեզ , և խաղաղութի , յայ հօրէ , որ նախասահմանեաց զձեզ 'ի յորդեգրութի որդւոյ : Երրորդ՝ ստեղծմամբ , ըստ այնմ որ ասէ . բ . օրինաց , ո՛չ սա ինքնէ հայր քո , որ ստացաւ զքեզ՝ արար , և ստեղծ . արար ըստ մարմնոյ , և ստեղծ ըստ հոգւոյ , և ստացաւ ըստ երկոցունցն : Չորրորդ՝ փրկութե , ոպ ասէ եսայի , դու Տր հայր մեր , դու Տր փրկի՛չ մեր : Հինգերորդ՝ խորհրդական վերստին ծննդեամբ , ոպ ասէ պետրոս , օրհնեա՛լ է ած , և հայր՝ որ վերստին ծնաւ զմեզ : Վեցերորդ՝ ու-

կողոս 2. 1.

եսայ. 66.9.

եսայ. 53.8.

2. օրին. 32.6.

եսայ. 33.22.

1. պետր. 1.3.

ուս

ւումամբ հաւատոյ, յորժամ ա՟ծ գլուխ, ետ նոցա իշխանութիւն որդիս ա՟յ լինել ։ Եօթն երորդ՝ շնորհօք որդեգրութեան, ոչ առէ առաքեալն, առէք զհոգի որդեգրութեան, որով աղա՛ ։ Ութերորդ՝ պարգեւօք փառաց, ոչ առէ գաղատացւոց, այսու հետեւ՝ չես ծառայ, այլ՝ որդի, եւ ժառանգ ․ այսինքն, ներդործութեամբն ա՟յ ․ զի գործք մեր՝ առաւել արժանաւորին յաւիտենական կենաց ա՟մ՝ քան մեզ ։ Հռով. 8. 15. Գաղ. 4. 6.

Արդ՝ առաջին եղանակ հայրութեան, առեալ լինի անձնաւորաբար, եւ այս՝ միայն պատկանի անձին հօր․ իսկ չորրորդ կերպն ․ այսինքն, փրկութ̃ի, կրկնակի առի, մ̃ զի կրկին կերպիւ առի որք պատճառ փրկութեան, նախ՝ նախկնական արարողութ̃ի, եւ այսպէս յարմարի բովանդակ երրորդութ̃ե ։ Երկրորդ՝ պաշտօնական արարողութ̃ի, եւ ըստ այսմ, միայն ք̃ի պատշաճի, որ փրկեաց զմեզ մահուամբ իւրով ։

Իսկ այլ ա՟մ եղանակք՝ ձնհաւորին համանգամայն երից անձանց, քանզի անբաժանելի է գործ երրորդութեան, մի թէ 'ի յայնց եղանակաց, յարմարեսցի ումեմն 'ի յանձանց վերաբերութ̃ի ։ Արդ՝ ծանիր յաղագս ծննդեանն զորս նախադասութիս, որով կարասցես տեսանել, եթէ ա՟ծային էութիւն ծնանի, թէ ծնեալ լինի ։ Առաջին՝ է այս ․ էութի ծնանի զէութի․ երկրորդ՝ էութի ծնանի զանձն ․ երրորդ՝ անձն ծնանի զէութի․ չորրորդ՝ անձն ծնանի զանձ ։ 'Ի նախադասութեանցս այսոցիկ, առաջին երեքեանն սուտեն, իսկ չորրորդն, ճշմարիտ է ․ քանզի է՛ կանոն 'ի յաստուածաբանութ̃ե, թէ ա՟ծային էութի, ոչ ծնանի, եւ ոչ ծնեալ լինի, բայց միայն ասելի է, թէ հայր զօրութ̃ի էութեան կայացելոյ յինքեան ծնանի, եւ թէ որդւոյ ծննդեամբ հաղորդի էութին, ոչ եւ ոդւոյն սրբոյ բղխմամբ ։ Բ

Յաղագս թէ է՛ որդի ։ Գլ. Ե.

ԲԱնյի են հաստատնչականք՝ հայր եւ որդի․ նոյն առարկութ̃ի ցուցանի զօր որդին յաւիտենական, որով եւ ցուցանի զօր հայր յաւիտենական ։ Դարձեալ յա՟մ եղողութիս, եւ կատարելագոյն է ծնունդն, զի ամենեւին նմանեցուցանէ զծնեցեալն իւրում

խորում ծնողին , զոր ոչ առնեն այլք ելողութիւնք :
Եւ արդ՝ զի ամենառատ աղբերն բարութեան յարմարի
կատարելագոյն բղխումն , յայտ է զի Հայր որ է
աղբիւր բարութե , ծնանի զՈրդի հաւասար ինքեան,
որում և հաղորդէ իսկ զլրումն մեծութեան իւրոյ :
մատ. 3. Եւ գիտելի է , զի չորս կերպիւ ասի ոք որդի Այ ,
17. նախ , շնորհօք միութեան 'ի յանձն , ոպ մարդկութին
ղուկ. 2. 'ի Քս : Երկրորդ՝ ճշմարտութբ ծնընդեանն , որպէս
49. Քս ըստ այսմ, որ է Ած : Երրորդ՝ որդեգրութբ ,
գաղա. ոպ մեք , և ընտրեալք Այ : Չորրորդ՝ ստեղծմամբ ,
4. 5. ոպ իւրաքանչիւր արարածք : Արդ՝ զՈրդւոյն Այ, ասէ
եբր. 1. աթանաս 'ի տրամաբանութեան , որ ընդդէմ արիոսի ,
3. եթէ նա ասի միտք , որով ամք խորհեցեալք լինին :
իմաս. 9. Իմաստութի , որով խորհեցեալքն կարգաւորին :
9. Զօրութի , որով կարգաւորեցեալքն կատարին:
յօհան. 1. Բան՝ որով կատարեալքն վիպասանին , լոյս , որով վիպասանեալքն
14. պայծառանան : Արդ՝ Որդին ասի իմաստութի
իմաս. 8. Հօր , ոչ զի իցէ Հայր իմաստուն՝ ծնեցեալ
8. իմաստութբն , այլ՝ զի ծնաւ զՈրդին , առ որ վերաբերի
սաղ. 103. իմաստութիւն , ուստի ասի զՀօրէ , զամ ինչ
24. իմաստութբ արարեր , այսինքն ընդ իմաստութեն ,
որ է Որդի , քանզի անբաժանելիք են գործք երրորդութեան
առարտաքս : Արդ՝ գործիականս, թեամբ,
ասէ զՈւնելն Որդւոյ զՀեղինակութի 'ի Հօրէ , զի զայս
ինչ՝ ունի 'ի Հօրէ , որ ստեղծանէ զիս , քանզի հաստատակաբար
ճշմարիտ է , զի զորինչ ունի անձն որդւոյ ,
կամ ներգործէ , կամէ՝ , ունի 'ի նմանէ., յորմէ է՝ :
Արդ՝ թէ ոպ է՝ Որդի 'ի Հօրէ , ծանիր , զի
նախադրութիս այս , 'ի , հինգ կերպիւ առեալ լինի ,
նախ՝ նշանակէ զպատճառական պատճառն , ոպ մինչ
ասի , Քս յղացեալ 'ի Հոգւոյն սրբոյ: Երկրորդ՝ զնիւթական
պատճառն , ոպ յորժամ ասի , թէ Քս ծնաւ
'ի կուսէն : Երրորդ՝ նշանակէ զնոյնութի էութե ,
ոպ յորժամ ասի , Որդի ծնեալ 'ի Հօրէ :

Չորրորդ՝ նշանակէ զփոփոխումն գոյացութեան , ոպ
յորժամ ասի , մարմինն Քի լինիլ 'ի հացէ :

Հինգերորդ՝ նշանակէ զկարգ , և այնպէս ասի , ստեղծուածս
լինիլ յոչնչէ , այսինքն , ունել գոլ 'ի ոչ գոլոյն :

Յաղագս թէ որդին է՛ պատկեր հօր։ Գլ. Զ։

Արդ՝ եռակի է պատկեր, այսինքն, համասարութեամբ, նմանութեամբ, և ցուցմամբ։

Ըստ առաջնոյ կերպի՝ որդին է՛ պատկեր
հօր. ըստ երկրորդին, մարդն եղեալ է
առ պատկեր այ՟. կամ ՚ի պատկեր այ՟. Ծննդ. 1.
ըստ այնմ որ ասէ՝ արասցուք մարդ՝ ըստ 26.
պատկերի մերում։ Ըստ երրորդին, Կողոս. 1.
աշխարհս ասի հայելի ստեղծողին, ըստ առաքելոյն, 15.
այժմ տեսանեմք ընդ հայելի օրի։ Արդ՝ ծանիր, զի
ասի պատկեր առնչաբար առ յայն, զնմանութիւն որոյ
կրէ, և առ ՚ի նմանիլ որոյ, է՛ արտաբերեալ։

Իսկ այս հանգիտալի կենդանաբար, կամ որքան առ տե-
սակ, և ՚ի նշան տեսակին, և ըստ այսմ պատկեր մար- Ա
դոյ է՛ ՚ի յորդւոջ իւրում, որ նմանի նմա ՚ի ձեռն մարդկայնոյ տեսակի, և ՚ի ձեռն ձևոյ, և այս է կատարեալ պատկեր։ Կամ որ քան առ նշանն միայն, և ոչ առ ճշմարտութիւն տեսակի, ոպ՟ պատկեր մարդոյն ՚ի յարձանոջ, և այս է անկատար պատկեր։

Նախկին եղանակաւ, որդին է՛ պատկեր հօր, որպէս
՚ի բնութեան հաղորդեալ։ Երկրորդիւ եղանակաւ, Իմաս. 7.
պատկերն այ՟ է՛ ՚ի մարդն, թէպէտ նուաղ կատարեալ։ 26.

Ապա է՛ պատկեր՝ ոչ առ պատկեր, ոպ՟ որդի։

Քանզի նախադրութիւս այս, առ, ասէ զտարախացութիւն, ՚ի մէջ պատկերացելոյն, և պատկերողին, այլ այս ոչ անկանի ՚ի յորդին, ուստի բարւոք ասացեալ լինի պատկեր հօր, բայց ոչ առ պատկեր։

Եւ է՛ պատկեր առ պատկեր, ոպ՟ մարդ, և հրեշտակք. և է՛ ինչ, ոչ պատկեր, և ոչ առ պատկեր, որպէս աշխարհս՝ որ յատկապէս ոչ ասի պատկեր, այլ հետք ստեղծողին, զի թէպէտ՝ զերրորդութիւն ցուցանէ, սակայն ոչ նմանի, նա և ոչ է ընդունակ նր՟, ոպ՟ մարդն։ Սակայն զի աշխարհս է՛ արտաբերեալ առ պատկերն այ՟ անյատկապէս, զի ած՟ ոչ ունէր զայլ ինչ նախագաղափար որոյ նմանութիւն առնէր զստեղծուածս, բայց միայն զինքն։ Արդ՝ է՛ պատկեր ծնեալ ոպ՟ որդի, և է՛ պատկեր ստեղծեցեալ, ոպ՟ մարդ, և հրեշտակք. և է՛ պատկեր արարեալ, ոպ՟ պատկերն արամաղդայ, որ զնոյն ցուցանէ։ Յայտ է յասացելոցս, զի լինել պատկեր յարմարի ստեղծողին և

ստեղծուածոյն ։ Ստեղծողին, զի յարմարի որդւոյ, զի է՛ պատկեր հօր · իսկ ստեղծուածոյ մարմնաւորի, նաեւ հոգեւորի, այլ եւ բաղադրելոյ ։ Այլ եւ յատկա-
կող. 1. 15. պէս խօսելով, ասի թէ մարմնաւոր ստեղծուածն է հետ ստեղծողին ։ Որպէս ասէ առաքեալն, աներ-
հռոմ. 1. 20. եւոյթք այ երեւելի արարածովքս իմացեալ տեսանի ։ Արդ նախադիրս այս, զք, ոչ ասէ զպատրաստական մէջն, ըստ այնմ որ ստեղծուածն իմացեալ լինի 'ի յինքեան, այլ զյորդորականն, ըստ այնմ որ ստեղծուածն է՛ նմանութի ստեղծողին · զի ոչ պատրաստէ առ 'ի ճանաչումն ստեղծողին, քան զի ըստ այսմ կերպի առաւել արգելոյր զճանաչումն · եւ այն զի 'ի մէջ ստեղծողին, եւ ստեղծուածոյն, մեծագոյն լինի աննմանութի, քան նմանութի ։ Իսկ հոգեւոր ստեղծուածն՝ ասի նմանութի ստեղծողին, որպ ասէ եզե-
եզեկ. 18. 12. կիէլ, դու կնիք նմանութե · եւ այս մնկ, զի 'ի հրեշտակս վս պարզութեն՝ յայտնագոյնէ նմանութիւն առ ած, քան 'ի մարդն ։ Իսկ բաղադրեալ ստեղծուածն,
ծննդ. 1. 26. այսինքն, մարդ՝, ասի պատկեր այ, ըստ այնմ, արասցուք մարդ ըստ պատկերի մերում, եւ այս նմին իրի · զի 'ի մարդս՝ բազում գտանի պատկեր երրորդութե, քան 'ի հրեշտակս, եւ ըստ այսմ առաւել ասի մարդս պատկեր երրորդութե քան զհրեշտակս ։

Այլ որդին այ ունի զերիս գերազանցութիս, որպէս ցուցանէ առաքեալն ասելով առ եբրայեցիս, որ է
եբրայ. 1. 3. ճառագայթ փառաց, եւ նկարագիր գոյացութե նորին, կրող զամ բանիւ զօրութեան իւրոյ ։

Զնախկինն նկատմամբ առ հայր, յորմէ ծնանի իսկ, եւ այսու է՛ ճառագայթ փառաց ։ Քանզի ըստ դիոնէսիոսի, է՛ աղբիւրական նշոյլ, յայտնելով 'ի յինքն զփառս հայրական ։ Զերկրորդն, նկատմամբ առ ոգին սբ, զոր բղխէ յինքենէ՝ (եւ ըստ այսմ է՛ նկարագիր գոյացութե հօր) զի ոգին սբ՝ է՛ այլ անձն 'ի նմանէ, եւ բղխի յորդւոյ, որպ 'ի հօրէ, զոր ոչ էառ ոգին սբ 'ի հօրէ՝ որպ որդին ։ Զերրորդն՝ նկատմամբ առ ստեղծուածս, որ յառաջածի նովաւ, եւ ըստ այսմ կրէ զամ բանիւ զօրութե իւրոյ ։ Արդ՝ վս առաջնոյն, ասի որդին բան հօր, զի կատարելապէս խօսի զբարութի, եւ զծայրագոյն առատաբաշխութի հօր, զի զինչ կամեցաւ ունել · զոր ոչ հաղորդէր որդւոյ իւրոյ ։ Այս է բան՝ գոյացականաբար՝ եւ յաւիտենականապէս ծնեալ. ժամանակաբար խօսեցեալ 'ի մար-

դագարէից, և յառաջելոց քարոզեալ. 'ի հրեշտակէն՝ 'ի մարմնառութե՟ աւետեալ ։ Վ՟ն երկրորդին՝ ասի որդին պատկեր հօր ։ Քանզի թէպէտ երեք անձինքն են հաւասարք 'ի յաւիտենականութե՟, պատուով, և կարողութե՟, սակայն՝ որդին առաւել ասի պատկեր հօր, քան զոգին սբ. քանզի ոչ միայն ունի զհամանմանութի՝ 'ի ներքս ընդ հօր 'ի նոյնութի էութե՟, որպ ոգին սբ, այլ և արտաքոյ՝ ընդ հօր, այսու, զի 'ի նմանէ որպ 'ի հօրէ, բղխի ոգին սբ, որով և ունի զհամանմանութի, այլ 'ի ոգւոյն սրբոյ ոչք ։

Քանզի ըստ բանի իմանալոյն, նկատեմք այսպիսեաց առնչութեց, են արտաակայացեալք, զի առաւել են 'ի յումեմնէ, քան 'ի յումեմնում ։ Քանզի իմացեմք առնչութեց՝ նկատէ առ այս, առ յոր վերաբերի իմն, քան զի եթէ ոչ ունիցիմ զհայր, ոչ եմ որդի, և հակադարձաբար ։ Վ՟ն երրորդին, ասի որդին զօրութի հօր, ըստ առաքելոյն, Քս՟ այ՟ զօրութիւն և այ՟ իմաստութի ։ Նա և գտանի պատկեր երրորդութե՟ 'ի մեզ. այսինքն. 'ի յիշողականն 'ի յիմացականն. և 'ի կամքն. կամ 'ի միտքն. 'ի ծանաչումն, և 'ի սէրն, 'ի յորս կարգաւ, հօր և որդւոյ, և ոգւոյն սրբոյ՝ նմանին ։ Բ 1.կոր. 1.24.

Յաղագս թէ՝ ոգի սբ. Գլ. Է.

ԵՐկին է եկումն յաստուածայինս, մինն ըստ կերպի բնութեան, և այս է ծնունդ, ըստ որում որդի է՝ 'ի հօրէ ։ Իսկ միւսն ըստ կերպի կամաց. և այս ասի բղխումն յառաջացելօրէն, իսկ յատկապէս ասի փչումն, ըստ որում ոգին սբ է սէր, 'ի հօրէ և 'յորդւոյ ։ Իսկ մինչ ասի եկումն այս՝ ըստ կերպի կամաց, զի ոգին սբ՝ է սէր, և սէրն՝ է՝ ըստ կամաց ։ Արդ՝ ոգին սբ բղխի 'ի հօրէ միջաբար, և անմիջաբար ։ Միջաբար՝ զի որդին փչէ զնա. և զայս ունի որդի 'ի հօրէ. և անմիջաբար՝ զի և ինքն հայր փչէ զոգին սբ ։ Ա Բ

Յաղագս թէ ոգին սբ է՛ սէր հօր և որդւոյ ։

Գլ. Ը.

Ոգին սբ ասի սէր այ, և այս եռակաբար, այսինքն, էականապէս. անձնաւորաբար. և նախադաղափարօրէն ։

Արդ՝ էականապէս ասի ոգին սբ սէր, ըստ այնմ որ ինքն ընդ հօր և ընդ որդւոյ՝ է մի ած. յոհ. 16. 15. զի երեքեանն ըստ որում մի են էութբ, սիրեն զիրեարս էական սիրով, յոհ. 15. 26. որ յատկանայ ոգւոյն սրբոյ ։ Իսկ անձնաւորաբար ասի ոգին սբ սէր, ըստ այնմ որ նա է կապակցութի հօր և որդւոյ ։ Ա Զի հայր և որդի սիրեն զիրեարս, բղխեալ 'ի նոցունց սիրովն, որ ոչ է հայր, և ոչ որդի, այլ ոգի սբ ։ Զայսմանէ կապակցութէ, ասէ օգոստինոս, է՛ անճառելի կապակցութի իմն 'ի յերրորդութեան այն, ոչ ծնեալ, այլ ծնողին՝ և ծնելոյն քաղցրութի, մեծաւ առատութբ լիապէս հեղեալ յարարածս, ըստ ընդունակութե նոցին ։

Իսկ նախադաղափարօրէն ասի ոգին սբ սէր, զի հաճոյական սիրոյն որ 'ի մեզ, ոգին սբ ոչ միայն է արարողական պատճառ, այլ և նախադաղափար, և կատարումն ։ Քանզի սէրն որ 'ի մեզ, է 'ի ոգւոյն սրբոյ ներգործականապէս, և այս ըստ այնմ, որ ոգին սբ ած է ։ Այլ նախադաղափարօրէն՝ է 'ի մեզ, ըստ որում ինքն ոգին սբ, է՛ յառաջացող ըստ եղանակի սիրոյ, 'ի հօրէ և յորդւոյ ։ Բայց վախճանականաբար է՛ 'ի մեզ սէր մեր, ըստ որում ոգին սբ, յորմէ է՛ մեր, ունի զբան առաջնոյ պարգևին, 'ի յոր դիմէ սէր մեր ։ Եւ դիտելի է՝ զի սէրն, որ է ոգին սբ, ըստ կերպի բղխման, է՛ կապակցութի. այսինքն, հօր և որդւոյ, այլ ըստ նոյն ինքն բղխմանն է՛ պատճառ 'ի հօրէ, և յորդւոյ. իսկ ըստ կատարելութեան ածային բնութե է՛ անձն, և հիփոստասիս, և ըստ ածային պարգևութեան, է՛ ինքն ած՝ և ծայրագոյն բարի ։

Ապացուցեմ՝ ոգին սբ է սէր, որով հայր և որդի սիրեն զմիմեանս ։ Արդ՝ մինչ ասի հայր և որդի սիրեն զիրեարս ոգւով սրբով, կարէ մեկնիլ կրկին կերպիւ. Բ նախ այսպէս՝, սիրեն զմիմեանս Ոգւով սրբով, այսինքն, սիրով, որ է ոգին սբ, և ըստ այսմ է

հաւա,

հաւանելի ։ Երկրորդ՝ ըստ այսմ օրինակի, սիրեն զմիմեանս ոգւով սրբով. այսինքն, 'ի ձեռն ոգւոյն սրբոյ, կամ 'ի ձեռն սիրոյ, որ է ոգին սբ, և ըստ այսմ ոչ է հաւանական. զի լինէր իմացումն, թէ ոգին սբ իցէր սկիզբ 'ի յերրորդութե, որ է սուտ, զի 'ի հօրէ և 'յորդւոյ բղխի, զի ոչ է անդ ինչ, որոյ նկատմամբ ասութիս այս, 'ի ձեռն, ցուցանիցէ զսկիզբ ։ Քանզի է՛ կանոն, որ ասութիս այս, 'ի ձեռն, մինչ ասէ զբան սկզբան նկատմամբ իրիք եղեալ 'ի խօսս, ոչ յորժամ ասի՝ հայր գործէ զստեղծուածս 'ի ձեռն որդւոյ, քանզի անդ նշանակի բան սկզբան 'ի յորդին, նկատմամբ ստեղծուածոցս ։ Նմանապէս և այս հաւանական է, որդի գործէ 'ի ձեռն հօր. քանզի աստ նշանակի բան սկզբան 'ի հայր. և այս կրկնակի նկատմամբ. այսինքն, նկատմամբ որդւոյ. և գործոյն, զի սկիզբ է և երկոցունց ։

Յաղագս թէ ոգին սբ է՛ սէր և պարգև սրբոց ․
Գլ. Թ.

ՔԱնզի գտանի բազում անգամ 'ի գիրս սբս. թէ ոգին սբ է՛ սէր, և պարգև, ստէպ քննելի է, թէ որպէս պարտ է իմանալ, և զի արդեօք ոգին սբ իցէ սէր, որով մեք զած, և զընկեր մեր սիրեմք ։

Ուստի գիտելի է զի սէրն առեալ լինի, երեք կերպիւ ։ Նախ՝ ներգործականապէս, և ըստ այսմ՝ ճշմարիտ է առանց կարծեաց իմն, զի ոգին սբ է սէր, որով սիրեմք զած, քանզի ոգին սբ ներգործէ 'ի մեզ զունակութի, և զշարժումն սիրոյ ։ Երկրորդ՝ տեսակաբար կամ նախագաղափարօրէն, քանզի և այսպէս ոգին սբ է՛ սէր, որով սիրեմք զած, և զընկերն, քանզի սէրն որ է ոգին սբ է՛ նախագաղափար սիրոյս մերոյ ։

Երրորդ կերպիւ, առեալ լինի սէրն տեսակաբար, ըստ կերպի ներյարեցելոյ, և այսպէս՝ սէրն ասի ունակութի առաքինութեան 'ի հոգին, որով սիրեմք զած և զընկեր ։ Եւ ըստ այսմ եղանակի, ոգին սբ ոչ ասի սէր, վն գոլոյն պատահումն, և ոչ ներհակի
ասացելոյն օգոստինոսի, թէ նոյն է սէր, որով ած Ա
սիրէ զմեզ, և մեք զնա ։ Վասնզի թէպէտ ճշմարիտ է,

սակայն է՝ այլ և այլ կերպիւ. զի Ած սիրէ զմեզ այնու, արարողաբար, իսկ մեք սիրեմք զնա արդարաբար, և նախադասաւորօրէն: Բայց գիտելի է՝ զի ոգին մր տուեալ լինի, յորժամ տուեալ լինի պարգև նորին, զի ոգին մր է՝ սէր և առաջին պարգև: Իսկ վերջինն ոչ լինի տուեալ թարց առաջնոյն:

Դարձեալ՝ խորհրդական մարմինն քի, է մի սիրով: Եւ արդ՝ զի ոչի՛նչ ստեղծուած է մի 'ի զանազան անհատս, նմին իրի հարկէ, զի անդամք խորհրդականի մարմնոյն, միաւորեսցին միով անստեղծիւ սիրով, որ է ոգին մր: Ա Դարձեալ ըստ օգոստինոսի, բոլոր չար մարդոյն, է 'ի կիր առնուլ զվայելելին, և զվայելել 'ի կիր առնլին: Եւ ներհակ այսմ է բոլոր բարի մարդոյն. այսինքն, կիր առնուլ զկիր առնլին. և զվայելել 'ի վայելելին: Այլ արդ՝ զվայելել 'ի վայելելին, պահանջէ մերձ գոլն զվայելելի իրին, նա և պատշաճաւոր պատրաստութեն զվայելողին: Վսյ պահանջի ներկայութեն ոգւոյն սրբոյ, և պարգև նորին. այսինքն, սէր, որով յարեսցի նմա: Բայց սակայն յորժամ տուեալ լինի մեզ ոգին մր, ոչ սկսանի լինել 'ի նոր տեղւոջ, այլ նոր կերպիւ յառաջ ածելով զնոր ներգործութիւն, և զնոր նկատմունս, որով ստեղծուածն այլ իմն կերպիւ ունեսցի զինքն առ ոգին մր քան յառաջագոյն: Յաղագս որոյ ասի այլապէս գոլ նմին 'ի ստեղծուածս, քան յառաջագոյն. քանզի է՝ 'ի նոսին, որպէս 'ի ծանուցօղ և 'ի սիրօղ զնա, որ ո՛չէր յառաջագոյն: Աստուածաբանքն յայտնէ յառաջելոցս. թէ ընդ արդարացուցանելն զմեզ, տուեալ լինի կրկին սէր. այսինքն, ստեղծեցեալ, և անստեղծ, այն, որով սիրեմք, և այն, որով սիրիմք:

Կամ որ է մեզ սէր ստեղծեցեալ, որով սիրեմք տեսականաբար, և անստեղծ, որով սիրեմք ներգործականապէս, զի զսիրել մեր՝ նա պատճառէ, և յայտանէ հաւաքի. զի թէպէտ Ած է՝ յամենեսեան էութբ, ներկայութբ, և կարողութբ, այլ ոչ ամենքն ունին զնա շնորհօք: Արդ՝ առաքումն ոգւոյն սրբոյ կրկին է, որպէս և որդւոյ, մինն երևելի, որ երևեցաւ աղաւնակերպ իջմամբ 'ի վր քի, այլ և յառաքեալսն՝ 'ի հրեղէն լեզուս: Եւ միւսն աներևոյթ, որ առաքի 'ի միտս առ 'ի սրբել զստեղծուածս, և առաքումն այս լինի, առ 'ի բնակութի բանական ստեղծուածոցս:

Այլ առաջին առաքումն լինի առ 'ի ցուցանել այլոց զբնակութիւն հոգւոյն սրբոյ, որ 'ի մեզ ։ Ըստ այսմ օրինակի և առաքման որդւոյ, կրկին է․ այսինքն, երևելի, որպէս 'ի մարմնանալն․ և աներևոյթ, որպէս 'ի ներքին լուսաւորութիւն մտաց ։ Եւ գիտելի է՝, զի առաքումն հոգւոյն սրբոյ, և առաքումն որդւոյ, են անբաժանելիք, սակայն՝ առ ի որդւոյ, յորժամ շնորհօք լուսաւորի միտքն, առ 'ի ծնանել զբան, և առ ի հոգւոյն սրբոյ, երբ ախորժակն բորբոքի առ 'ի սիրել զբան ։ Բայց արդ՝ միայն հօր է՝ առաքել, և ոչ առաքիլ, զի մինչ հայր՝ ոչ յումեքէ եղանէ, ոչ յուրեք առ ի առաքիլ ։ Եւ զի որդին եղանէ, և ելուցանէ, նմին իրի առ ի առաքել՝ և առաքիլ ։ Իսկ հոգին սբ՝ եղանէ յաւիտենականապէս, և ոչ ելուցանէ, եթէ ոչ ժամանակաւ, վասն այն՝ յատուկ նմա առաքիլ, և ոչ առաքել, եթէ ոչ նկատմամբ ստեղծուածոյն, որպէս առ դարձումն ժողովրդեան, առին առաքեալքն առաքեցեալ 'ի հոգւոյն սրբոյ, և կամ թերևս ասիցի առաքել զորդին, նկատմամբ առեցեալ մարդկութեան ։

Բայց և հոգին սբ առ ի առաքել, ըստ որում ընդ հօր, և ընդ որդւոյ է՝ նոյն 'ի յէութեան երրորդութեան, և ոչ ըստ որում անձամբ ։ Այսպէս նաև որդին առաքէ զիւր ինքն, ուստի օգոստինոս ասէ ի մատենի յաղագս երրորդութեան, իմանամք զներմարմնութիւն զայն, զծնունդն 'ի կուսէն, նորում իմանի որդին առաքեցեալ, միով և նոյնով գործողութբ հօր և որդւոյ անանջատելաբար եղեալ գոլ, նա և ոչ անջատելաբար 'ի հոգւոյն սրբոյ ։ Յայտ է յասացելոցս, զի անյատկապէս առի, և կարօտանայ մեկնութեան, յորժամ առ ի հոգին սբ առաքէ զինքն․ և առաքէ զորդի ։

Եւ յորժամ առ ի որդի առաքէ զինքն, եթէ ոչ իմացեալ լինիցի ըստ այնմ որ ծնեալ է 'ի կուսէն, վասն զի որդին ած առաքէ զինքն զմարդ, և ըստ այսմ է ճշմարիտ, որոյ պատճառ է, զի առաքօղն ցուցանէ զպատիւ իւր, 'ի վերայ առաքեցելոյն վասն յաւիտենական ելուցմանն ։ Այլ արդ՝ տուեալ եղև հոգին սբ, բազմաւ կերպիւ․ այսինքն, հրով, զի ջերմացուսցէ զսառուցեալս ։ 'Ի լեզուս՝ զի ուսուսցէ զտգէտս ։ 'Ի հնչումն սաստիկ, զի զարհուրեցուսցէ զպաշտամբեալսն ։ Նա և երևեցաւ 'ի ժամանակս մօսիսի, զի առաջնորդեսցէ նմա 'ի սիւն ամպոյն, որպէս ասէ եսայի, այլ և աղաւնակերպ՝ 'ի մկրտութեան քի, առ 'ի ցուցանել զլրումն շնորհաց, որ 'ի նմայն ։ եսայ․ 16․63․

Դարձեալ 'ի փչման, յետ յարութե, առ 'ի նշանակել
զկենդանացուցումն ախորժակի, զի փչումն 'ի ներքուստ
յառաջագայի : Արդ՝ տուաւ հոգին սբ կրկին
անգամ՝ յետ յարութեն. այսինքն, յերկրի, վս սիրոյ
ընկերին, և յերկնից, վասն սիրոյ ԱՅ :

Դարձեալ տուաւ 'ի յերկրի, առ 'ի թողուլ զմեղս
յօհան. այլոց, որպ ասէ յօհան ի. գլուխ, փչեաց 'ի նոսա և
20.22. ասէ՝ առէ՛ք հոգի սբ : Տուաւ 'ի յերկնից 'ի պենտեկոստէին,
առ 'ի զօրեղութի և 'ի սքանչելագործութի,
սաղ.32. յայսց երկուցս՝ ասէ սաղմոս, բանիւ Տն երկինք
5. հաստատեցան, վասն առաջնոյն, և հոգւով բերանոյ
նորա ամ զօրութիք նր, վասն երկրորդին :

Իսկ տուաւ հոգին սբ առաքելոց յառաջ քան զչարչարանս,
յօհան. յորժամ մկրտեցան, և մկրտութի նոցա այնու
13.10. ցուցանի որ ասէ՝ լուացելոյն չէ՛ ինչ պիտոյ :

Եւ 'ի նշան երից նախասացելոցս՝ երիցս օծանի մարդ,
առ 'ի նշանակել զերրակի առաքեցումն հոգւոյն սրբոյ.
այսինքն, 'ի մկրտութե, 'ի դրոշմն, և 'ի օծումն վերջին :
Իսկ առաքեալքն զչորս օգտութիս առին 'ի յընդունելն
գործ.1. զհոգին սբ. այսինքն, գեղեցկախօսութիւն
8. լեզուաց. աներկիւղ լինել 'ի տանջանաց. զօրութի
գործ.5. 'ի սքանչելիս, և պահպանումն 'ի մեղութեց. զի յետ
41. պենտեկոստէին՝ ոչ մեղանչեցին մահու չափ :
մարկ. Ընդունին այժմ զհոգին սբ մեղաւորքն՝ յօգուտ առ 'ի
16.17. մաքրութի, ըստ այնմ որ ասէ, նա մկրտեսցէ զձեզ
մատ.3. հոգւով : Ողջացեալքն, առ 'ի յառաջանալ 'ի բարին,
11. որպէս ասէ սաղմոս, հոգի քո սբ և բարի առա :
սաղ.143. Կատարեալքն՝ առ 'ի ստուգութի, որպէս ասէ առաքեալն
10. առ կորնթացիս. որ ետ մեզ զառհաւատչեայ
2.կոր. հոգւոյն : Երանելիքն՝ առ 'ի զմայլումն, որպէս ասէ
5.5. սաղմոս, յիշեցի զած և ուրախ եղէ : Նեղեալքն՝ առ
սաղ.76. 'ի մխիթարութի, ըստ առաքելոյն, ոչ առիք զհոգի
4. ծառայութե, այլ առիք զհոգի որդէ : Տգետքն՝ առ
հռոմ.8. 'ի յուսանիլ, որպէս ասէ յօհան, իսկ մխիթարիչ հոգին
15. սբ նա ուսուսցէ : Իսկ տեսանելի է, թէ յորում ժամանակի
յօհան. տուաւ հոգին սբ, գիտելի է՝ զի 'յիսներորդում
14.26. աւուր, զի ցուցցի արարող թողութե, վս զի
գործ. ամն յոբելեան էր առ 'ի թողութի : Նա և եկն յաւուր
2.1. կիրակէի, զի լինիցի առաջին օր նորոգման, որ էր
գործ. նա և ստեղծման : Նա և տուեալ եղև 'յերրորդի ժամու,
2.15. զի յայնմ ժամու՝ ասեն առաջին մարդոյն կորուսեալ
զշնորհ, ուստի պատշաճէր զի 'ի նոյն ժամու

մու առաքինիր յառաքեալս ։ Դարձեալ առեալ
յերրորդի ժամու, զի ցուցանիցէ թէ յերրորդի ժամու
առեալ լինի մեզ ոգի սբ. քանզի են երեք ժամք
բարոյականք. այսինքն, զղջումն, խոստովանութի,
և ապաշխարութի ։ Եւ գիտելի է՝ զի անուանս այս,
ոգի սբ, միահամուռ առեալ վասն միոյ յատուկ
անուան, և յայնժամ յարմարի միայն երրորդի անձին՝
'ի յերրորդութեն, և կամ կարեն առանձինն երկու
ստութիւնքն այնք՝ անջատորէն, և ըստ այսմ իւրաքանչիւրոք
յերից անձանցէ՛ ոգի, և սբ ։

Իսկ ոգին սբ ունի զբազում անուանս, քանզի ասի
ոգի, 'ի շնչելոյն առնողականապէս, վասն զի շնչէ,
որպէս ասէ յոհան. գ. գլուխ, ոգին ուր կամի շնչէ, յոհան.
ըստ այսմ եղանակի՝ անուանս այս ոգի, է՝ հասարակ 3. 8.
երից անձանց, այլ յարմարի ոգւոյն սրբոյ 'ի ձեռն
յատկացուցման ։ Այլով կերպիւ՝ ասի ոգի 'ի շնչելոյն
կրաւորաբար, այսու զի շնչի, և այս՝ է՝ յատուկ ոգւոյն
սրբոյ որ եղանէ 'ի կերպ շնչման 'ի հօրէ և յորդւոյ ։
Իւ ոչ միայն ասի ոգի, այլ և սբ, զի սբն՝ նոյն ինքնէ
մաքուր, կամ հաստատ, կամ առանց հողոյ, և այսաքէն
ոչ միայն յարմարին՝ նմա ըստ որում առ ինքն,
այլ և համեմատութեամբ առ մեզ ։ Քանզի շնորհօք
ոգւոյն սրբոյ, սրբիմք 'ի մեղաց, և հաստատիմք 'ի
բարին, և որոշիմք յերկրայնոցս ։ Այս ուրեմն սբ է՝
ոչ միայն յինքն, այլ զի զմեզ սբս առնէ այսու սրբութբ,
զորմէ ասէ դիոնէսիոս, սրբութին է յամ
պղծութե ազատ, և կատարեալ, և ամենեւին անբիծ
մաքրութի ։ Դարձեալ՝ ոգին սբ կոչի կապ, միութի,
և գրկումն, և այս ըստ այնմ որ նկատէ առ հայր, և
որդի ։ Դարձեալ՝ ասի պարգև այ բարձրելոյ, ըստ յակոբ.
այնմ որ նկատի առ մեզ, զի ամ տուրք բարիք և ամ 1. 17.
պարգև ։ Դարձեալ՝ ասի աղբիւր կենդանի, զի յոհան.
եօթնապատիկ առուօք պարգևաց՝ ոռոգանէ զմեզ, 4. 10.
ըստ այնմ եսայեայ, ոգի իմաստութե և հանճարոյ, 7. 37.
և այլն ։ Դարձեալ՝ ասի հուր, զի վառեալ բորբոքէ եսայ.
'ի մեզ զախորժակ ։ Նա և ասի սէր, ոչ միայն՝ զի 11. 2.
ասի սէր հօր և որդւոյ, այլ զի և զմեզ առնէ սիրօղս ։ գոր. 2. 3.
Այլ և ասի հոգևոր օծումն, զի զամ աշխարհական հռո. 5. 5.
նեղութիւնս առնէ քաղցունս՝ և զուարճալիս. 1. յոհ. 2.
ըստ այնմ, 'ի յաշխատանս հանգիստ, և 'ի տապս 20.
բարեխառն ։ Դարձեալ՝ ասի մատն աջոյ ձեռին Այ. ղու. 11.
զի որպէս իրք մարմնաւորք մատամբ ցուցանին, այսպէս 20.

պէս ոգւով սրբով ցուցանէին իբր հոգևորք, հոգևո-
յոհ. 14. րաց աչաց ։ Դարձեալ՝ առ միմեանս, զի զերկնա-
10. 15. 16 ւոր միաւորութիւնս ներկայացուցանէ ՚ի միում ։
Այլ և առ ուսուցիչ՝ ևս բարեգոյն քան զամ վար-
դապետս, զի լուսաւորէ զիմացականս մեր՝ առ ՚ի
ճանաչումն ինքեան և Այ ։

Թէ ՚ի յերրորդութեան անձանցն է՝ միութիւն էութեան.

Գլ. Ա.

1. յոհան. 5. 7. Ի միութեան Աստուծոյ բնութեան, երեք են անձինք, որոց առաջին ոչ է յումեքէ. երկրորդն՝ ծննդեամբ ՚ի յառաջնոյն միայն. երրորդն՝ հաւասար ընթամբ յառաջնոյն, և յերկրորդէն ։

Առակս այնպիսի է այս՝, զի երրորդութիւն անձանցն ոչ արտաքսէ ՚ի յէութէ զմիութիւն, զպարզութիւն, և զանչափութիւն, զյաւիտենականութիւն, և զանփոփոխութիւն ։ Եւ պատճառն յայտնէ այսու, զի թէ հաւատացեալ ոք զամ ոչ կարել լիապէս հաղորդել զինքն, ուրեմնայր ՚ի նա զկարօտութիւն ։ Եւ որ հաւատացեալ զնա կարել զայն, այլ ոչ դիտել, ուրեմնայր ՚ի նա զխնամութիւն ։ Իսկ որ հաւատայր զամ, կարել զայն, և դիտել, այլ ոչ կամիլ, ուրեմնայր ՚ի նա զչարութիւն ։ Եւ արդ՝ զի հայր կարէր՝ գիտէր՝ և կամէր զինքն լիապէս հաղորդել, արար զայս յաւիտենականապէս. այսինքն, ունելով զսիրելին, և զսիրելութիւն, որ է որդին, և ոգին սբ ։ Դարձեալ՝ բարութիւն է միշտ արտահոսել զինքն, ըստ ասէ Դիոնէսիոս և արդ՝ զի հայր՝ է՝ աղբիւր բարութեան, ՚ի նմանէ լինիցի՝ ամենակատար բղխումն, որ է որդի և ծնունդ ։ Լինիցի և բղխումն ամենազօրաւոր, որ է ըստ կերպի բարեկամութեան, և առատաբարոյութեան. և արդ՝ ելումն այս՝ է՝ սէր, որ է ոգին սբ, ՚ի հօրէ և յորդւոյ բղխեալ ։ Եւ իրաւի առ սէրն ելումն առատաբարոյութեան, զի սէրն՝ է՝ առաջին պարգև, որ յառաջագոյն յառատաբարոյութէ, մինչիցէ ներքնական պարգև՝ ՚ի յոր, այսինքն ՚ի սէրն, այլք ամք պարգևք՝ պարգևին ։ Արդ՝ երանելի երրորդութիս այս, երեք կերպիւ ծանուցանի մեզ ։

Նխ զի նախ յայտնի ՚ի գիրս սբս. ցուցանի օրինակօք.

կայ, և պայծառամտաց աստուածաճանաչութեանս. Նախ՝ սակս թէ երրորդութեան յայտնի 'ի սոյն գիրս: Սուրբն ասէ որ պատմէ լեզուն. համառօտեմք զսոյն երրորդութիւն, զհայր, և զորդի, և զսուրբ հոգին, մի ած անձնակարող. միոյ գոյացութեան՝ միոյ էութեան՝ և միոյ իշխանութեան:

Դարձեալ՝ եթէ ոչ էին երեք անձինք, ոչ ասացեալ լինէր յԱԾ, արասցուք մարդ, այլ արարից մարդ, և ոչ ասէր առ պատկեր մեր, այլ իմ: Ծննդ. 1.26.

Դարձեալ՝ թէ երեք էին անձինք, և ոչ մի գոյացութիւն, ոչ ասէր առ պատկեր, այլ առ պատկերս: Նա և առ 'ի զնոյն ցուցանել, առաքելն 'ի սաղմոսի ասէ՝ երիցս՝ ած, մինչ ասէ, օրհնեսցէ զմեզ ած, ած մեր. ած մեր օրհնեսցէ: Այլ ասելովն՝ միանգամ զնոյն զերրանձնութիւն այս՝, 'ի նմանէ, ընդ ասելն, 'ի նմանէ երկիցեն ամ ծագք երկրի: Եւ եսայի ասէ՝ սբ. սբ. սբ. ՏՐ ԱԾ սաբաւովթ. Քանզի երիցս կրկնելով զսբն, ցուցանէ զերրորդութիւն անձանց, և եզականապէս ասելով ՏՐ ԱԾ սաբաւովթ. զմիութիւն էութեան ցուցանէ: Եւ առաքեալն ասէ՝ յորմէ ամ, որով ամ, և յորում ամ, նմա փառք յաւիտեանս ամէն: սաղ. 66.7. եսայ. 6.3. հռով. 11.36.

Եւ ծանիր՝ զի նախադրութիւնս այս, յորմէ, նշանակէ զիշխանութիւն, և զսկիզբն ոչ յումեքէ, և այս յատուկ հօր, որ է սկիզբ թարց սկզբան: Այլ նախադրիս այս, որով, ցուցանէ զներգործութիւն, և զմէջ, և զդուռն յայլմէ, ուստի այսու իմանի որդին, որ է սկիզբն սկզբէ: Այլ նախադրիս այս՝, յորում, ցուցանէ զպահպանութիւն, և զդուռն յայլոց. վասն որոյ և պատկանի հոգւոյն սրբոյ, որ է պարունակիչ, և պահպանօղ ամ բարութեանց: Նա և ցուցանէ երանելին երրորդութիւն օրինակօք, այսինքն, ցուցանէ երիս բարեկամսն յոբայ: Դարձեալ՝ երեք արանցն, որք երևեցան աբրահամու, և 'ի նմին երկրպագեաց միոյ ՏՆ: յոբ. 2. 11. Ծննդ. 18.2.

Դարձեալ՝ երեք քաղաքօքն ապաստանի որ յայն կողմ յորդանանու, որք միակամ միջոցաւ հեռի էին 'ի միմեանց: Դարձեալ՝ երեք մատամբք, որով ընդունի ամ զանդունդս երկրի: Դարձեալ՝ երիւք զորս դժուարին է իմանալ, քան սողունի: Դարձեալ՝ երիւք քաղաքօք, զորս եսես եղեկել: Այլ և փայլէ երրորդութիւն 'ի ստեղծուածս, որ է հետ նորին: օրին. 4. 18. եսայ. 42.12. առակ. 30.18.

Վ՟զի 'ի մեծութէ ստեղծուածոց՝ ճանաչի կարողութիւն հօր, 'ի գեղեցկութենէ, իմաստութիւն որդւոյ, և 'ի զարդս՝ բարութիւն հոգւոյն սրբոյ:

Դարձեալ՝ ընիւրաքանչիւրում անհատոյ՝ գտանիցես զզօրութի, զգեղեցկութի, և զօգտակարութի, որոց առաջինն՝ պատկանի հօր՝ երկրորդն, որդւոյ, և երրորդն՝ հոգւոյն սրբոյ : Դարձեալ 'ի յարեգակն՝ տեսանես զէութի, զճառագայթ, և զջերմութի, 'ի յորս՝ ծանուցի հայր՝ և որդի՝ և հոգին սբ :

Դարձեալ՝ 'ի հոգին, ըստ յիշողականին՝ իմացականին՝ և կամացն, իմա զերրորդութի անձանց, և զմիութի գոյացութե : Դարձեալ՝ 'ի յերկնային քահանայապետութիս է՛ ած 'ի յաթոռս, ոպ զմեծութի, 'ի քերոբէս, որպէս զիմաստութի, 'ի սերոբէս, ոպ զսէր, որովք ծանուցանի երրորդութի անձանց :

Դարձեալ՝ 'ի յերիս ածաբանական առաքինութիս . այսինքն, 'ի հաւատ, 'ի յոյս, և 'ի սէր :

Դարձեալ՝ 'ի յերիս օժիտս հոգւոյ, այսինքն, 'ի ճանաչման, յըմբռնման, և 'ի բերկրութե : Բայց գիտելի է՝ զի այլպէս վերաբերի Ած 'ի ստեղծուածս ճանապարհորդս և այլպէս 'ի յերանեցեալս :

Ըստ օրինակի հայելւոյ՝ նորուն այլով կերպիւ երևի ծանօթն 'ի մէնջ, և այլով կերպիւ անծանօթն, զի ծանօթն՝ երևի 'ի հայելւոջ, իսկ անծանօթն 'ի ձեռն հայելւոյ : Արդ՝ յասացելոցս յայտ է՝ զի 'ի մարմնաւոր ստեղծուածս, և 'ի հոգևորն, նա և 'ի յօդեալսն 'ի նոցունց, երանելի երրորդութին ծանուցի :

Բայց զանազանաբար՝ ըստ այնմ որ իւրաքանչիւրն 'ի նոցանէ՝ առի հետ ստեղծողին, զի այլէ որ առի նմանութի նորին, և այլ՝ որ պատկեր, որպէս 'ի վեր անդր ցուցաւ, յայնմ ճառի, ուր որդին առի պատկեր հօր : Դարձեալ՝ համառօտաբար ասելով գիտելի է՝ զի բազմութի անձանց 'ի միութի էութե, և զմիութի էութե, 'ի բազմութի անձանց, ըստ բեռնարտոսի՝ քննել յանդգնութի է, հաւատալն՝ բարեպաշտութի, և ճանաչելն, կեանք յաւիտենական : 'ի վեր. 6.

Յա-

Յաղագս թէ բազմադիմի է երրորդութիւն ։

ԳԼ. ԺԱ.

Բազմադիմի երրորդութիւն գտանի 'ի գիրս մեր. քանզի է՛ երրորդութիւն անստեղծ, որ է վերհագոյն և անճառելի ։ Իսկ այլք երրորդութիւնք են ստեղծեցեալք, 'ի մէջ որոց՝ մինն է որ անկաւ, այսինքն, բանականն, ցասմնականն, և ցանկականն ։ Է՛ և այլ, որով իսկ անկաւ մարդն. այսինքն, յիշեցումն սատանայի, և հեշտութիւն զգայութեան, և հաւանումն բանականին, որք և երեքեանքս այսոքիկ նշանակեցան 'ի դրախտին, օձիւն, կնաւն, և արամբն ։ Եւ երեք են 'ի յորս անկան իսկ. այսինքն, 'ի տգիտութիւն ճշմարտութեան, յանկարութիւն բարւոյն, և 'ի ցանկութիւն չարին ։ Երեք են, որովք վերստին յառնէ, որ է հաւատ, յոյս, և սէր ։ Դարձեալ՝ է՛ երրորդութիւն, որով նորոգիմք 'ի շնորհս, այսինքն, եռակի գոյացութիւն որ 'ի Քս̅, որ է Ածութիւն, հոգին և մարմին ։ Է՛ և այլ՝ ըստ որում վերստին ծնանիմք, որ է հոգի՝ ջուր՝ և արիւն, հոգի ասեմ սրբացուցման, արիւն փրկութեան, և ջուր լուացման, յորմէ ասէ յոհան 'ի կաթողիկէից ։ Նա և է՛ այլ երրորդութիւն, որով 'ի փառս վերածիմք, որ են՝ երեք օժիտք հոգւոյն, այսինքն, ճանաչելն, սիրելն, և ըմբռնումն ։ Է՛ բաց յայսցանէ, և այլ բազմադիմի երրորդութիւն 'ի ստեղծուածս, որ է հետ ամենաերանեցելոյ և անստեղծի երրորդութեան, և զայսմանէ ունիս 'ի վեր. 'ի ճառն՝ թէ երրորդութիւն անձանց է՛ 'ի միութիւն էութեան ։

ա. յոհան. ե. զ.

'ի վեր. 10.

Յա-

Յաղագս թէ է՛ համահաւասարութիւն ՚ի յանձինս .

Գ Լ. ԺԲ.

Հաւասարութիւն անձանց՝ կայանայ ՚ի յերիս, ըստ Օգոստինոսի, քանզի որպէս ասէ, ոչ՟ք յառաջէ զմիմեանս յաւիտենականութեամբ, կամ գերազանցէ մեծութեամբ, կամ յաղթէ զօրութեամբ : Եւ զի թէ է՝ ըստ այսց երից հաւասարութիւն ՚ի յա՟ծ, ցուցանի ըստ այսմ օրինակի . քանզի ՚ի կատարելութիւնս յայս՝ են երեք, այսինքն, գոյացութիւն որակութիւն, և քանակութիւն : Արդ՝ միութիւն ՚ի գոյացութեան, պատճառէ զնոյնութիւն, և միութիւն ՚ի յորակութեան, պատճառէ զնմանութիւն : Իսկ միութիւն ՚ի քանակութեան, պատճառէ զհաւասարութիւն : Արդ՝ է՛ հաւասարութիւն ՚ի յա՟ծայինս միայն ըստ եռակի քանակութեան, ըստ այնմ որ քանակութիւն ասի գոլ ՚ի յա՟ծ, թէպէտ անյատկապէս : Նախ՝ ըստ քանակութեան զօրութեան որ է կարողութիւն, որ հաւասարի յերեսեանն ամենեքին : Երկրորդ՝ ըստ քանակութեան տեւողութեան, որ է յաւիտենականութիւն : Երրորդ՝ ըստ քանակութեան մեծութեան, որով ինքն ա՟ծ է՛ ՚ի ներս յամենեսին, արտաքոյ ամենեցուն, որով պարագրէ, և զետեղէ զամ՟ն : Դարձեալ՝ հաւասարութիւն անձանց՝ ցուցանի և յերիս այսուիկ, ըստ այլում կերպի, քանզի ՚ի ստեղծուածս գտանի եռակի մեծութիւն . այսինքն, ժամանակի՝ չափոյ՝ և զօրութեան : Արդ՝ առաջին մեծութիւն է՛ ՚ի փոփոխական իրս : Երկրորդ՝ ՚ի մարմինս : Երրորդն՝ ՚ի ստեղծեալ հոգիս : Երիցս այսոցիկ պատասխանեն՝ այլք երեք, որք ՚ի ստեղծօղն . ՚ի յորս ա՟ծային անձինք են հաւասարք . այսինքն, յաւիտենականութիւն ՚ի գոլն . մեծութիւն ՚ի յանչափութեան, և զօրութիւն ՚ի կարողութեան : Սակայն երեքեանքս այսոքիկ, թէպէտ ըստ ճշմարտութեան իրին իցեն ՚ի յա՟ծ, բայց ըստ տարբերութեան իրի, ՚ի նմա ոչ ունին զգոլ, այլ ըստ որում վերնկատեն իմացութիւք մերք : Արդ է այն քան հաւասարութիւն ՚ի յերրորդութեան, մինչ զի՝ ասէ Օգոստինոս, երկուքն ո՛չ են մեծագոյն ինչ՝ քան զմին, և ո՛չ մեծագոյն ինչ ա՟մքն, քան զիւրաքանչիւրս, զի համյաւիտենականք են ա՟ծային անձինք : Զի ՚ի յա՟ծայինս՝ ո՛չ է գտանել, եթէ ոչ երկու-

սեա

սեռ , այսինքն , գոյացութիւն , և առինչ · քանզի քանակութիւն և որակութիւն՝ անցանեն անդ՝ 'ի սեռս գոյացութեան , որպէս հաւասարութիւն և նմանութիւն , անուանեն զառինչս , այլ գոյացութիւն է՛ հասարակ երից անձանց ։ Իսկ յատուկ է առնչականաց համանգամայն գոլ ։ Այսպ ուրեմն՝ ոչ՛ինչ կերպիւ հայր է յառաջքան զորդի , և ոչ հայր և որդի քան զոգին սբ՟ , ոչ ըստ գոյացութեան , և ոչ ըստ առնչին ։

Նոյնն ցուցանի օրինակաւ 'ի բնութիս , զի թէ ճառագայթն է յարեգականէն , սակայն լինէր յաւիտենականակից ընդ արեգական , թէ արեգակն լինէր յաւիտենական ։

Յաղագս զանազանութեան որ 'ի մէջ անձին , և էութեան ։ Գլ. ԺԳ.

Առ յոյնս՝ են չորք բառք , այսինքն , ուզիա · ուզիօզիս · հիփոստասիս · և փրոսոփոն ։ Իսկ առ լաթինս՝ ասին այսոքիկ · էսէնցիա , սուպստանցիա , սուպսիստէնցիա · փէրսօնա ։ Իսկ 'ի հայս՝ անուանին՝ էութիւն , գոյացութիւն , ենթակայութիւն , և անձն ։ Արդ՝ 'ի մէջ սոցա՝ է՛ այսպիսի զանազանութիւն , զի ուզիայն , և էսէնցիայն , այսինքն՝ էութիւն , ասի զառեղծուածոց վերացելաբար առանց թանձրացելութեան , որպէս մարդկութիւն ։ Ուզիօզիան , և սուպստանցիայն , այսինքն , գոյացութիւնն , ասէ զունօղն բնութեան , կամ զներքոյ կացեալն բնութեան , որպէս մարդ ։ Հիփոստասին , և սուպսիստէնցիայն , այսինքն , ենթակայութիւնն , ասէ զզանազանեալն , և ոչ զզանազանեցեալն բացորոշեցեալ յատկութբ՟ , որպէս ոմն մարդ ։ Իսկ փրոսոփոնն , և փէրսօնայն , որ է անձն , ասէ զզանազանեցեալն հանդերձ բացորոշեալ յատկութբ՟ , որով վերաբերի 'ի պատիւ բանականի բնութեան , որպէս պետրոս ։

Ուստի՝ ամ՟ եզական մարդիկ են զանազանեցեալք իւրեանց յատուկ որակութբ՟ , նոյնպէս հայր՝ և որդի , և ոգի սբ՟ իւրեանց յատուկ ծանօթութբ՟ ։

Արդ՝ ամ՟ յոյնք ասեն , զհայր , և զորդի , և զոգին սբ՟ , երեք հիփոստասիս , և լաթինք երեք սուպսիստէնցիա՝ այդպէս և մեք ասեմք՝ երեք ենթադրեալս , այսինքն ,

ինքն , երեք իր՝ որ ոչ են կարօտացեալ այլոյ իրի զի լինիցին : Ապաուրեմն իմացեալ զա՟ծային էութիւն ըստ ինքեան , է՛ ամենեւին անզանազանեցեալ :

Իսկ անձն նկատեալ ըստ ինքեան՝ է՛ զանազանեցեալ իւրով յատկութբ՟ : Այլ իմացեալ զէութիւն 'ի յանձինս , կամ զանձինս 'ի յէութեն , ունի զմիջին եղանակ . այսինքն , զմիութի , և զզանազանութի , և այս յայտ է 'ի յատկացեալսն , որք 'ներյատկանին ա՟յ անձանց , ո՟ր կարողութի , իմաստութիւն , և բարութի , այլ՝ առ մինն՝ առաւել բացորոշին ,

Եւ գիտելի է , զի բազում անգամ գոյացութի առեալ լինի 'ի տեղի էութե , և էութիւն ոչ երբեք անդրաբերի առ 'ի նշանակել զանձն : Արդ՝ ըստ պօէցիոսի, անձն է բանականի բնութե՟ անբաժանելի գոյացութի: Եւ ըստ ռիքարտի , անձն է իմացականի բնութեան անհաղորդելի կայացումն , և կամ անձն է ենթակայացօղ ըստ ինքեան միայն , ըստ կերպի եզական իմն գոյացութե , և սոյն անձն իբր թէ ըստ ինքեան իր մի , զի այսպէս ստուգաբանի անձն 'ի լաթին բարբառ : Իսկ ըստ այլոց վարդապետաց , սահմանի այսպէս , անձն է ենթակայութի զանազանեցեալ յատկութբ՟ վերաբերեալ առ'ի պատիւ բանականին :

Եւ գիտելի է՝ զի վերոյ ասացեալ չորեքեան , ըստ այնմ որ մեկնեալ են անդ՝ և օրինակեալ , այսինքն , էութիւն , գոյացութիւն , ենթակայութի , և անձն , զանազանին 'ի սահմանս ըստ իրին , և անուան ,
Ա այլ՝ 'ի յա՟ծայինս զանազանին բանին :

Յաղագս անչափութե Ա՟Յ· ԳԼ: ԺԴ·

Ո՛չ է 'ի յա՟ծ քանակութի տարածականութե, այլ զօրութեան . և ոչ է յա՟մուրեք իբր զանկուածով մարմնոյ , այլ մերձակայութբ մեծութեան , և ըստ այսմ սոյն ա՟ծ անչափ : Արդ՝ գիտելի է , զի չորեքկին կերպիւ սոյն ա՟ծ անչափ , այսինքն , անհունութբ , անըմբռնելութբ , անպարագրութբ , և յամենակալութբ : Քանզի թէ իմացի ա՟ծ ըստ ինքեան , այսպէս է՛ անհուն , ո՟ր ասէ
սաղ· 144· 3· սաղմոս , մեծ է Տ՟ր մեր , և իմաստութե նորա ոչ գոյ հուն : Եթէ իմանի համեմատելով առ իմացումն ,

ըստ այսմ՝ է՛ անըմբռնելի, ոպ̃ ասէ առաքեալն, ո՛վ խորք մեծութե̃ ԱՅ ։ Նա և վա այսմ իրի, ասի նմա նստեալ 'ի վերայ քերոբէից, այսինքն, 'ի վերայ լրութե գիտութեան, և 'ի վերայ ա̃մ իմացման ։ հռոմ. 11.33.

Եւ եթէ իմասցի ըստ համեմատութեան առ տեղի, ըստ այսմ՝ է՛ անպարագրելի, զի ասէ ամբրոսիոս, զի զո՛չ իմն չափ ունի երրորդութի, ոչ տեղեաւ պարփակի, ոչ վարկմամբ պարունակի, և ոչ տիօք այլ այլէ ։

Իսկ թէ իմասցի համեմատելով առ տևողութի, ըստ այսմ՝ է՛ յաւիտենական, ըստ առաքելոյն, Թագաւորին անմահին, և այլն ։ Այլ 'ի չորից յայսցանէ, առաւելն կարգաւ յառաջի կայ ։ Արդ՝ համատալի է ստուգապէս՝ զի 'ի յԱծ ո՛չ գոյ յատկապէս երկայնութիւն, լայնութի, բարձրութի, խորութիւն, այլ այսոցիկ նմանութե̃ ասին զԱյ ։ Քանզի, է՛ 'ի յԱծ լայնութիւն սիրոյ, որով յետս կոչէ զմեզ 'ի մոլորութէ, ոպ̃ ասէ երեմիա, յաւիտենական սիրով սիրեցի զքեզ, վա այսորիկ ողորմութե̃ մեծաւ ողորմեցայց ։ Երկայնութիւն համբերութեան՝ որով տանի զչարս. քանզի անտես առնէ զմեղս մարդկան, վասն ապաշխարութե ։ Նա և է՛ 'ի նա բարձրութի իմաստութե, որով գերազանցէ քան զա̃մ միտս, ոպ̃ ասէ առաքեալն, ա̃մ մերկապարանոց է առաջի նորա ։ Այլ և է՛ 'ի նա խորութիւն արդարութե, որով դատապարտէ զմեղաւորս, ոպ̃ ասէ մատթէոս, երթայք յինէն յանիծեալք ։ Եւ դաւիթ ասէ՝ իրաւունք քո՛ ոպ̃ զխորս բազում ։ 1. տիմ. 1.17. եփես. 3.18. երեմ. 31.3. եբր. 4. 13. մատ. 25. 41.

Յաղագս անհնութե ԱՅ ։ Գլ. ԺԵ.

ՈՉ է երկբայելի գոլ ԱՅ անհուն, վա զի մինչ 'ի յԱծ նոյն է կարողութի, և էութի, յայտ է՝ զի էութի նորա է՛ անհուն ոպ̃ և կարողութի ։ Ուստի ոպ̃ կարողութի ԱՅ՝ ո՛չ միայն է՛ 'ի յայնս զորս առնէ, այլ և կարէ առնել զբազում ։ Այսպէս և էութիւն ԱՅ, ո՛չ է այնպէս 'ի յիրս սմանս որոց կարիցէ լինել 'ի բազում, այլ թէ լինէին անհուն աշխարհք՝ լնոյր զամ ։

Դարձեալ՝ վա զի ած է՛ պատճառ արարողական, նախագաղափարական, և վախճանական ա̃մ իրաց, ոպ̃ ո՛չ է աւելի թէ ըստ այնմ որ է պատճառ արարողական, իցէ արարեցեալ. և կամ ըստ որում է պատճառ նախագաղափարական՝ իցէ ձևացեալ, նոյնով բանիւ՝ ո՛չ է աւելի, թէ ըստ այնմ որ է պատճառ վախճանական՝ իցէ հունաւորեցեալ, այլ ուրեմն ոչինչ կերպիւ աւելի է զա՟ծ հունաւոր ըստ գոյացութեան, մի թէ հունաւորեալ ասասցի ըստ այնմ, որ է կատարեցեալ։ Ա. Արդ՝ ուղղապէս իմացեալ, եռակի լինի անհուն. այսինքն, բացարձակապէս, պակասօրէն, և ներհակաբար, կամ անպատրաստաբար։

Արդ՝ ուրացաբար անհուն՝ ասի 'ի ձեռն ուրացութե՟ վախճանի, և այսպէս անհուն ասի այնմ՝ որոչ վախճանի, և ըստ այսմ եղանակի այն է անհուն, որ ո՛չ է բնաւորեալ վախճանիլ. իսկ պակասօրէն անհուն է՝ որ բնաւորեալ է վախճանիլ, սակայն՝ ո՛չ վախճանի։

Այլ ներհակաբար անհուն է, որ ունի ըներհակ պատրաստութիւն առ 'ի վախճանիլ։ Ըստ առաջնոյ կերպի, էութիւն Ա՟յ է՝ անհուն, զի ո՛չ ունի զվախճան, և ոչ բնաւորեալ է վախճանիլ։ Նմանապէս՝ և թէ ասիցի անհուն ըստ երրորդի եղանակի. իսկ թէ ասիցի պակասօրէն, ըստ այնմ ո՛չ պատկանի Ա՟յ, զի ո՛չ է բնաւորեալ վախճանիլ, այլ մանաւանդ է՝ վախճանօղ ամենեցունց։ Դարձեալ՝ վախճան ասի երեք կերպիւ, նախ ասի եզր, և ըստ այսմ շարունակ քանակութիւնն դնի անհուն; քանզի է՝ տարաչափական 'ի յանհունս, և այս վ՟ն, զի 'ի շարունակին ոչ կայ եզր 'ի յերկայնացումն, ո՟պ և ոչ գոյ եզր 'ի թիւն 'ի յաւելումն։ Երկրորդ՝ ասի վախճան՝ կատարումն։

Երրորդ՝ ասի վախճան՝ այն, վ՟ս որոյ իւրաքանչիւր ինչ լինի։ Արդ՝ ըստ առաջնոյ կերպին, Ա՟ծ է՝ անհուն, ո՛չ ըստ տարաչափական քանակութե՟, որ ո՛չ է 'ի նմա, այլ ըստ զօրութենական քանակութե՟ որ 'ի նմա է։ Եւ զի 'ի յա՟ծ ամենեւին՝ է՝ անբաժանականութիւն զօրութե՟, և էութե՟, նմին իրի, ո՟պ է անհուն էութ՟բ, նոյնպէս և զօրութ՟բ։ Եւ ըստ երկրորդին՝ նիւթն ասի անհուն, զի կարօտանայ կատարման. իսկ ըստ երրորդի կերպին՝ մեղքն է՝ անվախճան, զի ո՛չ է կարգեալ առ պատշաճաւոր վախճան, որ է Ա՟ծ։

Յաղագս անըմբռնելութեան Այ ։ Գլ. ԺԶ ։

ՍՏեղծօղն 'ի ստեղծուածոց ոչ կարէ լիապէս
ճանաչիլ, ոչ 'ի ճանապարհի աստի
կենացս, և ոչ 'ի վերին գաւառին, զի
հունաւորին առ անհունն՝ ոչ է չափակցութիւն
ինչ ։ Ուստի ասէ պօէցիոս, երրորդութիւն
միայն ինքեանն է ծանուցեալ, Ա
և մարդոյն Քն ։ Եւ բեռնարդոս ասէ՝
ոչինչ մեծագոյն քան զԱծ, և ոչինչ՝ անըմբռնելագոյն.
քանզի իւրաքանչիւրոց իւր ոչինչ մերձաւորագոյն
քան զգոլ իւր · քանզի ասեմ գոլն ամենեցունց զԱծ,
ոչ զի այնք լինիցին որ ինչ նա է, այլ զի 'ի նմանէ՝ և
նովաւ, և 'ի նմա են ամքն ։ Քանզի և իմացականութիւս
մեր՝ առ անմատչելի լոյսն այն, նուազագոյն քան
զտեսութիւն ջղջիկանի առ արեգակն ։ Ուստի 'ի սաղմոսին
ասի զԱյ՝ գնալ 'ի վերայ թևոց հողմոց, այսինքն, սաղ.
'ի վերայ իմացականութեանց, նա և 'ի վերայ հրեշտակաց ։ 17. 11.
Բայց սակայն՝ ըմբռնի Ած կերպիւ ինչ 'ի կեանս
այս՝, հաւատով · վասն որոյ ասէ օգոստինոս, զի տկար Բ
նրատեսութիւն մարդկային մտացս՝, ոչ բևեռի 'ի այն
քան գերազանց լոյսն, եթէ ոչ արդարութեամբ հաւատոյ
մաքրափայլեսցի ։ Եւ բեռնարդոս ասէ՝ այնպէս
է Ած 'ի յանքան ստեղծուածս, որ ոչ ըմբռնի 'ի նոցանէ ։
Իսկ յամ բանաւորացս՝ կարէ ըմբռնիլ ճանաչմամբ
հաւատոյ, այլ 'ի բարեաց միայն՝ ըմբռնի սիրով ։
Արդ՝ ասեմք թէ զԱյ գիտել կարեմք զինչ ոչէ,
այլ ոչ՝ զինչէ, ուստի ասէ օգոստինոս, իմանամք Գ
զԱծ բարի, այլ առանց որակութեան · մեծ՝ առանց
քանակութեան · ստեղծիչ, անկարօտ · վերանստեալ,
առանց կալեածոյ · զամ պարունակեալ՝ առանց ներպարունակութեան ։
Առանց տեղւոյ, բոլորն յամ ուրեք ։
Մշտնջենաւոր՝ առանց ժամանակի · արարիչ փոփոխելեացս,
առանց ինքեան փոփոխութեան · և ոչ ինչ
կրելոյ ։ Այլ ըմբռնի Ած տեսութեամբ 'ի վերին գաւառն,
ըստ արժանաւորութեան վարձուց, որպէս ասէ օգոստինոս,
տեսանիցեմք զէութիւն մեծութեան քո, իւրաքանչիւր
այնպէս պայծառագոյն, որ չափ աստէն լիցեմք
մաքրագոյն կենցաղավարեալք ։ Եւ օրինակ այսմ
յայտէ 'ի ծովն, որ տայ զինքն տեսութեան, այլ ոչ կա-

րէ տեսանիլ ըստ բովանդակութե իւրում ներպարառութե : Եւ այս՝ այնքան մի լայնատարածութեն
ծովուն՝ որ քան մի տեսողականութեանս մերոյ, առայն
չափ անհամեմատելութի մակերևութի :

Այլ և զայս լինէ համառօտել, զի 'ի կեանս այս, կարեմք ճանաչել զնէ՝ ած, և 'ի վերին գաւառն՝ ճանաչեսցուք
Ե. Դ Զ ոպ էն, սակայն՝ ոչ երբեք, ոչ աստ, և ոչ
'ի հանդերձեալն, եթէ զի՛նչ իցէ : Սակայն՝ որպէս
մարմնական տեսութի արգելեալ լինի 'ի մարմնական
խորութեանց ճանաչմանէն երեք կերպիւ, այսինքն,
խաւարաւ, պատրօղ լուսով, և յետս դարձմամբ յերեսելոյ,
այսպէս և հոգևոր տեսութի արգելի
'ի ճանաչմանէն այ, նախ՝ խաւարաւ մեղաց, կամ
1 յօհան. մոլորութե, ոպ ասէ յօհան, որ ատէ զեղբս, 'ի
2.11. խաւարի շրջի, և պօղոս՝ տակաւին մինչ ընթերցեալ
2 կոր. լինի մովսէս, վարագոյրն եդեալ կայ 'ի վերայ սրտից
3.15. նոցա : Երկրորդ՝ սուտ լուսով, և այս լինի՝ յորժամ
ոք չափէ զյաւիտենականն ըստ բնականացս, և ունիմք
զօրինակ՝ 'ի փտեալ փայտն, որ 'ի գիշերի ունի
զլոյս, այլ 'ի հասանիլ տունջեան ոչինչէ :

Երրորդ՝ յետս դարձմամբ յայ, որ լինի յորժամ խոտորեալ
ոք զանփոփոխ բարին, յարի փոփոխականացս,
և այնպիսեաց աչաց՝ մի գոյն ակար՝ ատելի է լոյս,
որ առողջոյ է՝ սիրելի : Դարձեալ՝ ճանաչի ած 'ի
ներքս, և արտաքս : 'Ի ներքս կրկնաբար՝ զի երբեմն
ածային ազդմամբն, որ սակաւուց է տուեալ, ըստ
առաքելոյն, որ ասէ՝ գիտեմ զայր մի 'ի Քս Յս, և
2. կոր. այլն : Երբեմն բանականութբ, ըստ որում կերպի,
12.2. բազումք 'ի փիլիսոփայից ունէին ծանօթութիւն զայ,
Հռոմ. 1. ոպ ասէ առաքեալն, աներևոյթք այ, երևելի արարածովք :
20. Նա և արտաքս՝ ճանաչի երկեակաբար· այսինքն,
ստեղծուածովքս, որք են այժմ հայելի ստեղծողին,
1 կոր. ոպ և անդրադարձեալ, ած լինի հայելի արարածոց
13.18. 'ի հանդերձելումն, 'ի յորում զած տեսանիցեմք,
որք առ խնդութիւն մեր պատկանեսցին :

Նա և ուսմամբ, նա և 'ի լրոյ, ըստ առաքելոյն՝ որ ասէ՝
Հռոմ. հաւատք 'ի լսելոյ են : Քանզի ոպ ճանաչի գինին երբեմն
10.17. լսելեաւ, երբեմն տեսանելեաւ, երբեմն ճաշակելեաւ.
սոյնպէս՝ կերպիւ իմն ճանաչի ած : Քանզի ճանաչեն
զած լսելեաւ, որք յորժամ լսեն զբանն այ՝ և
յօհ. 5. այնու հաւատան : Տեսանելեաւ ճանաչեն ածաբանք,
39. յորժամ ընթեռնուն 'ի սբ գիրս. և իմաստունք, յորժամ

ժամ քննեն զա՟ծ 'ի բնութիս ։ Իսկ ճաշակելեաւ ճանաչեն միայն բարիք, ըստ այնմ, ճաշակեցէք, և տեսէք։ սաղ․ 33․Թ Եւ վերջին կերպս այս է' կատարեալ ամենեւին։ Եւ դիոնէսիոս ասէ' թէ երեք կերպիւ ճանաչի ա՟ծ․ այսինքն, բացբարձականաւ, ո՟պ յորժամ ասի, ա՟ծ ոչ է այսինչ, կամ այն ինչ․ ուստի ըստ դիոնէսիոսի բացասականքն ճշմարիտք են զա՟յ․ իսկ ստորասականք' անյարմարք ։ Դարձեալ՝ գերազանցականաւ, որպէս յորժամ 'ի ստեղծուածս գտանի կատարելութիւն ինչ, պատկանի այն ա՟յ 'ի գերազանցական աստիճանի․ որպէս է կարողութիւն, իմաստութիւն, և այլք այսպիսիք ։ Նա և պատճառաւ, ըստ այնմ որ ճանաչի պատճառելեաւն պատճառն, և ծանօթութ՟բ շարժման, ծանօթութիւն շարժողին ։

Եւ ծանի՛ր' զի հոգին զգայութ՟բ զգայ զմարմինս 'ի ձեռն տեսակաց 'ի նիւթս միայն, մերձ գոլով մարմնոյն ։ Իսկ երեւակայութի' ընդունի զնմանութիւնս մարմնոց' և զարտաքարշեալ տեսակս 'ի նիւթոյ' մերձ կալով մարմնոյն նա և 'ի բացեայ գոլով մարմնոյ ։

Իսկ բանականութ՟բ' իմանայ զէութիւնս մարմնոց, և իմացականաւ' զստեղծեցեալ ոգին, այլ իմացողութ՟բ' զանստեղծ ոգին ։ Քանզի 'ի ճանաչելեացս, ոմանք են 'ի ներքոյ բանականին, զորս ըմբռնեմք զգայութ՟բ, որպէս սպիտակ և սեաւ, և այլք այսպիսիք ։ Ոմանք են մերձ բանականին, այսինքն, այնք' որք միայն բանականաւ ճանաչին և ըմբռնին, որպէս ճշմարիտն, և սուտն, իրաւն և անիրաւն ։ Է

Եւ ոմանք են 'ի վեր քան զբանական, այսինքն, որ միայն ա՟ծային յայտնութ՟բ ըմբռնին, և կամ ս՟բ գրոց վկայութ՟բ հաստատեալ լինին, որպէս երեք անձինք, գոլ մի ա՟ծ ։

Յաղագս անպարագրութեան Ա՟յ. Գլ. ԺԷ.

Ա. Ա՟ծ է՛ յա՟մ ուրեք , սակայն ո՛չ է յուրեք , զի ո՛չ է 'ի բացեայ 'ի տեղւոջէ ուրուք , և ո՛չ ըմբռնի տեղեաւ իւ՟ք , քանզի ասէ Օգոստինոս , Ա՟ծ է՛ 'յաշխարհի , և ո՛չ ներփակեցեալ · արտաքոյ աշխարհիս , և ո՛չ արտափակեալ · 'ի վերայ աշխարհի՝ և ո՛չ դիզացեալ · 'ի ներքոյ աշխարհի՝ և ո՛չ ստորասեղմեալ : Յայսցանէ յայտ է՝ զի Ա՟ծ է՛ յամ՟ն , Երեմ. 23.24. զի լնու զամենեսին , և 'յա՟մ ուրեք ներկայ , արտաքոյ ամ՟ն, զի զա՟մ պարունակէ , և ոչ յուրեք կարէ զատիլ : Եւ գիտելի է , զի նախադրութիւս այս՝ արտաքոյ , ո՛չ ասէ անդ զներգործական ներկայութիւն առ տեղին , այլ զկարողական , որ է անչափութիւն Ա՟յ , որ կարէ լնուլ զանհուն աշխարհս՝ եթէ էին :

Դարձեալ՝ նա՛ է 'ի վեր քան զա՟մ , զի է՛ գեր 'ի վերոյ ամենեցունց , և ոչ ի՛նչ հաւասարի նմա :

Եբրա. 1.3. Դարձեալ՝ է՛ 'ի ներքոյ ամենեցուն , զի զամենեսեան բառնայ , և առանց նո՟ր ոչ ի՛նչ կարէ կայանալ :

Նաև ասեմք , թէ Ա՟ծ է յա՟մ ուրեք , ո՛չ զի կարօտանայ իրաց՝ զի լինիցի 'ի նոսին , այլ ևս առաւել իրողութիւնք կարօտանան նմին , զի նովաւ կայանայցեն : Քանզի Ա՟ծ էր յառաջ քան զլինելն աշխարհի անդ՝ , ուր է այժմ իսկ , այսինքն , նինքեան · քանզի նա ինքն՝ բաւական ինքեան : Ուստի ոտանաւորս ,

Ասա՛ Ա՟ծ յայնժամ ու՞ր էր
մինչ բաց յիւրմէ այլ ինչ ոչ էր ·
Յայնժամ անդ էր ուր այժմ յինքնէ
զի ինքն ինքեան բաւական է :

Որով յայտ է լուծումն տարակուսանաց պարզամտոց ոմանց , որք խնդրեն , թէ ո՞ւր էր Ա՟ծ յառաջ քան զլինելն աշխարհիս : Այլ արդ գիտելի է , զի չորս կերպիւ ասի լինել ինչ 'ի տեղւոջ · առաջին , պարագրապէս՝ և սահմանաբար , որպէս մարմին :

Երկրորդ՝ սահմանաբար և ո՛չ պարագրաբար , որպէս հրեշտակք : Երրորդ՝ ո՛չ պարագրապէս , և ոչ սահմանաբար , որ՟պ Ա՟ծ · և այս վասն այնորիկ՝ զի ո՛չ անհատանայ նիւթով , որ՟պ մարմին · և ոչ ենթադրելեաւ , որ՟պ հրեշտակք : Չորրորդ՝ մասամբ պարագրապէս , և մասամբ սահմանաբար, որ̄ մարմինն ք̄ի 'ի ներքոյ խորհրդոյն, որ է բոլորն 'ի ներքոյ բոլորի նշխարին, և ոչ արտաքոյ նմին, և ըստ այսմ է' անդ պարագրապէս, զի է' 'ի ներքոյ նշխարին, և ո՛չ 'յա̄մ ուրեք, և այսպէս՝ է' անդ կերպիւ իմն սահմանաբար ։

Արդ մարմին ք̄ի թէպէտ ո՛չ է յա̄մ ուրեք, վ̄ն գոլոյն ստեղծուած, և ոչ կարէ համատարիլ 'ի յայսպիսիս ստեղծողին, սակայն՝ բոլորն՝ է' 'ի բազում տեղիս 'ի ներքոյ զանազանից նշխարաց ։ Եւ այս է' վասն միաւորութե̄ մարմնոյն ընդ բանին, ուստի իրաւի ունի աւելի քան զայլ ստեղծուածս, այսինքն, զի կարէ լինիլ համանգամայն 'ի բազում տեղիս ։

Ապաուրեմն յայտ է' 'ի վերոյ ասացելոցս, թէ լինիլ պարզաբար յա̄մ ուրեք՝ յարմարի միայն ստեղծողին, այլ լինիլ 'ի միում տեղւոջ, յարմարի միայն ստեղծուածոցս ։ Իսկ 'ի բազում տեղիս լինիլ՝ և ո՛չ յա̄մ ուրեք, Ճահաւորի մարմնոյն ք̄ի ։ Եւ գիտելի է, զի ա̄ծ բազում կերպիւ է' 'ի յիրս ։ Նախ՝ բնութբ̄, և ըստ այսմ է' յա̄մ ուրեք, կարողութբ̄, ներկայօրէն, և էապէս ։ Երկրորդ՝ շնորհօք, և ըստ այսմ է' 'ի բարիս, որպէս ասէ՝ որ բնակի յիս, և ես 'ի նա ։ Երրորդ՝ փառօք, և ըստ այսմ է' 'ի յերանեցեալս ։ 'ի բանականսն՝ որ̄ զճշմարտութի, 'ի ցանկականսն՝ որ̄ զբարութիւն, և 'ի ցասմնականսն՝ որ̄ զիշխանութի ։ Չորրորդ՝ միաւորութբ̄, և ըստ այսմ է' 'ի մարդկային բնութիւն ք̄ի, 'ի հոգին, և 'ի մարմինն. քանզի յարդանդի կուսին, միաւորեցաւ ընդ մարդկային բնութեանն ք̄ի ։ 'ի գերեզմանին՝ էր միաւորեալ ընդ մարմնոյն ք̄ի, և 'ի դժոխս՝ ընդ հոգւոյն ։ Հինգերորդ՝ ասի ա̄ծ լինիլ յուրեք, յայտնութեամբ ծածկեցելոց, որպէս ասէ 'ի ծննդոց, արդարև Տ̄ր է 'ի տեղւոջս յայսմիկ ։ Վեցերորդ՝ գերազանց երևմամբ հեռոցն, և ըստ այսմ յերկինս ասի ։ քանզի անդ՝ առաւել երևի կարողութի, իմաստութիւն, և բարութի նորին ։ Եօթներորդ՝ նոյնութբ̄ բնութե̄, և ըստ այսմ, որդի է' 'ի հայր՝ և հայր յորդի, և ոգին ս̄բ յերկոսինն ։ Ութերորդ՝ սքանչելագործութեամբ, որպէս ասէ ելից, մատն ա̄յ է' աստ ։ Իններորդ՝ պահպանութբ̄, և նախախնամութբ̄, և ըստ այսմ է' 'ի բոլոր աշխարհս ։ Դարձեալ՝ ա̄ծ է' յինքեան, վ̄ն զի է' սկիզբն, և վախճան ամենեցուն ։ Դարձեալ՝ է' յաշխարհս, որպէս արքայն՝ է' յիւրում

Բ

յօհ. 15. 57.

ծննդ. 28. 16.

մատ. 6. 9.

ելից 8. 19.

յայտ. 1. 8.

արքայութեն, զի սա է բնաւորոս, ած յամ ուրեք թագաւորէ՛, յամ ուրեք հրամայէ, յամ ուրեք մեծութի նր լնու, և պարունակէ զամ :

յոբ. 38. 11. Դարձեալ՝ է՛ 'ի հրեշտակս՝ ող գեղեցկութի, որպէս

Գ. Ճշմարտութի, համեստութեն, և բարութիւն :

Դարձեալ՝ 'ի յեկեղեցւոջն՝ որպէս զտանուտէր 'ի

մատ. 28. 20. տան իւրում, ըստ այնմ՝ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամ աւու : Դարձեալ՝ 'ի յընտրեալսն է՝ որպէս աղատիչ 'ի չարեաց, և օգնական 'ի բարիս : Սոսա է բնաւորոս, ած 'ի ստեղծուածս՝ է՛ սքանչելի, 'ի մարդիկ սիրելի. 'ի հրեշտակս ցանկալի. ըստ ինքեան անպարագրելի. 'ի դատապարտեալսն, անտանելի. 'ի գեհեն, ահարկու, և զարհուրելի : Զի սա է օգտատինոս, որոց թողուցու զքեզ, ո՛րբերթիցէ, եթէ ոչ 'ի քէն հաշտեցելոյդ՝ առ քեզ բարկացեալդ. զի ոչ ոք կարէ փախչիլ 'ի ձեռանէ Տն, ըստ սաղմոսին որ

սաղ. 138. 8. ասէ՝ թէ ելանեմ յերկինս, անդ՝ ես, և թէ իջա :

Իսկ թէ ոք տարակուսեսցի, թէ ած է՛ 'ի սատանայն : Գիտելի է՝ զի են անուանք ոմանք, որք նշանակեն զբնութի ըստ այնմ որ բնութի. և յայտնի հաւատալի է՝ թէ ած գոյ 'ի նոսին : Եւ են անուանք, որք ասեն զդեղութի՝ որպէս դեւն, և ըստ այսմ՝ ոչ է 'ի նոսա, եթէ ոչ մակյանեսցի, ըստ այնմ որէն ողի, և կամ իմն այնպիսի : Դարձեալ՝ ած է՛ 'ի հոգիս հանգստացելոց, ող փեսայ 'ի յառագաստի իւրում. արքայն՝ յարքայութեն. աշտարակն՝ 'ի դղեակն. վարդապետն՝ 'ի համալսարանն. աղբիւրն՝ 'ի պարտէզն. լոյսն՝ 'ի Փանառն՝ գանձն՝ 'յագարակն. գինին՝ 'ի մառանն. ակն՝ 'ի մատանւոջ. կնիք՝ 'ի թղթոջ. դեղն՝ 'ի կրպակն. պտուղերն՝ 'ի հայեւոջ. մեղրն՝ 'ի խորիսխն. պտուղն՝ 'ի ծառն, ձէթն՝ 'ի լապտերն. շուշանն՝ 'ի հովիտս :

Յա-

Յաղագս յաւիտենականութեն ԱՅ· ԳԼ· ԺԲ·

Որպէս է՝ ա͞ծ յամ՛ ուրեք, և ոչ պարունակի տեղեաւ իւիք, այսպէս՝ է՝ յաւիտենական, և ոչ չափի ժամանակաւ իւիք ։ Քանզի ոչ պատկանի նմա՝ ներկայ ժամանակն, ոչ անցեալն, և ոչ ապառնին, Վս զի ներկայն՝ ոչ ունի զմնացական գոլ, զի անցանէ, այլ ա͞ծ մնայ միշտ նոյն ։ Ուստի ասէ հիլարիոս, գոյն ոչ է պատահումն ՚ի յա͞ծ, այլ ինքնակայ ճշմարտութի, և մնացական պատճառ ։ Նմանապէս՝ անցեալ ժամանակ ոչ է ՚ի յա͞ծ՝ զի ոչ ունի զկայացեալ գոլ, այլ զոր ասի ՚ի սաղմոսին, նոքա կորիցեն, և դու կաս՝ և մնաս յաւիտեան ։ սաղ. 101 27. Եւ ոչ ապառնին, զի տակաւին ոչ է, այլ ապառնեալ լինի, իսկ ա͞ծ է՝ միշտ ։ Ուստի մեռկեռիոս ասէ՝ միայն միակն՝ է՝ ալֆայ և օմէկայ · այսինքն, ա͞ծ է՝ յայտ. 1.8. սկիզբն թարց սկզբան · և վախճան՝ առանց վախճանի ։ Եւ զի մինչ ա͞ծ է՝ ամենեւին պարզ, ոչ ունի յինքն զսկիզբն ներհակութե, որ է պատճառ ապականութե ։ Իսկ արդ՝ թէ զինչ իցէ յաւիտենականութիւն ըստ իւրն ասելի է, թէ յաւիտենականութիւն է՝ անփոփոխ յարատեւութի, առանց սկզբան, և վախճանի, և ըստ այսմ պատկանի միայն ա͞յ, նորում է յարատեւողութի անչափ ։ Իսկ յաւիտենականութիւն, ըստ ստորադասութեան ՚ի ըսթիս, ասի իբրու արտաքոյ եզերաց, վս զի չունի զեզր, ոչ զսկզբնական, և ոչ զվախճանական ։ Եւ ըստ պօէցիոսի յաւիտենականութի է՝ անսահման կենաց հրճուելի ստացուած, բովանդակն համանգամայն, և կատարեալ ։

Առ որոյ յայտնութի գիտելի է, զի ՚ի յոմանս է սահմանականութե պարզաբար, զի ունին զկայար յառաջնոյ կողմանէ և յետուստ, որպէս որք ՚ի լինելութեն, և յապականութեն են, ՚ի յորոց տարբերութիւն դնի, անսահմանելին ։ Եւ իրաւի դնի բացասականաւ, զի պարզքն՝ և մանաւանդ ա͞ծ այսինքն, ոչ այլ ինչ կերպիւ յայտնին բարեպէս քան բացբարձականաւ, ո͞պ ասէ դիոնէսիոս, որոյ պատճառէ, զի գոյն ա͞յ, և պարզից, ոչ կարէ իմացումն մեր կատարելապէս՝ ըմբռնել, նմին իբր ՚ի յուրաստականաց նոցին, որք բաց բառնան 'ի նոցունց, առաջնորդեալ ածեն իմացականն կերպիւ ինչ ճանաչել զայնս:

Դարձեալ՝ 'ի յոմանս է՛ անսահմանութի էութե, զի անվախճանս ունին զէութիւն, սակայն անմահ են 'ի կենաց, որպէս 'ի մարմինս երկնայինս՝ առ 'ի տարբերութե որոց, յաւելեալ լինի, կենացն: Իսկ զայ ասէ օգոստինոս, թէ նա միայն ունի զանմահութիւն: Ա. տիմ. 6.16.

Քանզի 'ի յում փոփոխական բնութե, փոփոխումն նորին է՛ մահ իմն. զի առնէ 'ի նմա ոչ գոլ ինչ, որ յառաջագոյն էր: Ուստի և մարդն յորժամ ծնանի, սկսանի կերպիւ իմն մեռանիլ: Այլ 'ի յոմանս՝ է՛ անսահմանութի կենաց, սակայն թշուառութե և տառապանօք, որպէս 'ի դևս, և 'ի դատապարտեալս. 'ի զանազանութի որոց դնի, հրճուելի ստացումն, 'ի յորոյ իմացման գոյ բարեբաստ զուարճութիւնն. քանզի յայնժամ ասի հրճուելի ստացումն իւր ուրուք, յորժամ ունի ոք զայն՝ ըստ կամաց իւրոց: Իսկ 'ի յոմանս է՛ անսահմանելի ստացուած կենաց, այլ ոչ բոլորովին, որպէս 'ի յարս երանելիս՝ նախ՝ քան զդատաստանն, որոց երջանկութի միայն է 'ի կողմանէ հոգւոյն Ա և ոչ մարմնոյն, առ որոց տարբերութի դնի՝ բովանդակն, զի բովանդակ է՛ այն՝ որոյ ոչ է նուազումն, և որոյ ոչինչ է մակ յաւելլի արտաքուստ:

Սակայն 'ի յոմանս է՛ ստացուած անսահմանելի կենաց բոլորովին, որպէս 'ի յերանելի հրեշտակս նախ քան զդատաստան, զի ըստ բոլորի գոյացութե իւրեանց՝ ունէին զերջանիկ և զանսահմանելի կեանս, սակայն՝ ոչ համանգամայն, վս գոլոյն 'ի նոսին յաջորդումն իմն յայտնութեց, և խնդութեց, առ որոց զանազանութի, առաջին համանգամայն: Բայց 'ի յոմանս է՛ ստացուած անսահմանելի կենացն, բոլորն համանգամայն, այլ ոչ կատարեալ, ըստ այնմ կերպի որով ա- Բ սեմք կատարեալ զայն՝ որոյ ոչինչ իմիք կարօտանայ, որպէս է 'ի հրեշտակս, և 'ի յերանեցեալ մարդիկս՝ յետ դատաստանին, առ որոց տարբերութի, մակյաւելեալ լինի, լիակատարն. այսինքն, ոչ իմիք կարօտացեալ առ երանելի գոլն իւր: Յայտ է ուրեմն 'ի նախասացեալ սահմանէս, զի երեք որպիսութիք դնին անդ՝ որք են անանջատելիք յանտեղծ յաւիտենականութէն, որ է ած, այսինքն, անեզրանալութի, անդ, ուր ասէ՝ անսահմանելի կենաց ստացուած:

Դարձեալ՝ անայլայլութի, անդ, ուր ասէ, բովան-

դակն

քական համանգամայն . զի ո՛չ է այլայլելի ինչ ՚ի յա՟ծ , այլ բոլորին համանգամայն ։ Դարձեալ՝ պարզութի՟ , անդ , ուր առէ , և կատարեալ . քանզի այն է գերագրապէս կատարեալ՝ որոյ ոչ ի՛նչ կարէ լինել յաւելուածն ։ Արդ՝ առաջնումն որոշի ա՟ծ յա՟մ ապականելեաց ։ Երկրորդիւն յա՟մ այլայլելեաց ։

Եւ երրորդիւն յա՟մ բաղադրելեաց ։ Այլ ծանի՛ր՝ զի այն որ ոչ ունի զսկիզբն , և ոչ զկատարած , ասի յաւիտենական՝ որպէս ա՟ծ , որոյ գոլն ո՛չ է եզերեցեալ ։

Այլ որք ունին զսկիզբն , և ո՛չ ունին զվախճան, ասին մշտնջենաւորք , որպէս հրեշտակք , և հոգիք ։

Իսկ որք ունին զսկիզբն , և զկատարած , ասին ժամանակաւորք , որպէս են ապականացուքս , որ գո՛ն տնկականք , և զգայականք , անասունք՝ և այլք սոյնպիսիք ։

Յաղագս անփոփոխութեան ԱՅ . ԳԼ . ԺԹ .

Անփոփոխելի է ա՟ծ թէ ըստ պատահակա-
նի փոփոխութե՟ . և թէ ըստ գոյափո-
խութե՟ ։ Ըստ պատահականի փոփո-
խութեանն է՝ անփոփոխելի , զի ոչ ան-
կանի ՚ի նա պատահական՝ շարժումն .
այսինքն, աճելութե՟ և նուազութե՟ . զի
ասէ սբ՟ պապն Լեօն , պարզ բնութեան
ա՟ծութեան ոչ ի՛նչ յաւելուլ, կամ պակասել կարէ , զի
մի՛շտ է որ ինչ է ։ Եւ ո՛չ նուազումն , զի ասէ Մաղա- Մաղաք.
քիա , ես ա՟ծ ո՛չ փոփոխիմ ։ Նա և ո՛չ այլայլումն , զի 3.6.
ասէ յակոբոս , առ որում ո՛չ է փոփոխութիւն և կամ յակոբ.
շրջելոյ ստուեր ։ Դարձեալ՝ ո՛չ է ըստ տեղւոյ փո- 1.17.
փոխումն , զի մերձ է յա՟մ ուրեք , որպէս ասէ երե- Երեմ.
միա , զերկին և զերկիր ես լնում ։ Իսկ ըստ գոյա- 23.24.
փոխութե՟ է՝ անփոփոխելի , զի ո՛չ անկանի ՚ի նա գոյ-
ացական շարժումն, որ է յոչ գոլոյն առ գոլն՝ որպէս է
ծնունդ , զի ո՛չ ունի զսկիզբն ։ Այլ և ո՛չ է ՚ի նա շար-
ժումն ՚ի գոլոյն առ յոչ գոլ , որ է ապականութի ,
զի ոչ ունի զվախճան ։ Քանզի այն է շրջելի ՚ի յոչ ինչ՝
որ եղեալ է յոչնչէ ։ Դարձեալ՝ ըստ պատահականի
փոփոխութե՟ , է՝ անփոփոխելի նա և այսու , զի ո՛չ
անկանի ՚ի նա շարժումն ՚ի գործելն . քանզի յատուկ
է նմա ընդ գործելն՝ հանգչել . ուստի ասէ պօէցիոս,

ո՜ որ մշտնջենականաւ բանիւ կառավարես զաշխարհս, արարող երկնի և երկրի, որ 'ի մշտնջենից հրամայես ընթանալ ժամանակին, և կայուն մնալով տաս շարժիլ ամենեցունց: Քանզի յորժամ ասէ զնմ, փոփոխումն ոչ լինի յած, այլ 'ի գործեցեալ իրն, և զի արար ած քարոզել զկործանումն Նինուէի, և նախագուշակել զմահն Եզեկիայի, և ո՛չ եղև մի 'ի նոցանէ: 'Ի յայսպիսիս ոչ փոխեաց ած զխորհուրդն, զոր ունէր յաւիտենից, այլ զվճիռն, որ նկատէր 'ի պատիժն որում արժանիք էին նոքա:

Յովնան 3.4. դ Թագ. 20.1.

Ա Քանզի Նինուէ կործանելոցէր ըստ արժանեաց. և Եզեկիա մեռանելոցէր, ըստ ստորնային պատճառացն, այլ պատճառքս այսոքիկ ոչ եդին զհարկաւորութիւն 'ի վր ածային կարողութե: Դարձեալ եռակի լինի շարժումն. այսինքն, բնական, բռնական, և կամաւորական. բնական է՝ որով բնականապէս իրն երթայ 'ի յատուկ տեղի իւր: Եւ բռնականէ, յորժամ բռնադատի իրն երթալ արտաքոյ յատուկ տեղւոյ իւրոյ: Իսկ կամաւորական շարժումն՝ է 'ի մարդս, կամ 'ի հրեշտակս. բայց անասունք, և մարդիկք, ինքկերպին շարժին բնականաբար, երբ ընթանան, կամ շարժին, կամ գործեն, և շարժումս այս՝ միջակէ 'ի մէջ բռնականին, և բնականին, վասնզի մասամբ ինչ՝ է՛ բնական, այսինքն, ըստ այնմ որ կամքն միաւորի գործոյն իւրոյ, որպէս պատճառ իւրում պատճառեցելոյն: Եւ մասամբ ինչ բռնական, ըստ այնմ որ շարժին անդամքն, ընդդէմ բնական շարժմանց իւրեանց. վասն որոյ և վաստակին՝ որք 'ի բնական շարժմանէն իւրեանց՝ ոչ վաստակին երբեք:

Արդ՝ առաջին շարժումն, այսինքն, բնականն՝ ոչ է 'ի յած. և այս վս չորից պատճառաց, նախ՝ զի ամ շարժումէ՝ անհանգստեան, և վս կարօտութե ինչ, որպէս ասէ փիլիսոփայն, այլ ած է՛ 'ի ծայրագոյն հանգստեան և ոչ իւիք կարօտանայ:

Երկրորդ՝ զի ած է՛ յամ ուրեք, նմին իրի, ո՛չ կարէ լինիլ 'ի նմա տեղեկան շարժումն: Երրորդ՝ զի ո՛չ է 'ի նա ծանրութի, կամ թեթևութի, որոյ վս շարժեսցի 'ի վեր, և 'ի վայր: Չորրորդ՝ զի մինչ ած միշտ մնայ ինքն 'յինքեան, ո՛չ է նմա հարկաւոր յատուկ տեղի, և ո՛չ խնդրէ զտեղի արտաքոյ ինքեան, որպէս ստեղծուածքս: Դարձեալ՝ ո՛չ շարժի, և երկրորդ կերպիւն. այսինքն, բռնականաւն, զի ո՛չ լինի նմա բնութ՟ն, որպէս ասէ Յոբ, եթէ խնդրի զօրութ՟ն, է՛ զօրեղագոյն ։ Յոբ.9. 19. Դարձեալ՝ ո՛չ շարժի երրորդ կերպիւն, այսինքն, շարժմամբ միջակմանաւ, զի ընդ գործելն ո՛չ վաստակի, որպէս զկենդանիս ։

Դարձեալ՝ միտք մեր՝ է՛ անկայուն, զի ո՛չ միապէս մնայ, զի երբեմն յառաջանայ, և երբեմն կասի, երբեմն յիշէ՛ և երբեմն մոռանայ, երբեմն կամի, և երբեմն ոչ կամի ։ Եւ մերթ զանազան մտածմամբ, բաղձանօք և խորհրդօք, այսր անդր՝ տարաբերի, այլ ա՟ծ ունի զինքն միշտ միապէս և անշարժաբար ։

Դարձեալ՝ է՛ շարժում ի՟ն բոլորակ, և այլ ի՟ն ուղիղ, և այլ ի՟ն թիւր ․ արդ բոլորակն՝ է՛ երկնային մարմնոց ․ ըստ այնմ որ հաստատութիւն շարժի բոլորակապէս՝, այսինքն, ոպ՟ ասէ փիլիսոփայն ըստ տեսակին, և ոչ ըստ գոյացութ՟ե, այսէ, զի ոչ շարժի 'ի տեղւոջէ 'ի տեղի, այլ շարժի 'ի տեղւոջն ։

Իսկ ուղիղ շարժումն է՛ 'ի վեր՝ կամ 'ի վայր, ըստ որում ստորնային մարմինքս շարժին, վ՟ս թեթևութ՟ե, կամ ծանրութ՟ե ։ Այլ արդ՝ թիւր շարժումն է՛ բաղադրեցեալ 'ի բոլորակէն, և յուղղակէն, ուստի ըստ այնմ որ խառնի, ունի 'ի շարժմանէ բոլորակէ ։ Իսկ ըստ այնմ որ գծօրէն շարժի, ունի 'ի յուղղակէն ։ Արդ՝ ո՛չ միով եղանակօքս այսոքիւք շարժի ա՟ծ, զի յատկութ՟ի շարժմանցս այսոցիկ՝ ո՛չ պատկանի ա՟յ ։ Բայց կարեմք ասել, թէ շարժմունքս այսոքիկ, հոգևորապէս յարմարին ա՟յ ․ քանզի ասի շարժիլ բոլորակ շարժմամբ՝ զա՟մ կառավարելով, և նախախնամելով, նա և ուղղակի շարժմամբ, վարձատրելով զբարիսն․ այլ և խառնական շարժմամբ՝ պատժելով զչարս ։ Իմաս. 14.3. Մատ.16 27.25.46 Նմանապէս կարէ ասիլ, թէ շարժի ա՟ծ բնական շարժմամբ, այսինքն, որով ա՟ծային բարութ՟ն հաղորդէ զինքն ստեղծուածոցս, ըստ չափոյ ընդունակութ՟ե նոցին ։ Դարձեալ բնական շարժմամբ, որով արդարապէս դատապարտէ զմեղաւորսն ։ Դարձեալ՝ կամաւորական շարժմամբ, որով զա՟մ պահէ 'ի գոյն ։ Այնպէս կարէ մեկնիլ, 'ի բան փիլիսոփային, որ դնէ զշարժումն 'ի միջոյն, և առ մէջն, և շուրջ զմիջովն․ զի ա՟ծ շարժեցաւ առ մէջն, 'ի մարմնանալն իւրում․ և 'ի միջոյն, 'ի համբառնալն իւրում, և շուրջ զմիջովն, 'ի քարոզելն իւրում ։

Վ՟ս այսպիսեացս և նմանեաց սոցին, ասէ՝ իմաստութ՟ե եօթն ոգին ո՞ք է՛ շարժուն, և կայուն ․ շար-

ժուն՝ զի առնէ զնս՟ շարժուն առ 'ի գործել զբարին, և յառաջանալ 'ի բարին ։ Կայուն՝ զի առնէ յարամնալ 'ի բարին ․ կամ շարժուն 'ի ճանապարհի աստի կենացս, և կայուն 'ի վերին գաւառի ․ և կամ շարժուն 'ի գործնականն, և կայուն 'ի տեսականն ․
Եսայ․ կամ շարժուն 'ի յայլ ոքս, և կայուն 'ի քս՟, ըստ այնմ
ժա․ բ․ որ ասէ, ոգի Տն՟ 'ի վր՟ նորա ։ Եւ դիտելի է՝ զի ներգործութիւնք ոմանք վերաբերին յամ՟ ըստ պատճառութեան և ըստ էութեան, ոպ՟ դիտելն ․ ոմանք ըստ
Բ․ պատճառութե՟, և ոչ ըստ էութեն, ոպ՟ ուտելն, ընթանալն ․ ոմանք ըստ էութե՟ և ոչ ըստ պատճառութե՟, ոպ՟ առեղծանել, կամ արդարացուցանել ․ ոմանք ոչ այսպէս՝ և ոչ այնպէս, որպէս մեղանչել, և ստել ։

Յաղագս պարզութեն Այ․ Գլ․ Ի․

Ա Պարզ է Ած, և հրեշտակք, և հոգի, այլ զանազանապէս՝, զի 'ի յամ՟ նոյն է, որէ, և որովէ, այսէ՝ էութի՟, և գոլն ․ և այսէ կատարեալ պարզութի՟ ։
Ուստի ասէ բեռնարտոս, միայն անստեղծ բնութի՟ն յատկացուցանէ ինքեան զպարզութիս զայս, որ ո՛չ այլ և այլ, յայլուրեք, և յայլուրեք, այժմ և այժմ գտանիցի 'ի նմա ։ Քանզի զոր ունի՝ և որ ինչէ, միշտ միևնոյն կերպիւ է ։ Այլ 'ի հրեշտակն, և 'ի հոգին զանազանին, որեն, և որով են ․ մինչ է՝ անդ այլայլութիւն իմն, և բաղադրութի՟, թէպէտ՝ ո՛չ լինի անդ տարաչափութի՟ քանակութե՟ ։ Ուստի ասէ մեռկեռիոս՝, 'ի վեր քան զերկնայինս՝ է՝ միութի՟, 'ի յերկնայինս՝ այլայլութի՟ ․ 'ի ներքոյ երկնայնոց՝ բաղմութիւն ըստ թուոյ՝ ըստ չափոյ՝ և ըստ որակի ։ Արդ՝ պարզ է Ած 'ի յէութե՟, զի ոչ ի՛նչ պատահումն նմա կարէ գոլ, այլ կատարեալ պարզութի է՝ անդ՝ ուր ո՛չէ կարելի գոլ յաւելումն, զի որ ինչ՝ է՝ 'ի յամ՟ Ած է ․ ուստի ասէ լեւոն պապն, պարզ բնութե՟ Ածայնոյ, ոչ ինչ յաւելուլ կամ պակասիլ կարէ ․ զի միշտ է՝ որ ինչէ, որում յատուկէ յաւիտենական գոլ, որում նոյն է կեալն և իմանալն ։ Սակայն բաղմադիմի է պարզին,

ոպ՟ ասէ առաքեալն, ուսեմք 'ի ոգւոյն տուեալէ բան իմաստութեան, այլում բան գիտութեան ։ ա. կոր. 12. 8.
Եւ յակոբոս ասէ՝ ամ՟ տուրք բարիք, և ամ՟ պարգևք կատարեալք՝ 'ի վերուստ են ։ յակոբ. 1. 17. Դարձեալ՝ ո՛չ է 'ի յած՟ բաղադրութիւն ամբողջական մասանց, որպէս տան. և ո՛չ կարողական մասանց, որպէս հոգւոյ. և ո՛չ սեռի և տարբերութեան, որպէս տեսակի. և ո՛չ նիւթոյ և տեսակի, ոպ՟ 'ի մարմինս. և ո՛չ շեղջակուտութեամբ միութեանց, որպէս 'ի թիւս. և ո՛չ որ է և որով է, ոպ՟ 'ի հրեշտակսն. և ոչ գոյացութեան և պատահման, ոպ՟ 'ի յանհատս. և ոչ գոյացութեան մարմնականի և անմարմնականի, որպէս 'ի մարդս ։ Ուստի ասէ բեռնարդոս, ո՛չ է կայացեալ ած՟ մասամբ՝ որպէս մարմին. և ո՛չ տարակոյլ ախորժակօք, որպէս հոգին. և ո՛չ ստորանկլի տեսակաց, որպէս ամ՟ եղեալքս ։

Նա և սոյնս ցուցանի առարկութբ՟, զի ամ՟ բաղադրեցեալ՝ յետոյ է քան զայնս, յորոց բաղադրի. և ոչ ի՛նչ է նախկին քան զսկիզբն առաջին, որ է ած՟. ապա ուրեմն հարկէ, զի ած՟ որ է առաջին սկիզբն, ո՛չ լինիցի բաղադրեցեալ ։ Դարձեալ՝ ոչ ոք բաղադրեցեալ է բոլոր գոլ իւր. ապա մինչ ած՟ է՛ իւր գոլ, ո՛չ է բաղադրեցեալ ։ Ուստի ասէ ասէ բեռնարդոս՝ ո՛չ է տեսականորեալ ած՟, այլ է տեսակ, ո՛չ է Ած՟ պատճառեցեալ, այլ է ամենեցուն արարողական պատճառ, ապա ուրեմն Ած՟ ո՛չ է բաղադրեցեալ, այլ պարզ ։

Ցաղագս գերազանցութեան Այ՟ ։ Գլ. ԺԱ.

Գերազանցութիւն Ածային պատուոյն, այնքան է մինչ զի միտք կարի խորհելոյն զնմանէ, վ՟ զի է՝ անըմբռնելի ։ Զգայութիւն ո՛չ հասանէ 'ի նա, վասն զի ո՛չ է զգալի. լեզու զնա ոչ պատմէ, վ՟ զի է անճառելի. տեղի զնա ո՛չ ըմբռնէ, վասն զի է անըմբռնելի ։ Գիրք զնա ո՛չ արտայայտէ, զի է անիմանալի. ժամանակ զնա ո՛չ չափէ, զի է անչափելի. զօրութիւն 'ի նա ո՛չ հասանի, զի է անմատչելի ։ Գերազանցէ քան զբաղձանս՝ և զցանկութիւս, վասն զի է անհամեմատելի, և ոչ ինչ իւր գերազանցէ զնա ։ Եւ համառօտաբար ասացից, ամ՟ ստեղծուածք՝ համեմատեալ առ ած՟ պակաս գտանին, զի ո՛չ է բաղդատութիւն ինչ 'ի մէջ անհնոյն և հունաւորին : Ահա յայտ է՝ զի Ածային գերազանցութիւն ո՛չ կարօտանայ իմիք , վս՟ զի ինքեան է՝ բաւական, զի է ամենաբարի : Քանզի ո՛չ կարօտանայ մարմնոյ , զի իցէ , և ոչ տեղւոյ , ուր լինիցի . և ոչ ժամանակի , զի երբեմն իցէ . և ոչ պատճառի , զի յայլմէ իցէ , և ոչ տեսակի՝ որպէս զի նիւթ իցէ . ոչ ենթակայի , 'ի յորում կայացի , կամ առ յոր առ կայցէ : Են և այլք որք միայն պատկանին մեծութեն Ածայնոյ , և ո՛չ իմիք ստեղծուածոյ , յորս երևի գերազանցութիւն իւրոյ արժանապատուութեն , որպէս է լինիլ ամենակարող , ամենաբարի . ամենագէտ . զի ճանաչէ զամ՟ , զներկայս՝ զանցեալն՝ և զապառնին , և զհամայնս եղականս՝ համանգամայն ճանաչէ միով ներգործութբ միայն : Եւ զայնս որք են անձնիշխան կամաց , և զխորհուրդս մարդկան , նա՛ միայն ճանաչէ

Ա ինքեամբ : Դարձեալ 'ի նա միայն վերաբերի լինիլ ներկայ յամ՟ ուրեք, 'ի յոչնչէ ստեղծանել զիրս , իսկոյն ներգործել , և 'ի ներգործելն հանգչել , իշխանութբ առնել զքանչելիս , և իւրաքանչիւրոյ ստեղծուածոյ՝ առնել զոր կամի . զկամս մարդկանց ճանաչել . յական թօթափելն՝ զմեռեալս յարուցանել , և ներսահել 'ի յէութիւն հոգւոյն . թողուլ զմեղս . հեղուլ զշնորհս, և զմարմինս 'ի հրոջ պահել անծախելի 'ի յաւիտեան : Այլ գիտելի է , զի յորժամ յարմարի ինչ ստեղծողին՝ և ստեղծուածոյն , սակայն գերազանցապէս պատկանի ստեղծողին , ոպ՟ կարողութիւն որ է 'ի ստեղծուածս 'ի յաստիճան իմն , լինի 'ի յԱծ՟ 'ի գերադրականի աստիճանի , նմանապէս իմաստութիւն , բարութիւն , կատարելութիւն , և այլք այսպիսիք , ասին զայ՟ 'ի գերադրականի աստիճանի : Վ՟ն ասի ած՟ և կարողագոյն , և իմաստնագոյն , և գեղեցկագոյն , և այսպէս զայլոց : Ուստի ասէ օգոստինոս , վայելէ Ա՟յ որոյ է գերազանցապէս հասկանալ զհամայնս , և իմանալ . ո՛չ մեռանիլ , և ո՛չ ապականիլ . ո՛չ փոփոխիլ կարել , և ո՛չ լինիլ մարմին : Այլ խոստովանիմք զնա ոգի ամենազօր , ամենարդար , ամենագեղեցիկ , ամենաբարի, ամեներանեալ : Նա և կարէ այս՝ առարկութբ ցուցանել , զի ամ՟ բարիք գերազանցագոյն են 'ի ստեղծողն , քան 'ի ստեղծուածս , վասն զի միշտ իրն ազնուագոյն է 'ի պատճառն , քան 'ի պատճառեցեալն ,

ցեալն, որ արեգակնային ճառագայթն յառաջագոյն է 'ի յարեգակն՝ քան յօդ. և ջուրն մաքրագոյն է 'ի յակն՝ քան 'ի յառուն. և քաղցրութիւն յոյժ է 'ի մեղրն, քան 'ի մեղրախառնեալն ։

Յաղագս ծանօթութեան ԱՅ. ԳԼ. ԻԲ.

Ա Ծանօթութիւնք են հինգ, այսինքն, անծնելութիւն. հայրութիւն. որդիութիւն. հասարակ փչողութիւն. և ելողութիւն ։ Որոց առաջինն և երկրորդն՝ յարմարին հօր. և չորրորդն՝ հօր և որդւոյ. և երրորդն՝ որդւոյ միայն. և հինգերորդն՝ հոգւոյն սրբոյ ։ Դարձեալ՝ երեք ծանօթութիւնք. այսինքն, երկրորդն՝ երրորդն՝ և հինգերորդն՝ են անձնականք, վ̄ զի կացուցանեն զանձինս, և յատկապէս զանազանեն զնոսա. և նոքա միայն՝ են երեք միութիւնք երից անձանց՝ որովք երեք ասին անձինք ։ Ուստի թէպէտ հայր ունի զյատկութիւնս բազումս, սակայն հայրութ̄ ասի մի անձն, անորոշելի 'ի յինքն, և որոշեցեալ յայլոց ։ Իսկ անծնելութիւն հօր, առեալ լինի ապախտականապէս՝ զի նա ոչ է յումեքէ, և սակայն նշանակէ հայր զզանազանութիւն անձնականաբար, որ̄ անուանն ոչխարին, այնու զանազանի 'ի նշանեցելոց ։ Նմանապէս՝ և հասարակ բղխողութիւն է՝ մի ծանօթութիւն, և այն է՝ նոյն 'ի հայր և յորդի, և է՝ զանազանեցեալ յայլ ամ̄ ծանօթութեանց ։

Բ Արդ գիտելի է՝ զի յատկապէս խօսելով, երեք են յատկութիւնք անձնականք. այսինքն, հայրութիւն որդիութիւն բղխելութիւն. զի անձնական յատկութիւն այն է, որ միայն միոյ անձին յարմարի, և զանազանէ զնա յայլ ամ̄ իրաց ։ Գ Իսկ առնչութիւնք՝ են չորս՝ առաջին է՝ հօր առ որդի, այսինքն, հայրութիւնն ։ Երկրորդ՝ անդրադարձիլն. այսինքն, որդւոյ առ հայր, այս է որդիութիւնն ։ Երրորդն է՝ հօր և որդւոյ՝ առ ոգին սբ̄, այսինքն, հասարակ փչողութիւնն ։ Չորրորդն է՝ անդրադարձաբար հոգւոյն սրբոյ առ հայր և որդի, այսինքն, բղխելութիւն ։ Ծանօթութիւնք են հինգ, զի իւրաքանչիւր առնչութիւն է՝ ծանօթութիւն այլ ոչ հակադարձաբար. և վասն այնորիկ անծնելութիւն որ յարմարի հօր՝ պակասութիւն առնչութեն առ այլ սիրողն , ո՛չ է առնչութիւն ։ Նա և ծանօթութիքն ունին զբաղում անուանս , քան զի ասին ծանօթութիք, մի ծանուցանելոյն զանձինն, ասին և զանազանութիւք՝ զի զանազանեն զանձինս , այլ և ասին առնչութիք , զի անձինքն նոքօք առիրեարս յարաբերին, այլ և ասին իսկ յատկութիք , զի յատկապէս ներգոն 'ի յանձինսն ։ Եւ ծանի՛ր առանոր զկանոնս ծանօթութեանց . որոց առաջինն է՝ զի ո՛չ ամն ծանօթութի ստորոգի զմիւսն ։ Երկրորդ է՝ զի իւրաքանչիւր ծանօթութի է՝ էութի Ածային , որ է Ած ։ Երրորդ՝ ամ ծանօթութիք են միութի ։ Չորրորդ՝ ո՛չ ոք ծանօթութի ներգոյ յածայնում էութեն , որպէս զի զանազանեսցէ զնա , զի էութին ո՛չ զանազանէ՝ և ո՛չ զանազանի ։ Հինգերորդ՝ ծանօթութիքն վերացելաբար առեալ , ստորոգին զէութենէն , այլ թանձրացելաբար առեալ՝ ոչ ։ Ուստի բարւոք ասի՝ թէ էութին է՝ հայրութի, բայց ո՛չ ասի թէ էութինն է՝ ծնօղ ։ Վեցերորդ՝ ծանօթութի միշտ ներբերէ զարժանապատուութի ։ Եօթներորդ՝ ընդ դնիլ ծանօթութե՝ ո՛չ դնի անձն, զի յարմարի իմն ծանօթութեան՝ որոչ յարմարի անձին ։ Զի ծանօթութե պատկանի յատկապէս զանազանել , իսկ անձին զանազանիլ ։

Յաղագս Ածային անուանց ։ Գլ. ԺԴ.

ԱՄենայն անուն որ ասի զայ , կամ էական է , կամ անձնական , և կամ ծանօթական ։ Իսկ էական անուանց , ոմանք են իսկականք , որպէս Ած աստուածն՝ և նմանք սոցին ։ Եւ ոմանք մակադրականք, որպէս բարի՝ յաւիտենական՝ անչափ՝ և նմանք սոցին ։ Եւ անձնական անուանք են՝ որպէս հայր՝ և որդի՝ և սբ ոգի . այլ ծանօթականք են , ամ հայրութի . որդիութի՝ անծնելութի՝ հասարակ փչողութի , և բղխելութիւն ։

Եւ զայսցանէ գիտելի է՝ զի էական իսկական անունն՝ և աբսթրաքթում , այսինքն , վերացեալն , ոչ ինչ կերպիւ կարէ քարշիլ առ 'ի ենթադրիլ փոխանակ անձին ։ Ուստի՝ սուտ են առաջադրութիքս այսոքիկ . էութի ծնաւ զէութի . Ածութի զԱծութի . քանզի ներգործութի ծնելութե միշտ դնելի է 'ի թանձրացեալսն ։ Իսկ թանձրացեալքն , թէպէտ են եականք , սակայն կարեն քարշիլ առ 'ի ստորադրիլ մի անձին , և այս՝ ծանօթական բայիւք , և կամ նախադրութբք , ուստի միշտ ճշմարիտք են այսքիկ . Ած ծնաւ զԱծ . ստեղծօղն զստեղծօղ , Ած յԱյ ։ Նմանապէս և զմիջակ անուանց , որպէս լոյս 'ի լուսոյ ։ Եւ թէպէտ անուանս , իմաստութի , իցէ վերացեալ՝ սակայն ըստ ամփոփութե առեալ լինի իբր զթանձրացեալ , որպէս այս , իմաստութի յիմաստութե ։ Իսկ մակադրական եականաց , ոմանք ստորոգեն պարզաբար զԱծային գոյացութի , որպէս բարին , և էակն , ոմանք զԱծային էութի համանշանակելով զպատճառութի սկզբան և կատարածին , որպէս յաւիտենական , և կամ զպակասութի բացադրեալ չափոյ , որպէս անչափն . ոմանք նախկինաբար նշանակեն զԱծային էութի , և համանշանակեն զներգործութի 'ի ստեղծուածս , և այս՝ կամ ներգործութբ , որպէս ստեղծանել , արդարացուցանել , կամ ունակութբ , որպէս արդար՝ ողորմած . կամ զօրութեամբ , որպէս ամենակարող ։ Իսկ են բայք ոմանք , որոց նշանակութի , և եղանակ նշանակելոյ ոչ պատկանին Այ , որպէս ընթանալ , գնալ . քանզի Ա եղանակն է այլազան ձևութեամբ ոտւոյ , ցուցանող զշարժմունս զանազանս . և եղանակ նշանակելոյ՝ ոչ այլ ինչ է , քան թէ արտադրութի ձայնից , որ համակացուցանէ զիմացումն ընդ այնպիսւոյ եղանակի իմանալոյ , և հետևաբար զնիւթն իրին ։

Ուրեմն մինչ ասի զԱյ գնալ կամ ընթանալ , և այսպիսիք . նշանակութիք սոցին ըստ որում են ներգործութբ , ոչ յարմարի Այ . նա և եղանակ նշանակելոյն , այնու զի ներբերէ զանկատարութի իմն որ քան առ շարժումն , ոչ կարէ յարմարիլ Այ ։

Եւ են ոմանք , որոց նշանակութի յարմարի Այ , այլ ոչ եղանակ նշանակելոյն , որպէս ստեղծանել , և առնել ։ Եւ ոմանք են՝ որոց նա և նշանակութին յարմարի Այ , որ յայտ է 'ի բայս յայս՝ է , որպէս ասէ ելից , Որ Էն առաքեաց զիս ։ ելից. 3. 14. Դարձեալ գիտելի է զի ամ անուանք որք են կատարման , ասին ճշմարտապէս զԱյ . իսկ որք անկատարութե , կամ ո՛չ ասին զԱյ , կամ ասին ըստ առման մարդկային բնութեան , կամ ըստ նմանութե ։ Դարձեալ 'ի յԱծայինս են միայն երկու եղանակք ստորոգելոյ . այսինքն , կերպիւ

գոյացութե , և առնչութե , այլ գոյացութի ունի
զմիութի՝ և առնչութի զերրորդութի : Դարձեալ՝
անուանք ոմանք ասին զայ յաւիտենականապէս , ոպ
Տր . և ողորմած , որք համանշանեն զգործ 'ի ստեղծուածում
ըստ ունակութե : Իսկ ոմանք ժամանակապէս ,
որպէս տիրող՝ ողորմող՝ որք համածանուցանեն
զգործ 'ի ստեղծուածում ըստ ներգործութե :
Ոմանք բազմաւորապէս , որպէս անձինք : Ոմանք
եզականաբար՝ որպէս ած : Ոմանք յատկապէս՝ որպէս
յատկութիք անձանց : Ոմանք յատկացուցականաբար,
որպէս կարողութի և իմաստութի : Ոմանք դրականապէս՝
որպէս արդար : Ոմանք բացարձականաբար ,
որպէս անմահ , և այսոքիկ՝ առաւել ասին
Բ զայ , քան զդրականն : Քանզի լաւագոյն ասի զայ ,
որ ինչ ո՛չ է , քան որ ինչ է : Ոմանք փոխաբերականապէս ,
որպէս առիւծ՝ գառն՝ որք նմանօրէն ասին
զայ : Քանզի Ածաբանութի է՝ կրկին , այսինքն , նմանական ,
և խորհրդական : Նմանականն , անուանէ
զած 'ի վայրագունէ : Խորհրդականն , 'ի վերնագունէ :
Նմանականն՝ անուանէ զած 'ի ձեռն յարմարութե
իրաց , մինչ ասի առիւծ՝ գառն՝ և սոյնպիսիք :
Իսկ խորհրդականն , այսինքն , ծածուկն , անուանէ
զած այնու , զոր 'ի ծածուկ զգայ զնմանէ 'ի ձեռն
իմացականի տեսութեան , կամ 'ի ձեռն համանկատման ,
որպէս յորժամ անուանէ զած , համեղ , քաղցր ,
հեշտալի , և սոյնպիսիք : Սակայն յերկաքանչիւրում
ևս անուանի 'ի ձեռն ստեղծուածոց : Բայց 'ի նմանականն ,
'ի ձեռն արտաքսականաց . և 'ի խորհրդականն ,
'ի ձեռն ներքնայնոց , և պատուաւորագունից
ախորժմանց , զորս ընդունի հոգին 'ի վեր քան զինքն :
Եւ այդպէս՝ կարէ 'ի ձեռն պարզելի իմաստութե ,
այսպիսեաւ փորձելութե ճաշակել , թէ որպիսի իցէ
Ած : Ոմանք 'ի բուն հաւաքականապէս՝ որպէս երրորդութի ,
երրեակ : Ոմանք առնչականաբար՝ ոպ
հաւասար , նման : Ոմանք առնչականաբար առ ստեղծուածս ,
որպէս ստեղծող՝ ապաւէն , և այսոքիկ առնչութիք
իրականաբար ո՛չ ասին զայ առ այլս , այլ զայլոց
առ ած : Դարձեալ՝ երկու են նախնական անուանք
այ , այսինքն , որ է , և բարի . առաջնոյն նշանակի
գոլն այ բացարձակաբար յինքեան , և այսպէս
իմացեալ լինի որպէս անհուն , զի անունս այս՝ որ է ,
նշանակէ զանհուն գոյացութի , զի ո՛չ բաց որոշէ

զէ-

զեղանակ իմն գոյոյ , և ըստ այսմ պատկանի այ : Իսկ երկրորդին՝ ցուցանի ածային էութիւն որպէս պատճառ , զի արար ած զամ՛ վս բարութե իւրոյ :
Դարձեալ՝ 'ի յԱծաբանութե ենթադրի , զինչ , և այս վասն անուանց էութենականաց , որպէս Ած՝ Ածութի , կարողութի , էութիւն , և բնութիւն : Գ.
Դարձեալ ենթադրի արականաբար՝ որ , և այս փոխանակ անձին , և ենթադրի իգականաբար՝ որ , և այս փոխանակ ծանօթութե : Դարձեալ՝ չեզոքական սեռին առ ի գոյացութի Ածային , արականան անձն , իգականան ծանօթութի : Եւ այսու յայտ է , Դ
թէ ոչ պարտի երդիլ 'ի սաղն . մի ոմն է հայր ընդ որդւոյ . զի հայր և որդի՝ ոչ են մի անձամբ , այլ գոյացութբ , սակայն ասելի է՝ մի իմն է հայր ընդ որդւոյ , և ոչ մի ոմն :

Յաղագս թէ Ած է՝ անճառելի . Գլ. ԽԴ.

ՈՉ ինչ արժանաւորս՝ կամ յատակաբար կարէ ասիլ զայ , յաղագս գերազանցութե նորին : Ա
Քանզի ոչ անուամբք յատկապէս խօսիմք զնմանէ , զի անուանք նշանակեն զգոյացութիւն հանդերձ որակութբ , և այսպէս իմացեալ լինի անդ բաղադրութիւն իմն , տեսակի ընդ նիւթոյ , որ ոչ գոյ 'ի յած : Եւ ոչ դերանուամբք , քանզի դերանուանքն են ցուցականք , այլ Ած ոչ կարէ ցուցանիլ առ զգայութիս , վասն գոլոյն անմարմին . և ոչ առ իմացումն , վս գոլոյն անճառելի : Բ
Արդ՝ եթէ ասիցես , թէ դերանուանքն ըստ փրիջանոսի . եթէ անկցին 'ի ցուցականութէ , լինիցին վերկպարազի իմն , և ընդունոյն . ասելի է՝ թէ դերանուանքն որք անդ առացեալ զայ , ցուցանեն առհմանաւն : Նա և ոչ 'ի ձեռն ընդունելութեց , զի հետևելին ընդունելութիքն բնութե անուան և բայի : Գ.
Այլ և ոչ բայիւ , զի բայքն ժամանակաւ , ձևօք , և եղանակօք , թարց հոլովմանց՝ ե՛ն նշանակօղք առնելոյ կամ կրելոյ՝ որք ոչ անկանին 'ի յԱծ :
Նա և ոչ այլովք մասամբք բանին , վս զի ոչ են ենթանկանելիք կամ ստորոգելիք : Յայսցանէ յայտ է՝ զի ոչ կարեմք ծանուցանել զԱծ սահմանաւ , այլ շրջա-

խօ-

խոստութիւն իմն : Ուստի ասէ բեռնարդոս , զինչ է
յոհ. 1. 3. Ած. Ած է՝ յորմէ ամ , որով ամ , յորում ամ :
եբր. 11. Կամ այնպէս , Ած է՝ քան զոր ոչ ինչ լաւագոյն կա-
3. րէ խորհիլ : Կամ այսպէս՝ Ած է՝ կամք ամենակարող
1. յոհ. . է՝ ամենաբարի զօրութիւն , լոյս յաւիտենական , բան
5. 7. անփոփոխական , ծայրագոյն երանութիւն , անտեսանելի , և անմատչելի ՚ի յինքեան , նկատելի ՚ի յիւրսն , և միայն սքանչելի : Բազում եղանակաւ հաստատի ինչ զայս . նախ բնական առարկութիւն , որ ցուցանէ թէ մի է Ած , վարձատրող բարեաց , և պատժող չարաց : Երկրորդ՝ հաւատով , որով առնեմք մի գոլ զԱծ գոյացութիւն , և երրեակ անձամբ :
Երրորդ՝ սբ գրովք : Չորրորդ՝ հաւատական առարկութիւն : Հինգերորդ՝ արտաքին քարոզութիւն : Այլ արդ՝ ՚ի վերջին երկու եղանակս յայսոսիկ ոչ է յենլի եթէ ոչ ունիցին հաստատութիւն ՚ի յումեմնէ՝ յերից նախասացելոցդ : Քանզի է՝ կանոն , զի որք հաստատեսցէ ինչ զայս , որ ոչ լինիցի նմա առոյգ բնական առարկութիւն , կամ հաւատով , կամ սբ գրովք , յանդգնի և մեղանչէ :

Յաղագս նախագաղափարաց և դպրութն կենաց .

Գլ. ԻԵ.

Նախագաղափարք իրողութեանց՝ և օրինակք և բանք , այնպէս են ՚ի յԱծ , մինչ զի նախագաղափարն նշանակէ զարարողական պատճառն համակերպ գործոյ , իսկ օրինակն զպատճառն կերպական , և բանն զպատճառ վախճանական : Քանզի Ած՝ է սկիզբն ամ իրողութեանց , յորմէ են . նախատիպ՝ և օրինակական առ որոյ նմանութիւն են , և կատարումն առ որ են : Արդ՝ երեքեանքս այսոքիկ զանազանին յիրերաց , զի օրինակականն մի է , և համանշանակէ զպատճառութիւն օրինակին . իսկ պատճառեցեալքն մի են ՚ի պատճառն . այլ բանք և նախագաղափարք յոլովք են , զի առքա ասին ըստ նկատմանց իրողութեանց : Ե՛ւ նմին իրի նախագաղափարք բազումք են , որք համանշանակեն զճանաչումն : Իսկ ճանաչելիքն՝ զանազանին ՚ի ճանաչողն :
Նմանապէս և բանքն ՚ի յԱծ բազումք են , զի իւրա-

քան

քանչիւր ստեղծեցեալք՝ եղեն յատուկ բանիւք , քանզի զազրաւոր իմն է ասել՝ ըստ Օգոստինոսի , այնու բանիւ ստեղծեցեալ ձին , որով և մարդն ։

Արդ գիտելի է՝ զի կրկին է բազմութիւն , մին արգարեւ է իրաց . և ըստ այսմ ոչ են բազումք նախագաղափարք, կամ օրինակականք 'ի յա͞ծ , այլ միանանոր՝ է մի իր , որ է օրինակական ամենեցուն , այսինքն, էութիւն Ա͞ծային , որում ամենեքեան հետևին ըստ որում են բարիք ։ Իսկ միւսն է ըստ բանի իմացականութեան , և ըստ այսմ են 'ի յա͞ծ բազումք նախագաղափարք , վասն զի համայնք իրք ըստ որում են, հետևին էութեան ա͞ծայնոյ՝ ըստ որում է հետևելի , ոչ միայն միով կերպիւ , այլ զանազան կերպիւ , և ըստ զանազանից սատիճանաց ։ Այսպէս՝ էութիւն Ա͞ծային ըստ որում է հետևելի այսու կերպիւ յայմանէ ստեղծուածոյ , է յատուկ բան այսորիկ ստեղծուածոյ , և նմանապէս զայլոց ։ Ուստի ըստ այսմ յոլով նախագաղափարք են 'ի յա͞ծ , վասն զի իմանի էութիւն ա͞ծային ըստ զանազանից նկատմանց , զորս ունին իրքն առ նա հետևելով նմա զանազան կերպիւ ։ Ուստի այսպիսիքս՝ ոչ միայն իմանին 'ի ստեղծեցեալ յիմացութենէ , այլ նաև յանստեղծէ ինքեան ա͞յ ։

Քանզի գիտէ , և գիտաց ա͞ծ 'ի յաւիտենից՝ թէ զանազանք ստեղծուածք, զանազան եղանակաւ հետևելոց էին էութեան նորին ։ Եւ ըստ այսմ 'ի յաւիտենից եղեն 'ի միտս ա͞ծայնոյ յոլովք նախագաղափարք , ըստ որոց իմանին ա͞յ յատուկ բանք իրաց իմանեցեալք 'ի յա͞ծ . քանզի զայս ներբերէ անուն նախագաղափարի , այսինքն , զի իցէ տեսակ իմն իմանեցեալ 'ի յառնողէ , ըստ որոյ օրինակի գիտէ արտադրել զարտաքին գործն ։ Ասելի է երկրորդ՝ զի թէպէտ բանքն 'ի յա͞ծ , կամ նախագաղափարքն , են մի զօրութիւն , մի լոյս , և մի էութիւն , սակայն ասին բազումք բանք , և նախագաղափարք , վասն բազմութեան նախագաղափարեցելոց , զո՛ր օրինակ՝ ա͞մ գիծք բոլորակին միաւորին 'ի կէտն միջին . իսկ հեռացեալք 'ի միջակէտէն՝ զանազանին 'ի միմեանց։ Դարձեալ նախագաղափարքն են՝ որպէս ասէ Օգոստինոս , նախկին տեսակք իրողութեց , որք ըմբռնին Ա͞ծային իմացմամբ , քանզի որպէս 'ի միտս արուեստաւորին , նախկին է տեսակ իրին , քան զարտածումն գործոյն . այնպէս նախագաղափարք իրաց յառաջ քան զլինելն էին 'ի միտս ստեղծողին . զի ոչ հայէր 'ի յինչ արտաքոյ ինքեան՝ ըստ որում օրինակի առնէր զաշխարհս :

Ա Եւ գիտելի է՝ զի ամ՝ ստեղծուած՝ էր յառաջագոյն 'ի յԱծ՝ քան յինքեան, ուստի յորժամ ստեղծմամբ յառաջ եկին 'ի նմանէ, իւիք կերպիւ հեռանալ սկսան 'ի նմանէ : Վասն այսորիկ բանական ստեղծուածն, պարտի դառնալ անդրէն առ նա, ընդ որում յառաջագոյն էր միաւորեալ նախատիպարաւն, յառաջ քան զգոյն իւր, և նախատիպարին այն, ոչ այլ ինչ է, քան թէ նոյն ինքն Ած . և ըստ այսմ, 'ի տեղին ժող. 1. ուստի ելանեն գետք, դառնան անդրէն : 7.

Իրքն ըստ այնմ որք են 'ի յԱծ՝ ասին կեանք, որ ներբերէ զբան բարձրոյն, որպէս ասէ յոհան, որ եղև 'ի յոհ. 1. նա կեանք էր : Նա և ասին լոյս, որ ասէ զբան Ճշմարտին, 4. զի ասէ օգոստինոս, 'ի մեկնութիւն ծննդոց, ստեղծուածք՝ 'ի յԱծ լուսեն՝ և այսորիկ՝ վասն այն ասին, զի 'ի յԱծ ոչ է չար՝ և ոչ սուտ, և ոչ ունին նախատիպար 'ի նմա : Դարձեալ՝ զանազանութիւն է 'ի մէջ օրինակին, և գոյութե կենաց, և հայելոյն : Քանզի օրինակն ասի՝ նկատմամբ առիթս, որ վերադարձողաց իբրու առ նախկին պատճառ, որպէս 'ի վերայ ասացաւ, զի համանմանեցուցանէ զստեղծուածս : Իսկ հայելի համեմատութե իրաց գնացողաց : Այլ մի գոյութե կենացն, որպէս ասէ օգոստինոս. գիր կենաց է՝ որոյ սկիզբն յաւիտենական, անեղծանելի էութի, Ճանաչումն Ճշմարիտ, գիր անջնջելի, հայեցումն բաղձալի, ուսումն դիւրին, գիտութիւն քաղցր, խորութի անքննելի, բանք անթուելի, սակայն են մի բան ամենեքին : Իսկ բարոյականապէս խօսելով, հոգի մեր բազում կերպիւ է՝ 'ի յԱծ, այսինքն, որպէս ոստն 'ի ծառն . մեղուն 'ի ծաղիկն . նաւն 'ի յեզրն . վաստակաւորն 'ի հանգիստն . գանձն 'ի յագարակն . աշտարակն 'ի դղեակն . թռչունն 'ի բոյնն . ձուկն 'ի գետն . մոմն 'ի կնիքն . ակն 'ի յօղակն . մեղրն 'ի բջիջն . աստղն 'ի հաստատութեն , պատկերն 'ի հայելոջ, և իւրաքանչիւր իր՝ 'ի յատուկն իւր :

Յա

Յաղագս յատկացելոց Ածային անձանց ։
Գլ. ԺԶ։

Որպէս ամենայն էականքս հաւասարապէս պատկանին ամ անձանց , սակայն կարողութիւն յատկանայ հօր , իմաստութիւն որդւոյ , և բարութիւն հոգւոյն սրբոյ․ և այս վասն արտաքսելոյ զմարմնաւոր իմացումն , զի մի՛ հայր իբր թէ վասն ծերութեան կարծեսցի տկար , և որդի՝ իբր պատճառաւ մանկութեան տգէտ , և հոգին սբ՝ վն երագաշնչութեան՝ զայրացող ։ Այլ բացատրութիւնս այս՝ վերաբերի առ պարզամիտս · իսկ այլ կերպիւ բացատրին յատկացեալքս առ իմաստունս , այսինքն , զի կարողութիւն բնականապէս յառաջէ զիմաստութիւն, և Ա
երկոքին սոքա յառաջեն քան զբարի կամքն ։

Եւ արդ՝ զվերաբերեցելոց կարելի է խօսիլ կրկնակի, կամ ըստ իրին , և այսպէս ամենեքին նոյնեն , և ոչ յատկանան ումեք , և կամ ըստ բանին , և այսպէս ումանք յատկանան , և ումանք ոչ ։ Քանզի յատկացումն ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ առանձնական իմն վերաբերութիւն , վասն համանմանութեան ընդ յատկի այնմ անձին ։

Որպէս կարողութիւն ունի զնմանութիւն ընդ հօր , որ է ընդհանրական սկիզբն , և իմաստութիւն՝ ընդ որդւոյ , և բարութիւն ընդ հոգւոյն սրբոյ ։

Եւ զյատկացումն զայս ունի սովորութիւն մր գրոց , զի զգործս՝ որք յայտնեն զկարողութիւն, վերագրեն հօր ։ Եւ զգործս որք յայտնեն զիմաստութիւն , որդւոյ․ և զյայտնիչս բարութեան , վերաբերեն ՚ի հոգին սբ ։ Է՛ և այլ յատկացումն Հիլարիոսի որ ասէ՝ յաւիտենականութիւն է՛ ՚ի հայր , զի ոչ ունի զսկիզբն սկսանելոյ և լինելոյ յայլմէ ։ Գեղն՝ է՛ ՚ի պատկերին , այսինքն , ՚ի բանն , զի ամենեքին՝ է՛ գեղեցիկ ։

Եւ վայելումն ՚ի պարգեւն , այսինքն , ՚ի հոգին սբ , զի ամենեքին օգտակար է և հաղորդական ։

Է՛ և այլ յատկացումն , ըստ Օգոստինոսի , ՚ի հայր միութիւն , ՚ի յորդի հաւասարութիւն , և ՚ի հոգին սբ միաբանութեան և հաւասարութեան համաձայնութիւն ։

Արդ՝ յարմարի հօր միութիւն, զի որպէս միութիւն ոչ յումեքէ իջանէ , և ամ բազմութիւն ՚ի նմանէ արտածոսին ,

սին, այսպէս՝ Ած հայր ոչ է յումեքէ. իսկ որդին, և ոգին սբ է՛ն 'ի նմանէ: Դարձեալ՝ որպ միութն ծնանի յինքենէ զմիութն, այդպէս՝ հայր յինքենէ ծնանայ զինքն, այսինքն, զորդի: Իսկ 'ի յորդին ասի գոլ հաւասարութի, զի հաւասարի հօր՝ ոչ միայն կարողութբ, իմաստութբ, և բարութբ, այլ նա և այսու, զի որպ հայր տայ զիւր բարութի միւսոյ անձին, նոյնպէս և որդի: Այլ 'ի յոգին սբ՝ է՛ կապակցութի միութն, և հաւասարութն, քանզի է սէր երկոցունց, այսինքն, հօր, և որդւոյ: Դարձեալ՝ է՛ և այլ յատկացումն, զի 'ի հայրէ բան սկսանելոյն, և ծագելոյն՝ զի է ծայրագոյն սկիզբ. 'ի յորդին է բան օրինակելոյն, զի է ծայրագոյն գեղեցիկ. և 'ի յոգին սբ՝ բան առնելոյն, զի ամենևին օգտակար է և բարի:

Յաղագս կարողութե Այ: ԳԼ: ԻԵ.

Ա. Բ Կարողութին Այ կրկին է, այսինքն, բացարձակ, և կարգեալ. քանզի զբաղում ինչ կարէ առնել առաջնով եղանակաւն,
Գ. Դ զորս ոչ կարէ երկրորդիւն. մինչ զի բազում ինչէն, ընդ բացարձակի կարողութն, որք ոչ պատկանին նմա առնել այժմյս, սակայն կարէ առնել զայն պատշաճաւոր, և ըստ այսմ կարէր առնել:

Քանզի կարէ ած զամ. և ամ կերպիւ, այսինքն, ածել յոչնչոյն 'ի գոլ, և զայս ստեղծմամբ:

յօհան. 2. Դարձեալ կարէ յանկատարէն առնել կատարեալ, և
8. զայս աճմամբ: Դարձեալ կարէ փոփոխել զմի կա-
ղուկ. 22. տարեալն, 'ի միւս կատարեալ, որպէս յայտէ 'ի փո-
19. փոխմանէ գոյացութե հացին 'ի գոյացութիւն քի
մարմնոյն: Զայսպիսեացս ասէ օգոստինոս, տացուք այ կարել ինչ, զոր մեք իմանալ ոչ կարեմք:

Արդ կարողութի Այ երևի 'ի սկիզբն աշխարհի, 'ի
մէջն, և 'ի կատարածն: 'Ի յսկիզբն, զի 'ի յոչնչէ
սաղ. 118. 91. ստեղծ զամ. 'ի մէջն՝ պահելով զէակն՝ զի մի դառ-
1. կոր. նայցեն յոչինչ. իսկ 'ի վախճանին. զի զմեռեալսն զար-
15. 52. մանալի արագութբ յարուցանէ: Նա և երևի կարողութիւն այ 'ի յիւրս հոգևորս. քանզի դևքն ունին զիշխանութի փոխել զզգայութի և զերևակայութիս: Իսկ հրեշտակք ունին զիշխանութի 'ի վերայ սոցա,

ևս

ես և ՚ի վերայ իմացականիս մերոյ փոխել և լուսաւորել ։ Այլ ած ունի զիշխանութի, ոչ միայն ՚ի վերայ երից առացելոցս ՚ի վերոյ , այլ և կարէ փոփոխել զկամս , ուստի ասէ օգոստինոս , ած կանխէ ՚ի մեզ՝ զի կամեսցուք . և հետևի զի մի՛ ընդունայն կամեսցուք ։ Եւ զի թէպէտ ած ամենակարողէ , սակայն ոչ վերաբերին նմա մեղադրելի գործք , որ՛ ստելն , կամելն զչար ։ Այլ և ոչ պատժականք , որ՛ երկնչելն , ցաւելն . և ոչ մարմնականք , որպէս ննջելն , ուտելն, գնալն . մի թէ փոխաբերական արդեօք ։

Նա և ոչ անպատշաճ գործ , որք կարեն լինել երրակի ։ Նախ եթէ գործ իմն ընդդիմանայ Ածային մեծութեան , որպէս է՝ առնել մեծագոյն քան զինքն ։ Երկրորդ՝ եթէ ընդդիմանայ նորին ճշմարտութե , որ՛ առնել զիմն համանգամայն գոլ , և ոչ գոլ . և կամ զի անցեալն լինիցի ապառնի ։ Երրորդ՝ եթէ ընդդիմանայ նորին բարութե , որ՛ դատապարտել զպետրոս , և փրկել զյուդա ։ Յայսցանեայս՝ ասէ անսելմոս , թէ իւրաքանչիւր անպատշաճ՝ նա և փոքրագոյն իսկ՝ է՝ անկարելի առ ած , որոյ պատճառ է՝ զի կարողութիւն ած վասն գոլոյն ևս կատարելագոյն , ոչէ ՚ի չէութէ , և ոչ ՚ի ներքոյ այլում , և ոչ կարօտանայ իւիք , ուստի ոչ կարէ պակասիլ մեղօք . և ոչ ստորանուածիլ կրելով , և ոչ չքաւորիլ խնդրելով զօժանդակութի . և արդ՝ վասն ոչ զմեղադրականս՝ ոչ զպատժականս , և ոչ զնիւթականս կարէ ։ Սակայն ասելի է , թէ ած կարէ զամ , կամ ինքեամբ , կամ ստեղծուածովս ։ Զայնս ասեմ կարել զամ , որք են սոսկ կարողութե , և այս նմին իրի ասի՝ զի կարելն մեղանչել՝ ոչէ կարողութե , այլ տկարութե . իսկ ած պատկանի՝ կատարեալ կարելն , և կատարեալ տէրութի յորմէ ասէ դիոնեսիոս , տէրութիւնէ վերանցումն , ոչ չարեաց , այլ գեղեցկագունից և բարեաց , ամենակերպ և կատարեալ ստացումն , հաստատ և ոչ անկեալ զօրութիւն ։ Արդ՝ գիտելի է , զի ոմանք ներգործութիք վերաբերին ած ըստ պատճառութե և ոչ ըստ էութե , Ե
որպէս ուտելն , և ընթանալն ։ Ոմանք ըստ էութե , և ոչ ըստ պատճառութեան , որպէս արդարացուցանելն , ստեղծանելն , ոմանք ոչ այսպէս , և ոչ այնպէս , որպէս մեղանչելն ։

Յաղագս զօրութեան սքանչելեաց :

ԳԼ. ԻԸ.

Քանզի Անձային զօրութբ՟ լինի սքանչելիք,
վս՟ ճառելի է զսքանչելեաց :
Արդ՝ այն ասի սքանչելիք ըստ օգոստինոսի,
Ա որ երեւի բարձրագոյն եւ անսովոր,
'ի վեր քան զյոյս, եւ զկարողութիւն
սքանչացողին : Այլ արդ՝ առայն
զի լինիցի իր ինչ սքանչելի, չորս ինչ
պահանջի, առաջինն է՝ զի լինիցի յայ՟ :
Երկրորդ՝ զի լինիցի 'ի վեր քան զբնական կարողութի :
Բ Երրորդ՝ զի լինիցի յայտնի : Չորրորդ՝ զի լինիցի
առ 'ի հաստատութի հաւատոյ : Ուստի եթէ մի
Գ 'ի չորից յայսցանէ պակաս իցէ, զարմանալի կոչիլ կարէ
այլ ոչ սքանչելիք : Եւ ծանիր՝ զի ոմանք են 'ի
վերքան զբնութիւն, եւ ոմանք ընդդէմ բնութեան,
ղու. 2. 7. եւ ոմանք զատ 'ի բնութէ : 'Ի վերքան զբնութիւն են
այնք, որոց ոչ գոն նմանք 'ի բնութե, եւ ոչ 'ի կարողութիւն
բնութե, որպէս է՝ կուսին ծնանիլ :
Իսկ ընդդէմ բնութե են՝ որք լինին ընդդէմ սովորութեան
յոհ. 9. բնութե, սակայն անարատին առ համակերպութիւն
7. բնութե, որպէս է լուսաւորութի կուրին :
Այլ զատ 'ի բնութէ են՝ որք լինին կարգաւ նման
բնութե, ոչ սակայն՝ 'ի ձեռն սկզբան բնութեան, ոպ՟
ելից 'ի փոփոխումն գաւազանին յօձ · զի այն կարէր լինիլ
7. 10. ըստ կարգի բնութե յերկար ժամանակաւ ընդ փտիլ
եւ ընդ նեխիլ փայտին, վս՟ գոլոյն անդ պատճառաց
ծննդեանն, ոպ՟ յայտ է 'ի ձեռն այնց, որք եղանին ըստ
բանից սերմնականաց · բայց սակայն՝ զի ոչ գոյր անդ
գործ բնութէ, նմին իրի սքանչելեօքէր :
Եւ գիտելի է՝ զի երբեմն յառաջ գայ իրն 'ի յառնողէ
նմանւոյ յաջորդաբար, եւ այս վերաբերի բնութեան,
եւ ասի բնական : Եւ երբեմն յառաջանայ յաննման
առնողէն յանկարծօրէն, եւ այս վերաբերի հրեշտակաց՝
եւ կոչի զարմանալիք · իսկ երբեմն յառաջգայ 'ի յաննման
առնողէ խիստ, եւ այս վերաբերի առ ած՟, եւ կոչի
սքանչելիք : Նա եւ գիտելի է՝ զի երբեմն կարողութե
իմն՝ եւ գործ նորին՝ բնական է՝ ոպ՟ տեսանելիք եւ տե-

սա-

տանելն։ Երբեմն կարողութիւն է՛ հրաշական, և գործն
բնական, ոպ՟ յորժամ կոյրն լուսաւորեալ տեսանէ ։
Եւ երբեմն երկոքեան սքանչելիք, որպէս կուսին ծնանելն ։ Եւ ծանիր՝ զի սքանչելիքն, և զարմանալիքն՝
լինին երբեմն միայն 'ի յէակն, որպէս դադարումն արեգական, և դարձ նորին ։ Երբեմն լինի 'ի աճականս, Յեսու. 10. 13.
որպէս յորժամ ծաղկեցաւ գաւազանն Ահարոնի ։
Երբեմն 'ի զգայականս, որպէս եղև 'ի խօսիլ իշոյն Եսայ.
բաղամու ։ Երբեմն 'ի բանականս, որպէս 'ի գնալ 38. 8.
կաղացն, 'ի լսել խլիցն, 'ի խօսիլ համրոց, 'ի յառնել Թուոց.
մեռելոց, 'ի ծնունդս կուսական ։ Զի գիտասցես՝ թէ 17. 8.
ե՛րբ լինի սքանչելիք իմն. ծանի՛ր զզանազանութիւն Թուոց.
'ի մէջ բանից՝ պատճառականաց. սերմնականաց. և 22. 28.
բնականաց ։ Արդ բան պատճառական՝ է՛ կրողական Մատ.
զօրութիւն ստեղծուածոյ, առանց ամ՟ի պատրաստութեան բնութեան, մինչ զի ած՟ միայն կարէ առնել 'ի 11. 5. Դ
նմա է զորինչ կամի, որպէս եղև ծնունդ կուսին, և
'ի յայսպիսիս սոյն պարզաբար սքանչելիք ։

Իսկ բան սերմնական է՛ կրողական զօրութիւն ստեղծուածոյ, այլ հանդերձ հեռի պատրաստութ՟բ. որպէս եղև 'ի գաւազանն որ եղև օձ. և այս եղև փութով, քանզի և բնութիւն արարեալէր զայն, այլ
յամրապէս երկար ապականութեամբ ։

Ուստի յայտէ՝ զի յայնք որք լինին ըստ բանից սերմնականաց՝ մասամբ իմն են բնական, և մասամբ իմն
սքանչելիք ։ Իսկ բան բնական է՛ կարողութիւն հանդերձ հուպ պատրաստութեամբ, որպէս յայտէ 'ի
նիւթն՝ յորժամ է 'ի վերջին պատրաստութեան իւրոյ
'ի յառնուլ զձևս. և ըստ այսմ եղանակի բան
բնական է՛ 'ի սերմանեալ հատն առ 'ի յընձիւղել զհասակն, և այս ո՛չ է սքանչելիք ։

Յաղագս գիտութեն ԱՅ. ԳԼ. ԺԹ.

Ա Գիտէ Ած զամ ներկայապէս՝ համանգամայն՝
կատարելապէս, և անփոփոխարէն:
Արդ ներկայապէս ասեմ, այսինքն,
այնքան յստակ, իբր թէ ամք
լինէին ներկայաբար կայացեալք դէմ
յանդիմանս նորա: Նա և միանգամայն
գիտէ զամ, զի տեսանելով զինքն՝, որ է
ներկայ ինքեան, զամ ինչ տեսանէ:
ԱՅԼ և կատարելապէս. զի ճանաչումն նորին, ոչ
սուտելոյ կարէ, և ոչ նուազել: Նա և գիտէ անփոփոխապէս,
զի ճանաչէ զամ իմացմամբ իւրով, որ
է անփոփոխելի: Արդ գիտելի է՝ զի ած ճանաչէ
զժամանակաւորս՝ յաւիտենականապէս, զփոփոխելիս,
անփոփոխապէս. զներընդունականն, անսխալապէս.
զհանդերձեալսն, ներկայօրէն. զներփախեալսն, աններփախապէս.
զստեղծեալսն, անստեղծապէս:
Եւ զայլսն յինքենէ, ճանաչէ յինքեան և ինքեամբ:
Եւ ծանի՛ր զզանազանութիւն ՚ի մէջ գիտութե ԱՅ.
ՔՆ, հրեշտակաց, և մարդկան, զի ած գիտէ զամ
համանգամայն, վս զի տեսանէ զբաղումս միով, այսէ
ինքեամբ. ուստի ՚ի տեսութե այ ոչ զանազանի այն,
զոր տեսանէ՝ և որով տեսանէ, ոպ ՚ի մարդն՝ որ աչօք
տեսանէ. քանզի տեսանէ Ած զինքն ինքեամբ, և ՚ի
Բ յինքն տեսանէ զամ: Իսկ Քն ըստ այնմ որ մարդ,
Գ գիտէ զամ զոր գիտէ Ած՝ գիտութե տեսութեան,
թէպէտ ոչ այնպէս պայծառ, ոպ Ած:
Իսկ հրեշտակն՝ ունի Ածատեսակ զիմացականն, այսինքն,
Դ գիտութեբն այն որով ճանաչէ զիրս ՚ի բանն
այ, գիտէ միանգամայն ներգործութե որպէս զած.
Ե թէպէտ ոչ գիտէ զամ զոր գիտէ Ած: Արդ մարդս
գիտէ ներգործութե զմի միայն, զի թէպէտ տեսանիցէ
զբաղումս, սակայն զայնս ոչ տեսանէ միով ներգործութե
տեսանելոյ, այլ բազմօք. այսինքն, բազմօք
նմանութեբք իւրաց: Եւ թէպէտ իմաստութի այ
ոչ այլայլի յինքեան, սակայն զանազան անուամբ յորջորջի:
Քանզի ըստ այնմ որ իմաստութի այ է՝ ճանաչական
կարելեաց, ասի գիտութի. կամ ճանաչումն:
Եւ ըստ այնմ որ է՝ ճանաչական ամենից որք
լինին

լինելին յաշխարհի՝ ասի ուսութիւն ։ Ըստ այնմ որ լինի ճանաչական այնց որք լինին բարեպէս ․ կոչի համահաստատութի ։ Ըստ այնմ որ է ճանաչական ապագայից՝ կոչի նախատեսութիւն ։ Ըստ այնմ որ է ճանաչական առնելեացն ինքեան այ , անուանի սահմանութիւն ։ Դարձեալ ըստ այնմ որ է ճանաչական վարձատրելեացն , ասի նախասահմանութիւն ։

Իսկ ըստ այնմ որ է ճանաչական դատապարտելեաց՝ ասի անարգութիւն ։ Եւ արդ՝ զի ա՟ծային գիտութիւն է՛ ամենակատար , ճանաչէ զա՟մ առանձնապէս 'ի ներքոյ ա՟մ որպիսութեց՝ զորս ունին իրողութիւնք ։ Եւ վասն զհանդերձեալն գիտէ հանդերձեալ՝ զանցեալն անցեալ ․ և զներկայն՝ ներկայ ․ զբարին հաճանելի , և զչարն անարգելի ։ Իսկ թէ կամիցիս գիտել՝ թէ ո՛րպէս ճանաչէ ա՟ծ զչարն , ծանի՛ր , զի իր ինչ կարէ ճանաչել կրկին կերպիւ ․ կամ յատուկ տեսակաւ , կամ այլով տեսակաւ ։ Արդ՝ առաջին կերպիւ ճանաչի ունակութիւն ․ և երկրորդիւն , պակասութի ։ Դարձեալ՝ առաջին կերպիւն ճանաչի լոյսն , և երկրորդիւն խաւարն ։ Նոյնպէս ասելի է՝ թէ առաջին կերպիւն ճանաչի բարին ․ իսկ երկրորդիւն չարն , այսինքն , տեսակաւն որհակակայի ունակութեան , զի ոչ այլ ինչ է՝ չարն , եթէ ոչ պակասութիւն բարւոյ ։ Ուստի ասելի է՝ թէ ա՟ծ ճանաչէ զբարին , միով միջնորդիւ , այսինքն , յատուկ էութեամբ իւրով ․ իսկ զչարն , իբր թէ կրկնակի միջոցաւ ։ Քանզի էութեամբ իւրով ճանաչէ զունակութի դհակակայն չարին , և միջնորդութեամբ այնմ ունակութեան որ է 'ի յա՟ծ ճանաչողն , ճանաչէ զպակասութիւն բարւոյն , վ՟ն ասի չարն 'ի հեռաստանէ ճանաչեալ , ըստ սաղմոսին ․ զբարձունս սաղ․
'ի հեռաստանէ ճանաչէ , այսինքն , զչարս ։ 137․ 6․

Յաղագս նախախնամութեան Ա՟Յ: ԳԼ.Լ.

Սահման նախախնամութեան բացատրի քառակի՝ առաջին ըստ Օգոստինոսի : Նախախնամութիւն է նախագիտութիւն բարերարութեացն ա՟յ : Երկրորդ՝ նախախնամութիւն է նախակարգութիւն ուրուք առ 'ի փառս : Երրորդ՝ նախախնամութիւն է յառաջադրումն ողորմելոյ : Չորրորդ՝ նախախնամութիւն է՝ նախապատրաստութիւն շնորհաց 'ի ներկայս , և փառաց 'ի հանդերձելումն : Իսկ 'ի յառաջին սահմանն , նշանակի ա՟ծային ճանաչումն . 'ի յերկրորդն՝ ընտրութիւն . 'ի յերրորդն՝ կամքն . և 'ի չորրորդն՝ ուղղութիւն առ վախճան նախախնամութեան : Արդ՝ արարողական պատճառ նախախնամութեան է՝ ա՟ծ՝ ըստ նշանակելոյ ներգործութեանց անուան նախախնամութեան :

Հռօմ. 1. Եւ նիւթական պատճառ՝ է՝ այն որ նախախնամի,
3. և տեսականն է՝ եղանակ , կամ կարգ նախախնամութեան . զի նախ տուեալ լինի շնորհքն , և ապա
Եփես. փառքն : Իսկ պատճառ կատարունական է՝ կրկին ,
1. 4. այսինքն , զի լինիցիմք ս՟բք և անբիծք առաջի ա՟յ :
Հռօմ. 8. Այլ արդ՝ ծանի՛ր զզանազանութիւն չորիցս՝ այս , զորս
29. դնէ պօղոս . այսինքն , կոչման՝ արդարացուցանելոյն . նախախնամութեան , և մեծացուցանելոյն :

Զի կոչումն դարձուցանէ 'ի չարէն : Արդարութիւն հայի 'ի սկզբնական բարին շնորհաց : Նախախնամութիւնն , նկատէ 'ի վախճանական բարին շնորհաց: Իսկ մեծացուցանելն է՝ բարի հանդերձեալ փառացն : Կամ այսպէս՝ նախախնամութիւն 'ի ձեռն շնորհաց պատրաստէ զփառս : Կոչումն ընծայէ զշնորհս . արդարացուցանելն տայ զայն . այլ մեծացուցանելն , 'ի ձեռն շնորհաց բազմապատկէ զփառս : Եւ գիտելի է՝, զի կրկին է գործողութիւն 'ի յա՟ծայինս , որպէս և 'ի բնականս . մին դնէ զինչ յիրում արտաքուստ , որպէս ջերմութիւն հրոյ , և միւսն ոչ , որպէս տեսողութիւն .
Ա. ըստ այսմ և նախախնամութիւն ոչ ներածէ հարկ իրաց , զօրօրինակ . գիտէ ա՟ծ զի այսօր ուտելոց ես , թէ ոչ , սակայն այսու ամենայնիւ ունիս զիշխանութիւն
Ժող. 3. ուտելոյ և ոչ ուտելոյ : Քանզի եթէ նախախնամ-
18. նու-

նութիւն դնէր հարկ իրողութեց, հետեւի՝ ի բազում անպատշաճութիւն, զի ընդունայն խոստացեալ լինէին՝ բարեացն վարձս՝ և չարեացն պատիժս։ Դարձեալ՝ անիրաւապէս լինէր հատուցումն՝ բարեաց բարի՝ և չարեաց չար։ Դարձեալ՝ ած լինէր արարող չարեաց մեղաց։ Դարձեալ՝ առանց բանի լինէր յուսալ յինչ · կամ մաղթել։ Դարձեալ՝ խափանէր անձնիշխանութի մեր՝ որ ունի զինքն առ երկոսին կողմանսն։ Դարձեալ՝ ոչ բարեգործքն լինէին գովելիք, և ոչ չարագործքն պարսաւելիք։ Այսպէսն գիտելի է՝ զի նախագիտութիս այս, եթէ ած նախատեսէ յապառնիս՝ ի հարկէ լինիցի · կրկին է, զի չարամանեալ է՛ ճշմարիտ, և բաժանեալ սուտ։ Քանզի անդ է՝ հարկաւորութիւն համահետեւութե, և ոչ համահետեւողին, զի թէպէտ իցէ անդ ունելութիւն, կամ ներբերումն միայն առ յայլ ներգոյս առեալ · սակայն ոչ է հարկ զի եզերք նորին իցեն ներգործութեամբ, որօրինակ, եթէ է՛ մարդ, է՛ կենդանի, հարկաւորութիւն է՝ հետեւութե, և ոչ հետեւողին · քանզի այս կարէ ոչ գոլ · բայց հետեւութի կացցէ։

մատ. 23. 33.
յոհան. 1. 5.
սաղ. 118. 123.
սիրաք. 31. 10.

Եւ այսմ դնէ օրինակ պօէցիոս ՚ի գիրս մխիթարական ասելով · եթէ ած տեսանէ զոք առնել ինչ՝ հարկէ զի այն արասցէ զանիւն, սակայն տեսութիւն նր ոչ է պատճառ այնմ արարման։ Այսպէս ած տեսանէ զչար գործս ուրուք, այլ ոչ է պատճառ զի արասցէ զչարն՝ թէպէտ լինիցի, ոչ նա նախ եսես Դարձեալ բարեգոյն օրինակ, եթէ ոք ունիցէր զաչս այնքան սրատես, որպէս զի տեսանիցէր զաղագայս, ոչ վասն այնորիկ կայցէր զիրս առ հանդիպումն։ Դարձեալ՝ հիւսն բարեպէս տեսանէ զպակասութի գործոյն ՚ի նիւթոյ, այսինքն, ՚ի տախտակաց տանարի, ոչ սակայն է՝ պատճառ պակասութեան։ Դարձեալ՝ երկու ունի դէմս գիրն գալրութե կենաց. առաջինն է՝ արդարութի այժմեայ՝ յորմէ կարէ ոք ջնջել, և միւսն՝ յաւիտենական սահմանութեան, յորմէ ոչ ոք ջնջեսցի։ Եւ ծանի՛ր զի զանազանութի է ՚ի մէջ նախասահմանութե, և նախագիտութեան այ · զի նախասահմանութի է՝ նախաճանաչումն բարեաց, հանդերձ պատճառութբ իւրեանց · այլ նախագիտութի՝ առ է զնախաճանաչումն չարաց, առանց պատճառութե, որ է առեալ ՚ի կողմանէ անձնիշխանութե։ Եւ զի ասի ՚ի սրբոց, թէ նախասահմանու-

թէ լինի օգնեալ աղօթիւք, ո՛չ է այնպէս իմանալի,
թէ ժամանակաւորին պատճառեսցէ զյաւիտենականն.
այլ թէ ներգործութեան նախասահմանութեան, օգնեալ
լինի աղօթիւք. այսինքն, որքան առ շնորհս. և առ
փառս՝ զի առայն գործակցէ անձնիշխանութիւն
Բ նախասահմանեցելոցն: Ուստի որ՟ Ա՟ծ նախասահ-
մանէ զոք փրկել, այսպէս և զներքին որով պարտի
Գ փրկիլ, վ՟զ յիմար է որ ասիցէ, կամիմ առնել զհա-
ճոյս իմ, զի եթէ փրկելոց եմ, փրկեցայց, և թէ
դատապարտելոց՝ դատապարտեցայց: Որպէս յիմար
էր հիւանդն, եթէ ասիցէր՝ թէ կամիմ ուտել և
ըմպել, որ ինչ հաճոյ է ինձ, զի եթէ առողջանա-
լոց եմ, առողջացայց, և եթէ մեռանելոց եմ, մեռայց,
քանզի ըստ այսմ, անօգուտ լինին դեղք և բժիշկք:
Այլ ըստ ուղիղ իմացման, եթէ Ա՟ծ թող տայ անձնիշ-
խանութեան (որ ունի զինքն առ յերկու կողմունս)
անկանել ՚ի չարն, այսմ ոչ տայ թոյլ, եթէ ոչ արդա-
րութեամբ: Դարձեալ եթէ կանխեսցէ շնորհօք, ո՛չ
զրկէ զոք: Արդ՝ յորժամ Ա՟ծ զչարսն դատապարտէ,
և անարգէ. ներգործէ ըստ արդարութեան. իսկ յոր-
ժամ նախասահմանէ՝ առնէ ըստ շնորհաց, և ըստ
ողորմութեան, և այս ո՛չ է ընդդէմ արդարութեան:
1.տիմ. 2.4. Արդ՝ նախկին կամաւն, կամի Ա՟ծ փրկել զա՟մ մար-
դիկ, ըստ որում են մարդ: Իսկ երկրորդին կամաւ,
ո՛չ կամի զարդար մարդն դոլ անարգեալ. ըստ որում
է այնպիսի: Այս նախընթաց կամքն նկատէ զկարգ
բնութեան առ վախճան, ըստ որումէ կերտեցեալ յԱ՟յ:
Իսկ հետևեալ կամքն՝ նկատէ զկարգ անձին, ըստ որում
իւրով անձնիշխանաւ, կամ այլով, տրամադրեցեալ է
առ վախճան: Այսոքիկ ասացան զիրականութեան. իսկ
խօսելով տրամաբանօրէն, մինչ փրկութիւն մարդոյ
իցէ ներընդունական, ըստ որում այսպիսի, ո՛չ կա-
րէ բացորոշել հարկաւորութեամբ. քանզի որ կարէ
դոլ, և ո՛չ դոլ՝ է ներընդունական. և ո՛չ հարկաւոր,
որպէս ասէ փիլիսոփայն ՚ի յերկու մասունս պէրիար-
մէնիաս: Իսկ եթէ խնդրիցի, թէ զի՞ արդ նախա-
սահմանեաց Ա՟ծ՝ կամ ընտրեաց զայս, և ոչ զայն,
այս է անճառելի յայսմիկ մահկանացու կենի, զի յա-
ղագս այսմ աղաղակէ առաքեալն, հռովմայեցւոց, ժա՟.
հռօմ. 11.33. ո՜վ խորք մեծութեան իմաստութեան, և գիտութեան
Ա՟յ, որոյ անզննելիք են դատաստանք. և անքննելիք
ճանապարհ նորին: Քանզի եթէ ասիցեմք, թէ
անար-

անարգեալքն մերժեն զշնորհ, այս է ճշմարիտ, բայց եթէ իցեն նախասահմանեցեալք, ոչ մերժեն վախճանաբար։ Ուստի ասէ օգոստինոս ՚ի մատենի նախասահմանութեան սրբոց. շնորհն՝ որ տրի թաքնաբար ՚ի սիրտս մարդկանց, ոչ յումեքէ խստասրտէ բացամերժի. զի վասն այնորիկ տրի, որպէս զի բացաբառնիցի խստութիւն սրտից։

Յաղագս նախագիտութեան և անարգութեանն.

ԳԼ. ԼԱ.

Անարգութիւն է, որպէս ասէ օգոստինոս,
նախագիտութիւն անօրէնութեանց ումանց, Ա
և նախապատրաստութիւն դատապարտութեան
նոցին։ Ուստի ծանի՛ր զի երեք
են ՚ի յանարգութեան։ Առաջինն է՝ յաւիտենական
նախատեսութիւն անօրէնութեան։
Երկրորդ է՝ խստասրտութիւն, այսինքն,
յետս քարշումն շնորհաց ՚ի ներկայումս։
Երրորդ է՝ նախապատրաստութիւն յաւիտենական
տանջանաց ՚ի հանդերձելումն։ Այս եթէ խնդրի, Բ
արդեօք անարգումն ունի զպատճառ ՚ի կողմանէ
մարդոյն, ասելի է, որքան առ նախկինն՝ արդիւն
մարդոյ չէ՝ պատճառ, որ քան առ երկրորդն՝ է՝
արդիւնական և արարողական պատճառ, և որքան առ
երրորդն՝ է՝ պատճառ արդիւնական, և ոչ
արարողական։ Որպէս և ՚ի նախասահմանութեան են երեք
ընդդիմակք ընդդէմ այսոցիկ, իսկ յայսմիկ է
տարբերութիւն, զի նախասահմանութիւնն
նախապատրաստէ զփառս՝ ըստ հաճութեան այ՟։ Այլ անարգութիւն Գ
նախապատրաստէ զտանջանս, ըստ պահանջելոյ
արժանաւորութեան գործոյն։ Իսկ վասն
խստասրտութեան գիտելի է, զի փոխաբերականապէս ասի, առ
՚ի նմանութիւն խստութեան մարմնոց։

Արդ՝ խստութեան մարմնոց՝ հետևին երեք յատկութիւնք. առաջինն է՝ անպատրաստութիւն առ ՚ի յընդունել զտիպ։ Երկրորդն է՝ կայացումն առ ՚ի մնալ ՚ի յինքն։ Երրորդն է՝ ուժգնութիւն, առ ՚ի յընդդիմանալ։ Կերպիւքս այսոքիւք, ասի խստանալ սրտին եռակաբար։ Առաջին կերպիւն՝ անյարմար գոլով առ ՚ի յընդունել զշնորհսն։ Երկրորդիւն յարեցմամբ

առ մեղս ։ Երրորդին՝ ազատամտութեան Աստուծոյն փչմանցն , և պատուիրանացն Աստուծոյ ։ Ուստի խնդրի ,
Գ արդեօք նախադիտեցեալքն յԱստուծոյ , կարեն անարդիւնաւորիլ , և հակադարձաբար ։ Առ որ ասելի է՝ թէ գիտութիւնն Աստուծոյ բաղդատի առ իրս առեղծեցեալս , որպէս արհեստն առ արհեստագործեցեալն . ուստի որպէս արհեստն՝ ոչ միայն է ճանաչողական , այլ նաև արարողական այնց , որք եղանին ըստ արհեստի . իսկ այնց՝ որք խոտորին 'ի կանոնաց արհեստին, է՝ ճանաչողական միայն . այդպէս և գիտութիւն Աստուծոյ, է՝ ճանաչողական , և արարողական ամենից բարեաց . իսկ ոչ չարեաց , կամ մեղաց , որք են խոտորմունք ոմանք , 'ի յաւիտենականէ օրինէ նորին , առ յորս՝ գիտութիւն Աստուծոյ , է՝ ճանաչողական միայն . և ոչ պատճառողական ։ Իսկ այսպէս յայտէ , զի բարիք որք արդարանան 'ի ձեռն շնորհաց , ո՛չ միայն են ճանաչեցեալք յԱստուծոյ յաւիտենից , այլ նաև առ 'ի յունել զշնորհ ։ Իսկ մեղաւորք՝ ոչ արդարանան 'ի ձեռն շնորհաց , և ո՛չ են ընտրեցեալք , կամ նախակարգեցեալք յԱստուծոյ՝ առ մեղանս . այլ միայն նախադիտեցեալք թէ ոչ են ունելոցք զշնորհ , այլ բացաթողելք 'ի բնութեան իւրեանց . և վասն զի ո՛չ ոք առնող՝ կարէ զայն , որ է 'ի վեր քան զինքն . և այսպէս բնութիւն բացաթողեցեալ յինքեան, ոչ կարէ 'ի յարդիւնաւորական ներգործութիւնս , որ է 'ի վեր քան զկարողութիւն բնութեան . բայց կարէ 'ի ներգործութիւնս մեղաց , որ է անարդիւնաւորական , որպէս առ իմն , որ է 'ի վայր քան զմարդկային բնութիւն կայացեալ ։ Քանզի մարդ մեղանչելովն , իջանէ յարժանապատուութենէ իւրոյ բնութեան , և այսպէս յայտէ , զի նախադիտեցեալքն դիւրապէս կարեն անարդիւնաւորիլ , քան արդիւնաւորիլ ։

Յա-

Յաղագս կամաց ԱԺ· ԳԼ· ԼԲ·

ԿԱմքն մեր, է՛ կրկին. առաջինն է՛ բարեհաճոյն, և այս ևս է երկակի, այսինքն, յառաջ ընթացեալ. և հետևեալ, զորմէ տեսցես 'ի վեր՝ 'ի գլուխ . Ը̅ արդ յառաջ ընթացն, ո՛չ միշտ կատարի. իսկ հետևեալն, ո՛չ երբէք մնայ անկատար ։ Երկրորդն է՛ կամք նշանի, և այս մնայ երբեմն անկատար. որոյ պատճառն է, զի կամքն մեր կարէ անուանիլ կրկին կերպիւ, այսինքն, կամ յատկապէս, և ըստ այսմ անուանի կամք բարեհաճութե. կամ անդրադարձաբար, և ըստ այսմ անուանի կամք նշանի ։ Նախկին կերպիւն, ասի կամիլ Ած զինչ, և այսպիսի կամիլս՝ է՛ ինքն Ած ։ Երկրորդ կերպիւն որ անդրադարձաբար, է՛ ըստ կերպի կամելի ունել զինչն, և կամիս այս՝ ո՛չ է Ած ։ Այլ՝ բաժանումն այս՝ ո՛չ է ըստ իրին . այլ ըստ ձայնին . որպէս բարկութի կարէ առնուլ, կամ յատկաբար շարժումն բարկութեան, կամ անդրադարձաբար՝ նշանն բարկութե ։

Այլ բարեհաճոյ հետևեալ կամքն մեր՝ է՛ ուղիղ, և գործունեայ, և անյանդիմանելի . ուստի վասնզի է ուղիղ, ո՛չ ինչ է ուղիղ, եթէ ոչ համաձայնացի նմին ։ Եւ զի է գործունեայ, ոչ ի՛նչ առանց նր̅ կարէ ներգործիլ, և ոչ ինչ ընդդէմ նորա լինիլ, և ո՛չ կարէ արգելանիլ իւիք ։ Եւ զի է անյանդիմանելի, զոչի՛նչ հրամայէ՛ կամ տայ թոյլ, եթէ ոչ, արդարապէս՝, ոչի՛նչ առնէ՝ կամ տայ խրատ, եթէ ոչ բարեպէս ։ Նշանք բարեհաճութեանն են հինգ, այսինքն, հրամանն, արգելումն, խրատ, ներումն, և ներգործութի ։ Որոց թուոց բանականութի այսպէս առեալ լինի ։ Կամս ածային յատկաբար խօսելով, է կամ ներկայից . և կամ ապագայից ։ Եթէ նկատմամբ ներկայից . կամ բարի է այն, և ըստ այսմ է՛ ներգործութի, և կամ չար, և ըստ այսմ է՛ ներումն, այսինքն. թոյլատուութի ։ Եթէ նկատմամբ ապագայից, և այս է եռակի ։ Կամ է՛ չար, և ըստ այսմ է՛ արգելումն . և կամ բարի հարկաւոր, և ըստ այսմ է հրաման. և կամ բարի կատարելութե, և ըստ այսմ է՛ խրատ ։ Արդ՝ ընդդէմ առաջին երից, կարէ ինչ լինիլ. զի ունին զինքեանս իբրեւ 'ի լինիլ:

Այլ ընդդէմ վերջին երկուցն, որ է ներել. եւ ներգործել, ոչ ինչ կարէ լինիլ. զի ունին զինքեանս իբրեւ 'ի յեղեալ գոլ. եւ որ եղեալն է, ո՛չ կարէ ոչ լինիլ: Եւ գիտելի է զնշանաց յայսցանեաց՝ զի հրամանն առնէ պարտական՝ առ 'ի գործել զբարին:

Իսկ արգելումն՝ առնէ պարտական, առ 'ի խորշելոյ 'ի չարէն: Այլ խրատն է՝ ուսումն, որով գիտեմք թէ այն՝ վասն որոյ է խրատն՝ թէ լինիցի, տայ զփառս, եւ թէ ոչ՝ ո՛չ առնէ պարտական տանջանաց: Եւ ներումն՝ առնէ զպակասութիւն արգելմանն. եւ է՝ նշան Ածային կամացն, ո՛չ նկատմամբ առ թոյլ տուեալ չարն՝ այլ նկատմամբ բարւոյն, որ 'ի թոյլ տուեալ չարէն առաջաբերի: Քանզի ո՛չ տայ Ած թոյլ՝ լինիլ չարին, եթէ ոչ առաջաբերեսցէ անտի զբարին, որպէս յայտէ 'ի սատանայական փորձութեց, որք բազմապատկաբար լինին 'ի յօգուտ սրբոց: տօբիթ. 2.18.

Դարձեալ՝ եթէ ո՛չ էր չարն, ո՛չ լինէր 'ի բարին գեղեցկութի, եթէ ոչ բացարձակաբար:

Իսկ այժմ համեմատութբ բարւոյն առ չարն, կարի իմն պայծառանայ: Իսկ ներգործութիւն՝ առնէ զաւարտումն իւիրն, որով վերածի ստեղծուածն առ ստեղծօղն: Այլ 'ի համաձայնութէ կամաց մերոց, առ Ածային կամն գիտելի է, զի կրկին է համաձայնութի,
Ա. Բ. այսինքն, համեմատութե, եւ համեմատականութե:

Նախկին կերպիւն է՝ համաձայնութի կամաց յիւրեան նինքեան, ըստ բանի էութե, եւ ըստ այսմ՝ անկարելի է այսու կերպիւ, զի հունաւորեցելոյն առ անհունն, ո՛չ է համեմատութիւն ինչ:

Երկրորդիւ կերպիւ, է՝ համաձայնութի, որ է երկրորդ, նմանապէս ունել զինքն՝ որ կարէ եղանիլ: Քանզի կարելի է նոյն կամեցեալն, գոլ այլապէս յերկաքանչիւրում, այսինքն, զի մարդն կամիցի զայն, զոր Ած կամի, ըստ կամելոյն որով կամի Ած զմեզ
Գ կամիլ: Զի եթէ զայս նկատեմք առ ձեւ կամելոյն, յայնժամ եթէ կամիմք առնուլ զվարձս գործոց մերոց, պիտոյ է՝ զի միշտ կերպարանեսցուք նմա 'ի կերպ կամելոյն: Իսկ եթէ խնդրեսցի՝ արդեօ՞ք բացարձակաբար պարտապանք իցեմք առ այս, ասելի է՝ թէ է՝ համաձայնութն իմն ներգործութբ, որում ո՛չ եմք պարտապան, եթէ ոչ 'ի սիրոյ. եւ ոչ յայնժամ, եթէ ոչ՝ ըստ ժամանակի. եւ ըստ տեղւոյ, ո՛չ երբ

ոք մտածէ զճշմարտութ՟ի ա՟յ , այսինքն , զմասունս հաւատոյ , պարունակողի հաւատալ , և յորժամ 'ի միտ ածէ զբարութի՟ն ա՟յ , պարտի սիրել ։ Է՛ և այլ համաձևութ՟ի ունակութե՟ , որում ոչ է պարտական ոք Դ Ե եթէ ոչ՝ յորժամ ներգործութե՟ 'ի միտ ածիցէ զբարութ՟ի ա՟յ . զի յայնժամ՝ պարտի պատրաստել զինքն ի սէր ։ Իսկ եթէ նկատեմք զհամաձևութիւն կամաց մերոց , առ ա՟ծային կամեցեալն . գիտելի է , զի կամօք զգայութե՟ ոչ պարտաւորիմք հետևիլ ա՟ծային կամացն , ոչ 'ի կամեցեալն , և ոչ 'ի կերպ կամելոյն ։

Քանզի զզգայական կամքն միայն է 'ի յանասունս , ուստի՝ որքան առ յայս՝ մեք այսու կամաւ ոչ մեղանչիցեմք , եթէ բանն չիցէր համակցեցեալ այսորիկ կամի , որոյ է զօրել զընդդիմութիւն , այլ ենթադասողական կամօք բանականին , պարտիմք համաձայնիլ ա՟յ 'ի կամեցեալն , որ ինչ առոյգ է մեզ բացարձակապէս կամիլ ա՟յ (իբր զփրկութիւն մեր) և մեզ պատշաճի կամիլն ։ Իսկ եթէ ոչ պատշաճի մեզ , թէպէտ ի՛ցէ բարի ըստ ինքեան , սակայն՝ ոչ կամի ա՟ծ մեզ զայն կամիլ . ուստի ոչ պարտիմք կամիլ , եթէ ոչ՝ որ քան է՛ կամեցեալ յա՟յ ։ Ուստի եթէ գիտեմ՝ կամեցեալ ա՟յ զմահ հօրիմոյ , սակայն կարեմ կամիլ զկեանս նո՟ր , և աշխատիլ առայն , զի ա՟ծ ոչ կամի կամել ինձ զներհակն հօր իմոյ ։ Դարձեալ՝ թէական կամօք , ոչ պարտաւորիմք համաձևանալ ա՟յ , ո՟պ յորժամ անձրևէր , կամէաք թէ ոչ անձրևիցէր , եթէ կամէր . զի թէականապէս կամելով , ոչ տարաձայնիմք 'ի կամացն ա՟յ . զի այս ոչ է պարզաբար կամիլ ։ Դարձեալ՝ զայն զոր ա՟ծ ոչ կամի պարզաբար , և բացարձակօրէն , որպէս զվճիռ սպառնալեացն զոր երբեմն փոխէ , երբ փոփոխին արդիւնք , ոչ պարտաւորիմք կամիլ ։

Իսկ համաձևութիւն ա՟ծային կամացն , կարէ մտածիլ քառակի , ըստ նկատման չորից պատճառաց ։

Նախ ըստ նիւթական պատճառին , ո՟պ յորժամ նոյն է կամեցեալն՝ որ ունի զինքն ո՟պ զնիւթ՝ առ որ է ներգործութ՟ի կամացն , և համաձևութ՟իս այս՝ է՛ միայն ըստ իրաց ինչ , և ոչ պարզաբար . զի պարզաբար գոլն ոչ է 'ի նիւթոյ , կամ 'ի տեսակէ ։ Երկրորդ՝ առեալ լինի համաձևութ՟ին , ըստ արարողական պատճառին , ո՟պ յորժամ ոք կամի զայն , զոր ա՟ծ կամի նմա կամիլ զայն . զի ա՟ծ զկամս զայս արար 'ի նմա ։

Քանզի ա՟ծ զիւրաքանչիւր կամս՝ կարգեաց 'ի բարին՝

և զայս կամի մեզ կամիլ ։ Երրորդ՝ ըստ կատարումական պատճառին՝ ոպ յորժամ կարգէ որք զգործս իւր ՚ի փառս այ ․ վն որոյ և ած արար զնմ , և յերկիքնանս յայտնիկ , էականապէս կայանայ ամ համաձայնութիւն ։ Չորրորդ՝ ըստ օրինակին պատճառին , այսինքն , յորժամ ՚ի սիրոյ կամեցի ոք՝ զոր կամի, ոպ և ած ՚ի սիրոյ կամի զնմ, և ՚ի յայս կայանայ համաձայնութի կատարելութե , այսինքն , զի ներգործութիւն կամաց մերոց , այնքան լինի համաձայնագոյն ածային կամացն , որ քան լաւագոյն , և կատարելագոյն ։ Արդ՝ ՚ի նախատասցելոցս հաւաքեմ , թէ լիապէս կամ կատարեալ համաձայնութիւն առ ած պարունակի զչորս իրս ։ Նախ զի կամեցուք զայն, զոր կամի ած ։ Երկրորդ՝ զի կամեցուք , զոր կամի ած կամիլ մեզ ։ Երրորդ՝ զի կամեցուք , վն որոյ և նա կամի ։ Չորրորդ՝ զի կամեցուք այնու կերպիւ զոր ինքն կամի ։ Այլ համաձայնութիւն անկատար , է եռակի ։ Նախ թէ համաձայնիմք ոք այ ՚ի կամեցեալն միայն , որպէս հրեայքն՝ էին համակամ ՚ի մահն քի ։ յոհան․ ԺԱ․ ԾԳ․ Երկրորդ՝ եթէ համաձայնիմք ոք ՚ի կամեցեալն և ՚ի վախճանն , այլ ոչ ՚ի կերպն՝ որպէս յորժամ ոչ լինի իմն ՚ի սիրոյ ։ Երրորդ՝ յորժամ համաձայնիմք ոք ՚ի Զ․ կամեցեալն , և ՚ի կերպն , այլ ոչ ՚ի վախճանն, որպէս յորժամ առ այլ վախճան հակամիտեցէ դիտաւորութիւնն ։

Յաղագս արդարութե ԱՅ․ ԳԼ․ ԼԳ․

Արդարութիւնն այ երեք կերպիւ առնուլ լինի , նախ յորժամ հատուցանի ումեք ըստ արժանւոյն ։ Երկրորդ՝ յորժամ խոստացեալն հատուցանի ։ Երրորդ՝ յորժամ անկատարին կատարի ։

Առաջին կերպիւն , հատուցանէ բարեացն , և պատիժ անարգեցելոցն , սաի գործ արդարութեան ։ Երկրորդիւն մարմնաւորութեն քի , է՛ գործ արդարութե , զի խոստացեալ եղև այն մարգարէիւք ։ Երրորդ կերպիւն սաի գործ արդարութե , յորժամ ած արդարացուցանէ զմեղաւորն՝ ընդ պատրաստելն նր զինքն առ շնորհս , առնելով նր որ ինչ է ՚ի յիւր կողմանէ ։

Եւ դիտելի է՝ զի 'ի յամ գործս այ, գտանի արդարութիւն, սաղ. 24.10.
և ողորմութիւն. այլ արդարութիւնն երբեմն է
ծածկեալ, և ողորմութիւնն յայտնի, որպէս 'ի յարդարացուցանել
ամբարշտին. և 'ի յառաջին գալուստն
Քի: Երբեմն արդարութիւնն է՝ յայտնի, և ողորմութիւնն
ծածկեալ, որպէս 'ի պատիժն մանկանց մեռելոց
առանց մկրտութե. և 'ի յերկրորդ գալուստն Քի:
Եւ երբեմն՝ երկոքեանն ծածուկք, որպէս 'ի նեղութիւն
իւրաքանչիւր արդարոց, և անմեղաց, որպէս Յոբ, և
'ի հիւանդութիւն տղայոց: Իսկ երբեմն երկոքեանն
յայտնի, որպէս 'ի հատուցումն արդարոց, և 'ի դատապարտութի
անարդեցելոցն, զի զնոսա փառաւորէ,
'ի վերքան զարժանն. և զնոսա պատժէ, նուազ քան
զարժանն, որ է ողորմութի: Այլ իւրաքանչիւրոցն
հատուցանէ ըստ արժանեացն, այսինքն, բարեացն
բարիս, և չարացն չարիս, որ է արդարութի:

Այլ թէ կամիս գիտել, որով արդարութբ պատժի
մարդն՝ յաւիտենականապէս վն մեղաց, որ լինի 'ի
միում բոպէի: Նախ ծանիր վկայութբ սրբ գրոց, եսայ.
ըստ այնմ որ ասէ եսայի, որդն նոցա ոչ մեռանի, և 66.24.
հուրն ոչ շիջանի: Եւ սաղմոս Խը. մտցէ նա մինչև սաղ.
յազգ հարց իւրոց. և մինչև ցյաւիտեան զլոյս ոչ 48.20.
տեսցէ. և մատթէոս Իե. երթայք յինէն անիծեալք, մատ.
'ի հուրն յաւիտենից. և 'ի տեսիլն, Ժդ. ելանէ ծուխ 25.41.
նոցա յաւիտեան: Դարձեալ ասէ գրիգոր, եթէ ած յայտ.
ոչ լիցէր առաւել տեսող սրտից զորս արար, կարիցէր 14.11.
ասել անիրաւ, այնպիսի արդարութիւն. այլ վն
զի Ած հայի 'ի սիրտ, է՝ արդար՝ զի առանց եղերման
տանջիցին այնք, որք ոչ երբէք կամին կեալ
թարց մեղաց: Նոյնն ցուցանի և բանիւք, զի պատժի
մեղաւորն յաւիտեանս յաւիտենից, քանզի մեղանչեաց
իւրում յաւիտենին: Դարձեալ զի նիւթ
հրոյն, որ է պատ մեղացն է՝ յաւիտենական, նոյնպէս
և պատիժն: Դարձեալ՝ մեղքն՝ է՝ ընդդէմ
այնմ, որ է անհուն. ապա ուրեմն և պատիժն պարտի
լինել անհուն. այլ այս՝ ոչ կարէ լինել 'ի խստութեն,
ապա ուրեմն 'ի յարամնայութե: Դարձեալ՝ յորժամ
մեղանչէ մարդ, սխալէ 'ի յանհունս. կերպիւ ինչ բանականն,
կերպիւ ինչ ցասմնականն, և կերպիւ ինչ
ցանկականն: Ըստ բանականին սխալէ, մեծարելով
զհունաւորն քան զանհունն ենթադասելով զայնս
լաւագոյն: Ըստ ցասմնականին, յարելովն հունաւորին:

րին ։ Ըստ ցանկականին , բաղձալով լաւագունին ; ուստի պատշաճապէս պատիժն պարտի լինել անհուն ։ Դարձեալ՝ չար կամք մեղաւորացն է՛ յաւիտենական , ապա ուրեմն և պատիժն լինի յաւիտենական ։

Նաև նոյնն ցուցանի օրինակաւ , զի բռնելական վաճառումն , տայ զյաւիտենական իրաւունս ստանալոյ Տն ։ Դարձեալ՝ յանկարծահար խոցն առնէ յաւիտենականապէս ուղի ։ Դարձեալ՝ անկանելն ՚ի խորխորատ , է՛ ժամանակաւոր ; իսկ մնալն անդէն՝ յաւիտենական ։ Դարձեալ՝ քրէական վնասն , որ ընդդէմ արքայական մեծութե , է՛ ժամանակաւոր , այլ ծառայութի յաւիտեան ։ Դարձեալ՝ յանկարծօրէն խոցումն աչաց , առնէ զմշտնջենաւոր կուրութի ։

Դարձեալ՝ ըմպումն մահաբերին ՚ի միում բոպէի , գործէ զյաւիտենական մահն ։ Եւ օգոստինոս ասէ՝ թէ ած հատուցանէ չար՝ փոխանակ չարեաց , այսինքն , պատիժ՝ փոխանակ մեղաց , վս արդարութե , զի արդար է . կամ զի հատուցանէ բարի՝ փոխանակ չարեաց , այսինքն , զշնորհ անարժանից , վս զի բարի է . կամ հատուցանէ զբարիս փոխանակ բարեաց , այսինքն , զշնորհ փոխանակ շնորհաց , զի բարի , և արդար է ։ Այլ ո՛չ երբեք հատուցանէ չար , փոխանակ բարեաց , զի ո՛չ է անիրաւ ։ Եւ ծանիր՝ զի պատժի որք ՚ի ներկայս , վեց պատճառաւ , նախ վս ինքեան զի սրբեսցի ՚ի նմա անցեալ մեղքն . ըստ այնմ որ ասէ

յոհան. յոհան , ահաւասիկ ողջացար , այլ մի՛ և ս մեղանչեր ։
5.14. Երկրորդ՝ զի յաղագս մեղացն տանջեսցի յաւիտեան
գործ. ՚ի ներկայումս , և ՚ի հանդերձելումն , որոյ օրինակն
12.23. ունիմք ՚ի հերովդէէ , և ՚ի յանտիոքէ ։
2.մակա. Երրորդ՝ զի խրատեսցին ՚ի չարէն , յայտէ ՚ի պօղոս ,
9.28. որ եղև կուրացեալ մինչէր հալածիչ , զի յետոյ լու-
գործ. սաւորեսցի , և լինիցի բարւոք քարոզիչ . և երկրորդ
9. 8. կորնթացւոց , ժբ. ; ասէ՝ տուաւ ինձ խայթոց
2.կոր. մարմնոյ ։ Չորրորդ՝ զի փառս տացի ՚ի հանդերձե-
12.7. լումն , ըստ այնմ որ է՝ ՚ի գործոց , ժդ. գլուխ. բազ-
գործ. մաւ նեղութբ պարտէ մեզ մտանել՝ յայն հանգիստն ։
14.21. Այլ ՚ի յառաջին երկու պատճառն , ՚ի գործ ածէ ած
յոհան. զարդարութին , և ՚ի հետևեալ երկուսն , զողորմու-
9.3. թին ։ Հինգերորդ՝ պատժի որք վս այ , այսինքն , ՚ի
տօբիթ. փառս այ , ըստ այնմ որ ասէ յոհան , ոչ սմա է մեղք ,
2.18. և ոչ հօր ։ Վեցերորդ՝ յաղագս շինութե ընկերին ,
որպէս պատժեցաւ տօբիթ , զի տացի այլոց օրինակ
համ-

համբերութեն ։ Այսպէս և պատժին անմեղ մանկունքն, զի մի երևեսցի մեղաւորաց անպատուհաս, թէ երբեմն և ինքեանք պատժեսցին ։ Քանզի արդար դատաստանաւն այ պատժին, որք զշնորհսն վանեն, որպէս ադամ. և կամ զոչ շնորհեալսն յափշտակեն ; որպէս արուսեակ ։ ծննդ. 3.17. եսայ. 14.12. յայտ. 12.10.

Յաղագս ողորմութեն ԱՅ. ԳԼ. ԼԴ.

Ողորմութիւն, ըստ աստուածաբանութեն որ 'ի լաթինն, առի եռակի. նախ առի ողորմութիւն, իբր անջատիչ թշուառութեն սրտին. և այսպէս առեալ լինի բանն այս. ողորմութե Տն լի եղև երկիր. զի յերկինս ոչ կարօտանան ողորմութեան, զի անդ ոչ գոյ ողորմելութիւն. ըստ այսմ եղանակի՝ ողորմութիւն միայն է՛ յերկրի ։ Ա Երկրորդ՝ իբր թողացուցանօղ զխստութի սրտին. և այնպէս առեալ լինի անդ՝. ողորմութի, և ճշմարտութի, եկին ընդ ինքեանց ։ սաղ. 84.15. Քանզի ճշմարտութիւնն յառաջանայ ըստ խստութե. իսկ ողորմութիւն. բարեխառնէ զխստութիս զայս, վարձատրելոց 'ի վերքան զարժանն, և պատժելով 'ի վայր քան զարժանն. և այսպիսի ողորմութիւնս՝ է՛ յերկինս. և 'ի դժոխս ։ Երրորդ՝ առի ողորմութի, իբր թէ զարմանալի քաղցրութի՝ տուօդօղ զփրկութս, այնպիսի ողորմութիւնս՝ առաւել է՛ յերկինս. և թէպէտ՝ ած արդարև և ողորմած. սակայն՝ յառաւելագոյն առի ողորմած, քան արդար ։

Բ Քանզի առ 'ի կատարել զգործ ողորմութե, ոչ ինչ պահանջի եթէ ոչ կամք նորա, այլ առ 'ի կատարումն Գ արդարութե, պահանջի նա և 'ի կողմանէ մարդոյն, այսինքն ; պահանջումն ըստ արժանեացն ։

Արդ՝ ողորմութիւն այ երևի 'ի գործս ածային բարերարութե, զի տայ զթողութիւն մեղաց՝ թողլով զպարտաւորութի մեղացն, նաև զհետևմունս նորին որպէս աւէ սաղմոս, ո՛ քաւէ զմեղս քոյ. ըստ առաջնոյն, բժշկէ զամ հիւանդութիս. ըստ երկրորդին ։ սաղ. 102.1. Դարձեալ՝ պարգևէ արդարոցն զշնորհս, տալով նոցա զունակութի առաքինութե. և զշարժումն ։ Զի առաջնորդէ արարացէ զմարդն հաճոյ այ, և յաւիտենաունական կենացն արժանանայ. և երկրորդիւն, առնուցի վարձ նորին : Յայսցանէ ասէ սաղմոս, պսակէ զքեզ ողորմութբ, ըստ առաջնոյն. և գթութբ ըստ երկրորդին. և խօսի մի պսակի շնորհին :

Դարձեալ՝ տայ որոցն զփառս, և այս կրկնակի, զի այժմ յուսով, և ՚ի հանդերձելումն արդեամբք, յայսցանէ ասէ սաղմոս, ո՛ լնու ՚ի բարութե զցանկութի քո, ըստ առաջնոյն. Նորոգեսցի ոպ արծուոյ մանկութի քո, ըստ երկրորդին : Դարձեալ՝ տն ողորմութբ համբերէ մեղաւորաց. քաղցրութբ դարձուցանէ. զվրէժ խնդրելն՝ առնէ անտես. ՚ի բազում վտանգից փրկէ. զշնորհս ազատակամաբար պարգևէ. զտուեալն՝ բազմացուցանէ. զբազմացուցեալն՝ պահէ. և զպահեալն, յերկինս հասուցանէ : հռոմ. 9. 22. իմաս. 11. 24. երեմ. 3. 22.

Դարձեալ՝ ողորմութբ, տն զդարձեալ մեղաւորն առ ինքն՝ զուարթութբ ընդունի. առ ՚ի զղջումն, կակղացուցանէ զսիրտն : զվիրաւորութին՝ փութով թողու. զանիրաւութին յետ թողլոյն՝ ոչ յիշէ : դան. 13. 31. ղուկ. 15. 20.

Դարձեալ, ողորմութբ անէ զնեղութին՝ զի զմեղս քաւեսցէ. տայ զյաղթողութն, զի յորդորեսցէ զնէրն. տայ զխորհուրդս՝ զի բազմացուսցէ զվարձս. տայ զպատուհասն՝ զի փորձանացուսցէ վարձիւք : եզեկ. 18. 21.

Դարձեալ, ողորմութբ, զմոլորեալն՝ առ յինքն դարձուցանէ. և զնացողացն առ ինքն՝ առաջնորդէ. զդլորեալն՝ կանգնէ. զկանգնեալն, պահէ. և զպահեալն՝ մուծանէ ՚ի փառս : 1. պետ. 2. 25. մատ. 15. 31.

Կատարեցաւ գիրք առաջին, որ յաղագս անձային բնութեանն :

* * *

Յանկ

Ցանկ գլխոց՝, Երկրորդի գրքոյն, որ յաղագս ստեղծման արարածոց։

ա. Յաղագս ստեղծման էիցս։
բ. Յաղագս ընդհանուր բաժանման ստեղծուածոցս։
գ. Յաղագս բաժանման պարունակչացդ։
դ. Յաղագս բնութեան երկնից։
ե. Յաղագս բնութեան աստեղաց առ հասարակ։
զ. Յաղագս լուսոյ։
է. Յաղագս մոլորակացն։
ը. Յաղագս բնութե չորից տարերց։
թ. Յաղագս տպաւորութեցն որ 'ի յօդս։
ժ. Յաղագս ժամանակի։
ժա. Յաղագս հրեշտակաց առ հասարակ։
ժբ. Յաղագս զանազանութե քահանայապետութեց։
ժգ. Յաղագս յատկութեց հրեշտակաց։
ժդ. Յաղագս յատկութեց և գործոց իւրաքանչիւրոց կարգաց։
ժե. Յաղագս առաւօտեան, և երեկոյի ճանաչման հրեշտակաց։
ժզ. Յաղագս վերակացութեան հրեշտակաց։
ժէ. Յաղագս հաստատութե հրեշտակաց։
ժը. Յաղագս հրեշտակական պահպանութեց։
ժթ. Յաղագս խօսից հրեշտակաց։
ի. Յաղագս յատուկ անուանց հրեշտակաց։
իա. Յաղագս անկման հրեշտակաց։
իբ. Յաղագս հոգևոր անկման դիւին։
իգ. Յաղագս տեղական անկման դիւին։
իդ. Յաղագս նորոգման հրեշտակային կործանման։
իե. Յաղագս թէ վ՟ էր մեղք դիւին է անթողլի։
իզ. Յաղագս յատկութեց դիւաց։
իէ. Յաղագս չարութեն սատանայի ընդդէմ մեզ։
իը. Յաղագս արուեստին յատկապէս։
իթ. Յաղագս հոգւոյն՝ թէ զինչ իցէ ըստ սահմանին։
լ. Յաղագս թէ զինչ իցէ հոգին՝ ըստ իւրին։
լա. Յաղագս թէ զինչ է հոգին ըստ անուան։
լբ. Յաղագս եռակի ներգործութե հոգոյն։
լգ. Յաղագս զօրութեց տնկական հոգւոյն։
լդ. Յաղագս զօրութեց զգայական հոգւոյն։
լե. Յաղագս մասնաւոր զգայութեցն։

ԼԶ. Յաղագս հասարակ զգայութե՟ց ։
ԼԷ. Յաղագս երեւակայական զօրութեանն ։
ԼԸ. Յաղագս կարծողականին ։
ԼԹ. Յաղագս տրամախոհութեան ։
Խ. Յաղագս յիշողականին ։
ԽԱ. Յաղագս շարժողական եւ զգայական զօրութեանն ։
ԽԲ. Յաղագս զօրութե՟ բանական հոգւոյն ։
ԽԳ. Յաղագս բաժանման զօրութեանց հոգւոյ ։
ԽԴ. Յաղագս ձայնաւորական զօրութեանց ։
ԽԵ. Յաղագս կերպի ճանաչելոյ զիրս ։
ԽԶ. Յաղագս առնողական եւ կարողական իմացականին ։
ԽԷ. Յաղագս տեսական եւ գործնական իմացականին ։
ԽԸ. Յաղագս բանին եւ մասանց նորին ։
ԽԹ. Յաղագս շարժողական զօրութեանց հոգւոյն ։
Ծ. Յաղագս կամաց ։
ԾԱ. Յաղագս տրանջականին ։
ԾԲ. Յաղագս խղճիմտաց ։
ԾԳ. Յաղագս ներգործութե՟ հոգւոյ ։
ԾԴ. Յաղագս քանակութե հոգւոյ ։
ԾԵ. Յաղագս անմահութեան հոգւոյ ։
ԾԶ. Յաղագս անձնիշխանութե՟ հոգւոյ ։
ԾԷ. Յաղագս բնութեան մարդկային մարմնոյ ։
ԾԸ. Յաղագս պատկերացուցութե՟ց ։
ԾԹ. Յաղագս հասարակաց կանոնաց պատկերացուցութե՟ց ։
Կ. Յաղագս բոլոր մարդոյն ։
ԿԱ. Յաղագս յատկութեանց մարդոյն ։
ԿԲ. Յաղագս նախկին ծնողաց ։
ԿԳ. Յաղագս տուեալ պատուիրանացն ադամայ ։
ԿԴ. Յաղագս դրախտին ։
ԿԵ. Յաղագս անկման առաջին մարդոյն ։
ԿԶ. Յաղագս կարգի փորձութեանցն որ ՚ի մեղ ։

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ

Ածաբանականի Ճշմարտութե.

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ.

Յաղագս գործոյ ստեղծողին։

Յաղագս ստեղծման էից։ Գլուխ Առաջին։

Գերազանց բարութե, երեք են ելմունք, այսինքն, ծննդեամբ, փչմամբ, եւ ստեղծմամբ։ Առաջին երկոքեան ելմունքն, են յաւիտենից։ Իսկ երրորդն է՝ ժամանակաւոր զորմէ այժմ ճառելոց եմք։ Արդ՝ զանազանութիւն է 'ի մէջ ծնանելոյն, ստեղծանելոյն, եւ առնելոյն. քանզի իրն ելանէ 'ի դուրս յոչնչէ՝ ստեղծմամբ. այլ ելանէ 'ի դուրս յիմքէ, արարմամբ, զի առնելն է՝ գործել յայլայնոյ նիւթոյ. իսկ 'ի գոյացութէ ելանէ 'ի դուրս, ծննդեամբ։ Ածէ երեքին պատճառ իրաց. այսինքն, առնողական, օրինակական, եւ վախճանական, այլ ոչ ի՛նչ կերպիւ ասի նիւթական։ Բայց՝ է՝ զանազանութիւն 'ի մէջ գործելոյն այ, եւ ստեղծուածոցս. զի ած ներգործէ իսկոյն. իսկ հրեշտակն յանկարծօրէն, այլ բնութիւնն յամրապէս։

Դարձեալ՝ առաջին սկզբունք իրաց են յա՟յ անմիջաբար . այսինքն , նիւթ՝ և տեսակ ։ Իսկ հետևեալ պատճառեցեալքն՝ են 'ի նմանէ միջնորդութ՟բ բնութեան ։ Արդ՝ յաղագս ստեղծման աշխարհիս չորս են մոլորմունք ։ Քանզի ոմանք ասէին զաշխարհս գոլ յաւիտենական ։ Ոմանք ասէին զաշխարհս եղեալ, այլ ունել զնիւթական սկիզբն . և ոչ ստեղծեալ յոչնչէ ։

Իսկ ոմանք ասէին՝ զվերին ստեղծուածն , յառաջ բերեալ ա՟յ ինքեամբ , այլ զստորինս սպասաւորութ՟բ հրեշտակաց ։ Բայց ոմանք դնէին զերկու սկզբունս , որ՟ մանիքեցիքն , այսինքն , զմինն ծայրագոյն բարի , և զմիւսն ծայրագոյն չար՝ ասելով զանապականն 'ի բարի սկզբէն , և զապականացուս 'ի չարէն ։ Այլ զմոլորութիւս զայսոսիկ , արտաքսէ մովսէս . զառաջինն՝ , ասելով 'ի սկզբանէ . զերկրորդն՝ ասելով, ստեղծ . զերրորդն , ընդ ասելն ա՟ծ . զչորրորդն՝ ընդ ասելն , զերկին և զերկիր ։ Նա և հաւանելի իսկ է՝ թէ ա՟ծ ստեղծեաց զա՟մ համանգամայն , և ոչ զնոր ինչ տեսակ արար յետոյ , զոր ոչ էցէր արարեալ յառաջագոյն , կամ 'ի յլինքն , կամ 'ի նմանն իւր , որպէս Ա զհոգիս մարդկանց , կամ 'ի բանի սերմնականին , որ՟ յայտնէ յայնցանէ որք բնականաբար ածին 'ի գոյն ։

Եւ այս է որ ասի ա՟յ հանգչել յաւուրն եօթներորդի , ոչ 'ի յաշխատութէ , և 'ի գործոց , այլ որ՟ ասացան , 'ի նոր տեսակաց ստեղծմանէն ։ Զվեցօրեայ գործոցն , ասեն ոմանք , թէ ոչ իմանի անդ՝ կարգ ժամանակի , այլ բնութեան . զի ասեն՝ զա՟մ ժամանակաւ համանգամայն եղեալ , ստեղծեալ, կարգեալ , և իւրեանց տեսակօք զանազանեալ ։ Եւ այլք ասեն՝ զա՟մ համանգամայն ստեղծեալ 'ի նիւթոջ , այլ ո՛չ 'ի յայտնի իմ՟ տեսակ , որպէս առին 'ի հետևեալ աւուրսն , և կերպս այս՝ է՛ առաւել ըստ նկարագրին Բ քան զառաջինն, այլ առաջինն , է՛ առաւել ըստ բանականութեան ։ Քանզի ա՟ծ կրկնակի ներգործէ , զոմանս առնէ միջնորդութ՟բ բնութեանն, և այսոքիկք լինին մի զկնի միոյ ։ Իսկ զոմանս առնէ ինքեամբ անմիջաբար . որպէս ստեղծանելն , թողուլ զմեղս , հեղուլ զշնորհս , և այլք նմանք , և այսպիսիքս՝ լինին իսկոյն՝ լիաբար՝ և կատարելապէս ։ Եւ արդ՝ զի ա՟ծ զնախնական իրողութիւնս , ոչ յառաջածէ միջնորդութ՟բ բնութեան , այլ ինքեամբ անընդմիջաբար . երևի թէ իսկոյն արարեալքն զայնս կատարեալ . և

լիաճառապէս, ըստ նիւթոյն, և ըստ տեսակին ։ Իսկ յաւետակիցք են, չորեքեանս այսոքիկ, և սոքա են նախնական ստեղծուածք իրողութեց՝ հրեղէն երկինն, հրեշտակք, նիւթ աշխարհի, և ժամանակ ։

Յաղագս ընդհանրական բաժանման ստեղծուածոց ։ Գլ. Բ.

Եռակի են ստեղծուածք, մարմնաւոր միայն, ո̅պ տարերքս, հոգևոր միայն, որպէս հրեշտակք, և բաղադրեալ 'ի սոցանէ, որպէս մարդս ։
Նա և մարմնաւոր բնութիւն, բաժանի 'ի լուսաւոր մարմին, ո̅պ աստեղք, և 'ի նսեմ, ո̅պ հող. և հրահալելիք, և սոյնպիսիք. և 'ի հողոյն յըստակ և թափանցիկ, ո̅պ ջուրն, և օդն ։ Դարձեալ՝ որպէս առէ գրիգոր, ստեղծուածոց, ոմանք ունին գոլ միայն, որպէս քարինք. ոմանք զկեալ՝ ո̅պ տունկք. ոմանք զգալ՝ ո̅պ կենդանիք. ոմանք զիմանալ՝ որպէս հրեշտակք, և մարդն ։ Դարձեալ՝ բաժանի աշխարհս՝, եռակի. այսինքն, 'ի նախնական օրինակին, որ է ա̅ծ, զի նա է օրինակ աշխարհի զգալւոյ, և 'ի մեծ աշխարհն՝ որ է զգալի աշխարհս. և 'ի փոքր աշխարհն՝ որ է մարդս ։ Յերիցս յայսցանէ, առէ յոհան, յաշխարհի էր, ըստ առաջնոյն. և աշխարհ նովաւ եղև, ըստ երկրորդին. և աշխարհ զնա ոչ ծանեաւ, ըստ երրորդին ։ յոհ. ա. 10.

Ա Դարձեալ՝ զանազանութիւն է 'ի մէջ տարրին և տարրեղինին, և հինգերորդ էութեն ։ Տարրն է՝ առաջին սկիզբն բաղադրելեաց, սակայն ոչ բաղադրեալ.

Բ ուստի հողն, ջուրն, օդն, հուրն, ոչ են առ մեզ սոսկ և պարզ տարր. զի սոքա մերձեալ շփոթին առ իրեարս, և մանաւանդ յայնմիկ մասին, ուր հպելին իրերաց ։ Տարրեղէն է՝ խառնաքանչիւր մարմին բաղադրեալ 'ի չորից տարերաց ։ Հինգերորդ էութիւնն է՝ մարմին պարզ, որոշեալ ըստ ինքեան յամ տարերաց, և տարրեղինաց, նիւթով, նաև տեսակաւ, բնութբ, և զօրութբ, ոչ ունելով զներհակութիւն 'ի յինքեան, ուստի և ոչ ունի իսկ զապականութիւն ։

Գ Դարձեալ վեցօրեայ գործքն, ըստ դանազանելոյն մանկոյի, բարոյականապէս այսպէս իմանի՝ քանզի ստեղծումն լինողութեց 'ի յոչնչէ , նշանակէ զարգարացուցանելն ամենայնին : Իսկ գործ հաստատութեն , նշանակէ զհաստատութի բարի դիտաւորութե : Եւ ժողովումն ջուրցն , զմիաւորութիւն սրտին : Եւ փայլումն լուսաւորացն զօրինակ բարեգործութե : Զկանց և թռչնոց արարումն , զկացութի գործնականին , և տեսականին :

Կազմութի մարդոյն , զուղղութի դիտաւորութե :

Եւ յետ այսորիկ հետևի եօթներորդ օր յաւխտենականութե . այսինքն , հանգիստն : Դարձեալ՝ է՛ տեղի վերնագոյն , այսինքն , երկինն , ուր է ուրախութի միայն . և է՛ տեղի ստորնագոյն՝ որ է դժոխքն , ուր է տրտմութի միայն ; և է՛ միջին , այսինքն , աշխարհս՝ յորում են յուսալք վերնագոյնք , և երկնչելիք ստորնագոյնք: Իսկ սատանայ անկեալ 'ի վերնայնն մարմնոյն՝ և եղեալ արգելական 'ի ստորնագոյնն , զի ոչ էր վերանորոգելի: Իսկ մարդն անկաւ 'ի վերնոյն, և զետեղեցաւ 'ի մէջն . զի լինիցի նմա տեղի ուր ելանիցէ արդարութեբն , կամ իջանիցէ մեղօք :

Դարձեալ առ՛ օգտակարս , թէ է՛ տեղի իմ՝ յորում է ծայրագոյն բարի միայն , այսինքն , երկինն . և է՝
Դ ուր միայն է ծայրագոյն չար , որպէս դժոխն . և է՛ տեղի իմ բարի , այլ ոչ ծայրագոյն՝ որպէս դրախտն. և է՝ ուր միայն չար , այլ ոչ ծայրագոյն՝ որպ քաւարանն . և է՝ ուր չար և բարի , այլ ոչ ծայրագոյն մին 'ի նոցանէ , որպ աշխարհս այս :

Յաղագս բաժանման պարունակաց .

Գլ. Գ.

Արարածք մարմնական աշխարհիս , բովանդակն կայանայ 'ի յերկու . այսինքն , յերկնային բնութին , և 'ի տարրականս : Իսկ երկնայինն՝ բաժանի 'յերիս նախ կնագոյն երկինս . 'ի հրեղէնն , 'ի պլօրէն , և 'ի հաստատութիւնն : Իսկ ընդ հաստատութբն , որ է երկինն աստղալից , պարունակին եօթն պարունակք եօթեանց մոլորակացն , որ է երևակն՝ լուսնթագն՝ հրատն՝ արե-
Ա գակն՝ լուսաբերն՝ փայլածուն՝ և լուսինն :

Այլ անուանք պլօրէ երկնից , կամ ջրեղէնին , խմա-

եացլ

ցեալ լինի այն մասն , առաջնոյ նիւթոյ , որ ըստ իմաստասիրին՝ տեսակաւորեցաւ 'ի յերկուս պարունակս , այսինքն , որոց վերինն է՛ առաջին շարժումն. և բնութիւն պարունակացս այսոցիկ է՝ զի ամենեքին շարժեցին , բաց 'ի հրեղէն երկնէն , որ է անշարժ.
Իսկ տարրական բնութիւն, բաժանի 'ի չորս նախնական բոլորակս , այսինքն , հրոյ՝ օդոյ՝ ջրոյ՝ և հողոյ ։
Իսկ բոլորակ հրոյն, ունի զերիս ներկայարանս , այսինքն , զվերինն՝ որ կոչի հրային , և զմիջին , և զստորնային՝ որ ասի օլօմպիական ։ Նմանապէս և օդն ունի զերիս ներկայարանս , այսինքն , զվերինն՝ որ կոչի եթերային , և զմիջինն, և զստորինն՝ որ ասի օդային. 'ի վերինն է՝ ջերմութիւն և լոյս , վասն մօտաւորութեան արեգականն ։ Նմանապէս և 'ի ստորինն՝ վասն անդրադարձութեան շառաւիղացն յերկրէ ։
Իսկ 'ի միջին ներկայարանն , ուր ոչ կարէ հասանել անդրադարձումն շառաւիղացն , է՝ ցրտութիւն , և մթութիւն , ուր առնին բնակել դիւաց , ուր և արգելականք իսկ են . նաև լինին անդ՝ որոտմունք , և կայծակունք , և նմանք սոցին ։ Արդ՝ յայսցանէ հաւաքեա՛ զեօթն պարունակս , որք ունին պարփակեալ զերկիր և զջուր , որք և ամենեքին կարեն կոչիլ երկին ։ Այլ զամենեքումբք երկնօքս այսոցիկ , գերազանցէ երկին երրորդութեան , այս է , Ինքն ա͞ծ , որ է յամենեսեան , և 'ի վերայ ամենեցուն ։
Իսկ տարակացութիւն վերոյ ասացեալ մոլորակացդ , և պարունակացդ՝ են այսոքիկ . 'ի յերկրէ մինչև 'ի լուսինն՝ են 15625· մղոն . և 'ի լուսնէն մինչև 'ի փայլածուն , 7612· մղոն , և 'ի փայլածուէն մինչև 'ի լուսաբերն՝ նոյն չափ . և 'ի լուսաբերէն մինչև յարեգակն , 24433· 'ի յարեգակէն մինչև 'ի հրատն 14625· մղոն ։ Եւ 'ի հրատէն մինչև 'ի լուսնթագն 6812· մղոն ։ Բ
Եւ 'ի լուսնթագէն մինչև յերևակն՝ նոյնչափ ։
Եւ յերևակէն մինչև 'ի հաստատութիւն 24427· մղոն ։
Արդ՝ համահաւաքեա՛ , զի 'ի յերկրէ մինչև աստղալից երկինն՝ են , 107938· մղոն ։

Յաղագս բնութեան երկնից : ԳԼ. Դ.

Երկինն է՛ մաքուր մարմին , բնութ̅բ աննեւին
պարզ , էութ̅բ եւս նրբագոյն ,
քանակութ̅բ յոյժ մեծագոյն , որակութ̅բ
յոյժ լուսաւոր , թափանցութ̅բ պայծառագոյն
, նիւթով անձնամաքուր , ձեւով
բոլորակ , տեղաւ բարձրագոյն , և լայնութ̅բ
պարագրական ա̅մ ստեղծուածոցս՝
Ա որ լինին : Արդ յատկութիւնքս այսոքիկ յարմարին
հրեղէն երկնին , նա և առաջին շարժունին , այլ
բաց յայսցանէ հրեղէն երկինն՝ է՛ անշարժ , որ է
բնակութի ոգւոց սրբոց , և յատկապէս աթոռ ա̅յ
կոչեցեալ : Նմանապէս պլօրէ երկնին յատկապէս
պատկանին , որ է շարժմամբ արագագոյն , և 'ի
ստորինսն ազդողական զօրութե : Ըստ նմին օրինակի
ասելի է զհաստատութենէն՝ որում բազումք յարմարին
'ի վերասացելոց յատկութեց. և սա՝ է՛ անջրպետական
Բ ջուրցն , և աստեղօք զարդարեալ :
Դարձեալ երկնային մարմինքն բաժանին 'ի լուսաւորս՝
և յոչ լուսաւորս՝ և 'ի թափանցիկս :
Քանզի մարմին լուսաւորող է՛ արեգակն , որ միայն
լուսաւորէ 'ի մէջ աստեղաց : Այլ ոչ լուսաւորողք
ըստ ինքեանց՝ են այլք աստեղք , և այլք մոլորակք
, որք զլոյսն իւրեանց առնուն յարեգակնէն :
Իսկ մարմինք թափանցիկք՝ են ա̅մ պարունակք երկնայինք
: Դարձեալ՝ երկնային պարունակքն ընդշարժելն
ոչ փոխեն զտեղին , այլ շարժին 'ի տեղիս
իւրեանց : Վերնագոյնքն ազդեն 'ի ստորնագոյնս
զշարժական զօրութիս՝ զանձնականն և զզգայականն, և
ա̅մ ծնանելեացս զյառաջբերականն : Դարձեալ՝ թէպէտ
Գ կարօտանան տարրականաց որակութեց. զի ո՛չ
են ջերմ , կամ ցուրտ , կամ չոր՝ և կամ խոնաւ , սակայն
պատճառեն զայնս 'ի ստորինսն :
Բայց ոչ ազդեն 'ի յանձնիշխան կամսն , և ոչ ունին
Դ զզօրութիւն փոփոխելոյ զկամս մարդոյն՝ թէպէտ
մերթ փոփոխեն և պատրաստեն զխառնուածս մարմնոյն՝
որք ոչ ունին բռնադատել զկամս , այլ ձկտեցուցանել
Ե յաւէտ և նուազ 'ի զանազանս մարդիս :
Նա և ներգործեն երկնային մարմինքն՝ զզանազան նշա-

Նշանակութիւն աւուրց, ըստ լուսոյ արեգականն. և զզանազանութիւն ամսոց, ըստ լուսոյ լուսնոյն. նաև զզանազանութիւն ամաց, ըստ շարժման արեգական 'ի խոտորնակ բոլորակին. և զզանազանութիւն ժամանակաց, ըստ զանազանից ընթացից մոլորականաց՝ 'ի հեռանալն և 'ի մերձենալն և 'ի ցածնուլն, յետս դառնալն, և 'ի զանեղի առնուլն ։ Դարձեալ՝ է՛ շրջանակ իմն 'ի պարունակդ՝ ընդմիջահատող զգիշերահաւասարն, որ և ինքն ընդմիջահատի 'ի նոյնոյ՝ յերկուս մասունս հաւասարս, և մի մասն թեքի 'ի կողմն հիւսիսոյ, և միւսն 'ի կողմն հարաւոյ. և ասի այն շրջանակն ծօթիակոս, 'ի ծօէ, որ է կեանս. քանզի ըստ շարժման մոլորակաց, ենթ նմին է կեանք ամ՛ իրաց վայրագունից. կամ ասի 'ի ծօտիոնէն, որ է կենդանի. վ՛ս զի մինչ բաժանի 'յերկոտասան մասունս հաւասարս, ո՛ և իցէ մասն կոչի նշան, և ունի զանուանձնական անուն 'յանուանէ կենդանւոյ՝ վ՛ս իմիք յատկութեան, որ յարմարի այն քան ինքեան որ քան կենդանւոյն. կամ վասն տրամադրութեն աստեղաց զետեղեցելոց 'ի մասունս այնոսիկ ըստ կերպի կենդանեաց ։ Իսկ շրջանակս այս՝ լաթիներէն նշանաբեր կոչի, զի բերէ զնշանս, կամ վասն զի բաժանի 'ի յայնս ։ Բայց 'յարիստոտելէ 'յերկրորդում ծնելութեն, կոչի անուղիղ շրջանակ. ուր ասէ՝ թէ ըստ մատչելման, և հեռացման արեգական 'ի յանուղիղ շրջանակում, լինին ծնելութիւնք, և ապականութիւնք՝ 'ի յէսս ։ Իսկ անուանք նշանաց, և կարգ, և թիւ, ծանուցանին 'ի յոտանաւորս,

Խոյ՝ ցուլ՝ երկաւոր՝ խեցգետին ։
առիւծ՝ կոյս՝ կշիռ՝ կարիճ ասին ։
Աղեղնաւոր ընդ այծեղջերին ։
Ջրհոս՝ և ձուկ, որ է վերջին ։

Յաղագս բնութե աստեղաց առ հասարակ .

Գլ. Ե.

Գերագոյն աստեղքն բեւեռին 'ի հաստատութե, եւ միշտ շարժին ընդ նմին . են նիւթով մաքրագոյնք, ձեւով բոլորակք, քանակութե մեծք, տեսութե փոքունք, որակութե լուսաւորք, ճառագայթից սփռիչք, ստորնայնոցս ծննդականք, ընդունակք լուսաւորութե արեգական, հալածիչք խաւարի . եւ որ չափ գիշերն նսեմագոյն, այնքան առաւել փայլեն . ընդ մերձենալ արեգականն թագուցանողք զինքեանս, միրկաց եւ սպրդութեց՝ շարժողականք . Հանապարհորդաց նաւելոց ուղղիչք . որ քան առաւել մերձին առ բեւեռս, այնքան յաւէտ լուսաւորագոյնք առ հասարակ, սակայն իւրաքանչիւրքն փոքրագոյնք երեւեալք . որպէս յայտ է՝ 'ի ծիր յարդգողին, զանազանին պայծառութե՝ քանակութե՝ եւ զօրութեամբ :

Իսկ ծիր յարդգողին, է՝ բազմութի աստեղաց փոքրկանց իբր բոլորշարակցելոց, 'ի պարունակ տեղւոջ՝ ուր սփռի լոյս արեգականն : խաւարումն արեգականն է, յորժամ լուսինն ստորանկցէ զինքն արեգական, զի արասցէ զմթութի 'ի վերայ երկրի :

Ա Գիտելի է, զի ամ աստեղք խաւարին, եւ այս կամ յերկրէ, կամ 'ի մոլորակացդ : Եւ մոլորականքդ՝, ասին երբեմն յետ ընթացականք, երբեմն յառաջ ընթացականք, եւ երբեմն կայառականք . ըստ այնմ որ 'ի յէփիկիւքլիս իւրեանց, այսինքն, 'ի փոքրիկ բոլորակին, շարժին զանազան կերպիւ : Եւ մոլորականքն են աստեղք մոլորեալք 'ի մէջ երկնի եւ երկրի, առնելով զընթացս ընդդէմ հաստատութեանն :

Զի շարժմամբն զոր ունին 'յազդմանէ առաջին շարժողին, շարժին ուղղակի . այլ յատուկ շարժմամբ իւրեանց՝ շարժին թիւրապէս, ոչ տատանեն. իւրաքանչիւրն ունի զառանձին գոյն, եւ բոլորակ . եւ յորժամ մտանեն 'ի բոլորակս այլոց, հաղորդին որակութեց նոցին . սակայն ընդ ճառագայթել արեգականն, թագչին . որ քան մերձաւորագոյք են երկրի, այնքան փոքրագոյն ունին զբոլորակն, եւ որքան բարձրագոյն,

գոյն, այնքան յամրագոյն թուի գոլ բնական ընթացք նոցին ։ մարմինք նոցա ոչ են թափանցիք՝ այլ ընդդիմահարք, ապա թէ ոչ, ոչ խափանէին զմիմեանս։ Շարժումն առաջնոյ շարժունին, այսինքն, իններորդի պարունակելին յարևելից 'ի յարևմուտս՝, վերստին դարձող 'ի յարևելս, ասի բանական, ըստ նմանութեան շարժման բանին 'ի փոքրիկ աշխարհի, երբ լինի մտածումն 'ի ստեղծողէն՝ ստեղծուածովքս վերադարձող 'ի ստեղծօղն, առ 'ի կայանալ անդ ։
Երկրորդ շարժումն՝ հաստատութեան, և մոլորակաց՝ է՝ ներհակ սմին, 'ի յարևմտից յարևելս, վերադարձող 'ի յարևմուտս, որ ասի անբանական, կամ զգայական․ ըստ նմանութեան փոքրիկ աշխարհի, որ է 'ի յապականելեացս, առ ստեղծօղն, և վերստին դարձող առ ապականելիս ։

Յաղագս լուսոյ ։ ԳԼ․ Զ ։

Լոյսն է, որպէս ասէ փիլիսոփայն, ներ-
գործութիւն լուսաւորի ըստ այնմ որ է
լուսաւոր ։ Քանզի է ներգործական
որակութիւն լուսաւոր մարմնոյն, որպէս
ջերմութիւն հրոյն ։ Նա և լոյսն տայ գու- Ա
նոյն զգոլ զխառնօրական, որպէս առ-
նողական իմացականն, տայ երևակայու-
թեան զիմացական գոլն ։ Նա և է բերողական մէջ
ամենեցունց՝ որք 'ի յերկնից իջանեն առ մեզ ։
Զի նա փոխէ զոչ լուսաւոր մարմինն, 'ի լուսաւորէն ։
Նա է՝ որպէս ասէ իմաստասէրն․ ծիրանի զգեստ երկնից․ չարագործաց թշնամի․ նաւորդաց ուղղիչ․ աչք գիշերոյ․ և երես ա՟մ իրաց ։ Լոյսն որպէս ասէ օգոստինոս, ուղիղ ունի զգնացս և ոչ բնաւ զգնայ ընդ թիւր ։ Սա ա՟մ իրաց տայ զտեսակս և զգեղեցկութիւն, և առանց ն՟ր ա՟մ ինչ ծածուկ, և անծանօթ ։ Շարժումն նորա է՝ յանկարծօրէն, զի առանց յամելոյ լնու զա՟մ ։ Սա ընդ մակերևոյթ նսեմ մարմնոյն ոչ ներամուտէ, այլ 'ի թափանցիկ մարմինս․ ուստի ըստ թանձրութեան կամ անօսրութեան մարմնոյ, առաւել և նուազ հաղորդին ։ Այլ և լոյսն՝ առանց իւրոյն ապականութեան սփռէ զինքն 'յա՟մ տեղիս ։
Իսկ զայլոց յատկութեանց լուսոյն՝ խնդրեա յառաջի

կոյր՝ ուր ճառեայի ղարեգանկանեն: Եւ դիտելի է, զի լոյսն ասի լոյս՝ ըստ այնմ որ է 'ի լուսաւոր մարմնում. նաև կոչի ճրագ, ըստ այնմ որ է 'ի լուսաւոր մարմնում, այսինքն, 'ի յանդրբերեւօղ. ճառագայթ, ըստ այնմ որ է ընծայլրում. գոյն՝ ըստ որում է 'ի հոծախիտ մարմինսն. և ջինջ, ըստ այնմ որ է հաղորդական այլոց:

Յաղագս մոլորակաց յատկապէս. Գլ. Է.

Երեւակն՝ է 'ի մէնջ կարի իմն հեռաւորագոյն. ցուրտ և չոր. իմն զայս ներգործականապէս՝ և ոչ տեսանելաբար, որպէս և այլք մոլորակքն: 'Ի շաղկապութիւն սորա ընդ արեգական, թուլանայ ջերմութիւն արեգական: Եւ 'ի շաղկապութիւն սորա ընդ լուսնթագին, պայծառանայ ինքն, թէպէտ բնականաբար է դեղնագոյն: Վնասակար է, ընդ տիրելն նորա, ձագք ծնանին մեռեալք, կամ տկարք. առաւել վնասէ յետս դառնալոյն՝ քան յառաջ ընթանալոյն: Յամէ 'ի յիւրաքանչիւր կենդանակերպ՝ ամիս երեսուն. յորմէ հետևի թէ կատարէ զընթացս իւր 'ներ ամաց երեսնից:

Իսկ լուսնթագն՝ է՛ սպիտակ ըստ նմանութեան կաթին՝ և պայծառ որակութեամբ միշտ բարեխառն, զի ջե՛րմ է և խոնաւ: Վերին կողմն բոլորակին բարեխառնէ զչարութիւն երևակին: Յորժամ ելանէ 'ի բոլորակ երևակին, քարշէ 'յինքն զդեղնութիւն, թէպէտ է՛ պայծառ: Յիւրաքանչիւր կենդանակերպոջ լինի տարի մի. և այնպէս լնու զընթացս իւր 'յերկոտասան ամս:

Իսկ հրատն՝ է՛ ջերմ և չոր, վասն որոյ և վնասակար իսկ է: Յատկութեամբ իւրով զմարդիկք դրդուէ 'ի պատերազմ. ընդ մերձենալն նորա առ լուսնթագն, և լուսաբերն, նուազի վնասակարութիւն նորա:
Երևի հրեղէն, և բազմանշոյլ. յամ կենդանակերպ յամէ աւուրս քառասուն:

Իսկ արեգակն՝ ասի տասնապատիկ մեծ քան զերկիր, այլ ըստ փիլիսոփին՝ հարիւր և վաթսնապատիկ մեծագոյն է քան զամ երկիր, ջերմ է և լուսաւոր. կրէ զխաւարումն. և է՛ հասարակ ամենեցուն. ամ-

պով

ջով ծածկի · միայն լոյս ինքեան լուսաւոր , որ ո՛չ այլում մոլորակի պատկանի · ուստի և զանուն ընկալաւ 'ի լաթինս՝ սոլ , որ ստուգաբանի՝ միայն :
Լուսաւորէ զաստեղս · սակայն 'ի մերձ գոլն իւր զրկէ զնոսա 'ի լուսոյն : Միջին է 'ի մոլորակացդ · ատելի է բժոտեալ աչաց · և սիրելի առողջաց :
Զանազանէ զժամանակս · 'ի զազիր տեղեաց ոչ աղտեղանայ · զխոցեղէնսն կարծրացուցանէ և զկարծրնիւթս տարալուծանէ · զծաղիկս բանայ , և զպտուղս հասուցանէ , 'ի թափանցիկ մարմինս ներանցանէ , և ոչ դադարի անդ · զտեսութիւնն յետս նահանջէ , զգոլորշին վերացուցանէ , զկիսադունդսն լուսաւորէ մի զկնի միոյ · մերձենալովն առ մեզ՝ առնէ զամառն · և հեռանալովն՝ զձմեռն : Է՛ ակն աշխարհի :
Յիւրաքանչիւր կենդանակերպոջ մնայ աւուրս երեսուն , և ժամս տասն · զտարեկան ընթացն կատարէ իւր յատուկ շարժմամբն · իսկ կատարէ զօրն , շարժմամբ առաջնոյ շարժունին :

Այլ արուսեակն է՛ լուսաբեր՝ ջերմ և խոնաւ , զչարութիւն հրատին բարեխառնէ · յորժամ յառաջ ընթանայ արեգական՝ կոչի լուսաբեր , և յորժամ հետևի , կոչի երեկոր. ունի զգոյն պայծառ և ճառագայթեալ , 'ի գոյն ոսկեպղնձոյ : 'Ի մէջ աստեղաց առաւել ճառագայթէ · կատարէ զընթացս իւր յաւուրս երեք հարիւր քառասուն և ութն :

Փայլածուն՝ միշտ շուրջ ընդ արեգականն , և ոչ երբեք հեռանայ 'ի նմանէ աւելի քան զերեսուն աստիճանս · ունի զգոյն նշոյլարձակ · և ուր ուրեմն երևի վասն մերձաւորութեն արեգական · պատճառէ զգեղեցկախօսութի՛ · սիրէ ջուրց · և իշխէ [illegible] · լնու զընթացս իւր , երեք հարիւր երեսուն և ութ աւուրս :

Լուսինն՝ լուսաւորէ զգիշերն , առնու փոխ զլոյս իւր · կրէ զաճումն , և զնուազութի՛ : Ստորնագոյն է քան զամ մոլորակս · կրէ զխաւարումն՝ և առնէ · ունի զազդս՝ վս մերձաւորութեան նր առ ստորինայսս :
Երևի եղջիւրաւորեալ յորժամ սկսանի հեռանալ յարեգականէն , վս զի լուսաւոր մասն թաքչի 'ի մէնջ : Կոչի թագուհի երկնից , զի արեգակն իբրև զմիջին մոլորակաց , հաղորդէ զամ յատկութիս ամենեցուն · և զայնս անցուցանէ առ լուսինն , լուսով հանդերձ · իսկ ինքն լուսինն՝ զոր ինչ առնու յարեգականէն ,

այննոյնպէս 'ի ստորինայինն հեղու : Ուստի վս զի նովաւ այսպիսի կերպիւ ընդունիմք զզօրութիւս մոլորակացն, լրանի կոչի Թագուհի երկնից : Յայսցանէ կարէ հաստատիլ, թէ յորժամ լուսինն նորանայ, բարեգոյն է սերմանել, զի յայնժամ զզօրութիւս մոլորակացն, առատագոյնս առ ազդէ 'ի ստորինայինս. հոսէ և խոնաւ. ընդ յառաջ ընթանալն քան զարեգակն, նուազի. Բ և ընդ հետևիլն աճի, և յայնմանէ երկայնանայ. ներահոսութեամբ, և արտահոսութեամբ ծովու, նովաւ սրատանաւի : 'Իւրաքանչիւր ամիս ընթանայ յամ կենդանակերպսն :

Յաղագս բնութե չորից տարերաց. Գլ. Բ.

Հուրն ծախէ, և յաճախ դարձուցանէ, փոխէ 'ի նմանութի իւր զներգործականն, շարժի 'ի միջին կիտէն առ շրջաբերութի. վառէ և լուսափայլէ 'ի նիւթաւորս, այլ ոչ յիւրում բոլորակի :

Զստորինս վերածէ առ վերնագոյնսն. զի զհողեղէնս տարալուծանէ 'ի ջրեղէնս. և զջրեղէնս 'ի յօդեղէնս, և զօդեղէնս 'ի յինքն : Կակղացուցանէ զխիտն, և պնդէ զկակուղն. անօսրացուցանէ զստուարսն, որպ յայտ է 'ի տարալուծութի սառին. առնէ հոծ և խիտ զանօսրն. մաքրէ որպ յայտ է 'ի հրահալելիսն. ապականէ որպ այնք զորս ծախէ. պատահմամբ ցրտացուցանէ որպ յայտ է 'ի քացախն. է՛ թափանցական՝ հաղորդական՝ ներգործական՝ և անջատողական : Դարձեալ՝ ոչ է լուսաւոր յիւրում բոլորակին, զի ոչ է ընդդիմահար :

Զի ոչ ոք թափանցիկ մարմին լուսափայլէ, այլ մանաւանդ՝ է՛ լուսաւորելի. քանզի թէ հուրն յիւրում բոլորակին էր ընդդիմահար, խաւարէր զամ աստեղս՝ որք են 'ի վերոյ նր : Իսկ հուրս որ առ մեզ լուսափայլէ վս միաւորելոյն առնիւթն յորում է, և այս յայտ է այնու, զի մոմեղէն մի ընդդէմ եղեալ միւսոյն, առնէ ստուեր :

Իսկ օդն՝ է նուրբ՝ շարժուն՝ և յստակ. և յառ և 'ի սուր ճնչոյն՝ զովացուցիչ ջերմութեն սրտի. զարդարի թռչնովք. է՛ տեղի ազդմանց. օթևան ոգեաց դատապարտեցելոց. է՛ այլայլելի թեթև՝ անօսր.

ո՛չ լուսափայլէ , ող̃ և ո՛չ մարմին ինչ թափանցիկ , այլ է՛ լուսաւորելի ։

Իսկ Ջուրն՝ 'ի վերայ երկնից վերանայ . Հկամք զարդարի , ստորանկանի ամբոխմանց ; ամ̃ դեռք և Ջուրք Ա
ժողովին առ ծովս՝ ուստի ելին ։ Իսկ են Ջուրն օդոյն զթաչուես 'ի զարդ . և տայ տնկոց զանուցումն . և բարեգունութեամբ է՛ սահմանելի օտար կողպարան , այլ Բ
ոչ յատկութն ։ Է՛ մարմին թափանցիկ . ամենեցունց հասարակ ։ Կարծրասաւի 'ի ալոր . զծխածանն պատճառէ 'ի յամպս . մաքրէ զաղտս . ոռոգէ զերկիր . զջերմացեալսն իւրով ցրտութ̃ , և խոնաւութ̃ն՝ զովացուցանէ . զնաւս տանի . զլոյսն ընդունի , առ ակիղբն իւր դարձեալ ընթանայ , զսեղխս ունայնս լնու . զքարինս կոփէ . զհուրն շիջուցանէ . երբեմն զաշխարհս ողողեաց ։ Ի կարմիր ծովուն եւ ճանապարհ ժողովրդեանն ԱՂ . զսա փոխեաց Քս̃ 'ի գինի . զսա կարգեաց 'ի նիւթ մկրտութեն , և յետոյ հոսեաց 'ի կողէն իւրմէ ։

Իսկ հողն,'ի մէջ այլոց տարերաց՝ է՛ ստորնագոյն, և սեաւ . առաւել խտացեալ , ծանր , բոլոր , և յայլոց տարերաց շրջապատեալ . մայր պտղոց. արմատ տնկոց. դայեակ կենդանեաց. հիմն շինուածոց . ընդունարան մեռելոց . միջին կէտ աշխարհական արարածոց . յինքն պարունակէ զդժոխս . ցուրտէ , և չոր , և կարի ինչ նսեմ . նիւթ մարդկային մարմնոցն . Ունի յինքեան զհրահալելիսն . 'ի միջին կիտէն ըմբռնեալ անշարժ , 'ի ներսափակեցելոց դոլորշեաց դղրդեալ շարժի . դալարօք և ծաղկօք , և ծառովք, զեղեցկանայ . շուրջ զնովաւ բոլորակ շարժմամբ՝ երկինք հանդերձ աստեղօք շրջագայի . 'ի մարդկանէ և 'յանասնոց կոխի . և զամ̃ աղտեղութ̃ն կրէ յինքն ։

Յասացելոցս յայտցանէ , ոմանք պատկանին հողոյն ըստ գունոյն իւրոյ . ոմանք ըստ կազմուածոյն իւրոյ . ոմանք ըստ պարունակելոյն , ոմանք ըստ զօրութեան. և ոմանք ըստ օգտութեն ։

Յաղագս տպաւորութեան որ 'ի յօդս ։
Գլ. Թ.

Գիսաւոր աստղն, թէպէտ երևի իբրև զաստղ, սակայն ոչ է, այլ է վառեալ գոլորշի, 'ի մերձ գոլոյ հրոյն ։
Ա Սա արձակէ զբաշս լուսեղէնս. և նշանակէ զփոփոխումն թագաւորութեան, զպատերազմունս և զամբոխմունս ։

Իսկ բոլորակն՝ է՛ բակ սպիտակ, որ երևի երբեմն շուրջ զարեգականն, և զլուսինն, և զաստեղբք. և պատճառի 'ի միացելոց ամպոցն քարշեալ, և լուսաւորեալ նշոյլք մոլորականացն ։
Այսպիսի բոլորակս՝ է՛ նշան պարզութե ։

Իսկ աստղն՝ է՛ կրկին, այսինքն, ելեալ և իջեալ. ելեալն, լինի 'ի մասանց վառեալ գոլորշեացն 'ի բարձրագոյն մասն օդոյն, և երևի ելանել որպէս թէ թռչիցին կայծակունք 'ի հնոցէ ։ Իսկ իջեալ աստղն՝ է՛ հուր՝ արգելեալ 'ի յամպն, որ սակայն արտաքսի 'ի յընդդիմակաց ցուրտ ամպոյն, և անկանի առժամայն. վասն որոյ և երևի իբրև զաստղ անկեալ երկրայն, որ թողու զկնի իւր զհետս անկմանն ։
Լոյսն որ երևի 'ի գիշերի տրամբնթանալով զինքն յառաջանալ, է՛ գոլորշի մածեալ և իջեալ. և յորժամ իր ինչ պատահի նմա՝ վառի շփմամբն իւրով, և ժամանակ ինչ մնայ յօդս ։
Իսկ վիշապաձև երևեալն՝ է՛ գոլորշի ուժով, համագնտացեալ 'ի մէջ ամպոց՝ որոյ 'ի մի կողմն՝ է՛ ամպ ջերմ, և 'ի միւս կողմն՝ է՛ ցուրտ ։ Եւ յայնժամ վասն յարմար գոլոյն առ ջերմն կողմն ամպոյն, քարշի առ նա. և այնպէս կիզի մասն ներքին. և այս երևի իբրու շնչումն վիշապին. իսկ մասն միջին. գալարի որպէս զօձ. և թռչի միշտ 'ի կողմն՝ ուր շուրջ կայ նմին ջերմն ։

Այլ ամպն լինի, յորժամ զօրութե արեգական արտաքսորշէն գոլորշիք 'ի ջրոց, և 'ի ձախին տեղեաց, և ամբառնին 'ի վերկոյս ։

Իսկ մէգն՝ է այն, որ մնայ 'ի յանձրևահոս ամպոց. և այսորիկ մէգն, ըստ արիստոտելի՝ է՛ նշան պարզութեան ։

Իսկ մառախուղն՝ է՛ մթագոյն գոլորշի, զոր և ռամիկքն մէգ անուանեն ։ Գոլորշիս այս՝ ոչ 'ի վեր ամբառնայ, այլ նախքան 'ի դառնալն 'ի յամպ, և յանձրև, մնի 'ի վայր կոյս մերձ երկիր ։

Ցօղն է այն, որ իջանէ 'ի փոքրիկ գոլորշեաց, և ընդ իջանելն յամրէ, և 'ի շիթս մանրամասնեալս ներտարածի ։

Անձրևն՝ է՛ ջուր իջեալ 'ի տարալուծեալ ամպոց . ունելով զարագութիւն ընդ իջանելն իւր, և այս կաթ կաթ ։

Եղեամն է՛ 'ի ցօղային գոլորշեացն պաղեալ նախքան զտարածանելն 'ի նմանէ ջրոյն ։

Ձիւնն՝ ծնանի 'ի յամպս ջերմս, որոյ պաղումն լինի համանգամայն ընդ փոխելն 'ի ջուրս . նմին իրի և մասնկունք նորա ոչ խտանան ։

Իսկ կարկուտն՝ ծնանի 'ի յամենևին ջերմ ամպոց, և յոյժ բարձրացելոյ զօրութե̄ արեգական, որ յետ տարալուծելոյն 'ի ջուր, և յայնժամ 'ի միջի ներկայարանի օդոյդ՝ պաղի ։

Որոտն է՛ հնչումն չոր գոլորշեաց՝ ելելոց 'ի խոնաւ ամպոց, կամ 'ի ցուրտ և 'ի խոնաւ 'յամպն, և ձեղքէ զոր ինչ գտանէ ։

Ծիածանն՝ է՛ լոյս արեգական, ընկալեալ 'ի գոգեալ և 'ի ջրալից ամպոյ, ընդդէմ եդեալ արեգական ։

Սառն՝ է՛ ջուր պաղեալ ։

Իսկ փայլակն՝ լինի 'ի շիջուցեալ հրոյն՝ ջրով ամպոյն ։

Իսկ շանթն՝ է՛ 'ի թանձր և 'ի բարձրացեալ գոլորշեաց, և ջերմութե̄ չորացեալ . և քանզի է բնութե̄ հրոյ որ պարտի ելանել 'ի վեր, բայց զօրութե̄ հողմոյն իջանէ ընդդէմ բնութեն, և այրէ՝ և ոչ ոք ընդդիմանայ նմա . առաւել լինի 'յամառնային եղանակի . և զլերինս հարկանէ ։

Իսկ նետն ամպոց՝ է՛ երկրաւոր գոլորշի վառեալ, յորժամ հասանի 'ի մերձակայ ամպն, մխեալ 'ի ջուր ամպ . և այնպէս ուժգին եռացեալ ջերմութե̄ կարծրանայ 'ի քար, և ընդ ո̄մ ինչ ձեղքեալ անցանի ։

Հողմն՝ է՛ երկրային գոլորշի՝ վերամբարձեալ 'ի յօդդ . և զնոյն հարեալ, և մղեալ ուժգնակի ։

Արդ՝ չորս են նախկինական հողմունք, այսինքն, արևելեան, որ է բարեխառն . ունելով յաջմէ կողմանէ զհողմն, որ կոչի վուլթուռնուս, և ինքն է չորա-

ցուջուցիչ . և 'ի ձախմէ զևրոսն , և սա ծնանի զամպս . Երկրորդն՝ հարաւային , որ է ջերմ , և ծնանի զփայլատակմունս՝ և զյորդահոս անձրևս . և ունի յաջմէ զափրիկոսն , որ է ջերմ . և 'ի ձախմէ զնոտոս , որ է բարեխառն ըստ ինքեան . այլ ածէ ամբոխմունս 'ի յօդս : Երրորդն հիւսիսային , որ է ցուրտ . և ունի յաջմէ զթրասիայն՝ որ առնէ զձիւն , և զկարկուտ . և 'ի ձախմէ զբօրէայն , որ նեղեալ սեղմէ զամպս , և զանձրևս արգելու : Չորրորդն արևմտեան , որ կոչի զեփիւռոս , որ վերընձիւղէ զծաղիկս , ունելով յաջմէ զկիրկիոսն , որ ծնանի զամբոխմունս , զանձրևս և զորոտմունս . և 'ի ձախմէ զփաւօնիուսն , որ հանէ զամպս 'ի յարևելս , այլ 'ի կողմանս հնդկաց առնէ պարզ :

Իսկ մրրիկն՝ է՝ հողմ ելեալ 'ի յամպոյն , և անդրէն 'ի յինքն ներ մանաւեալ . կամ են երկու հողմք կողմնաքակք, հանդիպեալք միմեանց . և մերձ 'ի յերկիր պտուտս կաձեալք պատատեցեալք :

Գեանաշարժն՝ է՝ թանձր գոլորշի արտաքարշեալ 'ի խորութէ երկրի . և ոչ կարելով ունել ելս , վասն կարծրութե մակերևութի երկրին այն . և այնպէս նեղեալ 'ի ներքնային խոռոչս՝ շարժէ զերկիր :

Յաղագս ժամանակի : Գլ. Ժ.

Ա ԺԱՄԱՆԱԿՆ՝ է՝ չափ շարժման առաջնոյ շարժունին , և իրաց փոփոխելեաց : Եւ յայսմանէ յայտ է . զի ժամանակն է՝ առ մեզ , և ոչ 'ի յերկինս՝ ըստ իւրում գոյացութե . զի աստ փոփոխին ամենեքեան , և ոչ անդ . քանզի աստ՝ երբեմն ձմեռն . երբեմն ամառն . երբեմն խաղաղ . երբեմն վրդով . երբեմն հանդարտութի . և երբեմն մրրիկ : Իսկ փոփոխմունք իրողութեց, երևի այնու . զի այն, որոյ աշխարհ կարի իմն գիրկս արկանէ , այսինքն , իմաստութե , և կարողութե . սկսան յարևելս , և անտի հասին յարևմուտս :

Քանզի դպրութի իմաստութե , սկսաւ յեգիպտոս . և յետոյ 'ի յոյնս . և անտի 'ի հռոմ . և ապա 'ի յաշխարհն Փռանգաց , և յանկլիայ : Նոյնպէս և թագաւորութիւնքն , որք էին նախ յարևելս , և յետոյ առ յոյնս, և տայս առ հռոմայեցւոյն · և այժմ կայսերութիւն՝ է յաղամանս ։ Վասն այսպիսեացս նմանեցուցանէ Յակոբոս՝ զկեանս գոլորշւոյ . և ստուերն, երազոյ · և Եսայի եղեգնեայ գաւազանի . և Գիրք Թագաւորութեանց, ջրոյ հեղելոյ ։ Բայց զանազանութի է 'ի մէջ ժամանակին, մշտնջենաւորութե, և յաւիտենականութե · քանզի ժամանակն ունի զսկիզբն և զաւարտ ։ Յակ. 4. 15. Եսայ. 36. 6. 2 Թագ. 14. 14.

Իսկ մշտնջենաւորութիւնն կարօտանայ վախճանի, այլ ոչ սկզբան այլ յաւիտենականութիւն՝ կարօտանայ երկաքանչիւրոց կողմանցն, զի է չափ անստեղծ.

Եւ այսոքիկ են դարք աշխարհի ։ Առաջինն՝ է յադամայ մինչև 'ի նոյ ։ Երկրորդ՝ 'ի նոյէ մինչև յաբրահամ ։ Երրորդ՝ աբրահամու մինչև ցդաւիթ ։ Չորրորդ՝ 'ի դաւթայ մինչև ցգերութիւն բաբելացւոց ։ Հինգերորդ՝ 'ի գերութենէն բաբելացւոց մինչև 'ի Քն̅ ։ Վեցերորդ՝ 'ի Քն̅է մինչև 'ի կատարած աշխարհի ։ Եօթներորդ՝ հանգուցելոցն՝ որ ընթանայ ընդ վեցերորդին ։ Ութերորդ՝ է յարուցելոցն ։ Արդ՝ առաջին դարն՝ ըստ եբրայեցւոցն, ունի ամս, 1656. իսկ ըստ եօթանասնիցն 2242.

Երկրորդ դարն՝ ըստ եբրայեցւոց՝ ունի ամս 942. և ըստ եօթանասնիցն, 1072. Երրորդ դարն՝ ըստ եբրայեցւոց՝ ունի ամս, 972. իսկ ըստ եօթանասնից, 1130. Չորրորդ դարն՝ ըստ եբրայեցւոց. 473. ամս. ըստ եօթանասնիցն, 485. Հինգերորդ դարն՝ ըստ եբրայեցւոց ամք, 485. և ըստ եօթանասնիցն, 578. Արդ՝ 'ի սկզբանէ աշխարհի մինչև 'ի Քն̅, ըստ եբրայեցւոց են ամք, 4628. այլ ըստ եօթանասնից. 5507. Եւ ըստ եւսեբիոսի՝ որոյ հետևեցաւ օրոսիոս, 'ի մէջ երկուցն ընթանալով, թուէ զամս, 5198. որոց գրէ թէ բնաւք լաթինք հետևին . բայց 'ի յառաջին դարն, ըստ եբրայեցւոց՝ են ծնելութիք՝ 10. 'Ի երկրորդն՝ 10. 'Ի յերրորդն՝ 14. 'Ի չորրորդն՝ 17. (Զոր մաթէոս համառօտէ 'ի չորեքտասան.) 'ի հինգերորդն՝ չորեքտասան ։ Իսկ տիք մարդոյ՝ են այսոքիկ · առաջին՝ երախայութի, 'ի ծննդենէն մինչև ցեօթ ամն ։ Երկրորդ՝ է մանկութի՝ մինչև 'ի չորեքտասան ամն ։ Երրորդ՝ է պատանեկութի, 'ի տասն և հինգ ամէն՝ մինչև 'ի քսան և ութ ամն ։ Չորրորդ՝ երիտասարդութի 'ի քսան և ութէն մինչև 'ի քառասուն և ինն ամն ։ Հինգերորդ՝ է ծերութիւն՝ 'ի յիսներորդէն մինչև 'ի եօթանասուն և ութ ամն.

ամն : Վեցերորդ՝ զառամութի՝ 'ի եօթանասուն և ութէն մինչև 'ի մահ : Իսկ պատիւ աւուր կիրակէին ծանուցանի այսու , զի եղև նախկին աւուրցն , նա և լեցի յետին . և աւուրն այնմիկ ոչ յառաջագոյն գիշեր . նա և ոչ հետևեսցի իսկ : Բ Դարձեալ 'ի նմա ստեղծան երկինք , և երկիր , և լոյս . և 'ի նմա հրեշտակք դարձան առ ա՟ծ , և հաստատեցան . 'ի նմին աւուր տուաւ օրէնք որդւոցն իսրայելի :

Նա և ք՟ս ծնաւ 'ի նմա . և յարեաւ 'ի մեռելոց . և առաքելոցն ետ զոգին ս՟բ . և ամենեքին 'ի նմին աւուր յարիցուք . և դատիցուք . և 'ի նմին յարամնասցուք յաւիտեան՝ 'ի յա՟ծային գովութիս :

Յաղագս հրեշտակաց առ հասարակ : ԳԼ. ԺԱ.

Հրեշտակն՝ ըստ դամասկացւոյն , է՛ իմացական գոյացութի , միշտաշարժ , կամօք անձնիշխան , անմարմին , ա՟յ սպասաւոր ընկալեալ զանմահութի ըստ շնորհաց , և ոչ ըստ բնութե : Արդ՝ գոյացութեն դնի 'ի սահմանս այս , 'ի տեղի սեռի , և առադրի առ 'ի զանազանութի պատահման . նա և իմացեալ լինի աստ գոյացութեն , կերպիւ իմն բաղադրեալ , այսինքն , յայնմանէ որ է , և որովէ . իմացական ասի առաւել՝ քան բանական . զի բանականն՝ է՛ զօրութի ներխուզական՝ պատճառին և պատճառեցելոյն . նմին իրի և բաղադրեալ , որգոն . ա՟մ մարդ է կենդանի , սոկրատէս է մարդ , ապա ուրեմն է՛ կենդանի . զի հաւաքաբանութի ոչ այլ ինչ է , եթէ ոչ՝ տրամընթացումն 'ի պատճառէն առ պատճառեցեալն : Իսկ իմացականն , ըստ իւրում բանի ոչ ունի զներխուզումն , այլ է թարց տրոհման , և բաղադրութե . վա՟ այսորիկ և պատկանի պարզագոյն բնութե , այսինքն , հրեշտակի , 'ի տեղի տարբերութե : Իսկ բանականն՝ է՛ տարբերութի բնութե , որ է նուազ պարզ , այսինքն , մարդոյն :

Միշտաշարժ ասեմ , ոչ 'ի տեղւոջէ 'ի տեղիս , այլ շարժութի ասի աստ՝ շրջականութեն . քանզի երեքկին շրջականութի է 'ի հրեշտակն , այսինքն , բնութեան . իմացութե . և կամաց . Առաջինն է՛ շրջականութիւն բնութե , վա՟ զի ա՟մ ստեղծեալ՝ է՛ շրջական 'ի յոչինչ

եթէ ոչ ըմբռնեսցի ձեռամբ ամենակալին ։ Երկրորդ՝
է՛ շրջականութիւն իմացութեան . զի է իմացական մի զննի
միոյ ըստ ճանաչման իրողութեանց ՚ի բնութիւս իւրեանց .
զի ասէ Օգոստինոս , թէ ամ՛ անեղծունած որ ունի Ա
զիմացումն , իմանայ զմին՝ զննի միայն ։
Իսկ ճանաչումն իրողութեանց ՚ի բանն ով , ո՛չ է հետեւական
մի զննի միոյ , այլ համանգամայն մի ունելոյն
ամենատեսակ զիմացումն , որ ասէ Դիոնեսիոս ։
Երրորդ՝ է՛ ներըրջականութիւն կամաց , զի հրեշտակն
ոչ համանգամայն կամի զայս ինչ , կամ զայն ։
Դարձեալ կարէ ասել մշտաշարժ՝ շարժմամբ սիրոյն ։
Կամօքն անձնիշխան ասի , ոչ վասն անզանազանապէս Բ
միանգամայն առ չարն , և բարին . այլ վասն ազատ ընտրողութեան
այնց , զորս կամին ։ Վասն բարի հրեշտակն
միշտ ազատապէս ընտրէ զբարին , և չար
հրեշտակն՝ ազատաբար և առանց բռնութեան ընտրէ
զչարն ։ Իսկ գոյացութիւն անմարմին ասի , զի հրեշտակն
ոչ ունի ինքեան շարադրեալ զմարմին , թէպէտ
ունիցի զյատկութիւն իմն մարմնոյ , այսինքն ,
զհամանելին ՚ի տեղւոջ . քան զի մարմինն է ՚ի տեղւոջ
պարագրաբար , և սահմանապէս . իսկ հրեշտակն
սահմանապէս միայն է ՚ի տեղւոջ ։ ԱՅ սպասաւոր
ասի , և զնի ըստ սպասաւորութիւն վասն իւրաքանչիւր
ազգ պաշտաման . և ըստ այսմ՛ եղանակի յանդիմանակայքն՝
նա և պաշտօնեայքն , կոչին սպասաւորք ,
և ևս դեքն ։ Ասի ընկալեալ զանմահութիւն ըստ շնորհաց՝ Գ
և ոչ ըստ բնութեան . զի դառնայր յոչինչ , եթէ
ոչ կայնանիցիւր շնորհօք պահպանութեան .
Արդ՝ չորք իրք վերաբերին առ հրեշտակս . պարզութիւն
էութեան , յատկութիւն իմացական , կարողութիւն
անձնիշխանութեան , և տարբերութիւն անձնական ։
՚Ի յառաջին երեքն , համաձայնի հոգի մարդոյն ընդ
հրեշտակին , այլ չորրորդիւն՝ ոչ , զի հոգին ո՛չ է
անձն ։ Ունի հրեշտակն այլ ևս զերիս իրս , այսինքն
, զզօրեղութիւն ՚ի ներգործութեան . փոյթ ՚ի սպասաւորութեան
. անշարժութիւն յետ ընտրութեան ՚ի բարին՝
կամ ՚ի չարն ։ Այլ չորք առաւելին ՚ի մէջ հրեշտակին
, և հոգւոյն . առաջինն է՝ առ բնականս , զի
հոգին է միաւորելի ընդ մարմնոյ , նաև ներգործութեան
անջատեալն ՚ի մարմնոյն . իսկ հրեշտակն ոչ ։
Երկրորդ՝ առ տրամաբանս , այսինքն , ըստ սահմանին
, զի հոգին է բանական . իսկ հրեշտակն իմացական ։

կան ։ Վ՟զի հոգին ըմբռնէ ներխուզմամբ և որոշմամբ . իսկ հրեշտակն նկատմամբ ։ Երրորդ՝ է առ համբերութեանն, այսինքն, անջատել ՚ի նիւթոյ, և ՚ի շարժմանէ . զի հրեշտակն ոչ ունի զկրականութիւն, բայց միայն նկատմամբ վերնագունիցն . իսկ հոգին նա և նկատմամբ ստորնագունից զգալեացս, զի փոփոխի ՚ի նոցանէ ։ Չորրորդ՝ է՝ առ ա՟ծարանն, զի հոգին՝ է՝ ներշրջական ՚ի բարւոյն առ չարն, և ՚ի չարէն առ բարին . իսկ հրեշտակն՝ ոչ . զի մնայ ՚ի նոյնն՝ առ որ դարձուցանէ զինքն, եթէ ՚ի բարին՝ և եթէ ՚ի չարն ։ Ամենայն հրեշտակք՝ են նման՝ այնու, զի են անմահ . անտեսանելի . անտարածելի . պարզ . տարորոշեալ անձամբ . անհաղորդելի այլոյ բնութեան ։ Այլ են աննմանք՝ պարգևօք . բնութեամբ . շնորհօք, և փառօք . վ՟ն որոյ առէ դիոնէսիոս, թէ ա՟մ հոգևոր սահմանեալ, այլ է էութեամբ, այլ է զօրութեամբ, և այլ է ներգործութեամբ ։

Յաղագս զանազանութեան քահանայապետութեանց ։

ԳԼ։ ԺԲ.

ՔԱհանայապետութիւն է եռեակ, այսինքն, ոմն է ՚ի վեր քան զերկնայինս ։ Ոմն է երկնային, և ոմն երկրային ։ ՚Ի վեր քան զերկնայինսն՝ է՝ ՚ի յերիս անձինս, ոչ առանձին ոմանք, բայց թիւրաբար . զի ըստ դիոնէսիոսի քահանայապետութիւն նշանակէ զ՟կարգ, և
Ա այն բացարձակաբար ոչ է ՚ի յերիս անձինս, այլ միայն է ՚ի կարգի բնութեան ։ Երկնայինն՝ է՝ ՚ի կարգս հրեշտակականս, և երկրայինն՝ ՚ի մ՟ք արս ։ Արդ՝ երկնային քահանայապետութիւն, բաժանի ՚ի վերնագոյնն . ՚ի միջինն . և ՚ի ստորնագոյնն ։ Վերինն՝ ունի յինքեան զերիս կարգս, այսինքն, զսերոբէից, զքերոբէից, և զաթոռոց . որոց առաջինքն՝ խոկան զբարութիւնն ա՟յ . երկրորդքն՝ զիմաստութիւն . երրորդքն՝ զուղղութիւն ։ Դարձեալ՝ ՚ի յառաջինսն սիրէ ա՟ծ որպէս զհեղեալ սէր . ՚ի յերկրորդսն՝ ճանաչէ ո՟պ զիմաստութիւն . և ՚ի յերրորդս՝ նստի ո՟պ զուղղութիւն ։

Եւ միջինն՝ ունի յինքեան զերիս կարգս, այսինքն, զտէրութիւնս՝ զպետութիւնս՝ և զիշխանութիւնս . որոց առաջինքն, կարգաւորեն զգործս հրեշտակաց. երկրորդքն՝ վերակացուք են գլխաւորաց ժողովրդեան. երրորդքն՝ յետս ընկրկեն զիշխանութիս դիւաց: Ի յառաջինսն՝ տիրէ յաւէտ իբրև զմեծութի. Ի յերկրորդսն՝ կառավարէ իբր զնախախնամութի. Ի յերրորդսն՝ պատսպարէ իբր զբերկութիւն:

Իսկ սերովբէոյնն՝ նմանապէս ունի յինքեան զերիս կարգս, այսինքն, զզօրութիւնն՝ զհրեշտակապետսն՝ և զհրեշտակս, առ որոց առաջինն՝ վերաբերին սքանչելագործութիւնք. առ երկրորդսն՝ աւետարանումն մեծամեծ իրողութեանց. առ երրորդսն՝ հոգք մարդկային պահպանութեանց: Ի յառաջինսն՝ ներգործէ ած իբր զզօրութի. Ի յերկրորդսն՝ յայտնի իբր զլոյս, Ի յերրորդսն՝ ցուցանի իբր զվարժօղ: Այս քան ասացեալք են՝ ըստ գրիգորի, և բեռնարդոսի. այլ ըստ դիոնեսիոսի, զօրութիւնքն են միջին կարգ՝ երկրորդի քահանայապետութեանցն. և պետութիւնքն՝ առաջին կարգ՝ երրորդի քահանայապետութեանցն:

Եւ առաւել ծանի՛ր զիւրաքանչիւր նախասացեալսն, զի 'ի յերեքեան քահանայապետութիւնն ծանուցանի երրորդութի անձանցն:

Յաղագս յատկութեանց հրեշտակաց: Գլ. ԺԳ.

Հրեշտակք՝ ըստ իսիդորոսի, են հոգևոր
գոյացութիւնք՝ ստեղծեցեալք յառաջ քան Ա
զամ ստեղծուածս, կերպեցեալք բնու-
թբ փոփոխելիք, բայց եղեալ խոկմամբ
անփոփոխելիք, անախտակիրք ոգւովք,
բանականք միոք, երջանկութբ անհոգք,
նախագիտակք հանդերձելոց, հրամա- Բ
նաւ կառավարեն զաշխարհս, առաքեցեալք առնուն
զմարմին օդեղէն, 'ի յերկնային բնակին:

Եւ բեռնարդոս ասէ՝ քննեսցուք զանքննելիսն, և նախ գոլ զհրեշտակսն՝ ոգիք զօրաւորք, փառաւորք, երանելիք, տարորոշեալք անձամբք, կարգեալք պատուով, 'ի սկզբանէ կացեալք յիւրեանց կարգին, կատարեալք 'ի սեռի իւրեանց, անմահութբ մշտնջենաւորք, միոք մաքուրք, կամօք բարերարք, կրօնիւք բարեպաշտք, միաբանութբք անորիշք, խաղաղութբ անքոյթք, ածային գովութեանց, և պասովորութեանց պարապելով : Դարձեալ ըստ Բեռնարդոսի , 'ի հրեշտակսն է՛ պատիւ ստեղծման , շնորհք հաստատութեան , սէր ստեղծողին , և տեսութի մծութե : Է՛ նա և 'ի հրեշտակսն տարորոշումն անձին , նրբութի էութե , յստակութի իմացական , կարողութի անձնիշխանութեան , արագութի թեթևութէ : Պատրաստաբար հնազանդին ամենեքեան: Իշխեն մեծագոյնքն առանց փքացման , և հնազանդին փոքրագոյնքն առանց տրտմութե , ելեալք առ արտաքինսն՝ ոչ հեռանան 'ի ներքին խոկմանէն :

Զամ օգտութիւն վայրագունից՝ հաղորդեն վերնագոյնքն , այլ ոչ անդրադարձեալ : Որք գերազանցեն բնութբ · գերազանցեն 'ի շնորհս , և 'ի փառս :

Դ. 'Ի միում կարգի են մինն քան զմիւսն արժանաւորագոյն : Ունին զկրկին տեսութի , այսինքն , զառաւօտեան և զերեկոյեան · զլուսաւորութիւնս զոր ընդունին 'ի վերնոյն այլոց բաշխեն :

Յաղագս յատկութեանց և գործոց՝ իւրաքանչիւրոց կարգաց : ԳԼ. ԺԴ.

Յատուկ է սերովբէից՝ բորբոքել 'ի սէրն այ · նա և զայլս 'ի նոյն բորբոքումն յառաջացուցանել · և բաշխել զկարգաւորապէս կերպ սիրելոյն :

Ա. Որոց անմիջաբար միանան ընդ այ · և վս այնորիկ սպառողաբար և կատարելաբար՝ առ գործողութիւն յայտնութեանց վայրաբերին · և ոչ դառնան առ այլ ինչ արտաքոյ սիրեցելոյն :

Իսկ քերովբէքն՝ նախ և նախկինաբար լուսաւորեալքն ճառագայթիւք ածային լուսոյն , վս այն՝ զի առաջին ճշմարտութեան մերձաւորագոյն միաւորին :

Բ. Եւ գործ նոցա է՝ յառաջացուցանել զմարդիկ 'ի ճանաչումն ածային · նախ իւր և քան զայլսն՝ առին լուսաւորեալ · զի զլրումն լուսաւորութե զոր ընդունին , այլոց առատագունից հաղորդելով անդրահեղեալ :

Աթոռք ասին՝ այնու , վս զի ած նստի 'ի նոսա , և զդատաստանս իւր 'ի վեր առնու նոքօք :

Սոքա ունին նախկինաբար լուսաւորեալ 'ի նոսա ուղղութի ածային դատաստանին : Նա և սոքա՝ զզօրութիւն ա՟յ զոր ընդունին 'ի վերուստ . հեղեալ անցուցանեն 'ի ստորինայինսն :

Գ. Տէրութիւնք ասին, զի տիրեն այլոց հրեշտակաց, և են ազատք յամ՟ բռնութենէ . և ոչ նուաճին ենթստորինադունի ումեք : Որոց գործքն է՝ ըստ գրիգորի, ուսուցանել 'ի հոգևոր պատերազմին՝ թէ ո՛չ պարտէ առնուլ 'ի կիր զգործ առաջնորդութե, և որպէս լինիլ վերակացու հնազանդեցելոց :
Նա և գործ սոցա է՝ ըստ դիոնէսիոսի, 'ի բաց դնել զծառայական երկիւղն, շարժել 'ի յանձ, և անդադար սպասաւորել նմա :

Պետութիւնքն, են վերակացուք հնազանդեցելոց հրեշտակացն, և զնոսա պատրաստեն 'ի կատարումն ա՟ծային սպասաւորութեանն : Եւ սոսա վերաբերի ըստ դիոնէսիոսի զընդհանրական կառավարութի միոյ թագաւորութե, կամ ազգի, վերածել առ նմանութի ա՟յ : Եւ ըստ գրիգորի նոցա է ուսուցանել զմարդիկ դնել զպատիւ իւրաքանչիւր ումեք՝ ըստ իւրում աստիճանի : Այլ և նոցա է՝ առնել խելամուտ զմարդիկ, զի մի վասն յատուկ օգտութե իւրեանց, այլ միայն վասն սիրոյ, և 'ի փառս ա՟յ, առնել զարդարութիւն :

Իշխանութեցն, ըստ Լիգորիոսի՝ ստորանկեալք են զօրութիւնքն ներհակք, զի մի՛ այն քան վնասեսցեն աշխարհի, որ քան ցանկան : Նա և սոցա է գործ՝ ըստ գրիգորի խրախուսել զայնս՝ որք մարտնչին 'ի հոգևոր պատերազմունսն, և լինել նոցա զօրավիգ, զի մի՛ կորուսցեն զհոգևոր թագաւորութիւն :
Եւ ըստ դիոնէսիոսի, առ սոսա վերաբերի զստորնագոյն հրեշտակսն, որքան կարելի է, ա՟ծայնոյ կարողութե համանմանեցել :

Իսկ զօրութիւնքն՝ են անխափանելիք առ 'ի կատարումն առնելեաց, և զօրեղք առ 'ի յընդունումն պարգևաց : Գործ նոցա է՝ ըստ դիոնէսիոսի ուսուցանել զառաջնորդս՝ զի դիւրաւ և յարամնայէս կատարեսցեն զայնս՝ որք վերաբերին առ գործ առաջնորդութե . և զծանրութիւնս հոգևորս, համբերութբ տարցեն :
Նա և սոքօք լինին սքանչելագործութիւնք, և տան զզօրութիւն կատարեցելոց արանց, առնել զսքանչելիս :

Իսկ հրեշտակապետքն, կոչին ծայրագոյն դեսպանք, ա՟ծ զմեծագոյնսն աւետարանեն ; Եւ գործ նոցա է

ըստ Գրիգորի, որ ինչեն 'ի բարձրութիւն հանճարոյ, զայ զծննդեանն Քրի, եւ զգործոց նորա. զմարդիկ պատրաստեն 'ի հաւատս, եւ զդեւս հալածեն. եւ ըստ դիոնեսիոսի՝ զմարգարէութիւս յայտնեն:
Սոքին զլուսաւորութիւն զոր 'ի վերուստ ընդունին, ծանուցանեն վայրագունից, եւ նոքօք մեզ:

Հրեշտակք՝ են վերջինք երկնային կարգացն, առաւել հուպ առ մարդիկս. հրեշտակ անուն՝ է անուն գործոյն, եւ ոչ բնութեան. սոքա զփոքրագոյնս աւետարանեն, եւ ածեն զմարդիկ յածային ճանաչումն. եւ ուսուցանեն զի արդարապէս կենցաղավարեսցին: Սոքա ձգտին 'ի վերկոյս՝ եւ բարձրանան, ածային սիրովն. եւ հաստատեն 'ի յինքեանս՝ իւրեանց պահպանութիւն, եւ իջանեն խոնարհ ինքեանց, 'ի յօգնութի ընկերին: Արդ՝ մեք պարտիմք նմանիլ սերոբէից, սիրով. քերոբէից, ճանաչմամբ. աթոռոց՝ ուղղութբ. տէրութեց, նուաճելով զմարմնաւորութեց, դնելով զպատիւ մեծագունից մերոց. իշխանութեց, ընդ դիմի հարկանելով սատանայականաց փորձութեց. զօրութեց, ցաւակցութբ. հրեշտակապետաց, ուսուցանելով. հրեշտակաց, սպասաւորութբ:

Յաղագս առաւօտեան, եւ երեկոյեան ճանաչման հրեշտակաց: Դւ. ՃԵ.

Ունին հրեշտակք՝ զճանաչումն առաւօտեան. այսինքն, զճանաչումն իրողութեց 'ի բանն այ. նաեւ զերեկոյեանն, այսինքն, զճանաչումն իրաց ինքեամբ: Այլ եւ զմիջօրէին, որ է բացայայտ տեսութի այ: Է՛ եւ այլ ճանաչումն հրեշտակական, ըստ այնմ որ մեծագոյնքն ծանուցանեն փոքրագունիցն, զորս ընկալան ածային յայտնութեամբն: Իսկ յայտնութի՝ է ցուցումն ճանաչելւոյ իրիք զայ, 'ի ձեռն լուսաւորութե եկեալ յաստուծուստ՝ եւ այս կարելի է լինել, կամ նմանութբ իմն, եւ կամ դէմ առ դէմ: Եւ գիտելի է՝ զի հրեշտակն՝ 'ի ճանաչման իրողութեց 'ի յառաջի բնութեան, ճանաչէ զբազումս համանգամայն ունակութբ, այլ ոչ ներգործութբ, եթէ ոչ զայնոսիկ՝ որք ընդ միոյ

տեսակի ։ Իսկ 'ի մարմնաւորացն , և 'ի չարչարանացն
քն , զխօսացելն հրեշտակք զեղծեալ էին , այլ ոչ զամ՛ Ա
պարապաւորին , այսինքն , մի էր . և զի ա՛րդ ։
Դարձեալ՝ զոր ինչ ճանաչեն հրեշտակք , զհեռաւորսն՝ և զմերձաւորսն , համառօտապէս ճանաչեն . զի ճանաչումն նոցին ոչ զգայութեամբ , այլ իմացմամբ է ։
Դարձեալ՝ որպիսութիւն հրեշտակացն է՛ն եռակի , այսինքն , անմահութիւն . շնորհաց . և փառաց ։
Դարձեալ՝ շարժումն հրեշտակաց ըստ դիոնեսիոսի՝ է՛ երեքկին , այսինքն , բոլորակ . ուղիղ . և կողմնաւոր . բոլորակն է՝ 'ի նոյնոյ՝ առ նոյնն , և շուրջ զնոյն նով՝ անշարժ միջին կիտոյն . զշարժումն զայս ունին հրեշտակք , որ քան անընդմիջաբար ընդունին յայ զլուսաւորութիւն՝ և նոքօք դառնան առ այ . արդ՝ այս պատկանի մերձաւորացն քահանայապետութեան միայն ։ Նա և շարժին ուղիղ շարժմամբ , յորժամ յառաջանան առ նախախնամութիւն հաստատեցելոց՝ ուղղապէս անցանելով ընդ յամենեսեան , ոչ դառնալով 'ի նոյնոյ առ նոյնն , այլ 'ի միոյն 'ի միւսն ։
Այլ կողմնաւոր շարժումն է , յորժամ զճանաչումն ստորնագունիցն զորս նախախնամեն , անդրէն դարձուցանեն 'ի յած՝ որ է առաջին սկիզբն , և վախճան , գեղեցկին՝ և բարւոյն ։ Ծանիր զզանազանութիւնս 'ի մէջ յանդիման կալոյն , և սպասաւորելոյն . զի յանդիման կայն է՝ տեսանել զերեսս այ . և այսպէս յանդիման կան ամ՛ բարի հրեշտակք ։ Դարձեալ՝ յանդիման կալն է՝ անմիջաբար ընդունել յայ զլուսաւորութիւն . և այսպէս յանդիման կան , միայն երեքկին առաջին կարգքն ։ Դարձեալ՝ յանդիման կալն է՝ մերձենալ առ այ՝ և ոչ առաքիլ յարտաքին սպասաւորութիւն . և այսպէս յանդիման կան՝ չորեքկին առաջին կարգքն ։

Իսկ սպասաւորելն է՝ պատմել ըստ պատշաճ ժամանակի . և կամ առնել ըստ յանձնեալ գործոյն ։
Քանզի սպասաւորելն է՝ գործ պաշտաման , և աւետարանութեան , և յանձնեալ գործոյն ։ Սակայն մոլորեցան ոմանք՝ մի շարժման հրեշտակաց երեք կերպին . քանզի ասացին փիլիսոփայք ոմանք , թէ հրեշտակք ոչ երբէք շարժին , այլ շարժեն , այսինքն , զպարունակս , և նոքօք՝ ևս զկամս մարդկան ։ Բ
Եւ այլք ասացին , թէ հրեշտակք են 'ի բազում տեղիս . նաև 'յամ ուրեք , եթէ կամիցին ։

Դարձեալ՝ այլք ոմանք ասացին, թէ հրեշտակն՝ Գ այնպէս գոյ 'ի ծագաց միջոցին, որ ոչ անցանէ զմիջոցաւն, այլ անդրդայլինի։ Այլ և զայս ինչ ոչ է զանց առնելի, զի իւրաքանչիւր կարգ՝ յայնմանէ անուանի, որ 'նկատմամբ առ ստորնայլն կարգսն, գերազանցագոյն պարգևս ընկալաւ։

Յաղագս վերակացութեան հրեշտակաց։

ԳԼ. ԺԶ.

Վերակացուք են ոմանք 'ի հրեշտակաց՝ գաւառաց, ոպ՟ ասէ դանիէլ. իշխանն դան. 10. 20. յունաց, և իշխանն պարսից։

Իսկ ոմանք՝ ե՛ն վերակացուք եկեղե- յայտ. 2. 1. ցեաց, ոպ՟ ասէ 'ի տեսիլն Բ. գլուխ, առ հրեշտակս եփեսացւոց եկեղեցւոյն։

Այլ և ոմանք՝ ե՛ն վերակացուք անձանց՝ ըստ այնմ որ ասի գործոց ԺԲ. թէ զհրեշտակն գործ. 12. 15. պետրոսի կարծէին կալ առ դուրս։ Նաև ոմանք յայսոց պղծոց, ասին լինել վերակացուք մոլութեանց. ուստի և կոչին ոգիք պոռնկութե՟, հպարտութե՟, և այլք այսպիսիք։ Այլ թէ ո՛րք վերակացութիւնք մնասցեն, և ո՛րք զտեղի առնուն, յետ աստի կենացս ասելի է. թէ քահանայապետութիւնքն՝ մնասցեն ըստ տարբերութե՟ երանութեան, ըստ աստիճանի պատւոյն, և ըստ պատուականութե՟, ըստ ձրիական պարգևին, և բնութեանն։ Այլ զտեղի կալցեն հրեշտակական վերակացութիւնքն 'ի վերայ մարդկան, և հրեշտակաց, ըստ գործոյ վերակացութե՟, և խնամակութե՟ աշխարհի, և ընտրելոցն 'ի ճանապարհի Ա. որ առ վերին գաւառն։ Իսկ վերակացութիւնքն որք 'ի դևսն, ըստ գործոյ հեգնելոյն, և կատակելոյն, ըստ այնմ որ մին գրգռէ զմիւսն 'ի չարին, ո՛չ խափանեսցի, որպէս ասէ սաղմոս՝ ամբարտաւանութիւնք սաղ. 73. 23. ատելեաց քոց, վերասցի հանապազ. նա և ո՛չ խափանեսցի ըստ չարութե՟, և ըստ բնութե՟ն։

Այլ զտեղի կալցէ վերակացութի նոցա, ըստ գործոյ Բ. փորձելոյ զայնս՝ որք 'ի ճանապարհի աստի կենացս. նա և 'ի մարդիկ խափանեսցին վերակացութիք, զի ո՛չ լիցին հազարապետք, հարիւրապետք, տասնապետք, և նմանք սոցին։ Նմանապէս դադարեսցի և

'ի սուեղ-

'ի ստեղծուածս վերակացութի , վասն զի յայնժամ վերնագոյնք ոչ շարժեսցեն զվայրագոյնս , որպէս այժմիկ ։

Յաղագս չհաստատութեն հրեշտակաց ։
Գլ. ԺԷ.

Հրեշտակք' ունին զհաստատութի յերից, այսինքն, 'ի բնութենէ , 'ի շնորհաց , և 'ի փառաց ։ 'Ի բնութենէ , զի հոգևոր բնութին միայն մի անգամ է' շրջելի . 'ի բարին , կամ 'ի չարն . եթէ ոչ 'ի միաւորութէ միոյն ընդ ումեք , որպ̃ յայտէ 'ի հոգին , զի որ քանի է 'ի մարմին , կար է փոփոխիլ' 'ի բարւոյն 'ի չարն , և 'ի չարէն' 'ի բարին ։ Իսկ յորժամ լուծանի , ոչ . որոյ պատճառն է' զի սոսկ հոգևոր բնութին վասն պարզութե իւրոյ' յորժամ դարձուցանէ զինքն , բոլորովին դարձուցանէ առ այն , զոր ընտրէ , զոր ոչ առնէ միաւորեալ բնութին , զի ունի յետս քարշող զմարմին ։

Նմանապէս 'ի շնորհացն ունին զհաստատութիւն , զի թէ իր իմն կապակցի ընդ յաւիտենական կայացելոյն մշտնջենաւոր կապով , կապակցութին նմայ միշտ ։

Ա Այսպէս և հրեշտակք' ե՛ն կապակցեալք ընդ յաւի-
տենական կայացելոյ , այսինքն , ընդ ա̃յ , և այն' ան-
լուծանելի կապով , այսինքն , սիրով , որպ̃ ասէ առաքեալն ,
սէրն ոչ երբէք անկանի ։ Այլ և 'ի փառաց 1. Կորն. 13. 8.
իսկ ունին զայն . քանզի ունին զա̃ծ փառօք , որ է
կատարեալ տեսակ հրեշտակական բաղձանացն . ոչ
տատանին արտաքոյ ինքեանց , և ոչ խնդրեն ինչ լաւագոյն
քան զայն , կամ առաւել ցանկալի և զուարճագոյն ։
Քանզի ոչ ինչ 'ի ստեղծուածոցս կարասցեն
դարձուցանել զնոսա 'ի յաղբերէ ա̃ծայնոյ քաղցրութե ։
Այս ուրեմն այսպէս ստուգելի է , զի հրեշտակք'
ըստ անձնիշխան կամացն դարձեալք առ ա̃ծ Բ
իսկոյն եղեն հաստատեալք 'ի կամս շնորհօք , և փառօք ,
հաւատարիմք և երջանիկք եղեալք , և 'ի միտս
լուսաւորեալք , մինչ զի ոչ միայն ճանաչեսցեն զիրս
յատուկ ճանաչմամբ 'ի սեռս իւրեանց , այլ և 'ի բանն
ա̃յ ։ Նա և առին զկատարելութի 'ի գործնական զօրութե ,
թէ 'ի գործ ածեն զայն առեցեալ մարմնով ,
և

և թէ այլ կերպիւ ։ Նմանապէս առին զկատարելութին , 'ի տեսական զօրութեն , զի ուր և առաջնոցն ընթանան 'ի ներս 'ի յան ։

Յաղագս պահպանութե հրեշտակաց ։
Գլ. ԺԸ.

Հրեշտակք որք են կարգեցեալք 'ի պահպանութիւն մեր' ըմբռնեն զմեզ կանգնեալս , զի մի' անկցուք . և ընդ ոտնկանիլն մեր' օգնեն զի յարիցուք . և ոչ երբէք թողուն զմեզ . նա և թէ մեղանչիցեմք , սակայն մինչ լինիցին պատրաստք առ 'ի յօգնել , եթէ կամիցիմք ։

Ա Բայց ոչ է այնպէս 'ի խստասիրտսն , և յանուղղայսն ,
յորոց պահպանութեն 'ի բաց կայ հրեշտակն ներգործութե , սակայն պատրաստ է 'ի պահել , եթէ կամեսցին դառնալ . քանզի ոչ երբէք թողեալ լինին
Բ բոլորովին մարդիկ 'ի հրեշտակաց ։ Եւ գիտելի է' զի Քս ունէր կարգեալ հրեշտակ . նա և Նեռն ունեսցի . զի թէպէտ վն խստասրտութեն ոչ ունեսցէ զայն , առ 'ի յառաջադիմութի , սակայն ունեսցի առ 'ի յամբաստանութի ։ Արդ՝ ներգործութի հրեշտակական պահպանութե , է' բազմադիմի ։

Առաջինն է' 'ի բաց մերժել զարգելուածս բարւոյն , և
Ելից. զպատճառ չարին , որպէս ասէ Ելից . առաքեմ զհրեշտակ
23.20. իմ առաջի քո , զի 'ի բաց մերժեսցէ ։

Երկրորդ՝ հանդարտեցուցանել զխռովութիւս , որպէս
Դանիէլ ասէ Դանիէլ . Գ. հրեշտակ Տն էջ 'ի հնոց հրոյն ։
3. 9. Երրորդն է՝ լինել ախոյեան ընդդէմ երևելի թշնամւոյն ,
4 Թագ. զի ասէ , Դ. Թագաւորաց , թէ եղիսէոս ետես
6, 16. զբանակս հրեշտակաց ։ Չորրորդ՝ զաղօթս մեր , և
զողորմութիւնս՝ ընծայել այ , և աղաչել վս մեր , որպէս
տոբ. 12, ասաց հրեշտակն տոբիայ՝ յորժամ աղօթէիր առ այ
12. արտասուօք , ես էի որ մատուցանէի զյիշատակ աղօթից քոյոց առաջի սրբոյն , այսինքն , այ ։

տոբ. 5. Հինգերորդ՝ ցուցանել զճանապարհս՝ որպէս ասաց տոբիթ ,
2. ես առողջ տարայց , և դարձուցից ։

զաքար. Վեցերորդ՝ ուսուցանել զառնելիս , որպէս յայտ է 'ի զաքարիա
1.20. ա. գլուխ , զհրեշտակէն՝ որ ուսուցանէր զնա վասն չորից դարբնաց ։ Եօթներորդ է՝ յայտնել զինքն ,

զինքն , և զայլս ծածուկս , ուր ասէ յտօբիթ . եսեմ տօբ․
Ռափայէլ հրեշտակն ։ Ութերորդ՝ զարթուցանել ՚ի 12․15․
մեղաց , որպէս յայտ է ՚ի գործոց , գլուխ 12․ ուր ասաց գործ․
հրեշտակն ցպետրոս՝ արի վաղվաղակի ։ 12․7․
Իններորդ՝ զարթուցանել առ ջերմեռանդութիւն , որպէս 3․թագ․
ասաց ցեղիա , արի և կեր , զի բազում է ՚ի քէն և 19․7․
անդր ճանապարհ ։ Տասներորդ՝ մխիթարել , որպէս
ասէ տօբիթ՝ քաջալերեաց մերձ է զի բժշկեսցիս յԱյ։ տօբ․
Մետասաներորդ է՝ յանդիմանել ՚ի մեղաց , որպէս 5․13․
յայտ է ՚ի գիրս դատաւորաց , ուր ասաց հրեշտակն դատ․
առ ժողովուրդն իսրայէլի . ընդէ՞ր արարէք զայդ ։ 2․2․
Երկոտասաներորդ է՝ յետս ընկրկել զներհակական
իշխանութիւն . զի մի՛ կարասցեն այնքան վնասել , որ
քան կամին , որպէս յայտ է ՚ի տօբիթ , որպէս հրեշտակն տօբ․
կապեաց զդևն ասմոդէ ։ Դարձեալ՝ հրեշտակք պահ- 8․3․
պանողքն մեր՝ վասն երից պատճառաց , առաջին է՝
յաղագս նորոգելոյն զկործանումն իւրեանց , զի որք
փրկելոցքն ՚ի մարդկանէ , լնուլիցեն ՚ի տեղի անկելոց
հրեշտակաց ։ Երկրորդ՝ յաղագս յաւելման պատա-
հական փառաց , որ յաւելցի ՚ի նոսա մինչև ցօր դա-
տաստանին ։ Երրորդ՝ յաղագս ցուցման սիրոյն , զոր
ունին առ մեզ ։ Իսկ դիոնէսիոս ասէ՝ վերաբերել
առ հրեշտակս երիս ներգործութիւնս , այսինքն , մա-
քրել , լուսաւորել , և կատարել ։ Այլ՝ մաքրեն զմեզ
հրեշտակք ՚ի բաց մերժելով զերևմունս՝ որք արգե-
լուն ՚ի մեզ զլուսաւորութիւն , զոր կամին հրեշտակք
առնել ՚ի մեզ ։ Ուստի զերիս իրս ՚ի բաց հերքեն ՚ի
հոգւոյն , այսինքն , զտգիտութիւն , զմոռացմունս
երևակայութեանց , և զսուտ կարծիս բնական առաք- Դ
կութեանց՝ որք են ընդդէմ յայտնութեան հաւատոյ ։

Իսկ երեք կերպիւ լուսաւորեն զհոգին՝ ըստ զգայու-
թեան , որպէս յայտ է , որպէս յորժամ յայտնեցեալ լինի
իմն ձևացեալ մարմնով , այլ զկարողութիւն զայս
ունի նա և դևն ։ Դարձեալ ըստ երևակայութեան ,
նա և ըստ իմացման , և միայն այսպիսի լուսաւորու-
թիւն է կատարեալ ։ Եւ դարձեալ՝ զի հրեշտակն ոչ
լուսաւորէ զիմացականն՝ առնելով զնոր ճանաչումն ՚ի
հոգին , զի ոչ կարէ զնոր տեսակ , կամ զունակութիւն
նորոյ լուսոյ ներադրել ՚ի յիմացումն ։

Նա և ոչ զխաւարութիւն նորա դարձուցանել ուրեկա-
մեցի , զի այս՝ է ընդդէմ բնութեան անձնիշխանութեան ։
Զի պատասխանին երեքեան այսոքիկ առայն՝ զի իմացա-
կանն

կամս մեր իմանայցէ ինչ , այսինքն , առաւել որով ճանաչեսցէ , և լոյս՝ նորուն ճանաչիցի , և դիտաւորութիւն որով դարձուցանիցէ զինքն իմացութիւնն 'ի վերայ առարկին : Արդ՝ լուսաւորէ հրեշտակն զիմացականն մեր . միայն զարթուցանելով , և պատրաստելով . և զլոյս ա̄ծային առ մեզ բերելով :
Չի առնէ 'ի յերևակայութիւնս զփոփոխումն առարկաց , բաղադրելով . և տարորոշելով ըստ պահանջելոյ իրին , որ կամի յայտնել : Դարձեալ՝ ճառագայթէ զլոյս իմացման իւրոյ 'ի վերայ այնց առարկաց , զի շարժեսցեն զիմացականն մեր , և այսպէս զբաղումս , և զնրբագոյնս կարեն տեսանել 'ի կրկնապատկեալ լոյսն : Դարձեալ՝ զարթուցանէ զդիտաւորութի հոգւոյն շարժմամբ իմն , զի դարձուցէ զինքն 'ի վերայ երևակայմանց այնոցիկ (զոր կամի հրեշտակն տալ մեզ իմանալ) արտաքարշելով զինքն յայլոց . նաև կատարեն իսկ , այսինքն , յառաջացուցանեն առ բարեգոյնն : Արդ՝ խնդրի թէ հրեշտակն կարիցէ փոփոխել զմարդկային ախորժակս :
Ասելի է՝ թէ բորբոքել զախորժակն մարդոյ , երեք կերպիւ իմացեալ լինի . նախ՝ առնելով զբորբոքումն զայն : Երկրորդ՝ զարթուցանելով և օգնելով :
Երրորդ՝ շարժելով առ բորբոքումն : Ըստ առաջնոյ կերպի , միայն ա̄ծ կարէ բորբոքել զախորժակն . ըստ երկրորդին , բորբոքէ իւրաքանչիւր ցանկալի իր . ըստ երրորդին՝ հրեշտակն կարէ 'ի ձեռն շարժման բորբոքել զախորժակն մեր : Եւ յայսցանէ ունիմք օրինակ 'ի բնութենս . քանզի ըստ առաջնոյ կերպին , հուրն վառէ զփայտն , և ըստ երկրորդին՝ փայտն բորբոքէ զհուր : Եւ ըստ երրորդին՝ բորբոքէ զհուրն այն , որ դնէ զփայտն : Այլ արդ՝ է՛ զանազանութի 'ի մէջ ներս ածելոյն զխորհուրդս , և բորբոքելոյն , և լուսաւորելոյն զմիտս , զի ներս ածել զխորհուրդս՝ է՛ ըստ բեթայ , պատճառել և առնել 'ի ներքս զխորհուրդս : Իսկ բորբոքելն է՝ զեղեալ խորհուրդն վառել 'ի ներքս . և լուսաւորելն է՝ յայտնել զծածուկ , և զիմանալի իրս :

Յաղագս խօսից հրեշտակաց ։ Գլ. ԺԹ.

Երեքկին է բան, այսինքն, մտաց՝ բերանոյ և գործոյ ։ Արդ՝ բանիւ մտաց խօսի ա͞ծ ընդ հրեշտակս՝ նոյնպէս և հրեշտակ ընդ ա͞յ ։ Դարձեալ՝ ա͞ծ ընդ հոգւոյ, և հոգի ընդ ա͞յ, այլ և դևն ընդ ա͞յ, և ա͞ծ ընդ դիւին՝ քանզի դիտաւորութի դիւին թաքչիլ ոչ կարէ յա͞յ · իսկ բանիւ բերանոյ՝ խօսի մարդն ընդ մարդոյ, և հրեշտակ ընդ մարդոյ առեցեալ մարմնով · այլ բանիւ գործոյ, խօսի ա͞ծ ընդ դիւին, և հրեշտակ ընդ դիւի ։

Արդ վասն խօսից հրեշտակաց գիտելի է՝ զի խօսի հրեշտակն ընդ ա͞յ, յորժամ ՚ի տեսակաւ իւրոցն յառնէ ՚ի շարժումն զարմացման · կամ յորժամ զբաղձանս Ա Բ իւր ընծայէ նմա, զորոց ամենայն ոչ է երկբայս թէ թաքչիցին ՚ի նմանէ ։ Իսկ հրեշտակն խօսի ընդ հրեշտակին՝ ցուցանելով նմա զտեսակս որ ՚ի միտս իւր, միջնորդութ͞բ իմն հոգևոր ձայնադայթի՝ որ արտափայլէ յիւրքենէ ։ Գ Դարձեալ՝ հրեշտակն առնէ ինչ առաջի միւս հրեշտակին՝ որով իմանայ զոր նախ ոչ իմանայր ։ Եւ այնպէս խօսին ա͞մ հրեշտակ ընդ միմեանս, այսինքն, մեծամեծք ընդ փոքունս, և փոքունք ընդ մեծամեծսն ։ Դարձեալ՝ խօսի հրեշտակն ընդ հրեշտակին՝ հաղորդմամբ ա͞ծային լուսոյն՝ ներկիթելով զնա, և այսպէս ոչ խօսին ա͞մքն ընդ ամենեցուն, և ոչ զա͞մ · այլ միայն վերինագոյնքն ընդ ստորնագունիցն՝ զայնցանէ զոր ընկալան ա͞ծային յայտնութ͞ն ։ Այլ խօսի հրեշտակ ընդ մարդոյ՝ կրկին կերպիւ ։ Նախ ձայնական բանիւ՝ առեցեալ մարմնով, այլ յայնժամ որպէս ՚ի ձեռն գործեաց նիւթականաց ոչ արտաբերէ զհնչումն ձայնական ըստ բնութեանն, այսպէս և ոչ փոփոխէ շրջականաբար զօդն՝ որ ՚ի մէջն, որպէս առնէ բնական ձայնն, ուստի ոչ լսի եթէ ոչ յայնմանէ առ որ կարդի · նմանապէս և ՚ի յերևումն հրեշտակաց՝ զոր տեսանեն ոմանք, և այլք համասար մերձակայքն ոչ տեսանեն, որպէս երևեցաւ եղիսէի 4. Թագ. 6. 17. և մանկան նորին ։ Սակայն ասեն ոմանք · թէ հրեշտակն ոչ երբեք երևի · և ոչ խօսի ընդ մարդոյ առեցեալ մարմնով · այլ դնէ ՚ի յաչս մարդոյն զդիտաւո-

րու-

ջութեն կամ զնմանութիւն իւր , և 'ի յունկն՝ դնէ զդիտաւորութեն
ձայնի . և անդ ընդունի հասարակ զգայութին
զտեսակսն զայնոսիկ , և անտի անցանէ յերևակայութիւնն
, և ապա յիմացականն. և այս է որ ասի
հրեշտակին երևել և խօսել ընդ մարդիկ :
Երկրորդ կերպիւն , խօսի հրեշտակն ընդ մարդոյ ,
տպաւորութբ զգայական իրողութեց 'ի գործիս երևակայութեն՝
և այնպէս խօսի ընդ արթունս , և ընդ
ննջեալս : Դարձեալ՝ խօսի հրեշտակն ընդ դևին՝
ցուցանելով նմա զանազան իմացմանն իւրոյ առանց
լուսաւորութեց ինչ : Դարձեալ՝ խօսի դևն ընդ
մարդոյ կրկին կերպիւ . երբեմն փոփոխելով զզգայութին
, և զայս՝ կամ պատկերօք իրացն՝ տպաւորելով
'ի գործիս տեսութեան՝ կամ ցուցանելով տեսանելեաց
զնմանութի ինչ իրաց : Եւ երբեմն խօսի
ընդ մարդոյ տպաւորութբ զգայական իրողութեանց
'ի գործիս երևակայութեն , և զայս առնէ, երբեմն 'ի
յարթնութե , և երբեմն 'ի ննջման . և այնպէս մուծանէ
'ի ներքս զխորհուրդ չարին : Սակայն զայս
Դ խորհուրդ ոչ կարէ մուծանել 'ի ներքս , որ միայն
հաւանութբ լինի չար : Եւ՝ և խօսք հոգւոց , զի հոգին
խօսի ընդ այ բաղձանօք , որոյ ախորժմունքն
մերկապարանոց՝ և բաց են առաջի նորա . նմանապէս
և հոգին խօսի ընդ հրեշտակին . և այս մարմնական
ձայնիւ զոր իմանայ հրեշտակն , որպէս և զայլ զգալին
; ուստի հոգին որ քան է 'ի մարմնի ոչ կարօտանայ
յատուկ ինչ զօրութե , որով խօսիցի ընդ հրեշտակին
. այլ ընդ բացմերկանալն 'ի մարմնոյն ունեացի
այնպիսի զօրութիւն : Դարձեալ՝ հոգին խօսի
ընդ դևին՝ զի նմանութիւք բաղձանաց տպաւորին 'ի
զգայութիս , ուր ընթեռնու դևն զայն :

Յաղագս յատկաց անուանց հրեշտակաց . Գլ . Ի.

Միքայէլ , Գաբրիէլ և Ռափայէլ են յատուկ անուանք հրեշտակապետաց , թէպէտ և թարգմանութիւն նց լիցի այլոց հասարակ՝ այլ յատկական նոցին . զի անուանքն , նա և թարգմանութիւնք անուանց՝ գերազանցապէս սպասականին նոցա : Միքայէլ թարգմանի ո՛վ որպ զած :

զա̄ծ ։ Սա է՛ 'ի դասուց պետութեանց , և վերաբերին առ նա չորք իրք , այսինքն , լինել վերակացու դրախտին , այսինքն , եկեղեցւոյ ․ որպէս և նախ իսկ էր վերակացու հնոյ ժողովրդեանն ։ Այլ և տանել զհոգիսն յարքայութիւն ․ Թէպէտ նա և այլք տանին, սակայն տանիլն նորա՝ է՛ փառաւորագոյն ։

Դարձեալ պատերազմիլ ընդ վիշապին , այսինքն , յայտ
ընդ դիւին ․ որպէս յայտ է 'ի տեսիլն ։ 12.310

Դարձեալ գալ 'ի յօգնութիւն ժողովրդեանն ա̄յ ։

Գաբրիէլ՝ թարգմանի զօրութիւն ա̄յ ։ Եւ սա՝ է՛ 'ի կարգէ հրեշտակապետաց , և իրաւի , զի զմեծամեծս Ա ղուկ․
աւետարանեաց ։ Ռափայէլ՝ թարգմանի դեղ ա̄յ , և 1,26.
է՛ 'ի կարգէ հրեշտակաց, զի է պահապան միոյ անձին ։

Յաղագս անկման հրեշտակաց ։ ԳԼ․ ԽԱ․

ԶԱմենայն հրեշտակս արար ա̄ծ՝ բարի , բայց ոչ ծայրագոյն , այլ միջակս 'ի մէջ ծայրագոյն՝ և փոփոխական բարեաց որք են ստեղծուածքս ․ այնպէս՝ մինչ զի թէ
դառնային սիրել զա̄ծ , որ 'ի վերքան Ա
զինքեանս ․ ելանէին 'ի յոլովութիւն շնորհաց և փառաց ։ Եւ յորժամ դառնային առ փոփոխական բարին, որ 'ի վայր քան զինքեանս , այնու իսկ անկանէին 'ի չար մեղաց , և պատժոյ , վա̄ զի տգեղութիւն մեղաց՝ ոչ է առանց զարդու արդարութեան ։

Յաղագս հոգևոր անկման դիւին ։ ԳԼ․ ԽԲ․

ՍԱնկումն դիւին՝ է՛ր կրկին , այսինքն , հոգևորական , և տեղական ։ Հոգևորական՝ զի անկաւ 'ի մաքրութենէ բնութեան, հակեցմամբ անձնիշխան կամացն առ փոփոխական բարին ․ 'ի լուսոյն՝ առ խաւարն . 'ի գիտութենէ, առ անգիտութիւն ․ 'ի
յանմեղութենէ , 'ի մեղս ․ 'ի բարեբախ- Ա
տութենէ, առ տանջանսն ․ 'ի սիրելութենէ , 'յատելութիւն ․ Քանզի յետ անկմանն՝ եղև անզեղջ , և խաւարեցեալ 'ի չարն ․ կուրացեալ 'ի ճշմարտութենէ ․ անկարգացեալ 'ի բա-

՚ի բարուց . ակարացեալ ՚ի զօրութենէ, և արտաքսեալ յամենայն խոկմանէն : Նա և ամբարիշտ կամք նորա՝ դարձեալ է ՚ի յանօրէնութիւն, և ՚ի նախանձ մարդոյն, ուստի ամ̃ ջանիւ կարօտի ՚ի կործանումն նորին՝ բազմադիմի փորձութեամբք : Եւ այնքան կուրացեալ է՝ մինչ զի պատերազմի ընդդէմ այ̃ . Թէպէտ՝ գիտէ զայն լինել ինքեան չար . զի զոր ինչ չար գործէ անձնիշխան կամօքն՝ մեղանչէ մահուչափ :

Յաղագս տեղական անկման դիւին : Գլ. ԻԳ .

Արդ՝ տեղական անկումն դիւին եղև, կամ ՚ի դժոխս՝ կամ ՚ի յօդն աղջամղջին, որ է միջին ներկայարան օդոյդ : Քանզի դևքն ոչ են ՚ի վերին մասն օդոյդ, զի մի խնդասցեն լուսով, և ոչ ՚ի ստորին մասն զի մի խտտագոյնս մարտիցեն ընդ մեզ : Ուստի ՚ի դևսն, զերիս իրս նկատեմք, այսինքն, զբնութիւն՝ զգործն՝ և զմեղս : Արդ՝ բնութեան պատշաճի ծայրագոյն տեղի, այսինքն, երկին, ՚ի յորում իբր ՚ի պատկանաւոր տեղւոջ ստեղծան . և յետոյ եթէ կացեալ էին ՚ի բնութե, կատարեալք էին: Եւ գործոյն որ ունէին կրթել զմարդիկ յարմարի միջակ տեղի, այսինքն, խառնարչային օդոյ, ուր են մերձ մեզ առ ՚ի փորձել, սակայն ոչ ունէին զդա առ ՚ի յուրախութի : Այլ մեղացն՝ ձեռնհասորի ստորնագոյն տեղի, որ է դժոխքն, ուստի դևք՝ որ ՚ի կատարածի աշխարհի յորժամ դադարեսցեն գործք նոցին, ամենքն միահաղոյն փակեսցին ՚ի դժոխսն: Իսկ ոմանք ասեն, թէ հրեշտակք անկան յերկրորդում աւուր :

Մատթ. 25. 41.

Ա

Այլ հասարակագոյն թուելութին է՝ թէ յառաջին օրն յանկարծակի յետ ստեղծման իւրեանց՝ անկան : Նա և ասի հասարակաբար՝ թէ Ժ. երրորդ դաս հրեշտակացն անկաւ, այլ ոչ ասի իբր թէ տասն դաս հրեշտակաց լեալիցէ, այլ թէ այնչափ յիւրաքանչիւր դասէ անկան, մինչ զի կարէին լինել դաս մի : Ուստի ինն են դասք հրեշտակաց. և իւրաքանչիւր դաս՝ ունի զիւր գունդս. արդ՝ մի գունդն հրեշտակաց՝ ունի զմիութիս 6666. Իսկ այնքանք են ՚ի յիւրաքանչիւր դասս գունդք, որ քան միութիւնք են ՚ի յիւրաքանչիւր գունդս :

Բ

Յա

Յաղագս նորոգման հրեշտակային կործանման ։

ԳԼ. ԻԴ.

Կործանումն հրեշտակաց նորոգեսցի փրկեցելովքն ։ Եւ օգոստինոս ասէ՝ թէ այնքան մարդիկ փրկեսցին, որ չափ անկեալք են դեւքն ։ Իսկ գրիգոր ասէ՝ այնքանք փրկեսցին, որ քան հրեշտակք մնացին ։ Նաեւ ոմանք ասացին, թէ երկու որմունք լինիցին յերկինս ․ մինն մարդկան, եւ միւսն հրեշտակաց ․ իսկ կործանումն հրեշտակաց նորոգեսցի կուսանօք ․ եւ 'ի մի որմն, այսինքն, մարդկանց փրկեցելոց՝ այնքանք լինիցին, որ քանք են հրեշտակք, եւ կուսանք 'ի միւս որմն ։ Ա.

Յաղագս թէ ընդէ՞ր մեղք դիւին էր անթողլի ։

ԳԼ. ԻԵ.

Ա. Արդ՝ թէ ո՞ր աղագաւ մեղք դիւին էր անթողլի ․ բացատրի բազում պատճառաւ ․ առաջինն է՝ ըստ օգոստինեայ, զի ոչ ուրուք խրատու մեղանչեաց ․ վասն այսորիկ ոչ նորոգեսցի օգնականութեամբ ուրուք ։ Երկրորդ՝ ըստ դամասկացւոյն, զի ծառայն 'ի Տէրն՝ ընդ դէմ ա̃ծակերպ իմացմանն մեղաւ ։ Եւ որքան պատուականագոյն է ճանաչումն, այնքան չարագոյն է մոլորումն, ըստ այնմ ծառայ որ գիտէ զկամս Տն, եւ ոչ պատրաստէ ։ Ղուկ. 12.47.
Երրորդ է՝ ըստ նոյնոյ դամասկացւոյն, հրեշտակն ոչ է ընդունակ ապաշխարութեան, նմին իրի եւ ոչ թողութեան ։ Չորրորդ՝ զի 'ի դեւն չիջեալ է տրտնջականն՝ ըստ յառաջանալոյն առ բարին ։ Հինգերորդ՝ զի հոգեւոր բնութիւն, միանգամ միայն է շրջելի՝ 'ի չար զի բոլորովին շրջէ զինքն, զոր ոչ առնէ մարդն ․ զի մարմինն միշտ մարտնչի ընդ հոգւոյն ։ Արդ յայտ է յասացելոցս՝ զի երեքկինէ որպիսութիւն չար հրեշտակացն ․ առաջին էր անմեղութեն ․ երկրորդն մեղաց ․ երրորդն պատժոյ, եւ թշուառութեան ։

Յաղագս յատկութեանց դիւաց ։ Գլ. ԺԶ։

Դեւքն՝ են ոգիք անմարմինք, թշնամիք ազգի մարդկան, մտօք բանական. ի չարութիւն սրատեսք, ցանկացողք ի վնասելն, անբարտաւանութեամբ ուռուցեալք, մինչ նորագոյնք ի պատրելն, փոփոխեն զգայութիւնս. աղտեղացուցանեն զախորժակս. ամբոխեն զարթունսն, և զննջեալսն երազօք նեղեն. զհիւանդութիւնս ածեն. վերյարուցանեն զմրրիկս. կերպարանին ի հրեշտակ լուսոյ. մինչ զգժոխս իւրեանց շրջեցուցանեն ընդ ինքեանս. զաստուածային պաշտօնն յափշտակեն ինքեանց ի կուռսն. ի վերայ բարեաց տենչան ախրել. դիւթական արհեստքն լինին նոքօք. ատեալ լինին բարի արանցն ի կրթութի. մինչ գարանակալ լինին վախճանի մարդկան ։ Ուժգին են՝ եռակի նրբահայեաց գիտութեամբ ։ Նախ սրութեամբ բնութեան՝ և այս երեկոյական ճանաչմամբ ։ Երկրորդ՝ հմտութեամբ ժամանակին ։ Երրորդ՝ յայտնութեամբ վերնագոյն ոգւոյն ։

Բ. Կոր. 11.14.

Ա Առաջին կերպիւն իմանան զբնական ներկայս ։

Բ Երկրորդիւն՝ զբնական ապառնիս ։ Երրորդիւն՝ իմանան նաև զկամաւորականն ։ Այլ բազմադիմի անուամբ յորջորջի դեւն. որով և յատկութիւնք նորա լինին իմացեալք. զի կոչի լաթիներէն դիապոլուս, որ է ծորեալ, զի անկաւ հոգևորապէս, և տեղականաբար ։ Իսկ ըստ յունաց թարգմանի դեւն, փակեալ ի բանտի. և այս իրաւի, զի ոչ թոյլ տուեալ լինի վնասել որ քան և կամի ։ Այլ ըստ ստուգաբանութեան ասի դիապոլուսն, դիայ, որ է երկուս, և պոլուսն՝ որ է պատառ, զի առնէ զմարդն երկուս պատառս և կլանէ, այսինքն, զհոգին, և զմարմինն ։ Դարձեալ՝ կոչի դեմոն, այսինքն, արիւնաշաղախ, և այս մի մեղաց. կամ դեմոն՝ թարգմանի գիտուն, զի ուժգին է՝ եռակի գիտութեամբն՝ որպէս ասացաւ ։ Դարձեալ՝ բելիար, որ թարգմանի առանց լծոյ, կամ առանց Տեառն, զի իւրով կարողութեամբ մարտնչի ընդ դէմ Աստուծոյ՝ որոյ պարտէր գոլ ստորադրեցեալ ։ Դարձեալ՝ ասի բեհեղ զեբուղ՝ որ թարգմանի այր ճանճից, այսինքն, հոգւոց մեղաւորաց որք թողին զճշմա-

Ղուկ. 11.15.

զճշմարիտ փոխայն զՔՍ ։ Դարձեալ սատանայ, այսինքն, ոսոխ, ըստ առաքելոյն պետրոսի, որ ասէ՝ 1. պետ. 5. 8.
ոսոխն ձեր սատանայ ։ Դարձեալ բեհեմովթ, այսինքն, անասուն՝ զի առնէ զմարդիկն անբան ։ յոբ. 41. 7.
Դարձեալ լեւիաթան, այսինքն, յաւելումն նոցին որք կուտեն զմեղս 'ի վերայ մեղաց ։ եսայ. 27. 1.

Յաղագս չարութեան սատանայի ընդդէմ մեզ ։

ԳԼ. ԻԵ.

Արդ՝ սատանայ վնասէ մարդոյն բազում կերպիւ. երբեմն բռնութեամբ. եւ այս արտաքուստ վնասելով զմարմին. որպէս արար յոբայ ։ յոբ. 2. 7. Երբեմն 'ի ներքուստ վնասելով զանդամսն մարդոյն՝ որպէս յայտ է 'ի յայսահարսն. եւ վասն այնորիկ տուեալ լինի մանկանցն բարի հրեշտակ, զի մի սատանայ վնասեսցէ նոցա 'ի յաստանիկ, եւ կամ եւ եւս առաւելացուսցէ ։ ղուկ. 11. 14. Դարձեալ՝ վնասէ տպաւորութեամբ պատկերաց նիւթելով զչար, կամ բորբոքելով զարիւնն առ 'ի մեղանչել, եւ կամ զարտաքին գեղեցկութիւն 'ի ձեռն առարկայի սուտ կերպարանաց՝ խաբելով ։ Ուստի զայսցանէ եւ զնմանեաց սոցին, ասէ գրիգոր. թէ սատանայ՝ կամ նեղացուցանելով յաղթահարէ. կամ գարանակալ լինելով թուի շուրջանակի. կամ խրատելով փաղաքշէ. կամ սպառնալով երկեղուցանէ, կամ յուսահատեցուցանելով սրտաբեկէ. եւ կամ խոստանալովն խաբէ ։ Արդ՝ սատանայ խաբէ զմարդն, չորս եղանակաւ ։ Նախ յիշեցուցանելով զբարին այլ ընդ չարութեան. որպէս խրատէ զանհաստատն մնալ 'ի կարգ կրօնաւորաց, զի յետոյ արասցէ զնա կարգաթող ։ Ա. ծննդ. 3. 5. Երկրորդ՝ յիշեցուցանելով զչարին կերպարանօք բարւոյ, որպէս առնել զսուտ երդումն, վասն պահպանութեան իրաց օտարաց ։ Երրորդ՝ հեռացուցանելով 'ի բարւոյն որպէս 'ի վնասակարէ իմն, որպէս յորժամ խրատէ զայր քաջ, ոչ մնալ 'ի կարգ՝ զի մի յետոյ զղջասցի, եւ ընդ ելանելն արտաքս զամօթ կրեսցէ ։ Եւ կամ յորժամ ոչ տայ թոյլ ումեք առնել զաղօթս՝ կամ զողորմութիւն, զի մի այնու անկցի 'ի սնափառութիւն ։ Չորրորդ՝ արգելով 'ի չարէ իմն, զի ածցէ յեւս չարագոյն՝ որպէս յորժամ խրատէ՝ ոչ ուտել և ննջել անկարգ , զի այնու ածիցէ 'ի յանխոհեմ պարկեշտութի որ է չարադոյն : Այլ արգելեալ լինի սատանայ 'ի չար գործոց իւրոց՝ բազում կերպիւ . երբեմն եդեալ կապարանս ոյ՝ կարողութե նորին .

Երբեմն ընդդէմ կալով, բարի ոգւոց : Զի իւրաքանչիւր հոգի զերկու հրեշտակս ունի . զմինն բարի առ 'ի պահպանութի, և զմիւսն չար՝ առ 'ի կրթութի : Երբեմն անձնիշխանութի մարդոյն ոչ հաւանելով : Երբեմն վասն դարշութե մեղացն . քանզի մերթ դեւքն այնք՝ որք ազնուականի բնութեն են՝ դարշին 'ի յաղտեղի մեղացն : Երբեմն վասն խորամանկութե, քանզի երբեմն զանցանէ առնել զչար՝ զի չարագոյնք լիցին, ոչ այժմ ոչ տանջէ զբանադրեալս , զի յայնպիսեաց վճռոց ոչ երկնչիցեն : Այլ խնդրի թէ արդեօք զօրութիւն փորձողին պակասիցի՝ յորժամ յաղթիցի յումեքէ : Արդ՝ վասն այսմ զանազան են կարծիք . ոմանք ասեն՝ թէ յաղթեցեալն 'ի մի մոլութե , զյաղթօղն ոչ կարէ փորձել յայնմհետէ այնու մոլութե . բայց այլք դեւք կարեն : Այլք ասեն՝ թէ յորժամ յաղթի , յայնմհետէ զոչք կարէ փորձել այնու մոլութե : Իսկ որոգինէս ասէ . թէ յաղթեցեալն յումեքէ՝ ոչ կարէ յետ այնորիկ փորձել զոք :

Բ

Այլ տուեալ իշխանութի դիւաց 'ի գործ ածել զխարդական արհեստն՝ վասն բազմաց պատճառաց :

Նախ առ 'ի պատժել զխաբեբայսն , որպէս զեգիպ-
Ել՛ց. տացիսն , և զկախարդս նոցին : Ուստի զոր ինչ առ-
7. 11. նելոցեն նոքա՝ ըստ այնմ կերպի իբր թէ հմայելով
նախագուշակէին : Երկրորդ՝ առ 'ի զգուշացուցանել
զհաւատացեալսն՝ զի մի՛ ցանկասցին այնպիսւոյն իբր
մեծի ինչ իրի . և այն՝ զի տեսանեն զչարսն առնել
տօբ. 11, զայնպիսիսն : Երրորդ՝ առ 'ի փորձել և կրթել զհամ-
12. բերութի և զհաւատս սրբոց :

Յաղագս արուսեկին յատկապէս։ ԳԼ. ԻԸ.

Վա̃ն արուսեկին գիտելի է, զի էր 'ի բարձրագոյն կարգէ վերին քահանայապետութեն, և 'ի դասն այն՝ ունէր զգերաղանց աստիճան, որոյ իբր առ իշխան յիւրաքանչիւր կարգէ մեծ իմն բազմութի մերձեցու, զորս զամենեսեան ընդ ինքեան քարշեաց։ Անուանեցաւ արուսեակ, զի քան զայլս առաւել փայլեցաւ. և մտածումն իւրոյ գեղեցկութե՝ հպարտացոյց զնա։

Զառաջին մարդն փորձեաց՝ և յաղթեաց։ Զքս՛ փորձեաց՝ և յաղթեցաւ։ Զիշխանութին յայնժամ կորոյս, զոր 'ի յետին ժամանակս դարձեալ առնլոց է։ Ծննդ. 3·6. մատ. 4·10.

Եւ որ այժմ կապեալ է՝ 'ի կատարածի արձակեսցի։ յօհ. 12. 31.

Մեղք արուսեկին էր՝ զի սիրեաց զինքն, և զիւր յատուկ բարին։ 'Ի բարձրութիւն իւր հպարտացեալ կուրացաւ, և տենչացաւ իւրում յատկի գերազանցութե, իբրու թէ ունէր յինքենէ՝ և ոչ յայլմէ՝ և առանց արժանաւորութե կամեցաւ ունել։ յայտ. 20·7.

Մինչ կարէր կալ, մինչև առաջնոցիւր փառքն՝ չկամեցաւ։ Փափաքեցաւ նմանութեանն այ՛, ոչ արդարև պատճառաւ համահաւասարման, այլ իշխանութե. այսէ, կամեցաւ ունել զհնազանդեցեալս, և ցանկացաւ ոչ գոլ ումեք հնազանդ։ եսայ. 14·13.

Ա

Յաղագս հոգւոյն՝ թէ զինչ իցէ ըստ սահմանին։
ԳԼ. ԻԹ.

Յետ ասելոյ 'ի մարմնական, և յանմարմնական բնութեանցն, այժմ ասելի է՝ յերկոցունց բաղադրեալ բնութեանցն։ Բայց նախ վասն հոգւոյն. երկրորդ՝ վն մարմնոյն. երրորդ՝ վասն բոլոր մարդոյն։

Արդ՝ վասն հոգւոյն տեսանելի է՝ թէ զինչ իցէ ըստ սահմանին։ Քանզի յոմանց սահմանի, ոմ̃ զօդի. յոմանց, որպէս զհոգի. իսկ 'ի յոմանց՝ ոմ̃ զօդի և զհոգի։ Այլ ըստ որում հոգին ունի զբնութի ուրոյ, սահմանի 'ի յաղէքսանդրէ 'ի մա-

մատենի յաղագս շարժման սրտից այսպէս : Հոգին է գոյացութիւն անմարմին , իմացական , ընդունակ լուսաւորութեանց , վերջին յայտնութեամբ հասկացողական :
Վերջին ասի , զի միջնորդութեամբ հրեշտակաց հասկանայ : Յայսմ սահմանէս ճանաչեմք՝ զի մարդկային հոգին՝ 'ի մէջ ամենայն ստեղծուածոց յետ հրեշտակաց , անընդմիջաբար է ընդունակ աստուածային լուսաւորութեանցն : Իսկ հոգին ըստ որում հոգի՝ Նեմեսիոս սահմանէ այսպէս : Հոգին է գոյացութիւն անմարմին, կատարիչ մարմնոյն : Յայսմ սահմանէս ուսանիմք՝ թէ հոգին է շարժօղ և ուղղիչ մարմնոյն :
Դարձեալ՝ հոգին ըստ որում հոգի . սահմանի ըստ փիլիսոփային 'ի գիրս հոգւոց այսպէս : Հոգին է ներգործութիւն բնական և գործիքական մարմնոյ , զօրութեամբ կենդանութիւն ունողի . և ասի սա ներգործութիւն առաջին , կամ կատարելութիւն : 'Ի սահմանէս յայսմանէ ուսանիմք՝ թէ հոգին է միաւորեալ մարմնոյ, ոչ ամենայնի , այլ միայն գործիքականին , և բնականին . այսինքն , բնականաբար պատրաստելոյն առ 'ի ընդունումն հոգւոյ բանականի : Իսկ հոգին ըստ որում է ոգի , և հոգի՝ Օգոստինոս սահմանէ այսպէս :
Հոգին է նմանութիւն ամենեցունց : Սահմանս այս տուաւ համեմատութեամբ հոգւոյն առ ստեղծուածս :
Զի հոգին ըստ իւրում բնութեանն է՝ յարմար առ 'ի յընդունել զնմանութիւն ամենայն իրողութեանց մարմնաւորաց, և հոգևորացն : Բայց գիտելի է՝ , զի ոմանք կարեն իմանել 'ի ձեռն հակադրեցելոց , որպէս խաւարն՝ ներկայութեամբ լուսոյ , և անմարմինք՝ մարմնաւորօք , և այսպէս ասի՝ հոգին ընդունել զնմանութիւնս հոգևորաց :
Դարձեալ՝ է և այլ ենթադրութիւն այսպէս :
Ա Ծննդ. բ.7. Հոգին է՝ աստուածակերպ շունչ կենաց : Սահմանս այս առեալ լինի 'ի ծննդոց գրոց . և առեալ լինի ըստ այնմ որ հոգին բաղդատի առ աստուած , ըստ որում ոչ սերի 'ի ներածողէ . կամ 'ի սերմնական պատճառէ . այլ 'ի յոչնչէ ստեղծանելովն հեղի 'ի մարմինն , և հեղլովն ստեղծանի : Դարձեալ՝ Սենեքա սահմանէ այսպէս :
Հոգին է՝ ոգի իմացական կարգեալ 'ի յերանութիւն յինքեան , և 'ի մարմնում . սահմանս այս լինի առեալ՝ նկատմամբ հոգւոյն առ վախճանն , ըստ որում ոչ միայն անջատեցեալ երանանայ յինքեան որպէս հրեշտակ, այլ նա և 'ի մարմնոջ փառաւորեցելում վերստանայ երանութիւն նորին :

Յա-

Յաղագս թէ զինչ իցէ հոգին ըստ իւրն ։ ԳԼ. Ն.

Արդ՝ վասն հոգւոյն զանազան վճիռս տուեալ լինի 'ի փիլիսոփայից . քանզի պղատոն ասէ՝ զհոգին գոլ թիւ շարժող ինքեան ։ Եւ արիստոտէլ ասէ՝ զհոգին գոլ ներգործութիւն մարմնոյ ։ Եւ պիթագորաս ասէ՝ զհոգին գոլ ներդաշնակցութիւն ։ Եւ հիփոկրատէս ասէ զհոգին՝ շունչ անօսր ։ Հերակլիտոս ասէ՝ նշոյլ և լոյս ։ Եւ դիմոկրատէս՝ ասէ զնա շունչ բաղադրեցեալ 'ի հիւլից ։ Իփարքոս՝ ասէ զնա ուժգնութիւն հրեղէն . Փարմէնիդէս՝ ասէ զնա 'ի հողոյ և 'ի հրոյ ։ Եպիկուրոս ասէ՝ 'ի յօդոյ և 'ի հրոյ ։ Արդ՝ 'ի մէջ . այսոցիկ զանազանութեց՝ հետևեսցուք մեք առաջնորդաց մե և ուղղափառ վարդապետաց, ասելով թէ . հոգին է հոգևոր գոյացութիւն , և բանական , ստեղծեցեալ յոչնչէ՝ առ 'ի կենդանացուցանել զմարդկային մարմինս ։ Հոգին արդ ստեղծուած՝ կատարելի և անկատար՝ ըստ գիտութե , և ըստ առաքինութեց , անկայուն է՝ կատարելագոյն՝ ըստ բնական զօրութեց ։ Եւ զի անմարմին է՝ ոչ ենթանկի ընդ զգայութբ , և ոչ է տարածական ըստ տարածութե ։ Քանզի հոգին ունի զքանակութի , որդ ասէ օգոստինոս՝ ոչ տարածական , այլ կարողական , և զօրութենական ։

Եւ զի պարզ է հոգին , նմին իրի՝ ոչ է ընդունակ աճելութե և նուազութե . զի ոչ 'ի մարմին մեծագունի է՝ մեծ , և 'ի փոքրագունին փոքր . որդ ասէ օգոստինոս ։ Զի բազմութի զօրութեցն 'ի հոգին՝ ոչ դնէ զմեծութիւն 'ի բնութեան նորին , այլ զբազմութի ներգործութեց ։ Նա և հոգին է կենաց յաւիտենական , այսինքն , յիշողականութբ , իմացականութբ՝ և կամօքն՝ եղեալ առ 'ի պատկեր այ . ընդունակ առաքինութե , և մոլութե , պատժոց՝ և վարձուց ։ Ծննդ. 1. 26

Անձնիշխան . զօրութբ՝ ունակութբ՝ և ախորժակօք վայելչացեալ . կարօտանայ ծանրութե . ձևոյ և գունոյ . է՝ ախտակրելի և փոփոխելի . այնու է մեծ . զի է ընդունակ յաւիտենականութեանն . այնու է ուղիղ , զի է բնականապէս փափագող երանութե . այնու է բարի , որովհետև կցորդ ածութեան ։ Բ.

Յաղագս թէ զինչ է հոգին ըստ անուանն:
Գլ. ԼԱ.

Հոգի ասի՝ ըստ այնմ որ կենդանացուցանէ, և հոգևորէ զմարմինն: Միտք՝ ըստ այնմ որ 'ի միտ առնէ: Ոգի՝ ըստ այնմ որ միաւոր է: Բան, ըստ այնմ որ ուղիղ
Ա դատէ: Շունչ՝ ըստ որում շնչէ. և կամ զի ունի զհոգևոր բնութի: Զգայութի՝ յորժամ զգայ: Յիշողականութի՝ յորժամ յիշէ: Կամք՝ յորժամ հաւանի: Անուանք այսքիկ զանազանք՝ ասին զհոգւոյն, ոչ վասն բազմութե էութեանն. այլ վասն բազմութեան ներգործութեցն և գործոց:

Յաղագս եռակի ներգործութե հոգւոյն: Գլ. ԼԲ.

Ներգործութի հոգւոյն՝ է՛ եռակի, այսինքն, աճիլ՝ զգալ՝ և բանաւորիլ, և ըստ այսմ զանազանին երեքկին զօրութիւնք հոգւոյն, այսինքն, աճական զգայական՝ և բանական: Զորոց ասէ ամբրոսիոս՝ թէ հոգին աճական յօժարի գոլ, զգայականն՝ բարեպէս գոլ. իսկ բանականն՝ ևս բարեգոյն գոլ. վասն այսորիկ ոչ երբէք հանգչի՝ մինչև միաւորեսցի ընդ ևս բարեգունին. նմին իրի՝ զօրութ սիրոյն շարժի առ Ած, իբր առ միջին կէտ իւր. զի գերազանցապէս հեշտասցի 'ի նա: Արդ՝ երեքեան զօրութիւնքս այսոքիկ՝ 'ի զանազան գոյացութիս կարեն ասիլ երեք հոգիք:

Քանզի աճական հոգին՝ է՛ 'ի տունկս. զգայականն է՛ 'ի յանասունս. և բանականն 'ի մարդն: Իսկ 'ի մարդն՝
Ա նախասացեալ երեքեան հոգիքս՝ են մի էութ, այլ զանազանին զօրութ, նաև ոչ ընդդիմանայ այսմ, զի 'ի մարդն մի զկնի միոյ, և 'ի զանազան ժամանակս յայտնին. քանզի այս է 'ի կազմողական զօրութենէն որ նախ պատրաստէ յարմարապէս առ կեանն, քան առ զգայութին. և առ զգայութիւնն, քան առ բանականութին, մանաւանդ զի բնութիւնն ոչ յանկարծորէն,

րէն, այլ առ սակաւ սակաւ և հետեւմամբ գործէ : Իսկ յորժամ բանական հոգին հեղի 'ի մարմինն, յայնժամ նախ ստացեալ զօրութիւնս նախասացեալս հեղեալք՝ ոչ ունին զներգործութիւնս իւրեանց յայնմհետէ 'ի կազմողական զօրութենէն, այլ 'ի նոյնոյ յինքենէ հոգւոյն : Նա և հոգին՝ զառաջին երկոքեան զօրութիւն, այսինքն, զտնկականն, և զզգայականն՝ 'ի գործ ածէ միայն 'ի մարմինն. իսկ զերրորդն՝ ունի և յետ անջատելոյն 'ի մարմնոյն : Արդ՝ տնկական և զգայական հոգին՝ ոչ պարտին ասիլ 'ի մարդն հոգի, և ոչ բաժանիլ իբրու հոգիք, այլ իբրու զօրութիւնք. և ո՛չ տնկականն՝ ասելի է 'ի զգայականն՝ հոգի, այլ զօրութի. իսկ տնկական հոգին՝ ասի 'ի տունկն հոգի՝ և ոչ զօրութի :

Յաղագս զօրութեանց տնկական հոգւոյն : Գլ. ԼԳ.

Տնկական հոգին, ունի զերիս զօրութիւնս, այսինքն, զծննդականն, զսնընդականն, և զաճողականն : Նախկինն է՝ առ 'ի պահպանութիւն տեսակին : Երկրորդն՝ առ 'ի պահպանութիւն անհատին : Երրորդն՝ առ 'ի կատարելութիւն ենթակային : Արդ՝ սնընդական զօրութեանն, չորք են որք սպասաւորեն, այսինքն, քարշողական զօրութիւնն, որ առնու զկերս առ 'ի սնունդ : Հալողական՝ որ որոշէ զյարմարն յանյարմարէն, 'ի կերակրոցն : Պահողական՝ որ զկերակուրն այնքան պահէ 'ի միում տեղւոջ, մինչև առնուցու զպատշաճաւոր այլայլումն : Արտաքսական, որ արտաքսէ որ ինչ աւելորդ է 'ի սնունդն, այլ յառաջքան զայսամ է՛ յօժարականն :

Յաղագս առ ըմբռնողական զօրութեց, զգայական հոգւոյն: Գլ. ԼԴ.

Զգայական հոգին ունի զկրկին զօրութի, այսինքն, զըմբռնողական. և զշարժական: Իսկ ըմբռնողականն բաժանի 'ի ներքին, և յարտաքին: Եւ զօրութիւնք արտաքինք ըմբռնողականք՝ են արտաքին հինգ զգայութիւնս, այսինքն, տեսանելիք, լսելիք, և այլն: Իսկ ներքին ըմբռնողական զօրութիւնք՝ են ներքին Ե. զօրութիւնք զգայականի հոգւոյն, այսինքն, հասարակ զգայութի. երևակայութիւն, կարծիք, տրամախոհութիւն, և յիշողականութի: Արդ՝ Ճեմականքն ուսուցանեն զզօրութիս զայսոսիկ զամենեսեան զոլ գործիքական, զի մարմնական գործեօք կատարեն զգործս իւրեանց, մ զի են միայն շուրջ զմասնաւորօքս: Քանզի ամ մասնաւորական տեսակք՝ են նմանք նիւթոյ. քանզի տեսակ առանց ամի նիւթոյ առեալ՝ ընդհանրական է՝ շուրջ զորոյ ներգործէ իմացումն: Եւ զայս դիւրին է տեսանել 'ի մասնաւոր զգայութիս. զի սոքա ոչ ըմբռնեն, եթէ ոչ՝ ներկայութբ զգալի իրաց:

Իսկ ներքին զօրութեց, որ է երևակայութի, կարծիք. տրամախոհութիւն, նոյն է. զի յամենեսին 'ի նոսա՝ է՛ ըմբռնումն եզականի տեսակին, ըստ կարմածոյ մասանց նորին, և քանակութե, և որակութե:
Ա Ամ զօրութիւս այսոքիկ՝ են կրողականք, և կրեն 'ի յանհատից և 'ի տեսակաց՝ որք են սկզբունք զգալի ճանաչման: Զգալի ասի, զի կրկին է ճանաչումն, իմացական, որ ծագի յայնմանէ որ յատկաբար ունի ճանաչել 'ի ձեռն իմացման, որպէս տեսակք հասարակք և սոյնակիք. զգալի՝ որ յառաջանայ 'ի յանհատից և յառարկայից զգայութեանց մասնաւորաց, որք են սկզբունք զգալի ճանաչման: Դարձեալ գիտելի է՝ զի ոչք ըմբռնողական զգայական զօրութիւն պահէ զայն զոր ըմբռնէ, այլ զոր միայն ըմբռնէ, միւսն պահէ. քանզի այլ զօրութի է՝ որ բարեպէս ըմբռնէ, և այլ է՝ որ բարեպէս պահէ. այն որ բարեպէս ըմբռնէ, կատարի խոնաւութբ, և որ բարեպէս պահէ, կատարի չորութբ և ցրտութեամբ:

Յա-

Յաղագս մասնաւոր զգայութեանց ։ Գլ. ԼԵ.

Մասնաւոր կամ արտաքին զգայութիւնք՝ են հինգ, այսինքն, տեսանելիք. լսելիք, ճաշակելիք, հոտոտելիք, և շօշափելիք. որք իրօք ինչ համաձայնին, և իրօք ինչ զանազանին ։ Արդ համաձայնին հինգ զգայութիւնքն 'ի յայսմիկ, զի են կրական զօրութիւնք. վ՟ս զի զգամք՝ ընդունելով Ա 'ի ներքս՝ ոչ արտաքս առաքելով ։ Իսկ զգալին եդեալ 'ի վերայ զգայութեանն՝ ոչ լինի զգացեալ ։

Եւ ամ՟ զգայութիւնք՝ են ընդունօղք մասնաւորաց, և ոչ հանրականաց ։ Առ իւրաքանչիւր զգայութիւնս տարածին երկու ջիլք, մին առ 'ի զգալն, որ իրակի ընդդէմ արտաքսակայից, և միւսն առ 'ի կամաւոր շարժումն, որ առնէ իբրու ներքնային ուժ հոգւոյ, և զգիտաւորութիւն ուղղէ առ կողմնակածն ։

'Ի յամ՟ զգայութ՟ի պարտէ լինիլ չափաւորութ՟ի զգալի իրին՝ առ զգայութիւն, զի 'ի մէջն հեշտանան և 'ի ծայրսն ապականին ։ Եւ առ 'ի զգալն՝ պարտի լինիլ յառաջ եդեալն մերձ. և բերողական մէջ, և առողջ և յարմար գործիք, և ներգործական գիտաւորութ՟ի հոգւոյն ։ Ամ՟ զգայութիւնք ունին զմի սկիզբն, այս է, զհասարակ զգայութիւն յորմէ իբր 'ի միջին կիտէ ելանեն ոպ՟ զգիծս ոմանս ։ Նա և զանազանին մասնաւոր զգայութիւնքն բազմօք իրօք. քանզի իւրաքանչիւրն ունի զյատուկ գործի ։ Նա և զանազանին 'ի յառաջ եդեալսն. այլ և տարբերին՝ 'ի բերողական մէջն, զի ճաշակելիքն՝ և շօշափելիքն՝ ունին զմէջ ներքին, և այլքն արտաքին ։ Նա և զանազանին արտաքսապէս ըմբռնելովն. զի տեսանելիքն՝ խոյոյն ըմբռնէ, նա և զտարակացեալսն ։ Զանազանին և տեղեաւ, զի տեսանելիքն է բարձրագոյն, և յետ նորա լսելիքն, և այլն ըստ կարգի ։ Այլ և տարբերին օգտակարութ՟բ, զի ճաշակելիքն և շօշափելիքն, կարի իմն են հարկաւորք առ 'ի պահպանութ՟ի անհատին, և տեսակին ։ Քանզի ճաշակելիքն ընտրէ զկերակուրն՝ որով պահպանի կենդանին 'ի վնասակարէն. իսկ շօշափելիքն ընտրէ զորպիսութ՟ի յառաջ եդելոց, ոպ՟ զջերմն, և զցուրտն, և զայնպիսիսն, որպէս զի կենդանին 'ի բաց կացցէ յայնպիսեաց ծայրից՝ զի մի՛ ապականեսցի ։

Զա.

Զանազանին և ընդհանրականութիւն. զի շօշափելիքն ընդհանրականագոյն է՝ վասն ոչ ունելոյն զբացորոշեալ գործիք, այլ է 'յամենայն անդամս: Նա և զանազանին ապահովանութիւն ընդունելեացն, քան զի սաստկագոյն զգայութիւնքն՝ ուժգնագոյն ողահեն զընդունելեայս յինքեանս, ոչ յայտ է 'ի շօշափելիսն: Եւ գիտելի է զի տեսանեմք տեսանելեօք և աչօք, այլ զանազանապէս՝, զի տեսանելեօք տեսանեմք ներգործականապէս, և տեսականաբար, այլ աչօք՝ գործիքականապէս: Նոյն է և զլսելեացն, և զճաշակելեացն, և զայլոց զգայութեանց: Իսկ հոգին ստանայ 'ի զգայութեանց երեք կերպիւ: Նախ 'ի ննջելն. երկրորդ 'ի յափշտակելն առաւել. երրորդ 'ի մեռանելն եւս առաւել:

Յաղագս հասարակ զգայութեան: ԳԼ. ԼԶ.

Ա. Հասարակ զգայութիւնն է զօրութիւն ընդունական՝ յառաջ եկելոց ամենայն մասնաւոր զգայութեանց, զի ամենայն արտաքին զգայութիւնք, մասնաւորաբար եղանեն 'ի հասարակ զգայութիւնն իբր 'ի միջին կէտէ, և զնմանութիւն զգացելոց իւրեանց, վերածեն առ հասարակ զգայութիւնն՝ որոյ միջնորդութեամբն՝ զիւրաքանչիւրոց յատկութիւն ենթադատեն և տարորոշեն: Ուստի գիտելի է՝, զի հասարակ զգայութիւնն է աղբիւր՝ յորմէ եղանեն ամենայն զգայութիւնք և առ որ՝ ամենայն շարժմունք զգալեացս վերածին, ոչ առ վերջին վախճան: Զօրութիւն այս ունի զերկս անուն՝ ըստ այնմ որ է զգայութիւն, և զեր ինչ՝ ըստ այնմ որ է հասարակ: Արդ՝ ըստ այնմ որ է զգայութիւն, ունի ընդունել զտեսակս իրողութեանց, առանց նիւթոյ, այլ սակայն ներկայ գոլով նիւթոյն: Իսկ ըստ այնմ որ է հասարակ՝ ունի զերկուս յորոց մին է ենթադատութիւն զգալի իրին, որով առ ըմբռնեմք զմեզ տեսանել՝ երբ տեսանեմք. և լսել՝ երբ լսեմք. և այսպէս զայլոց: Քանզի թէ ենթադատութիւն այս ոչ գոյր 'ի կենդանիս, ոչ լինէր նոցա բաւական օգուտ տեսանելն և լսելն. և ըստ այլոց զգայութեանց առ ըմբռնելն: Երկրորդն՝ է՝ համեմատել

Բ. զբազում զգացեալսն առ իրեարս, այսինքն՝ զքաղցրն՝ առ քաղցրագոյնն, և զսպիտակն առ սպիտամկացուցման ։ Եւ զայս մեկ ունի հասարակ զգայութիւն, զի առ նա վերածին զգացեալքն ամենայն յատուկ զգայութեանց ։ Զօրութիւնս այս դնի 'ի յառաջին մասն ուղեղին, ուր ծագումն զգայական ջիլք հնգից զգայութեանց, որ է տեղի խոնաւ, և ուղղակի, նախ իւր փութով ընդունի, բայց ոչ պահէ ։

Յաղագս երեւակայական զօրութեան ։ ԳԼ. ԼԷ.

Երեւակայական զօրութիւն է զօրութիւն ըմբռնողական՝ յորում պահին նմանութիւնք զգալի իրողութեանց ։ Զօրութիւնս այս առաւել արտաքարգէ քան զհասարակ զգայութիւն, զի հասարակ զգայութիւն, ոչ առնու զնմանութիւն եթէ ոչ մերձ գոլով իրին. իսկ սա պահէ զնմանութիւն, նաև 'ի բացեայ գոլով իրին ։ Ա Արդ՝ նայսմիկ տարբերի երեւակայութիւն 'ի հասարակ զգայութենէ, զի հասարակ զգայութիւն կարօտի ներկայութեան արտաքին իրի, որպէս և մասնաւոր զգայութիւնք ։ Դարձեալ՝ զօրութիւնս այս կոչի գանձարան տեսակաց . զի 'ի նմա պահին տեսակքն՝ ընկալեալք 'ի մասնաւոր զգայութեանցն ։ Եւ զօրութիւնս այս կարգեալ է յառաջին մասին ուղեղին, որպէս և հասարակ զգայութիւն դնի, այլ աստ է առաւել խստութիւն, յառաջ եկեալ 'ի չորութենէ ուղեղին ; ուր երեւակայականն պահէ զներգործութիւնս զընդունեցեալս 'ի հասարակ զգայութենէ ։

Յաղագս կարծողականին ։ ԳԼ. ԼԸ.

Կարծողականն է՝ զօրութիւն իմն, որ 'ի յընդունեալ տեսակէն հանէ զդիտաւորութիւնս՝ որ ոչ լինի ընկալեալ զգայութեամբն. ըստ այնմ որ ոչխարին փախչի 'ի գայլէն, և գայլն գթայ 'ի ծնունդն իւր, և այս ոչ կարէր լինել՝ եթէ ոչ ունիցէր գայլն զճանաչումն անհասունին այնորիկ՝ թէ է ծնունդ իւր, որպէս և ոչխարին իմանալ զգայլն գոլ վնասակար ինքեան ։ Եւ այսորիկ ոչ լինին գիտացեալ զգայութեամբ ։ Իսկ կարծողականն զանազանի 'ի յերեւակայակայականէն . զի երեւակայականն ըմբռնէ միայն զտեսակսն՝ զըմբռնեցեալսն հասարակ զգայութեբն. և առ երեւակայութին միայն՝ ոչ հետեւին ախորժակք աղետին, կամ տրտմութենէն . կամ փախուստն, և կամ ըմպելն զգինի . իսկ առ կարծիսն, առ ժամայն հետեւի իւրաքանչիւրն յայսցանէ : Վասն որոյ գործնական իմացումն ունի զինքն առ տեսականն՝ այնպէս կարծողականն առ երեւակայականն, և մին այնորիկ կարծողական՝ ոչ բոլորովին է ըմբռնողական, այլ և շարժական, այսու, զի սահմանէ թէ առ ինչ պարտ է շարժիլ կենդանին, և յորմէ փախչիլ : Քանզի յորժամ կենդանին շարժի առ կերակուրն, պարտ է երեւակայութիւն կերակրոյն լինել 'ի կենդանին :

Ա Բայց կարծողականն ոչ միայն շարժէ, այլ նա և ըմբռնէ : Ապա ուրեմն պիտոյ է կենդանեացն ունել զկարծիս որով շարժեսցին : Իսկ գործ կարծողականին է՝ ըմբռնել զդիտաւորութիս՝ ոչ արդարև բանականին, այլ բնութեանն : Վասն ոչ ըմբռնէ՝ զինչ արդեօքիցէ համաքաբանութին . կամ անուն . և բայ, այլ ըմբռնէ զսիրելութիւն, և զթշնամութի, զհանդարտութի, և զանհանդարտութի . որպ 'ի վերայ ասացաւ : Զօրութիս այս դնի յառաջին մասն միջի փորոտածոյ ուղեղին՝ որ է ջերմ՝ 'ի շարժմանէ բազմաց շնչոց որ առ նա :

Յաղագս տրամախոհութեն : ԳԼ: ԼԹ.

Տրամախոհութիւն է զօրութի, որ բաղադրէ զպատկերս ընդ պատկերաց . և զպատկերս ընդ դիտաւորութեանց . և զդիտաւորութիս ընդ դիտաւորութեց : Արդ՝ զպատկերս բաղադրէ ընդ պատկերաց, յորժամ ըմբռնէ զիմն գոլ սպիտակ՝ կամ սեաւ, և կամ յորժամ բաղադրէ զզանազան տեսակս, և յօրինէ եղջերուաքաղս : Բաղադրէ զպատկերս ընդ դիտաւորութեց՝ որպէս յորժամ ըմբռնէ ոչխարն զտեսակ գայլին՝ լինել չարակար, և փախչելի : Նա և բաղադրէ զդիտաւորութի ընդ դիտաւորութեան, որպէս յայտ է յոչխարն, որ ընտրէ զանձն տալ իւրոյ գառին, և ոչ օտարին: Արդ տրամախոհութեն՝ է՝ մեծագոյն զանազանումն որ կարէ ունիլ 'ի զգայական հոգին, որ է 'ի յանասունս. զի սոքաւ ոչ միայն գիտէ զներկայսն. այլ հոգայ և զապառնեացն : Եւ այսու, նա և ոմանք կենդանիք շինեն ինքեաց զտունս, և զկերակուրս նախախնամեն 'ի հեռաստանէ. նա և այսու գիտէ՝ թէ այս ինչ է՛ այս, և այն ինչ՝ է՛ այն. և այսպէս զայնմանէ ամէ, զորմէ գիտութի առ բերի, ըստ եղանակի ստորասութե և բաղդատութե : Այլ և այսու տեսանեմք զկենդանիս ընտրել զայս ինչ, և խոտել զայն : Իսկ առ 'ի յընտրելն, և 'ի խոտելն, պահանջի խելամտութիւն իմն և գիտութի. նմին իրի բազումք ասացին թէ տրամախոհութիւն՝ է՛ մասն ինչ բանականութեան :

Այլ ասեմք ոչ գոյ ճշմարիտ ընտրութի զգայական հոգւոյն այլ նման ինչ : Իսկ յոմանց՝ կոչի սա 'ի մարդն խորհրդական. սակայն խոհականն՝ յառկայեաւ է բանականին : Դարձեալ՝ տրամախոհութիւն ներգործէ 'ի քուն՝ առ յարթնութե : Իսկ զի յանուրջս երևին իրքն գոլ ներկայք, այս վասն այնէ՝ զի լինի դարձումն առ հասարակ զգայութիւնն : Արդ՝ զօրութիւնս այս՝ յորժամ է զուգեալ ընդ բանականութեանն որպէս է 'ի մարդն, յայնժամ ընդունի 'ի բանէն զկատարելութիւն Ա իրակելոյ և գործելոյ : Այլ զի բանն զանազանի ըստ զանազանութե նոցին՝ յորոց լինի բանականութիւն, վասն ներգործութիք տրամախոհութեանն յոյժ բազմանան 'ի մարդն : Իսկ ուր տրամախոհութին ոչ է ընդ բանականին՝ առ 'ի յանբանսն, յայնժամ կատարի միայն ըստ ազդման իւրոյ բնութե : Եւ զի բնութիւնն միով եղանակաւ է 'ի յայնս՝ որք ունին զմի տեսակ : Վասն այսորիկ ընդունումն տրամախոհութե՝ ներգործէ յայնպիսին միով կերպիւ : Եւ յայնմանէ է՝ զի ամ ծիծեռն՝ միով կերպիւ շինէ զբոյն իւր : Ասացին փիլիսոփայք ոմանք՝ թէ զօրութիւնս այսորիկ 'ի յանասունս առաւել իրակլին՝ քան թէ իրակեն, այլ 'ի մարդն՝ առաւել իրակեն, քան թէ իրակլին. զի անբանքն շարժին ըստ արձակման, և ըստ մղելոյ բնական յօժարութեանն : Իսկ մարդկային շարժմունք կարգաւորին ըստ կատարութե բանականին : Եւ գիտելի է՝ զի սեաւ մաղձոտքն հիւանդոտքն՝ և խելագարքն, ունին զբաղում տրամախոհութիւնս. և այս ոչ լինի լուսաւորութե պատկերաց զգալի իրողութեց, այլ 'ի կրից բնութեանն, և 'ի շփոթմանէ գոլորշեացն, որք ելեալք ամբոխեն զգլուխն :

դգլուխն ։ Քանզի այնպիսի գործք զանազանից երևակերպութեանց առնեն զփոփոխմունս , և ծնանին զզանազան և զատուցելի երևմունս ։ Դարձեալ՝ դիտելի է՝ զի անասունք դիւրաւ զգան զազդմունս առաջնոյ շարժունին քան զմարդիկք , որպէս յայտ է 'ի մրջիւն , զի յորժամ ժողովէ զկերակուրս իւր՝ մինչև ցերիս աւուրս ոչ տեղայ անձրև . և աքաղաղն խօսի 'ի դէպ ժամու , զի նախ զգայ զփոփոխումն օդոյ , և զազդումն առաջնոյ շարժունին ։ Որոյ պատճառ է՝ զի մարդիկ յոյժ զբաղին շուրջ զյղացմամբ միտաց իւրեանց՝ հակաճառելով , բաղադրելով , և տարորոշելով , վասն որոյ և զազդմունս առաջնոյ շարժունին՝ ոչ զգան այնքան արագ որպէս անբանքն որք ոչ զբաղին յայնպիսի յղացմունս , և ոչ ներգործեն ըստ այնց , այլ միայն ըստ ազդման բնութեան իւրեանց ։ Արդ՝ զօրութիւնս այս , այսինքն , տրամախոհութիւն , յոյժ արգելու զիմացումն , վասն զի կարի իմն զբաղէ զհոգին , բաղդրութեամբ և բաժանմամբ պատկերացն , ոչ միայն ընդունելեացն 'ի զգայութեանցն , այլ և յօրինեցելոցն

A յինքենէ ։ Այլ մանաւանդ արգելու զիմացումն , յորժամ 'ի յերկնայնոց և յաստուածայնոց տպաւորիցի իմն 'ի յիմացման . և այս վասն այնորիկ՝ զի իմացումն ոչ կարէ բերել զայնպիսի յղացմունսն , և ոչ են նմանք պատկերաց և յօրինուածոյ տրամախոհութեանն ։

Արդ՝ տրամախոհութիւն դնի 'ի մէջ միջի փորուածոյ ուղեղին իբր զմիջին կէտ , 'ի մէջ երևակայականին , և յիշողականին . զի տրամախոհութիւնն դարձուցանէ զինքն 'ի վերայ տեսակաց , զորս առնու երևակայականն զգայութեամբ , և 'ի վերայ դիտաւորութեանցն զորս պահէ յիշողականն , և յայնժամ զտեսակսն զայնոսիկ , և զդիտաւորութիւնս՝ բաժանէ , և բաղադրէ ։

Յաղագս յիշողականին ։ Գլ. Խ.

Յիշողականն՝ է՛ պահարան անցելոց ։ Քանզի պահէ յիշողականն զարտաքարշեալ զիմաստութիւն ՚ի ձեռն կարծեաց ՚ի ձևոց իրողութեց երևեցելոց ։ Քանզի հոգին ՚ի ձեռն յիշողականին միջնորդութեամբ իրաց զգալեաց, դառնայ ՚ի զգալի իրս, որք են արտաքոյ նորա, և վասն այսորիկ պիտոյէ յառաջանալ երկուց ներգործութեանց, նախքան զգործ յիշողականին . որոց մինն է գործ հասարակ զգայութեանն, այսինքն, ընդունումն նմանութեանց զգալեաց, և յայսմիկ սկսանի յիշողականն ։ Երկրորդ է՝ պահպանումն նմանութեց այնոցիկ առ մեզ, որ լինի ՚ի ձեռն երևակայութեն ։ Նա և պիտոյ է՝ զի յառաջքան զյիշողականն՝ գործիցէ կարծողական զօրութիւնն, որ ՚ի պատկերաց իրողութեանց տարորոշեսցէ զերկական զիմաստութիւնս իւրաց ։ Արդ այսու զանազանին ՚ի միմեանց երևակայութիւն և յիշողականութիւն, զի երևակայութիւնն պահէ զտեսակս իրաց . և յիշողականն՝ զիմաստութի Ա տեսակացն ։ Նա և գիտելի է՝ զի յիշողականութիւնն տարբերի ՚ի վերստին յիշմանէն, զի յիշողականն առանձնակի և որոշաբար դառնայ առ իրողութիւն՝ բաղադրելով զզանազան զիմաստութիւս ընդ պատկերաց ։ Իսկ վերստին յիշումն է՝ շարժումն իւր ընդ մէջ հասեալ մոռացմանն, այլ որոնմամբ ժամանակին և տեղւոյն և այնպիսեաց, վերստին գտեալ ։ Քանզի շարժումն վերստին յիշման ոչ է միակերպ, այլ պատճառի ՚ի բազմաց սկզբանց շարժեցելոցն զնովաւ՝ որոյ յառաջ է վերստին յիշողութի, մինչ իցէ սկիզբն բազմաց նախապէս յիշեցելոց ։ Եւ քանզի յիշողականաւն լինի ըմբռնումն իրողութեանց յառաջագոյն ծանուցեցելոց, յայտ է՝ զի թէ ոք ամենևին մոռացեալ է զնոյն, ոչ կարէ յիշողականաւն վերստին յիշել զմոռացումն զայն ։ Այլ եթէ մոռացեալ իցէ ըստ մասին՝ յայնժամ այնու որ մնացեալ է, կարէ յիշել զնոյն երբեմն գիտացեալ զայն, ուստի որոնմամբ վերստին յիշմանն՝ կարէ դառնալ առ մոռացեալն՝ օժանդականութեամբ մնացելոյն ՚ի յիշողականին ։

Դարձեալ՝ է՛ և այլ զանազանութիւն 'ի մէջ յիշողականին, և վերստին յիշմանն. զի բազումք 'ի կենդանեացն ունին զյիշողականն, այլ վերստին յիշումն միայն է՛ մարդոյ. զի վերստին յիշումն՝ է՛ ներխուզումն իմն որ ոչ լինի առանց կարգաւորելոյ բանականին, և առանց ընտրութեան, որով յառաջ ընթացն կարգի առ համահետևեալն: Արդ՝ եթէ ոք կամեսցի վերստին յիշել զայնս՝ որ ոչ զգայութեամբ, այլ իմացմամբ ըմբռնէ, այս ոչ լինի յիշողականաւն. զի յիշողականն ոչ պահէ զայնպիսիս. այլ իմացումն դարձուցանէ զինքն 'ի վերայ այնց՝ որ ունի մերձ ինքեան ունակութեամբ, և վերածէ զայն 'ի ներգործութեան. իսկ այս ունակութիւն, մնայ ներգործականապէս առ կարելի իմացումն, որ է տեղի ընդհանրական տեսակաց. ուստի և յառաջագոյն նկատեալ ընդհանրականքն մնան առ նա, իբր 'ի տեղի ծննդեան իւրեանց, նաև յորժամ ներգործութեամբ ոչ մտածէ զայն: Իսկ կարելի իմացումն՝ առ տեսակս յայսոսիկ՝ զոր այնպէս ունի առ ինքեան՝ դառնայ, կամ յետս դառնայ 'ի նոցանէ յորժամ կամեսցի: Դարձեալ գիտելի է՝ զի յիշողականն դնի 'ի յետին մասն ուղեղին, որ է տեղի չոր՝ վասն շարժման ջլացն որք ելանեն 'ի նմանէ:

Յաղագս զգայական շարժական զօրութեանն:

Գլ. ԽԱ.

Զգայական շարժական զօրութիւն՝ երբեմն շարժէ հոգևորապէս՝ երբեմն մարմնաւորապէս: Առաջին կերպիւն՝ առ յօժարական որ շարժէ կրկնակաբար, այսինքն, կամ սիրելով. կամ ատելով. և բաժանի 'ի ցանկական և 'ի ցասմնական, 'ի ձեռն որոց բաղձայ հոգին բարւոյ, և կամ ներ յառնէ ընդդէմ չարին: Արդ՝ յայսցանէ յերկոցունց, այսինքն, 'ի ցանկականէ և 'ի ցասմնականէ, յառաջ գան չորք ախորժմունք, այսինքն, խնդութիւն, յոյս, ցաւ, և երկիւղ: Քանզի եթէ ներկայէ որում ցանկամք, խնդամք. եթէ տարակայէ, յուսամք. նմանապէս թէ ներկայ է չարն, որում բարկանամք, ցաւիմք. և եթէ 'ի բացեայ՝ երկնչիմք:
Իսկ զգայականութիւն՝ է՛ շարժողական զօրուն զգայա-

կան հոգւոյն ․ և շարժէ առ նոյն, առ յոր ցանկական, և ցասմնականն ։ Քանզի զգայականութիւն միշտ յօժարի յայնս, որք հեշտալիք են մարմնոյն ․ և խորշի 'ի վնասակարէն ։ Քանզի զանազանի զգայականութիւն 'ի ցանկականէն, և 'ի ցասմնականէն ․ զի զգայականութիւն առաւել համազուգի ընդ մարմնոյն ․ և ոչ 'ի յանասունս, նոյնպէս և 'ի մարդս ․ ոչ խելք օրինօք վարի, զի մի՛ միշտ շարժեսցի 'ի յօժարութիւն իրաց՝ որք վերաբերին առ մարմինն ։ Իսկ ցանկականն, և ցասմնականն՝ առաւել համազուգին բանականին, և ըստ այսմ որ են 'ի մարդն, անձնհաւրին բանականին, և կառավարին առաքինութեամբք՝ որք հիմնաւորին 'ի նոսա ։ Քանզի՛ է՛ ողջախոհութիւն 'ի ցանկականումն, Ա և արիութիւնն 'ի ցասմնականումն, նոյնպէս և այլք ։ Իսկ ըստ այնմ որ շարժողական զգայական զօրութիւն շարժէ մարմնաւորպէս՝ բաժանի 'ի բնական զօրութիւն 'ի կենդանականն, և 'ի շնչականն ․ որոց առաջինն ունի զտեղի 'ի լեարդն ․ երկրորդն՝ 'ի սիրտն, և երրորդն՝ 'ի գլուխն ․ ոչ 'ի մերձաւոր սկզբան, սակայն նախկին սկիզբն՝ է՛ սիրտն ։ Արդ՝ բնական զօրութիւն է՛ շարժողական հիւթոց ․ կենդանականն՝ շարժողական երակաց բախողաց ․ շնչականն՝ շարժողական անդամոց ։ Ասեմք ուրեմն զբնական զօրութիւն շարժողական հիւթոց՝ միջնորդութեամբ շնչերակացն, և երակացն՝ որք արմատանան 'ի լեարդն՝ ըստ գալինոսի, և 'ի սիրտն՝ ըստ արիստոտելի, և այս բնական շնչովն ։ Իսկ բնական շունչն է՝ նուրբ գոյացութիւն և օդային ծնեալ 'ի սիրտն զօրութեամբ ջերմութեանն, սա զարիւնն մղէ յիւրաքանչիւր անդամս՝ յորմէ կենդանանայ մարմինն ։ Եւ կենդանական զօրութիւն է՛ շարժական երակաց բախողաց՝ միջնորդութեամբ շնչերակացն, որք արմատանան 'ի սիրտն ։ Իսկ կենդանական զօրութիւն է՛ նոյն ընդ բնականին ։ Նոյն ասեմ ըստ գոյացութեան, բայց տարբեր ըստ զօրութեան, որ և է բնական ․ սա շնչերակօք տարածեալ զինքն ընդ անդամս մարմնոյն՝ կենդանացուցանէ զմարմինն իբր գործի ։ Այլ շնչական զօրութիւն է՛ շարժական անդամոց միջնորդութեամբ ջղացն, որք արմատանան 'ի գլուխն, և այս ոգւով շնչականաւ ։

Իսկ շնչական ոգին է նոյն ընդ բնականին, և ընդ կենդանականին, այլ սա 'ի շնչական՝ յորժամ հասանի 'ի յուղեղն ․ սա նրբագոյն քան զայլն, 'ի ձեռն ջղաց ուղղի առ գործս զգայութեանց , զի զգայութիւն և տեղական շարժումն անտի ծնանի 'ի մարմին կենդանւոյն : Նա և գիտելի է : զի յորժամ շնչական զօրութիւնքն սաստկանան , յայնժամ բնականքն թուլանան . վասն զի 'ի մարդն որ ընթերցման և խոկման է՝ պարապեալ . սակաւ ներգործէ սննդական ծննդական , և աճողական զօրութիւն : Յորմէ յայտ է՝ զի ցանկութիւն մարմնոյն նուազի 'ի յայրն որ պարապի ընթերցման և խոկման : Ուստի ասէ Ջերոնիմոս . սիրեա՛ զգիտութիւն գրոց , և ոչ սիրեսցես զմոլեկան հեշտութիւնս : Դարձեալ՝ յորժամ շնչական զօրութիւնքն թուլանան՝ բնականքն սաստկանան . որպէս յայտ է 'ի քունն , որ ենթադրի գոլ հանգիստ շնչական զօրութեանց , ընդ սաստկանալ բնականաց :

Յաղագս զօրութեան բանական հոգւոյն :

ԳԼ. ԽԲ.

Երեք են 'ի հոգւին՝ որպէս ասէ փիլիսոփայն, այսինքն , զօրութիւնք , ունակութիւնք , և կիրք : Արդ զօրութիւնքն են բնաւորեալք . և ունակութիւնքն ստացեալք կամ հեղեալք . իսկ կիրքն են ներածեալք , կամ ներածնեալք :

Քանզի ունակութիւնքն են ստացեալք . որպէս յայտ է 'ի գիտութիւնս , և 'ի յառաքինութիւնս քաղաքականս . վասն զի 'ի բազում ընթերցմանց ստանայ մարդն զգիտութիւն . և 'ի յաճախս առնելոյն զբարին՝ լինի մարդն բարի՝ բարութեամբ քաղաքական առաքինութեամբ : Են և ունակութիւնք ոմանք՝ ոչ ստացմամբ՝ այլ հեղմամբ . որպէս գիտութիւն սողոմոնի , և աստուածային առաքինութիւնք , որք տուեալ լինին օրստօրէ 'ի մկրտութեան, և զղջացելոցն 'ի յարդարանալն. և 'ի ներգործութեանց ոչ ծնանին այսպիսի ունակութիւնք , այլ մանաւանդ անդրադարձապէս՝ յայսպիսեաց ունակութեանց ելուզանին բարիք ներգործութիւնք 'ի կարողութեանց . ուստի 'ի յունակութիւնս ստացեալս հետևի՝ զի որպիսիք են ներգործութիւնք , նոյնպիսիք են և ունակութիւնք , այլ 'ի հեղեալ ունակութիւնսն՝ է՝ ընդդէմն , այսինքն , զի որպիսիք են ունակութիւնք , նոյնպիսիք են և ներգործութիւնք : Սակայն ճշմարիտ է այս , զի որպէս

սաս

ստացեալ ունակութիւնք՝ ծնանին ներգործութիւնք, որպէս
և ծնանին զներգործութիւնս , այլ ոչ զվարձատրելոն , Ա
զի ըստ որում այնպիսիք , են կիրք ներածեալք
յարտաքուստ ։ Եւ նմանանէ փիլիսոփայն
զկիրսն՝ վերընդունելութիւնք յառաջ եղելոց ։
Նա և այլ եղանակաւ առեալ լինին կիրքն , որպէս զի
առիցին ախորժակք, որպէս է երկիւղն , ցասումն՝ յոյսն
և խնդութիւնն ։

Յաղագս բաժանման զօրութեանց հոգւոյն ։
ԳԼ. ԽԴ.

Այժմ տեսցուք առ բաժանումն զօրութեանց հոգւոյն ։ Այլ փիլիսոփայն բաժանէ նախկինաբար զզօրութիւս հոգւոյն 'ի ճանաչողականն՝ և 'ի շարժողականն . զորս աստուածաբանքն կոչեն՝ իմացումն , և ախորժակք , և ինքն ախորժակն՝ է կամք ։ Քանզի զօրութիւն հոգւոյն որ ըմբռնողական , ասի իմացումն . և շարժողականն՝ կոչի կամք ։ Դարձեալ են զօրութիւնք իմն
հոգւոյն՝ անջատեալք 'ի մարմնոյն , որք իմանալն և
կամիլն . ըստ որոց հոգին ոչ միաւորի ընդ մարմնոյ , Ա
այլ միաւորի ընդ կիրառնողի զմարմինն , այսինքն .
ընդ տրամախոհութեանն՝ որ այնպէս ունի զինքն առ
իմացումն որպէս գոյն առ տեսողութիւն , որպէս ասէ փիլիսոփայն ։
Դարձեալ են և այլք զօրութիւնք անանջատականք 'ի մարմնոյն , որպէս անկականքն , և զգայականքն՝
ըստ էութեան , և ներգործութեամբ , որք 'ի յանասունս ։
Այլ 'ի մարդն՝ անջատին զօրութիւնքս այսոքիկ
'ի մարմնոյն, ըստ էութեան ; թէպէտ հոգին ոչ կարէ Բ
կիր առնուլ զգործողութիւս նոցին թարց մարմնոյ ։
Իսկ յանասունսն՝ ամենեքին ըստ երկոցունցն կորնչին
ընդ մարմնոյն ։ Դարձեալ հոգին ունի զզօրութիւնս
ոմանս հասարակ ընդ անասնոց , որք զգայականութիւն.
մանաւանդ , և հասարակ զգայութիւնն , երևակայութիւն , կարծիք ; տրամախոհութիւն , յիշողութիւն ։
Իսկ զոմանս ունի ոչ հասարակ ընդ անասնոց , որպէս
բանն՝ իմացումն՝ կամքն . և այլք այսպիսիք ։
Դարձեալ՝ հոգին ունի զօրութիւնս ոմանս անխառն
ընդ մարմնոյն , որք է բան . կամք՝ անձնիշխանութիւն .

և զայնս ունի խառն ընդ մարմնոյ , որ է բնական զօրութիւնն . կենդանական՝ և շնչականն , յորոց վերագոյնդ ասացաք : Եւ յայտ է յասացելոցս՝ զի 'ի զօրութեանց՝ ոմանք են գործնականք , և ոմանք ոչ :
Արդ 'ի նախ ասացելոցս հաւաքեմ , թէ բանական հոգին ունի զամ զօրութիս աճականին , և զգայականին , բայց ոչ ըստ այնմ որ բանական . այլ այն ըստ որում է բանական՝ յաւելու և ևս զիմացումն , և զանձնիշխանութիւնն : Եւ այս է զոր ասէ գրիգոր . թէ մարդն ունի ինչ 'յամ ստեղծուածոցս : Քանզի ունի հասարակ՝ գոլ ընդ քարանց , կեալ ընդ տնկոց՝ շնչել ընդ զգայնոց , իմանալ ընդ հրեշտակաց :
Քանզի զոր ինչ զօրութի և պատուականութի ունին ստորինագոյնքս , ունին և վերինագոյնքն , բայց կատարելագոյն կերպիւ . և զոր ինչ կարեն վայրագոյնք , կարեն և վերինագոյնքն , բայց կատարելագոյն և պատուականագոյն կերպիւ : Եւ վասն այսորիկ յայտ է՝ զի ամ զօրութիւնք որով հաղորդիմք ընդ անասնոց՝ ստորներին տեսակաւ , ըստ այնմ որ են 'ի մեզ՝ և յանասունս :

Յաղագս ճանաչողական զօրութեց : ԳԼ. ԽԴ.

Չորք տարբերութիւնք բացատրին իմացական զօրութեանն : Առաջինն՝ բացատրի ըստ զանազանութե բնութեան . և ըստ այնմ բաժանի իմացումն 'ի յառնողականն և 'ի կարողականն : Երկրորդ՝ առնեալ լինի ըստ տարբերութե յառաջ եդելոյն , և այսպէս բաժանի իմացումն՝ 'ի տեսական և 'ի գործնական : Երրորդ՝ բաժանի ըստ տարբերութե պատուականութե . և ըստ այսմ բաժանի բանականն՝ 'ի վերինագոյն և 'ի ստորինագոյնն :
Չորրորդ՝ առնեալ լինի բաղդատութե առ ներգործութի , և այսպէս բաժանի իմացականն , 'ի ներգործութիւն՝ և 'ի յունակութիւն : Արդ՝ ունակութի է՝ յորժամ կարէ իմանալ , երբ կամեսցի :
Իսկ ներգործութի է՝ յորժամ ներգործականապէս դարձուցանէ զինքն առ 'ի յիմանալ՝ և առ իմանալին :
Իսկ զանազանութի իմացմանն 'ի գործն , և այնմ որ ասի ասացեալ . առնեալ լինի ըստ մեծագոյն և փոքրագոյն կատարելութեան կարողական իմացմանն :

քանզի յորժամ կարողական իմացումն ընդունի զտեսակս՝ լուսով ներգործական իմացմանն , յայնժամ ասի
իմացումն 'ի գործն , նա և 'ի յունակութե ։ Արդ յոր-
ժամ նոյն իմացումն ընդունի կատարելապէս զլոյս Ե
առնողական իմացման , այսինքն , զտեսական զուգաւո-
րութի , յայնժամ կոչի ստացեալ իմացումն ։

Եւ արդ՝ ստէպ գիտելի է՝ զի ամ զանազանութիւնք վերոյ ստացեալ իմացմանցս՝ առեալ լինի , կամ ըստ ներգործութե , կամ ըստ ունակութե , և կամ ըստ կերպի իմանալոյ ․ և ոչ ոք առեալ լինի ըստ բաժանման ճանաչողական զօրութեանն ․ բայց միայն առաջինն ․ ըստ այնմ որ բաժանի իմացումն ; 'ի յառնողականն և 'ի կարողականն ։

Յաղագս կերպի ճանաչելոյ զիրս ։ Գլ. ԽԵ.

Այլ կերպիւ ճանաչէ Ած զիրս ․ և այլ կերպիւ հրեշտակք , և այլ կերպիւ մարդս ։ Եւ ինքն մարդն՝ այլ կերպիւ ճանաչէ իմացականաւն զԱծ, և այլ կերպիւ զստեղծուածս ։ Քանզի Ածային իմացումն ճանաչէ զիրս՝ ինքեամբ ․ և հրեշտակային իմացումն ճանաչէ զիրս տեսակօք համաստեղծեցելովք ընդ նմա՝ որք են նմանութիւնք իրաց ։ Իսկ մարդկային իմացումն՝ ճանաչէ զիրս արտաքարշեալ տեսակօքն 'ի մասնաւոր իրացն՝ յառաջագոյն ճանաչեցելոց 'ի զգայութեց ։

Աստի ոչ զգայութի ճանաչէ զիրն ներկայութբ յառաջ եղելոյն , և ոչ երևակայութի ճանաչէ բացակայութբ յառաջ եղելոյն , սակայն նիւթական պարագայիւք , այսպէս իմացումն ճանաչէ առանց նիւթոյ 'ի ներքոյ ընդհանրական գիտաւորութե ։ Այս՝ հոգին իմացականաւն՝ կերպիւ իմն ճանաչէ զհամայնս՝ և համանէ յամենեսեան ․ քանզի ճանաչէ զԱծ , 'ի վերոյ ինքեան․ և ճանաչէ զինքն 'ի յինքն ․ և զհրեշտակսն մերձ ինքեան ․ և որ ինչ պարփակի ընդ երկնային պարունակաւն՝ ստորև ինքեան ։ Այլ թէ որ է կերպ ճանաչելոյն զԱծ ․ ծանիր՝ զի մարդկային իմացումն ոչ ճանաչէ զԱծ արտաքարշեալ նմանութբ , ոչ զայլ իրս , որոյ պատճառ է՝ զի արտաքարշեալ նմանութին ստորագոյն է քան զայն յորմէ լինի արտաքարշումն

այլ արդ ո՛չ ինչ է պարզ քան զմիտ : Դարձեալ՝ ՚ի
յարտաքարշումն պարտ է լինել մասնաւորական և ընդհանրական :
Մասնաւորական յորժամ արտաքարշի. և
ընդհանրական, ա՛յն է, ինքն արտաքարշեցեալն՝ այլ ոչ
ինչ յայտնանէ անկանի յմիտ : Արդ՝ ճանաչի միտ ճանաչմամբ
Ա. բնականաւ, զի կարողական իմացումն լուսաւորի
լուսով առնողական իմացմանն, որ է նմանութիւն
առաջին լուսոյն, և ՚ի նմանութիւն յայս՝ ճանաչէ
զառաջին լոյսն՝ որ է միտ : Դարձեալ՝ գիտելի
է՝ զի զգայութեամբ ճանաչեմք զմասնաւորսն, այլ իմացմամբ
զընդհանուրսն, և յորժամ իմացումն դարձուցանէ
զինքն առ մասնաւորսն՝ զի ըմբռնեսցէ զայն,
յայնժամ արտաքարշեալ նմանութիւնն ՚ի մասնաւորէն
լինի ընդհանրական՝ և ոչ մասնաւոր :

Դարձեալ՝ ոչ ինչ գայ ՚ի յիմացումն, եթէ ոչ զգայութեամբ, և այս լինի կրկին կերպիւ, այսինքն, պարզաբար, և պատահմամբ : Պարզաբար՝ յորժամ իմանամք զզգալիս ընկալըմբռնելոյ զգայութեամբ :

Իսկ պատահմամբ՝ յորժամ իմանամք զանզգալիսն ՚ի ձեռն գործոց : Դարձեալ գիտելի է՝ զի այլ է իրն ՚ի ձեռն ճանաչման գալ առ իմացութիւն. և այլ է յիրում արդեն իմացելում շրջիլ. վասն զի յայնժամ ճանաչումն իրաց ՚ի ձեռն զգայութեան գայ առ իմացութիւն, որպէս ասացաւ : Այլ յորժամ իմացումն արդէն ըմբռնեաց զիրն, յայնժամ հեշտանայ՝ և ներգործէ ՚ի նմա. նաև առանց օգնականութեան զգայութեանն :

Արդ՝ առ ՚ի յիմանալ զայսոսիկ կատարելապէս՝ ծանի՛ր զերկոսեանս ճշմարիտ գոլ, այսինքն, զի մասնաւորօքն ճանաչին ընդհանրականքն, և ընդհանրականօքն մասնաւորքն : Եւ այս յայտ է այսպէս. զի կրկին է ընդհանրականն, այսինքն, մին ըստ այնմ, որ է արտաքարշեալ ՚ի մասնականացն. և միւսն ըստ այնմ՝ որ է շինեալ ՚ի մասնաւորսն : Արդ՝ ասեմք թէ ՚ի ճանաչումն արտաքարշեալ ընդհանրին, գամք մասնաւորօք, որպէս յայտ է ՚ի տղայսն՝ յորս նախ ներգործէ զգայականն քան զիմացականն. զի նախ ճանաչեն զմասնաւորսն զգայութեամբ, և յետոյ զընդհանուրս իմացականաւն : Այսպէս և փիլիսոփայն ուսուցանէ առաջիկեալ մակածութեամբ, յորժամ ՚ի բազմաց մասնաւոր նախադասութեանց եզրակացուցանի մի ընդհանրական, որպէս այս՝ սոկրատէս է կենդանի, պղատոն է կենդանի. չիչերոն է կենդանի. ուրեմն ամ
մարդ.

մարդ է կենդանի ։ Իսկ հակադարձնէ 'ի ընդհանրական ժխտեալն , քանզի այնպիսի ընդհանրականաւն գամք 'ի Ճանաչումն մասնականացն · որպէս յայտ է՝ յորժամ տեսանեմք զմարդ 'ի հեռաստանէ , յայնժամ ոչ Ճանաչի , եթէ ոչ մարմնաւոր դիպացութի , այլ յետոյ շարժմամբն երևի կենդանի · իսկ յորժամ առաւել մերձենայ՝ երևի թէ մարդ · և ապա յետոյ Ճանաչի թէ է՝ պետրոս ։ Եւ ծանի՛ր զի ըստ փիլիսոփայիցն , զբաղում ինչ կարեմք գիտել՝ այլ զմի միայն իմանալ · զի գիտելն առ է ունակութիւն՝ որով զբաղումս գիտեմք · իսկ իմանալն առ է ներգործութիւն , որ ոչ կարէ լինել կրկին 'ի յիմացումն ։ Քանզի իմացումն առ մի միայն կարէ դարձուցանել զինքն ներգործաբար , յայսմանէ յայտ է՝ զի յորժամ ոք առնէ զերկու գործ բանականին համանգամայն ընդ միում ժամանակի մինն է իմացման ; և միւսն յիշողականին, և կամ՝ սովորութեն , զորօրինակ՝ եթէ ոք առէ աղօթս , և ընդնմին խնդրէ 'ի գիրս մեր բան ինչ ; և կամ թուէ զդենարս ։ Արդ մին 'ի նոցանէ ; այսինքն , խնդրելն զբան ինչ 'ի գիրս , և կամ թուել զարծաթն, է՝ գործ իմացականին , այլ աղօթելն է՝ յիշողականին, որպէս անբան կենդանին առանց կառավարութե իմացականի գնայ 'ի տուն՝ ուր բազում անգամ երթեալ իցէ ։ Դարձեալ ծանի՛ր զի առ իմացումն իրին , ոչ պահանջի ներկայութի իմանալի իրին , այլ միայն ներկայութի նմանութե նորին · զի իրն ոչ Ճանաչի էութեամբն , այլ նմանութբ միայն՝ և հակադարձեալ · և յայսմանէ է՝ զի իմացականն ըմբռնէ զբացակայն իբր զմերձակայ ։

Յաղագս առնողական և կարողական իմացականին ։ Գլ. ԽԶ.

Ա Այժմ ասելի է՝ 'ի յառնողական և 'ի կարողական իմացականէն ։ Արդ՝ առնողական իմացումն է , որ արտաքարշէ զտեսակս 'ի յերևակայութէ · կամ 'ի տրամախոհութէ · և լուսոյն իւրով առնէ ընդհանրական , և դնէ զնոսա 'ի կարողական իմացականումն ։ Զի որպէս առ մարմնաւոր տեսութիս պահանջի լոյս , որ արտաքար-

շեցէ

չիցէ զդիտաւորութիւնս գունոց , այսինքն , զնմանութիւնս 'ի գունաւորեցելոյն , և դնէ զնոսա 'ի յօդս ոչ ըստ տեսակին , այլ ըստ դիտաւորութեանն , այսինքն , ըստ նմանութեանն . այսպէս առնողական իմացումն , որ է լոյս հոգւոյն՝ դնէ զարտաքարկեցեալ տեսակսն 'ի տրամախոհութենէն՝ 'ի կարողական իմացումն , ոչ ներգործութեամբ , այլ ըստ դիտաւորութեան , այսինքն , ըստ նմանութեան : Արդ՝ թէ վասն է՞ր 'ի մէջ երեւակայութեան և կարողական իմացմանն , է միջակ զօրութիւն որ արտաքարկէ , այսինքն , առնողական իմացումն : Եւ 'ի մէջ հասարակ զգայութեան , և երեւակայութեանն ոչ գոյ միջակ զօրութիւն որ արտաքարկիցէ , այս է պատճառն . զի հասարակ զգայութիւն , և երեւակայութիւն են նոյնոյ տեսակի , բայց երեւակայութիւն և կարողական իմացումն ոչ են , քանզի մինն է զօրութիւն զգայական հոգւոյն ; և միւսն բանականին : Իսկ իմացումն կարողական ասի , զի կարէ ընդունիլ զայնպիսի տեսակս , զոր առնողական իմացումն արտաքարկէ 'ի տրամախոհութենէն , և դնէ 'ի կարողական իմացումն , որ է նման անգիր տախտակի , որ թէպէտ ոչ ունի զնկար ինչ . բայց կարէ ընդունիլ զո՞ր և իցէ : Քանզի մինչ կարողական իմացումն իցէ ընդունեալ զայնպիսի տեսակսն՝ յայնժամ (որպէս 'ի վեր ասացաւ) կոչի իմացումն ներգործութեամբ , կամ ունակութեամբ : Իսկ յորժամ լուսաւորի բազմութեամբ գիտելի տեսակաց , յայնժամ իմացումն է՝ ստացեալ : Արդ՝ թէ ո՞րք տեսակքս այսորիկ մնան 'ի կարողական իմացումն ; և թէ որպէս լինիցի դարձումն առ նոսա ; վերստին յիշմամբն , ահա գրեալ է 'ի Ճառս յիշողականին : Արդ առնողական իմացումն , և կարողականն՝ տարբերին , որպէս լոյսն և լուսաւորեալն . որպէս կատարեալն ; և կատարելին . զի որպէս ասէ փիլիսոփայն , առնողական իմացականին է առնել զամենայն ; այլ կարողական իմացականին է՝ լինիլ ամենայն :

'ի վեր 40.

Եւ զի որպէս յայտ լիցի՝ գիտելի է ; թէ որպէս առայս՝ զի 'ի ձեռն հայելւոյ տեսանիցի իմն , երեք են հարկաւորք ; այսինքն , հայելի , որ է յարմարապէս բնաւորեալ ընդունիլ զներկայութիւն մարմնոյ յառաջ եդելոյ , իսկ գոյն 'ի մարմինս յառաջ եդեալս . և լոյս՝ որով շարժիցի գոյն մարմնոյ յառաջ եդելոյ , որք թարց ներհոսմամբն լուսոյ , որ քան և յառաջադրիցին՝ ոչ են ընդունելիք 'ի հայելւոյն . նմանապէս և առայս՝ զի

ձա

ճանաչիցեմք զինչ իմացմամբ, հարկ է զի իցէ կարելի իմացումն՝ որ է յարմարապէս բնաւորեցեալ ընդունիլ զտեսակս ըստ որում ասացաւ զհայելւոյն ․ հարկաւոր է ևս, զի իցեն տեսակք հայեցեալք հուպ իմացման կարելւոյ, որ ունի զնոսին ունակութ՟ք, մինչ իցէ տեղի տեսակաց ընդհանրականաց ։

Բայց որպէս գոյնն ոչ շարժի 'ի մարմնոյ ․ և ոչ տեսակք, եթէ ոչ միջնորդութ՟ք լուսոյն ներապատեցին 'ի հայելւոյ, այսպէս՝ և ոչ երևակայմունքն՝ եղիցին իմանալիք ներգործութ՟ք, եթէ ոչ իմացումն անօղ ճառագայթիցէ, և ներհեղուցու 'ի վերայ նորին զլոյս իւր, ըստ որում լոյսն 'ի վերայ գունոց, ոչ զի այսպէս ըստ ներգործութ՟ն լինիցին իմանալիք ։

Յաղագս տեսականի և գործնականի իմացականին։

ԳԼ․ ԽԷ․

Արդ՝ տեսական, և գործնական իմացութ՟իք կայանան 'ի ճանաչման, այլ զանազանին այսու ․ զի տեսական իմացումն ճանաչէ զճշմարիտն ըստ բանի ճշմարտի ․ իսկ գործնականն ճանաչէ զճշմարիտն ըստ բանի բարւոյն ։ Ա

Դարձեալ տեսական իմացումն կոչի տեսական ճանաչումն, այլ գործնականն ասի ախորժական ճանաչումն ։ Դարձեալ վախճան տեսականին է ճշմարիտն, իսկ վախճան գործնականին է գործն ։ Դարձեալ՝ տեսականաւն ուղղապէս իմանամք․ իսկ գործնականաւն ուղղապէս կենցաղավարիմք ։

Դարձեալ՝ գործնական իմացումն բաժանի 'ի [illegible], և 'ի բանականն ։ իսկ բանականն՝ բաժանի 'ի վերինագոյն, և 'ի ստորինագոյն մասն, յորոց կարգաւ ասելի է ։

Յաղագս բանին՝ և մասանց նորին ։ Գլ. ԽԸ.

Արդ՝ բանն է՝ զօրութիւն հոգւոյն, ոչ միայն ճանաչողական, այլ և շարժողական ։ Քանզի բանն յորժամ ենթադատէ զիրն գոլ բարի կամ չար, և մնայ անդ, յայնժամ ասի ճանաչողական ։ Իսկ եթէ յառաջանայ և անդր՝ և ենթադատէ գոլ բարի՝ զի լինիցի, ըստ այնմ ասի շարժողական ։ Իսկ եթէ ևս առաւել յառաջանայցէ՝ զի ոչ միայն ենթադատեսցէ զբարին զի լինիցի, այլ և յօժարեսցի ՚ի նա ; ըստ այնմ ասի անձնիշխանութիւն, որ պարունակէ զբանն և զկամքն ։ Բանն՝ ըստ որում ունի զինքն առ մասնաւոր բարին ; բաժանի ՚ի վերնագոյն, և ՚ի ստորնագոյն մասն. վերնագոյն մասն նկատէ առ յա̃ծայինսն, և առ յաւիտենականսն. իսկ ստորնայինն՝ նկատէ ՚ի յանցաւորս, և զնոսա ենթադատէ, և կարգաւորէ ։ Դարձեալ՝ վերնագոյն մասն առնու զպատճառս նկատմամբ ա̃ծային օրինաց. ոպ̃ թէ, այս է առնելի՝ զի ա̃Ծ այսպէս հրամայէ ։ Իսկ ստորնագոյն մասն, առնու առիթ մարդկային օրինօք ։ Իբր՝ այս է առնելի՝ զի այնպէս վայելէ ; և է՝ օգտաւէտ հասարակութեն ։ Դարձեալ վերնագոյն մասն բանին՝ ասի առաքինութիւն ; զի թէպէտ տարածէ զինքն, մինչև ՚ի խոկումն յաւիտենականաց ; սակայն տարբերի ՚ի յիմացողութենէ ․ զի իմացողութիւն խոկայ զյաւիտենականն կերպիւ բանի և դիտաւորութեն ․ իսկ բանն ոչ այսպէս, այլ տրամաբանելով և առարկելով ։

Դարձեալ՝ զանազանի բանն ՚ի յիմացութենէ և այլ կերպիւ, զի իմացումն ըմբռնէ զգոլ իրին բացարձակապէս ․ իսկ բանն որոնելով և համեմատելով զմինն ընդ միւսոյն ։ Իսկ ստորնագոյն մասն բանին կոչի կին՝ վս̃ զի շուրջ զմարմնաւոր իրօք շրջի, համազուգեալ է ընդ զգայականութե̃ ; և բազում անգամ փաղաքշի ՚ի նմանէ, զի տեսանէ միշտ կառկառեալ նմա խնծոր, այսինքն, վաւաշոտ մերձաւորն ։ Սակայն՝ բան վերնագոյն և վայրագոյն՝ են նոյն ըստ էութեն, բայց տարբերին ըստ պաշտմանց ․ ըստ օրինակի աչաց՝ որ հայի ՚ի վեր կոյս, և ՚ի վայր կոյս ։

կոչի
բազմա-
պ̃տկաւէր

Ա

Յա-

Յաղագս շարժողական զօրութեան հոգւոյն ։
Գլ. ԽԹ.

Շ

ՇԱրժողականաց զօրութեանց բանական հոգւոյն, այսպիսի է բաժանումն ։

Քանզի տարորոշի շարժողական զօրութիւն 'ի հրամայականն. 'ի խրատականն, 'ի բաղձականն, և համանգամայն 'ի խրատականն, և 'ի բաղձողականն ։

Արդ՝ հրամայական զօրութ̃ի է՛ անձնիշխանութիւն, և տրանջականն ։ Եւ խրատականն է՝ ինքն բանն՝ որ բաժանի 'ի վերնագոյն և 'ի ստորնագոյն մասն ։ Իսկ բաղձական զօրութիւն՝ է՝ կամքն, որ բաժանի 'ի յընտրողականն՝ և 'ի բնականն ։

Իսկ զօրութիւն որ է համանգամայն խրատական և բաղձական, է՝ գործնական իմացումն ։

Յաղագս կամացն ։ Գլ. Ծ.

Ի

Ի ՄԷՋ ամ̃ վերոյ ասացեալ շարժական զօրութեանցն, նախ ասելի է զկամացն, որ 'ի մէջ այլոց շարժականացն՝ է՝ մեծագոյն. վ̃ս գոլոյն շարժող ամ̃ զօրութեանց ։ Զի յորժամ իմացականն ըմբռնէ զիր ինչ՝ ըստ այնմ որ բարի է՝ կամքն հրամայէ զօրութեանց շաղկապելոց ընդ գործս, առ̃ տեսանելեացն 'ի տեսանել, և լսելեացն 'ի լսել՝ այսպէս և այլոց զգայութեանց ։ Նմանապէս և 'ի տեղական շարժումն, կամքն հրամայէ կենդանական զօրութե̃ն որ 'ի ջիլս՝ և 'ի մկանունսն, և այնպէս շարժէ 'ի յերթալ՝ և 'ի յընթանալ, և այլ այնպիսիք ։ Այլ ոչ է այնպէս 'ի տնկական զօրութ̃ի հոգւոյն, 'ի յորս կամքն ոչ ածէ 'ի գործ զհրամանն իւր ։ Զի սննդականն, ծննդականն, և աճողականն՝ ոչ ներգործեն ըստ մերում ենթադատութե̃, այլ բնականապէս ։ Արդ կամքն տրամատի յերկուս, այսինքն, 'ի բնական կամքն, և յընտրողականն. բնական կամքն՝ կառավարի տրանջականաւն. և ընտրողականն բանիւ ։ Եւ ծանիր՝ զի կամքն յատկապէս և նեղագոյն առեալ՝

առեալ է՛ միայն բանականին. այլ ընդարձակագոյն և անյատկապէս առեալ՝ ասի և անասնոցն:

Այլ անյատկապէս և նմանօրէն ասի և տնկականացն:

Ուստի կամքն առեալ ըստ առաջնոյ կերպին, ըստ այնմ որ է բանականաց, յատկապէս ասի կամք:

Երկրորդ կերպիւն, ըստ այնմ որ կամքն է՛ անասնոց, կոչի յատկապէս ցանկութիւն: Իսկ ըստ այնմ որ է տնկականացն՝ ասի յօժարութիւն: 'Ի մէջ զօրութեանց, ո՛չ որ ազատագոյն է քան զկամքն. զի ո՛չ կապի ընդ գործիս, որպէս երևակայութիւն, և կարծիքն, և այլ այնպիսիք. նա և ո՛չ բռնադատի յառաջ եդելովք, այսինքն, բարեաւն, որպէս իմացականն 'ի ճշմարտէն:

Այլ և կազմեցեալ զօրութիւնքն ընդ գործիսն՝ փոփոխին 'ի հարկէ ընդ փոփոխիլ գործեացն՝ յորոց ամենից ազատ է կամքն: Ուստի ասէ օգոստինոս, ոչ ինչ այնքան է ընդ մերով իշխանութեամբ՝ որպէս կամքն:

Իսկ եթէ կամիս գիտել թէ է՞ր վասն կամքն ո՛չ բռնադատի բարեաւն՝ որպէս իմացականն ճշմարտեաւն. այս է պատճառն՝ զի այսր քան զառաջին բարին՝ ոչ ինչ է այնքան բարի, որ ո՛չ ունիցի զանկատարութիւն իմն. այլ է՛ իմն այնպիսի ճշմարիտ՝ որ ոչ ինչ ունի զստութիւն, որպէս յայտնէ 'ի յառաջարկութիս այս:

Իւրաքանչիւր բոլոր՝ է՛ մեծագոյն քան զմասն իւր. վասն այսորիկ այսպիսի ճշմարտիւս բռնադատի իմացականն առ 'ի հաւանութիւն. այլ կամքն՝ յոչ ինչ ստեղծուած բռնադատի յարիլ: Զի թէպէտ կամքն երեւի երբեմն բռնադատիլ անկարգ ցանկութեամբ, ըստ այնմ, որ երբեմն հեշտութիւն քարշէ զմարդիկ, և փաղաքշէ առ 'ի յարհամարհել զանփոփոխելի բարին, և յարիլ փոփոխականացս. այլ 'ի յայսպիսի բռնադատութիս՝ է՛ ազատութիւն իմն: Քանզի ասէ օգոստինոս, ամենայն մեղք այնքան է կամաւոր՝ մինչ զի թէ ո՛չ է կամաւոր՝ ո՛չ է մեղք.

Յա-

Յաղագս տրտնջականին ։ Գլ. ԾԱ.

Տրտնջականն է՝ շարժողական զօրութիւն
հոգւոյն, որ միշտ բնաւորեալ է կապակցիլ
'ի վերնագոյնսն, որ բնաւորապէս
շարժէ և ընդոստուցանէ առ բարին,
և դարձի 'ի չարէն. և ոչ երբէք սխալի
յայսմիկ, և ոչ երբէք պատահի մեղանչել Ա
ըստ տրտնջականին ։ Այլ և գիտելի
է՝ զի տրտնջականն ոչ շիջանի բոլորովին. ոչ 'ի դևս,
և ոչ 'ի դատապարտեալսն. այլ մնայ 'ի նոսա գործ
ինչ նորա ։ Զի ըստ այնմ՝ որ ընդոստուցանէ առ բարին,
և դժուարանայ առ չար մեղաց, բացարձակապէս
նկատեալ՝ շիջեալ է 'ի դևսն, և 'ի դատապարտեալսն.
իսկ ըստ այնմ որ մեղքն համեմատի առ
պատիժն, ոչ է շիջեալ 'ի նոսին. այլ մնայ 'ի նոսա
առ 'ի պատիժ. ըստ եսայեայ որ ասէ՝ որդն նոցա ոչ
մեռանի. քանզի ունին զտհաճութիւն 'ի չարն համեմատելով Եսայ. 66. 13.
առ պատիժն ։

Յաղագս խղճի մտացն ։ Գլ. ԾԲ.

Խիղճ մտացն՝ 'ի լաւթինս ասի գօնշիէնցիա, որ ստուգաբանի՝ ընդ գիտութե, ուստի խիղճ մտացն ասէ զերկուս, այսինքն զգիտութի, և ըստ այսմ խիղճ մտացն է՝ ունակութիւն բնական ոչ միայն ճանաչողական, այլ և շարժողական. քանզի ձկտեցուցանէ զհոգին առ հետևումն բարւոյն՝ և 'ի փախուստ չարին ։ Այլով կերպիւ, ասէ խիղճ մտաց՝ զընդունումն 'ի կողմանէ բանին որ նշանակի նախադրութե̅բս այս, ընդ ։ Այսպէս նախկինով եղանակաւ ըստ որում խիղճ մտաց պարունակէ նինքեան զգիտութի, ունի զինքն իբր զվերնագոյն. և շաղկապի ընդ տրտնջականին, և միշտ է ուղիղ ։
Իսկ երկրորդ եղանակաւն՝ առնուել շարադրուցի ընդ բանին. և այսպէս ունի զինքն իբրև ստորնագոյն՝ և ըստ այսմ եղանակի ընդունի զխաբումն, և զամբոխումն ։ Քանզի խիղճ մտացն՝ 'ի կողմանէ վայրա-

դաւգունի՝ կարէ ընդունիլ զխաղումն ։ Զի խիղճ մտաց մինչ համազուգի ընդ բանին 'ի ստորնագոյն կողմանէն , է՛ շուրջ զմասնաւորօք. 'ի յորս բազում անգամ դիպի սխալիլ , որպէս յայտ է 'ի հաւաքաբանութիւն խղճմտանաց՝ յորս տրոնջականն առադրէ զմեծագոյն նախադասութիւն , այսպէս ։ Ոչ ինչ չար՝ է՛ առնելի , բանն դնէ զփոքրագոյնն , այսպէս , այսինքն , այս է չար ։ խիղճմտաց՝ եզրակացուցանէ , ապաուրեմն ոչ է առնելի ։ Արդ 'ի յառաջինն՝ ոչ է սխալումն. քանզի միշտ ճշմարիտ է , ոչինչ չար է առնելի . առ երկրորդին՝ երբեմն է՛ սխալումն . քանզի երբեմն զոր ասէ չար՝ է՛ բարի , և յայնմանէ հետևի ստութիւն եզրակացութեան ։ Արդ՝ զգուշանալի է՝ ընդ կարի արձակագոյն խղճէ մտաց, և 'ի յոյժ նեղագունէն ։

Քանզի առաջինն ծնանի զանդգնութի . և երկրորդն՝ զյուսահատութի ։ Առաջինն՝ բազում անգամ ասէ զչարն բարի , և երկրորդն՝ զբարին չար ։

Դարձեալ՝ նախկինն փրկէ զդատապարտելին . իսկ երկրորդն՝ դատապարտէ զփրկելին ։ Եւ ծանի՛ր՝ զի այլ է խիղճմտաց , և այլ է երկիւղ խղճի մտացն ։

Խիղճմտացն է՝ յորժամ որ վախճանաբար ենթադատէ զիր ինչ առնելի , կամ փախչելի . և առնելն ընդ-
Ա դէմ այսպիսի խղճի մտացն՝ նա և թէ լինիցի սխալական՝ է՛ մեղք ։ Իսկ երկիւղ խղճի մտացն, ոչ է 'ի սահմանականէ վճռոյ բանին , որով դատէ զինքն պարտաւորիլ առ ինչ , այլ է դեդերումն 'ի մէջ տարակուսանացն , ոչ գիտելով թէ ո՞րն իցէ բարի . և կամ ո՞ր ուրուք առնել պարտական. և առնելն ընդդէմ այսպիսի երկիւղի խղճի մտաց՝ ոչ միշտ է մեղք . յորժամ դնէ 'ի միջի , ոչ զանցանել , զոր ինչ գիտիցէ գոլ հաճոյ ա͞ծային կամաց ։ Նաև գիտելի է զխղճէ մտացն , զի երբեմն հայի յանցեալն՝ երբեմն 'ի ներկայն , և երբեմն յապառնին ։ Քանզի խիղճ մտաց ամբաստանէ զանցեալն , տրտնջէ զներկայէն , և նախազգուշանայ յապառնոյն ։ Արդ հայի յանցեալն , յորժամ յանդիմանէ զմարդն՝ վ͞ն գործեցեալ չարին , և զանցարարեալ բարւոյն ։ Եւ հայի 'ի ներկայն , յորժամ ընդդիմանայ այնոցիկ , զորս ենթադատէ ոչ առնել ։ Նաև հայի 'ի յապառնին , յորժամ ուսուցանէ կամ խթէ զմարդն՝ առնել զայնս , և կամ խորշիլ , առորս խիղճմտաց դատէ զմեզ պարտաւորս գոլ ։ Եւ արդ՝ եթէ խիղճմտաց տարածէ զինքն ա͞ռ սա-

ցան ,

ցանէ , առ արարեալսն , և առ առնելիսն ․ կարէ հաւաքել
'ի սահմանէ խղճի մտացն , որք են այսոքիկ ։
Քանզի՝ ասէ Դամասկացին՝ խիղճ մտացն՝ է՛ օրէն
իմացմանս մերոյ ։ Եւ Բարսեղ ասէ՝ խղճմտացն է՛ Բ.
բնական դատողականաց ։ Իսկ այլք վարդապետք
սահմանեն այսպէս՝ խղճմտացն է՛ ձայնաչումն իւրոյ
ինքեան ։ Դարձեալ՝ խիղճ մտաց՝ է՛ ունակութիւն հոգւոյ՝
առնելեաց ․ կամ ոչ առնելեաց ։ Դարձեալ
խղճմտացն՝ է՛ ունակութիւն մտաց՝ ենթադատական
բարւոյն և չարին ։ Դարձեալ խղճմտացն է՛ դիւրահաւատութիւն
դիտաւորութեան, հաստատեցեալ ընտրութեամբ
մտաց՝ առ 'ի առնել զիր ինչ , կամ ո՛չ առնել ։
Արդ՝ սխալումն խղճմտաց պատճառի ութն կերպիւ ։
Նախ 'ի տգիտութենէ ․ յորժամ ո՛չ գիտէ ոք , թէ ո՞րն
է ընտրելի և ո՞րն է խորշելի ․ և այսպիսի սխալանացս՝
ասէ 'ի Մնացորդացն , յորժամ անգիտանամք 2. Մնաց.
թէ զի՞նչ պարտիցէ առնել , այս միայն մնայ մեզ ․ զի 20. 12.
զաչս մեր ուղղեսցուք առ քեզ ։ Երկրորդ՝ 'ի հեղգութենէ՝
յորժամ ոք զանցառնէ մաքրել զխղճմտաց ․
և թէ ինքն ո՛չ գիտէ ենթադատել , սակայն հեղգանայցէ
խնդրել յայլոց ։ Երրորդ՝ 'ի յանձնապաստանութենէ՝
յորժամ ոք ո՛չ խոնարհեցուցանիցէ զիմացումն
իւր , հաւանիլ լաւագունից , և իմաստնագունից քան
զինքն ․ ընդդէմ նոցա ասէ առաքեալն՝ գերեմ զամ 2. Կորն.
միտս 'ի հնազանդութիւն Քրիստոսի , այսինքն , իւրաքանչիւրոք 10. 5.
'ի հաւատալիսն առնել պարտի հաւատալ
հաւատոյն՝ քան ինքեան , և 'ի յառնելիսն՝ առնել
այլոց՝ քան ինքեան ։ Չորրորդ՝ 'ի յինքնահաճութենէ ,
որով ոք հետևի խեռութեան մտաց իւրոց ․ ո՛չ լինիլ
հաւանեցող այլոց , և հետևիլ հասարակ ձայնակարհաց
բարեաց ։ Զայսպիսեացս ասէ Թուոց , ժե ․ զի
բորբոքեցաւ հուր 'ի Տեառնէ , և եկեր զառաջին մասն Թուոց
բանակին ։ Հինգերորդ՝ 'ի յանհարդ բաղձանացն՝ որ 15. 35.
բազում անգամ ձգտեցուցանէ զխղճմտացն 'ի յայն՝
յոր ինչ յօժարի միտքն ․ և այնպէս արտաքսէ զնա 'ի
յուղղութենէ իւրմէ , որպէս ասէ Սենեկայ , ուր դատաստան
կորնչի՝ մինչ իրն առ ախորժակն անցանի ։
Վեցերորդ՝ 'ի յերկչոտութենէ՝ որով երկնչիցի ոք ուր
ո՛չ իցէ երկիւղ՝ ըստ ուղիղ դատաստանի բանին , ընդդէմ
որոց ասէ Եսայի՝ ասացէք չերկչոտոն՝ զօրացարուք Եսայ.
։ Եօթներորդ՝ 'ի մոլար սարսափմանց , յորժամ 35. 4.
ոք կարծէ զինքն եղեալ 'ի մէջ երկուց մեղաց ,

յորոց 'ի միոյն խոտորիլ անհնարէ ։ Այլ գիտելի է՝ զի տարակուսանքն այն, ամենևին ոչ ի՞նչ է, սակայն կարէ ոք տարակուսիլ ըստ իւրոց ինչ, այսինքն, ըստ մոլար խղճմտացն ; որով ընդ բացայայտնելն լինիցի ազատ ։ Ութերորդ՝ 'ի խոնարհութենէ և 'ի մաքրութենէ սրտին, որպէս ասէ Գրիգորիոս, բարի մնաց է՝ ճանաչել անդ անգամս, ուր անցանք ոչ իցէ ։
Արդ՝ սխալումն ըստ առաջնոց եօթեանց եղանակացն առեալ՝ է՝ յանդիմանելի ․ իսկ ութերորդ եղանակին՝ է՝ գովելի ․ նա և ոչ պարտի ասիլ սխալումն, այլ խոնարհ ճանաչումն սրտակատութեան իւրոյ, բայց միայն զի ոչ լինիցի կարի յոյժ ։

Յաղագս ներգործութեանց հոգւոյն ։ Գլ. ԾԳ.

Ոգին ըստ զանազան զօրութեանցն ունի զբազում և զզանազան ներգործութիւնս ։ Քանզի նա ճանաչէ զճշմարիտն տեսականն իմացականաւն, և զբաղձալ բարւոյն գործնական իմացականաւն ։ Տարորոշէ շարաբերելով 'ի մէջ չարին, և բարւոյն, ճշմարտին և ստոյն, բանականաւն ։

Ա. Ենթադատէ՝ համանդամայն և ընտրէ՝ անձնիշխանականաւն ։ Հաճանի կամօքն ․ դատանէ զմեղսն՝ խելամտութեամբն ․ ընդոստուցանէ 'ի բարին՝ տրամաջականաւն ։ Այլ և հոգին ունի կարգ 'ի գործս իւր ․ քանզի զոր զգայութիւն ընդունի՝ երևակայութիւն մատուցանէ ․ ճանաչումն կազմէ ․ խելամտութիւն որոնէ ․ բանն ենթադատէ ․ յիշողականն պահէ ․ իմացականն ըմբռնէ, և ածէ 'ի խոկումն ։ Դարձեալ հոգին ճանաչէ զիրս ներկայս՝ զգայութեամբ ․ իսկ զբացեայս՝ երևակայութեամբ ․ իսկ զաննիւթականսն ինքեամբ, և զինքն իսկ անդրադարձմամբն իւր 'ի վերայ ինքեան ։
Ունի և զայլս ներգործութիւնս հոգին, որ վերաբերի առ մարմինն, որպէս է՝ աճիլ բնական զօրութեամբն ․ զգալ՝ շնչական զօրութեամբն ․ և կենդանացուցանել՝ զօրութեամբ կենդանականաւ ․ յորոց ամենեցունց 'ի վերնագոյնդ ասացաք ։

Յաղագս քանակութեան հոգւոյն ։ ԳԼ. ԾԳ.

ՎԱն զի հոգին՝ է՛ պարզ, ոչ ունի զքանակութիւն տարածականն, այլ կարողական. ուստի յայտ է, զի հոգին ըստ էութեան՝ բոլորն է 'ի բոլոր մարմինն, և բոլորն 'ի յիւրաքանչիւր մասն մարմնոյն, ոպ̄ ասէ օգոստինոս, 'ի Զ. գիրս երրորդութեն, որոյ պատճառն է, քանզի հոգին է դոյացական տեսակ և կատարումն բոլորին ։ Նմին իրի պարտ է՝ զի լինիցի 'ի բոլորն, և յիւրաքանչիւր մասն ։ Ուստի ընդ հեռանալ հոգւոյն, ոչ մնայ կենդանի, և ոչ մարդ. նա և ոչ ասի, եթէ ոչ հոմանունաբար. որպէս աչք՝ և ձեռք, ոչ ասին յատուկ աչք և ձեռք, այլ հոմանունակի. քանզի ոչ ոք մասն ունի զյատուկ գործն՝ ընդ հեռանալ հոգւոյն, ուստի եթէ մնայ նոյն աչքն՝ և ձեռքն, մնայ և յատուկ գործն նորա ։ Այլ ոմանք ասացին՝ թէ հոգին ըստ էութեն ոչ է 'ի բոլոր մարմինն, այլ 'ի բացորոշեալ մասն ինչ մարմնոյն, և անտի ազդէ զզօրութն 'ի բոլոր մարմինն ։ Եւ առաջդրեն այսպիսի ինչ օրինակ՝ ասելով՝ թէ որպէս սարդն նստեալ 'ի մէջ ոստայնին իւրոյ՝ զգայ զիւրաքանչիւր շարժումն որ 'ի յոստայնն, նոյնպէս հոգին կալով 'ի մէջ սրտին, զգացուցանէ և շարժէ զմարմինն բոլոր՝ ինքեան միաւորեալ ։ Այլ սակայն առաջինն է ճշմարիտ, և ոչ է պատկանաւոր՝ օրինակ սարդին. զի սարդն ոչ է տեսակ ոստայնին, այլ շարժօղ արտաքին ։ Իսկ հոգին՝ է դոյացական տեսակ մարմնոյն. վն պիտոյ է զի լինիցի 'ի բոլորն այն, որոյ է տեսակ. և ըստ այսմ է բոլորն 'ի բոլորն, և բոլորն՝ է յիւրաքանչիւր մասն՝ ըստ էութեն, թէպէտ ոչ ըստ իւրաքանչիւր զօրութե ։ Եւ թէպէտ հոգին է պարզ, սակայն զանազանի 'ի նմա, որ է՝ և որով է՝ ոպ̄ և 'ի հրեշտակս, և յամ̃ ստեղծուածս, ոպ̄ ասէ պօէցիոս ։

Յաղագս անմահութեան հոգւոյն ։ Գլ. ԾԵ.

Լինել անմահ հոգւոյն, ցուցանի վկայութեամբ գրոց, և բանականութեամբ ։
իմաստ. 3. 1. Քանզի ասէ իմաստութիւն. հոգիք արդարոց 'ի ձեռին այ են, և զկնի ասէ,
յայտ. 9. 6. յոյս նոցա լի՛ է անմահութեամբ ։ Եւ 'ի տեսիլն ասէ՝ յայնժամ խնդրեսցեն մարդիկք զմահ՝ և մի՛ գտցեն ։ Դարձեալ գրիգոր խօսի զդժոխայնոց, անդ՝ մահն միշտ կենդանանայ, վախճանն միշտ սկսանի, և պակասումն չգիտէ պակասիլ ։ Դարձեալ յոհաննու. Ո՛ր ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, կեցցէ յաւիտեան ։
յոհ. 6. 33.

Իսկ բանականութեամբ, այսպէս՝ ամ՝ ապականութիւն պատճառի 'ի ներհակութենէ. այլ արդ ոչ ինչ է որ ներհակ կայցէ գոյացութեան հոգւոյն ։ Դարձեալ՝ հոգին է ընդունակ երանութեանն. իսկ ած՝ (որպէս ասէ օգոստինոս՝) ըստ մեծագոյն առատութեան իւրոյ յետ զամ ստեղծուածս, ըստ չափու ընդունակութեան իւրեանց՝ առատապէս, պիտոյ է զի երանեսցուսցէ զհոգին. իսկ առ երանութիւն՝ պահանջի կեանք յաւիտենական, և փառք մշտնջենական ։ Դարձեալ եթէ հոգին մեռանէր ընդ մարմնոյն, մարդն ո՛չ երկնչէր 'ի մեռանելն. որպ ո՛չ երկնչին շունք և գայլք՝ ուրեմն վերաթողանի բնն կեցող՝ յետ մահուան մարդոյն, որոյ վս երկուցեալ լինի, և այնէ հոգին ։

Դարձեալ՝ վասն զի ած՝ է՛ արդար՝ ունեսցին բարիքն զվարձս, և չարքն զպատիժս. այլ այս ո՛չ լինի 'ի կեանս յայս, և այն զի չարքն ունին զյաջողումն, ըստ
յոբ. 21. 13. այնմ որ ասէ յոբ, անցուցանեն զկեանս իւրեանց բարութեամբ. այլ բարիքն կրեն զնեղութիւս. ապա ուրեմն լիցի այլ ուր հատուցումն նոցին, և այս ո՛չ կարէ լինել. եթէ ոչ լիցի հոգին անմահ ։ Զի ասէ օգոստինոս, անդրանցանեն ներկայականք փորձութիւք, և յաջողութիւք՝ ընդ ժամանակին. բայց փոփոխեցե-
ծննդ. 48. 14. լով ձեռամբ՝ ըստ բարուցն յակոբայ, վերադառնոյցեն 'ի նոյն՝ Թարց վախճանի մնացական, որպէս զի աստ փորձեցեալք, և տանջեցեալք՝ խնդասցեն անդ՝ անվախճան ։ Իսկ՛ հրճուեցեալք, և փարթամացեալք՝ կրեսցեն զպատիժս յաւիտենականս ։ Ուստի ասէ

յակո֊

յակոբոս , ամ՛ ուրախութեան արժանի համարեսջիք եղբարք , յորժամ 'ի պէսպէս փորձութիւնս անկանիջիք : Յակոբ. 1.2. 'Ի վերայ որոյ ասէ բէթա · մի՛ սրտմտիք ե՛ղբարք՝ եթէ չարք ծաղկեսցին յաշխարհի , և դուք տանջիցիք , զի քրիստոնէականի արժանապատուութեան ոչ է արժան՝ ժամանակաւորօք բարձրանալ , այլ մանաւանդ նեղիլ : Չարք զոչ ինչ ունին յերկինս , և դուք զոչ ինչ յերկրի · այլ յուսով բարւոյն այնորիկ ու որ գնիք, որ ինչ հանդերձեալ ձեզ 'ի ճանապարհէ աստի կենաց՝ ուրախանալ պարտիք : Իսկ Ջերոնիմոս ասէ՝ դժուարին իմն է և մանաւանդ անկարելի , որպէս զի ոք զմայլեսցի 'ի բարեաց ներկայից՝ համանգամայն և ապագայից , որպէս զի աստ՝ յղփացուսցէ զորովայնն , և անդ զմիտսն . Իբրու թէ 'ի հեշտութեանց աստ հեշտութիւնս անցանիցէ , որով 'ի յերկրի , և 'ի յերկինս՝ փառաւոր ցուցանիցի : Ա Դարձեալ՝ արար ած զհոգին առ 'ի պատկեր և 'ի նմանութիւն իւր , այլ ած է անմահ , ազատ ուրեմն և հոգին : Ծննդ. 1.26.

•

Յաղագս անձնիշխանութեան : ԳԼ. ԾՁ:

Անձնիշխանութիւն որպէս ասէ օգոստինոս՝ է՛ իշխանութիւն բանականին և կամացն, որով ընտրի բարին՝ մերձ կալով շնորհացն · իսկ չարն՝ ընդ պակասել շնորհացն : 'Ի սահմանս այս գտնի համանգամայն՝ բանական , և կամք · բանականն գտնի իբր խորհրդական , և կամքն՝ որպ հրամայօղ : Քանզի բանականութիւն ասէ զիրն բարի գոլ՝ կամ չար · իսկ կամքն ասէ՝ լիցի այս՝ կամ այն : Եւ ծանի՛ր՝ զի ազատութիւն անձնիշխանութեանն՝ է՛ ազատ 'ի բռնական բռնութենէ , այլ ոչ 'ի յառնողականէ : Զի ոչ ի՛նչ արտաքին բռնութիւն՝ է՛ առնողական բռնական պատճառ, զի լինիցի ինչ · թէպէտ երբեմն լինիցի առնող · որպէս յայտ է 'ի բազումս, որք բռնադատեցան չարչարանօք ուրանալ զՔրիստոս · քանզի այնպիսի բռնադատեալ կամքն է՛ կամք , որպէս ասէ օգոստինոս : Իսկ յորժամ մեղաւորն բարւոյ շնորհօք , այնժամ ոչ ազատականի ազատութիւն անձնիշխանութեան, զի կոյր՝ կամ կաղ՝ անկեալ 'ի խորխորատ՝ յորժամ հանեալ լինի , ո՛չ լինի նմա յակամայ :

Այլ ազատութի անձնիշխանութեն՝ երեքկին է, այսինքն, 'ի հարկէ, 'ի մեղաց՝ 'ի թշուառութենէ :

Առաջին ազատութին է՝ բնութեանն . երկրորդն՝ շնորհաց . երրորդն՝ փառաց : Նախկինն է՝ բարեաց և չարաց . երկրորդն՝ միայն բարեաց . երրորդն՝ թագաւորելոցն 'ի յերկինս : Յայսցանէ յայտ է՝ զի ազատութի չարաց՝ է՝ կամիլն մեղանչել . նա և կարել մեղանչել . ազատութի բարեացն՝ է՝ կարել մեղանչել, և ոչ կամիլ . իսկ ազատութի 'ի դրախտին էր՝ կարել ոչ մեղանչել . նա և կարել ոչ վրդովել . բայց ազատութի 'ի վերին գաւառն՝ է՝ չկամիլ՝ և չկարել մեղանչել, նաև չկարել վրդովել : Ուրեմն յայտ է՝ զի ազատագոյն է անձնիշխանութին 'ի բարիս՝ քան 'ի չարիսն . զի 'ի բարիսն է՝ միայն ծառայութի թշուառութե . իսկ 'ի չարիսն՝ ծառայութի թշուառութեան և մեղաց, այլ 'ի վերին գաւառն՝ լիցի բոլորովին ազատութի . յորժամ խափանեսցի ամ̃ այսպիսի ծառայութի : Եւ գիտելի է՝ զի 'ի յա̃ծ, և 'ի հրեշտակս և յերանելի հոգիսն է՝ անձնիշխանութի . թէպէտ ոչ կարեն առնել զչար, զի ընտրեն զբարին . և խոտորին 'ի չարէն . ոչ 'ի տկարութենէ, այլ 'ի յազատ կամաց : Նմանապէս ասելի է՝ զսատանայէ, թէ ունի զանձնիշխանութիւն, սակայն միշտ խոտէ զբարին, և ընտրէ զչարին . այլ զայս ոչ առնէ 'ի նա բռնաւոր բռնադատութիւն, այլ կամաւոր խոտորութին :

Եւ ծանիր՝ զի անձնիշխանութին 'ի յոմանս ունի զինքն անզանազանապէս՝ առ բարին, և առ չարն, ոպ̃ 'ի նախկին ծնողսն յառաջ քան զմեղանչելն . և յոմանս՝ առաւել ունի զինքն առ չարն՝ քան առ բարին, ոպ̃ 'ի վերջաւորին ծնեալսն անաւազանսն . իսկ յոմանս՝ ունի առաւել առ բարին՝ քան առ չարն, ոպ̃
Ա 'ի սրբեալսն յորովայնէ . այլ 'ի յոմանս՝ 'ի հարկէ ունի
զինքն առ չարն, որպէս 'ի յանհաւատսն, և [illegible]
Բ վերջաւորին ծնեալսն . բայց 'ի յոմանս՝ 'ի հարկէ ունի
զինքն առ բարին, որպէս 'ի հաստատեալսն, որպէս էր երանելի կոյսն յետ յղութեն որդւոյն :

Յաղագս բնութեան մարդկային մարմնոյ ։
ԳԼ. ԾԷ.

Մարդն յունարէն կոչի անթրօփօս , այսինքն , ծառ անդրադարձեալ ․ քանզի գլուխն հերաւքն՝ ունի զինքն ըստ օրինակի արմատոյ ․ իսկ բազուկքն բորձօքն հանդերձ , իբրեւ ոստս ։ Նա եւ միայն մարդն է երկայն եւ լայն մարմնով , եւ ուղորդ ըստ մարմնոյն ․ եւ պատճառ այսմ կրկին է , այսինքն , բնական , եւ բարոյական ։ Բնական է՝ զի 'ի յայլ կենդանիսն առաւելու 'ի գլուխն՝ վայրահակօղ հողային նիւթն ․ եւ պակասի ջերմութիւնն վերնատարածօղ ․ վս որոյ եւ վայրահակք ․ որ ոչ է այսպէս 'ի մարդն ։ Իսկ բարոյականն է , զի ուղղութիւն մարդկային հասակին վկայեսցէ ուղղութեան մտացն , որ բաղձայ դիմել 'ի վեր 'ի յերկնայինսն ։ Քանզի պատահմունք հոգւոյն փոփոխեն զմարմինն ․ զի բաղձալի երեւակայացուցեալ կերպն՝ շարժէ զնա , որպէս եւ տրտմալին ։

Ուստի ասէ աւիկէննաս՝ առաւել տրտմութիւն ․ եւ որ երկնչի 'ի փորձութենէ՝ երբեմն լցի դողի ․ նոյնպէս եւ անդրադարձաբար ․ զի կիրք մարմնոյն հեղուն 'ի հոգին զշփոթումն , որպէս յայտ է 'ի քունն ։ Դարձեալ մասունք մարդկային մարմնոյս , ունին զնմանութիւն բոլոր աշխարհիս ․ զի այնքան է երկայնութիւն 'ի մէջ ծայրից երկուց երկայնագոյն մատանց ձեռացն՝ որ քան է 'ի գագաթէ գլխոյն մինչեւ 'ի ներքանս ոտիցն ․ այսպէս այնքան է տարածութիւն 'ի բեւեռէ երկնից մինչեւ 'ի միւս բեւեռն , որ քան յարեւելից յարեւմուտս ։ Արդ՝ մարդկային մարմինն է՝ բաղադրեալ 'ի չորից տարերացդ , այլ հողն երեւի յոսկերս՝ եւ 'ի միսն ․ իսկ ջուրն 'ի հիւթս , այսինքն , 'ի յարիւն, 'ի պաղլամն , 'ի սեւն մաղձն ․ եւ 'ի խարտեաշն ։

Իսկ օդն՝ պարունակի 'ի թոքն ․ եւ այս յայտ է այնու , զի միշտ շարժի ․ զի թոքնէ հովահար սրտին , զի մի՛ լուծանիցի 'ի կարի ջերմութենէ ։ Այլ հուրն պարունակի 'ի սիրտն ․ նմին իրի ստորին կողմնէ լայն , եւ վերին սուր , որ ունի զձեւ հրոյ ։

Իսկ անդամք մարմնոյն՝ են երեքկին ․ զի ոմանք են

արմատականք , որպէս լեարդն՝ սիրտն ուղեղն , և
Ծննդականքն . առաջին երեքեանն են առ ՚ի գոյ անհատին՝ ՚ի յորս (որպէս ՚ի վերասացաւ) հոգին
բնական , կենդանական , և շնչականն՝ ունին զաթոռ իւրեանց . իսկ սերմական անդամն է՝ ՚ի պահպանութիւն
տեսակին : Են և այլք անդամք սպասաւորք , որպէս
երակքն՝ շնչերակքն և ջիլքն որով տարածին երեքկին
հոգիքն այնք , զորոց յառաջագոյն ասացաք :
Են և այլք անդամք գործաւորականք , ոպ՟ ձեռք՝
ոտք՝ և այսպիսիք : Նաև են անդամքն այնպէս արմատաբար
Ա կարգեալ, զի փոխաբերաբար սպասաւորեսցեն
իրերաց : Քանզի վերնագոյնքն կառավարեն
զստորնագոյնսն , որպէս յայտ է ՚ի յաչսն . և ստորնագոյնքն
ամբառնան ՚ի վեր զվերնագոյնսն , ոպ՟ յայտ է
՚ի յոտսն , և ՚ի սրունկսն . որք բառնան զբոլոր ծանրութիւն
մարմնոյն : Են և միջակք՝ որք հաղորդեն
երկոցունց զօժանդակութիւն , և պատրաստեն զհարկաւորսն
, որպէս են ձեռք . և բազուկքն :

Դարձեալ՝ ամ՟ անդամունքն՝ այնպէս են կարգեալք՝
1. Կոր. 12. 26. զի լինիցին ցաւակիցք միմեանց: Զի ընդ ցաւիլ միոյ ՚ի
յանդամոցն, ցաւին ամ՟քն վ՟ս կապակցելոյն ընդ իրերաց:
Դարձեալ՝ այնպէս են կարգեալք՝ զի ՚ի վտանգս՝ մի
անդամն դնէ զինքն վասն միւսոյն . քանզի յաղագս
զերծուցանելոյ զգլուխն, կան ընդդէմ այլք անդամքն.
և յորժամ մի անդամն պակասի , այլք լնուն զպակասութիւն
նորին , որպէս տեսանեմք , զի որք զոտս ո՛չ
ունին՝ ձեռօք ընթանան : Դարձեալ՝ մեծ ցաւ միոյ
անդամոյն՝ առնէ ո՛չ զգալ զփոքր ցաւ միւսոյ անդամոյն
: Դարձեալ անդամքն՝ որոց շարժումն է ՚ի ներքոյ
Բ անձնիշխանականին , այնպէս պահեն զյօժարականն
հնազանդութիւն , մինչ զի՝ ՚ի մէջ հրամանի կամացն՝
և կատարման գործոյն, իբրու ո՛չ ինչ յամեցումն
երևիցի . և զայս տեսանեմք պահել աչացն՝ ՚ի տեսանելն
, լեզուին՝ ՚ի խօսելն . բերանոյն՝ ՚ի յուտելն ;
ձեռացն՝ ՚ի գործելն . նոյնպէս և այլք այնպիսիք :

Յաղագս պատկերացուցութեան ։ Գլ. ԾԸ.

Արդ՝ զանազանք են յօրինուածք մարմնոյն ըստ պատկերացուցութեան արհեստին․ որով ցուցանեն ՚ի մարդն զզանազան ներգործութիւնս, և զբարս․ ոչ թէ նշանքս այսքին դնեն զհարկաւորութիւնս բարուց մարդկան, այլ ցուցանեն զձգտումն բնութեան, որ սակայն կարէ յետս ընկրկել սանձիւ բանականին ։ Այլ հետևեսցուք յայսմ ձեռնարկութեան, մեծամեծաց փիլիսոփայից, արարողաց այսմ արհեստի, այսինքն, արիստոտելի, ալիչենայ, կոսդանդայ, փիլիմոնի, լօքսիոյ, և փալեմոնի․ սկսանելով ՚ի խառնուածոյն ։

Արդ՝ զսեաւ մաղձոտսն ասեմք գոլ տխուրս և ծանունս․ և զարիւնայինսն ներհակ այսմ տեսանեմք ։

Խարտեաշ մաղձոտքն, դիւրաշարժք են ՚ի կռիւս․ և պաղլամոտքն ծոյլք, և քնասէրք ։ Իսկ պատկերացուցութի սեռին է՝ զի ոգի արուին է՝ սատարիկ, փոյթ, և քաջասիրտ․ իսկ իգին՝ ողորմած, և երկչոտ ։

Հերք կակուղ և նօսր, ցուցանեն զքթամիտսն ։

Հերք գանուր՝ նշանակեն զերկչոտ և զշահացանկացող ոգին ։ Հերք առ կախեալք ընդ ճակատն՝ նշանակեն զգազանաբարոյ ոգին ։ Դարձեալ՝ հերք շէկ սպիտակ, և ստուար՝ նշանակեն զոչ խելամտութիւն ։

Իսկ հերք կիսասեաւ, և ոչ յոյժ բարակ, ցուցանեն զբարեբարոյսն, և զբարւոք կազմեալս մարմնոյն․ Գլուխն կարի խիտ մեծ՝ նշանակէ զդեչն ։

Իսկ գլուխն կլոր, և կարճ, առանց իմաստութեան, և յիշողականի ։ Գլուխն՝ որ իբր տափարակ է և թեքեալ ՚ի վերուստ՝ նշանակէ՝ յանդգնութեան, և գոփութեան ։ Գլուխն՝ որ իբր երկայն և կակուղ, նշանակէ զզգուշաւորն, և զանօրինօղն ։

Կարի խիտ նեղաճակատն՝ արտայայտ է զանխելամուտն, և զշատակուլն․ իսկ լայնն՝ զփոքրախելսն․ և բոլորն՝ զբարկութիւն․ և փոսն՝ զամօթխածն, և զոչ ընդունողն զազրութեան ։ Իսկ քառակուսին, և չափաւոր մեծն՝ զիմաստունն, և զմեծահոգին ։

Կամարայօնն թէ հասցէ մինչև յունքունսն, նշանակէ զբռամիտն, և զուսումնասէրն ՚ի համայնս գործս իւր ։

Իսկ եթէ 'ի նոյն տեղւոջն շարակցեսցին , ցուցանէ զոխսուրն , և զսակաւ իմաստն ։ Իսկ եթէ կամարաձևութիւն՝ ձկտեսցի դէպ 'ի քունսն, նշանակէ զհեղգն ։ Երկայնամազօնն և թանձր՝ նշանակէ զգազանաբարոյն , և զմեծախորհուրդն ։

Աչքն 'ի յորս շիթք պայծառութե լուսաւորէ ցուցանէ զհամեստաբարոյն ։ Յորժամ զանազանակս շարժեսցին աչք՝ ոչ զի երբեմն ընթասցին , և երբեմն դադարեսցին , նշանակէ չարիս շրջագայել 'ի միտսն՝ այլ տակաւին ոչ եկեալ 'ի կատարումն ։

Խաժակն սակայն փայլուն , բացայայտէ զհամարձակն , և զհնկեալն 'ի չարութե , Մեծ աչքն դողացող և մթագոյն , նշանակէ զգինարբուսն , և զբղջախոհսն ։ Ամենևին թխակն՝ նշանակէ զվատուժն , և զտկարն , և զանզօր հոգին , և զշահախնդիրն ։

Այլ յորժամ երևին անդ շիթք՝ սակաւ մի մեղուշագոյն նշանակեն զարդարամիտն՝ զքաջն, և զուշիմն ։ Իսկ ուր 'ի թուխ աչքն՝ լինին շիթք յոյժ կարմիր , և ոմանք յայնցանէ երևին իբր քառակուսի , ոմանք դեղին , և ոմանք խաժք , և շուրջ զբբովք շրջին են արիւնաշաղախք , և են մեծ աչք ․ և փայլողութիւն բբաց շարժի՝ զի շարժիցին թարթիչք , այնպիսի աչսն ասեմ, նշանակեն զհոգին , որ գերազանցէ քան զամ բարս գազանաց ․ քանզի որ ինչ կարէ խորհիլ զչարեաց , այնպիսի աչացնէ առնել ։ Կարի խիստ կոկոն աչքն՝ կարմրագոյն , և փոքրիկ , ցուցանեն զանսանձ լեզուն , և զանհաստատ միտսն ։ Աչք դժուարահայեաց , եթէ լիցի դիջանթոր՝ արտայայտէ զճշմարտախօսն , և 'ի յառնելման փոյթ և անօրինիչ ։

Աչք որ բազում անգամ բանի և խփի՝ բացայայտէ զերկչոտն՝ և զթոյլն ։ Կարի խիստ բաց աչքն՝ նշանակեն զյիմարն և զանամօթն ․ և յոյժ նեղակն՝ նշանակէ զանկայունն 'ի յամ գործս իւր ։

Մեծականջն , և վերամբարձ՝ նշանակէ զդէշութին , զչատախօսութին , և զանխոհեմութին ․ այլ առաւել փոքրիկն է՝ նշանակ խորամանկութե ։ Ունկն առաւել բոլորակաձև՝ արտայայտէ զանխելամտութն ։

Ունկն երկայն և նեղ՝ նշանակէ զնախանձոտն ։

Ունկն ընկողմնեալ 'ի վերայ գլխոյն , նշանակէ զծոյլն ։ Այտքն ստուարք՝ նշանակեն զերկչոտն , և զքնափ․ և անօսրն՝ զխորամանկն ։ Այտքն բոլորակք՝ ցուցանեն զնախանձոտն ։

Բայց ունչն՝ նշանակէ զզուարթն, և զուժեղն․ իսկ երկայն ըռունգն՝ նշանակէ զդիւրաշարժութիւն, և զթեթևամտութիւն ։ Իսկ կողմն ըռնգաց՝ որ մերձ 'ի Ճակատն՝ ոչ բարձր և ոչ ցած, այլ հաւասարագիծ իջեալ, նշանակէ՝ արիութիւն, քաջութիւն, և խոհեմութիւն, (Փոքր ըռնգունքն՝ քան զչափն՝ արտայայտեն զդողն ։

Այտ երեսա՝ մինչ է լի և ստուար՝ նշանակէ զամբերղն, և զխաղալիկասէրն ։ Անկեալ և վայրակախ երեսն՝ նշանակէ զնենգաւորն, և զպատրողն ։

Շրթունքն բարակ՝ այլ 'ի վեր կոյս սակաւ ինչ ուռեալ՝ ընդ նմին և բերանն մեծ՝ նշանակէ զուժեղն, և զմեծամիտն ։ Սակայն բարակաշրթութիւն ունելով փոքր զբերանն՝ ցուցանէ զթուլամիտն, և զչարաճճիկն ։ Շրթունք տարածեալք 'ի բերանոյն, և սակաւ մի կախեալք, ցուցանեն զտարտամն․ քանզի յէշս և 'ի ձիս ծերացելոց՝ գտանին նշանքս այսոքիկ ։

Բերան փոքր՝ պատկանի այնքան երեսաց կանացիկանաց, որքան արանց կանացացելոց ։

Բերան 'ի վեր քան զչափն լայնաձիգ՝ նշանակէ զբազմակերութիւն․ զոչ հեզն, և զանզգութիւն․ զի այսպիսեաց բերանոց յարմարի արարողութիւն ծովային վիշապաց ։

Կզակն երկայն և սուր՝ ցուցանէ զսակաւ բարկացողն, և զսակաւախօսուն ։ Փոքր բերան և կզակն կարճ, նշանակէ զոչ հեզն՝ և զնախանձոտն․ և զայսպիսիս նմանեցուցանէ սղատոտն օձից ։ Օգտակարագոյն է կզակն չափաւոր՝ և կերպիւ ինչ իբր քառակուսին ։ Կզակն եթէ երկայն՝ և կախ տարածիցի, նշանակէ զսովորեալն 'ի նենգութիւն ։

Ձայն նման ձայնից ոչխարաց, և այծեաց՝ է նշան յիմարութեան ։ Որք ըստ նմանութեան հաւուց արտաբերեն զձայն, դիւրաւ լինին թեթևամիտք ։

Ձայն բարակ, և իբր սգաւորի՝ ցուցանեն զխուրն, և զկարծոտն ։ Որոց ձայնն ընթանայ ընդ ըռնգունսն մինչ զի հնչեսցէ ընդ ունչսն, ստաբանք են, չարակամք և չարախնդացք ։

Վիզ՝ երկայն և բարակ՝ նշանակէ զչարախորհուրդսն ։ Բոլորակիզն՝ համառօտ զզօրութիւն հոգւոյն, և զբարեյարմարութիւն մարմնոյն ։ Վիզ կարճ, նշանակէ զհամարձակն ։ Վիզ՝ վերամբարձ՝ նշանակէ զանդուգն, և զապստամբն ։

Լանջքն՝ մսակոյտ՝ նշանակէ զտգէտն՝ և զանխելամտուն : Լանջքն՝ որ երկայնէ քան զխորն՝ նշանակէ զխոհեմն : Լանջքն մազածածուկ հանդերձ փորիւն՝ ցուցանէ զանկայունն , զանկրօնն , և զանգութն : Իսկ եթէ լանջն միայն է մազեղ՝ նշանակէ զարուտն : Ուսքն բարակք՝ և ծայրքն վերամբարձք , զդարանակալն ցուցանէ :

Բազուկքն՝ այնքան երկայն , որ ընդ կանգնելն երկայնագոյն մատամբն հասանիցի 'ի ծունկն , թէ և գուցէ ըստ չափոյ չորից մատանցն պակասիցի , նշանակէ զուժեղն՝ և զբարեյարմարն : Իսկ որ իջանէ մինչև 'ի բարձքն՝ ցուցանէ զչարակամն և զչարախնդացն :

Կարճ և փոքր ձեռքն՝ նշանակէ զուժեղն , և զհնարաւորն : Մատնարաձեռն , եթէ քան զչափն կարճ ունիցի զմատունսն՝ նշանակէ զնենգաւորն՝ զդարանակալն և զգողն: Ձեռք թիւրք , և բարակք՝ նշանակեն զշատախօսն , և զշատակերն :

Եղնկունքն՝ սպիտակ՝ տափարակ՝ և կակուղ՝ նօսր՝ և կարմրագոյն , և կարի խիտ փայլուն՝ նշանակեն զուշիմութիւն : Եղունկն կոր , և դար , նշանակէ զանպարկեշտ՝ և զյափշտակօղն : Եղունկն յոյժ կարճ , նշանակէ զչարակամն :

Մատունքն մածեալ և վայրակոր՝ նշանակեն զագահն և զչարաբարոյս : Մատունք փոքրիկ , և բարակ , նշանակեն զյիմարն : Մատունք փոքր և ստուար , զնախանձոտն և զհամարձակն :

Կշտերն՝ բարակ և նեղ՝ զերկչոտութիւն յայտնէ : Կշտերն՝ մսալից և կարծր՝ զանխելամտուն ցուցանէ . զի այսպիսիքս՝ ըստ պղատոնի , առ գործս վերաբերին :

Մասն բարձուցն , որ 'ի ներքոյ ծնկացն , յորում է պատարուն , իբր թէ յղի , նշանակէ զանպարկեշտն և զանամօթխածն : Բարձն որ 'ի ներքոյ ծնկաց՝ եթէ իցէ կակուղ՝ է՛ առնշանեցեալ կանացայելոց :

Ոտքն ստուար՝ և յոյժ կարճ , ցուցանէ զտկարն . և կարի խիտ երկայնն՝ նշանակէ զնենգաւորս . բարակ և կարճ , նշանակեն զչարաբարոյսն :

Արձակաքայլն՝ նշանակէ զմեծամիտն . և զգործունեայն : Որ արագ ընթանալովն զգայէ զինքն , և զերեսն կորարկանէ , և զբոլոր մարմինն կծկէ՝ նշանակէ զերկչոտն՝ զխշտն , և զաղտեղաբարոյն :

Մանրաքայլն՝ և արագեղն , չարաբարոյ և վատուժ ասի լինիլ ։

Սևամորթն՝ զխորամանկն յայտնէ ։

Գոյն սպիտակ և կարմիր՝ զուժեղն և զարտայինն ցուցանէ ։

Գոյն սաստիկ սպիտակ հանդերձ դեղնութբ , ցուցանէ զպակասութիւն ուժոյն , 'ի առատութե սպլղամին ։

Գոյն հրային՝ հանդերձ լուսափայլ աչօք՝ առ մոլեգնութի ձգտին ։

Գոյն միջակ՝ 'ի մէջ սպիտակին և սևին՝ եթէ է պայծառ , ցուցանէ զայր ուշիմ և զբարեբարոյ ։

Յաղագս համառօտից կանոնաց պատկերացուցութե ։
Գլ. ԾԹ.

Արդ՝ պարտ է հասարակաբար դնել 'ի մտի զի բնականաբար չափակից անդամքն , ըստ ձևոյն ըստ գունոյն , և ըստ քանակութեն , ըստ կազմածոյն , և ըստ շարժմանն՝ նշանակեն զբարի մտաց , զընդաբոյս յարմարութիւն ։

Իսկ անդամքն որք ներհակ այսմ , զթիւրամիտսն ցուցանեն ։ Վ՟այն ասէր պղատոն՝ մարդիկք որք ունին զո՛ և իցէ զնմանութի ումանց անասնոց , հետևին և բարուց նոցին ։

Դարձեալ գիտելի է՝ զի թէպէտ նշանօք անդամոցն ճանաչին բարք մարդկան . սակայն ոչ դնեն զհարկաւորութի , այլ ցուցանեն զձգտումն բնութե ։

Նաև ոչ միշտ արտայայտեն զախորժակս մարդոյն , այլ բազում անգամ , և հաւանականաբար ։

Դարձեալ՝ 'ի արտաքին նշանացն զորոց ասացաւ , ոչ է պարտ առ ժամայն ենթադատել . զի թերևս նշանն է՛ ըստ պատահման , և ոչ բնական . և գուցէ իցէ յաղթեալ՝ այլ ներհակ սովորութբ . և կամ յետս ընկրկեալ սանձիւ բանին ։ Ուստի պատմէ արիստոտել . թէ աշակերտքն հիպոկրատայ մատուցին զնկարեալ պատկեր վարդապետին իւրեանց՝ առ անուանի պատկերացոյցն փիլիմոն . զոր տեսեալ ենթադատեաց գոլ զնա բղջախոհ ։ Եւ ընդ զարմանալ նոցին , և մեղադրեցին փիլիմոնի , որ այնպէս ենթադատեաց զայրն ղայլին բարի ։ Եւ եկեալ զայս պատմեցին հիփոկրատայ , որ խոստովան եղեւ զփիլիմոնէ՝ ճշմարիտ ենթադատել . այլ սէր իմաստասիրութեն , եւ համեստութեն, արար զնա յաղթել ցանկութեն սրտի իւրոյ . Եւ ստանալ ջանիւք՝ զոր բնութք ոչ ունէր ։

Դարձեալ գիտելի է՝ զի արտաքին նշանքն ոչ ցուցանեն՝ եթէ ոչ զկիրսն զայնոսիկ , որք բնականապէս են 'ի մարդն ։ ոպ է , ցասումն ցանկութի , եւ այսպիսիք , այլ ոչ զայնս , որք վերաբերին առ հոգին . որպէս երաժշտականութի , երկրաչափութի , եւ այլ այնպիսիք ։ Նա եւ գիտելի է՝ զի 'ի յաչսն նախկինաբար կայանայ կատարելութի պատկերացուցութեն , եւ եթէ ենթադատութի որ զաչաց՝ համաձայնեսցի ընդ այլոց անդամոց , յայնժամ է՝ ստոյգ ենթադատութի ։ Իսկ եթէ տարաձայնեսցի՝ յայնժամ զօրասցի ենթադատութին որ զաչացն . վն որոյ ամ պատկերացոյցք՝ հաստատեցին զաչսն՝ լինիլ ճշմարիտ կարապետ սրտին ։

Յաղագս բոլոր մարդոյն ։ Գլ. Կ.

Յետ որոյ հետազօտեալ եղեւ զմարդոյն՝ 'ի կողմանէ մտացն , եւ 'ի կողմանէ մարմնոյն . այժմ պատեհ է զնմանէ՝ բան այնմ՝ որ է բաղադրեցեալ 'ի հոգւոյ եւ 'ի մարմնոյ ։ Ուր յառակապէս յայտնի մեծ զօրութիւն այ . որ զայս քան տարակացեալ բնութիւնս համադրեաց 'ի մի բնութի կատարեալ , այսինքն , զմարմնաւոր , եւ զանմարմին . որ կարի իմն տարակացեալք են 'ի ստորոգութի գոյացութեն ։ Դարձեալ վն զի էր առեղծուած իմն , որ ունէր զճանաչումն 'ի ներս իմացմամբքն ոպ հրեշտակք . եւ այլ ոմն՝ ունէր զճանաչումն արտաքուստ զգայութք . որպէս իւրաքանչիւր անբան կենդանիք ։ Յաղագս այնորիկ առ 'ի կատարումն ընդհանրականութեն , պարտէր լինիլ առեղծուած ինչ , որ լինէր ճոխացեալ երկոքումբք ճա-
յայտ. 5. 1. նաչմամբքս այսոքիւք , զի կարիցէր ընթեռնուլ զգիրն , որ գրեալ ներքոյ եւ արտաքոյ , այսինքն , 'ի առեղծօղն , եւ 'ի գործս իւր ։ Արդ՝ միաւորեցաւ հոգին ընդ մարմնոյն , վն բազմաց պատճառաց . թէպէտ դատեցեալ

ցեալ պատուականագոյն երեւիւր ։ Նախկին պատ-
ճառն է, զի միաւորութիւն այնքան տարակացեալ բնու-
թեց՝ ուղղէր միոյն առ ՚ի յայս միաւորութիւն, որ լի-
նելոց է ՚ի մէջ ստեղծեցեալ հոգւոյն, եւ անստեղծ-
ոգւոյն ։ Երկրորդ՝ զի հոգին ծառայելով Աստուծոյ, մարմնովն,
մեծագոյն ընդունիցի զվարձս՝ զի ուր մեծագոյն պա-
տերազմ, անդ մեծագոյն եւ յաղթութիւն, եւ ըստ այսմ մատ․ 13․
մեծագոյն եւ պսակն ։ Քանզի դժուարութիւն գործոյն 21․ Ա
յաւելու ՚ի վարձն ։ Երրորդ՝ վասն կատարելութեան ընդ-
հանուր աշխարհի ։ Զի որպէս ստացաւ՝ վասն գոլոյն
ստեղծուած ինչ՝ սոսկ հոգեւոր, եւ այլ ոմն սոսկ մար- ծննդ․
մնաւոր ․ պատշաճ էր լինել ստեղծուած ինչ՝ բաղա- 1․27․
դրեալ յերկոցունց, այսինքն, ՚ի հոգեւորէն, եւ ՚ի
մարմնաւորէն ։ Չորրորդ՝ զի ոչ կենդանի մարմին
օգտակար է առ ՚ի պտուղ ապաշխարութեան, նոյնպէս փիլիպ․
յետ մահուան յարուցեալ, լիցի օգտակար, առ ՚ի 3․21․
տեսութիւն կրկին պատմուճանի, զի ոչ միայն հոգին,
այլ եւ մարմինն վարձատրեսցի օժտիւք իւրովք ։

Հինգերորդ՝ զի մարդն վասն պակասութեան մարմնոյն,
ունի զյոլով պատճառս խոնարհութեան, ըստ մարգա-
րէին որ ասէ՝ խոնարհութիւն քո է՛ ՚ի մէջ քում ։

Արդ՝ ոչ հոգին վասն միաւորելոյն ընդ մարմնոյն, հան- միքի․ 6․
դիպի բազում բարութեանց, այսպէս կրէ եւ ՚ի նմանէ 14․
զբազում վնասս ։ Նախ զաղտեղութիւն սկզբնական
մեղացն ․ ըստ այնմ որ ասէ յոբ ․ ո՞վ կարասցէ առնել յոբ․ 4․
սուրբ՝ զյղացեալն յանսուրբ սերմանէ ։ 17․

Երկրորդ՝ զդիւրասահութիւն մեղանչելոյն, ուստի ասէ
՚ի ծննդոց ․ միտք մարդկան դիւրասահեն առ չարն ծննդոց
՚ի մանկութենէ ։ Երրորդ՝ զդժուարութիւն բարեգոր- 8․21․
ծութեան, ըստ այնմ որ ասի առակաց, անցի ընդ յեր-
կիրս ծուլին, եւ ահա լի էր փշոք ։ Չորրորդ՝ զբթութիւն առակ․
իմացականին, ըստ այնմ որ ասէ իմաստութեան, մար- 24․30․
մին ապականեալ ծանրացուցանէ զհոգին ։ իմաս․

Հինգերորդ՝ զհանապազորդ պատերազմ, ըստ առա- 9․15․
քելոյն որ ասէ՝ մարմին ցանկայ՝ հակառակ հոգւոյ ։ գաղ․ 5․
Վեցերորդ՝ զզբաղումն հոգոց, ըստ այնմ որ ասէ 17․
մի՛ հոգայք վասն հոգւոց ձերոց ։ Եօթներորդ՝ զբազ- մատ․ 6․
մութիւն կրիցն ըստ յոբայ որ ասէ՝ այր կանանցածին 25․
սակաւաւուրեաց եւ լի թշուառութեամբ ։ Ութերորդ՝ զյամե- յոբ․ 14․
ցումն փառաց ․ քանզի ոչ ընկալցուք զփառսն, որքան 1․
յամեմք ՚ի մարմնի ․ վասն այսր ասէ առաքեալն, ցան- փիլիպ․
կամ ելանել ՚ի մարմնոյս, եւ լինել ընդ Քրիստոսի ։ 1․23․

Յաղագս յատկութե՟ մարդոյն : ԳԼ. ԿԱ.

Ա. Յատկութիւնք մարդոյն՝ են այսոքիկ, այսինքն, զանազանել 'ի մէջ համեստին, և ոչ համեստին, ուստի միայն մարդոյն է՝ հետևիլ համեստութեան : Քանզի ամ՟ անասունք՝ ոչ հետևին, եթէ ոչ օգտակարաց, և հեշտալեաց իւրեանց :

Դարձեալ՝ կարգաւորել զկիրս ըստ կանոնաց բանականին : Դարձեալ՝ ամբառնալ զինքն 'ի վեր իմացականաւն առ ած՟. վասն այսորիկ եթէ ոք երբեմն յարելով 'ի յերկրաւորս՝ արասցէ զինքն ստորեքան զաշխարհս, արդէն մերկացեալ իբր թէ զպատիւ մարդկութե՟, առնու յինքն զյատկութիւնս անասնոց, այնպէս մինչ զի ցանկութբ՟ն՝ առիցի եղանիլ խոզ. բարկութբ՟ն շուն. յափշտակութբ՟ն առիւծ, և այլք այնպիսիք, զոր պղատոն կոչեաց՝ երկրորդ մարմնաւորութի՟ հոգւոյ (զոր ոմանք թիւրապէս իմացեալք, կարծեցին ասացեալ զօլ այս 'ի պղատոնէ, իբր թէ հոգիք ելեալք 'ի մարմնոց՝ մտանէին յանասունս որ է սուտ :) Դարձեալ՝ յատկութի՟ է մարդոյն ունել զսիրելութի՟ ըստ ամ՟ սեռի բարեկամութե՟. և այսու զանազանին մարդիկ յանասնոց, որք ոչ ունին զտեսակ սիրելութե՟, եթէ ոչ միայն ըստ այնմ՟ որ հեշտալի է. որպէս՝ համանմանդակցաց, և այնպիսեաց : Դարձեալ՝ խոկալ զմահուանէն, և հեշտանալ 'ի նոսին : Դարձեալ՝ ամաչել մ՟ աղտեղի գործելեացն, մ՟ որոյ և անուղղելիքն՝ կոչին անամօթք. զի են փոփոխեալ նմիք, 'ի պատւոյ բանականութե՟, ունելով յինքեանս զանասնային բնութիւս : Դարձեալ՝ ունել զօրինաւոր զուգակցութի՟, այնու զի 'ի ներքոյ սահմանեալ օրինացն, արասցէ զհամեստ ամուսնութի՟ : Դարձեալ՝ լինել քաղաքական կենդանի՝ զի ունին զտրամաբաշխութիւս, զհամաբնակութիւս, զպայմանս, զարդելմունս, զդաշինս, և զկատարեալ պատերազմունս, և զկարգաւորեալ քաղաքականութիւս : Դարձեալ՝ լինել ընդունակ ուսման, մ՟ բանական գոլոյն : Լինել բնութբ՟ հեզ կենդանի, վասն քաղաքական կենցաղավարութեանն :

Լինել կենդանի ծիծաղական. և լինել փառաւորելի,

ձն կատարեալ պատճառաց ուրախութեց , որք միայն հանդերձեալն մարդոյն ։ Գոլ փոքրիկ աշխարհ , զի ունի համառօտ ինչ ընդ ամ՟ ստեղծուածոց , քանզի ունի գոլ ընդ քարանց . կեալ ընդ տնկոց . զգալ ընդ կենդանեաց . իմանալ ընդ հրեշտակաց ։ Դարձեալ՝ բաղադրեցեալ գոլ 'ի կրկին բնութեց , այսինքն , 'ի հոգևորէ , և 'ի մարմնաւորէ ։ Է՛ պատուականագոյն մարմնական ստեղծուածոցս , է՛ կենդանի բանաւոր՝ մահկանացու ։ Իսկ մարդկային տկարութին կայանայ 'ի յայս , զի 'ի մարդն է՝ հանապազորդութի պակասելոյ . անկարելութի կայանալոյ անպակասութեան . դիւրութի անկանելոյն . դժուարութի վերստին յառնելոյն , անարգութի ծնանելոյն , անստուգութի աւուր մահուն ։ Պակասութի մարդկայինն է , զի զոր ինչ ունիմք , յայլ ուստեքէ ունիմք , և անկատար ունիմք , և միշտ կարեմք կորուսանել ։
Նաև է մարդոյն հարկաւորութի մեռանելոյն , և այս հարկաւորութի , կամ եղև ներածեցեալ՝ որպէս 'ի յադամ , կամ բնաւորեալ՝ որպէս 'ի մեզ , և կամ առեալ ած՟ 'ի քն՟ ։

առակ 24, 16.
յոբ. 14. 2.
ծննդ. 8.21.
յոհ. 15.6
իմաս. 7. 3.4.
մատ. 24. 44.
1.կոր. 4.3.4.
եբր. 9. 27.

Յաղագս նախկին ծնողաց ։ Գլ. ԿԲ.

ԳԵրագոյն բարին կամեցեալ հաղորդել զբարութիւն իւր այլոց . արար զբանական ստեղծուածս , զի իմանայցեն զդերազանց բարին . իմանալովն սիրեսցեն . սիրելովն ստանայցեն , և ստանալովն երանելի լիցին ։ Արդ՝ արար ած՟ զմարդն առաջին , կարգելով զմարմին նր՟ սպասաւորութե՟ հրեշտակաց՝ 'ի տղմոյ երկրի , 'ի դաշտին դամասկոսի . և փչեաց յերես նորա շունչ կենդանի , այսինքն , ստեղծեաց զհոգին , զոր միաւորեաց ընդ արարեալ մարմնոյն ։ Իսկ արարեալ մարդն առ 'ի պատկեր այ՟ , 'ի բնականն՝ և առ 'ի նմանութիւն , 'ի շնորհականն ։ Այլ և սոյն մարդն եղեալ 'ի պատկեր այ՟ , առաւել քան զհրեշտակն . զի ունի զնմանութի ընդ այ՟ ներքոյ և արտաքոյ , զոր ոչ ունին հրեշտակք ։ Քանզի ունի 'ի ներքս զնմանութի ըստ յիշողականին՝ իմացականին , և կամացն , որպէս հրեշտակք . այլ արտաքոյ ունի զնմանութի , զոր ոչ ունին հրեշտակք .

ծննդ. 1.7.
Ա
յոհ. 1.
1.18.4.11
10. 33.
17. 21.
սաղ. 49. 1.

Լ քան-

քանզի ո͞պ որդին է՛ 'ի հօրէ նոյն բնութե͞, այսպէս 'ի մարդոյ մարդն՝ նոյն բնութե͞ : Եւ ո͞պ ա͞ծ է՛ իշխան ա͞մ ստեղծուածոցս, որ 'ի ներքոյ ինքեան, այսպէս և մարդս՝ 'ի վերայ այնոցիկ՝ որք ստորև քան զնա. ըստ սաղմոսի՝ զա͞մ ինչ հնազանդ արարեր 'ի ներքոյ Սաղ. 8.
ոտից, և այլն : Եւ որպէս ա͞ծ է՛ յա͞մ ուրեք էապէս, 8.
այսպէս և հոգին՝ է՛ յիւրաքանչիւր մասն մարմնոյն էապէս : Դարձեալ՝ պատիւ մարդոյն կայանայ յայսմիկ, զի արար ա͞ծ զմարդն իմաստուն բանականութե͞, կենօք անմեղ, և տէրութե͞ զօրաւոր :

Առաջինն՝ երևի 'ի յայս՝ զի մարդն արարաւ 'ի պատկեր ա͞յ : Երկրորդ՝ զի 'ի նմանութի ա͞յ : Երրորդ՝ զի մարդս է վերակացու կենդանեաց, և այլոց ստեղ-
Մատ. ծուածոցս՝ զի ա͞մք ծառայեն նմա : Արդ՝ յայսցանէ
18. 19. ծանիր, զի կամաց բարի արանց հնազանդին, ո՛չ միայն
Սաղ. 144. ստեղծուածքս, այլ և ինքն ա͞ծ, որպէս ասէ սաղմոս,
17. զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տ͞ր : Նա և հրեշտակք, որք կարգին առ 'ի սպասաւորութի . այլ և դևք, որք տուեալ լինին 'ի փորձումն բարեաց :
Ա. Կոր. Դարձեալ՝ բարի արք՝ որք են ընկերք նեղութեց,
4. 7. որք և լցին մխիթարութեց : Դարձեալ՝ արք չարք, որք առաւել օգնեն բարեաց հալածելովն, քան կարէին առնել ծառայելովն : Այլ այնպիսի մարմին ետ ա͞ծ առաջին մարդոյն, զի լինէր հնազանդ հոգւոյն, և հրամանակատար՝ առանց ապստամբելոյ . ծնընդական, առանց վաւաշոտ ցանկութե͞ . կենդանական, առանց մահու. և չափակցական ըստ հաւասար խառնուածոյ . նա և լինէր համանման հոգւոյն, զի որպէս հոգին էր անմեղ, սակայն կարէր մեղանչել, այսպէս և մարմինն լինէր առանց կրից, սակայն կարէր անկանիլ 'ի մահկանացութի : Վ͞ս այսորիկ կարէր մեռանիլ, և ո՛չ մեռանիլ . կարէր ունել զբաւականութի, և զչքաւորութի ախտոյից, հնազանդիլ, և ապստամբել . և այս լինէր վ͞ս ազատութե͞ բնութե͞ ստեղծելոյն յոչնչէ, և ո՛չ տակաւին հաստատելոյն փառօք : Բայց սակայն մարմինն այն էր այնպէս կազմեալ՝ մինչ զի ո՛չ լինէր 'ի նմա մարտ ապստամբութե͞. ո՛չ ինչ դիւրասահութի անկարգ ցանկութե͞ . ո՛չ ինչ նուազութի զօրութե͞ . ո՛չ ինչ ապականութի մահու : Եւ անմահութիւն այն մարմնոյն ադամայ, նախնաբար էր 'ի հոգւոյն, որպէս 'յազդողէ . և 'ի հաւասարաչափ խառնուածոյ մարմնոյն, որպէս 'ի պատրաստողէ .

տողէ · իսկ 'ի փայտէն կենաց՝ որպէս 'ի սնուցողէ · Ծննդ. 2. 16. և 'ի կատարելութե՟ ա՟ծային նախախնամութե՟, որ 'ի ներքուստ պահպանողէ, և արտաքուստ պատսպարողէ ։ Արդ՝ արարած մարդն առանց ա՟մ մեղաց, և թշնամութեց · նաև ոչ ունէր արմատ գրգռութե՟ առ մեղս ։ Այլ և 'ի վերայ այսր՝ տուաւ նմա չորեքկին օգնականութի ։ Առաջին է՝ առ 'ի կամիլ ուղղապէս, և այս է խղճմտանացն ։ Երկրորդ՝ առ 'ի տրտնջել ընդդէմ չարին, և յորդորել առ բարին, և այս է տրտնջականն ։ Երրորդ է՝ գիտութի լուսաւորիչ իմացմանն՝ առ 'ի ճանաչել զինքն, և զա՟ծ, և զաշխարհս, որ արարաւ վասն նորա ։ Չորրորդ է՝ սէրն 'ի բորբոքել զկամքն, առ 'ի սիրել զա՟ծ 'ի վեր քան զա՟մ, և զընկերն իբրև զանձն ։ Առաջին երկուքն, վերաբերին առ 'ի կատարելութի բնականացն · իսկ վերջին երկուքն՝ առ 'ի կատարելութի գերբնականացն · յորոց մինն է՝ ձրի տուեալ շնորհացն, այսինքն, գիտութի · և միւսն՝ հաճոյատուողական շնորհացն, այսինքն՝ սէրն ։ Այլ և ընկալաւ մարդն զերիս աչս, այսինքն, զմարմնոյն, որով տեսանէր զաշխարհս · զբանականն որով տեսանէր զմիտս · զխոկմանն որով տեսանէր զա՟ծ ։ Եւ այսպէս աչօք մարմնոյն տեսանէ մարդն որ ինչ արտաքոյ իւրեան · աչօք բանականին զոր ինչ ներքս 'ի յինքն, և աչօք խոկմանն որ ինչ 'ի վերքան զինքն ։ Քանզի ունեցաւ զծանօթութի ա՟յ, զորոյ մերձակայութիւն խոկայր՝ ներքին իմ՟ փչմամբ · այլ ոչ այնչափ գերազանցապէս՝ որպէս 'ի վերին գաւառն · Բ. և ոչ այնպէս շամանդաղ, որ այժմ 'ի ճանապարհի աստի կենացս ։ Նա և ճանաչէր զա՟մ արարածս՝ վասն զի եդ զանուանս ա՟մ կենդանեաց ։ Ծննդ. 2. 20. Եւս և ունէր զճանաչումն իւրեան · քանզի գիտաց՝ որպիսի եղեալ իսկ էր՝ և 'ի միտ էառ՝ թէ զինչ պարտէր առնել, և յորմէ զգուշանալ ։ Նա և կայր առանց պատժականութեց, զի ոչ քաղցնոյր, և ոչ ծարաւէր · ցուրտ և կամ տօթ, աշխատանք, և կամ հիւանդութի, Ծննդ. 2. 21. ոչ վնասէր նմա · և ոչ սպառնեաց մահու ։

Զի կենդանեացն փոխելոցէր 'ի փառս · և ոչ կարօտանայր հանդերձի, և մերկ գոլով ոչ զգայր զամօթ ։ Բնութի 'ի նմա ոչ էր սխալեալ ըստ խեղութե՟ անդամոցն ։ Յղանայր առանց ամօթոյ · ծնանէր առանց ցաւոց ։ Եւ շարժմունք անդամոց՝ լինէր հնազանդեալ կամաց ։

Յաղագս տուեալ պատուիրանացն ադամայ .
ԳԼ. ԿԳ.

ԶԱրարեալն ադամ վերափոխեաց 'ի դրախտն ,
և անդ 'ի կողէ ննջելոյն կազմեաց
Ծննդ. զկին օգնական նմա : Ոչ արար զնա 'ի
2.22. գլխոյն , զի մի՛ տիրեսցէ առն . և ոչ 'ի
յոտից , զի մի՛ խոտեսցի . այլ 'ի կողէն
զի կերպ սիրոյն հաստատեսցի 'ի նոսա .
Կրկին բարի պատրաստեաց ա՟ծ նմա ;
զմինն ժամանակաւոր , և զմիւսն յաւիտենական . զառաջինն
ետ՝ և զերկրորդն խոստացաւ : Վ՟ս այսորիկ
և կրկին պատուիրան ետ նոցա . մինն բնութ՟ե , առ 'ի
պահել զտուեալ բարին . և միւսն խրատու՝ առ 'ի
յարժանաւորութիւն խոստացեալ բարւոյն . և այսմ ոչ
կարէր լինել լաւագոյն արժանաւորիլ , քան սոսկ հնազանդութ՟ե ,
որ յայնժամ է սոսկ յորժամ պատուիրանն
միայն լոկ ինքեան առնէ պարտական ; և ոչ
վ՟ս այլոյ պատճառի . և այնպիսի ասի հրաման խրատու ,
զի նովաւ իմանի թէ որքան իցէ զօրութիւն
հնազանդութ՟ե : Ուստի ասի հրաման խրատու՝ զի
զխորշիլն 'ի ծառոյն գիտութ՟ե , ոչ յիշեցուցանէր
բնութիւն , այլ խրատն : Իսկ հրաման բնութ՟ե կրկին
Ծննդ. էր . մինն զպահպանութ՟ե անհատին , ո՟րպ այն որ
2.16. ասէ՝ յա՟մ ծառոց դրախտին կերիցես . 'ի մէջ որոց էր՝
'ի մէջ դրախտին ծառն կենաց , և այսպէս անմահանեցաւ
Ա 'ի գործոյն , զի մարմին նախկին ծնողաց միշտ
պարտէր սնանիլ նովաւ . զի ունէր զզօրութիւն տալոյ
զկեանս : Երկրորդ հրաման բնութ՟ե էր՝ առ 'ի պահպանութիւն
տեսակին , ո՟րպ այն՝ աճեցէք , և բազմացարուք :
Ծննդ. Արդ՝ վ՟ս հրամանի խրատու գիտելի է՝ զի արգելանի
1.28. ինչ՝ վ՟ս զի է՛ չար , որպէս այն՝ մի՛ գողանար ,
Ելից. 20. և այլ ինչ՝ զի է պատճառ չարի , ո՟րպ այն որ ասէ՝ անձնելին
3. մի՛ երդնուլ . այսպէս , և առաջնորդն կարէ արգելուլ
Մատ. 5. զբազում ինչ , որ ոչ իցէ գրեալ 'ի կանոնս
34. իւրեանց : Նա և արգելու ինչ՝ առ 'ի փորձել զհնազանդութիւն ,
և այսպիսի էր պատուիրան ծառոյն
գիտութ՟ե .

Յաղագս դրախտին ։ Գլ. ԿԴ.

ՄԱրդն՝ զօրացեալ վերոյ ասացեալ օգնականութեամբն, եւս առաւել անդի բնակութեան՝ զերկրաւոր դրախտին ։ Ա
Արդ՝ էր տեղին այն, ուր ասէ դամասկացին, շտեմարան ամենայն ցնծութեան, և հանգստեան, որ է եդեալ 'ի վերոյ բարձրագոյն տեղւոջ երկրի՝ բարեխառն և վճիտ օդով ։ շրջապատեալ պայծառանայ՝ տնկօք մշտադալարդ վարսաւորեալ ։ անուշահոտութեամբ լցեալ ։ Ծննդ. ոչ ոք յանբան կենդանեաց բնակի անդ ։ Դարձեալ՝ 2. 8. ուսանիմք 'ի դրոց, զի 'ի Տեառնէ տնկեցաւ դրախտն այն ։ և ոռոգի աղբերակն, որ բաժանի 'ի չորս առաջս ։ զարդարեալ կենաց ծառովն ։ և ևս ծառով գիտութեան բարւոյ և չարի ։ քերովբէիւք, և հրեղէն սրով շրջապատի ։ Դարձեալ գիտելի է՝ զի ոչ ինչ ամբոխ- Ծննդ. մունք օդոց լինին անդ ։ և լինի երկու ձմեռն, և եր- 3. 24. կու ամառն ։ և կրկին անգամ պտղաբերին ծառքն ։ Յիւրաքանչիւր դարձ արեգական լինի ձմեռն, և յիւրաքանչիւր հասարակ՝ ամառն ։ Որոյ պատճառն է, զի դրախտն 'ի ներքոյ բոլորակի հասարակին է եդեալ ։ Դարձեալ միշտ հաւասար է անդ՝ տիւն, և գիշերն ։

Յաղագս անկման առաջին մարդոյն ։
Գլ. ԿԵ.

ԱՐդ՝ նախանձեալ սատանայ ընդ բարեբախտութեան մարդոյն, կերպարանեալ օձին՝ առ կինն՝ իբր առ տկարագոյն մասին փորձել ։ զի յորժամ 'ի պատասխանին երկբայեալ տեսանէր՝ զօրեղագոյնս ընդդիմացաւ, և յաղթեաց նմա, և զայրն ևս՝ նորին միջնորդութեամբ ընկեց։
Արդ՝ յառաջեաց այսպէս ։ Նախ խնդրելով, թէ էր Ծննդ. վասն հրամայեաց ձեզ Աստուած ։ Երկրորդ՝ հաստատելով 3. 24. զսուտն, ոչ մեռանիցիք՝ ասէ ։ Երրորդ՝ խոստանալովն ։ լինիջիք իբրև զԱստուածս ։ Եւ յառաջանալս այս՝ էր մեծ իմն խորամանկութեան, որպէս յայտնէ 'ի կարգ

փորձութբ. քանզի յառաջնեաց փորձելով, ընդդիմեցուցանելով, և շողոքորթելով: Զի զփորձ էառ հարցանելովն. ընդդիմեաց ստուգելովն զստութին. շողոքորթեաց ստաբար խոստանալով: Իսկ շողոքորթեաց սատանայ զկինն՝ երեքկին ցանկալեօք, այսինքն, գիտութբ, որ է ցանկալի բանականութեան. գերազանցութբ ըստ օրինակին այ, որ է ցանկալի ցասմնականին. քաղցրութբ ծառոյն, որ է ցանկալի ցանկականին: Արդ այրն մեղանչեաց՝ զի ճաշակեաց յարգելեալ ծառոյն. ուստի և պատիժ իւր ընկալաւ,
Ծննդ. քրտամբ երեսաց քոց կերիցես: Իսկ կինն՝ երկ-
3.19. քումբք մեղանչեաց. քանզի հպարտացաւ. և եկեր յարգելեալ ծառոյն. ուստի և զկրկին անէծս ընկալաւ, այսինքն, 'ի ներքոյ իշխանութբ առն լինիցիս, վասն առաջնոյն. և ցաւօք ծնցիս՝ զն երկրորդին:

Եւ բանսարկուն՝ նախանձեցաւ օձին. ստեաց, և
Ծննդ. պատրեաց. ուստի՝ վասն առաջնոյն ասացաւ նմա՝ 'ի
3.14. վերայ լանջաց և յորովայնի քում գնասցես. վասն երկրորդին՝ հող կերիցես. վասն երրորդին՝ նա խորտակեսցէ զգլուխ քո: Իսկ եթէ կամիցիս գիտել թէ ո՞վ 'ի նոցանէ առաւել մեղաւ, այսինքն, կինն՝ թէ այրն. գիտելի է, զի ըստ իրաց ինչ առաւել մեղաւ կինն. և ըստ իրաց ինչ այրն: Քանզի կինն առաւել մեղաւ, որ քան առ գիտաւորութի չարաչոյն վախճանի. զի կամեցաւ լինել որպէս զած. այլ այրն ոչ կամեցաւ տրտմեցուցանել զհեշտալին իւր:

Դարձեալ՝ կինն 'ի բազումս մեղանչեաց, այսինքն, յած, 'ի յինքն, և յընկերն: Դարձեալ՝ մեղանչեաց ճաստակարագոյն, ուստի և զբազում անէծս ընկալաւ: Իսկ այրն՝ առաւել մեղանչեաց ըստ սկզբանն, վասն զի ստոյգ գիտութբ էր: Դարձեալ՝ մեծագոյն ապերախտութբ: Նա և բազումք խնդրեն. թէ էր վասն արար ած զմարդն, որ կարէր մեղանչել. այլ այսմիկ բացատրին բազումք պատճառք:

Առաջին է՝ զի ցուցանիցի զօրութին այ, որ միայն է անյեղլյեղուկ. իսկ ամ ստեղծուածք՝ փոփոխելիք:
Մատ.3. Երկրորդ՝ զի յայտնեսցի իմաստութի այ, որ 'ի չա-
9. րէն գիտէ հանել զբարին. և այս ոչ կարէր լինել.
Մատ. եթէ ոչ ած արարեալ էր զստեղծուածն փոփոխա-
16.22. կան 'ի չարն: Երրորդ՝ զի յայտնեսցի անոխակալու-
Մատ. թին այ, որով քս մահուամբ իւրով ազատեաց
25.46. զկորուսեալ մարդն: Չորրորդ՝ զի ցուցցի արդա-

րութիւն ա̃յ , որ ոչ միայն հատուցանէ բարեացն զվարձս , այլ և չարեացն զտանջանս ։ Հինգերորդ՝ զի մի՛ լիցի մարդն վատթարագոյն քան զայլս ստեղծուածս՝ զորս այնպէս կառավարէ ա̃ծ , մինչ զի թողու զնոսա առնել ըստ յատուկ շարժմանց իւրեանց · ուստի և զմարդն՝ պարտէր թողուլ ըստ անձնիշխանութեն իւրոյ ։ Վեցերորդ է՝ մարդկային գովութն , զի գովութիւն առն արդարոյ է , որ կարէր յանցանել և ոչ եանց ։ Եօթներորդ է՝ գեղեցկութի հասարակին զի հակառակքն մերձ եղեալ՝ առաւել երևին · այսպէս չարքն՝ գովեն զբարին , համեմատելով ընդ իրեարս ։ Ութերորդ՝ զի բարիքն կրթին՝ և զօրին 'ի ձեռն չարաց ։ Ադամ և Եւա , յետ մեղանչելոյն արտաքսեցան 'ի դրախտէն , որպէս արտասեալն 'ի յերկնից , և բնակեալք 'ի թշուառութեան հովտիս այս եղեն մահկանացուք ։ Քանզի ո̃ր յերկինս է՝ ոչ կարել մեռանիլ , և 'ի դրախտն կարել ոչ մեռանիլ , այսպէս և 'ի յայսմ արտաքսութեան հարկէ երբեմն մեռանիլ , և 'ի դժոխս միշտ մեռանիլ ։ Յայսցանէ յայտ է՝ զի առաջին որպիսութի մարդոյն էր՝ նախ անմեղութե ։ Երկրորդ՝ շնորհաց ։ Երրորդ՝ մեղաց ։ Չորրորդ՝ ապաշխարութե ։ Հինգերորդ՝ փառաց ։ Քանզի յորժամ անկարգաբար ամբարձ զինքն 'ի վերոյ ինքեան , անկաւ թշուառականապէս 'ի ներքոյ ինքեան , այսինքն , 'ի յորպիսութէ անմեղութե՝ և շնորհաց , 'ի յորպիսութիւն մեղաց , և թշուառութե ։ Եւ զի եղև անհնազանդ վերնագունին իւրոյ , արդար դատաստանաւն ա̃յ եղև՝ զի լինիցի նմա անհնազանդ ստորնագոյնն իւր , այսինքն , մարմինն՝ և մանաւանդ անդամունքն՝ սպասաւորողք զօրութե ծննդականին ։

Եկլ̃ե. 15.14.
Եկլե. 31.10.
Ծննդ. 3.23.
Եսայ. 14.12.
Յայտ. 12.9.

Յաղագս կարգի փորձութե՝ որ 'ի մեզ ։ Գլ. ԿԶ ։

ԿԱրգ փորձութեան , որ եղև 'ի նախնիսն ծնողսն , նա և 'ի մեզ կատարի ։ Քանզի ո̃ր օձն յիշեցոյց , կինն հեշտացաւ , և այրն եկեր ։ Այսպէս և 'ի մեզ ըստ գրիգորի · սատանայ առնէ զգործ օձին · զգայութի , զկնոջն · և բանականն ունի զտեղի առն հաւանելովն ։

Իսկ ըստ Օգոստինոսի՝ յիշեցումն օձին է՛ առաջին
շարժումն ՚ի յարմարոյ ցանկութեան . Կնոջ ուտելն է՛
հեշտութիւն խորհրդոյն ստորին մասամբ բանականին .
Եւ ուտումն առնն է՛ հաւանումն վերնագունի մասին
բանականի : Քանզի երիւքս այսոքիւք, այսինքն,
յիշեցմամբ, հեշտութեամբ, եւ հաւանութեամբ, ածի
մարդն ՚ի փորձութիւն : Զի փորձութիւն յիշեցմամբ
սկսանի . հեշտութեամբ յառաջանայ . այլ հաւանութեամբ
կատարի : Են եւ այլք երեք, որովք մք ընկնին ՚ի փորձութիւն,
այսինքն, Թիւր գործքն, սովորութիւն, եւ
1. յոհ. 2. յուսահատութիւն : Եւ գիտելի է՝ զի երեքկին է փորձութիւն,
16. առաջինն է՝ ՚ի սատանայէ, եւ այս լինի կամ
ըստ կերպի յիշեցուցանելոյ, եւ կամ ըստ կերպի նեղացուցանելոյ :
Երկրորդ է՛ ՚ի յաշխարհէ՝ զի փափկութեամբ
եւ ունայնութեամբ քարշէ, կամ հալածանօք բեկանէ :
Երրորդ՝ ՚ի մարմնոյս մերմէ՝ որ զգայութեամբ
եւ արմատական ցանկութեամբ մղէ զմեզ առ մեղս . որոց
բանականն հաւանելովն կատարէ զմեղսն :

Առաջին երկու տեսակ փորձութեան, այսինքն, սատանայականն,
եւ աշխարհականն, են արտաքոյ մեր .
եւ ոչ ունին մեղք ըստ ինքեան : Ըստ որում ասէ Օգոստինոս .
Ա փորձութիւն որոյ ոչ լինի հաւանումն, ոչ է
մեղք, այլ է նիւթ կրթելոյ ՚ի յառաքինութիւն :
Երրորդ կերպ փորձութեան, է՛ ՚ի ներքս ՚ի մեզ . եւ է՛
մեղք ներելի՝ յորժամ միայն է առաջին շարժումն .
այլ է՛ մահու չափ, եթէ ՚ի հաւանութիւն եկեսցէ :
սաղ. 90. Արդ՝ ընդդէմ վերոյ ասացեալ երից փորձութեանց՝,
11. ետ մեզ ած երեք հնարս . զի ընդդէմ սատանայի,
ունիմք զհրեշտակական ոգիս, որք զմեզ յորդորեն ՚ի
բարիս . եւ ընդդէմ սատանայական արձակման՝ լինին
մեզ օժանդակք : Դարձեալ՝ ընդդէմ աշխարհի
1. մակ. ունիմք զօրինակ սրբոց, զորս ոչ պատրեաց ողոքումն
2. 20. աշխարհի . եւ ոչ զարհուրեցոյց զնոսա տանջանք :
Իսկ ընդդէմ մարմնոյ՝ ունիմք զբնական բարիս, այսինքն,
զորոնջական, եւ զզգաստական զօրութիւն, որք
բնականաբար ուսուցանեն զմեզ՝ ոչ անսալ մարմնոյն,
այլ ոգւոյն : Նաեւ ունիմք զձրիականն, այսինքն,
զսէր՝ զողջախոհութիւն, եւ զայնպիսիս, որով մեռուցանեմք
զմոլութիւնս մարմնոյ : Այլ է՛ զանազանութիւն
՚ի մէջ սատանայական, եւ մարմնական փորձութեանց :
Քանզի փորձութիւնք որք ՚ի սատանայէ են, բազում
անգամ ծնանին առանց բանականին . որպէս յորժամ

եւ բա

բանականապէս յագեալ ոք՝ տակաւին կրէ զքաղց · և որ յետ երկար ննջելոյն դեռևս ծանրանայ քնով։ Իսկ փորձութիւնք որք 'ի մարմնոյն , բազում անգամ պատահին վասն հարկաւորութեան , այլ երբեմն անձին 'ի յաւելորդն , որպէս յորժամ ոք յետ պահելոյն կարի իմն փափագի կերակրոյն , և կամ 'ի յուտելն՝ ոչ պահէ զչափ , և զկերպ ։

Դարձեալ՝ բազմադունակ է փորձութիւն , ոմն է հաւատութե , և այս է յոյժ · ըստ այնմ որ փորձեաց ա͞ծ զաբրահամ ։ Ոմն է քննութեան , և այս է՝ 'ի մարդոյն ։ Ոմն է գլորման , և այս 'ի սատանայէ , որ այսպէս փորձեաց զնախկին ծնողսն ։ Ոմն հեշտութեան , և այս 'ի մարմնոյն ։ Ոմն է հաւանութեան , և այս է բանականին ։ Դարձեալ՝ փորձութեանց · չորք են տեսակք · առաջինն է՝ խոշոր , այսինքն , 'ի յանսովոր աշխատանացն 'ի սկիզբն դարձման ։ Ծննդ. 22.12. Ծննդ. 3.1.

Երկրորդ՝ ընդունայն , և ծնանի 'ի հոգևոր յաջողմանց , որպէս յորժամ պարծի ոք՝ ընդ յառաջադիմանալն յառաքինութէ ։ Երրորդ է՝ երկբայոյ՝ որպէս յորժամ ոք երկբայի , թէ ո՞ր ուրեք պարտի ստուգապէս հաւատալ · ուստի պատահի զի հեղգացոյն ոքէ 'ի բարին , որպէս յորժամ զոր ինչ առնէ , յերկբայս է՝ այնմիկ գոլ բարի · և լինի դիւրաստահ 'ի չարն , յորժամ անգիտանայ գոլ զայն չար ։

Չորրորդն է՝ պատրողական , որպէս յորժամ սատանայ կերպարանէ զինքն հրեշտակ լուսոյ , զի կերպարանօք առաքինութէ 'ի ներս անէ զմոլութի · և այս լինի յորժամ յիշեցուցանելով զհամեստութիւն 'ի ներս անէ զհպարտութիւնն · և ուսուցանելով զքանանոր պաշտօնն , 'ի ներս անէ զաւելորդ անդորրութիւն մարմնոյն · և յիշեցուցանելով զչարաչար դատաստան , 'ի ներս անէ զգազանաբարոյութի · և յիշեցուցանելով զողորմութիւն 'ի ներս անէ զթուլութիւն , և զանհոգութն · յիշեցուցանելով զառատաբարոյութն · 'ի ներս անէ զշռայլութիւն , և այլք սոյնպիսիք ։ Եւ 'ի յայսմիկ յոյժ վտանգաւորէ ոչ տեսանել զորոգայթն ։ Արդ՝ զառաջին փորձութիւնն , կոչէ սաղմոսն գիշերային երկիւղ · քանզի գիշերայինն , նշանակին անյաջողութիւն ։ Զերկրորդն՝ անուանէ նետ թռուցեալ 'ի տուէ , զի տանջեամբն յաջողութին ցուցանի ։ Զերրորդն յորջորջէ իր շրջեալ 'ի խաւարի , և այս վասն երկբայութե տարակուսանաց ։ 2. Կորն. 11.14. Սաղ. 90.6.

նաց ։ Չորրորդն վերաձայնէ զև հասարակ օրէնն · ուստի ասէ՝ ոչ երկնչես դու 'ի դիմէ հասարակ աւուր , 'ի նետէ և այլն ։ Չորրեցունց տեսակաց փորձութեցս այսոցիկ ասէ 'ի նոյնն · 'ի վերայ իժի , ըստ առաջնոյն · և քարբի՝ ըստ երկրորդին · կոխեսցես զառիւծն , ըստ երրորդին · և զվիշապն՝ ըստ չորրորդին ։ Վասն նախասացեալ սատանայական պատրանացս , նաև զմարթելին՝ ոչ է պարտ առնել · և այս 'ի հինգ գիտումս ։ Նախ՝ թէ սատանայ խրատեսցէ զոք առնել զչարի ինչ՝ ոչ է հետևելի · զի մի երևեսցուք լսել նմա , որպէս և ոչ լուաւ
մատ. Քն , առնելով զքարն հաց , որ սակայն էր բարի ։
4. 3. Երկրորդ՝ եթէ յառաջադրեսցէ զչարի ինչ՝ ընդդէմ ածային օրինացն , ոչ է դէպ առնել · որպէս Մակաբայեցիք՝ ոչ կամեցան ուտել զմիս խոզենի , զոր
2. մակ. 'ի հարկաւոր ժամանակի մարթէր ։
7. 2. Երրորդ՝ յորժամ բարին լիցի 'ի գայթակղութի այ-
1. կոր. լոց · որպէս ընդ ուտելն զզոհեալ կռոց՝ լինի գայ-
8. 11. թակղութի այլոց ։ Չորրորդ՝ յորժամ բարին լինի-
յոբ. 31: ցի առ 'ի ցոյցս , ըստ այնմ որ ասէ յոբ , եթէ համ-
27. 28. բուրեցի զձեռն իմ , որ է մեծագոյն անօրէնութի , 'ի վերայ որոյ ասէ Գրիգոր , զձեռն իւր համբուրէ , որ գովէ զայն՝ զոր առնէ · և այսէ մեծ անիրաւութիւն ։ Հինգերորդ՝ յորժամ արգելու զհնազանդութիւն վերնադունին · զի թէպէտ վասն պատուիրելոյ առաջնորդին , ոչ է պարտ երբէք առնել զչար , սակայն երբեմն վասն հնազանդութեան , կարէ զանցառնել զբարեացն ։ Իսկ հնարք ընդդէմ փորձութեանց , են այսոքիկ , այսինքն , յիշատակ տէրունական չարչարանաց · մեռուցումն մարմնոյ · զբաղումն 'ի յօգտակարսն · խորշումն 'ի պատճառաց մեղաց ։ · ընդդիմացումն առաջին շարժմանց մեղաց ։ Ուստի պոնտիկոս ամն խրատէ խոհեմաբար , մինչ ասէ ։ Յսկզբանն ընդդիմամարտեաց , զի անագան պատրաստին սպեղանիք , երբ ցաւն 'ի ձեռն երկարից յամեցմանց զօրանայ ։

Կատարեցաւ գիրք երկրորդ , որ յաղագս առեղծման ։

Յանկ

Ցանկ գլխոց, Երկրորդի գրքոյն, որ վասն ապականութեան մեղաց:

ա. Նախ՝ վս չարին առ հասարակ:
բ. Յաղագս սահմանի մեղաց:
գ. Յաղագս թէ զինչ ինչ է մեղքն՝ ըստ իրին:
դ. Յաղագս թէ զինչ ինչ է մեղքն՝ ըստ անուան:
ե. Յաղագս սկզբան մեղաց:
զ. Յաղագս բաժանման մեղաց:
է. Յաղագս ներգործութեան մեղաց:
ը. Յաղագս սկզբնական մեղաց, ըստ իրին:
թ. Յաղագս սկզբնական մեղաց, ըստ անուան:
ժ. Յաղագս առաջին շարժմանցն:
ժա. Յաղագս յամեալ հեշտութեան, և հաւանութեան ՚ի մեղս:
ժբ. Յաղագս ներելի մեղաց:
ժգ. Յաղագս ներգործութեան ներելի մեղաց:
ժդ. Յաղագս եօթն գլխաւոր մոլութեանցն առ հասարակ:
ժե. Յաղագս հպարտութեան:
ժզ. Յաղագս նախանձու:
ժէ. Յաղագս բարկութեան:
ժը. Յաղագս ծուլութեան:
ժթ. Յաղագս ագահութեան:
ի. Յաղագս որկրամոլութեան:
իա. Յաղագս բղջախոհութեան:
իբ. Յաղագս եօթն մոլութեանց, թէ երբ լինին մահու չափ, և երբ ներելիք:
իգ. Յաղագս մեղաց, որ ընդդէմ ոգւոյն սրբոյ:
իդ. Յաղագս թողոյ մեղաց:

ՏՐԻԸԹՈՒՄՆ

Ընդհանրական Ճշմարտութեն.

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ.

Յաղագս Աղականութեն մեղաց.

Յաղագս չարին՝ առ հասարակ։ Գլուխ Առաջին.

ՉԱրն է եռակի, այսինքն, մեղաց՝ պատժոյ՝ և վնասու, որք հակակային երեքկին բարւոյն, այսինքն, համեստին՝ հեշտալւոյն՝ և օգտակարին։ Քանզի մեղացն հակակայի համեստն. պատժոյն՝ հեշտալին. և վնասուն՝ օգտակարն։

Արդ՝ չարն է օգտակար բազում կերպիւ։ Նախ՝ վասն դասակարգութեն իւրոյ, զի վասն իւրոյ անարգութեն, դնի 'ի ստորին տեղւոջ ամ իրողութեց. ուստի բարեպէս կարգաւորի, զի ստորանայ դնի 'ի գծոյս, և գոյն 'ի կախախանին։ Երկրորդ՝ է օգտակար վասն բռնութեն իւրոյ։ Զի դառնութիւն խղճի մտացն, բռնադատէ զմարդն հեռանալ 'ի մեղաց, Երեմ. 2.19. որպէս ասէ Երեմիաս, յանդիմանեսցէ զքեզ չարութի քո, և կշտամբեսցէ զքեզ՝ յետս դարձումն քո։ և դարձեալ ասէ՝ տե՛ս որ քան չար է և դառն՝

թողուլ քեզ զՏր՟ ած՟ քո։ Երրորդ՝ է՛ օգտակար՝ ճշմարտութեն չարին. քանզի յայնմանէ որ տեսանէ ոք զչարն, յառաջանայ բնականաբար առ բարին, զի ո՟պ մարդն բնականապէս փափագէ բարւոյն, այսպէս սարսափի, և փախչի 'ի չարէն։

Յաղագս սահմանի մեղաց ։ Գլ. Բ.

Յետ ասելոյն զչարէն առ հասարակ, ասելի է զչարէ մեղացն յատկապէս։ Արդ՝ սահմանի մեղքն բազմաւ եղանակաւ։ Նախ՝ այսպէս ըստ օգոստինոսի, մեղքն է կամք պահելոյ, կամ հասանելոյ այնմ, զոր արդարութի՟ արգելեալ է։ Երկրորդ՝ այսպէս ըստ նմին, մեղքն է ասացեալ, արարեալ, ընդդէմ ա՟ծային օրինացն։ Երրորդ՝ ըստ ամբրոսիոսի, մեղքն է անցանումն ա՟ծայնոց օրինաց, և անհնազանդութի՟ երկնային պատուիրանացն։ Չորրորդ՝ ըստ օգոստինոսի, մեղանչելն է՝ արհամարհել զանփոփոխ բարին, և յարիլ փոփոխականաց իրողութեց։ Արդ՝ առաջին սահմանն տուեալ լինի ըստ առնողական պատճառին։ Երկրորդն՝ ըստ նիւթականին։ Երրորդն՝ ըստ տեսականին։ Իսկ չորրորդն՝ ըստ վախճանականին։ Իսկ 'ի չորրորդ սահմանն՝ ցուցանի թէ 'ի մեղքն են երկու իր, այսինքն, յետս դարձումն յաստեղծողէն. և դարձումն առ ստեղծուածս. որոց առաջինն է՝ իբր տեսական, երկրորդն՝ իբր նիւթական։ Արդ՝ դարձումն 'ի ստեղծուածս՝ ըստ ինքեան ոչ է մեղք, եթէ ոչ ներառնեսցի 'ի ստեղծուածս. բայց բան մեղացն կայանայ 'ի յետս դարձումն որ յա՟յ, 'ի յորում է պակասութի՟, և խոտումն։ Եւ զի բան մեղաց ոչ ներկայանայ նախկինաբար 'ի դարձումն առ ստեղծուածս, յայտ է. զի կարէ լինիլ այն երբեմն ներելի, ո՟պ յորժամ հեշտանայ ոք 'ի ստեղծուածս՝ առաւել քան զպարտն, այլ այնր քան զա՟ծ։ Նաև երբեմն կարէ ոք հեշտանալ 'ի ստեղծուածս՝ առանց ամ՟ մեղաց, յորժամ հեշտութին է միայն բնական. ո՟պ յորժամ տեսանելիքն հեշտանայ 'ի կանանչս. ճաշակելիքն 'ի քաղցրն նոյնպէս և զայլոց։ Այլ և երբեմն կարէ ոք հեշտանալ 'ի ստեղծուածս վարձատրելի, այսինքն, երբ վե- Ա.

րա-

սաղ. խամկարգեսցի առ ա՟ծ՝ ըստ այնմ որ ասէ՝ ուրախ
91.5. արարեր զիս Տ՟ր յարարածս քո ։ Այլ յայնժամ հեշտութի՟ առնանի փոխանակ շարժման , և ոչ փոխանակ կրից ։

Յաղագս թէ զինչ լիցի մեղքն ըստ իւրն ։ Գլ. Գ.

Արդ դիտելի է՝ վս՟ մեղաց , զի ոչ է գոյացութի՟, կամ իր ինչ, այլ պակասութի՟, և ապականութի՟ . և ասի ոչինչ՝ վս՟ երից պատճառաց ։ Նախ վս՟ պակասութեան , զի մեղքն ոչ է իր ինչ բնական , այլ պակասութի՟ բարւոյ ։ Երկրորդ՝ վս՟ գործոյն, զի մեղքն ոչնչացուցանէ զմարդն , և
Ա Բ կասեցուցանէ 'ի ճշմարիտ գոլոյն ։ Երրորդն վասն
անարգութե՟ , զի առնէ զմարդիկ անարգս , և անարժանս վարձուց ։ Սակայն վս՟ նախասացելոցս դիտելի է՝ զի այլ է ներգործութի՟ մեղաց . և այլ ունակութի՟ , և այլ արատն ։ Արդ ներգործութիւն մեղաց է՝ ինչ , այլ յորժամ ոչ ևս ներգործեսցի, պակասի գոլն, նաև առանց շնորհաց ։ Այլ ունակութի՟ մեղաց՝ որ միայն 'ի չար գործոցն է՝ ինչ՝ և միայ երբեմն նաև ընդդադարիլ գործոյն, ևս՝ և յետ հեղլոյ շնորհացն , և թողութե՟ մեղացն ։ Իսկ արատ մեղաց , և պարտաւորութի՟ , ոչ ինչ է ըստ իւրն . բայց տգեղացուցանէ զհոգին . ոչ ըստ կերպի դրութե՟ , այլ ըստ կերպի պակասութե՟ . ո՟պ հատուածն անդամոյն տգեղացուցանէ զմարմինն , և աղտեղի առնէ ։ Քանզի որպէս ասէ Օգոստինոս , թէ ո՟պ չուտելն ոչ է գոյացութի՟ ինչ , այլ տկարացուցանէ զմարմինն ։ Այսպէս և մեղքն ոչ է գոյացութի՟ ինչ , սակայն ապականէ զբնութի՟ հոգւոյն. բայց ջնջի 'ի ձեռն շնորհաց ։ Նաև դիտելի է, զի երբեմն մեղքն անցանէ ըստ ներգործութեան , և միայ ըստ պարտաւորութե՟ . ո՟պ ներգործական մեղքն ։ Երբեմն ընդդէմ այսմ , ո՟պ յորժամ մեղքն անցանէ ըստ պարտաւորութե՟ , և միայ ըստ ներգործութե՟ , ո՟պ յայտէ 'ի սկզբնական մեղքն յետ մկրտութե՟ ։ Երբեմն անցանէ համանգամայն ըստ ներգործութե՟, և ըստ պարտաւորութե՟ . ո՟պ ներգործականն՝ յետ կատարեալ ապաշխարութե՟ ։ Իսկ երբեմն միայ ըստ ներգործութե՟ , և ըստ պարտաւորութեան , որպէս սկզբնականն՝ յառաջքան զմկրտութիւն ։

Յա֊

Յաղագս թէ զինչ իցէ մեղքն ըստ անուանն ։
Գլ. Դ.

Մեղքն ունի զբազումս անուանս ։ Քանզի՝ սա է արատ՝ զի տգեղացուցանէ զպատկերն այ՟ ։ Դարձեալ կոչի պարտաւորութիւն, զի առնէ պարտական յաւիտենական պատժոյն ։ Դարձեալ սա է պղծութի՝ ըստ աղտեղութեան, որ քարշէ ՚ի յերկրաւոր հեշտութիւնս ։

Դարձեալ կոչի պատիժ՝ և այս ըստ այնմ, որ հայի ՚ի մեղս առաջին մարդոյն, ՚ի յորում ապականեցաւ բնութիւն մեր ։ Դարձեալ սա է յանցանք, և այս ըստ այնմ, որ է հեռացումն ՚ի յարժանաւորութենէ կալեալ շնորհացն ։ Դարձեալ կոչի մեղադրութի, և այս ըստ այնմ, որ հայի ՚ի պատիժ ։ Դարձեալ սա է վիշտ՝ և այս ըստ այնմ, որ է ընդդէմ այ՟ ։ Դարձեալ ստուն դատումն, զի նկատէ ՚ի պատուիրանն այ՟ ։

Ա. Դարձեալ կոչի մոլութի, և այս վն՟ ապականութեան բարւոյն բնականի ։ Դարձեալ յորջորջի մեղք, ըստ այնմ, որ է դարձումն առ փոփոխական բարին ։

Դարձեալ անուանի եղեռն, վն՟ մեծի անիրաւութեն որ ընդդէմ այ՟ ։ Դարձեալ սա է անմարթ՝ ըստ այնմ որ ոչ պատշաճի առնողին ։ Դարձեալ սա է քրէական, ըստ այնմ՝ որ է արժանի ամբաստանաց, և պատժոց ։

Յաղագս սկզբան մեղաց ։ Գլ. Ե.

Թէպէտ մեղքն՝ է՛ ներհակ բարւոյն, սակայն
ոչ ունի զգոլ, եթէ ոչ ՚ի բարին ։
և ոչ յուստեքէ քարշէ զսկիզբն, եթէ
ոչ ՚ի բարւոյն ։ Եւ բարին այն՝ է անձնիշխանութի,
և կամք, յորմէ է մեղքն
ոպ՟ ՚ի յառաջին սկզբէ, և ՚ի յորում է,
ոպ՟ ՚ի յատուկ ենթակայում ։ Քանզի
կամքն է պատճառ մեղաց, պատճառ ասեմ, ոչ արարողական,
այլ պակասական · քանզի կամքն ըստ այնմ Ա.
որ նկատէ ՚ի սկիզբն՝ յորում է, այսինքն, առ ած՟,
ոչ է բնաւորեալ ելուզանել յինքենէ, եթէ ոչ զբարին ։

ջին . այլ ըստ այնմ որ նկատէ 'ի սկիզբն ուստի է ; որ է ոչ ինչն , (քանզի կամքն է յոչընչէ) գիմէ ապականութիւն : Արդ՝ եթէ կամեսցուք գիտել՝ թէ ուստի իցէ չար մեղաց նիւթականաբար , ասեմք թէ, յոչընչէ: Իսկ եթէ կամեսցուք թէ ուստի իցէ տեսակաբար , ասեմք՝ թէ յոչ ունելոյն զբարին զայն , զոր բնաւորեալ է ունել , այսինքն , զտեսակին՝ զեղանակին , և զկարգին : Այլ թէ կամիցիմք գիտել՝ թէ ուստի իցէ սկզբնաբար , ասեմք՝ թէ 'ի կարողութէ անձնիշխանութե : Այլ 'ի յառաջադիմութենէ մեղաց՝ գիտելի է՝ զի մեղքն սկսանին 'ի խորհուրդն , յառաջանին և աճին , 'ի հեշտութեան , և կատարին 'ի հաւանութե : Դարձեալ՝ գիտելի է՝ 'ի յառաջադիմութե մեղացն , զի ոմանք յառաջանան քան զմեղսն. ոմանք հետևին . և ոմանք պարագային :

Արդ՝ ոմանք յառաջանան մեղացն , 'ի կողմանէ յետս դարձմանն . և ոմանք 'ի կողմանէ դարձմանն :

'Ի կողմանէ յետս դարձմանն՝ որք յառաջանան մեղաց են այսոքիկ: խստութի , զանցառութի , ապերախտութի , անհնազանդութիւն , և ատունդանութի :

Իսկ այնք որք յառաջանան մեղացն՝ 'ի կողմանէ դարձման , են այսոքիկ՝ խորհուրդ , վաւաշոտութիւն , ցանկութի . հեշտութի . թիւր դիտաւորութի . և հաւանութի : Այլ այնք որք հետևին մեղացն՝ են այսոքիկ , արատ , այսինքն , տգեղութի պատկերին այ . պարտաւորութի , այսինքն , պարտ յաւիտենականի պատժոյն : Իսկ այնք որք պարագային մեղաց , այսինքն, պարագայքն , որք ծանրացուցանեն զմեղսն , կամ թեթևացուցանեն՝ են այսոքիկ : Ով . զինչ . ուր . որով . քանիցս անգամ . վս էր . որպէս . և երբ : Քանզի գործն՝ նաև այն որ է 'ի սեռէ բարւոյն՝ թիւրի 'ի ձեւն մեղաց, երբեմն 'ի սկիզբն . երբեմն 'ի մէջն . և երբեմն 'ի վախճանին . և այս չար դիտաւորութբ , հեղգութբ , և սնափառութբ :

Դարձեալ՝ զի մեղք լինի՝ սա մեծագոյն քան զմիւսն , բազմաւ եղանակաւ . այսինքն , պատճառաւ , որպէս մեղք արուսեկին . հասարակութբ ոպ ադամայն , կամ տգեղութբ՝ որպէս յուդային . կամ դժուարաթողութբ , ոպ մեղքն՝ որ ընդդէմ ոգւոյն սրբոյ . կամ ըստ վտանգին , ոպ մեղք ագիտութե . կամ ըստ անանջատութեանն , որպէս մեղք ագահութե . կամ ըստ դիւրասահութեանն , որպէս գիջականն . կամ ըստ բարկացուցանելոյն զած , որպէս հայհոյութիւն · կամ ըստ դժուարայաղթութեն , որպէս հպարտութիւն · կամ մահաւորութեամբ , որպէս բարկութիւն ։ Այլ վասն ծանրութեան մեղաց ծանի՛ր , զի որ ինչ է մեղք կատարեալ մարդոյն , նոյն է և անկատարին · բայց միայն 'ի յայնս զոր նոյն ուխտեաց։ Քանզի կատարելութիւն ոչ փոխէ զբնու մեղաց , այլ զքանակութիւն աճեցուցանէ ։

Յաղագս բաժանմանց մեղացն ։ Գլ․ Զ․

ԲԱժանումն մեղաց՝ է՛ բազմադիմի ։ Քանզի է ոմն ըստ առնողական պատճառին ըստ ինքեան , որպէս · մեղաց , ոմն է 'ի տկարութե · ոմն 'ի տգիտութե · ոմն է 'ի չարութե ։ Եւ ոմն ըստ առնողական պատճառին՝ հանդերձ կապակցութբ , ըստ որում առեալ լինի բաժանումն այս ։ Մեղաց՝ ոմն է 'ի չարաչար բորբոքիչ սիրոյն · և ոմն է 'ի չարաչար խոնարհեցուցիչ երկիւղէն · այսինքն , զի մարդն առաւել կամի մեղանչել , քան զրկիլ 'ի սիրելւոյն , և անկանել 'ի չարն պատժոյն յորմէ երկնչի ։ Դարձեալ՝ է և բաժանումն մեղաց ըստ նիւթական պատճառին․ ըստ որում բաժանի բազում եղանակաւ ։ Նախ ըստ այսմ , մեղաց՝ ոմն է սրտին · ոմն է բերանոյն , և ոմն է գործոյն ։
Դարձեալ՝ այսպէս՝ մեղաց , ոմն է խորհրդոյն , ոմն է բանին , ոմն է գործոյն ։ Երկրորդ՝ ըստ այսմ եղանակի , մեղաց , ոմն է ընդդէմ այ · ոմն է ընդդէմ ինքեան , ոմն է ընդդէմ ընկերին ։ Մեղքն որ ընդդէմ այ , բաժանի այսպէս · ոմն է ընդդէմ հօր , ոմն ընդդէմ որդւոյ · և ոմն ընդդէմ հոգւոյն սրբոյ ։
Դարձեալ՝ և այլ երեք օրինակաւ մեղանչի ընդդէմ այ , այսինքն , չարապէս իմանալով զայ՝ անհաւատութբ · դարձեալ՝ հայհոյելով · դարձեալ՝ անարժանապէս ձեռնարկելով 'ի խորհուրդ սբ եկեղեցւոյ ։ Դարձեալ՝ և այլ եղանակաւ մեղանչէ ոք յած , այսինքն , փորձելով զնա , և այս լինի եռակի · զի երբեմն փորձէ զկարողութին այ , ոչ յորժամ նշանս խնդրէ ։ Երբեմն զարդարութին այ , ոչ յորժամ հրացեալ երկաթիւ , կամ երկմարտութբ փորձիցէ զար-

զարդարութիւն է ։ Երբեմն զօրութիւն է , որ յորժամ ոք փորձելով զբարութիւնն է, տայցէ զանձն 'ի վտանգաւորս ։ Այլ մեղանչէ ոք ընդդէմ ինքեան, երեք կերպիւ , այսինքն, պակասեցուցանելով յինքենէ զհարկաւորսն , առնլով զաւելորդսն . և 'ի վեր քան զկարն յիւրինչ ձեռնարկելով ։ Իսկ մեղանչէ ոք յընկերն երեք կերպիւ , այսինքն , յափշտակելով զնորայն . զիւրն ոչ հաղորդելով նմա 'ի հարկաւորութեան . նա և չար օրինակաւ քարշելով զնա 'ի մեղս ։

Այլ և առաւել լինին բաժանմանք մեղաց' ըստ տեսական պատճառին . և այս երեք եղանակաւ . երբեմն, բնականաբար ըստ որակութեան , կամ ըստ քանակութեան , կամ ըստ առնչին ։ Ըստ որակութեան , առաւել լինի բաժանումն այս ։ Մեղաց' ոմն է գործեալ , և ոմն յանցեալ . գործեալն է' առանձնանումն բացասական պատուիրանին , և յանցեալն , առանձնանումն ստորասականացն ։ Դարձեալ' նախասացեալ կրկին մեղքս , է ընդդէմ երկուց մասանց արդարութեան , որ է' խոտորիլն 'ի չարէն , և առնելն զբարին ։

Դարձեալ' առաւել լինի և այլ բաժանումն ըստ որակութեան , այսպէս ։ Մեղաց , ոմանք են հոգևորք , և ոմանք մարմնաւորք . մարմնաւորքն են' մեծագոյն վատահամբաւութեան , և հոգևորքն' մեծագոյն մեղադրութեան ։ Իսկ ըստ քանակութեան առաւել լինի բաժանումն այս . մեղաց' ոմն է մահու չափ , և ոմն ներելի , որոց առաջինն կոչի թիւրութիւն , երկրորդն անկարգութիւն ։ Քանզի մահու չափ մեղքն' է' անհնարին յետս դարձումն 'ի յանփոփոխելի բարւոյն , և յարումն բոլորովին' առ փոփոխական բարին ։

Ա Այլ ներելի մեղքն' է' սէր հեշտութեանց աշխարհիս, սակայն' այսր քան զԱստուած ։ Բայց ըստ առնչին' առաւել լինի բաժանումն այս ։ Մեղաց' ոմն է սկզբնական , և ոմն ներգործական ։ Նա և առաւել լինին բաժանմունք' ըստ վախճանական պատճառին . և այս կրկնակի , կամ ըստ ցանկալի իրին . և կամ ըստ ներգործութեան ցանկացողին ։ Այլ ըստ ցանկալի իրին առաւել լինի զանազանութիւնս այս ։ Ամենայն որ ինչ յաշխարհի է , կամ ցանկութիւն է մարմնոյ . կամ ցանկութիւն է աչաց . կամ ամբարտաւանութիւն աստի կենաց ։ Որոց առաջինն է' ցանկութիւն հեշտութեան . երկրորդն' ցանկութիւն փարթամութեանց . երրորդն' ցանկութիւն պատուոյ ։ Իսկ ըստ ներգործութեան ցան-

1. յօհան. 2. 16.

կա

նացողին տարրոյն մեղքն, ՚ի եօթն գլխաւոր մոլութիս, այսինքն, ՚ի հպարտութի, ՚ի նախանձ, ՚ի բարկութի. ՚ի ծուլութի. ՚ի յագահութի, ՚ի յորկրամոլութիւն. և ՚ի բղջախոհութի ։ Դարձեալ գիտելի է զի հինգ են սեռք ներգործութեց ։ Քանզի ոմանք են չարք ըստ ինքեանց, ոպ̅ այնք՝ որք ըստ ինքեանց բնութեանց՝ են չարք, սակայն պարագայիւք իմն՝ կարեն լինել բարիք, որպէս սպանութիւն ։

Ոմանք են չարք ըստ ինքեանց, որք ոչ իմն պարագայիւք կարեն լինել բարի, որպէս ատելն զԱծ՝ և զընկերն, և չնալ. և հայհոյելն, և սոյնպիսիք ։

Ոմանք են բարիք ըստ ինքեանց, որք ոչ իմն պարագայիւք կարեն լինել չար, որպէս սիրելն զԱծ բոլորով սրտիւ, և սիրելն զընկերն իբրև զանձն ։

Ոմանք են բարիք ըստ ինքեանց՝ որք պարագայիւք կարեն լինել չարք, որպէս առնելն զողորմութի ունափառութբ. իսկ ոմանք են անզանազանք, որք ոչ են չարք, և ոչ բարիք՝ ըստ ինքեանց, սակայն կարեն լինել բարի, կամ չար, որպէս շարժել զձեռս՝ կամ զոտս, առանց դիտաւորութե իմն ։

Յաղագս ներգործութե մեղաց ։ Գլ. Է.

Զբաղում չարիս առնէ մեղքն մարդոյն՝ յառաջքան զմահն, և ՚ի մահն, և զկնի մահուն ։

Արդ՝ յառաջքան զմահն, առնէ զայս ինչ ։ Զբնականն խոցոտէ, որպէս նշանակի ցաւ այնու, որ անկաւ ՚ի ձեռս աւազակաց ։ Դարձեալ զիմացականն խաւարի ՚ի ճանաչումն ճշմարտին՝ և ախորժականն գաղջանայ ՚ի գործ բարւոյն ։ Կողոպտէ ՚ի շնորհականացն, ոպ̅ ասէ յողբսն՝ ցրուեցան քարինք սրբարանին ։ ղուկ. 10. 30. ողբ. 4. 1

Բայց զի մի կորնչիցի բարի ինչ, բարի գործքն այնորիկ, զորս ոք մեղանչելովն կորուսանէ, տուեալ լինին այլոց փրկելեաց, ոպ̅ յորժամ մեռանի ոք մարմնաւոր մահուամբ, եղբարքն՝ և մերձաւորքն նորա ժառանգեն զմարմնաւոր զստացուածսն ։

Աղտեղացուցանէ զհոգին՝ ոպ̅ ասէ յողբն, սևացան իբրև զածուխ երեսք նց ։ Առնէ պարտական յաւիտենական պատժոցն, ըստ այնմ որ ասէ ՚ի ծննդոցն Բ. ողբ. 4. 8 ծննդ. 2. 17.

յորում՝ աւուր ուտիցես՝ մահու մեռանիցիս :
Երեմ. 2. Զխիղճմտանսն դառնացուցանէ, որպէս ասէ Երեմիա՝
19. տե՛ս թէ որպիսի չար՝ և դառն է՝ թողուլ քեզ զՏ՟ր
Առակ. ա՟ծ քո : Խաւարեցուցանէ զմիտսն, ոպ՟ ասէ առակացն,
18. 3. մեղաւորն յորժամ հասանի 'ի խորս մեղաց՝ արհամարհէ :
Ա Առնէ անզգայ՝ որպէս ասէ 'ի Ծննդոցն, Թուէր
Ծննդ. ծաղր առնել յաչս փեսայիցն · զոր օրինակ ո՛չ զգայ
19. 14. շունն, զկապեալ քարն 'ի պարանոցն, մինչև ընկեսցի
արտաքս 'ի նաւէն՝ 'ի ծովն : Սպանանէ զհոգին, զի
1. Թագ. զրկէ 'ի ճշմարիտ կենացն, այսինքն, յա՟յ, որպէս ասէ
31. 4. առաջին Թագաւորաց՝ անկաւ սաւուղ 'ի վերայ սրոյ
իւրոյ : Այլ գիտելի է՝ զի ներքին մեղքն պատրաստէ
զմահն, իսկ մահուչափին 'ի ներս ածէ զմահն · բայց
խստասրտութին՝ ըմբռնէ 'ի մահն : Քարշէ առ այլ
մեղս՝ որպէս ասէ օգոստինոս, մեղքն որ ապաշխարութ՟բ ոչ ջնջի, առժամայն ծանրութ՟բ իւրով քարշէ
Ծննդ. առ այլս : Օրինակ ունիմք 'ի կայենէ, որ եղեալ
4. 8. 'ի դաշտին, այսինքն, 'ի շնորհացն՝ եսպան զեղբայր
Ծննդ. իւր : Նոյնպէս և ագռաւն՝ եղեալ 'ի տապանէն՝ հեղձաւ
8. 7. 'ի ջուրն : Եւ դինա եղեալ 'ի տեսանել՝ կորոյս
Ծննդ. զկուսութի : Եւ յուդա՝ եղեալ յարտաքս՝ մատնեաց
34. 1. զՔս՟ : Եւ դաւիթ՝ յետ շնութեանն, արար և զսպանութի :
Մատ. Եւ այսպէս յայտ է՝ զի մեղքն է պատիժ
26. 14. մեղաց : Քանզի մեղքն ըստ որում է յիւրեան ինքեան՝
2. Թագ. է մեղք · և յառաջ ընթացողի մեղացն՝ ասի պատիժ ·
11. 15. և այսպէս ասի իմն համանգամայն մեղք, և պատիժ ·
այլ մեղք ասի՝ վասն ներգործութե · և պատիժ՝ վ՟ս
կրից · զի մեղքն է՝ զոր առնեմք · և պատիժն է՝ զոր
կրեմք : Այլ թէպէտ ա՟մ մեղք է 'ի մէնջ, այլ ոչ ա՟մ
պատիժ · այլ ոմն եղեալ 'ի մէնջ, և ոմն վերայ եկեալ
յա՟յ, և ոմն 'ի նախկին ծնողաց քարշեալ : Եւ զի այն
որ առնէ՝ զոր ինչ ո՛չ է պարտ, իրաւի է, զի կրեսցէ
զոր ինչ է պարտ · վ՟նզի ա՟մ պատիժ իրաւ է, և
յա՟ծային նախախնամութէն կարգեալ :

Եւ թէ մի մեղք ծնանի 'ի միւսէն, այսպէս ցուցանի : Հպարտութին, զի կամի գերազանցել զամենեքումբք, ցաւի եթէ ոք հաւասարի նմա : Եւ վասն այսմ, ծնանի 'ի նմանէ նախանձն : Իսկ նախանձոտն՝ վասն զի դիւրաւ բարկանայ որում նախանձի · նմին իրի ծնանի 'ի նմանէ բարկութի : Եւ զի բարկութիւնն՝ վասն ոչ կարելոյն առնուլ զվրէժս՝ տրտմի · վասն այսորիկ 'ի բարկութենէն ծնանի ծուլութի :

Իսկ տրտմութիւն խնդրելով զմխիթարութիւն՝ առնէ ողաւհ : Իսկ ագահութիւն յղփանայ ժամանակաւոր ինչիւք , պարարալի որկրամոլութե : Իսկ որկրամոլութիւն վասն խմելոյ զյորովայն՝ բորբոքի և ծնանի գիջախոհութի : Դարձեալ՝ մեղքն՝ առնեն անպտուղ զպարարեալ բարւին՝ ըստ արդեանցն՝ և ըստ վարձուցն. Յոհան. որպէս հատեալ՝ ոստն 'ի ծառոյն՝ ոչ բերէ զպտուղ , 15.6. այլ չորանայ , և պատրաստի 'ի յայրումն : Վասն այս- Օրին. [illegible]ացս՝ ասէ յերկրորդում օրինաց . Իբ. անիծեալ 28.19. լիցիս 'ի մտանելն , և յելանելն , այսինքն , 'ի նիւթական եկեղեցին առ 'ի յաղօթել . զի աղօթելն այնպիսեաց ոչէ արդիւնաւոր : Այլ օգտաւորս ասէ եթէ այնպիսիքն խաչակնքեսցեն զինքեանս , առաւել փակեսցեն յինքեանս զսատանայ քան թէ արտաքս հանցեն . զի արդէն իսկ ներգործութբ բնակի 'ի նոսին : Զմարդն առնէ դժոխք . զի 'ի մեղաւորն է՝ հուր ագահութե . ժահահոտութի բղջախոհութե . խաւար տգիտութեան . որդն խղճմտանաց . ծարաւ ցանկութեան . դև ներգործութբ , և նմանք սոցին :

Եւ ապա թողու զմարդն ունայն , որպէս ասէ 'ի ծննդոցն . Ծննդ. երկիր էր ընդունայն , և դատարկ , և այս 1.2. իրաւի . զի յարեցեալքն 'ի յաշխարհս՝ ծծեն զամինս Երեմ. ցանկութս՝ վասն զի թողուն զաղբիւրն կենաց , և դե- 17.13. րակս ջրոց կենդանեաց . և յագեցուցանեն զինքեանս՝ 'ի պղտորեալ կճղակաց ջուրց : Խաբէ պատրանօք ոսկ̄ փառեալ փայլուն , որ լոյս տայ 'ի գիշերի . և որպէս խայծն 'ի կարթն՝ պատրէ զձուկն , այսպէս և մեղքն զմարդն : Յիմարեցուցանէ զմարդն՝ զի մեղանչելոյն՝ 'նեղէ զինքն , և փայտ այրելոյ ժողովէ 'ի վերայ թիկանց իւրոց . և այնմիկ ծառայէ , որ վասն ծառայելոյն չարչարեսցէ զնա : Որպէս ասէ օգոստինոս՝ յիմարութի է յայնկոյս կացութե ապրել , 'ի յորում ոչ համարձակեսցի մեռանիլ : Իսկ մեղքն՝ 'ի մահն առնէ զայս ինչ , այսինքն , ծանրացուցանէ զմարդն՝ զի զրկէ զնա 'ի մխիթարութե ամ̄ երևելեացս՝ զոր սիրեաց , այսինքն , 'ի կերակրոյ՝ 'ի ըմպելեաց՝ 'ի սիրելեաց՝ 'ի յինչից՝ 'ի լուսոյ՝ 'ի հանգստութե . այլ և զրկէ 'ի մարմնոյն , որ ոչ երբէք ընկալցի զնա այնպիսի կերպարանաւ , այլ մանաւանդ կամեցի ոչ ունել որպէս յորժամ կէս նորա լինիր ապականեալ 'ի յորդանց . քանզի զարհուրեսցի հոգի մեղաւորին յորժամ տեսանիցէ զմարմինն իւր՝ զոր առնիցէ :

Դարձեալ՝ ամբոխեսցի մեղաւորն 'ի մահն՝ յորժամ տեսանիցէ զարշաւանս դիւաց 'ի վերայ իւրեան՝ առ 'ի յափշտակել զհոգին . և աղդախանաց՝ զինչսն . որ ասէ յողբն՝ ամ թշնամիք նորա՝ ըմբռնեսցեն զնա 'ի
Ողբ.1.3. մէջ նեղութեան : Այլ արդ տեսանելի է՝ թէ որպէս մեղքն յետ մահուանն նեղէ զմարդն : Քանզի զամօթի հարկանիցի 'ի խայտառակեցմանէ չար գործոց իւրոց . ըստ մարգարէին որ ասէ՝ յայտնեցից զառա-
Նաւ.3.5. կանս քո : Դարձեալ լսիցէ զյանդիմանութիւն Քի ,
Մատ. որ ասէ՝ քաղցեայ , և ոչ ետուք ինձ ուտել . և այլն
25.42. 'ի հանդերձեալն , և 'ի լուսոյ՝ զրկեսցի՝ ըստ այնմ որ
Մատ. ասէ՝ կապեցէք զդորա զձեռս , և զոտս . և արկէք
22.13. զդա 'ի խաւարն արտաքին : Ուստի՝ ոչ իցէ նմա օգուտ երգն, այն՝ որ ասէ՝ զհանգիստն յաւիտենից պարգևեա նմա Տր : Օժանդակութիւք եկեղեցւոյ ոչ
Եսայ. ինչ օգնեսցեն նմա . ըստ այնմ որ ասէ՝ որդն նոցա
66.24. ոչ մեռանիցի և հուրն ոչ շիջանի : Անկանիցի 'ի դժոխս.
Յայտ. ըստ օրինակի քարին աղօրեայ . զոր ընկէց հրեշտակն
18.21. 'ի ծովն՝ ասելով , այսպէս անկանիցի բաբելոն 'ի դժոխս , որ ասէ 'ի տեսիլն : Որոշեսցի յԱյ , և յամ ընտրելոց , ըստ այնմ որ ասէ՝ երթայք յինէն անի-
Մատ. ծեալք : Անկցի 'ի կարօտութիւն զղջմանացն , որ ասէ
25.41. երեմիայ , Եանց ամառն , սպառեցաւ հունձն :
Երեմ. Հատանիցի ամ յոյս ողորմութեան , որ ասէ եսայի , ոչ
8.20. մնասցէ խեցի , որով տանիցի սակաւ մի հուր , այ-
Եսայ. սինքն , 'ի բորբոքմանէ սիրոյ . կամ հանիցի սակաւ մի
30.14. ջուր յաղբերէ , այսինքն , յածային գթութենէն :

Եւ մեղքն , ոչ միայն վնասէ յամելոցն 'ի մեղս , և մեռելոցն 'ի նմին , այլ և վնասէ բազում կերպիւ և այնց որք թողին զնա , և ապաշխարեցան . զի զփառսն առաջին անմեղութեան՝ ոչ երբեք վերստին առնուցուն : Քանզի որ ապականեալն յայնմհետէ ոչ լիցի կոյս , այսպէս միանգամ մեղանչօղն՝ ոչ երբեք ուրախասցի իբրև զոչ մեղանչեալ : Եւ որ յետ բժշկութեան խոցուածոյն՝ մինչ մնայ սպին , և որ միանգամ փողանայ՝ մինչ ասի դող , և որպէս սիմոն զոր սր-
Մատ. բեաց Տրն 'ի բորոտութենէն , սակայն յետ սրբելոյն
26.6. մինչ կոչի սիմոն բորոտ . և որպէս վերստին շինեալ տաճարն , յետ աւերման առաջնոյն , ոչ եր գեղեցկութբ նման առաջնոյն , այսպէս և միանգամ մե-
Մատ. ղանչեալն՝ և ապաշխարեալն : Դարձեալ առնէ պար-
5.26. տական ժամանակաւոր պատժոյն , ըստ այնմ ոչ ելա-

ելանիցես անտի մինչև հատուցանիցես զյետին
բնիոնն ։ Դարձեալ՝ ոչ մտանիցէ յարքայութիւն, մինչև
փայտն, խոտն, եղէգն, այսինքն, պատիժ մահու 1.կոր.
չափ մեղացն, նաև ներելոյն, որ ՚ի ներկայս տակաւին 3.11.
ոչ է լուծեալ, այրեսցի ՚ի վերայ նորա ։

Դարձեալ՝ յամեցուցանէ ՚ի փառաց, որպէս օրինակի
յաբիսաղոմ, որ յետ հաշտութեան հօր, ոչ ետես զերեսս 2.Թագ.
նորա՝ մինչև յերկուս ամս։ Դարձեալ՝ այն քան 14.24.
յապաղի ոք ՚ի փառաց՝ մինչև լիցի թարց ամենից աղտեղութեց,
որպէս էր ՚ի մկրտութեանն ։

Դարձեալ՝ զկորուսեալ ժամանակ, և զվարձս՝ զոր
կարէր ստանալ ինքեան, ոչ երբէք վերստին ստանայցէ ։
Ըստ եզեկիելի որ ասէ՝ որ վաճառէ՝ առայն եզեկ.
որ վաճառէ՝ ոչ վերստին դարձցի։ Դարձեալ՝ մթացուցանէ 7.13.
զաչս ճանաչման, և այս վասն աղբոյ ծիծռանցն,
որք կուրացուցանեն զաչս, որպէս նշանակեցաւ
՚ի տոբիթ ․ և վասն գերանին, որ է ՚ի ներս ՚ի տոբ.2.
յաչսն ։ Ուստի ասէ օգոստինոս՝ բժշկեալ աչացն 18.
տեսլի է լոյսն ․ ոչ գիշերահաւուն և ջղջիկանին: ղուկ.

Եւ այս յայտ է ՚ի կոյրն յայն, զոր թէպէտ լուսաւորեաց 6.41.
Տ̄ր̄ն, սակայն՝ ոչ կատարելապէս ետես, այլ մարկ.
ետես զմարդիկն՝ նախ երթալ իբրև զծառս ։ 8.24.

Դարձեալ՝ առնէ զախորժալին դառնջս ․ քանզի որպէս
խոցեալն ՚ի յոտն, նաև յետ բժշկելոյն կաղայ. և ծառ
խլեալ ՚ի տեղւոջէ իւրմէ՝ կորուանէ ինչ ՚ի զօրութենէ
իւրմէ ։ Ուստի ասացաւ առաջին մարդոյն զփուշս և
զտատասկս բուսուսցէ քեզ ․ և օձին ասացաւ ՚ի վերայ
լանջաց և յորովայնի քում գնասցես ։ Ծննդ.

Դարձեալ՝ առնէ տաղտկացումն բարւոյն, ով ասէ 3.14.
թուոց, ոգի մեր տաղտկացեալ է ՚ի վերայ թեթևագոյն Թուոց.
կերակրոյս այսորիկ ։ Ուստի ասէ օգոստինոս՝ 21.5.
վատառողջ քիմացն, դժուարին է հացն, որ առողջին
է քաղցրահամ ։ Դարձեալ՝ ասէ զինքենէ, յետ
դարձմանն իւրոյ ․ առաւել դիւրինէ սովորեալ չարն,
քան զանսովոր բարին ։ Դարձեալ՝ արգելու ՚ի բարի Ծննդ.
գործելոյն ․ քանզի կինն ղովտայ՝ հայեցեալ յետս 19, 26.
դարձաւ արձանաղի, որ առնէ ամուլ զերկիր ։ Ծննդ.

Եւ եւայի ասաց, ցաւօք ծնցես, այսինքն, զորդիս 3.16.
բարեգործութե ։ Դարձեալ՝ տկարացուցանէ
կալ ընդդէմ փորձութեց ․ քանզի սամփսոն, յետ սափրելոյ
գիսակացն կորոյս զզօրութիւն ․ և ծառ տապարահատ, դատ.
փութով անկանի ՚ի հողմոյ ։ 16.19.

Դարձեալ զջերմեռանդութիւն սիրոյն պակասեցուցանէ, որպէս խաւարումն արեգական՝ յետոյ երկար վնասէ երկրի, փոխանակ զի զօրութիւն շառաւիղացն փոքր մի արգելեալ եղև։ Յօրինակ այսմ, Դաւիթ՝
3. Թագ. յորժամ ծերացաւ, թէպէտ ծածկէր հանդերձիւ,
1. 1. բայց ոչ ջեռնոյր։ Եւ որպէս ջուր՝ զջերմութիւն հրոյն՝ կամ շիջուցանէ, և կամ պակասեցուցանէ։

Դարձեալ՝ զցաւ, և զերկիւղ, ածէ 'ի ներքս։ Զցաւն, զի առոյգ գիտէ զինքն մեղուցեալ. իսկ զերկիւղն՝ զի ոչ առոյգ գիտէ զթողութենէն։ Սատանի ածէ օգտաւէտս՝ ապաշխարօղն միշտ ցաւեսցի, և 'ի ցաւոյն խնդասցէ, և վասն ոչ միշտ ցաւելոյն ցաւեսցի։

Դարձեալ՝ մեղօք ապականի կարողութիւն անձնիշխանութեանն՝ կրկին կերպիւ, այսինքն, առնելով, և ընդունելով։ Առնելովն՝ զի ոչ կարէ միշտ առնել զոր պարտի, կամ խորշել 'ի ձեռասակարէն։ Իսկ ընդունելովն, զի ոչ կարէ ընդունել զմնացական շնորհն 'ի կեանս այս։ Դարձեալ՝ նոյնպէս կենի ապականի բանականն կրկնակի, այսինքն, ըստ ենթադատութեան դատաստանին 'ի մէջ բարւոյն, և չարին, և ըստ ընտրութեան խորհրդոյն, 'ի մէջ պատշաճաւորին, և անպատշաճին) Դարձեալ՝ ապականի ախորժակն կրկնակի, այսինքն, կարգաւ, և եղանակաւ, զի ոչ է միշտ կարգաւորեալ, և ոչ միշտ չափաւորեալ։

Դարձեալ՝ մեղքն վնասէ բազմաց, այսինքն, առնողին՝ ըստ սաղմոսին որ ասէ՝ մեղք իմ առաջի իմ են
սաղ. յամ ժամ։ Նա և այնոցիկ որք 'ի քաւարանն՝ որոց ո՛չ
50. 5. կարեն գործունէօրէն օգնել մեղաւորքն, որպէս եթէ լինէին 'ի շնորհս։ Այլ և դատապարտելոցն և այս ըստ կերպի յօդելոյն. քանզի որ չափ բազումք լինին 'ի դժոխսն, այնքան մեծագոյն լինին արհաւիրքն, և պատիժն։ Իսկ թէպէտ 'ի բան հասարակաց՝ որք ասեն՝ մխիթարութիւն է թշուառականացն ունել զընկեր 'ի պատիժն, այլ ո՛չ այնպէս 'ի դժոխսն։ Վնասէ և փրկելոցն ըստ կերպի պակասեցուցանելոյն։ Քանզի 'ի միաձայնակցութենէ, և յընկերութենէ բազմութեան փառաւորելոյն, ունին զաճումն պատահական խնդութեան։ Դարձեալ՝ վնասէ որոց են 'ի ճանապարհի առոյ կենացս, զի որ գործէ զմեղս՝ պակասեցուցանէ զգունդ ճակատուն որ ընդդէմ դիւաց. նա և չար օրինակաւ ապականէ և դայթակղեցուցանէ զայլսն։

Դարձեալ վասն վերստին անկանելոյն 'ի մեղս, դիպին բազում չարիք ։ Նախկինն է, զի լինի մարդն տկարագոյն առ 'ի վերստին յառնելն ․ ըստ այնմ որ ասէ յեբրայեցւոց, անհնար է՝ որք միանգամ լուսաւորեցան, և կործանեցան, վերստին նորոգել յապաշխարութի ։ եբրայ. 6.6. Երկրորդ՝ զի մոլութիւն զօրանայ առ 'ի մարտնչել, և մեք տկարանամք՝ ոպ̃ յայտ է 'ի մէջ ակլւոցն ։ Երրորդ՝ զի դժուարագոյն լինի թողութի մեղացն, որպէս ասէ երեմիա․ ո՞ թէ որպիսի անարգ եղեր՝ կրկնելով զմեղս քոյ ․ ուստի ասի՝ թէ կրկնեալ խոցուածն յամի բժշկի ։ երեմ. 2.36. Չորրորդ՝ զի լինի դժուարագոյն առ 'ի հաշտեցուցանել զա̃ծ ․ զոր օրինակ սեմէի, զի 'ի խնդրել զթողութի առաջին նուագին՝ գտաւ զողորմութի, այնու պայմանաւ, զի մի ելցէ յերուսաղեմէ ․ այլ երկրորդ նուագին թէպէտ խնդրեաց, բայց սպանաւ առանց ողորմութե ինք ։ 3.թագ. 2.37. Հինգերորդ՝ զի սաստկանայ դժուարագոյն պատուհասի՝ ըստ այնմ որ ասէ՝ երթայ առնու այլ եւս եօթն այսս չարագոյնս քան զինքն, և մտանէ, և լինի յետինն չար՝ քան զառաջինն ։ ղուկ. 11.26.

Դարձեալ ասի՝ մս ապականութե տեսակին, կերպին, և կարգին ․ ուստի ծանի՛ր՝ զի բարութի բնականացն՝ համեմատեալ առ հոգին զոր գեղեցկացուցանէ, ասի տեսակ ․ այլ համեմատեալ առ գործն զոր կերպաւորէ, ասի կերպ ․ իսկ համեմատելով առ վախճան, այսինքն, առ ա̃ծ առ որ կարգէ՝ ասի կարգ ։

Բայց այլով եղանակաւ՝ ապականութիւն տեսակի է՝ աննմանութի հոգւոյն առ ա̃ծ ։ Քանզի տեսակ հոգւոյն՝ նմանութի ա̃յ է ։ Իսկ ապականութի կերպին է՝ նուազութի զօրութենական գիտաւորութե ․ և կամ տկարութի կարողութեան ․ և յայտնանէ է, զի հոգին ոչ կազդուրի հոգեւոր կերակրով, ճաշակելովն, զի քաղցր է Տր ։ Իսկ ապականութի կարգին է՝ 'ի հոգին յորժամ նկատումն և ախորժակն է՝ 'ի վայր կոյս 'ի ստեղծուածս արարածոց բնական կայուածոյն ։

Քանզի յորժամ այսոքիկ երկոքեանն՝ որք են լբրու գլուխք հոգւոյ՝ 'ի վերկոյս են առ ա̃ծ, 'ի բնական կայուածի և կարգի են՝, ապա թէ ոչ, լինի մարդն լբրու կործանեալ ։ Դարձեալ՝ զրկումն տեսակին է՝ աղեղութիւն կամ կարօտութի պատշաճաւոր ուղղութե կամաց ։ Իսկ ուղղութի կամացն է՝ որ ոչ խոտորեսցի յուրոց կապարաց, այսինքն, 'ի յա̃յ սկզբէն,

և յայ՟ վախճանէն . այսինքն , զի զամ՟ զոր ունի յայ՟ սկզբէն՝ վերադարձցէ առ ա՟ծ վախճանն ։
Իսկ յորժամ որ՝ զոր ինչ ունի , յանկացուցանէ ինքեան , և կամ դնէ այլ վախճան՝ քան զա՟ծ . կորացեալ է ։ Դարձեալ՝ զրկումն կերպինէ՝ վերանցումն յատուկ կամացն , այսինքն , յորժամ կամի զինչ ընդդէմ ա՟ծային կամացն ։ Դարձեալ՝ զրկումն կարգին է՝ յետս դարձումն կամացն՝ 'ի յայ՟ , և դարձումն առ ստեղծուածս ։ Դարձեալ՝ ըստ այլում եղանակի . բանական ստեղծուածն՝ է՝ 'ի ծայրագոյն բարւոյն ըստ երից նկատմանց պատճառաց , այսինքն , առնողականին , տեսականին , և կատարողականին ։ Նմին իրի բնաւորեալ է առնել զգործս իւր , յայ՟ , ըստ այ՟ . և վս այ՟ ։ Եւ այս ըստ կերպին , ըստ տեսակին , և ըստ կարգին՝ բնաւորելոյն յինքեան ։ Այլ վասն զի նոյն բանական ստեղծուածն՝ յոչընչէ եղեալ է՝ որ քան առ նիւթական պատճառն՝ կարաց պակասիլ 'ի յիւրոց ներգործութեանց . զի գործքն իւր՝ ոչ լինէին յայ՟ , ըստ այ՟ , և վս այ՟ ։ Իսկ այս է մեղք՝ ապականիչ տեսակին կերպին , և կարգին ։

Յաղագս սկզբնական մեղացն ըստ իւրին ։

ԳԼ. Ը.

Ա Յետ ասելոյն 'ի մեղացն հասարակաբար , այժմ ասելի է 'ի մեղացն յատկապէս . և նախ զսկզբնականէն , և ապա զներգործականէն ։ Արդ՝ թէպէտ հոգին ոչ լինի սերեալ 'ի հօրէ՝ որպէս մարմինն , սակայն սկզբնական մեղքն 'ի հոգւոյն ադամայ անցանէ 'ի հոգիս մեր , միջնորդութե՟ մարմնոյ , և ցանկութե՟ ծնանելոյն . զի որպէս 'ի մեղուցեալ հոգւոյն ադամայ ապականեցաւ մարմինն , և եղև դիւրասահ առ վավաշոտ ցանկութիւն , այսպէս և սերեալ մարմինն , քարշելով ընդ ինքեան զապականութիւն՝ աղտեղացուցանէ զհոգին ։
Ուստի յայտ է՝ զի սկզբնական մեղքն է՝ 'ի մարմինն է՝ և 'ի հոգին ։ Այլ 'ի մարմինն՝ նիւթօրէն՝ և սկզբնաբար . իսկ 'ի հոգին՝ տեսակաբար , և իբր նենթակայով ։ Քանզի միայն հոգին է ընդունակ առաքինութեանց և մոլութեանց , սակայն (որպէս ասացաւ)

վասն զուգաւորելոյն ընդ ապականեալ մարմնոյն քարշէ յինքն զմոլութիս զայս ․ որպէս յորժամ անկանի թռչունն 'ի տիղմն, շաղախի և աղտեղանայ․ իսկ այսպիսի ապականութի հոգւոյ՝ ոչ միայն է պատիժ, այլ և մեղք ։ Այլ մեղքս այս որ ասի արատ, ջնջի մկրտութբ ․ իսկ պատիժն որ կոչի լուցիկ, կամ դիւրասահութի մեղանչելոյ, մնայ յետ մկրտութեն ։

Զի թէպէտ բժշկի մեղքն 'ի մկրտութեանն, ըստ պարտաւորութե յաւիտենական դատապարտութե, սակայն մնայ պատիժն ըստ ներգործութեան շարժման ցանկութեան, ընդ որում պարտիմք մարտնչել որ քան կենդանի եմք ։ Քանզի ոչ ջնջանի ցանկութիւն հասարակ շնորհօք 'ի մարդ ոք, բայց միայն 'ի սբ կոյսն ․ 'Ի յոր ջնջան առանձնական շնորհօք, 'ի յղութե իւրոյ ։ Յայտ 'ի նախասացելոցս՝ զի անձն ապականէ զբնութիւն, և հակադարձեալ՝ ապականեալ բնութի, ապականէ զանձն ։ Քանզի մեղք առաջին մարդոյն՝ ապականեցաւ մարդկային բնութիւ, և բնութիւն այսպէս ապականեալ, ապականէ և զայլ անձինս ։ Արդ ծանիր՝ զի ապականութի անձին՝ է՛ պարտաւորութի մեղաց ․ իսկ ապականութի բնութեան՝ է՛ նեխումն մարմնոյ, ըստ այնմ որ է սկիզբն այլ մարմնոյ ։ Վա որոյ ոչ ինչ կերպիւ պարտի համարիլ յա̄յ զնեխութի հոգւոյն, թէպէտ առեղծանելով հեղու զնա, և միաւորէ զնա ընդ նեխեալ մարմնոյն ․ քանզի կարի իմն կարգաւորութբ եղև, զի մարդկային բնութիւ այսպէս առեղծանիւր, մինչ զի առեղծեցեալ բազմանայր, և վասն մեղացն պատժիւր ։ Զի որպէս 'ի առեղծանելն պահեցաւ կարգ իմաստութեան, և 'ի բազմանալն պահի կարգ բնութեան․ այսպէս և 'ի պատժելն՝ պարտէր պահիլ կարգ արդարութեան ։ Եւ այսպէս յայտ է՝ զի ոչ է ընդդէմ ա̄ծային ուղղութեան, զի անցանիցի մեղքն առ եկեալս զկնի ։ Այս ուրեմն ասելի է՝ թէ անդրահեղումն սկզբնական մեղաց ոչ է յա̄յ ․ և ոչ 'ի առեղծեալ բնութէ ․ այլ 'ի ներգործեալ մոլութէ առաջին մարդոյն ։ Եւ այս է զոր ասէ օգոստինոս՝ թէ զսկզբնական մեղքն՝ ոչ անցուցանէ առ եկեալսն զկնի՝ սերումն ․ այլ ցանկութիւնն ։ Քանզի այնպէս արարաւ մարդն՝ մինչ զի հոգին իշխեսցէ մարմնոյ, և մարմինն նուաճիցի 'ի ներքոյ հոգւոյ, որ քան հնազանդէր վերնագունին իւրոյ, այսինքն, ա̄յ ։ Եւ անդրադարձեալ, եթէ հոգին դին ոչ հնազանդէր ինձ, արդար դատաստանաւ, մարմինն ապստամբէր նմա ։ Վասն որոյ՝ եթէ ադամ կացեալ էր ՚ի նոյն՝ մարմինն հնազանդեալ էր նմա . եւ այսպիսի հնազանդութիւս անցեալ էր առ հետեւեալսն այլ յորմէհետէ մեղանչեաց , մարմինն եւս ապըստամբ ՚ի նմանէ , եւ այնպէս անցցէ՝ առ զկնի եկեալսն եւ զի ամ՝ ըստ առաջին սահմանելոյն , ՚ի նոյն մարմինն հեղու զհոգին ։ Յայսմանէ յայտ է՝ թէ հայրն է պատճառ սկզբնական մեղաց ՚ի յորդին. եւ աստ իմա՛ զպատճառն ՚ի սեռի ներգործական պատճառին ։

Քանզի ամենեքեանք ցանկութեամբ ծնեալք . ծնեալք լինիմք որդիք բարկութեան . վասն որոյ անկանիմք ՚ի բազմադիմի պակասութիւն հոգւոյ , եւ մարմնոյ. առ որս հետեւի պատիժ մահու՝ եւ զրկումն ամենայնի տեսութե, եւ կորուստ փառաց երկնայնոց . ոչ միայն ՚ի չարի հասեալսն , այլ եւ յոչմկրտեալ մանկունսն . որք հանդարտագոյն լինին պատժօք՝ պատժին ՚ի մէջ այլոց . զի միայն ունին զպատիժ զրկման՝ թարց պատժոյ զգայութեան ։ Արդ՝ սկզբնական մեղքն՝ այնպէս բժշկի մկրտութեամբ ՚ի ծնողսն , զի ոչ ինչ նուազ եւ յայնց որք են բժշկեալք՝ անցանիցի ՚ի զաւակս նոցա , որպէս տեսանեմք զի թլփատեալ հայրն ծնանի զանթլփատ որդի . եւ մերկ հատ սերմանեալ՝ բուսանի յարդով հանդերձ ։ Եւ սա է պատճառն , զի մարդն ծնանի զորդի , ոչ ըստ այնմ որ է բժշկեցեալ հոգւով . այլ ըստ այնմ որ է ապաքինեալ մարմնով . եւ ոչ ըստ այնմ որ հոգեւոր , այլ ըստ այնմ որ մարմնաւոր ։

Յաղագս սկզբնական մեղաց ըստ անուանն ։

Գլ. Թ.

Սկզբնական մեղքն՝ զբազումս ունի զանուանս , եւ այս վասն յոլով պատճառաց ։ Քանզի ըստ այնմ որ սկզբնական մեղքն համեմատի առ հոգին , կոչի տկարութի . զի առնէ զհոգին անկար ՚ի յընդդիմանալ շարժմանց ։ Դարձեալ՝ ասի աղտ , զի նովաւ աղտեղանայ հոգին ։ Դարձեալ՝ դիւրասահութի , վասն հանապազորդ ձգման առ չարն ։ Դարձեալ՝ ապականութի , զի ածէ ՚ի յոչինչն , այսինքն , առ մեղսն ։ Դարձեալ՝ ասի մոլութի , զի է

Հռոմ. 6. 19.
Ծննդ. 8. 21.
Հռոմ. 8. 21.

պակասութիւն բնական բարւոյն ։ Դարձեալ ասի ցաւ բնութե , զի յառնէ 'ի յապականեալ բնութենէ ։ Ա

Ունի և զայլ անուանս՝ ըստ այնմ որ համեմատի առ մարմինն . քանզի կոչի օրէնք մարմնոյ , զի ըստ ա̅ծային դատաստանին է տիրապետեալ 'ի մարմինն ։ Հռով. 7.23.

Դարձեալ՝ օրէնք անդամոց՝ զի շարժէ զգործիս , 'ի գործ ցանկութե ։ Դարձեալ՝ կոչի բռնաւոր՝ վ̅ս բռնաւոր իշխանութե 'ի վերայ զօրութե ցանկականին ։

Դարձեալ՝ լուցկի՝ զի որ̅ աճիւն պահէ զհուրն , այսպէս և նովաւ պահի մեղքն 'ի մարմինն , ըստ ներգործութեան անդամականին , և ծննդականին ։

Դարձեալ՝ խայթ մարմնոյ , զի խթէ զմարմինն առ յառաջին շարժմունսն՝ և զհոգին առ հաւանութն ։ 2.կոր. 12.7.

Ունի և զայլ անուանս՝ զի ըստ այնմ որ համեմատի հեշտալի գործոյ՝ կոչի ցանկութի . որ ցուցանէ զմոլութիւն որ ըստ ներգործութե , ըստ այնմ որ է 'ի չափ հասակին ։ Դարձեալ՝ ցանկականութի, որ ցուցանէ զմոլութի որ է ըստ զօրութեան , ըստ այնմ որ 'ի մանկութեան ։ Ունի և զայլ անուանս , ըստ այնմ որ համեմատի 'ի նախկին մարդն , յորմէ և արտաքարջի . և ըստ այսմ՝ ասի սկզբնական , որ է կարօտութի արդարութե՝ զոր պարտիմք ունել ։ յակ. 1. 15.

Յաղագս առաջին շարժմանցն ։ ԳԼ. Ժ.

Մինչ մեղաց անուն է գործեալ , և ոմն յայլմէ քարշեալ լինին ներգործական մեղքն, բազում անգամ ունի զծնունդ 'ի յառաջին շարժմանց ։ Ուստի գիտելի է՝ զի 'ի յորպիսութի անմեղութե, ոչ շարժիւր զգայականութիւնն , եթէ ոչ ըստ շարժման բանականին ։ Վ̅ն մեղանչելով մարդոյն 'ի յանմեղութեան , ոչ կարէր լինել 'ի նմա մեղք , նաև ոչ ներելի ։

Իսկ յորժամ զգայականութիւն մարմնոյ ընդ բանականին , նմին իրի առաջին շարժմունքն 'ի հարկէ գործեմք զներելիս ։

Քանզի թէպէտ և յառաջին շարժմանցն մասնաւորաբար և առանձնակի կարելի է զգուշանալ , սակայն ոչ յամենեցունց ։ Զի ոչ միայն են մեղք , այլ և պատիժ մեղաց , վ̅ն իրաւի կոչին ներելիք՝ զի են արժանիք ներելոյ ։ Արդ՝ առաջին շարժումն ենթադրի այսպէս՝ թէ է՛ շարժումն զգայականութե՝ ըստ մելոյ ցանկութեան դիմեալ ՚ի զմայլումն հեշտալի առեղծուածոյն ։ Այլ զանազանի շարժումն նախկին երկնակի, այսինքն, ըստ այնմ որ վերաբերի առ այժմեայ ձեռնարկութի, այսինքն, նախկին առաջին՝ որ է բնական. և երկրորդ առաջին՝ որ է զգայականութե ։ Մինչ ուրեմն խօսիմք զառաջնոց շարժմանց որք են մեղք, իմանալի է զերկրորդէ առաջնոց, որք են զգայականութե, զի նախկին առաջինքն ոչ են մեղք, վասն զոլոյն բնականք, և արտաքոյ բարոյական սեռին. որ յայտ է այսու, զի ոչ հետևին երևակայութեան, այլ միայն ներգործութեց բնական օրգանութեանց ։ Իսկ շարժմունք երկրորդ առաջինք՝ են մեղք, զի են անկարգ ներգործութիւնք ՚ի սեռէ բարոյականին, և յայտ է այսու, զի այսպիսի շարժմունքս են զգայութե, որք նմանին ՚ի յայս ախտ՝ տէրութե կամացն ։ Իսկ կամքն է սկիզբն բարոյականաց, որպ ասի յեօթներորդ գլխս բարոյականութե, զի անդ սեռ բարուց նախատեսանի, ուր տէրութիւն կամաց գտանի, և այս է ՚ի զգայականութեան ։

Արդ՝ թէպէտ վասն ասացեալ պատճառացս՝ մեղքն է՛ ՚ի զգայականութե, սակայն այս ոչ լինի մահուչափ, այլ միայն ներելի. զի կամքն ոչ ունի զկատարեալ տէրութի ՚ի վերայ առաջին շարժմանցն, որք են զգայականութե, որպէս ունի յայնս, որք հրամանաւ բանականին յառաջանան, բայց ունի ՚ի նոսին զանկատար տէրութի, որպէս ՚ի յայնս գործողութիս՝ որք ոչ յառաջանան հրամանաւ բանին, այլ սակայն կամքն կարէր զշարժմունս զգայականութեան այնորիկ արգելուլ, վասն են մեղք ներելիք ։

Վ̄ որոյ ասէ օգոստինոս՝ թէ մեղքն՝ այնպէս է կամաւոր՝ մինչ զի թէ չիցէր կամաւոր ոչ էր մեղք ։

Եւ արդ՝ առաջին շարժմունքն են այն վերաբերին առ զգայականութիս, զի այնպիսի շարժմանց սկիզբն, և ենթակայն՝ է զգայականութիւնն ։ Իսկ առաջին շարժմունքս այսոքիկ ըստ նախասացելոցս, ասին մեղք ներելիք՝ վասն երից պատճառաց ։ Նախ զի շարժին առ անարժանս ։ Երկրորդ՝ զի են կերպիւ իմն կամաւորք՝ ոչ ըստ ինքեանց, այլ որպէս ասացաւ, զի ոչ խափանեն ՚ի կամաց, կամ նաև վասն նախընթացի
ըն.

ըմբռնման ։ Երրորդ՝ վս հաւանութեան հեշտութե , որ հաւանութելով հոգին ընդ առեղծուածոյս՝ խաւարի , և վատթարանայ . որպէս յորժամ միաւորի ընդ ա՜յ , լինի բարեգոյն և լուսաւորի ։ Եւ գիտելի է՝ զի մարդն դիւրասահագոյն է՝ 'ի չարն՝ քան 'ի բարին , վս բազմաց պատճառաց ։ Նախ զի ասէ իմաստութիւն , մարմին ապականեալ՝ ծանրացուցանէ զհոգին՝ քարշելով զնա առ չարն . և ոչ ուղղէ առ բարին ։ ծննդ. 8.21. իմաս. 9.15.

Երկրորդ՝ զի ասէ օգոստինոս , առաւել զօրաւորէ սովորական չարն՝ քան զանսովոր բարին ։

Երրորդ՝ զի բնականապէս դիւրին է իջանել քան ելանել՝ և մինն առաւել քարշէ 'ի վայր՝ քան բազումք 'ի վեր ։ Չորրորդ՝ զի որ դրդուէ 'ի չարն՝ ներկայ է, այսինքն , հեշտութի . իսկ վախճան առաքինութե որ է ընդոստուցիչ առ բարին՝ բացակայ է։

Քանզի հեշտալին ըմբռնեալ զգայութե , կամ երևակայութե , իբր թէ 'ի հարկէ՝ շարժէ զցանկականն ։ Հինգերորդ՝ զի բազումք պարագայք պահանջին առ բարին՝ քան առ չարն ։ Վեցերորդ՝ զի հակամիտեմք առ սկիզբն մեր, այսինքն, առ ոչինչն ։ Եօթներորդ՝ զի ցանկութի որ շարժէ զմեզ առ չարն՝ միշտ 'ներքս 'ի մեզ է . իսկ փառքն զոր խնդրեմք է արտաքոյ մեր ։ Ութերորդ՝ զի զօրութիք հոգւոյն են առնողականք , առ 'ի սիրել զժամանակաւորս , այլ կրողականք , և նիւթականք՝ առ այնս՝ որք են շնորհաց և փառաց ։ Ա. ուխէ. 13. 4 յոհան. 13.3.

Ուստի ոտանաւորս ։

Որ ինչ արդեանց նախժամանի .
այն 'ի շնորհացն պարգևի .
Քանզի չիք ոք որ պսակի ,
արտաքոյ Տն պարգևի .

Զի ոչ կարեն ունիլ առաքինութիւնքն լաւ կերպի ստացման , այլ լաւ կերպի ընդունելութեան , ուստի զչարն կարեմք առնել մեզ . իսկ զբարին՝ ոչ կարեմք առնել առանց օգնականութե շնորհաց ։

Յաղագս յամեալ հեշտութեան, և հաւանութեան 'ի մեղս։

Գլ. ԺԱ.

Ա. Յամելն 'ի մարմնական հեշտութիւն է՛ մեղք մահու չափ · այլ ոչ առ ի յամելն մահու չափ, եթէ ոչ յորժամ լինի հաւանութիւն · քանզի ոչ իմացեալ լինի անդ՝ յամումն ժամանակին, այլ հաւանութեան։ Այլ դիտելի է՝ զի հեշտութիւն որ է առաջ քան զհաւանութիւն ներելի է · իսկ եթէ յառաջանայ հեշտութիւն մինչև 'ի հաւանութիւն հեշտանալոյն, այլ ոչ 'ի գործն · այսպիսի հաւանութիւն պարտ է թուել 'ի մէջ մահուչափիցն, մանաւանդ 'ի մարմնական մեղս։ Սակայն վաւաշոտական հաւանութիւնս այս՝ է՛ կրկին, զի ոմն է յանկարծ՝ ոչ վասն նախորհեցելոյ ընտրութեան, այլ միայն 'ի յապականութենէ մարմնոյն, որոյ յառաջանայ յօժարութիւն զգայականութեան 'ի յառաջին շարժումն։ Արդ՝ այսպիսի հաւանութիւնս կոչի յանկարծ կորզումն, և է մեղք ներելի։ Եւ միւսն է հաւանութիւն 'ի հեշտութեան շարժմանց մարմնոյ, որ է 'ի յընտրութենէ բանականին, և այս է մեղք մահու չափ, որպէս և ասացաւ իսկ։ Իսկ եթէ բանականութիւն հաւանի ընտրութեամբ հանդերձ, որ լինի աստուածային դատողութեամբ այսու կերպիւ, այսինքն, ամենայն որ է արգելեալ աստուածային օրինօք, խորշելի է, յայնժամ առ ի գոլ մեղքն 'ի վերին մասն բանականին։ Այլ թէ ընտրութիւն լինիցի մարդկային կամ բնական դատողութեամբ, այսինքն, կերպիւս այս՝ ամենայն որ է անդր քան զմէջն առաքինութեան, խորշելի է, յայնժամ մեղքն առ ի գոլ 'ի ստորին մասն բանականին։ Արդ՝ եթէ տակաւին հաւանութիւն յառաջանայ ևս անդր, այսինքն, յորժամ 'ի մտի դնէ կատարել զգործն, յայնժամ կամքն համարեալ լինի փոխանակ գործոյն · նա և թէպէտ պակասի կարողութիւն առ 'ի կատարել զգործն։ Իսկ եթէ լիցին համանգամայն, հաւանութիւն, և գործն՝ 'ի յայնս որ արգելեալ յաստուածային օրէնս · յայնժամ մահու չափ մեղքն է կատարեալ։ 'Ի վերայ ասացելոցս համահաւաքեմ զզանազանութիւն՝ զի հեշտութիւն կրկին է, այսինքն բնական, և կամաւորական։ Արդ՝ 'ի պարզ բնական հեշտութեան, ոչ վարձ է

և ոչ մեղադրութեն ։ Իսկ կամաւորականն ևս է երկակի, զի ոմն է 'ի ստեղծօղն և ոմն 'ի ստեղծուածս․ հեշտութեն որ 'ի ստեղծօղն բարի է․ ըստ սաղմոսին սաղ.
որ ասէ՝ յիշեցի զա̃ծ և հեշտացայ ։ Իսկ որ է 'ի 76.3.
ստեղծուածս՝ նա և սա է կրկնակի, քանզի ոմն է ըստ ա̃յ, և այս բարի է, և սա առաւել լինի հեշտութի վասն գործոց բանականին, և ոչ վասն կրից, զորմէ ասէ սաղմոսն, հեշտացուցեր զիս Տ̃ր յարարածս քոյ ։ սաղ.
Եւ ոմն է ընդդէմ ա̃յ, և այս նմանապէս է կրկին, 91.5.
զի ոմն ոչ է ընդդէմ ա̃յ, այլ այսր քան զա̃ծ, և այս է մեղք ներելի․ իսկ ոմն է ընդդէմ ա̃յ պարզաբար, որով եղծի հրաման ա̃յ, և այս է մահու չափ ։

Ցաղագս ներելի մեղաց ։ Գլ․ ԽԲ․

Ներելի մեղքն է՝ յանցանք փոքրագունի․ Ա
քանզի 'ի մանկունան յետ մկրտութեան, նախ յառնեն ներելիք, և ապա մահուչափքն ։ Այլ ներելի մեղքն է՝ ո̃պ ասէ Օգոստինոս, որ զմարդն մինչև յաւիտենական պարտաւորութի մահուն՝ ոչ ծանրացուցանէ․ այլ պարտաւորէ պատժոյն, թէպէտ և դժուարաւ հանդիպի թողութե ։
Եւ ներելի մեղքն՝ միշտ է՝ 'ի կամացն՝ որ շարժէ 'ի յայն, կամ թոյլ տայ՝ կամ ոչ արգելու ։ Այլ մեղք իմն ասի ներելի, երեք կերպիւ ։ Նախ 'ի սեռէն՝ ո̃պ բան դատարկ ։ Երկրորդ՝ հանդիպմամբ՝ ըստ այնմ մատ.
որ ապաշխարութ̃բ 'ի մահուչափոյն լինի ներելի ։ 12.36.
Երրորդ 'ի պատճառէն, որպէս յորժամ լինին 'ի տկարութե, կամ 'ի տգիտութե․ զի թէպէտ երբեմն լինին մահուչափ․ սակայն ասին ներելիք, կամ մատ.
թողլիք, համեմատելով առ մեղքն այն, որ լինի 12.32.
սրտի չարութ̃բ, որ է անթողլի ։ Եւ այս է ճշմարիտ եթէ ոչ լիցէ իմն 'ի սեռէ իւրմէ մահացու, ո̃պ է պոռնկիլն․ վասն զի այնպիսին թէ և եղանիցի 'ի տկարութե․ է՛ մահացու ։ Եւ գիտելի է՝ զի ներելի մեղքն՝ ոչ երբէք կարէ լինիլ մահուչափ, այսինքն, եթէ իմացի նոյնն ըստ գոյացութե, որ յառաջագոյն էր ներելի․ և այս ո՛չ ըստ ներգործութեան, և ոչ ըստ արատին ։ Որոյ պատճառն է, զի ոչք իր կարէ փոխել զտեսակ իւր ։ Իսկ ներելի, և մահու-

չափ մեղքն են զանազան տեսակք մեղաց ։ Սակայն ներգործութիւն որ ըստ ինքեան է 'ի սեռէ ներելեացն, կարէ լինել մահուչափ, չորիւք եղանակօք ։

Նախ՝ 'ի խղճէ մտաց, զի որ ինչ լինի ընդդէմ խղճի մտաց՝ լինի առ գեհեանն, նաև թէ լինի ընդդէմ սխալեալ խղճմտացն. որոյ պատճառն է. զի երկու ինչ գոն 'ի մեղքն, այսինքն՝ յետս դարձումն յԱյ, և շրջումն առ ստեղծուածս. առաջինն է՝ իբր զտեսականն, և երկրորդն՝ իբր զնիւթական ։ Արդ՝ թէպէտ զնիւթն 'ի յերկրէ առնուլ 'ի վեր՝ երևի թեթև, կամ անզգուշական, սակայն թէ յայնժամ ունիցի 'ի միտ առնել ընդդէմ Այ, ենթադրեալ լինի մեղք մահուչափ. և քամահի անփոփոխելի բարին, և այսպէս լինի յետս դարձումն 'ի յստեղծողէն ։ Երկրորդ՝ 'ի հաճելոյն. զի ասէ Օգոստինոս՝ ոչ ինչ մեղք լինի այնքան ներելի, որ ոչ լինիցի մահուչափ՝ եթէ հաճեսցի ։
R Երրորդ՝ 'ի պատրաստութենէ՝ զի յաճախ սահեցմամբ առ ներելիս՝ պատրաստի մարդն առ մահուչափսն. և ըստ այսմ իմացեալ լինի ասացեալն 'ի Գրիգորէ՝ որ ասէ՝ խորշեցար 'ի մեծամեծ վիմաց, զգոյշ լեր՝ մի՛ գուցէ խորասոյզ լիցիս աւազով ։

Եւ զայս ասէ, զի բազում անգամ 'ի փոքու մեղաց,
յառաջանայ ոք 'ի մեծամեծս, որպէս սակաւ ինչ կայծն
Եկլես. առնէ երբեմն զհուր մեծ. վասն որոյ ասէ սիրաք՝ որ
19. 1. հեղգանայ փոքուն, առ սակաւ սակաւ հասեսցի ։

Չորրորդ՝ 'ի յառաջանալոյն. զի երբեմն յառնէ ներելին, և թէ ոչ արգելցի, կարէ յառաջանալ մինչև 'ի մահուչափն ։ Ոչ թէ նոյն ներելին լինի ըստ գոյացութեան մահուչափ, այլ զի 'ի նմանէ լինիցի պատճառաբար մահուչափ յառաջանալովն ։

Եւ այս յայտէ յառաջին շարժմունսն, որք թուեալ լինին ընդ ներելիսն. այլ յորժամ հեշտութիւն զօրանայ այնքան, մինչ զի մատչիցի առ հաւանութիւն. արդ էն իսկ է մահուչափ ։ Այլ արդ՝ է՝ զանազանութիւն 'ի մէջ ներելի մեղաց՝ և մահու չափից. զի ներելին է ցանկութիւն կամ փափկութիւն 'ի ստեղծուածս՝ ստորքան զԱծ. կամ 'ի ներքոյ Այ ։ Իսկ մահու չափն՝ 'ի վերքան զԱծ, կամ հաւասար Այ ։ Քանզի ուղիղ կարգ է, զի անփոփոխելի բարին նախադասեսցի քան զփոփոխելին, և հաստատուն, քան զօգտակարն. և կամքն Այ՝ քան զմերս. և բանականն՝ քան զզգայականութիւն. իսկ յորժամ կարգս այս թիւրի, մեղքն ներգործի ։

Այլ թէ արդեօք կարէ՞ ոք կեալ կամ լինել 'ի կեանս յայս առանց ներելի մեղաց․ ասելի է, եթէ խօսեսցուք զբոլոր կենաց մարդոյն, որ արդէն ժամանեալ իցէ 'ի չափ հասեալ տիս, ո՛չ կարէ լինել առանց ներելի մեղաց, եթէ ոչ յատուկ իմն շնորհիւ, որպէս ասէ օգոստինոս զերանելի կուսէն մարիամու ։
Իսկ եթէ խօսիցիմք զմասնէ ինչ ներկայ ժամանակիս, ըստ այսմ կարէ լինել ոք առանց ներելի մեղաց ։ Եւ այս յայտ է այսպիսի օրինակաւ, զի նաւավարն կարէ խնուլ զիւրաքանչիւր ծերպս նաւին թռնձով, զի մի մտցէ 'ի ներքս ջուր, այլ ո՛չ կարէ զամ համանգամայն խնուլ, մինչ զի ընդ ո՛չ ուրեք մտանիցէ ջուր ։ Ուստի սէրն թէպէտ և կատարեալ ո՛չ առնէ զի ներելի մեղքն ո՛չ պատահեսցի, այլ առնէ զի մի՛ յաճախեսցի ։ Որպէս հնոց հրոյն ո՛չ արգելու զկաթիլ ջրոյն դնել յինքեան, այլ առնէ՝ զի եղեալն դիւրաւ ծախեսցի ։ Քանզի կատարեալ սէրն՝ իւրոյն բոցակիզէ զմարդն, զի ցաւով և ապաշխարութեամբ՝ ջնջեսցէ զներելի մեղսն, զոր ոչ առնէ անկատար սէրն․ ուստի 'ի յանկատարսն ժողովին բազումք ներելիք, որով եղանի մեծագոյն պատրաստութի առ 'ի կործանումն ։

Յաղագս ներգործութեան ներելի մեղացն ։

Գլ. ԺԴ.

Ներգործութիւն ներելի մեղացն՝ բազմադիմի է ։ Առաջին զի առնէ պարտական պատժոյ, այլ ո՛չ բացորոշաբար, և ո՛չ յատկաքար՝ առնէ պարտական յաւիտենական պատժոյն, կամ քաւարանին ; կամ ներկայիս փոխարինին, այլ ումեմն 'ի նոցանէ ։ Քանզի ըստ ատենի ներկայիս եկեղեցւոյ դիւրաւ առնէ մարդն զփոխարէնն, այլ ըստ ատենի քաւարանին, ծանրագոյնս պատժեսցի, այլ ըստ ատենի դժոխոցն՝ ևս ծանրագոյն, վասն ներելի մեղացն, այսինքն ; յաւիտենականապէս, եթէ մահուչափ և ներելի մեղօք՝ մեռեալ իցէ ։ Եւ օրինակ այսմ ունիմք ; 'ի չափ մի գինւոյ, որ արժէ 'ի տեղի մի, մի դենար ; և 'ի միւսն երկու, և 'ի միւսն եօթն ։ Սակայն տուեալ պատիժն 'ի դժոխսն՝

վասն ներելի մեղացն, համեմատաբար՝ է՛ փոքրագոյն քան զտանելոյն անդ՝ վասն մահուչափ մեղացն: Ուստի ասի թէ պատիժն տանեալ 'ի դժոխս՝ վասն մահուչափ մեղացն է՛ որպէս մարմին, և տանեալ վասն ներելւոյն 'ի նմին տեղւոջ՝ է՛ որպէս մակերևոյթ: Իսկ տանեալ վասն ներելւոյն 'ի քաւարանն՝ է՛ ոպ՟ գիծ: Այլ տանեալ վասն ներելւոյն 'ի ներկայումս՝ է՛ որպէս կէտ: Ուստի ոպ՟ չորեքեանս այսոքիկ ե՛ն անհամեմատք, այսպէս և 'ի մէջ նախասացեալ պատժոցն՝ է՛ մեծ իմն զանազանութի՟: Երկրորդ՝ ներգործութի՟ է՝ զի ներելի մեղքն աղտեղացուցանէ զհոգին. ըստ այսմ օրինակի՝ որպէս երբեմն սևանայ կամ աղտեղանայ նկարեալ ինչ պատկեր, այնպէս՝ մինչ զի ոչ կարէ տեսանիլ: Իսկ երբեմն՝ այնպէս մթանայ, մինչ զի կարէ իսկ երևիլ, այլ ոչ լիապէս զանազանիլ. և վասն այսորիկ՝ յաղագս այսպիսի զանազանութեան, ասէ Գրիգոր, ներելին նսեմացուցանէ, այլ մահուչափն խաւարեցուցանէ: Արդ՝ վս՟ աղտեղութե՟ս այս՝ ասի՝ թէ 'ի փրկելիսն մեղքն ներելի՟ ջնջեսցի 'ի ներկայումս փոխմանական շնորհին, և այս ըստ մեղացն և ոչ ըստ պատժոյն. զի այն ջնջեսցի 'ի քաւարանն: Այլ փոխմանական շնորհն ջնջէ զմեղս ներելիս 'ի յանջատումն հոգւոյն 'ի մարմնոյն, զորութե՟ կատարման
Ա կենաց իւրոց, թէ և չիցէ ուղղեցեալ առ յայն
Բ շարժումն զղջման, և ըստ այսմ իմացեալ լինի բանն Օգոստինոսի՝ որ ասէ՝ թէ 'ի քաւարանն կարէ լինիլ արձակումն 'ի պատժոյն, այլ ոչ 'ի մեղացն. և այս ասացեալ եղև 'ի հնոցն. այլ այժմ՝ հասարակաբար ասացեալ լինի՝ թէ ներելի մեղքն նաև աստի տարեալ լինի 'ի բազմաց, նա և ըստ մեղացն, և մաքրեսցի 'ի քաւարանն՝ վասն բանին Տ՟ն՝ որ ասէ՝ զմեղաց ոմանց՝ թէ ոչ թողցի աստ, և ոչ 'ի հանդերձելումն, զորս մեկնէ Գրիգոր՝ թէ ներելիք թողանելին 'ի հանդերձելումն, որ եթէ իմացի միայն ըստ պատժոյն՝ յայնժամ ոչ ինչ լինի այնպիսի մեկնութի՟. քանզի նաև մահուչափքն, որք թողեալք են աստ ըստ մեղացն, մաքրին անդ ըստ պատժոյն: Երրորդ՝ զի նուաղեցուցանէ զեռանդն սիրոյն. որպէս ջուր արկեալ 'ի հուր. թէպէտ ոչ շիջուցանէ, սակայն մեղմացուցանէ զեռանդն: Չորրորդ՝ զի զզօրութի՟ հոգւոյն կասեցուցանէ, 'ի գործս բարիս, որպէս յորժամ դնի բեռն 'ի վերայ ձիոյն, ոչ այնպէս պատրաստէ 'ի յերթալն:

թայն ։ Հինգերորդ՝ զի յամեցուցանէ 'ի փառացն , զի մարդն որ պարտէր՝ և կարէր առ ժամայն յետ մահուն թռչել յերկինս , բռնադատեալ լինի վս̄ ներելեացն առ ժամանակմի մնալ 'ի քաւարանն ։

Զի ոչ երբէք տեսանիցի յումեքէ երեսն իմ̄ , մինչև հատուսցէ պատժօք և զփոքրագոյն նաքարակիտն ներելի մեղաց ։ Քանզի պարտ է իւրաքանչիւր ումեք՝ այնպէս սբ̄ լինիլ նախ քան զմտանելն յարքայութի , որպէս էր 'ի յանմեղութեն մկրտութեան աւազանին ։ Մատթ. 5.26. Յայտ. 14.5.

Վեցերորդ՝ զի պակասեցուցանէ զբարիս երկնային փառացն ․ ոչ զայնս որք արդէն իսկ՝ պարտին ․ և որք արդէն՝ են մթերեալք վասն արդեանցն , այլ զայնս՝ որք պարտէին մեզ՝ եթէ ոչ էին լեալ ներելիքն ․ զի յայնմ ժամանակի՝ յորում գործին ներելիքն , կարէր լինիլ բարի ինչ ․ որոյ վասն՝ յետ գործելոյ ներելեացն , պիտոյ է մեզ զգործս ամենս դարձուցանել 'ի հատուցումն այսպիսի պարտուց , զոր պարտէաք յաւելուլ 'ի շտեմս յաւիտենական վարձուցն ։

Եօթներորդ ներգործութիւնէ՝ զի ներելիքն լինին պատճառք բազում անգամ մահուչափ մեղացն ․ և այս չորիւք եղանակօք ․ որպէս ասացեալ եղև 'ի նախասացեալ ճառդ՝ ուր ասի թէ մեղքն որ ըստ ինքեան է՝ ներելի , կարէ մահուչափ լինիլ չորիւք եղանակօք ։ Նաև զայս ինչ գիտելի է զգուշութբ̄ , զի որպէս առի թողութի մահուչափ մեղաց՝ պահանջի դադարումն 'ի գործոյ մեղացն , դնելով 'ի միտի յայնմ հետէ 'ի բաց կալ 'ի մեղաց , այսպէս և ներելի մեղքն՝ ոչ լինի թողեալ , եթէ ոչ՝ գործով , և դնելով 'ի միտի՝ յայնմ հետէ 'ի բաց կալ յայնմանէ ։

Յաղագս եօթն գլխաւոր մոլութեց առ հասարակ ։

ԳԼ. ԺԴ.

Ներգործական մահուչափ մեղաց , մի է սկիզբն ․ երկեակ արմատն ․ եռեակ սնունդն , և եօթնեակ գլուխն ։

Արդ՝ մի սկիզբն՝ ասեմք զհպարտութիւն․ ըստ այնմ որ ասէ սիրաք , սկիզբն ամ̄ մեղաց՝ հպարտութիւն է ։ Իսկ երկեակ արմատն է՝ երկիւղն չարաչար խոնարհեցուցանող ․ և սէրն չարաչար բորբոքող ։ Եկլէս. 10.15.

Քանզի ամ՟ երկիւղ ունի զսկիզբն 'ի սիրոյ. զի ո՛չ ոք
երկնչի 'ի կորուսանել զինչ, եթէ ոչ զի սիրեսցէ ունել
զայն: Իսկ եռակի սնունդ մեղաց, են երեքն որք
Յօհան. Բ.16. են յաշխարհի, այսինքն, ցանկութի մարմնոյ, ցանկութի
աչաց, ամբարտաւանութի աստի կենաց:
Այլ եօթնակերպ գլուխն է՝ ամբարտաւանութիւն,
նախանձ, բարկութի, ծուլութի, ագահութի, որկրամոլութի,
բղջախոհութի: 'Ի մէջ որոց՝ երկուքն
են հոգեւորք, և հինգքն մարմնաւորք: Իսկ բազմականութի
եօթեանցս այսոցիկ կարէ իմանիլ՝ ըստ այսմ
օրինակի, կամքն մեր անկարգանայ՝ կամ զի ցանկայ՝
ոչ ցանկալեաց, և կամ հրաժարի յոչ հրաժարելեացն:
Արդ եթէ ըստ առաջին կերպին, կամ 'ի ներքս, և
ըստ այսմ՝ է ամբարտաւանութիւն: Եւ կամ արտաքս,
և ըստ այսմ՝ է ագահութիւն. և կամ 'ի ստորև, և
ըստ այսմ՝ է հեշտալի: Եւ հեշտալին այն՝ կամ է 'ի
պահպանութե անհատին, և ըստ այսմ՝ է որկրամոլութիւն,
որ անկարգաբար յօժարի 'ի կերակուրն.
կամ է առ 'ի պահպանութի տեսակին, և ըստ այսմ
առեալ լինի մեղք բղջախոհութե, որ անկարգաբար
յօժարի 'ի շաղաշարիլ: Իսկ թէ անկարգանայ կամքն,
զի հրաժարի յոչ հրաժարելեաց, և այս կարէ լինել
եռակի: Զի կամ հրաժարի յոչ հրաժարելեաց՝ ըստ
թիւրութեան բանականին, և ըստ այսմ՝ է՝ նախանձ.
և կամ ըստ թիւրութե ցասմնականին, և ըստ այսմ
է՝ բարկութի. և կամ ըստ թիւրութե ցանկականին,
և ըստ այսմ՝ է՝ ծուլութիւն: Եւ յայսցանէ յայտէ
վասն զի չորս են ցանկալիքն, և երեք զօրութիւնք հրաժարականք.
ըստ որոց թիւրութեանց՝ է հրաժարումն
և փախուստ. նմին իրի եօթն միայն են գլխաւորք
մեղք: Արդ՝ մեղքս այսոքիկ երբեմն յայտնապէս
Ա ցուցանեն զինքեանս՝ յորժամ լինին ուղղակի. իսկ երբեմն
կերպարանաւ բարւոյ՝ պատրուակեալ խաբեն:
Ուստի ասէ հպարտութիւն, մի՛ այսորիկ ածիմ իշխել՝
զի կարացից օգուտ լինել: Բարկութիւն ասէ՝ ո՛չ է
պարտ տանել չարեացն, զի մի՛ սովորեսցին 'ի լինել:
Նախանձն ասէ՝ նմին իրի ո՛չ կամիմ այլոց զբարիս՝ զի
մի՛ հպարտասցին: Ծուլութիւն ասէ՝ յաղագս այնորիկ
խնայեմ զիս յաշխատութին՝ զի մի՛ յանդիմանեսցայց
յանխոհեմութէն: Ագահութիւն ասէ՝ մի՛ այն
ժողովելիք են ինչք, զի մի՛ լիցի զողութի, կամ
յափշտակութի: Որկրամոլութիւնն ասէ՝ նմին իրի

անու-

սնուցանելի է զմարմինն խոտիւք , և կերակրօք , և
ըմպելեօք . զի լիցի զօրաւոր 'ի ծառայութի̅ ա̅յ :
Ի բղջախոհութիւն ասէ՝ առ ժամանակ մի պարտ կեալ
ըստ հաճութե̅ մարմնոյն , և յետոյ ուժգնակի առաջխաղել :
Եօթնեքին մոլութիւնք այսոքիկ՝ համեմատին
եօթն գազանաց : Հպարտութիւն առիւծու :
Նախանձն շան : Բարկութիւն գայլոյ : Ծուլութիւն
իշոյ : Ագահութիւն ոզնւոյ : Որկրամոլութիւն արջոյ :
Եւ բղջախոհութիւն խոզոյ : Ըստ այլ եղանակի համեմատին ,
եօթն մոլութիւնքդ՝ եօթնեանց հիւանդութեանց :
Հպարտութիւն այտուցման : Նախանձն դոթութե̅ :
Բարկութիւն խելագարութեան :
Ծուլութիւն բնածութե̅ : Ագահութիւն ջրգողութե̅ :
Որկրամոլութիւն կերցաւոյ : Իսկ բղջախոհութիւնն
ջերման : Արդ եօթն մոլութիւնք այսոքիկ բժշկին
չարչարանօքն Ք̅ի : Քանզի խոնարհումն գլխոյն , յոհան.
բժշկէ զհպարտութի : Աղօթել վասն թշնամեաց՝ 19. 30.
զբարկութի : Բացումն կողին՝ զնախանձ : ղուկ.
Իարձումն խաչին՝ զծուլութի : Աւանդել զհոգին 23. 34.
հօր՝ զմարմինն խաչին՝ զմայրն աշակերտին , զհանդերձն յոհ. 19.
խաչահանողացն՝ բժշկեն զագահութի : 34. 23.
Արբումն լեղւոյն՝ զորկրամոլութի : Հարուածք գանին 29.
և բևեռքն՝ զբղջախոհութի :

Յաղագս հպարտութե̅ : ԳԼ: ԽԵ.

Այժմ ասելի է՝ զեօթնեանց մոլութեանց յատկապէս . և նախ 'ի հպարտութե̅ , որ է մայր և դշխոյ ամ̅ մոլութե̅ց :

Արդ՝ հպարտութի ըստ օգոստինոսի է՝ յօժարութի թիւր բարձրագահութե̅ :

Եւ նոյնն իսկ ասէ , թէ հպարտութիւնն նախանձի ընդ ամենեսեան , այսինքն ընդ վերնագոյնս , զի գերազանցեն քան զնա : Ընդ ստորնագոյնս , զի մի հաւասարեսցին նմա . ընդ հաւասարիցն , զի հաւասարի նոցին : Հպարտութիւն ասի սկիզբն ամ̅ մեղաց՝ վասն երից պատճառաց: Նախ՝ վասն պատճառին , որ գտանի յամ̅ մեղս . քանզի յամ̅ մեղս գտանի խոտումն ա̅յ . որ է պատճառ մեղաց : Իսկ խոտումն այս է՝ յետս դարձումն 'ի ստեղծողէն՝ որ 'ի յամ̅ մեղս է , ուր նախամեծար լինի փո-

փոփոխելի բարին՝ քան զանփոփոխելին. և որպէս առանց
սիրոյ՝ այլք առաքինութիւնք ոչինչ են, այսպէս և
առանց հպարտութեան՝ այլք մոլութիւնք ոչինչ են:

՚Ի բաց հան զհպարտութիւնն. և ունեցիս զշնորհ.
յակ. 4. 6. զի Աստուած ամբարտաւանից հակառակ կայ, և տայ զշնորհս
խոնարհաց: Քանզի սատանայ ձեւն ոչ է ընդունակ,
այլ խորափորն: Երկրորդ՝ զի էր նախկին ՚ի մեղս,
եսայ. վասն զի սա ինքն այս մեղանչեաց սատանայ ՚ի յերկինս
14. 13. ըստ այնմ, եդից զաթոռն իմ յամպս՝ և եղէց նման բարձրելոյն:
ծննդ. Եւ առաջին մարդն ՚ի դրախտին՝ ըստ այնմ եղիջիք
3. 5. որպէս զԱստուած: Երրորդ՝ զի ՚ի նմանէ ծնանին այլք
մոլութիւնք՝ միջնորդութեամբ, կամ անմիջաբար, որպէս
վերնագոյնդ ասացեալ եղև ՚ի եօթներորդ ճառն որ
յաղագս ներգործութեան մեղաց: Արդ զանազանութիւն
է՝ ՚ի մէջ հպարտութեան, և սնափառութեան. զի թէպէտ
՚ի յերկոսեանն է յատուկ յօժարութիւն գերազանցութեան,
սակայն հպարտն՝ երևի ինքեան մեծ ՚ի
ներքս՝ այլ սնափառն ցանկայ երևիլ արտաքոյ գովութեամբ,
բերանով այլոց: Նա և այլք մեղք ասին արմատք,
և սկզբունք, և կամ պատճառք՝ այլոց մեղաց,
այլ զանազան նկատմամբ: Քանզի հպարտութիւն
ասի պատճառ ամենայն մեղաց, վասն վերոյ եդեալ երից
պատճառացն: Նա և ցանկութիւն ասի պատճառ ամենայն
մեղաց, որպէս ասէ Օգոստինոս, և այս վասն հեշտութեան
ստեղծուածոյս, որ անկարգաբար քարշէ
զհոգին, և յետոյ դարձուցանէ ՚ի ծայրագոյն բարւոյն:
Քանզի ցանկութիւն է՝ թիւր կամք, որով շարժի բանական
հոգին առ հեշտալի ստեղծուածս:

ա. տիմ. Այլ և արծաթսիրութիւն՝ ասի արմատ ամենայն չարեաց,
6. 10. որոց ոմանք փափագելով թիւրեցան ՚ի հաւատոյ, որպէս
և ասէ առաքեալն, և այս վասն այն պատճառի, որպէս
և ցանկութիւն, քանզի նաև արծաթսիրութիւն է՝ անկարգ
սէր առ ստեղծուածս: Նա և բղջախոհութիւն
Ա ըստ Կասիանոսի՝ է՝ արմատ ամենայն մեղաց. զի մարմնական
հեշտութիւնքն՝ են մեզ բնականք. վասն այսորիկ
յայսմ ախտիս՝ եմք դիւրաւանք՝ և դժուարաւ կարեմք ընդդիմանամք:
Եւ սնափառութեան են դստերք եօթն
ըստ Գրիգորի: Առաջինն է՝ անհնազանդութիւն, զի
սնափառութիւն ոչ իւիք կամի երևիլ ստորնագոյն, որ
և լինէր իսկ թէ առնէր զպատուիրանն:

Երկրորդ է՝ բանակռութիւն, որ կամի յաղթել աղաղակաւ,
և այնու երևիլ: Երրորդ է՝ պարծումն որով

որ թուէ զբարիս իւր , զի երևեսցի գովելի ։ Չորրորդ՝ կեղծաւորութի̅ , որով խնդրէ ոք երևիլ մարդկան արտաքոյ ։ Հինգերորդ՝ կարկամութի̅՝ զի չարգործոց իւրոց , կամ բանից , լինի ջատագով , զի մի երևեսցի սխալեալ ։ Վեցերորդ է՝ տարաձայնութի̅ , որ ընդդէմ ա̅մ ասացուածոց հակառակի , և առնու զներհակ կոյսն , վասն սնափառութեան ։ Եօթներորդ՝ նորաձևութի̅ , որով ոք յանդգնի ասել՝ կամ գտանել զնոր ինչ՝ զի գովեսցի ։ Այլ չորս են տեսակք հպարտութեան , ըստ գրիգորի ։ Նախկինն է՝ յորժամ մարդն կարծէ յինքենէ ունել զբարին՝ զոր ունի ։ Երկրորդ՝ զի թէպէտ հաւատայ տուեալ 'ի վերուստ՝ սակայն համարի առեալ զայն , ըստ իւրում արժանաւորութե̅ն ։ Երրորդ՝ յորժամ պարծի զինքենէ , ունել զոր ոչ ունի ։ Չորրորդ՝ յորժամ քամահելով զայլս՝ կամի յատկապէս ինքն երևիլ ։ Արդ՝ առաջին և երկրորդ տեսակաւ առնէ մարդն անիրաւութի̅ ա̅յ 'ի յինքն , այսինքն , զի առաջնով առնէ մարդ զինքն՝ բոլոր պատճառ՝ բոլորի բարւոյն իւրոյ ։ Իսկ 'ի յերկրորդն՝ դնէ զինքն նախկինական պատճառ ։ Իսկ 'ի յերրորդն՝ առնէ մարդն անիրաւութի̅ ա̅յ , 'ի յընկերն ։ Իսկ 'ի չորրորդն՝ առնէ մարդն անիրաւութի̅ ա̅յ , յայնմիկ՝ զոր ոչ ունի ։ Իսկ աստիճանք հպարտութե̅ են երկոտասանք՝ ըստ բեռնարդոսի , այսինքն , հետաքրքրութի̅ , թեթևամտութի̅ , անպատշաճ ուրախութի̅ . պարծումն , եզակնութի̅ , ամբարհաւաճութիւն , յանդգնութի̅ . ջատագովութի̅ մեղաց , կեղծաւորեալ խոստովանութիւն , ապըստամբութի̅ , ազատութիւն , և մեղանչելոյ սովորութի̅ ։ Արդ՝ թիւ սոցա առեալ լինի ըստ այսմ օրինակի . մարդն հպարտութե̅ առնէ անիրաւութիւն ա̅յ և ընկերին , ա̅յ որոյ պարտի գոլ վայրագոյն . մարդոյ՝ որոյ պարտի գոլ հնազանդ ։ Յետին երկուքն բացատրին յատկապէս , ըստ այնմ որ լինի անիրաւութի̅ ա̅յ՝ անընդմիջաբար ։ Եւ այլք աստիճանքն՝ բացատրին ըստ այնմ՝ որ լինի անիրաւութի̅ մարդոյ , կամ ա̅յ միջնորդութե̅ մարդոյն , և այս կրկնակի , զի առաջին վեց աստիճանքն՝ բացատրին ըստ անիրաւութեան ընկերին , որոյ պարտէ լինել հնազանդ , և այլք չորքն , ըստ անիրաւութե̅ , որ լինին վերնագոյն մարդոյ , որպէս առաջնորդի ։ Այլ կոչին սոքա աստիճանք , զի լինին յառաջանալ 'ի փոքրագունէն ու մեծագոյնն · քանզի առաջինն է՛ չար · երկրորդն, չարագոյն , և այսպէս ելանելով 'ի վեր · գտանի , զի լիցի յետինն ամենեւին չարագոյն : Ուստի և անիրաւութի որ լինի համահաւասարին՝ է՛ փոքրագոյն : Եւ այն որ լինի վերնագունին՝ է՛ մեծագոյն , իսկ այն որ ընդդէմ այ՟ , ևս մեծագոյն : Վ՟ որոյ և ըստ այսմ եղանակի կարգին աստիճանքս այսօրիկ :

Առդ՝ հպարտութիւն զբաղում չարիս առնէ , նախ իւրացուցանէ՝ որ ինչ է այ՟ , այսինքն , զփառս · որպ՟ ասէ եսայի՝ Ես զփառս իմ այլում ոչ տաց :

Եսայ· 42· 8· Քանզի 'ի բարի գործս մեր զորս առնեմք՝ են երկուք ինչ , այսինքն , պատիւ , և օգտակարութիւն :

Այլ զառաջինն պահէ ա՟ծ ինքեան , և զերկրորդն տայ մեզ : Ուստի պարտիմք թողուլ այ՟ զբաժին իւր , եթէ ոչ կամիմք կողոպտիլ 'ի մերոյն :

Երկրորդ՝ մարտնչի ընդ արս կատարեալս : Քանզի հպարտութի է՝ իբրև զաշտարակն բաբելոնի , որ մինչև յերկինս · այսինքն , մինչև յարս երկնաւորս՝ կամէր հասանիլ : Դարձեալ՝ որպ՟ ասէ օգոստինոս՝ հպարտութին դարանակալ լինի և բարի գործոյն՝ զի կորիցեն : Քանզի հպարտութին է անմարտնչելի , որպէս գղեակ շինեալ 'ի բարձրաւանդակ տեղւոջ :

Երրորդ՝ մերկացուցանէ զմարդն 'ի շնորհաց այ՟ · վ՟
յակ· 4· 6· որոյ ասէ յակոբոս , Տր՟ ամբարտաւանից հակառակ
2· թագ· կայ՝ տայ զշնորհս խոնարհաց : Որ և օրինակեցաւ
1· 21· իսկ յերկրորդ թագաւորութեանց , ուր ասի՝ լերինք գեղբուայ՝ մի իջցէ 'ի վերայ ձեր ցօղ · ուստի բնականաբար՝ սապառօղն ոչ է ընդունակ , այլ խորափորն :

Չորրորդ՝ զրկէ զմարդն յայ՟ , զի ասէ օգոստինոս , ամբարտաւանութի 'ի բաց բառնայ յինէն զա՟ծ , նախանձն զընկերն · և բարկութիւնն , զիս ինքն :

Եկլե· Ամբարտաւանութիւնն՝ է՛ ատելի այ՟ , ըստ այնմ որ
25· 3· ասէ սիրաք իե· երեք են զորս ատէ Տր՟ զաղքատ հպարտն և այլն : Դարձեալ՝ մարտնչի ընդ այ՟ , զի զդրօշակ թշնամւոյ նորա , այսինքն , սատանայի կարգէ յիւրում ամրոցի · և ընկենու զդրօշակն Քի՟ ,
Մատ· այսինքն , զխաչն զոր պարտէ մարդն բառնալ միշտ
16· 24· ընդ ինքեան , ըստ այնմ որ ասէ՝ որ կամի գալ զկնի
յոբ· 41· իմ , բարձցէ զխաչ իւր : Դարձեալ՝ առնէ զմարդն
25· նման սատանայի · քանզի ինքն սատանայ՝ է՛ թագաւոր
յօհան· 'ի վերայ որդւոց ամբարտաւանութեն : Ուստի որպէս
13· 35· ասաց Տր՟ն՝ վս՟ սիրոյն , այսու ծանիցեն եթէ իմ

աշակերտք իցէք, եթէ սիրիցէք զմիմեանս · այսպէս և սատանայ կարէ ասել յայսմիկ ծանիցեն, թէ իմ աշակերտք իցէք, եթէ հպարտանայցէք ։
Դարձեալ՝ ցուցանէ զմարդն յիմար, զի զարդարէ զաղախինն՝ և թողու մերկ զտիկինն ։ Դարձեալ՝ զի զմեծն վաճառէ ընդ փոքու, այսինքն, ընդ գովութէ մարդկայնոյ ։ Դարձեալ՝ կարծէ կարել ելանել անդ՝ ուր սատանայ կալոյն անդ՝ ոչ կարաց մնալ ամբարտաւանութբ հանդերձ ։ Դարձեալ՝ գահավիժէ զմարդն, զի հեշտին ելեալքն 'ի բարձունս՝ դիւրաւ անկանին · և որք բարձրացուցանեն զինքեանս ընդ խոնարհ դրանէն զարկուցեալ ճմլեն զգլուխն ։

Յաղագս նախանձու · Գլ· ԺԶ

ՆԱխանձն որպէս ասէ օգոստինոս՝ է՝ ատելութի բարեբաստութե այլոց ։
Կամ ըստ Դամասկացւոյն · նախանձն է տրտմութիւն, զայլոց բարեաց ։
Արդ՝ նախանձն ըստ ստուգաբանութեն լաթին լեզուի՝ ասի յոչ տեսանելոյն, զի ոչ կարէ տեսանել զբարիս այլոց ։
Ուստի անհաճութի բարւոյ որ է նախանձ, կարէ նշանակիլ տեսութբ ներքնայնով, և արտաքսականաւ, որպ ասէ սենեքա, յորժ փախչիմք մուք, հազիւ տեսանեմք զշարժմունս նորին՝ աչօք ։
Նախանձն ունի դստերս հինգ, ըստ Գրիգորի
Նախկինն է՝ ատելութի, որ է կամիլ ումեք զչար և ոչ զբարի ։ Ա
Երկրորդն է ցնծութի 'ի յանաջողութիւ ընկերին ։ Երրորդն է՝ նեղանալն 'ի յաջողմունս ընկերին ։ Չորրորդն է՝ շշնջիւն, որ է գաղտ բամբասանքն ։ Հինգերորդ է բամբասանքն որ լինի յայտնապէս · քանզի ցանկայ լաւագոյն երևիլ քան զայն զոր բամբասէ ։ Արդ՝ նախանձն զբաղում չարիս առնէ ։ Զի կուրանայ 'ի լուսոյն, զի զբարին ընկերին ոչ կամի տեսանել, որով նմանի գիշերահաւու, և ջղջիկանի · զի ասէ՝ օգոստինոս, բժոտ աչացն ատելի է լոյսն, որ առողջացն է սիրելի ։ Մեռանի 'ի կենաց, ուստի ասէ Գրիգոր, հացն զկեանս ուժեղաց զօրացուցանէ, իսկ զտղայոյն սպանանէ ։

Ուստի նախանձոտն՝ համեմատի տառապելոյ ջերմամբ , որոյ և բարի կերակուրն իսկ վնասէ՛ ։ Է՛ ընդդէմ ա՟յ . զի այնքան բարի է ա՟ծ , որպէս առէ օգոստինոս , մինչ զի 'ի չարեացն զբարիս արտաբերէ . այլ ընդդէմ այսմ, նախանձոտն՝ այնքան չար է մինչ զի 'ի բարւոյն արտաբերէ զչար ։

Դարձեալ ա՟ծային բարութիւնն հաղորդէ զա՟մ բարիս իւր՝ այլոց . իսկ նախանձոտն ոչ ։ Դարձեալ
տիտ. 1. ա՟յ հաճոյ է բարին մարդոյ , և անհաճոյ չարն . այլ
15. նախանձոտքն՝ սոցա ներհակ . զբարին շնորհաց , և զբնութեան , թիւրեն ։ Ուստի՝ որպէս ա՟մ ինչ սբ՟ է սրբոց , այսպէս՝ ա՟մ ինչ անսբ՟ է նախանձոտացն ։ Եւ որպէս բարեացն՝ չարիքն գործակից լինին 'ի բարիս , նոյնպէս՝ նախանձոտաց՝ բարիքն գործակից լինին 'ի չարն ։ Վ՟ս որոյ այսպիսիքս՝ դարձուցանեն զոսկին՝ 'ի պղինձ . զակունս՝ 'ի կաւ . զցորեանն՝ 'ի յարդ . զգինին՝ 'ի ջուր . զմեղրն՝ 'ի լեղի . զօրն՝ 'ի գիշեր . զուրախութիւն՝ 'ի տրտմութիւն . զվարդն՝ 'ի
եսայ. 5. փուշ , զպալատանն՝ 'ի յաղբ . զանուշ դեղն՝ 'ի մահե-
20. թոյնս ։ Անիծանէ զայնպիսին՝ եսայի . քանզի առէ , վա՛յ որ առէ զչարն բարի , և զբարին չար ։

Յիմարեցուցանէ , զի կամի նախանձոտն՝ փորել ինքեան զմի ակն իւր , որպէս զի այլում , նա և մինն փորեսցի . այսպէս առնէ նախանձոտն՝ և սատանայ . ևս զի այնու որ նախանձի ընդ այլոց՝ առաւել վնասէ՝ ինքեան ։ Դարձեալ՝ չարչարէ զստացօղն իւր , զի առէ սենեկայ ։ Օ՛հ թէ նախանձոտքն ունիցէին զաչս՝ և զականջս յա՟մ քաղաքս , զի չարչարիցեին 'ի յաջողմանց ամենեցունց ։ Դարձեալ՝ խորամանկութե՟բ խաբէ զըն-
մատ. 26. կերն ։ Ուստի նախանձոտն համեմատի շան , որ շո-
49. ղոքորթէ յերեսս , և խածանէ 'ի ծածուկ ։

Նաև յուդայի՝ որ համբուրելով մատնեաց զՔ՟ս ։ Դարձեալ՝ անհաւատ մարդոյ՝ որ վնասեաց այնմիկ՝ որ ոչ երբեք նեղեաց զնա ։

Յա-

Յաղագս բարկութեան : ԳԼ. ԺԷ.

Բարկութիւն է՝ որպէս ասէ Օգոստինոս, տենչումն վրէժխնդրութեան : Իսկ ըստ Քասիոդորոսի, բարկութիւն է՝ գրգռեալ շարժումն հոգւոյ առ ՚ի պատիժ :

Այսպիսի են սահմանք բարկութեան մոլեկանի, ոչ բարկութեան, որ է բարի նախանձախնդրութեան : Եւ գիտելի է՝ զի բարկութիւն ունի զկրկին գոլ, այսինքն, զգոլ բնական և զգոլ բարոյական : Արդ՝ ըստ այնմ որ անկարգանայ ՚ի բարւոյն, ունի զբարոյական գոյն, որով և է իսկ մոլութիւն : Քանզի բարկութիւն ոչ է մեղք՝ ըստ այնմ որ է կիրք, այլ մանաւանդ՝ պատիժ · բայց մինչ այս նշանակէ զներգործութիւն իմն, որով անկարգ կացուցանէ զմարդն, որ քան առ ա̃ծ, և որ քան առ ընկերն՝ է մեղք : Քանզի կամի ինքեամբ առնուլ զվրէժ, որ ոչ վերաբերի առ նա, այլ առ ա̃ծ, կամ առ դատաւորն, կացուցեալ ՚ի ներքոյ ա̃յ : Ա

Այլ թէ արդեօք պարտական է ոք, թողուլ զարարեալ անիրաւութիւն թշնամւոյն, որ խնդրէ զթողութիւն : Ասելի է՝ թէ ՚ի յարարեալ անիրաւութենէն, երեք իրք սովորք են ելանել : Առաջինն է՝ ոխն, որ է ՚ի յախորժակին : Երկրորդ՝ նշան ոխին՝ որ ՚ի գործն : Երրորդ՝ վնասն, որ ընդդէմ առնողին զանիրաւութիւն : Արդ զառաջինն՝ իւրաքանչիւրոք պարտի առժամայն թողուլ, նա և թէ ոչ աղաչեցեալ լիցի :

Բ Գ Զերկրորդն պարտաւորի թողուլ այնմ որ խնդրէ զթողութիւն անկեղծ սրտիւ, և լինիցի պատրաստ առնել զփոխարէնն ըստ իւրում կարողութեան :

Զերրորդն՝ ոչ է պարտական թողուլ : Իսկ եթէ կամիցիս գիտել · արդեօք այն՝ ընդդէմ որոյ եղեալ է յանիրաւութիւն, պարտի խնդրել զսիրելութիւն :

Ասելի է՝ թէ կրկին է պարտքն, առաջինն է հարկաւորութեան, առանց որոյ ոչ գոյ փրկութիւն :

Երկրորդն է՝ կատարելութեան : Ըստ առաջին կերպի պարտուցն՝ ոչ է պարտական ոք խնդրել զհաշտութիւն, կամ զբարեկամութիւն · իսկ ըստ երկրորդին՝ ասէ Ոսկեբերանն, թէ պարտի խնդրել զհաշտութիւն, զի առնուցու զկրկին պսակս : Զմինն՝ վասն զի կրեաց զանիրաւութիւն, եւ զխիւսն՝ վասն զի յառաջագոյն աղաչեաց : Տրն դնէ, զերիս աստիճանս յաղագս պարտաւորութե բարկութե, ընդ ասելն. թէ որ բարկանայ եղբօր իւրում, պարտաւոր լիցի դատաստանի : Եւ որ ասէ մորոս, պարտաւոր լիցի ատենի : Եւ որ ասէ յիմար, պարտաւոր լիցի գեհեան հրոյ : Արդ՝ յայտնապէս գիտելի է՝ զի ուր աճեաց աստիճան մեղացն, աճեաց եւ կարգ վճռոյն : Մատ. 5.22.

Ուստի պարզ բարկութեանն առանց ձայնի, աւանդի դատաստանի. եւ բարկութեանն հանդերձ ձայնիւ, ատենի. իսկ բարկութիւն՝ հանդերձ նախատանօք, գեհեան հրոյ : Արդ ըստ օգոստինոսի, 'ի յառաջինն է՝ բարկութի միայն : 'Ի յերկրորդն՝ բարկութիւն, եւ խօսք : Իսկ 'ի յերրորդն բարկութի, եւ յայտնութիւն նախատանաց : Եւ գրիգոր ասէ՝ թէ դատաստանն է՝ քննութի վճռոյն. ատեանն է՝ աւարտումն վճռոյն. իսկ հուր գեհենոյն է՝ 'ի գործ ածել զվճիռն :

Եւ գիտելի է՝ զի հատուցանել չար՝ փոխանակ չարի է՝ անիրաւութե. զոր արար յովաբ. երբ եսպան զաբեներ, այսինքն, զսպանօղն ասայելի եղբօր իւրոյ. 2. Թագ. 3.27. Եւ հատուցանել չար՝ փոխանակ բարւոյ՝ է՝ թիւրութե, զոր արար յուդայ՝ մատնելով զՏրն :

Եւ հատուցանել բարի՝ փոխանակ չարի է՝ կատարելութե, որպէս արար ստեփաննոս՝ աղօթելով 'ի վերայ թշնամեացն : Իսկ հատուցանել բարի՝ փոխանակ բարւոյ է՝ ուղղութե, զոր արար արտաշէս պատուելով զմուրդքէ : Իսկ դստերք բարկութե, ըստ գրիգորի են վեցք : Առաջինն է՝ կռիւն, սա է կամք համարձակ խնդրելոյ զվրէժ ինքեամբ՝ վասն կրեալ անիրաւութեն : Երկրորդ՝ է ուռուցումն մտացն, եւ այս կամք խնդրելոյ զվրէժս պատճառաւ փախչելոյ 'ի յոսոխէն զի մի՛ գուցէ խօսակցիցի ընդ նմա, վասն կարծեցեալ թշնամութեանն : Երրորդն՝ է նախատինքն՝ եւ այս է կամք՝ խնդրելոյ զվրէժս՝ արհամարհանօք չարեաց : Չորրորդն՝ է աղաղակն, որ է կամք վրէժխնդրութե, բարձրացուցանելով զձայնն՝ նախատանօք հանդերձ, հասեալ մինչեւ յականջս այլոց : Հինգերորդ՝ է զայրացումն՝ որ է կամք վրէժխնդրութե, նշանաւ նեղութե, ցուցեալ արտաքուստ : Վեցերորդ՝ է հայհոյութի, սա է կամք խնդրելոյ զվրէժս, տալով նախատինս այ, եւ մարդկան, եւ սրբոց : Արդ՝ 'ի բարկութենէն յառաջ գան բազում չարիք :

Մատ. 26.49.
Գործ. 7.59.
Եսթ. 6.1.

ղիք ։ Քանզի ամբոխէ զօթեւանս ոգւոյն սրբոյ ։
Որպէս ասէ Գրիգոր , յորժամ բարկութիւնն բախէ
զմիտս՝ ամբոխէ զօթեւան ոգւոյն սրբոյ ։ Վասն զի ո՟պ
'ի խաղաղութեան եղեալ է տեղի ա՟յ , այսպէս 'ի տա- սաղ.
րաձայնութեանն՝ եղեալ է տեղի սատանայի ։ 75.3.
Նաև այսպիսիքս՝ են այրիչք տանն ա՟յ , որպէս ասէ
սաղմոս , այրեցին 'ի հուր զսրբութի՟ քո յերկրի ։ սաղ.
Ուստի այսպիսիքս՝ են նման մլիշակին , որ արտաշնչէ 73.7.
զհուր 'ի բերանոյ իւրմէ ։ Դարձեալ՝ որ ինչ ա՟յ է՝
իւրացուցանէ ինքեան , այսինքն , զվրէժխնդրու-
թիւն , ըստ այնմ որ ասէ , իմ է վրէժխնդրութի՟ , օրին.
և ես հատուցից։ Այնպիսին՝ զինքն առնէ դատաւոր , 32.35.
և կամի զի ա՟ծ լինիցի նմա դահիճ , ո՟պ ասէ օգոստի-
նոս՝ թէ չարին՝ ասէ յաղօթս իւր , Տ՟ր , սպան զչար
թշնամին իմ ։ Պատասխանէ տ՟րն , զո՞րք 'ի ձէնջ
սպանից , զի երկոքեանքդ եւս էք չար , և զոր ինչ
ամաչէք դուք առնել՝ կամիք զի ես արարից ։
Այլ և այսպիսին՝ կամի լինել վճռօղ , և դատաւոր , 'ի
նոյն վճռի ։ Դարձեալ՝ յիմար ցուցանէ զինքն՝ առ 'ի
յանցուցանել զսուրն 'ի սիրտ իւր , առ 'ի հատանել
զգեստ թշնամւոյն իւրոյ ։ Այլ թէ իմաստութե՟
առնէր՝ նախ առնոյր վրէժ յինքենէ , այսինքն , նա-
խանձայոյզ բարկութե՟ն՝ ընդդէմ մոլեկան բարկու-
թե՟ իւրոյ ։ Դարձեալ՝ զմաքրողական խարտոցն՝ փո-
խէ 'ի ժանկ թիւրութե՟ ։ քանզի նեղութիւնքն՝ որք
պարտին ջնջել զմեղս նորա , անհամբերութեամբն
առաւել աղտեղացուցանեն զնա ։ և հրահալոցի նոցա
փոխէ զոսկին 'ի պղինձ ։ և թափիչն՝ զցորեանն առնէ
յարդ ։ Ուստի սպառնացէ այնպիսին՝ խստագոյն պատ-
ժոյ ։ Քանզի թէ Տ՟րն նախատեսցէ զոմանս՝ ասե- մատ.
լով , մերկ էի և ոչ զգեցուցիք զիս , զինչ ասելոց է 25.43.
այնոցիկ , որք ոչ միայն զմերկն ոչ զգեցուցանեն , այլ
և զզգեստաւորեալսն մերկացուցանեն ։ Դարձեալ
յարուցանէ ընդդէմ ինքեան զպատերազմ աշխարհի ,
զմարմնոյ , և զսատանայի ։ Այլ իմաստունքն հան-
դարտեցուցանեն զփոքրագոյն կռիւն , վասն մեծա-
գունիցն՝ որք սպասենն ։ Դարձեալ՝ առնէ չար փո-
խարէնս , զի բարձողին նման զբաժակին բարեհամ-
բաւութե՟ իւրոյ , տայ դշխոյ անմեղութե՟ ։
Արդ՝ հնարք բարկութե՟ են ։ Նախ՝ լռելն ։ զի ասէ
յառակսն , յորժամ պակասեսցի փայտն , շիջանի հուրն ։ առակ.
քանզի ո՟չ 'ի բախմանէ երկուց կարծրագոյն մար- 26.20.
մնոց ,

Առակ. 15.18. մնոց , ելանէ հուր , այսպէս 'ի դառնագոյն խօսից բանսարկուացն ելանէ բարկութի : Երկրորդ՝ կակուղ պատասխանին խորտակէ զբարկութի , և բան խիստ՝ զարթուցանէ զքրտմնութիւն , որպէս թէ ոք ըմբռնէ զշան ցեռոյ : Երրորդ՝ մտածումն տէրունական չարչարանացն , զի ասէ գրիգոր , եթէ ոք զչարչարանս Տն ածիցէ զմտաւ , ոչ ինչ լիցի այնքան խստագոյն՝ որում ոչ համբերեսցի հանդարտ մտօք : Եւ այս նշանակեցաւ 'ի վիրաւորելսն , որ 'ի գիրս Թուոց. 21.8. Թուոց , որք հայելով 'ի ձողաբարձ օձն բժշկեէին։ Չորրորդ՝ մտածումն յաւիտենական վարձուցն , զի ասէ գրիգոր , թէ մտածումն վարձուց՝ թեթևացուցանէ զուժգնութի ձաղանաց։

Յաղագս ծուլութե : ԳԼ. ԺԸ.

Ծուլութիւն է՝ խեղաթիւր անկումն՝ երկաքանչիւրոյ մարդոյն , 'ի դողելն վարժմանէ առաքինութեց : Եւ կամ այսպէս՝ ծուլութիւնն է՝ անաշխատասիրութի 'ի յառաջ զօրութիս իւր , և կարի իմն տրտմութի զդժուարութե կատարելոյ զպատուիրանն այ : Արդ կրկին է անուն մոլութես այս , այսինքն , ծուլութի , և տրտմութի . որոյ պատճառն է , զի 'ի մեղքս այս՝ է՛ յետս դարձումն 'ի հոգևոր բարեացն , որ համարեալ լինի ծանր իմն , ոպ է պահելն , և հսկելն , և սոյնպիսիք , և վասն այնմ պատճառի՝ ասի տրտմութիւն :

Նա և է անդրադարձումն առ ստեղծուածս , այսինքն , առ հանդիստն , որ կարծեցեալ լինի հեշտալի , և ըստ այսմ՝ կոչի ծուլութի : Արդ յայտ յասացելոցս՝ զի մոլութիս այս , ըստ այնմ որ անուանի տրտմութիւն , հակակայ հոգևոր ուրախութեան , որ է 'ի գործս հոգևորս : Իսկ ըստ այնմ որ ասի ծուլութի , ներհակի արիութեան , որ կայանայ 'ի ձեռնարկումն դժուարագունից , և 'ի տանել անյաջողութեց :

Արդ՝ ծուլութիւնն ըստորում ստորադասանի 'ի լաթինս , ասի թըլթուութիւն՝ զի այնու հոգին ունի
Ա պղտորութի՝ առ յամ հոգևոր դժուարին բարիս : Իսկ ծուլութիւնն ըստ գրիգորի՝ ունի զդստերս վեց։ Առաջինն է՝ չարութի , որ է ըստ օգոստինոսի կամք

նիւ

նիւթելոյ չարիս այլում՝, քանզի յորժամ ոք առնէ անիրաւութի միւսոյն՝ յայնժամ բարկանայ, և յետոյ տրտմի ։ Երկրորդ՝ յուսահատութի, զի անապաստանութի արդեանցն է մայր անապաստանութեան վարձուցն, յորմէ դարձեալ ծնանի տրտմութի ։

Երրորդն է՝ երկչոտութի՝ որ ծնանի 'ի յանապաստանութենէ յառաջ եկելոյն 'ի մտածմանէ տկարութեանն իւրոյ, կամ 'ի դժուարին գործոյ ։ Չորրորդ՝ է ոխն, որ է հնացեալ ատելութիւն ։ Քանզի որպէս 'ի սիրոյն, յառաջ գան գործք բարիք՝ յորոց է հաստատութիւն սիրոյն, այսպէս 'ի բարկութենէն ծուլութի, և 'ի ծուլութենէն հնացեալ ատելութիւն ։ Հինգերորդ՝ է տարտամութի առ պատուիրանսն, այսինքն, անհամակերպականութի իմն, վասն որոյ ոչ կարէ առնել մարդն առ 'ի կատարումն պատուիրանացն այ ։ Վեցերորդ՝ տատանումն մտաց՝ առ անպատշաճն, և այս՝ երբեմն է մասնաւոր, և ունի զատոյգ նիւթ, և ըստ այսմ յարմարի ամ՟ մոլութեանց ․ և երբեմն՝ է ընդհանրական և ոչ բացատրեալ, և այս է յատուկ տատանումն ծուլութեան ։ Քանզի որ է ապշեալ տրտմութբ՝ ոչ ունելով յինքեան 'ի յորում հեշտասցի, տատանի յամենայն խնդրելով զհեշտութի ։ Այլ՝ 'ի ծուլութենէն դիպին բազում չարիք ․ քանզի հեռանայ 'ի պատուիրանս Տն՝ որ ասէ՝ քրտամբ երեսաց քոց կերիցես ։ Ծննդ․ 3․19․ Անկանի յանէծս ըստ օրինակի թզենւոյն՝ զոր անէծ Տրն վասն ունելոյն տերև միայն ։ Մատ․ 21․19․ Լինի տարաձայն յայլոց առեղծուածոցս որպէս յայտ է՝ 'յանշունչ մարմինս, այսինքն, 'ի յարեգակն՝ և 'ի լուսինն, որք օրաստօրէ յառնեն, և կատարեն զընթացս իւրեանց ։

Նա և յայտ է 'ի մարմինս անզգայականս, որպէս են տունկք, և բոյսք ․ որք թէպէտ մերկանան 'ի ձմերայնի, սակայն պահեն զզօրութի, և յիւրում ժամանակի դառնան 'ի առողջութիւն իւրեանց ։ Նոյնն՝ ցուցանի և 'ի զգայականն, ըստ այնմ որ ասէ յառակսն ․ երթ Առակ․ 6․6․ առ մրջիւնն ո՛վ ծոյլ ։ Դարձեալ՝ կորուսանէ զպատուական ժամանակն ․ քանզի ո՛չ ինչ պատուականագոյն 'ի կեանս յայս՝ քան զժամանակն ․ քանզի փոքր մի ժամանակ՝ կարէ ոք գտանել զթողութի մեղաց, զշնորհս՝ և զփառս ։ Այլ սակայն՝ ըստ բեռնարդոսի, ո՛չ ինչ անարգագոյն համարեալ լինի քան զժամանակն ․ Իմաս․ 2․6․ զի ասեն դատարկակեացքն՝ ․ եկա՛յք անցուսցուք զժամանակ ։ Հեռանայ 'ի հոգևոր վաստակն ․

զի որ աստէն ոչ առնէ զխոստովանութիւն , յետոյ
առակ. զոչ ինչ շահեսցի : Ուստի ասէ յառակսն , վս՟ ցրտոյ
20.4. ոչ կամեցաւ ծոյլն հերկել՝ յետոյ մուրասցէ , և ոչ
ոք տայցէ նմա : Հաւաքէ յինքն զդրդումունս մոլու-
առակ. թեց , որպէս ասէ յառակսն , անցի ընդ անդաստանս
24.30. ծուլին , և ահա ամ՟ լի էր փշօք : Դարձեալ՝ ապակա-
նի հանգուցեալ ջուրն , և երկաթն քարշէ զժանգ ,
և զենլի խոզն՝ թոյլ տուեալ լինի պարարել 'ի հան-
գստեան : Յարդարէ տեղի սատանայի , զի այր դա-
տարկակեաց՝ փետրալից բարձ է սատանայի . և 'ի
սոյնս եղկս՝ մտանեն բազմութիւնք ձանձից , որք
փախչին յեռանդէ : Է՛ բացեալ դուռն՝ ամենից փոր-
ձութեց : Քանզի գրեալ է 'ի վարս հարանց , թէ
զգործունեայ աբեղայն՝ բախէ մի դև , իսկ զդատար-
կակեացն՝ անթիւ : Զի է ծոյլն՝ որպէս զքաղաք
առանց պարսպի՝ և ոչ՟ ընչաւակ նետի : Դարձեալ
թիւրէ զկարգն , զի կամի հնձել , և ոչ սերմանել .
որպէս կատուն՝ որ յօժարութբ՟ կամի ուտել զձուկն,
այլ ոչ կամի բնաւ մերձենալ 'ի ջուրն :

Այլ արդ՝ ըստ սենեքայ՝ տարակոյս է՝ թէ որպէս և
յորում տեղւոջ սպասէ քեզ մահն , վ՟նկ յամ՟ ուրեք
և միշտ՝ դու սպասեա՛ նմա : Դարձեալ ծուլութիւն
ոչ փախուցանէ զորմնափոր գողն, զի մտանէ գող, և
օրստօրէ բանայ զքար մի , այսինքն , զմի օր , ուստի
մատ. ասէ մատթէոս , եթէ գիտէր տանուտէրն , և այլն :
24.43. Դարձեալ առնէ զինքն ընդունարան սխալից, զի ասէ
բեռնարդոս , ամ՟ փորձութեց աղբիւր է՝ դատար-
կութիւն : Վ՟ զի նա է առիթ բղջախոհութե , որպէս
ասի Բ՟. թագաւորութեանց , և եղև 'ի ժամանակին
2. թագ. յայնմիկ՝ յորում թագաւորք սովորէին գնալ 'ի մարտ,
11.1. և առաքեաց դաւիթ զյովաբ , և ինքն նստաւ յէմ՟,
և երեկոյին մինչ զգնայր՝ ետես զբերսաբէ , և այլն :
Դարձեալ՝ է՝ պատճառ առասպելեաց , որպէս ասէ
գործ. 'ի գործսն . եթէ աթենացիք՝ ոչ յայլ ինչ պարա-
17.21. պէին , բայց միայն նորագոյն բանից : Դարձեալ է
1. տիմ. պատճառ հետաքրքրութե , ոպ՟ ասի առ տիմոթէոս,
5.13. շրջին տանէ 'ի տուն : Դարձեալ ցուցանէ զինքն
յիմար՝ զի լռեալ զձայն որոտման՝ և ոչ զարհուրի .
արդ՝ որոտաց քն՟ 'ի բարբառելն իւրում , և 'ի վերայ
յհան. խաչին . նա և որոտալոց է յաւուր դատաստանի :
12. 44. Դարձեալ յիմար է , որ ոչ կամի մաքրել զաղտս յա-
մատ. 7.5 չաց իւրոց , ըստ այնմ կեղծաւոր հան նախ զգերանն

Դարձեալ՝ հեղգանայ ժամանել 'ի յերկինս ․ քանզի ոչ կարէ հասանիլ 'ի յօթեւանն որ այսօր շարժէ միայն զմի ոտն , եւ զկնի միոյ ամի՝ ապա զմիւսն ։

Այսպէս եւ այն, որ միայն շարժէ զիմացականն , եւ ոչ զախորժականն , ոչ երբեք հասցէ 'ի վախճան իւր ։ եւ այն զի պարտ է քայլել բաղձանօք ախորժականայն ։

Յաղագս արդարութեան ։ Գլ․ ԺԹ․

Արդարութիւն , որպէս ասէ Թուլիոս՝ է՝ անխարդ սէր ունելոյ ։ Դարձեալ՝ ըստ բեռնարդոսի , արդարութիւն է իւրաքանչիւր իւրի՝ անյարդ , եւ անհամեմատ տենչումն ։ Եւ ըստ առաքելոյն , արդարութիւն ասի կատարելութիւն, զի արդարն մատուցանէ ստեղծուածոյն , զոր ինչ պարտի ստեղծողին , այսինքն , զհաւատն՝ զյոյս , եւ զսէրն ․ վա զի զայսոսիկ ագահքն տան արծաթոյն ։ Եփես․ 5․5․

Եւ 'ի յայս ինչ յանդիմանեալ լինին յատկապէս , զի անարգագոյն իրի տան զսէրն իւրեանց , այսինքն , արծաթոյն , որ եւ լինի հանեալ յերկրէ՝ զոր բնութիւն կարգեաց ստորնագոյն ։ Ուստի ասէ Սիրաք , թէ քան զագահն՝ ոչ ինչ է եղեռնագոյն, եւ այս վասն չորից պատճառաց ։ Նախ՝ զի իբր թէ ամ̃ չարիք , վս ագահութեան գործեալ լինին , որպ̃ գողութիւն , սպանութիւն , երդմնազանցութիւն , եւ այսոսիկ ։ Եկլես․ 10․10․

Երկրորդ՝ զի է ընդդէմ բնական օրինաց , որպ̃ ասէ Ղուկաս , զոր ինչ կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ , արարէք եւ դուք ։ Երրորդ՝ է ընդդէմ գրաւորական օրինաց , եւ աւետարանին , ըստ այնմ որ ասէ , եղերուք գթածք ։ Չորրորդ՝ է ընդդէմ ընդհանրական օրինաց , զի ամ̃ իր , որ է յամ̃ իրողութիւն՝ բնութեանն տալ զինքն ․ իսկ ագահն , իբրեւ զգերիս պահէ զդրամն , զի մի կարասցեն հաղորդել զինքեանս այլում ։ Ղուկ․ 6․31․ Ղուկ․ 6․30․

Արդ՝ թէ ո՞յր ուրուք արժանէ ժողովել զգանձս ։ Գիտելի է՝ թէ գանձել զինչ՝ կամօք ագահութեան , առանց դիտաւորութեան պիտոյից ինքեան , կամ այլում ․ գանձելն ըստ այսմ եղանակի է՝ արգելեալ յամենեցունց ։ Իսկ ըստ այլոյ եղանակի գանձել զինչ՝ նախահոգութեամբ ․ եւ այս վս հարկի պիտոյից , եւ ըստ այսմ արժան է աշխարհականաց գանձել վասն

պիտոյից որդւոց մանկանց , կամ դստերաց , որք են
2. կոր. զուգակցելք արանց , այլ ոչ առ 'ի փարթամացուցա-
12. 14. նել , այլ ըստ կերպի իւրում որպիսութեան :
Նաև է գանձել զինչ' առ 'ի պէտս հասարակաց օգ-
տութե̄ , այսինքն , առ 'ի պահպանութի̄ թագաւո-
րութե̄ . կամ առ 'ի ընդարձակացուցանելոյ զպաշ-
տօնն ա̄յ , և ըստ այսմ կարեն գանձել թագաւորք :
Իսկ յատկաբար' եկեղեցական անձանց' ոչ երբեք է
օրէն գանձել . և ոչ ժողովել զդենարս' դիտաւո-
րութե̄ պահելոյ , բայց միայն բաշխելոյ :
Զի ասէ Ամբրոսիոս , եկեղեցի ունի զոսկի' ոչ զի
պահեսցէ , այլ զի բաշխեսցէ : Արդ' յասացելոցս
յայտ է' զի կրկին կերպիւ լինի սէր արծաթոյն , և կամ
ժամանակաւոր գոյից , այսինքն , նկատմամբ հար-
կաւորութե̄ , կամ նկատմամբ աւելորդութե̄ :
Ա
Մատ. Ընդդէմ առաջնոյն' արգելու Տ̄ր զհեղձուցիչ հոգն :
6. 17. Եւ ընդդէմ երկրորդին' արգելու զգանձելն :
Արդ' 'ի յագահութենէն հետևին բազումք չարիք :
Նախ' զի անիծանի 'ի Տ̄նէ : Զի ասէ Օգոստինոս'
անիծեալ է մատակարարն ժլատ , որոյ առատ է Տ̄րն
Երկրորդ' զի ագահն միշտ կարօտանայ . զի ասէ Յե-
րոնիմոս' ագահին այնպէս պակասի զոր ունի , որ քան
զոր ոչ ունի : Երրորդ' զի է յիմար վաճառական , զի
Մատ. զարքայութիւնն , և զՔ̄ս , վաճառէ ընդ սակաւ
26. 15. դենարաց . և ըստ այսմ վատթարագոյն է ագահն
քան զՅուդաս , որ ընդ երեսուն դենարս վաճառեաց
զնա . իսկ սա երբեմն և ընդ միոյ դենարի :
Չորրորդ' մաշէ զմարմինն զի մեծութիւն' ստացեալ
լինի աշխատութե̄ , ժառանգի երկիւղիւ , և կորու-
սանի ցաւօք : Ուստի նոքա վաստակին , և բազմիցս
Յոհան. այլք մտանեն 'ի վաստակս նոցա , այսինքն , գողք ,
4. 38. կամ յափշտակողք , կամ չար որդիք : Որպէս նմանի
սարդից' որք վասն որսալոյ զճանճս' արտաքարշեն զա-
ղիս իւրեանց : Հինգերորդ' հեղձուցանէ զմիտս' զի
ասէ Օգոստինոս , փախչիս 'ի նաւաբեկութենէ , և զիրկս
արկանես կապարի : Ուստի սոկրատէս' զանկուած
արծաթոյն ընկէց 'ի ծով , ասելով ընկղմեցից զքեզ'
զի մի' ընկղմեսցես զիս : Վեցերորդ' աղտեղացուցա-
Ելից. 1. նէ' զի ասէ Ելիցն . որդիքն իսրայէլի ծառայէին 'ի
13. գործ կաւոյ , և աղիւսոյ : Եօթներորդ' կուրացու-
տոբ. 2. ցանէ , որպէս յայտ է 'ի տօբիթ , որ կուրացաւ 'ի
18. յաղբոյ ծիծռանց : Ութերորդ' պատառէ զմիտն ,

ուստի մեծութիւնն՝ համեմատանի փշոյ ։ Իններորդ՝ է՛ ղուկ.
անյագ, ուստի նմանի ծակոտեալ քրձի, և դժոխոց, 8.14.
որք ոչ երբէք ասեն շատ ։ Եւ ծովու՝ յոր ամ գետք առակ.
մտանեն, այլ սակայն՝ ոչ երբէք արտահոսէ ։ 30.16.
Նա և ջրգողն, որ որքան առաւել ըմպէ, այնքան ժող.
առաւել ծարաւի ։ Այլ և ստոյն գործոյն՝ որ ոչ 1.7.
համարձակի ուտել ՚ի հացէն. եթէ ոչ այնքան որ չափ
ուտիւքն բանտոյ՝ երկնչելով, մի՛ գուցէ սպառեսցի
նմա ։ Իսկ դստերք ագահութեան են եօթն՝ ըստ Գրի-
գորի ։ Առաջինն է՝ խստասրտութիւն, և այս լինի
զանցառնելովն գթութեան. և զսա կոչէ Գրիգորիոս
անմարդութիւն ։ Երկրորդ՝ բռնութիւն, և այս լինի զհա-
նելով ուժեք յայլնաւորէս, կամն սպառնալեօք չարեաց.
և զայս կոչէ Գրիգորիոս յափշտակութիւն ։
Երրորդ՝ անհանդարտութիւն, և սա է ցանկութիւն շահիցն ։
Չորրորդ՝ ստերդմնութիւն, որ բազում անգամ լինի ՚ի
գնելն և ՚ի վաճառելն ։ Հինգերորդ՝ պատրանքն, որ
լինի գաղտ խաբողական բանիւք ։ Վեցերորդ՝ է
դաւաճանութիւն, և այս է կատարեալ խաբել՝ ներկայ
գոլով այնմ որ խաբի ։ Եօթներորդ՝ մատնութիւն,
և այս է խաբէութիւն, արարեալ ՚ի բացեայ գոլով
այնմ որ խաբի ։

Յաղագս որկրամոլութեան ։ Գլ. Ի.

Որկրամոլութիւն է, որպէս ասէ Օգոստինոս,
անկարգ ցանկութիւն կերակրոց ։
Եւ կամ այսպէս, որկրամոլութիւնն է
կլանող ուտումն, ոչ համաձայնեալ կարա-
րայ բնութեան ։ Արդ՝ հինգ եղանակաւ
մեղանչէ որ ՚ի յորկրամոլութեան, ըստ
Գրիգորի ։ Նախ՝ յորժամ յառաջէ որ՝
քան զժամ ուտելոյն. և այս լինի ի անհամբերու-
թե, որ ոչ սպասէ դիպող ժամուն ։ Երկրորդ՝
յորժամ խնդրէ որ զազնիւ և զխորտիկ կերակուր,
զորոց ասէ յակոբոս, է առաջինութիւն ողորկեշրա-
նալ ՚ի համեղի կերակրոց ։ Ընդ դէմ այսմ արար՝
խորտկաւէք մեծատունն, որ համապազ խրախճա- ղուկ.
նայր փառաւորապէս ։ Երրորդ՝ յորժամ անցանէ որ 16.19.
զչափն՝ աւելի ուտելոյն ։ Այլ գիտելի է՝ զի այն որ
միոյն է բանական, միւսոյն՝ է աւելորդ ։

Ուստի չարին՝ ոչ կայանայ ՚ի քանակութեան կերակրոյն, այլ ՚ի յորողխութե կերողին։ Քանզի ոմանք Ա զգանձս իւրեանց ապականեն, առաւելորդ ուտելովն. և այս ոչինչ է, եթէ ոչ զերկուս միակս դենարս՝ տալ ընդ միոյ՝ երկուականի դենարի։ Չորրորդ՝ յորժամ որ յոյժ ջերմ, և փութով ուտիցէ, զի ո՛չ կեր առնուլն կերակրոյն, այլ ցանկութի՟ն է մոլեկան։

Հինգերորդ՝ յորժամ ոք բազմօք ջանիւք պատրաստէ զկերակուրն իւր, ուստի ասէ՝ բեռնարդոս՝ ոչ համեղութի՟ն, այլ քաղցն զարթուցէ զյօժարութիւն ուտելոյն։ ՚Ի յայսոսիկ յամենեսեան պարտէ առնուլ ոչ զոր ինչ հեշտութի՟ն, այլ զոր ինչ պահանջէ հարկաւորութիւնն։ Նա և պատահի երբեմն լինել մեղք ՚ի պակասութե կերակրոյն, ոպ̄ և յաւելորդութե՟ն։ Իսկ դստերք որկրամոլութեանն՝ են հինգք, ըստ գրիգորի։ Առաջինն է՝ խեղկատակութի, քանզի որկրամոլութի՟ն շարժէ ՚ի բանս աղտեղիս։

Երկրորդ է՝ շատախօսութի, որպէս է բամբասանք, անարգանք, և այլք ընդունայնք բանք։ Երրորդ է՝ անյարմար ուրախութիւն, որ զանկարգ շարժմունս ցուցանէ՝ ընդ ձեռն և զգայութիւն մտացն։

Չորրորդ է՝ պղծութի, որ սովոր է յառաջ գալ ՚ի յորկրամոլութե, որպէս է՝ ժայթքումն, և զարշելի ծիւտումն և կամ փափաշոտութի։։ Հինգերորդ է՝ բթութի մտացն, այսինքն, կործանումն բանականին։

Իսկ որկրամոլութիւնն՝ զերկու իր պարունակէ, այսինքն, զշռայլութի, և զարբեցութի, և յառակայէս
Ծննդ․ խօսելով, սակաւակերութի՟ն՝ հակառակ շռայլութեան,
3·21· և սակաւ ըմպելն՝ արբեցութե։ Այլ արդ՝
Ծննդ․ որովայնամոլութիւնն ծնանէ բազում կերպիւ։

25·32· Քանզի հանէ ՚ի դրախտէն, որպէս յայտ է ՚ի յադամ։

Մատ․ Զհոգևոր բարին կորուսանէ՝ յայտ է ՚ի յեսաւէ, որ
8·31· վասն ոսպնաթանին զանդրանկութի՟ն վաճառեաց։

Առակ․ Պատրաստէ տուն սատանայի, ըստ այնմ որ ասացին՝
26·21· առաքեա զմեզ ՚ի խոզսն։ Զինէ զծառայն ընդդէմ
Ծննդ․ իւրեան, ուստի ասէ յառակին, որ սնուցանէ զծառայ
19·33· իւր փափկակեաց, գտցէ ապստամբեալ։

Մարկ․ 6․ ՚Ի ներքս ածէ զբղջախոհութի՟ն, յայտ է ՚ի ղովտ։

27․ Առնէ սպանութի, յայտ է ՚ի հերովդէս, որ ՚ի խրախճանին՝
Եկլէս․ եսպան զյովհաննէս։ ՚Ի ներքս ածէ զմահ
37·34· մարմնոյն, ոպ̄ ասէ սիրաք՝ վասն շռայլութեան
Ծննդ․ բազումք կորեան. և ՚ի ծննդոցն՝ յորում աւուր ուտիցես
2․ 17․

ցես՝ մահու մեռանիցիս ։ Ածէ 'ի ներս, և զմահ մե- 1. տիմ.
ղացն, ըստ առաքելոյն՝ որ ասէ, դիրդ այրին, կեն- 5. 6.
դանւոյն մեռեալ է ։ 'Ի ներս ածէ և զմահ գեհենոյն՝ ղուկ.
ուր ասէ ղուկաս՝ մեծատունն թաղեցաւ. 'ի դժոխս ։ 16. 23.
Բայց արդ՝ հնարք ընդդէմ որկրամոլութեան են չորք ։ մատ.
Առաջինն է՝ առնուլ յանձն զհոգևոր կերակուրն, ուր 4. 4.
ասէ մատթէոս, ոչ միայն հացիւ կեցցէ մարդ ։
Երկրորդ է՝ մտածումն, թէ որպէս լինելոց է մարմին
մեր ․ զի ասէ Ջերոնիմոս՝ զիւրաւ խոտէ մարդ զամ,
որ խորհի զինքն մահկանացու ։ Երրորդ՝ խոկումն ղուկ.
յաւիտենական ընթրեացն, որպէս ասէ ղուկաս՝ թէ 14. 16.
այր ոմն արար ընթրիս ։ Չորրորդ է՝ 'ի միտ ածել ողբ. 3.
զքաղցն քի, և սրբոց իւրոց, ուր ասէ յողբսն, 19.
մինչև զաղքատութին իմ ։

Յաղագս բղջախոհութեան ։ ԳԼ. ԽԱ.

Բղջախոհութիւնն է՝ մտաց և մարմնոյ վավաշոտ շաղաշարումն, յառաջ եկեալ 'ի պիղծ ուսմանէ ։ Դարձեալ բղջախոհութիւնն է՝ ցանկութի վավաշոտ կամաց. և աստ իմացեալ լինի ցանկութիւնն, որ լինի հաւանութբ բանականին, զի այսպիսի յօժարութին է մեղք մահուչափ․ ասի և մահուչափ մեղք, յորժամ բանականութիւն ոչ արգելու զայսպիսի յօժարութիւնն, և այն՝ զի կարէ արգելուլ ։ Այլ արդ՝ զանազանութիք բղջախոհութե են ութ ։ Առաջինն է՝ ազատն ընդ ազատի, որ է պարզ պոռնկութի ։ Երկրորդ է՝ բոզութիւն, որ Ը
լինի կրկին կերպիւ ․ այսինքն, կամ զկնի բազմաց հետևելով, և կամ ընդ յայտնի բոզս ննջելով ։
Երրորդ է՝ շնութիւնն, որով ապականի զուգակցական անկողինն ։ Չորրորդ է՝ կուսապղծութիւն, որով ապականի կուսական ամբողջութիւն ։ Հինգերորդ՝ սրբապղծութին, որով ապականի ողջախոհութին 'ի նուիրեալսն այ, որպէս լինի 'ի կրօնաւորս և 'ի կղերիկոսս՝ կացեալս 'ի սբ կարգս, և 'ի յայնոսիկ որք ուխտեցին զողջախոհութի ։ Վեցերորդ է՝ ազգապղծութի, որով կամ արենակցութե, կամ խնամութե, և կամ հոգևոր ազգակցութե՝ ապականի ։ Եօթներորդ է՝ մեղքն որ ընդդէմ բնութեան, կամ

սոդոմականն , որով բնական սովորութի զուգման , թիւրի : Այլ դիտելի է՝ զի է ինչ ընդդէմ բնութեան տեսակին, և է՝ ինչ ընդդէմ բնութեան սեռին :

Առաջին կերպիւն՝ ամ մեղք մահուչափ է՝ ընդդէմ բնութե տեսակի , զի 'ի բանական ստեղծուածս աղտանէ տրանջականն ընդդէմ ամ մեղաց : Այլ ըստ երկրորդի կերպին՝ սոդոմականն՝ է ընդդէմ բնութե սեռի , զի ոչ միայն 'ի մարդն այլ և յանասունս համաձայնեին զանազան սերք 'ի շաղաշարիլն , այսինքն , արուն ընդ էգն , և թէ լինի այլ կերպիւ , ասի ընդդէմ բնութե սեռին : Ութերորդ է՝ վավաշոտ շաղաշարումն զուգակցաց , որ լինի առեալ բազում եղանակաւ : Քանզի զուգակցական ամուսնութիւնն, ոմն է արժան, ոմն է տկար՝ և ոմն է սանձարձակական: Արդ արժանն՝ լինի երեք կերպիւ . առաջինն՝ յորժամ լինիցի պատճառաւ զաւակի ծնանելոյ առ 'ի պաշտօն այ : Երկրորդ է՝ պատճառաւ հատուցանելոյ պարտոյն : Երրորդ՝ պատճառաւ խորշելոյ 'ի պոռնկութե , ոչ որ 'յինքն , այլ որ 'ի զուգակիցն : Առաջինն է՝ ածպաշտութե , երկրորդն՝ արդարութեան : Երրորդն՝ գթութեան . և յայսոսիկ՝ ոչ ոմն ասի մեղք : Իսկ տկարն է՝ յորժամ լինի պատճառաւ հեշտութեան , և այս զանազանի , զի թէ սէր հեշտութեն այն՝ լինիցի նախապատիւ քան զսէրն այ , է՝ մեղք մահուչափ , և թէ ոչ՝ է՝ ներելի :

Այլ սանձարձակականն է , որ լինի միայն 'ի վավաշոտ տուփանացն արտաքսելով զկոպարաւ բանականին , և զհամեստութեան . և այս լինի հինգ կերպիւ :

Նախ՝ պատճառաւ յադեցուցանելոյ զվավաշոտական ցանկութին՝ բազական փաղաքշութե : Երկրորդ՝ յորժամ լինի ընդդէմ սովորական կերպին :

Երրորդ՝ յորժամ լինի անպատշաճ ժամանակի :

Չորրորդ՝ յորժամ լինի 'ի յարգելեալ տեղիս :

Հինգերորդ՝ յորժամ մտանիցէ առ յղին , որ մերձ է 'ի ծնունդն , և կամ յորժամ լինի 'ի կանանց օրինի :

Իսկ դստերք բղջախոհութեն՝ են ութ՝ ըստ Գրիգորի : Առաջինն է՝ կուրութի մտաց , զի ըստ Օգոստինոսի 'ի գործ բղջախոհութեան՝ կլանի բոլոր բանականութին : Երկրորդ՝ ոչ մտածումն , այսինքն , վերջացն մահուն , և դժոխոցն : Երրորդ՝ անհաստատութի , այսինքն , առ 'ի խորհիլ երբեմն զայս ինչ , և երբեմն զայն , և ցանկալ մերթ այսմիկ , և մերթ այնմիկ :

մկ : Չորրորդ՝ սէր ինքեան, այսինքն, որով ոք
ցանկայ երկար կենդանութե, առ 'ի կատարել զհեշտախտութին
իւր : Հինգերորդ՝ գահավիժումն,
որով ոք սանձարձակօրէն ընթանայ առ 'ի մեղանչել,
մատնելով զանձն վտանգից մահու, վասն առնելոյ
զբղջախոհութին : Վեցերորդ է՝ ատել զած՝ զի ած
յետս քարշէ զինքն 'ի նոցանէ, և պատժէ զնոսին, որք
հետևին հեշտութեան մարմնոյն, առ որս քարշէ
բղջախոհութին : Եօթներորդ՝ բաղձանք այսր կենացս,
այսինքն, ցանկութի ընչից · փարթամութե,
առողջութե, ուժեղութե, և այսպիսեաց, որով
բղջախոհն ժամանի 'ի վախճան իւր : Ութերորդ է՝
յուսահատութի հանդերձելոյ աշխարհի, որ է անապաւինութի
փառաց՝ կամ թողութե, և այս է կատարեալ
դուստր բղջախոհութե : Բայց բղջախոհութին
վնասէ՝ բազում կերպիւ, քանզի է անարգիչ այ,
զի պղծէ զտաճարն այ : Հաճոյ դիւաց, որպէս ասէ
յոբ, բեհմովթն ննջէ՝ 'ի գիճային տեղիս : յոբ. 40. 16.
Վնասակար յատուկ ենթակային իւրոյ, զի ասէ առաքեալն,
որ պոռնիկ՝ յիւր մարմին մեղանչէ : 1. կոր. 6. 18.
Զընկերն դայթակղեցուցանէ, որպէս ասէ յովսէէ՝
երեք յորդայթ դիտանոցին, և վարմն տարածեալ 'ի ովսէ. 5. 1.
վերայ լերինն Թաբոր : Դատապարտէ զհոգին իւր,
որպէս ասացաւ դաւթի՝ ոչ հեռասցի սուր 'ի տանէ 2. թագ. 12. 10.
քումմէ, և զայս ասաց՝ վասն մեղացն, որ ընդ բերսաբէի :
Նուաճեցուցանէ զինքն ենթ անարգագունի
Տն, այսինքն, մարմնոյ, և զգայութե, ըստ որում ասի
'ի ծննդոց, զի լուար ձայնի կնոջ քոյ, անիծեալ լիցի ծննդ. 3. 17.
երկիր 'ի գործս քոյ : Յիմարեցուցանէ զմիտս, զի
ասէ յովսէէ, գինի և կին յափշտակէ զմիտս : ովսէ. 4. 11.
Բայց հնարք ընդդէմ բղջախոհութեան է՝ փախչել
'ի պատճառէն, զի ասէ յոբ՝ եդի ուխտ ընդ աչս իմ, յոբ. 31. 1.
ոչ հայիլ 'ի կոյս : Եւ սիրաք ասէ, որ մերձենայ 'ի եկլես. 13. 1.
ձիւթ՝ աղտեղասցի : Եւ նոյն ասէ՝ որ շօշափէ
զնա, ոպ թէ ըմբռնէ զկարիճ : Դարձեալ՝ 'ի միտ եկլես. 26. 10.
ածել զօր մահուն, որպէս ասէ սիրաք, որդեակ,
յիշեա զվախճան քո, և մի՛ մեղանչիցես յաւիտեան : եկլես. 7. 40.
Դարձեալ՝ ոչ վստահանալ յանձն, զի դաւիթ որ սրբագոյն
էր՝ անկաւ, և սաղոմոն որ գիտուն էր, և
սամփսոն որ զօրագոյն էր : Դարձեալ՝ միշտ զբաղել
զինքն, զի ասէ ջերոնիմոս, միշտ գործեա զբարի
ինչ, զի գտցէ զքեզ սատանայ զբաղեալ :

Դար-

մարկ. 9.28. Դարձեալ՝ ճնշել զմարմինն՝ զի ասէ Տ՟րն, այս ազգ՝ ոչ իւիք ելանէ, եթէ ոչ պահօք, և աղօթիւք:
ծննդ. 3.15. Դարձեալ՝ կալ ընդդէմ սկզբան փորձութեանցն, որ՟ ասէ 'ի ծննդոց. Նա սպասեսցէ քում գլխոյ:

Յաղագս եօթեանց մոլութեցս այսոցիկ, թէ երբ իցեն մահուչափք, և երբ ներելիք:

ԳԼ. ԻԲ.

Ա Ամենայն վերասացեալ մոլութիւնք՝ թէպէտ միշտ են մեղք, բայց ոչ միշտ մահուչափք, վասն այսորիկ տեսանելի է թէ յորժամ իւրաքանչիւրն է մահուչափ, և յորժամ ներելի: Արդ սնափառութիւն ըստ սեռին է՝ ներելի. զի սեռ գործոյն առեալ լինի յառաջեդելոյն:

Իսկ ընդունայնութի, և սնոտին ըստ ինքեան ոչ է յառաջեդեալ մահուչափ մեղացն, այլ ներելւոյն:

Ուստի վասն զի սնոտի գովութիւնն է յառաջեդեալ այսմ մեղաց, յայտ է՝ թէ ոչ միշտ է մահուչափ:

Այլ սնափառութիւն լինի մահուչափ կրկին կերպիւ, այսինքն, պատճառաւ վախճանին, վասն որոյ և գովութիւն իսկ՝ ցանկացեալ լինի. քանզի այնպիսի է գործն, որպիսի է այն, որոյ վասն բաղձացեալ լինի:

Նա և պատճառաւ գործոյն՝ 'ի յոր խնդրի գովութիւն:

Արդ վասն առաջնոյն ասելի է՝ թէ վս քառակի վախճանի
1.թագ. 12.4. ցանկացեալ լինի գովութիւն: Նախ՝ վասն խորշելոյ
'ի չարէ վատահամբաւութե, և այսպէս գովեաց
զինքն սամուէլ: Երկրորդ՝ վս հոգևոր ինչ օգտութե, որ՟ է փառքն այ՟, և շինութի ընկերին, և այսպէս
2.կոր. 11.1. գովեաց զինքն՝ պօղոս, առ կորնթացիս:
Երրորդ՝ վասն շահից ագահութե, որ՟ փարիսեցիքն՝
մատ. 23.14. որք ունէին զտունս այրեաց: Չորրորդ՝ վս գործոյ
ինչ ներելի մեղաց, որ՟ յորժամ կամի ոք գովել, որ՟
զի 'ի գովութեան ներելապէս հեշտանայցէ:

Առաջինն՝ է նախատեսութե: Երկրորդն, սիրոյն այ՟, կամ ընկերին: Երրորդն, է մեղք մահուչափ, և զայս իմանալի է, յորժամ այն որ է մահուչափ մեղք, դնիցի վախճան գործոյն. իսկ չորրորդն՝ է ներելի:

Իսկ վասն երկրորդին, այսինքն, պատճառաւ գործոյն, 'ի յոր խնդրի գովութիւն: Կարէ լինել եռակի, զի երբեմն խնդրի զօրութի՛ն վասն անարժան գործոյն, և երբեմն՝ վասն գործոյ, անզանազան յինքեան, իսկ երբեմն, վասն գովասանական գործոյ:

Արդ՝ թէ ըստ առաջին կերպին, ըստ այնմ է այնպիսի մեղք՝ որ է անարժան գործն այն, եթէ մահուչափ, և եթէ ներելի: Իսկ ըստ երկրորդ կերպին, ըստ այնմ է՛ մեղք ներելի, որ ունել զփարթամութին, կամ զհանդերձս պատուականս հանդերձ ունայն կիրառմամբ զայսպիսիս ՚ի գովեստ:

Բ. Բայց թէ այսպիսիքս եղիցին կարգեալ առ ՚ի լինել պատճառ մահուչափ մեղաց, որպէս յորժամ կին զարդարեսցէ զինքն պոռնկական զարդուք առ ՚ի յորսալ զհոգիս. կամ եթէ գործն այն է անարժան և արգելման վերնադրութեանն, որ են զարդք ոմանք՝ որք Գ. յորժամ լինին են ընդդէմ հրամանաց եկեղեցւոյ, այսպիսիքս, են մահուչափք: Այլ թէ ըստ երրորդի կերպին, այսինքն, թէ զօրութին խնդրի վասն գործոյ առաքինութեանն, այս հանդիպի կրկին կերպիւ, կամ զի բաղձանն զօրութեն առակցի գործոյ առաքինութեն, իբրու նպաստեալ, որպէս դիպի ՚ի յերգելն, կամ ՚ի քարոզելն, և յայնժամ է ներելի:

Կամ զօրութին է վախճան նախապատուաբար՝ յառաջեցեալ գործոյ առաքինութեանն, և գործողին, այնպէս՝ մինչ զի անդէն կացուցեալ իցէ զվերջին վախճան, և այս է մահուչափ, քանզի՝ յայնժամ յարի ՚ի նա, որ առ վերջին վախճան: Եւ գիտելի է՝ զի մեծագոյն մեղք է սնափառել վասն հոգևորաց բարեաց, քան վս ժամանակաւորաց, զի սակաւ ունին զպատճառ սնափառութե, և սակաւ երևին արտաքուստ քան զժամանակաւորս:

Նաև նախանձն ըստ իւրում սեռին է՝ մեղք մահուչափ, քանզի նախանձն է ցաւ վասն այլոյ բարւոյն, որպէս վերագոյնդ ասացաւ, վս այսորիկ ուղղակի ներհականայ սիրոյն, զի սէրն ոչ նախանձի, 1. Կոր. 13.4. այլ խնդայ ընդ ճշմարտութիւնն, և սիրոյն ոչինչ է ներհակ, եթէ ոչ մահուչափ մեղքն: Բայց սակայն, այն որ ըստ սեռին իւրում է մահուչափ՝ կարէ լինել ներելի, ըստ այնմ որ կայանայ ՚ի յառաջին շարժումն, և կամ քարշի արտաքոյ բանին իւրոյ: Արդ՝ ցաւն Դ. վասն այլոյ բարւոյ՝ կարէ լինել քառակի, զի կամ է նախկին առաջին շարժումն, այսինքն, յառաջ եկեալ ՚ի բնութենէն, որպէս ոմանք բնականաբար են նա-

խանձոտք , և այս ամենևին ոչ է մեղք , զի ոչ է ընդ
իշխանութեամբ մերով : Կամ է երկրորդառաջին շարժումն ,
այսինքն , յորժամ յօժարութիւն առանց կատարեալ
ընտրութեան , այնպիսի կրիւք ախտանայ · և ըստ
այսմ է ներելի մեղք : Կամ է կամաւոր ներգործութիւն ,
հանդերձ ընտրութեամբ և այնպէս՝ է մահուչափ :
Կամ քարշի դիտաւորութեամբ , արտաքոյ բանին իւրոյ ,
որպէս յորժամ ցանկի մի այլոյ բարւոյն՝ յառնէ 'ի բարի
պատճառէ , որպէս յորժամ ցանկի ոք վասն ժամանակաւոր
բարւոյ միայն , զի տեսանէ զայն լինիլ վասն
հոգւոյ նորա · և կամ վասն հասարակաց օգտութեան , և
այսպիսի ցանկն՝ է բարի , զի մեծագոյն բարին , է
առաւել տենչալի : Եւ ծանիր՝ զի ցանկալ բարւոյն ,
իմացեալ լինի խնդութիւն զչարին , որ 'ի նմանէ պատճառեցեալ
լինի :

Բարկութիւն ըստ իւրում սեռին՝ է մեղք մահուչափ ,
զի ըստ քասիօդորոսի և իսիդորոսի , բարկութիւն
է՝ շարժումն դրդուեալ հոգւոյ՝ առ 'ի
պատժել զվրդովողն : Իսկ այնպիսի շարժումն ներհականայ
սիրոյն՝ որ ոչ գրգռէ , և ոչ խորհի զչարն ,
1·կոր· 13·5· որպէս յայտնէ առ կորնթացիս : Արդ՝ բարկութիւն կամ
առէ զբարկութիւն նախանձայուզութեան , որ է գարշելն
'ի մոլութենէ , և այս ոչ է մեղք , այլ է կատարելութեան ·
Նա և կարէ ոք՝ ըստ այսմ կերպի բարկանալ
ինքեան , որպէս 'ի վերայ սաղմոսին , բարկանայք և մի
մեղանչէք , առէ մեկնիչն , զինչ է մարդ զղջացեալ ,
եթէ ոչ՝ բարկացեալ ինքեան : Եւ կամ առէ՝ զթուլութիւն
սիրոյն առ ընկերին , որով մարդն ոչ ցաւի
զչարէ ընկերին · և ոչ խնդայ ընդ բարին, թէպէտ և
ոչ ցանկիցի ընդ բարին , և ոչ խնդասցէ ընդ չարն ,
այլ է նման անզգայական · և ըստ այսմ ոչ է մահուչափ ,
այլ է անկատարութիւն սիրոյ : Կամ առէ զներգործական
անհամբերութիւն՝ առանց յօժարութեան վրէժխնդրութեան ,
և այսպիսի շարժումն է մեղք ներելի ·
զի ունի անկատար զբան բարկութեան , որպէս յայտ է 'ի
Ե նախասացեալ սահմանէն : Կամ առէ զանհամբերութիւն
հանդերձ յօժարութեամբ վրէժխնդրութեան , և
այս պատահի երեք կերպիւ : Քանզի այսպիսի բարկութիւն՝
երբեմն է 'ի բնութենէ , որպէս 'ի սեաւ մաղձոտսն,
'ի յորս ըստ փիլիսոփային միշտ խածանի բնութիւն ,
վասն որոյ և միշտ են ամբոխեալք · և ըստ այսմ ոչ է
մեղք , վասն զի է բնական ախտ : Եւ երբեմն է 'ի

յօժարութե՟ առանց ընտրութե՟, և յայնժամ է ներելի, որպէս 'ի յայլ առաջին շարժմունսն ։
Երբեմն 'ի յընտրողական կամացն, և յայնժամ է մահուչափ ։

Իսկ ծուլութիւն՝ ըստ իւրում սեռին՝ է ներելի, զի ըստ օգոստինոսի՝ ծուլութիւն՝ է ձանձրութի՟ ներքին բարւոյն. իսկ այս ոչ հակառակի սիրոյն, այլ առնէ զպակասութի՟ եռանդի սիրոյն՝ 'ի յորում կայանայ մղ՟ ներելի ։ Արդ՝ ձանձրութիւն այս կամ է շարժումն բնական, և այնպէս ոչ է մեղք. և կամ է շարժումն տրտմեցելոյ յօժարութե՟, վասն հոգևոր աշխատաւոր գործոյն, և ըստ այսմ՝ է՛ ներելի. թէպէտ յօժարութիւն այն է ընտրողական, քանզի հաւանումն 'ի ներելին ոչ է այլ ինչ, քան թէ ներելի ։
Քանզի ծուլութիւն որպէս ասացաւ, ըստ սեռին իւրոյ է ներելի, այլ թէ ձանձրութիւնն վերաձգեսցի, 'ի զանցառումն այնոցիկ՝ որք են 'ի հարկաւորութենէ փրկութե՟, որպէս անցանել զպատուիրանաւ այ՟, և կամ առանց բանաւոր պատճառի զպատուիրանաւ եկեղեցւոյ, յայնժամ է մահուչափ ։ Իսկ եթէ ձանձրութիւն այն՝ է վասն զանցառնելոյ զբարին. և վասն դժուարութեան ձեռնարկելոյ 'ի բարին՝ անէ 'ի յուսահատութի՟, յայնժամ մտանէ 'ի մեղս, որ ընդդէմ ոգւոյն սրբոյ ։ Իսկ եթէ ձանձրութի՟ այնքան աճեսցի մինչև ածցէ 'ի ձանձրութի՟ կենաց, և մխեսցէ զձեռն 'ի յինքն, յայնժամ նմանեսցի յուդայի, որ եարկ խեղդ անձին իւրոյ ։ մատթ. 27. 5.

Բայց ագահութիւն՝ ըստ թովմայի՝ է անկարգ սէր ունելոյն, և այս լինի՝ կամ ցանկանալով, կամ ստանալով, և կամ պահելով ։ Թէ ըստ առաջնոյ կերպին, և այս պատահի հինգ եղանակաւ ։ .
Առաջին՝ յորժամ ցանկայ այլոց իրի կատարեալ յօժարութե՟, որ յառաջանայր 'ի գործն, եթէ ունիցէր զկարողութի՟. և այսպիսին է մահուչափ ։ Երկրորդ՝ յորժամ ցանկայ անպատշաճից անկատար կամօք, ոպ՟ թէ անարժան ոք ջանայ հասանել 'ի յաստիճան, և յեկեղեցական ինչ թօշակ, և ըստ այսմ ևս է մահուչափ ։ Երրորդ՝ թէ ցանկացաւ օտար իրաց, կամ անպատշաճից, հանդերձ թէական կամօք, այսինքն, եթէ կարասցէ ունել առանց մեղանչելոյ ընդդէմ այ՟, և թարց վնասու ընկերին, յայնժամ ոչ է մեղք, և կամ է մեղք ներելի, եթէ զայնպիսի թէականութի՟

ունիցի ներգործաբար կամ ունակաբար ։ Չորրորդ՝
թէ պարզաբար ցանկայ՝ ունել զաւելորդն, և այս
այնպիսի բաղձանօք, որ հեղձուցանէ զմիտս 'ի հոգա-
Զ ծութիւն ինքեան, և 'ի մտածութենէ ածայնոց, և ըստ
այսմ է՛ մեղք մահուչափ ։ Հինգերորդ՝ եթէ աւե-
լորդ սիրով՝ յարի 'ի ժամանակաւորս, սակայն այսր
քան զՏէրն ոչ ; և այս է ներելի ։ Իսկ եթէ ագա-
հութիւնն կայանայ 'ի տանալն, այս հանդիպի երեք
կերպիւ ․ զի կամ տանայ անիրաւութբ ըստ որում
և կարացէ, և այն է՛ մահուչափ ։ Եւ կամ տանայ
զիրս այնպիսի գործով, կամ արուեստիւ, կամ գոր-
ծառութբ, որ ըստ ինքեան է մեղք մահուչափ,
նաև թէ լինէր առանց շահից, յայնժամ է՛ մահու-
չափ ․ կամ տանայ զայնպիսին անարժան գործովք,
որ է ներելի, որպէս յորժամ շարայօգէ ոք զբանս
ծաղրականս առ 'ի շահիլ զինչ, ; սակայն պահելով
զհամեստութիւնն՝ և այս է ներելի, մի թէ ոք վասն
հեշտութեան ցոփութեան՝ բոլորովին տայցէ զինքն
այնպիսեացն, յայնժամ լինի մահուչափ ։
Արդ՝ ասեմ վասն հեշտութեն ․ զի թէ ոք վս մար-
մնաւոր ախորժից, և առ 'ի պահպանութիւն բնական
կենացն առնիցէ զայն, և այն վասն ոչ գիտելոյն
զեկեղեցական ինչ արգելս, ոչ համարիմ զնա 'ի թուոյ
դատապարտելոցն ։ Իսկ ագահութին որ կայանայ 'ի
պահելն, այս լինի հինգ եղանակաւ ։ Նախ՝ զի կամ
պահէ գիտութբ զայնս, զոր պարտական է անդրէն
հատուցանել, ունելով 'ի մտի զոչ հատուցանելն, և
ըստ այսմ է մահուչափ ։ Երկրորդ՝ զի կամ պահէ
զայնս, որք վերաբերին 'ի հարկաւոր պէտս իւր, և
իւրայնոց ․ և կամ ըստ այնմ որ վայելէր պատուոյն
իւրոյ, և իւրայնոց, և այս ոչ է մեղք ։ Երրորդ, զի
կամ պահէ զաւելորդս, նկատմամբ երկեցունց, ար-
դեն վերոյ ասացելոց, և այս 'ի ժամանակի վերջին
հարկաւորութե ուրուք ․ և ըստ այսմ է՛ մահուչափ ։
Չորրորդ՝ զի կամ պահէ զաւելորդս՝ նաև այսր քան
զվերջին հարկաւորութի՛ վասն անյագ ագահութեն,
և ըստ այսմ է մահուչափ ։ Եւ մեծագոյն նշան այսմ
ագահութեանս է՛ յորժամ թողու ոք իւրին առաւել
փտիլ, և նեխիլ առ ինքեան, քան օգտակարապէս
բաշխել այլոց ։ Հինգերորդ՝ զի կամ պահէ զաւե-
լորդ ինչ, վասն անկարգ սիրոյ ժամանակաւորացս,
եղանակաւ որով պակասի 'ի միջոյն առատաբաշ-

խու․

խութե, սակայն պահելով զամբողջութիւն առաքինութեանն, և ըստ այսմ է՛ ներելի ։ Եւ գիտելի է՝ զի ագահութիւնն ըստ իւրում սեռին՝ է՛ մեղք մահուչափ. զի առաքեալն համեմատէ կռապաշտութեան ։ Եփես. 5. 5. ոչ զի իցէ ՚ի տեսակէ այնմ մեղաց, վասնզի ոչ ունի զգործ նորա. այլ զի առնէ ինչ նման կռապաշտութեան, այսինքն, ծառայելով, մամոնայ աստուածոյն, քան աստուծոյն ։

Եւ որկրամոլութիւն՝ ըստ իւրում սեռին՝ է՛ մեղք ներելի, զի յօժարութիւն ուտելոյն ըստ իւրում բանի, ոչ անկանի ՚ի ներքոյ տէրութեան կամացն։ Արդ՝ որկրամոլութիւնն՝ է՛ անկարգ ցանկութիւն ուտելոյ, որ կարէ լինել հինգ եղանակաւ ։ Նախ եթէ իցէ անդ միայն յօժարութիւն կերակրոյն, և այս բնաւ ոչ է մեղք, նա և ոչ հեշտութիւն որ հետևի ՚ի կերակրոյն, ըստ այնմ որ կարգի ընդդէմ պակասութեան որ ներհակի բնութեան. քանզի այսպիսիկ են պարզաբար բնականք, ՚ի յորս ոչ է վարձ, և ոչ մեղադրութիւն ։ Երկրորդ՝ եթէ հարկաւորութեան յօժարութեանն միաւորեսցի յօժարութիւն հեշտութեան ՚ի կերակուրն, և յայնժամ է՛ մեղք ներելի ։ Երրորդ՝ եթէ իցէ անդ ստունգամնութիւն պատուիրանացն՝ որպէս յորժամ ոք լուծանէ զպահս եկեղեցւոյ՝ առանց հարկի ինչ ։ Եւ կամ որպէս յորժամ կրօնաւորն ուտէ զմիս, և այն թէ իցէ ՚ի կարգին իւրում արգելեալ հրամանաւ, և ըստ այսմ է՛ մեղք մահուչափ ։ Չորրորդ՝ թէ յօժարութիւն ուտելոյն՝ լինի մեծաւ ցանկութեամբ, որպէս յորժամ կարի խիստ և վերջնական ցանկութեամբ՝ յենուցու ՚ի հեշտութիւն կերակրոյն, և ըստ այսմ է՛ մեղք մահուչափ ։ Է Հինգերորդ՝ եթէ ածիցի ՚ի յայնպիսի սովորութիւն, մինչ զի զբոլոր կեանս մարդոյն արասցէ կարգիլ յայնպիսի հեշտութիւն, և այս է մեղք մահուչափ. իսկ արբեցութիւնն ՚ի յառաքելոյն համարեալ լինի ՚ի մէջ մահուչափ մեղաց, սակայն՝ երբեմն է ներելի, յորժամ առաւել քան զպէտսն ըմպիցէ ոք, բայց ըստ կարծեաց բաւական չափոյն ։ Իսկ յորժամ եղանէ ոք արտաքոյ կարգեցեալ չափոյն, ըստ բանի բարեպէս կարգեցելոյ առ ՚ի բացորոշել, և այս յայնպիսի չափով, որով յեղաշրջի որպիսութիւն մտացն սանձարձակութեամբ, և յորժամ առնիցէ զայս նախամեծար քան զԱստուած, յայնժամ մեղանչէ մահուչափ ։ Դարձեալ՝ եթէ ոք արբեցնէ զայլս, այսինքն, այնպէս յորդորելով առ ըմպելին, մինչ զի ունիցի 'ի մով յեղաշրջել զուղղութի մտաց նորա, և զայս առնիցէ 'ի վնաս նորին, մեղանչէ մահուչափ։ Զի առաւել յափշտակէ 'ի նմանէ, քան թէ յափշտակիցէր զժամանակաւոր ինչ, զի բառնայ 'ի նմանէ զգործ բանականին։

Իսկ բղձախոհութին ըստ իւրում սեռին է՛ մեղք մահուչափ, զի է ընդդէմ հրամանացն այն, որ ասէ Ելից Ի· մի՛ շնար։ Այլ ցանկութի բղձախոհութե՝ զանազանի յեղանակս եօթն։ Առաջինն է
Ելից 20, 14· յորժամ ցանկութիւնն կայանայ 'ի յառաջին շարժումն միայն, և ըստ այսմ է՛ մեղք ներելի։

Երկրորդ՝ յորժամ հետևի հաճանութի հեշտութենն, թէպէտ ոչ 'ի գործն՝ և ըստ այսմ է մահուչափ։

Երրորդ՝ յորժամ հաճանի 'ի գործն, նա և ըստ այսմ
Ը է՛ մահուչափ։ Չորրորդ՝ յորժամ ցանկութի ոչ միայն պահեալ լինի 'ի սիրտն, այլ և մնանի տեսութբ, և
Մատ· 5· 28· այսպիսիս ևս՝ է մահուչափ։ Որպէս ասէ Մատթէոս, որ հայի 'ի կին, այսինքն, թէ այնպիսի միտօք, և դիտաւորութբ հայիցի 'ի կին, զի ցանկանայցէ նմա· զի ասէ օգոստինոս՝ անդէն իսկ հաճանի հեշտախտութենն։ Եւ իբրաւի ասէ՝ առ 'ի ցանկանալոյ նմա, զի թէ տեսանիցէ ոք զկին ումն, որպէս զգեղեցիկ իմն իր, և ոչ յառաջանայցէ անդր քան զայն յայնժամ ոչ լինէր մեղք ինչ, և կամ լինէր մեղք հետաքրքրութե։ Հինգերորդ՝ խեղկատակութի առնել ընդ կնոջ, և կամ խօսիլ ընդ նմա ընտելական խօսս վավաշոտականս պատճառաւ, և այս է մահուչափ։

Եփես· 5· 4· Վեցերորդ եղանակն կոչի յառաքելոյն՝ զարշութի, ուր ասէ մեկնիչն, յորս լինին համբոյրք, և շօշափմունք՝ նա և այս է մահուչափ, և այնքան ծանրագոյն է՝ քան զվերինագոյնն, որ քան այսպիսեօքս առաւել բորբոքի ցանկութիւնն, վասն կարի իմն հուպ գոլոյն առ հուրն։ Եւ գիտելի է՝ զի ձեռն հասուցանել 'ի կին՝ առանց դիտաւորութեան, ո՛չ է մեղք. նմանապէս՝ և ձեռն հասուցանել հանդերձ դիտաւորութբ վասն հարկի ինչ՝ ոչ է մեղք։ Այլ հասուցանել զձեռն վավաշոտ ցանկութբ, կամ համբուրելով որ ոչ մերձաւորի առնամ է՛ մեղք մահուչափ։ Եօթներորդ եղանակն է՝ յորժամ ցանկութին յառաջանայ 'ի գործն, և այս յայտնապէս՝ է մահուչափ։ Եւ ծանիր՝ զի զանազանութի է 'ի մէջ առաջին շարժման զգայականին, և ծննդականին . քանզի առաջին շարժումն ծննդականին է՝ միշտ մեղք , եթէ ոչ՝ խորհրդով սպասլին լինիցի անմեղադրելի ։ Այլ առաջին շարժումն աննդականին՝ ոչ միշտ , զի ցանկական զօրութիւնն ոչ է այնքան ապականեալ ՚ի աննդականն , որպէս ՚ի ծննդականն ։ Յայսմանէ խնդրեա՛ ՚ի նախասացեալ ճառն , ուր խօսի զտեսակաց բղջախոհութեն ։ ՚ի վեր 21.

Յաղագս մեղաց , որ ընդդէմ ոգւոյն սրբոյ ։

ԳԼ. ԻԳ.

Թէպէտ ամ մեղք՝ հասարակաբար է ընդդէմ այ , երիցն՝ և միոյն . սակայն յատկաբար՝ ոմն ասի ընդդէմ հօր . ոմն ընդդէմ որդւոյ , և ոմն ընդդէմ ոգւոյն սրբոյ ։ Քանզի մեղանչելն ընդդէմ հօր է յորժամ մեղանչէ ոք տկարութեբ . ընդդէմ որդւոյ , տգիտութեամբ . ընդդէմ ոգւոյն սրբոյ՝ առոյգ չարութեբ , այսինքն , յորժամ կամօքն գիտէ , և կարէ ընդդէմ կալ չարի խմն . սակայն վն չարութեան միայն՝ ընտրէ զայն ։

Ա

Արդ՝ մեղքն որ ընդդէմ ոգւոյն սրբոյ՝ մանաւանդ ելանէ ՚ի չար կամաց անձնիշխանականին , և ուղղակի մարտնչի ընդդէմ շնորհաց ոգւոյն սրբոյ . վասն որոյ և ոչ ունի զպատճառ անմեղադրութե , զի որ քան է յիւրն կողմանէ՝ է՛ ուղղապէս մարտնչողական ընդդէմ դեղոյն՝ և հնարին , որով լինի թողութի մեղաց ։

Նա և մեղքն որ է ընդդէմ ոգւոյն սրբոյ՝ է՛ անթողլի , աստ՝ և ՚ի հանդերձեալումն . ոչ զի ոչ կարէ հանդիպիլ , այլ զի ուր ուրեմն լինի թողեալ , և կամ հազիւ յայսմ աշխարհի թողանի՝ որ քան առ մեղսն , կամ ՚ի հանդերձելումն՝ որքան առ պատիժն ։

Դարձեալ՝ ասի անթողլի , զի ոչ լինի ընթերցեալ , եթէ թողեալ իցէ . որպէս Մելքիսեդեկ ասի անհայր , զի ոչ լինի ընթերցեալ զհօրէ նորա ։ Դարձեալ՝ ներհակական աղբերն թողութե , այսինքն , ոգւոյն սրբոյ ։ Դարձեալ՝ վասն անկարութե մարդոյն , զի հազիւ կարէ պատրաստել զինքն առ շնորհն , զոր նեղէ այն քան ծանրութի մեղացն ։ Եւ գիտելի է՝ զի անուանս այս՝ անթողլի , ասի երեքկին , այսինքն , բացաբար , զի ոչ ինչ կերպիւ կարէ թողանիլ . և ըստ Եբր. 7. 3.

այսմ կերպի մեղք դիւաց , և դատապարտելոց է՛ անթողլի : Դարձեալ՝ պակասաբար, զի ոչ ունի զյարմարութի յինքեան , որ՟պ զի պատկանաւորիցի թողանիլ , թէպէտ ՚ի յարմարութե բարութե ա՟յ կարիցէ թողանիլ ա՟մ մեղք . և այսու եղանակաւ , ա՟մ մեղք մահացուք են անթողլիք : Դարձեալ՝ ասի ներհակօրէն , ըստ այնմ որ ունի զներհակ տրամադրութիւն առ ՚ի թողանիլ . և ըստ այսմ եղանակի՝ մեղքն որ ընդդէմ ոգւոյն սրբոյ՝ է՛ անթողլի, զի ներհականայ շնորհին՝ որ թողու զմեղսն . և այս յուսահատութք , կամ յանդգնութք , և կամ այլօք տեսակօք այսմ մեղաց: Քանզի վեցեն տեսակք մեղացն՝ որ ընդդէմ ոգւոյն սրբոյ , այսինքն , յուսահատութի , յանդգնութիւն , մարտնչումն՝ որ ընդդէմ ճանաչեալ ճշմարտութե . նախանձ ընդդէմ եղբայրական սիրոյն. խստասրտութի և անզղջութի մինչև իսպառ : Թիւ սոցա ցուցեալ լինի այսպէս: Զի երեք են ՚ի թողութեն, այսինքն, թողօղն, և այն. որում թողեալ լինի . և պատրաստութի առ ՚ի թողութի ՚ի յայն՝ որում թողեալ լինի : Արդ՝ ՚ի թողօղն, երկու են , այսինքն , ողորմութի , և արդարութի : Ընդդէմ առաջնոյն՝ է՛ յուսահատութին. ընդդէմ երկրորդին՝ է՛ յանդգնութին : Նաև ՚ի յայն՝ յորում թողեալ լինի , երկու ինչ պահանջին , այսինքն , ցաւ վ՟ս գործեցելոցն , և յառաջադրութի վ՟ս ոչ գործելոյ : Ընդդէմ առաջնոյն է՛ խստասրտութին , և ընդդէմ երկրորդին՝ է՛ անզղջութին մինչև իսպառ : Դարձեալ՝ պատրաստութին առ ՚ի թողութի , ՚ի յայն որում թողեալ լինի , պարտի լինիլ կրկին . այսինքն , ճանաչումն ճշմարտին՝ և սէր բարւոյն : Ընդդէմ առաջնոյն է՛ մարտն ընդդէմ ճանաչեալ ճշմարտութեն . և ընդդէմ երկրորդին՝ է՛ նախանձն ընդդէմ եղբայրական շնորհաց : Իսկ վասն անզղջութեանն մինչև իսպառ՝ գիտելի է , զի թէ ասասցէ զյարամնայութի մեղաց մինչ ՚ի վախճան , ըստ այսմ , յա՟մ մեղս՝ յոր մեռանի ոք , է՛ վախճանական անզղջութի , ըստ այնմ՝ որ է մի ՚ի տեսակաց մեղացն՝ որ ընդդէմ ոգւոյն սրբոյ , որ՟պ ասացեալ լինի . և ըստ այսմ , ասի մտադրութիւն ոչ զղջանալոյ :

Յաղագս թուոյ մեղացն ։ Գլ. ԽԴ.

Մեղք սրտին են այսոքիկ՝ խորհուրդ, Մեղք
հեշտութիւն, հաւանութիւն, ցանկութիւն սրտի ։
չարին, թիւրեալ կամք, անհաւատու-
թիւն, անջերմեռանդութիւն, յանդգնու-
թիւն. յուսահատութիւն, և անգթու-
թիւն. երկիւղ չարաչար խոնարհեցուցա-
նող. և սէր չարաչար բորբոքող, կար-
ծիք, նախանձ. բարկութիւն ատելութիւն. երկիւղ Ա
ծառայական, ցնծութիւն ՚ի յանաջողութիւն ընկերին,
խոտումն աղքատաց՝ կամ մեղաւորաց. սնափառութիւն,
թիւրահաւատութիւն, մարմնաւոր աղէտ ծնողաց,
անպատշաճ ուրախութիւն. աշխարհական տրտմութիւն.
անհամբերութիւն, ագահութիւն, ամբարտաւանութիւն.
աղձատութիւն, խստասրտութիւն չարի. ձանձրութիւն բարւոյ.
ծուլութիւն, անհաստատութիւն, ողջանալ ընդ յապաշ-
խարելն, ցաւ՝ վասն ոչ առնելոյն զաւելի չարութիւն.
կեղծաւորութիւն. սէր հաճոյանալոյ ։ երկիւղ անհա-
ճոյանալոյ, ամօթ վասն բարի գործոյն. սէր վասն ինքեան,
ինքնահաճութիւն, տենչումն պատուոյ. սնափառութիւն
՚ի բնական բարեաց, կամ ՚ի բարեբախտականացն. և
կամ վասն շնորհականացն. ամօթ վասն աղքատ բարե-
կամացն. խոտումն խրատուց, և անողորմութիւն ։

Մեղք բերանոյն են այսոքիկ. յաճախ երդումն. Մեղք
ստերդմնութիւն. հայհոյութիւն, անպատիժ յիշել բերանոյ
զանուն Տն, մարտնչել ընդդէմ ճշմարտութեան. Բ
ուսուցանել զայլս ՚ի ստութիւն, և ՚ի յունայնութիւն. տրտն-
ջել ընդդէմ Այ. անպատկառաբար ասել զաղօթս.
բամբասել, շողոքորթել. ստախօսութիւնք. նախա-
տինք. անէծք. վատահամբաւութիւն, գժտութիւն.
սպառնալիք. մարտնչումն ընդդէմ ճանաչեալ ճշմար-
տութեան, և ընդդէմ եղբայրականին սիրոյն. սերմա-
նումն տարաձայնութեան. մատնելութիւն. սուտ վկայու-
թիւն, չար խրատատուութիւն, հակառակութիւն հնազան-
դութեան. կատակերգութիւն. յեղաշրջել զգործեալ բա-
րիսն. դնել զվիճաբանական ատեան ՚ի յեկեղեցի.
գրգռել զայլ ՚ի բարկութիւն, յանդիմանել զայլս ՚ի յայնմ
զորս և ինքն զնոյնս առնէ. դատարկաբանութիւն, շա-
տախօսութիւն, յիմարախօսութիւն, արտաքերել զբանս

ծաղրականս , կամ աւելորդս , կամ հետաքրքիրս .
պարծումն . ճոռոմաբանութի . ջատագովելն մեղաց,
աղաղակ , ծաղր . կարկաչումն . խեղկատակութիւն .
Գ. կատակութի . երգել երգս աշխարհականս . 'ի յերգս
Դ. ածայինս առաւել ջանալ պաճուճել զձայնս քան
զջերմեռանդութի սաղմոսելն , տրտնջալ , առասպելաբանել
լինել ջատագով 'ի յանիրաւ վճիռս . գովել
զչարն :

Մեղք գործոյն

ԱՅԼ մեղք գործոյն են այսոքիկ . որկրամոլութի .
արբեցութիւն , բղջախոհութի , սեղանակալութիւն . սիմոնականութիւն . վիճակ ընկերութիւն , կախարդութիւն , ոչ պահել զպահս հանդիսական տօնից . որքապղծութի . անարժանապէս
հաղորդել , ուխտազանցութի . հաւատոյ ուրացութի .
և կարգաթողութի . ցոփութիւն 'ի յաւուրն ածային
աղօթս . գայթակղեցուցանել , կամ չար օրինակաւ
ապականել զընկերն . մատնել զմարդն 'ի յինչս , կամ
'ի յանձն , կամ 'ի համբաւն . գողութի . յափշտակութի . վաշխառութի , խաբէութի . խաղ . վաճառել
զարգաւորուն . պահանջել զհարկս , և զբաժս անիրաւելել զչարս . տալ պարգևս սուտակապասից , և կատակերգողաց . խնայել ինքեան զհարկաւորն . առնուլ զաւելորդն . 'ի վեր քան զկարողութիւնն իւր
ձեռնարկել 'ի յիր ինչ . առիթութի մեղանչելոյն .
անդրէն դառնալ 'ի մեղս . կեղծաւորութի . ձեռ-
Ե նամուխ լինել 'ի գործս առ որ չէ բաւական , և կամ
առանց մեղաց ոչ կարէ առնել . կաքաւել 'ի պարս .
զնորաձևութիւնս գտանել . ապստամբել 'ի մեծագունէն . նեղել զփոքրագոյնս . մեղանչել լսելեօք ,
տեսանելեօք , ճաշակելեօք , հոտոտելեօք , շօշափելեօք ,
ձեռնախառնութբ , համբուրիւ , ընծայիւք , ախորժակութբ , պատգամաւորութբ , պատրանօք , թղթագրութբ . զծանրացուցանող պարագայսն ոչ խոսել ,
որք են այսոքիկ , այսինքն , տեղին , ժամանակն ,
եղանակն , թիւն , անձն , յամելն , գիտութիւնն , տկր
Զ յառաջել քան զփորձութիւն . գրգռել զինքն առ մեղանչել :

Մեղք զանցառութե:

Է ԱՅՍ մեղք զանցառութեան , են այսոքիկ . ոչ
խորհիլ զայ , ոչ երկնչիլ յայ . ոչ սիրել զնա , և
ոչ գոհանալ զերախտեաց նորա . զգործն զոր
առնիցէ , ոչ վերածել առ նա . ոչ ցաւիլ վասն մեղացն որ քան պարտ է . ոչ նախապատրաստել զինքն

մաառ 'ի յընդունիլ զշնորհս · ո՛չ ածել 'ի գործ զտուեալ շնորհն , և ոչ պահել զնա · ա̃ծային ազդմամբն՝ ո՛չ դառնալ առնա · զկամս իւր՝ ո՛չ համաձևացուցանել կամացն ա̃յ · ո՛չ դնել միտս՝ երգեալ աղօթից · զանցառնել զաղօթիւքն՝ զոր պարտական է առնել · հեղգանալ 'ի յայնմ՝ որում պարտական է ուխտիւ , կամ հրամանաւ , կամ գործառնութե̃ · հեղգանալ 'ի հաղորդիլ , և 'ի խոստովանիլ , գոնեայ միանգամ՝ 'ի տարւոջ · զծնողսն ո՛չ պատուել · զինքն ոչ ճանաչել՝ և յանդիմանել · զխիղճ մտացն՝ անփոյթ առնել · փախչել 'ի յեկեղեցւոյ , և 'ի քարոզութենէ · փութութեամբ ո՛չ ընդդիմանալ , զեդեալ ապաշխարանքն զանց առնել, կամ հեղգութե̃ կատարել և յապաղել՝ զոր պարտի առժամայն առնել. բարւոյ ընկերին ուրախակից ո՛չ լինիլ · ընդ չարն նորա ո՛չ ցաւակցիլ · կրեալ անիրաւութեանցն ո՛չ առնել զթողութի̃ · զհաւատ ընկերին ո՛չ պահել · զերախտիսն նո̃ ո՛չ յիշել · զյանցաւորս ո՛չ յանդիմանել, զկռիւս ո՛չ խաղաղացուցանել, զտգէտսն ո՛չ ուսուցանել, զնեղեալս ո՛չ մխիթարել · խրատուց ո՛չ հաւանիլ :

Կատարեցաւ գիրք երրորդ · որ յաղագս
ապաշխարութե̃ մեղաց :

Ցանկ գլխոց չորրորդի գրոցն, որ յաղագս մարդեղութե֊ քի ։

Ա. Նախ՝ Յաղագս ներմարմնութե քի ։
Բ. Յաղագս հրեշտակական ողջունին ։
Գ. Յաղագս պատասխանւոյ կուսին ։
Դ. Յաղագս սրբութեան կուսին ։
Ե. Յաղագս տէրունական յղութեն ։
Զ. Յաղագս պատճառաց մարդեղութեն ։
Է. Յաղագս կերպի մարմնանալոյն ։
Ը. Յաղագս միաւորութե առեցեալ բնութեն ։
Թ. Յաղագս օգտութե, որ 'ի մարդեղութենէ ։
Ժ. Յաղագս զարմանալեաց, որ 'ի մարմնաւորութեն ։
ԺԱ. Յաղագս ծննդեանՏն ։
ԺԲ. Յաղագս թլփատութե Տն ։
ԺԳ. Յաղագս մկրտութե Տն ։
ԺԴ. Յաղագս լրութեան՝ շնորհացն քի ։
ԺԵ. Յաղագս լրութեան իմաստութեն քի ։
ԺԶ. Յաղագս արդեանց քի ։
ԺԷ. Յաղագս կամացն քի ։
ԺԸ. Յաղագս պակասութեցն՝ զոր է առ քս ։
ԺԹ Յաղագս չարչարանացն քի ։
Ի. Յաղագս ներգործութեց չարչարանացն քի ։
ԻԱ. Յաղագս խաչին քի
ԻԲ. Յաղագս իջանելոյն քի 'ի դժոխս՝ ։
ԻԳ. Յաղագս յարութեն քի ։
ԻԴ. Յաղագս համբարձմանն քի ։
ԻԵ. Յաղագս նստելոյն քի՝ ընդ աջմէ հօր 'ի յերկինս ։

ՏԱՐԱԾՈՒՄՆ

Ա՟ծաբանականի Ճշմարտութե՟ն,

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ.

Յաղագս մարդեղութե՟ն Քի՟.

Յաղագս ներմարմնութե՟ն Քի՟. Գլուխ Առաջին.

Որպէս մե՟ծ է սկիզբն ներգործական ամենայն իրողութեանց, 'ի ստեղծման, նոյնպէս նորոգական 'ի փրկութեան, և կատարունական 'ի հատուցման։

Քանզի որպէս հայր զամ՟ ստեղծ, անստեղծ բանիւն, նոյնպէս և զամ՟ վերաստեղծանէ, և Նորոգէ՝ բանիւն մարմնացեալ։ Արդ շուրջ զմարդեղութե՟ Քի, այսպիսի էր կարգ։ Ողջոյն հրեշտակական. պատասխանի կուսական. սրբութիւն մայրական. և յղութիւն ա՟ծային; զորոց այժմիկ ճառելի է։

Յաղագս հրեշտակական ողջունին։ Գլ. Բ.

Ա. Առաքեցաւ Գաբրիէլ ՚ի կարգէ հրեշտակապետաց՝ առ երանուհի կոյսն Մարիամ, որ զգալապէս երևեցաւ մարմնաւոր տեսլեամբ. Թէպէտ խօսէր ընդ նմա հոգևոր զրուցատրութբ։ Չի առ այնպիսի պատուական խորհուրդն պարտէր լինել պատգամաւոր հրեշտակն վս երից պատճառաց։ Նախ՝ վասն ազգականութե՛ն կուսութե՛ն առ հրեշտակական բնութիւնն։ Երկրորդ՝ վս կարգի մարդկայնին կորստեանն, զի ոմն ասէ՝ սատանայ օձիւն եկն առ Եւայ, այսպէս եկն աստ ած, հրեշտակիւն առ կոյսն։ Չի ըստ այսմ ներհակաբարոյ գեղն պատասխանիցէր հնարողութեանն. նորոգումն գլորմանն. հնարին մեքենան։ Երրորդ՝ զի որպ՟ շնորհն այն էր նորոգութիւն մարդկային բնութեան, նմանապէս և հրեշտակական կործանմանն. վասն որոյ հասարակ բարերարութեանն երկոքեան բնութիւնն պարտէր հասարակաբար պատմեալ, այսինքն, հրեշտակային, և մարդկային։ Արդ՝ ողջոյն կուսին բաժանի յերիս մասունս։ Զառաջինն ասաց հրեշտակն ասելով. ողջոյն լի շնորհօք, Տր ընդ քեզ. օրհնեալ ես դու ՚ի կանայս։ Զերկրորդն յաւել եղիսաբեթ ասելովն. և օրհնեալ է պտուղ որովայնի քո։ Զերրորդն սահմանեաց եկեղեցի, ասելով, մայր այ Մարիամ բարեխօսեա առ Տր. զի անուն մարիամու պատմեալ լինիցի։ Իսկ ողջոյնս այս՝ է՛ գովելի վասն չորից պատճառաց։ Նախ՝ վասն առաքողին, այսինքն, այ։ Երկրորդ՝ վասն պատգամաւորին, զի ոչ էր արժանի մարդ որ աւետապատմել զայս, այլ հրեշտակն. և ոչ իւրաքանչիւր հրեշտակ, այլ Գաբրիէլ։

Երրորդ՝ վս նորա, որ ընկալաւ զողջոյնն, զի կոյս էր. և ոչ իւրաքանչիւր կոյս, այլ կոյսն Մարիամ։

Չորրորդ՝ վասն կերպի ողջունին, որ ցուցանէ զանմեղութիւն կուսին ասելով, ողջ լեր։ Նա և ցուցանէ զշնորհս կենցաղավարութեան նորին ընդ ասելն լի շնորհօք։ Այլ և զգերազանցութիւն յղութեանն յորժամ ասէ՝ Տր ընդ քեզ։ Դարձեալ զառանձնական գերապատուութիւն, ընդ ասելն՝ օրհնեալ ես դու ՚ի

կա

կանայս։ Բայց գիտելի է՝ զի ողջոյնք ոմանք են ըղձականք 2. Թագ.
առողջութեան. ըստ այնմ, ողջ լեր արքայ։ 16. 16.
Ոմանք են ըղձականք շնորհաց. ըստ առաքելոյն ՚ի Տոբ. 5.
բազում տեղիս որ ասէ՝ շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն։ 11.
Ոմանք խնդութեան, ըստ Տօբիթայ՝ խնդութիւն Հռութ.
քեզ միշտ եղիցի։ Ոմանք տենչականք օրհնութեան, 2. 4.
ո՟պ ասէ Հռութ՝ օրհնեսցէ զքեզ Տ՟ր։

Իսկ հրեշտակական ողջոյնս այս՝ երեւի համաղուդեալ ամ՟ցն։ Քանզի պարունակէ զողջութիւն, ընդ ասելն՝ ողջոյն։ Նա և զշնորհն՝ ընդ ասելն՝ լի շնորհօք։

Այլ և զխնդութիւն՝ այնու, որ ասէ՝ Տ՟ր ընդ քեզ։ Նա և զօրհնութիւն անդ՝ ուր ասէ, օրհնեալ ես դու ՚ի կանայս։ Իսկ ողջոյնս այս՝ ցուցանէ զերեքկին գերազանցութիւն կուսին, այսինքն, բնութեան՝ ընդ ասելն՝ ողջոյն. շնորհաց՝ այնու, ուր ասէ՝ լի շնորհօք. փառաց՝ անդ՝ ուր ասէ՝ օրհնեալ ես դու ՚ի կանայս։ Նա և ծանիր զվեց իրս ՚ի հրեշտակային պատգամաւորութիւնս։ Նախ՝ թէ որպիսի մեծաւ պատուաւ ետ զողջոյն կուսին. ասելով, ողջոյն լի շնորհօք։ Երկրորդ՝ թէ որպիսի գերազանցապէս գովեաց զնա՝ ասելով, օրհնեալ ես դու ՚ի կանայս։

Երրորդ՝ թէ ո՟պ քաղցրութ՟բ զօրացոյց զնա՝ ասելով, մի՛ երկնչիր Մարիամ։ Չորրորդ՝ թէ ո՟պ մեծաւ զգուշութ՟բ, և ստէպ կատարեաց զպատգամաւորութիւն իւր, ասելովն՝ ահա յղասցիս, և այլն։

Հինգերորդ՝ թէ ո՟պ ճոխաբար մեկնեալ յայտնեաց զեղանակն՝ ասելով. հոգին ս՟բ եկեսցէ ՚ի քեզ, և այլն։

Վեցերորդ՝ թէ որպէս պատշաճաբար ենթադրեաց զպտուղն, որ ծնանելոցն էր՝ ասելով, որ ծնանելոցն է ՚ի քէն ս՟բ է և որդի ա՟յ կոչեսցի։

Յաղագս պատասխանւոյ կուսին։ Գլ. Գ.։

Կրկին ընթեռնումք ՚ի գիրս ս՟բս երկախօսութիւն, Ծննդ.
մի ՚ի մէջ Եւայի՝ և բանսարկուին, 3. 1.
որով մուծաւ մահն ՚ի ներքս. Ղուկ.
իսկ միւսն՝ ՚ի մէջ Մարիամու՝ և հրեշտակին. 1. 27.
յորմէ եղև կեանք։ Արդ՝ զերիս իրս արար սրբուհին ՚ի յողջոյնն հրեշտակին. այսինքն, զխոկումն, կամ զընտրողութիւն, զի խորհէր՝ թէ որպիսի իցէ ողջոյնս այս։

Չհար-

Զհարցումն՝ զի խնդրէր, թէ ո՞րպ լինիցի ինձ ։
Զհաւանումն՝ զի պատասխանեաց ․ ահաւասիկ կամ
աղախին Տ՟ն ։ Արդ ծանիր՝ զի ՚ի ընտրողութեանն
Ծննդ․ ոչ էր վաղվաղկոտ, որպէս զեւա ․ և ՚ի հարցումն ոչ
3․ 1․ էր երկբայ, որպէս զզաքարիա ․ և ՚ի հաւանումն ոչ
Ղուկ․ էր յամր՝ որպէս զսառա ։ Իսկ ՚ի հաւանութեան պատասխանիս
1․ 18․ կուսին են չորք բանք ․ որք ցուցանեն
Ծննդ․ զչորեսին առաքինութիւնսն նորա ։ Քանզի ասէ,
18․ 12․ ահաւասիկ կամ, որ ցուցանէ զյօժարական հնազանդութիւնն ։
Աղախին Տ՟ն, որ բացայայտէ զկատարեալ խոնարհութիւնն ։ Եղիցի ինձ ․ որ ցուցանէ զբորբոքեալ սէր ։ Ըստ բանի քում, որ նշանակէ զջերմեռանդ հաւատն ։ Եւ ծանիր՝ զի զեօթն բան յիշէ գիրք ս՟բ, զոր խօսեցաւ ս՟բ կոյսն ։

Ղուկ․ 1․ Առաջինն է՝ որ ասաց՝ զի ա՞րդ լինիցի ինձ այդ ։
34․ Երկրորդ՝ ահաւասիկ կամ աղախին ։ Երրորդ՝ յորժամ
Ղուկ․ ետ ողջոյն եղիսաբեթի ։ Չորրորդ՝ մեծացուսցէ
1․ 40․ անձն իմ զՏ՟ր ։ Հինգերորդ՝ որդեակ՝ զինչ գործ
Ղուկ․ 2․ գործեցեր ։ Վեցերորդ՝ գինի ոչ ունին ։
48․ Եօթներորդ՝ զինչ ասէ ձեզ՝ արարէք ։ Առաջինն է՝
Յոհան․ մեծի խոհեմութե՟ն ։ Երկրորդն՝ խորագոյն խոնարհութե՟ն ։
2․ 5․ Երրորդն՝ քաղցր մարդասիրութեան ։
Չորրորդն՝ ջերմեռանդից աղօթից, և գոհութե՟ն ։ Հինգերորդն՝ մեծագոյն սիրոյն ։ Վեցերորդն՝ ընդարձակագոյն գթութե՟ն ։ Եօթներորդ՝ օգտակարագոյն ուսման ։ Եւ տես՝ զի ա՟մ բանքն կուսին կարճ․
Ա բայց աղօթական, և գոհացողական բանքն երկար, զոր մեք պարտիմք զնոյնն առնել, և մանաւանդ կանայք ։

Յաղագս սրբութե՟ն կուսին ։ Գլ․ Դ․

Սրբութիւնն է՝ եռակի, քանզի ոմն է հասարակական, որ լինի ս՟բ խորհրդով․ ոմն յատկական, որ լինի շնորհօք ոգւոյն սրբոյ, և ոմն ևս յատկական, որ լինի եզական շնորհօք ։ Առաջինն՝ ՚ի բաց մերժէ զմեղս, և տայ զշնորհս ․ սակայն մնայ արմատ մեղաց, և դիւրասահութ՟ն ՚ի մեղանչելն, և այնպիսի է ՚ի մկրտեալսն ։
Երկրորդն ՚ի բաց մերժէ զմեղս և զդիւրասահութ՟ն

մն,

մահուչափ մեղանչելոյ. և այսպիսի էր սրբութիւնն ղուկ. յովհաննու մկրտչին յարգանդի մօրն, և երեմիայի: 1. 15. Երրորդն՝ բառնայ զսկզբնական մեղսն, և զդիւրա- երեմ. սահութիւն մեղանչելոյն, թէ ներելի և թէ մահու- 1. 5. չափ, և այսպիսի էր 'ի յերանեցեալ կոյսն: Եւ գիտելի է, զի թէպէտ շնորհք սրբութեն որ յարգանդին է՝ մեծագոյն ըստ ինքեան՝ քան զխորհրդական շնորհսն, սակայն ըստ ներգործութեանց ոմանց՝ մեծագոյն է խորհրդականն՝ քան զսա. զի մկրտութիւնն տպաւորէ զկնիք. և բառնայ զդուռն արքայութեն. և ճահաւորէ զմարդն՝ առ այլ խորհուրդս. յորոց զոչ իմն առնէ սրբութիւնն որ յարգանդի՝ ըստ ինքեան: Սակայն շնորհք սրբութեն որ յարգանդին, գերազանցէ քան զշնորհս մկրտութեն, այնու՝ զի այնպիսի սրբացուցեալն՝ ոչ կարէ մեղանչել մահուչափ, և առ ներելին նուազ ձկտեցուցանէ զնա արմատն, յաղագս որոյ, զնուազագոյնս և զսակաւ ներելիս գործէ. և այսպիսի շնորհ էր 'ի յովհաննէս մկրտիչն. և վն այսորիկ՝ զի մի ընդունայն զշնորհն այ ընդունի- ղուկ. ցի, փախեաւ 'ի մարդկային ընկերակցութենէ: 1. 80.

Եւ զանձկագոյն ապաշխարութիւն ընկալաւ 'ի յինքն, զի մի կարասցէ աղտեղանալ վարք նորա, նա և թեթև իմն վատահամբաւութբ: Արդ՝ յայտ է, զի շնորհ սրբութեանն որ յարգանդի տուեալ լինի, է միջակ 'ի մէջ խորհրդական, և լիակատար շնորհաց հաստատութեն, որ 'ի վերին գաւառն; որ ունի միաւորեալ յինքեան զվերջին վախճան: Քանզի առ կատարեալ հաստատութիւնս՝ վերաբերին երեք իրք:

Առաջինն է՝ անբաժանելի միաւորութիւն բանականին առ ած: Երկրորդն՝ բոլորովին նուաճումն ստորին ղուկ. զօրութեանց հոգւոյն, 'ի ներքոյ հրամանաց բանականին: 10. 38. Երրորդ՝ համակ հանապազորդ և ներգործական դարձումն բոլոր մարդոյն առ ած. որով մարդն՝ ածային քաղցրութբն զմայլի, 'ի բոլոր սրտէ, 'ի բոլոր յանձնէ, և 'ի յամ զօրութէ; մինչ ներգործութբ դիմէ առ ած, և յիւրաքանչիւր յայլեր, 'ի յոր- ճառագայթէ ած: Եւ արդ՝ զառաջինն սոցա՝ ունէր պարզաբար՝ շնորհն սրբացուցման. զի ո ոք որ լիցէ հաղորդակից այնմ, ոչ կարասցէ մեղանչել մահուչափ. Զերկրորդն՝ ունէր երանելի կոյսն, նմին իրի և ոչ ներելապէս մեղանչեաց, որպէս ասէ օգոստինոս: Իսկ երրորդն՝ ոչ կարէ յարմարիլ ճանապարհի աստ կենացս , վասն զի պատճառ էր այն՝ յածոյին զմայրմանէն , որ միայն է 'ի վերին դասուն է : Արդ երեք եղեն սրբութիւնք մօր Տն : Առաջին էր՝ սրբութիւն որ յարգանդի մօր . և այս ունէր զերիս ներգործութիւնս , այսինքն , զմաքրութիւն սկզբնական մեղաց . և զհեղումն շնորհաց . և զարմատ մեղաց զայթքան զսպումն , մինչ զի ոչ կարէր ածել 'ի մեղս ինչ , թէպէտ մնայր արմատն ըստ էութեան իւրոյ :

Երկրորդ սրբութիւնն էր՝ 'ի հովանաւորութե ոգւոյն սրբոյ , և 'ի յղութե որդւոյն այ , որ 'ի վերայ երից նախասացելոց ներգործութեցն , յաւել այլ ևս զերկու , այսինքն , զկիզումն ամենևին արմատոյ ցանկութեան . և զհաստատութիւն առ բարին՝ այնպէս՝ մինչ զի թէ յառաջն՝ միայն կարէր ոչ մեղանչել , այսպէս յետոյ ոչ կարէր մեղանչել : Զերկոսին ներգործութիւնս զայս՝ հրեշտակն յայտնեաց ասելով . հոգին սբ եկեսցէ 'ի քեզ , ըստ առաջնոյն : և զօրութիւն բարձրելոյն
Ղուկ. Ա. 35. հովանի լիցի 'ի վերայ քո , ըստ երկրորդին :

Իսկ հաստատութիւս այս 'ի բարին՝ ոչ եղև բարձումն անձնիշխան կամացն , այլ նորին լրումն շնորհօք :

Դարձեալ՝ ոգին սբ եկն 'ի վերայ նր , ոչ միայն առ 'ի սրբել , այլ և առ 'ի պտղաբերել . որոյ զօրութբն՝ կոյս յղացաւ , կոյս ծնաւ , և կոյս մնաց յետ ծննդեանն :

Երրորդ սրբութիւն եղև՝ 'ի բնակել որդւոյն . որ ինն ամիս մնաց յարգանդի նր . և այս 'ի վերայ ամցն նախասացելոցն , յաւել ևս զայլս երկուս ներգործութիւնս : Առաջին էր՝ զի ամ պատրաստութիւնք արմատոյ ցանկութեան բարձեալ եղեն . քանզի յորժամ բժշկեալ է ցաւն, երբեմն մնայ մնացորդ ինչ բժշկելոյ : Եւ միւսն էր՝ բոլորովին նմանումն առ ածայինն , մինչ զի էր անկարելի պատկանաւորել զնա 'ի յարդարագործ սպասելն . զի յայնժամ ոչ միայն մտօք, այլ և մարմինն ճառագայթաւորեալ լուսով ածութեն . որպէս օրինակի եզեկիելի Տռ. Արդ 'ի վերայ
Եզեկ. 43. 2. ասացելոցս համառօտեմ . զի արմատ մեղացն ապականէ զանձն , և զբնութիւնն : Զանձն՝ զի առնէ զնա դիւրահաւան 'ի չարն , և դրդէ 'ի մեղս :

Իսկ զբնութիւնն , զի ապականէ զմարմինն ըստ այնմ որ է սկիզբն առ այլ մարմին : Արդ՝ երանուհի կոյսն՝ 'ի յառաջին սրբութեն , որ եղև 'ի յարգանդի մօրն իւրոյ՝ սրբեցաւ 'ի սկզբնական մեղացն , ըստ այնմ որ արմատ ցանկութե նկատի 'ի յանձն իւր , զի ոչ ինչ

որսրբելի մնաց 'ի յանձն իւր ։ Այլ 'ի յերկրորդի սրբութեանն՝ որ եղև, յորժամ ոգին ս՟բ եկն 'ի վերայ ն՟ր, մաքրեցաւ 'ի յարմատոյ ցանկութեան՝ ըստ այնմ որ արմատն այն նկատէ 'ի բնութիւն, համեմատեալ առ 'ի ծնանիլ զզաւակն, ոչ ներգործութ՟բ բնութեան, այլ ներգործութ՟բ ոգւոյն սրբոյ ։ Քանզի արմատ ցանկութ՟ն էապէս 'ի բաց բարձաւ 'ի նմանէ ․ վասն որոյ՝ որոշելի մասն 'ի նմանէ, 'ի մարմինն Ք՟ի, զոչ ինչ ունէր յարմատոյ ցանկութ՟ե, ոչ և ոչ մայրն ։

Նա և ծանիր 'ի վերայ ասացելոցս, նաև 'ի հետևելոցս ․ զի երանուհի կոյսն 'ի յառաջին սրբութ՟ն գերազանցէր զա՟մ մկրտեալսն ։ Եւ յերկրորդի սրբութ՟ն գերազանցէր զադամ, զոր ունէր նախ քան զմեղանչելն ։ Իսկ ըստ երրորդի սրբութ՟ն, այսինքն ․ ըստ հաստատութեանն, գերազանցէր զհրեշտակսն ․ քանզի նոքա ոչ կարեն 'ի գոյացական, կամ յէութենական վարձս առնուլ, ոչ և ոչ նուազիլ ․ այլ երանուհի կոյսն՝ կարէր յառաջանալ յարդիւնս, և ոչ նուազիլ ։ Բայց արդ՝ էր չորեքին՝ սրբութիւն մօր Տ՟ն, 'ի յորս՝ ոչ կարաց համեմատիլ ոք՝ սոսկ ստեղծուած ։ Նախկինն է՝ մաքրութ՟ի սրբութեանն 'ի յարգանդին ։ Քանզի ա՟մ բնական ստեղծուածոյ մաքրութ՟ի, կամ է բնական, ոչ 'ի հրեշտակս ․ կամ 'ի ձրի տուեալ շնորհացն, ոչ էր անմեղութ՟ի առաջին մարդոյն ․ և կամ 'ի հաճոյական շնորհացն ․ և երրորդս այս մեծագոյն է քան զայլ երկուսն ։

Ուստի մինչ 'ի տեսակի շնորհացն, սրբացումն կուսին էր ևս գերագոյն, յայտ է՝ զի յաղթէ զմաքրութիւն ա՟մ սոսկ ստեղծուածոց ։ Երկրորդն է՝ մաքրութիւն անմեղութեան 'ի կեանս այս, որ և յայսմիկ իսկ գերազանցէ երանուհի կոյսն զա՟մ ․ զի եկաց առանց ա՟մ մեղաց ․ և այս պարտ էր լինել մեծի շնորհաց, որ ոչ միայն զբնութիւն կատարէր, այլ և ամբառնայր զնա 'ի վեր քան զօրէնս ապականեալ բնութեանս ։

Երրորդն է՝ մաքրութ՟ի կուսական ողջախոհութ՟ն, որով գերազանցեաց զհրեշտակս, և զմարդիկս ։

Զհրեշտակս՝ զի ըստ Ջերոնիմոսի, որ ինչ է 'ի հրեշտակս ըստ հարկի բնութ՟ե, զայն ստացեաց կոյսն մաքրութ՟բ ողջախոհութեան ։ Դարձեալ՝ գերազանցէ զա՟մ մարդ՟ այսու, զի էր առաջին նախագաղափար ամբողջութ՟ես այսորիկ, ըստ սաղմոսին որ ասէ՝ տարցին թագաւորի կուսանք ։ Դարձեալ՝ ցուցանի այս սաղ․ 44․15․

և ըստ այլ եղանակի, այսպէս, այն է կատարեալ, և
ծայրագոյն մաքրութի, որ առաւել կարէ իբր թէ
զիւր ներհակն կրել՝ քան թէ կարել տպաւորիլ. և
այսպիսի էր կուսութի դշխոյին մերոյ. որ ունի զմայրական
խնդութի, հանդերձ պատուով կուսութեն.
Նմին իրի՝ յառաջ քան զինքն ոչ ունէր զնման ինքեան,
և ոչ յետոյ: Չորրորդն է՝ մաքրութի սրբութեան ՚ի
վերայ եկելոյն ոգւոյն սրբոյ, և մերձ գոլոյն առ նա
այ, որով նմանապէս գերազանց է զամ ստեղծուածս:
Քանզի լինել մայր այ է այնքան մեծագոյն
Ա պատիւ, որ ոչ կարէ հաղորդիլ սոսկ ստեղծուածոյ.
ուստի հարկէ, զի շնորհն որ պատրաստէ առ այս,
լիցի մեծագոյն քան զամ շնորհս՝ սոսկ ստեղծուածոյ:
Ապա ուրեմն հարկէ, զի առանձնական գերապատուութի
սրբութեն մօրն, լիցէ գերազանց քան զամ
սրբութի սոսկ ստեղծուածոցս:

Յաղագս տէրունական յղութեն: ԳԼ. Ե·

Իսկոյն յորժամ երանուհի կոյսն ետ զհաւանութիւն
ղուկ.ա. 38. հրեշտակին ասելով. եղիցի ինձ
ըստ բանի քում. ոգին սբ եկն ՚ի վերայ
նորա, և յղացաւ զորդին այ:
Արդ՝ երեքեանս այսոքիկ էին համան
գամայն ժամանակաւ, և ոչ բնութբ,
յայնժամ կատարեցան նախագուշակութիք
օրինականացն, և վարդապետութիք սրբոց գրոց.
և բաղձանք մարգարէից. վասն որոյ և գալուստն
գաղ.4.4 ՔԻ ասի լրումն ժամանակի: Եւ թէ ե՞ր վս, Քս,
ոչ յառաջ, և ոչ յետոյ եկն, այս է վասն բազմաց
պատճառաց: Առաջինն է՝ զի զկարգ ընդհանուր
տիեզերի ոչ ամբոխեսցէ, Այլ կարգ ընդհանուր
աշխարհի ընթանայ ՚ի յայն, զի իւրաքանչիւր իր լիցի
՚ի յիւրում ժամանակի. ապա որչափ ևս առաւել
այս գերազանց գործ այ, այսինքն, մարդեղութիւն
որդւոյն այ, պարտէր լինել յիւրում ժամանակի:
Երկրորդ՝ զի մի հաւատն և յոյսն՝ վասն յապաղման
մարդեղութեն խոստացեալ բանին՝ կորնչէին:
Քանզի թէ յամեալ էր դգալուստն, օրստօրէ նուազեալ
լինէին մարդիկ ՚ի հաւատոյ, և դաղջանային:
Նաև ոչ յառաջագոյն պարտէր գալ, զի ոչ է օգուտ

հոգևոր դեղն՝ առանց բաղձանաց ընդունողին ։
Երրորդ՝ զի ծայրագոյն աստիճանի հիւանդութեան մեղացն անընդմիջաբար հետևէր բժշկութիւն , որպ՟ ծայրագոյն խստութեան հիւանդութեանն՝ հետևի մաքառումն , և առողջութիւն ։ Չորրորդ՝ զի մարդն ՚ի Ա բնական , և ՚ի գրաւորական օրինացն յառաջագոյն նկուն լինիցի , որպէս ասէ Օգոստինոս , եթէ քս՟ յետ մեղանչելոյն ադամայ , առժամայն եկեալ էր , ասացեալ էր մարդն՝ թէ կարէ փրկիլ բնական օրինօքն . և աւելորդ համարէր զգալուստն քս՟ ։

Նաև զնոյնն ասացեալ էր , եթէ առժամայն յետ գրաւորականին էր եկեալ . այլ յորժամ գիտացեալ՝ թէ ոչ այնու , և ոչ այսու կարէր փրկիլ . այլ ամ՟ք իջանէին ՚ի դժոխս , յայնժամ եկն քս՟ . քանզի յայնժամ հասեալ էր՝ ժամանակ գթալոյ ։ Հինգերորդ՝ զի որպէս զառաջին մարդն՝ արարեալ էր ՚ի վեցերորդում աւուր առ ՚ի կատարումն բոլորի աշխարհի, այսպ՟ և ա՟ծ լինէր մարդ՝ ՚ի վեցերորդում դարում , առ ՚ի կատարումն բոլոր ստեղծուածոցս ։ Քանզի վեցերորդ թիւն է՝ պատկանաւոր առ ՚ի հմտութիւն իմաստութեան, և ՚ի թողութիւն մեղաց , ՚ի յարդիւնս յաւիտենական կենաց , և առ ՚ի փոփոխումն՝ ՚ի թշուառութենէս ՚ի յերջանկութիւն . և այսպիսի յարմարին վեց դարուն՝ վասն կատարելութե՟ վեցեակ թուոյն ։ սաղ. 101.12. ծննդ. 1.27.

Վեցերորդն է , զի քս՟ ոչ պարտէր գալ ՚ի սկիզբն ժամանակի , զի մի՛ լինիցէր գալուստ նորա յոյժ փութանակի . ոչ ՚ի վախճանի , զի յայնժամ լինէր կարի անագան . այլ վայելէր փրկչին ՚ի մէջ ժամանակի հիւանդութեանն՝ և ՚ի մէջ ժամանակի դատաստանի՝ մուծանել ՚ի ներս զժամանակ բժշկութեան ։

Եօթներորդ՝ զի վայելէր կատարեալ առաջնորդին՝ յայնժամ ցուցանել զինքն , յորժամ լինէր ժամանակ ընթանալոյ առ բլաբխոնն , և այս է ՚ի կատարածի աշխարհի , սակայն՝ յառաջքան զկատարումն , զի երկիւղիւ դատաստանին ընդոստուցեալք , և յուսով վարձուն քարշեցեալք , և նկատմամբ օրինակի կատարելութեան խրախուսեալք , կարասցուք զօրէղաբար հետևիլ զկնի առաջնորդին մերոյ ։

Ութերորդ՝ քանզի վայելէր՝ զի ՚ի յանգամաց միջնորդին , ոմանք յառաջ ընթանային , և ոմանք զկնի հետևէին ։ Բայց արդ՝ մարդեղութիւնն քի՟ բազում օրինակք և մարգարէութիւնք յառաջեցին, յորոց բացատրեցուք զոմանս:

ծննդ.22 Աբրահամ էջ 'յեգիպտոս, զի պանդխտեսցի անդ:
դան.2. Եւ վէմն հատեալ 'ի լեռնէն՝ առանց ձեռին:
ծննդ.2.10. Գետ ելանէր 'ի տեղւոջէն փափկութեան ոռոգանել զդրախտն:
առակ.9 Իմաստութիւն շինեաց իւր տուն:
3,թա.10 Արար սողոմոն ինքեան աթոռ մեծ փղոսկրեայ:
երեմ.31.22. Եւ երեմիա, ասէ՝ նոր ինչ արասցէ Տր 'ի վերայ երկրի. կին շուրջ պատեսցէ զայր:
յովնան.1. Յովնան ընկեցեալ 'ի ծով, և դադարեցաւ ծովն:
յովէլ.3.18. Եւ յովէլ լեէլ ասէ՝ յաւուր այնմիկ բղխեսցեն լերինք զքաղցրութիւն:
երգ.6.1. Եւ 'ի յերգսն՝ իջի 'ի պարտէզ իմ, զի տեսից զպտուղ:
դատ.6. Գեղմն գեդէոնի լցեալ ցօղով:
ելից.16. Մանանայն պահիւր 'ի սափորին ոսկի:
թուոց.17 Եւ գաւազան ահարոնի որ ծաղկեցաւ:
եսա.11. Եւ ծաղիկ յարմատոյն յեսսեայ:
ծննդ.8. Արձակի աղաւնին՝ 'ի տապանէն նոյի:
ելից.15. Արկանի փարաւոն 'ի ջուրն միւայ:
ծննդ.1. Դրախտն տնկեալ լինի:
ելից.2. Մովսէս դնի 'ի տապանն պրտուեայ:
ծննդ.37.3. Իսրայէլ զգեցոյց՝ յովսէփու, զծաղկեայ պատմուճանն:
սաղ.18. Յարեւու եհար զխորանն իւր:
թուոց.13.24. Երկու արք բերին լծակաւ ողկոյզ՝ յերկրէն աւետեաց:
ծննդ.39 Արկանի յովսէփ 'ի գուբն:
եսայ.26.2. Եւ եսայի ասէ՝ քաղաք զօրութե՛ մեր սիօն; փրկիչն մեր դնիցէ 'ի նմա պարիսպ, և պատուար:
եսա.16.1. Եւ դարձեալ ասէ՝ առաքեա Տր զգառն՝ զտիրողն երկրի:
եսայ.45. Եւ դարձեալ՝ բղխեսցէ երկին 'ի վերուստ:
եսայ.19.1. Եւ դարձեալ՝ ելեալ Տր 'ի վերայ թեթև ամպոյ; եկեսցէ յեգիպտոս:
սաղ.84.11. Եւ սաղմոսն ասէ՝ ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին:
սաղ.48.3. Եւ դարձեալ, 'ի միասին ընդ միում; մեծատունն և տնանկն. ծնունդք երկրի:
եկլես.32 Եւ սիրաք ասէ՝ ակն շափիւղայ, 'ի զարդ ոսկւոյ:
եսայ.41 Եւ եսայի, ես եմ առաջին և վերջին:

Եւ յերբեմնայ՝ մշտնջենաւոր սիրով սիրեցի զքեզ, երե.31
ձգի քարշեցի զքեզ ողորմութեամբ: 3,
Արկանի զանձն 'ի գուբն առիւծուց: դան.14.
Երեւեցաւ 'ի հնոց հրոյն չորրորդ՝ նման որդւոյն այ՟: դան.3.
Յառէերն էջ 'ի ժամացուցն ընդ տասն աստիճանն: եսայ.38
Մորենին վառեալ էր՝ եւ ոչ այրէր: ելից 3.
Եւ եղեւնինն՝ զարեգակն ծածկեմ ամպով: եզեկ.32
Եւ սիրաք՝ զինչ լուսաւորագոյն քան զարեգակն, եւ եկլեա
այն նուաղեսցի: 17.30
Եւ սաղմոս՝ 'ի ծագաց երկնից են ելք նորա. սաղ.18

Յաղագս պատճառաց՝ մարդեղութեան Քի՟.
Գլ. Զ:

Արդ մարմնացեալ բանին՝ եղեւ նորոգութիւն մարդկային ազգին, ոչ եթէ այլ իմն եղանակաւ ոչ կարէր փրկել, այլ զի ոչ այլ ինչ եղանակ էր այնպիսի յարմար՝ նորոգողին նորոգելի իրին, եւ նորոգութեանն:

Քանզի յարմար էր կերպս այս նորոգողին՝ զի ցուցցէ զկարողութիւն իւր. զիմաստութիւն, եւ զբարութիւն: Արդ զինչ կարողագոյն քան զմիաւորելն զտարակացեալ ծայրսն, այսինքն, զաստեղծօղն, եւ զաստեղծուածն: Մեծ էր կարողութիւն, 'ի միաւորութե՟ աննման տարերացն. մեծագոյն 'ի միաւորութե՟ նոցին ընդ ստեղծեալ հոգւոյն, եւ եւս մեծագոյն 'ի միաւորութիւն սոցա ընդ անստեղծ հոգւոյն, ուր եւ է իսկ կարի իմն աննմանութիւն: Եւ զինչ իմաստնագոյն՝ քան թէ առ 'ի կատարումն բոլորի տիեզերի՝ լինիցի միաւորութիւն առաջնոյն եւ վերջնոյն, այսէ, բանին այ՟, որ է սկիզբն ամենեցուն, եւ մարդկային բնութեան, որ 'ի վեցօրեայ գործս արարչութե՟, եղեւ վերջին քան զամ՟ ստեղծուածս: Այլ եւ զինչ բարեկամագոյն՝ քան թէ ստեղծօղն դոյից կամեցաւ հաղորդել զինքն ստեղծեալ իրողութեցս. եւ բարեկամութիւն այս, էր մեծ 'ի հաղորդակցութե՟ ինքեան ընդ ամ՟ իրս, 'ի յորս է, էութեամբ, ներկայութեամբ եւ կարողութեամբ. էր մեծագոյն, զի հաղորդեաց զինքն բարեաց 'ի ձեռն շնորհաց. էր մեծագունեղ՝ զի հաղոր-

դեաց

դեաց զինքն մարդոյն միաւորութ՟բ, 'ի միութեան անձին:

Նա և կերպս այս՝ էր պատշաճաւորագունեղ՝ 'ի կողմանէ նորոգելի իրին, զի մարդն մեղօք անկաւ 'ի հիւանդութ՟ի, 'ի տգիտութ՟ի, և 'ի չարութ՟ի, վ՟ա որոյ եղև անպատկան՝ առ 'ի հետևիլ ա՟ծային առաքինութեան, և առ 'ի ճանաչել զճշմարտութիւն, և առ 'ի սիրել զբարին: Վ՟ որոյ ա՟ծ եղև մարդ, որով և արար զինքն մարդոյն հետևելի, ճանաչելի, և սիրելի:

Նա և եղև եղանակս այս՝ ամենևին պատկանաւոր 'ի փրկութ՟ն մեր. զի որ՟ն 'ի կերպարանս ծառայի, նախահոգաց զփրկութիւն ծառայի: Են և այլք պատճառք, թէ է՞ր վասն պատշաճ էր մարդանալն ա՟յ: Առաջինն է՝ զի ստունգանօղն եբարձ 'ի մէնջ զա՟ծ. ուստի յարմար էր՝ զի նորոգօղն անդրէն դարձուցանէր 'ի մեզ զա՟ծ: Երկրորդ՝ զի խոնարհութիւն վայելէր ա՟յ, այլ ոչ կարէր խոնարհիլ մինչև 'ի չարչարանս ա՟ծային բնութ՟ն, ապաուրեմն պիտոյէր՝ զի խոնարհիցէր միւս այլ բնութ՟բ: Երրորդ զի լցուսցէ զմարգարէութիւս եսայեայ. որ ասէ՝ ես որ խօսէի ահաւասիկ հասի: Եւ զամբակումայն. երևեսցի 'ի վախճանի, և ոչ ստեսցէ. եթէ յամեսցէ, համբեր նմա, զի գալով եկեսցէ: Չորրորդ՝ զի ուսուսցէ յաղթել զչարն, մանաւանդ արդարութ՟բ, քան կարողութ՟բ: Հինգերորդ՝ զի խորշեսցի յանպատշաճութէ. զի թէ ա՟ծ մարմնանալ ոչ կարաց, կամ ո՛չ գիտաց, կամ ո՛չ կամեցաւ, երևի գոլ 'ի նա անկարութ՟ի, կամ անգիտութիւն, և կամ նախանձ, որ է կարի իմն անպատշաճ: Վեցերորդ՝ զի այնքան լինիցի խոնարհութ՟ի 'ի փրկչին, որ քան եղև հպարտութիւն 'ի ստունգանօղն. և զի այն քան եղև ամբարտաւանութիւն, մինչ զի մարդն կամէր լինել ա՟ծ, նմին իրի պարտ էր լինել այնքան խոնարհութիւն, մինչ զի ա՟ծ լինէր մարդ: Եօթներորդ՝ զի զարթուսցէ զսէր մեր, և կանգնեսցէ զյոյս: Ութերորդ՝ զի տացէ մեզ զօրինակ հետևելոյ առաքինութեց, 'ի յերևելի, և 'ի մարդկային կերպարանս: Իսկ թէպէտ՝ գործք երրորդութեան են անբաժանելիք՝ այնպէս, մինչ զի զոր ինչ ներգործէ մի անձն՝ ներգործէ և միւսն, սակայն միայն որդին էառ զմարմին, և ոչ հայր, և ոգին ս՟բ, զոր օրինակ, երկուքն զգեցուցանիցեն զերրորդն

ին

Ա

եսայ. 52.6. ամբակ. 2.3.

ինքեանց, որոց կարէ ասել, թէ զոր ինչ տեսնէ մինն, տեսնէ և միւսն, սակայն մինն միայն զգեստաւորի ։ Նոյնպէս ասելիէ՝ թէ գործ մարդեղութեան մերթ վերագրի հօր, ոչ անդ՝ ուր ասէ, իբրև եկն լրումն ժամանակի, առաքեաց ա̃ծ զորդին, որ եղև 'ի կնոջէ ։ գաղ. 4. 4. Երբեմն վերագրի որդւոյն ոչ անդ, ուր ասէ. ելի 'ի հօրէ, և եկի 'յաշխարհ, յոհ. 16. 28. և երբեմն առանձին ոգւոյն սրբոյ. ըստ այնմ որ ասի 'ի դաւանութեան. յղացաւ 'ի յոգւոյն սրբոյ ։ Այլ այսոքիկ վս այն ասին, զի գործ ներմարմնութեան էր մեծի կարողութեան, իմաստութեան, և բարութեան. որք վերագրին երից անձանց ։ Այլ և արդ բազումք են պատճառք, թէ է՞ր վս որդին մարմնացաւ, և ոչ հայր, և ոգին ս̃բ ։ Նախ՝ զի նովին իմաստութ̃բ, որով զաշխարհս արարեալ էր՝ լինէր և նորոգութի ։ Երկրորդ՝ զի այն որ էր որդի 'ի յա̃ծութեան, լինէր որդի և 'ի մարդկութ̃ն ։ Երրորդ՝ զի մի՛, նոյնն լիցի հայր և որդի, եթէ հայր ծնանիցիւր 'ի կուսէն ։

Չորրորդ՝ զի պատշաճաւորագոյն առաքեալ լինէր այն՝ որ յայլմէ՝ քան այն որ ոչ յումեքէ ։ Հինգերորդ՝ հռով. 8. 17. վասն հաստատութեան ժառանգութեան խոստացելոյն մեզ, զի մի՛ գուցէ ասասցէ մարդն՝ ցհայր՝ Տ̃ր, դու ունիս զորդի, որում վերաբերի ժառանգութին այն; զոր մեզ խոստացար. վս այսորիկ եկն որդի՝ զի հաստատեսցէ 'ի մեզ զժառանգութին զայն՝ ասելով, ես ուխտեմ ձեզ, որպէս և հայր իմ ուխտեաց ինձ ։ ղուկ. 22. 29. Վեցերորդ՝ զի երևեսցի սէր հօր առ մեզ, ոչ ասէ յոհան՝ այնպէս սիրեաց ա̃ծ զաշխարհ, մինչ զի զմիածին իւր ետ ։ յոհ. 3. 16. Եօթներորդ՝ զի ցուցանիցի թէ հայր ա̃ծ զնչինչ ունի, զոր ոչ կամիցի տալ մեզ, և այն, զի զորդին միածին իւր իցէ տուեալ, որպէս ասէ առաքեալն. որ յիւր որդին՝ ոչ խնայեաց, զի ա՞րդ ոչ նովաւ հանդերձ զա̃մ ինչ շնորհեսցէ ։ հռով. 8. 32.

Ութերորդ՝ զի որպէս որդին ա̃յ եղև մարդ, այսպէս մարդն լինէր որդի ա̃յ. ըստ առաքելոյն. առաքեաց ա̃ծ զորդի իւր, գաղ. . 5 զի մեք զորդէգրութի ընկալցուք ։ Իններորդ՝ զի լինիցի պատճառ փրկութե, որ եղև պատճառ գլորման, զի մարդն ցանկացաւ գիտութեանն ա̃յ, որ է յատուկ որդւոյն ա̃յ; և անկաւ. նոյնպէս նովին գիտութեամբն պարտէր կանգնիլ իսկ ։ Տասներորդ՝ պատշաճ էր զի պատկերն ա̃յ պատկերաւն նորոգեսցի ։ Մետասաներորդ՝ զի որոչես բան մնաց՝ միջնորդութե՟ աստուածայոյն բնութեան արտաքերի, այսինքն, ձայնիւ, նոյնպէս յաւիտենական բանն՝ առմամբ բնութեանս մերոյ:

Ա.տիմ· 2.5· Երկոտասաներորդ՝ զի միջինն անձանց՝ պարտ էր լինել միջնորդ ա՟յ, և մարդկան: Երեքտասաներորդ՝ զի իմաստութի՟ հօր՝ պարտէր նորոգել զխնդրողն իմաստութեան, որում ասացաւ, 'ի Ծննդոց՝ լինիցիս իբրև զա՟ծս ճանաչել: Ծննդ· 3.5· Չորեքտասաներորդ՝ զի ամենավայելչապէս զուգաւորի խոնարհութիւնն ընդ իմաստութե՟, որպէս ասէ առակաց· ուր է խոնարհութիւն, անդ՝ է իմաստութիւն, ուստի և առակ· 11.2· առաւել որդւոյն ա՟յ վայելէր մարմնանալ:

Հնգետասաներորդ՝ զի նախադաղափարքն ոչ այլ ինչ են, եթէ ոչ իմաստութիւն ա՟յ, որ վերաբերի առ որդին: Ուստի զի իւրաքանչիւր նախադաղափարք են պատճառք իւրաքանչիւրոյ իրի նախադաղափարեցելոյ, նմին իրի՝ յայնժամ ա՟մ ինչ կատարեալ և լցեալ եղանի՝ յորժամ ա՟մքն դառնան 'ի սկիզբն իւրեանց, որ եղև իսկ մարդեղութե՟ն Ք՟ի:

Վեշտասաներորդ՝ եթէ հայր էր մարմնացեալ, յայնժամ ոչ ոք անձն լեալէր առանց սկզբան:

Եօթնևտասաներորդ՝ զի պիտոյ էր մարմնացեալ անձին՝ իբրև զքահանայ բարեխօսել առ հայր,'ի բնութեան մերոյ, զոր առեալ իսկ էր· իսկ առաւել պարտէր որդւոյ աղաչել զհայր, քան հօր զորդի:

Ութևտասաներորդ՝ զի թէ այլ ոք էր մարմնացեալ, յայնժամ լինէին երկու որդիք:

Իննևտասաներորդ՝ զի ոչ ումեք վայելէր դարձուցանել զմարդն առ ա՟ծային ճանաչումն, քան թէ բանին, որով և հայր իսկ յայտնէ զնա, որ է միաւորելի ընդ մարմնոյ, որպէս բանն ընդ ձայնի:

Բ Քսաներորդ՝ զի ոչ ումեք վայելէր յաւէտ դարձուցանել զմարդն առ ա՟ծային որդեգրութի, քան թէ բնական որդւոյն:

Յաղագս կերպի մարմնանալոյն : Գլ. Է.

Ի Հասարակ նորոգումն ամէն՝ վայելէր լինել համընթացումն երից , 'ի յերեքկին քահանայապետութեանցն , այսինքն , յածայնոյն , 'ի հրեշտակականէն , և 'ի մարդկայնոյն . ուստի 'ի խորհուրդ մարդեղութեան , եղև համընթացումն աւետաւոր հրեշտակին , և յղացելոյ կուսին , և բանին այ առողին զմարմին : Իսկ արդ ընդ առաքել բանին այ յաշխարհս , ոչ լինի փոփոխումն տեղական . այլ առումն մարդկային բնութեան . զի առաքելն նորա է լինել , ուր նախ էր . բայց այլ կերպիւ գոլոյ՝ քան թէ էր յառաջագոյն . և այլութիւ այս՝ ոչ է 'ի կողմանէ նորին որ է , մինչ իցէ անփոփոխելի . մաղ. 3. 6
այլ 'ի կողմանէ այնորիկ , նորում է , զի միաւորի ընդ Ա
մարմնոյ մերոյ . ուստի փոփոխումն ոչ լինի 'ի կողմանէ որդւոյն , այլ 'ի կողմանէ առեցելոյն :

Դարձեալ 'ի տեղական փոփոխումն պահանջի ոչ լինել անդ այնմ , ուր յառաջագոյն էր . որ ոչ է 'ի յառաքումն որդւոյն այ . զի յետ մարմնանալոյն էր 'ի
հայր , ուր և միշտ : Արդ՝ քս էառ զբնութիւնս մեր յոհ. 10.
հինգ եղանակաւ : Նախ՝ ողորմութք , ըստ առաքե- 38.
լոյն . որ ասէ՝ ըստ իւրում ողորմութեն փրկեաց զմեզ : տիտ. 3. 5
Երկրորդ՝ օգտակարաբար , այսինքն , վասն մերոյ
փրկութեան . ըստ դաւթի , որ ասէ՝ որ արար զփր- սաղ. 73.
կութիւն , 'ի մէջ երկրի : Երրորդ՝ իմաստութք . զի 12.
էառ զբարին բնութեան՝ անարգելով զչար մեղացն .
ըստ եսայեայ՝ որ ասէ՝ իւղ և մեղր կերիցէ , զի կա- եսայ. 7.
րասցէ անարգել զչարն , և ընտրել զբարին : 15.

Չորրորդ՝ զօրեղաբար , զի այնպէս էառ զբնութիւն , մինչ զի ոչ երբէք եդ զնա 'ի բաց . քանզի յետ մահուանն էր միաւորեալ ածութիւն ընդ մարմնոյն՝ 'ի գերեզմանի , և ընդ հոգւոյն 'ի դժոխս :

Հինգերորդ՝ զարմանալապէս . զի 'ի մարդեղութեն յայտ. 1. 8
քի . միաւորեցաւ վերնագոյնն՝ ընդ ստորնագունին , յոհ. 1.
այսինքն , ածն , և հողն : Դարձեալ՝ բանն մարմին 14.
եղև հինգ եղանակաւ . Նախ ըստ ճշմարտութեան մարմնոյն , զի ճշմարտապէս մարմնացաւ , որպէս ասէ
եսայի՝ ճշմարտապէս զցաւս մեր եբարձ : եսայ.
53. 5.

Երկրորդ՝ առանց մարմնոյ, զի թալոց ներգործութե̄
մատթ. մարմնականի, ըստ այնմ որ ասէ մատթէոս, որ
1.20. ՚ի նմայն ծնեալ է՝ ՚ի հոգւոյն սրբոյ է ։ Երրորդ՝ ՚ի
վեր քան զմարմին․ զի ոչ ըստ մերում արժանաւորութե̄,
ըստ առաքելոյն որ ասէ՝ ոչ ըստ գործոց
տիտ. 3. 5. արդարութե̄, զոր արարաք մեք ։ Չորրորդ՝ վասն մարմնոյ․
զի վ̄ն փրկելոյ զմարմինն․ և այս որ քան առհաւատարիմն
գործադրաբար․ թէպէտ ըստ ինքեան
էր բաւական առ ՚ի փրկութի ա̄մգն, ըստ այնմ որ
մատթ. ասէ մատթէոս, կոչեսցի անուն նորա Յ̄ս, զի նա
1.21. փրկեսցէ զժողովուրդ ։ Հինգերորդ՝ ընդդէմ մարմնոյ․
յոհ. 15. զի առ ՚ի մեծագոյն դատապարտութի անհաւատիցն,
22. ըստ այնմ, որ ասէ՝ իմ եթէ չէ՛ր եկեալ և
խօսեցեալ ։ Եւ գիտելի է՝ զի գործ առման բնութե̄
մերոյ՝ ոչ հոգիանորութե̄, այլ մարմնաւորութե̄ կոչի․
թէպէտ սովորութի է իւրն, ՚ի պատճառականութե̄
անուանել․ իսկ այս է, վ̄ն բազմաց պատճառաց․
նախ՝ զի յայտնագոյն լինիցի անուանումն ։

Երկրորդ՝ զի խորագոյն երևեսցի մարդասիրութիւն ողորմողին․ Երրորդ՝ զի առաւել ծանօթ է մեզ մա̄ն մարմնոյն, քան հոգւոյն ։ Չորրորդ՝ զի հռչակեսցի մեծագոյն խոնարհութիւն․ փոխանակ՝ զի առաւել տարակացեալ է յա̄յ մարմինն քան հոգին ։

Հինգերորդ՝ զի մարմինն համասերի ՚ի ծնողաց, բայց հոգին ստեղծանի յա̄յ ։

Յաղագս միաւորութե̄ առեցեալ բնութե̄ն ։

Գլ. Ը.

Որպէս ՚ի յա̄ծութի̄ն է՝ մի էութի, և երեք անձնաւորութի, այսպէս և ներհակաբար ՚ի Ք̄ս, մի է անձնաւորութի, և երեք էութի, այս է ա̄ծութի̄ն, հոգին և մարմինն, որ է յաւիտենական․․ նոր․ և հին․ զի ա̄ծութի̄ն է յաւիտենական, հոգին՝ նոր, զի ընդ առնուլն ստեղծաւ, իսկ մարմինն հին, զի է յառաջ եկեալ յադամայ ։

Եւ Ք̄ս ըստ ա̄ծային բնութե̄ն է՝ ծնեալ․ իսկ ըստ հոգւոյն է՝ ստեղծեալ․ և ըստ մարմնոյն է՝ եղեալ ։ Արդ երեքկին միաւորութի եղև ՚ի Ք̄ս, այսինքն, ա̄ծութե̄ն ընդ հոգւոյն, և անդրադարձաբէս, և ա̄ծութեանն ընդ մարմնոյն, և հակադարձեալ. և հոգւոյն ընդ մարմնոյն, և անդրադարձեալ ։

Առաջին երկու միաւորութիւքն՝ մնացին միշտ. և երրորդն՝ անջատեցաւ ՚ի մահուանն ։ Ապաուրեմն միաւորութի ա̄ծութեան ընդ մարդկային բնութեանն, ոչ է ՚ի միութիւն բնութեան, այլ անձին. և ոչ ասեմ անձին մարդկայնոյ, այլ ա̄ծայնոյ, այսինքն, ոչ առեցելոյն, այլ առողին. և ոչ իւրաքանչիւր անձին ա̄ծայնոյ, այլ բանին ։ Քանզի անկարելի է՝ զի ա̄ծային բնութիւնն համընթացի ընդ այլում, որպէս մասն առ ՚ի կայացումն երրորդին. կամ ինքն անդրանցանիցի ՚ի յայլ. և կամ այլք ՚ի նա, վասն ամենակատար պարզութեան, և միութեան նորին ։ Վ̄ս այսորիկ ա̄ծութիւն և մարդկութիւն ոչ միաւորին ՚ի միութիւն բնութեան, այլ անձին. և այսպէս իմացեալ լինի ասացեալն՝ ՚ի յաթանասէ՝ ՚ի հաւաքումն հաւատոյն, որ ասէ՝ քանզի որպ̄ բանական հոգին և մարմինն՝ մի մարդ է, այսպէս ա̄ծ և մարդ՝ մի ք̄ս է ։ Քանզի անդ՝ դնի նմանութիւն, ըստ միութեան անձին, և ոչ բնութեանն. զի մարմին, և հոգին տարբերին ՚ի մարդն՝ ըստ էութեանն, սակայն կացուցանեն զմի անձն ։ Նոյնպէս ՚ի մէջ ա̄ծութեան, և մարդկութեանն ք̄ի՝ է՛ տարբերութի, և սակայն՝ է մի անձն. և զի ա̄ծային բնութիւնն՝ յոչինչ ենթակայոջ կարէ ենթակայանալ. բայց միայն յատուկ հիփոստազեան իւր. նմին իրի, միաւորութիւն այն ոչ կարէ լինել ՚ի յանձն մարդոյն, այլ ա̄յ. և վասն՝ ա̄ծ ՚ի միում անձանցն իւրոց՝ արար զինքն ենթակայ մարդկային բնութեանն. ուստի մի միայն է անդ անձնաւորութի, և անձնական միութի, այսինքն, ՚ի կողմանէ առողին ։

Քանզի առ ՚ի գոյ անձին, երեք պահանջի զանազանութի, այսինքն, եզականութե̄, և բնական անհաղորդակցութե, և գերազանցութեան՝ կամ պատուոյ ։ Վ̄ս առաջնոյն՝ ոչ ինչ ընդհանրական՝ է անձն. վասն երկրորդին. հոգին ոչ է անձն. վ̄ս երրորդին՝ ք̄ս ըստ այնմ որ մարդ՝ ոչ է անձն ։ Ա Յայսմանէ յայտ է՝ թէ որն է ճշմարիտ, կամ սուտ՝ ՚ի չորից նախադասութեցս այսոցիկ ։ Առաջինն է՝, անձն էառ զանձն ։ Երկրորդն՝ բնութիւն էառ զանձն ։ Երրորդ՝ բնութիւնն էառ զբնութի ։ Չորրորդ՝ անձն էառ զբնութի ։ Արդ առաջին երկուքն ամենևին սուտ են ։

Իսկ երրորդն՝ ըստ միոյ կերպի է ճշմարիտ, և ըստ միւսոյ է սուտ ։ Քանզի թէ առեալ լինի ըստ այնմ որ բնութիւնն երից անձանց է հասարակ , է՛ սուտ : Իսկ ըստ այնմ որ բնութի առեալ լինի 'ի յանձն որդւոյ , է՛ ճշմարիտ : Չորրորդն ամենեւին է ճշմարիտ: Արդ՝ առ 'ի յիմացումն այսորիկ ծանի՛ր, զի երեք էին թիւրութիւնք վասն մարմնալոյն քի · Առաջինն ասէր՝ թէ որդին էառ զանձն մարդոյ : Երկրորդն ասէր՝ թէ էառ զմարդկային բնութիւն: Երրորդն ասէր՝ թէ էառ զմարդն իբրեւ զհանդերձ : Արդ՝ առաջին կարծիքն՝ ոչ է ընդունելի, քանզի դնէ 'ի քս զերկու անձն, որ է սուտ : Երկրորդն է՛ հասարակ , եւ հանդիսի , քանզի դնէ՝ թէ քս , է՛ մի միայն , թէպէտ եւ իցէ իր ինչ , ըստ այնմ որ մարդ : Դարձեալ դնէ՝ թէ առօղն ոչ է առեցեալ : Դարձեալ մարդն այն՝ է ած, եւ հակադարձեալ : Դարձեալ՝ թէ ամ յատկութիւն բանին այ՝ առ այնմ մարդոյն , եւ անդրադարձեալ:

Երրորդ կարծիքն՝ արհամարհի իբր զհերետիկոսական · զի դնէ ոչ գոլ երկու բնութի 'ի մի անձն քի · եւ թէ կրկին գոյացութիք , այսինքն , մարդկային բնութն, եւ ածային բնութն , ոչ վերաբերելին առ անձնաւորութիւն բանին այ , այլ թէ արտաքոյ ունին զինքեանս առ նա : Այս ուրեմն ասեմք · թէ այնքան միաւորութի է անդ, զի որ ինչ առ զորդւոյն այ, առ եւ զորդւոյ մարդոյն՝ եւ անդրադարձապէս · բաց յայնցանէ , յորս բացատրի միաւորութի , եւ կամ պարունակի բացասութի : Քանզի եթէ լինիցի բառ ինչ· 'ի յոր ներփակի ընդդիմաբանութի , ոպ միաւորելն , մարմնանալն , առնուլն , առնանիլն , 'ի յորս ներփակի նկատումն միաւորութեան միոյ բնութեան առ միւսն , յայնժամ ոչ է ուղիղ վերաասացեալ կանոնն :

Նմանապէս ոչ է ուղիղ , երբ նիւթք բառոց ներփակի բացասութի ուրումն , որոյ հակակայն յարմարի միւսոյն · որպէս հակակայքս այսոքիկ՝ սկսանիլ, եղանիլ , եւ ստեղծանիլ , եւ սոյնպիսիք , որք ոչ յարմարին բանին , այլ հակակայք սոցա : Եւ գիտելի է՝ զի յատկապէս խօսելով՝ բաղադրութին՝ է՛ մարմնոցս :

Շաղկապումն հոգւոյ , եւ մարմնոյ : Եւ միաւորութին՝ է՛ մարդկային բնութեանն առ ածային բնութիւնն · թէպէտ մինն դնի երբեմն 'ի տեղի միւսոյն: Այլ եւ հինգք էին որպիսութիք առաջին մարդոյն , եւ յիւրաքանչիւրոցն էառ քս : Առաջին որպիսութին էր՝ անմեղութն , զոր եւ էառ քս լիապէս :

Երկրորդն է՛ շնորհաց յորմէ էառ քս զլրումն շնորհաց :

հաց ։ Երրորդն՝ էր մեղաց՝ ուստի էառ զփոխարէնն պատժոյն ։ Չորրորդ է՝ ապաշխարութե, յորմէ ընկալաւ զչարչարանս ցաւոց, և տրտմութե ։ Հինգերորդն՝ փառաց. յորմէ ընկալաւ զլիակատար զմայլումն ։ Մարմինն քի ըստ դամասկացւոյն կազմեալ եղև 'ի յարենէ երանուհւոյ կուսին, և ոչ 'ի մսոյն ։ Քանզի ըստ փիլիսոփայից՝ ճշմարիտ մօրն է՝ միայն պատրաստել զնիւթն . այլ տալ զկազմողական զօրութիւնն, որ ներգործաբար տեսակացուցանէ զնիւթն է՝ հօրն, և ոչ մօրն ։ Իսկ արդ՝ զի փառաւորեալ կոյսն է ճշմարիտ մայր քի, պարտէր՝ զի նա տայր զնիւթն որ ըստ բնութեան լինէր յարմար նիւթ մարդկային մարմնոյն, սակայն ո՛չ ապականիւր կուսական ամբողջութիւնն ։ Իսկ այսպիսի նիւթս ոչ է միս . զի որպէս ասէ փիլիսոփայն, զի որ ներգործութբ է մասն, ո՛չ է նիւթ ծննդեան, մինչ ո՛չ լիցէ կարողութբ բոլոր ։ Իսկ միսն՝ է ներգործութբ մասն, ուստի ո՛չ է նիւթ ծննդեան ։ Նա և ո՛չ կուսական՝ կամ իգական սերմն՝ եղև նիւթ մարմնոյն քի, զի այն լինէր՝ ո՛չ վայելէր մաքրութեան կուսին . Նա և ո՛չ ըստ փիլիսոփայիցն հարկաւոր է առ ծնունդն . զի կանայք ոմանք՝ յղանան թարց սերմանն իւրեանց ։ Այլ արիւնն էր նիւթ մարմնոյն քի, արիւն ամենամաքուր կուսին, ոպ և 'ի մեզ իսկ՝ նիւթ ծննդեանն է՝ արիւնն ըստ փիլիսոփային ։ Իսկ այն զոր ասէ առաքեալն առ հռովմայեցիսն . որ եղև նա 'ի սերմանէ դաւթի, իմանալի է ծագականաբար, և ո՛չ նիւթականաբար ։ Իսկ կազմողական զօրութիւնն 'ի յերանուհի կոյսն ո՛չ էր 'ի մարմնական հօրէ, այլ 'ի զօրութե ոգւոյն սրբոյ ։ Բ հռոմ. ա.3.

Յաղագս օգտութե, որ 'ի մարդեղութենէն քի ։
Գլ. Թ.

Կորուսաք մեղօք՝ զյատուկ գերազանցութիւն, զանմեղութի մտաց, և զմյ սրբութիւնն ։ Իսկ զայսոսիկ պիտոյ էր վերստին ստանալ բարերարութբ փրկչին ։ Քանզի զգերազանցութիւն ո՛չ կարացաք ստանալ վերստին, եթէ ոչ 'ի ձեռն ամենագերազանց նորոգողին, զի

թէ 'ի ձեռն սոսկ ստեղծուածոյ նորոգեցեալք էաք ,
յայնժամ պարտ էր մեզ ծառայել այնմիկ :
Իսկ զանմեղութիւն ոչ կարէաք վերաընդունիլ , եթէ
յոհան. ոչ 'ի ձեռն ամենաբաւական վճարողին , այսինքն ,
10. 9. որ լինէր ած , և մարդ : Ած՝ զի կարէր վս ամենեցուն
փիլիպ. հատուցանել . և մարդ 'ի յազգէն ադամայ , որ
2. 7. պարտաւորեալ էր . քանզի պատշաճաւոր նա հատուցանէ
, որ կարէ՝ և պարտի . այլ ոչ կարէ՝ եթէ
ոչ ած . և ոչ պարտի , եթէ ոչ մարդն : Նոյնպէս՝
և ոչ սիրելութի կարէր վերանորոգել , եթէ ոչ 'ի
ձեռն ամենայարմար միջնորդի , այսինքն , որ երկոցունց
կողմանցն լինէր կերպարանակից , և սիրելի :
Իսկ այս պատկանի Քի , որ էր նման այ՝ ածային
բնութբն, և նման մարդոյ՝ մարդկութբն :
յոհ. 13. 6 Արդ՝ եկն ած 'ի մարմնանալ՝ որպէս Տր առ ծառայս,
ղուկ. 14. զի խրատեսցէ զնոսա . և որպէս վարդապետ առ
26. աշակերտսն , զի ուսուցանիցէ զնոսա . որպէս բժիշկ
առ հիւանդսն , զի առողջացուցէ զնոսա :
Առաջնոյն եցոյց ած զխոնարհութիւնն իւր . երկրորդին՝
զիմաստութիւն իւր . երրորդին՝ զբարութի
իւր : Զորս պտուղ մարդեղութեան գնէ բեռնարտոս,
ասելով . մանանայն էջ յերկնից , խնդասցեն
ելից. 16 քաղցեալքն . 'ի յայգւոյն երկնից ընծայեցաւ ողկոյզն,
4. խնդասցեն ծարաւիքն . իւղն հեղաւ՝ խնդասցեն խօթացեալքն
երգ. 2. . վէմն առանց ձեռին հատաւ 'ի լեռնէն,
13. երկիցեն հեղգացեալքն : Մարդոյն Քի՝ յարմարին
երգ. 1. 2 բազումք ներգործութիւնք , և մեզ կարի իմն փրկականք
դան. 2. . վասն որոյ և համեմատի իսկ զանազան ,
45. բնական , և արհեստական իրողութեանց :
եփես. Քանզի ինքն Քս , սա գլուխ մեր , վասն հոգևոր
1. 22. զգայութե , և շարժմանն , զոր ազդէ 'ի յանդամս
1. տիմ. իւր : Սա և միջնորդ , զի հաղորդի յատկութեանց՝
2. 5. մարդկային բնութեան , և ածային . վասն այսորիկ
1. կոր. գործադրաբար կարասցէ լինել միջնորդ՝ 'ի մէջ այ
3. 11. հօր՝ և մեր : Սա և հիմն՝ վասն հաւատոյն , որով
յոհ. 10. 'ի մեզ լուսաւորէ զմիտս : Դուռն , վասն սիրոյն ,
9. որով կատարէ զկամս : Հովիւ՝ ըստ այնմ որ միաւորէ
եփես. զմեզ առ եկեղեցին՝ հաղորդակցութբ սբ խորհրդոյն
5. 26. : Պատարագ՝ զի հատոյց զպարտս սկզբնականաց
եբր. 5. մեղաց , նա և ներգործականաց :
117. 3. Քահանայ՝ զի ինքն աղաչէ զինքն , և ինքն լսէ ինքեան
. ինքն ծառայ , որ աղաչէ զինքն Տր . և ինքն
ած՝

ա̄ծ՝ լոյս յինքեան մարդոյ ։ Ճանապարհ, վասն օրինակ գոլոյն ։ Ճշմարտութիւն՝ վասն հատուցման խոստացեալ կենացն՝ և փառացն ։ Կեանք՝ զի 'ի նա, և նովաւ կեամք ։ Դարձեալ՝ բեռնարտոս թուէ զայս օգտութիւնս գալստեան Տ̄ն ասելով, եկն բժիշկն՝ առ հիւանդս ․ փրկիչն՝ առ վաճառեալս ․ Ճանապարհն՝ առ մոլորեալս ․ կեանքն՝ առ մեռեալս ։ Տակաւին են՝ և այլք բազումք օգտութիւնք 'ի մարդեղութենէն Քի̄ ։ Ա̄ծ եղև մարդ, զի մարդն լինիցի ա̄ծ ։ Տ̄ր եղև ծառայ, զի ծառայն լինիցի Տ̄ր ։ Ա̄ծ յերկնից եջ 'ի յերկիր, զի մարդն յերկրէ ելանիցէ յերկինս ։ Ա̄ծ եղև որդի մարդոյ, զի մարդն լինիցի որդի ա̄յ ։ Անմահն եղև մահկանացու, զի մահկանացուքս լինիցին անմահք ։ Մեծատունն ամենայնի եղև աղքատ, զի զաղքատսն փարթամացուսցէ ։ Նսեմացաւ լոյսն, զի զմեզ լուսաւորեսցէ ։ Ա
Քաղցեաւ հացն՝ զի զմեզ յագեցուսցէ ։
Ծարաւեցաւ աղբիւրն՝ զի զմեզ արբուսցէ ։
Տրտմեցաւ ուրախութիւնն՝ զի զմեզ ուրախացուսցէ ։
Երկեաւ համարձակութիւնն՝ զի զմեզ քաջացուսցէ ։
Վտանգեցաւ 'ի ճանապարհի, զի զմեզ երկնագնացս արասցէ ։

Յաղագս զարմանալեաց, որ 'ի մարմնաւորութեն ։

Գլ․ Ժ․

Գերազանցէր մարմնաւորութիւնն Քի̄՝ քան զմերս յղութիւն, բազում իրօք ․ որով յայտ է՝ թէ անդ բնութիւնն կորոյց զիրաւունս իւր ։ Զի անդ գտանի բազում ինչ՝ 'ի կողմանէ մօրն, 'ի կողմանէ զաւակին, նաև 'ի կողմանէ կերպին, որք ոչ են ըստ ճանապարհի բնութե̄, այլ ըստ կարողութեան անբաւ զօրութեան, որ միայն ա̄յ է ։

Արդ զարմանալիք եղեն 'ի մայրն զորմէ պատմէ բեռնարտոս, քանզի էր պտղաբերութի, առանց ապականութեան ողջախոհութեանն ․ յղացեալ՝ առանց ծանրութեան ․ ծնեալ՝ առանց երկանց ։

Անդ՝ տարաւ յինքեան, աստղն՝ զարեգակն ․ ուռն՝ զորթն ․ առուն՝ զաղբիւրն ․ դուստրն՝ զհայրն ․

ատեղ

ստեղծուածն՝ զստեղծօղն : Ասեմ թէ եղև՝ մայր հօրն՝ և դուստր զաւակին իւրոյ : Նա և էր՝ յետնագոյն քան զզաւակն · փոքրագոյն քան զպարունակեցեալն : Եղև մայր , և կոյս , որ ընդ մի ունէր հանապազ զորդին : Յանիծից օրինացն զերծաւ , ուր անիծեալք էին կուսանք , և ամուսնացեալք · կուսանքն՝ զի ոչ ծնան · ամուսնացեալքն , զի ցաւօք ծնանէին : Այլ յերկոցունցն ևս զերծաւ երանուհի կոյսն , զի կոյս ծնաւ , և ցաւս ոչ զգաց :

Եւ Օգոստինոս ասէ՝ զհայելին ոչ բեկանէ շառաւիղ արեգականն , և զամբողջութիւն կուսին՝ մուտ և ել ծնութեն՝ ոչ խախտեաց :

Այլ և 'ի զաւակին էին զարմանալիք · զի իսկոյն էր անդ՝ , բաժանումն արեան , թանձրանալն , ձևանալն , հոգևորիլն , և ծնանալն : Եւ թէ այսոքիկ ոչ եղեն զկնի միմեանց , յայտ է 'ի սբ գրոց :

Երեմ. 31.22. Զի ասէ Երեմիա , կին շուրջ պատեսցէ զայր :

Եւ այս եղև ներգործութեամբ սրբոյ ոգւոյն , որոյ յանկարծօրէն է ներգործելն : Արդ թէպէտ անդամունք մարմնոյն Քի 'ի յղացմանն , էին լի և կատարեալ , մինչև առ 'ի յընդունումն հոգւոյն · սակայն զանազանութիւն նոցին ըստ Օգոստինոսի , էր այնքան փոքրիկ : և անօսր , մինչ զի հազիւ կարէր ենթանկիլ մարդկային տեսութեան · քանզի այնքան փոքրագոյն էր մարմինն այն՝ քան զայլ յղացեալս յորժամ տեսականորի , որ քան 'ի քառասուն և վեց աւուրս կարէր յարդանդին աճիլ :

Ուստի սքանչելի իմն էր , որ 'ի յայնքան փոքրագոյն մարմնոջն՝ ընկալեալ եղև հոգին · արդ այս եղև , զի յղացումն Քի՝ ըստ ժամանակի միայն յարդանդի , ոչ լինիցի աննման մերոյս յղութեան :

Դարձեալ՝ 'ի սկիզբն յղութեան , գիտաց զամ · նա և ըստ այնմ որ մարդ : Եւ էր հոգի նորին 'ի կատարեալ զմայլման , ուստի ըստ այսմ՝ ոչ էր միայն ճանապարհորդ , այլ և ըմբռնող : Դարձեալ՝ էր սբ յամ մեղաց , և լի ամենայն շնորհօք , և առաքինութբ : Ունէր զհայր 'ի յերկինս՝ և զմայր 'ի յերկրի · բայց անդ հայր՝ առանց մօր , և աստ մայր՝ առանց հօր : Դարձեալ՝ մարդեղութեամբն եղև Տրն՝ ծառայ · յաւիտենականն , ժամանակաւոր · անչափն՝ փոքրիկ · մեծագոյնն՝ սակաւագոյն · անպարագրելին՝

տեղակալ · պարզն՝ բաղադրեալ ։ Ասէ օգոստինոս՝ անտեսանելին՝ տեսանի · անշօշափելին՝ շօշափի · անմահն՝ զենանի ։ Դարձեալ՝ ասէ օգոստինոս , ո՞վ երբէք կարիցէ մտախոհ լինել , եթէ ձեռամբ կնոջ՝ բարձեալ լինի , բարձօղն աշխարհի · հացն հրեշտակաց՝ կերակրի · զօրութիւնն երկնից՝ տկարանայ · կեանքն ամենեցուն՝ մեռանի ։ Նա և այս խիստ գիտելի է , զի որպէս երրորդութիւն անձանցն՝ է՛ 'ի միութիւն էութեան , նոյնպէս և 'ի Քս՟ է՛ երրորդութիւն էութեանց՝ 'ի միութեն անձին ։ Զի որպէս 'ի յԱծայինսն զանազան անձամբքն՝ ոչ զանազանի բնութին , այսպէս և 'ի Քս՟՝ զանազան բնութբքն՝ ոչ զանազանի անձն ։

Նա և մարդեղութիւնն Քնի՝ էր զարմանալի , և ըստ կերպին · և քանզի երեք եղանակք յառաջ գալոյ մարդոյն կանխաւ լեալք էին , այսինքն , առաջինն ոչ յառնէ , և ոչ 'ի կնոջէ , որպէս ադամայն ·
Երկրորդ՝ 'ի յառնէ առանց կնոջ , որպէս եւայ ։ Ծնն. 2. 7
Երրորդ՝ 'ի յառնէ և 'ի կնոջէ , որպէս որ այժմ Ծնն. 4. 1
բնականապէս ծնանին ։ Իսկ առ 'ի կատարումն ընդհանրիցն՝ վայելէր ածել 'ի ներքս՝ և զչորրորդ եղանակն · այսինքն , զի լինէր մարդ 'ի կնոջէ , թարց առն , զօրութեամբ վեհագոյն ներգործողին ։ Ա Ղուկ. 1. 34.

Ապաուրեմն , 'ի յղութեան որդւոյն այ՟ , համընթացան 'ի միասին բնաւորեալ զօրութիւնն , հեղեալն , և անստեղծն ։ Արդ բնաւորեալ զօրութին՝ պատրաստեաց զնիւթն · հեղեալն՝ մաքրեաց , և ձևհաւորեաց՝ առ 'ի միութիւն բանին · (ասեմ՝ ձևհաւորեաց՝ ոչ այնպիսի ձևհաւորութբ՟ , որ կարէ յարմարիլ բնութե) և անստեղծ զօրութին յանկարծակի կատարեաց , զոր բնութիւնն ոչ կարաց՝ եթէ ոչ մի զկնի միոյ ։ Բ

Ցա-

Յաղագս ծննդեան Տ՟ն: ԳԼ. ԺԱ.

Ծնունդն Ք՟ի, է՛ եռակի, այսինքն, ա՟ծային, մարդկային, և շնորհային: Առաջինն՝ է 'ի հօրէ: Երկրորդն՝ 'ի մօրէ: Երրորդն՝ 'ի միտս: 'Ի հօրէ ծնանի յաւիտենականապէս. 'ի մօրէ ժամանակաւորապէս. 'ի միտս հոգևորապէս: Եւ երեքկին ծնունդքս այսոքիկ, առեալ լինին ըստ երից գոյացութեանցն՝ որ 'ի Ք՟ս. այսինքն, ա՟ծութ՟ին, մարմին՟ն, և հոգին:

Քանզի 'ի հօրէ միշտ ծնանի ա՟ծ. և 'ի մօրէ միան-
գամ ծնաւ մարմնով. և 'ի միտս ծնանի հոգևորա-
պէս՝ բազում անգամ: Ըստ ա՟ծային ծննդեանն՝ Ք՟ս
ունի զհայր՝ առանց մօր. ըստ մարդկայնոյն՝ ունի
զմայր՝ առանց հօր. իսկ ըստ այնմ որ ծնանի 'ի միտս
շնորհօք՝ ունի զհայր և զմայր, ըստ այնմ որ ասէ, որ
առնէ զկամս հօր իմոյ, նա է իմ եղբայր, և քոյր և
Մատ. մայր: Զերեսին ծննդեանս զայս՝ յիշէ եկեղեցին՝
12. 50. յաւուր ծննդեանն Ք՟ի. զառաջինն, այսինքն, զա՟ծ-
այինն՝ պատարագաւն՝ որ առնէ 'ի մէջ գիշերի. զի
ծնունդս այս է՛ ծածկեալ 'ի մէնջ. ըստ Եսայեայ,
Եսայ. զծնունդ նորա ո՞ պատմեսցէ: Զերկրորդն, այս-
53. 8. ինքն, զմարդկայինն՝ պատարագաւն, զոր առնէ ընդ
ծագել առաւօտուն. զի մարդկային ծնունդն մասամբ
իմն էր ծածկեալ, և մասամբ իմն էր յայտնեալ:
Ծածուկ՝ ըստ եղանակին, վասնզի ծնաւ 'ի կուսէն.
և յայտնի, ըստ եղելութեանն: Իսկ զերրորդն, այս-
ինքն, զհոգևորականն, պատարագաւն՝ զոր առնէ
'ի տուէ. զի շնորհական ծնունդն է՛ յայտնի, 'ի յոր
Ք՟ս, յղացեալ լինի բաղձանօք. ծնանի բարի գոր-
Եսայ. ծով. սնանի յառաջանալովն. ըստ Եսայեայ որ ասէ՝
26. 18. 'ի յերկիւղէ քումմէ յղացեալ երկնեցաք, և ծնաք:
Արդ վասն ա՟ծային ծննդեանն՝ արդէն իսկ ասացեալ
է 'ի գիրս առաջին. այլ աստ ճառելի է յաղագս
Տիտ. 2. մարդկայնոյն: Ուստի գիտելի է, զի ըստ բանի առա-
11. քելոյն՝ որ ասէ՝ քանզի երևեցաւ շնորհքն ա՟յ. փրկ-
չին մերոյ ա՟մ մարդկան, և այլն: Ծնունդն Ք՟ի էր
շնորհաւոր, փառաւոր, առատ, և պտղալի.

Ա Շնորհաւոր, այսինքն, տուեալ ձրի, և ոչ ըստ մերոյ արժանաւորութե։ Եւ զայս ցուցանէ ասելով, քանզի երեւեցաւ շնորհ։ (փառաւոր, զի էր փրկչին մերոյ։ Աստու՝ զի է՝ ամ մարդկան։ Պօղոսի՝ զի խրատէ զմեզ։ Եւ պտուղս այս՝ ծննդեանն քի՝ է կրկին, այսինքն, ըստ ներկայիս, և հանդերձելոյն։

Նա և ըստ ներկայիս՝ է՝ երկեակի պտուղ ։ առաջին է՝ խոտորիլն 'ի չարէն. անդ՝ ուր ասէ՝ զի ուրացուք զամպարշտութիւն, և զայս ըստ չարին, որ ընդդէմ հաւատոյն. և զաշխարհական ցանկութիւն՝ ըստ չարին, որ է ընդդէմ բարի գործոյն։ Երկրորդ պտուղն է՝ գործել զբարին, անդ՝ ուր ասէ՝ զդաստութբ, արդարութբ, և ածպաշտութբ։

Զգաստութբ, ըստ այնմ որ առ մեզ. արդարութբ, ըստ այնմ որ առ ընկերն. ածպաշտութբ՝ ըստ այնմ որ առ ած։ Դարձեալ՝ ըստ հանդերձելոյն ևս՝ կրկին է պտուղն։ Առաջինն է՝ յոյս, ըստ այնմ որ 'ի փառս հոգւոյն, անդ ուր ասէ՝ երանելի յուսոյն։ Երկրորդն՝ խնդութեան, ըստ այնմ որ 'ի փառս մարմնոյ. անդ՝ ուր ասէ՝ 'ի գալստեան փառաց մեծին այ։ Արդ ասեմ թէ 'ի ծննդեանն քի, երեւեցաւ քաղցրութի, և մարդասիրութի փրկչին 'ի յերեքկին թագստենէ, այսինքն, 'ի ծոցոյ հօր՝ 'ի յորում էր ծածկեալ. 'ի ստուերէ օրինացն, 'ի յորում էր օրինակեալ. 'ի յարգանդէ մօրն, 'ի յորում էր կալեալ։ Քանզի ինքն իսկ գառն՝ եբաց զկնիք կնքեալ գրոյն։ յայտ. 5. 5

Այլ և ծնունդն քի՝ էր օգտակարագոյն, համեստ, և բերկրալի։ Արդ զինչ օգտակարագոյն՝ քան զփրկութի մարդոյ, ըստ այնմ որ ասէ՝ կոչեսցես զանուն նորա Յս, զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր. ստուգապէս՝ 'ի զարհուրմանէ երկիւղին, 'ի յուժգնութէ հիւանդութեն, 'ի յարգելմանէ բանտին, 'ի դերութէ թշնամեացն։ Եւ զինչ համեստագոյն՝ քան զկուսական ծնունդն, ուր՝ կոյս է ծնօղն, ած է որ ծնանի, հոգինսբ է, որ ներգործէ զծնունդն։ մատ. 1. 21.

Նա և զինչ զուարճագոյն քան զծնունդն՝ այ, և մարդոյ։ Քանզի խնդացին, որք յառաջեցին՝ որպէս աբրահամ, որ ցանկացաւ տեսանել զօր Տն։ յօհ. 8. 56

Նա և որք եկին զկնի, որոց ասէ առաքեալն՝ խնդացէք միշտ 'ի Տր։ Այլ և որք էին ներկայք, որպէս հրեշտակքն՝ որք երգէին. հովիւքն որք տեսանէին. յովհաննէս՝ որ զգայր յարգանդի մօրն. սիմէօն՝ որ 'ի գիրկս ընկալաւ. այլ և մանաւանդ՝ փառաւորեալ փիլ. 4. 4 ղուկ. 2. 13. ղուկ. 1. 41. 47.

կոյսն որ ծնաւ զնա, որպէս ինքն իսկ ասէ՝ ցնծացաւ
հոգի իմ՛ յած փրկչիմ: Երանուհի կոյսն՝ ծննդեամբն
եբեր մեզ զպտուղն, որ սերմանեցաւ 'ի կուսութեանն,
բուսաւ 'ի ծննդեանն. ժողովեցաւ ընդ պտուղն 'ի
խանձարուրս. մուծաւ 'ի տուն, 'ի յընծայումն որ
յոհ․ 19․ 1 'ի տաճարին. ծաղկեցաւ նախ քան զխաչելն. քամեցաւ
մատ․ 27․ իբրեւ հոսեցաւ՝ ամբաստանութբ սուտ վկայիցն:
13․ Աղացաւ 'ի վերայ խաչին. մաղեցաւ յարութեամբն.
յոհ․ 6․ 52 ուտեցեալ եղեւ, հանապազորդ ճաշակմամբ հաղորդութեանն, եւ երկնային զմայլմամբն:

եսայ․ 45 Ուստի երանելի կոյսն է երկիրն, որ ցօղեաց յերկիր
8․ զՔս. նոյնպէս՝ եւ ամպ, որ անձրեւեաց զնա. նա է
1․ կոր․ երկիր, որ բուսոյց զփրկիչն: 'Ի ծննդեան Տն՝ է՛ր
15․47․ երանուհի կոյսն երկիր՝ յորմէ կաւոյ՝ կերպաւորեցաւ
սաղ։ 84․ նորն ադամ: Երկիր՝ յորմէ բուսաւ ճշմարտութիւն.
12․ երկիր՝ յորմէ գերքան զերկիր՝ պտուղն ծագեցաւ.
եսայ․ 4․ 2 երկիր բարի՝ յոր անկաւ սերմն. երկիր որ բղխէ
ղուկ․ 8․ 8 զկաթն, եւ զմեղրն. երկիր՝ բուսուցանող զծաղկի
թուոց․ խոտոյ. երկիր՝ յորմէ ելանէր աղբիւր՝ ոռոգանել
13․ 28․ զամ՛ երեսս երկրի:
ծննդ․ 2․
10․

Յաղագս Թլփատութեն Տն: Գլ: ԺԲ․

Էառ Քս զթլփատութի, վասն բազմաց
պատճառաց: Նախ՝ զի զօրէնս զոր ետ
այլոց, ինքն կատարեսցէ: Երկրորդ՝
զի ցուցցէ զխոնարհութի իւր՝ դնելով
զինքն 'ի ներքոյ խոտորականացն՝ առ յորս
ոչ էր պարտական. քանզի ինքն էր Տր
օրինաց: Երրորդ՝ զի զարիւն իւր վն
ծննդ․ 17 մեր՝ ոչ միայն 'ի չափական տիոն, այլ եւ յերեխայա-
11․ կանն հեղցէ: Չորրորդ՝ զի ցուցանիցէր զմեզ հոգեւորապէս գոլ թլփատելի: Հինգերորդ՝ զի յամօթ
արասցէ զհերետիկոսն որք ասացին զնմանէ ոչ ունել
զճշմարիտ մարմին, այլ առաչօք: Վեցերորդ՝ զի մի
տայցէ հրէիցն պատճառ գայթակղութե, ոչ առնելովն զթլփատութի: Եօթներորդ՝ զի հաստատեսցէ
զհին օրէնսն, որ պարտէր պահիլ մինչեւ 'ի նա:
Զի օրինականքն՝ ըստ օգոստինոսի, էին կենդանիք՝
նախ քան զչարչարանս Տն, այլ յետ չարչարանաց
Տն՝ մեռեալք. այլ յետ որոյ յայտնեցաւ ճշմարտութի

թն աւետարանին յաշխարհի, յայնժամ թաղեցեալ ։ Ա

Արդ՝ թլփատի Քս՟, ոչ միայն օրինական թլփատութբն, այլ և հոգևորականաւն ։ Ուստի կարեմք բացատրել զթլփատութի Տն՟՝ քառակի ։ Նախ՝ թլփատեաց զնա հայրն՝ 'ի ծնունդն՝ աղքատութե սրովն ։ Երկրորդ՝ թլփատեցին զնա իւրքն յաւուրն ութերորդի, սրով օրինացն ։ Երրորդ՝ թլփատեաց ինքն զինքն 'ի յամ կեանս իւր, սրով խոնարհութե ։

Չորրորդ՝ թլփատեցին զնա չար հրէայքն՝ 'ի չարչարանս՝ սրով խաչին, և այս՝ զինուորքն պիղատոսի ։ Դարձեալ՝ թլփատի Քս՟ և այժմ 'ի յիւրսն՝ չորեքկին ։ Նախ՝ բամբասողք՝ որք 'ի բաց բառնան զբարեկամս, և զբարի համբաւն ։ Երկրորդ՝ յափշտակողք, որք յափշտակեն զժամանակաւոր բարիս ։ Երրորդ՝ հերետիկոսք, որք բառնան զհոգիս ։

Չորրորդ՝ բռնաւորքն, որք բառնան զմարմինս ։

Այլ և հոգևոր թլփատութիւն մեր՝ է կրկին ։

Առաջին թլփատութի, է՛ մտաց 'ի ներկայումս, 'ի մեղաց ։ Երկրորդն՝ է՛ մարմնոյն 'ի հանդերձեալն՝ 'ի պատժոյն ։ Առաջինն՝ նշանակեցաւ հանդիսի թլփատութբն, որ յեգիպտոս եղև . և այս է եռակի, այսինքն, սկսողացն, որք թլփատին 'ի մոլութեց իւրեանց՝ սրով արդարութե ։ Եւ յառաջողացն, որք թլփատին յանելորդաց՝ սրով ողորմածութե ։ Կատարելոցն՝ որք թլփատին 'ի հարկաւորացն՝ սրով կատարեալ սիրոյն ։ Երկրորդն՝ նշանակեցաւ թլփատութեամբն յերկիրն աւետեաց, եղեալ 'ի գաղգաղայ . զի յութերորդումն յարութե, վեմիւն քի թլփատեալ լիցուք 'ի յամ թշուառութեց ։ Յորմէ յայտ է՝ թէ առաւել զօրեղագոյն է՝ հոգևոր թլփատութին մեր, քան զմարմնաւորն հրէից, զի թլփատութի նոցա թէպէտ բառնայր զսկզբնական մեղսն, սակայն ոչ բանայր զդուռն արքայութե . այլ մերս՝ զերկոսինն առնէ ։ Բ

Արդ՝ երկու ինչ գիտելի է՝ զթլփատութեն Քի . Նախ՝ զխոնարհութին քի, 'ի թլփատութեն ։ Երկրորդ՝ զգերազանցութի նորին՝ 'ի յանուանադրութե ։ Քանզի կոչեցաւ ասէ՝ անուն նորին՝ Յս՟ ։ ղուկ. 2.21.

Իսկ արժանաւորութի անուանս այսորիկ բազմապատիկ է . Քանզի է՝ յաւիտենից օրհնեալ, որպէս ասէ բեռնարդոս՝ ։ 'Ի հնոցն կանխաւ օրինակեալ, այսինքն, 'ի յեսու ։ 'Ի մարգարէիցն ցանկացեալ՝ ըստ եսայեայ որ ասէ՝ անուն քո 'ի բաղձանս հոգւոց ։ եսայ. 26.8.

Ի որոց հարցն մարգարէացեալ. քանզի ասէ բեռ-
նարոս՝ քաղցր անուն Յս, մարգարէացեալ եղև
բերանովն սաղմոսին: Յայ անուանեալ. որպէս ասէ
փիլիպ. առաքեալն, շնորհեաց նմա անուն: Ի հրեշտակէն
2.9. կանխաւ անուանեալ. ըստ ղուկասու, որ ասէ,
ղուկ. կոչեսցես զանուն նր Յս: Ի յերանուհի կուսէն քա-
1.31. րոզեալ, ով ասէ՝ հզօր և սբ է անուն նր:
ղուկ. Նաև ի յառաքելոցն մեծացուցեալ զի ասէ ի գործսն,
1.49. գնացին առաքեալքն խնդալով յերեսաց ատենին,
գործ. զի վասն անուան Տն, արժանի եղեն գանից:
5.41. Ի մարտիրոսաց վկայեալ, զի վն անուանս այս՝ չար-
սաղ. 112 չարեցան: Ի խոստովանողացն գովեալ ըստ սաղմո-
1. սին որ ասէ, գովեցէք մանկունք զՏր, և գովեալ
յարևելից մինչև ի մուտս արևու, գովեալ է անուն
նր: Ի սբց կուսանացն նախապէս ճաշակեալ. ուստի
երգ. 1.2 ասէ, յերգսն, իւղ թափեալ է անուն քո:

Եւ բեռնարոս ասէ՝ Յս, է՛ մեղր ի բերանս, քնար
ի լսելիս, զուարճութի ի սիրտս: Յամ սրբոց բար-
սաղ. ձրացեալ. ըստ սաղմոսին, որ ասէ՝ մեծ արարէք զՏր
33.4. և բարձր արարէք զանուն նորա: Եւ պետրոս, ի
գործսն ասէ՝ ոչ ոքէ այլ անուն ի ներքոյ երկնից,
գործ. որով պարտ իցէ կեալ: Ի յանունս այս, Յիսուս՝ են
4.12. գիրք վեց, որք կարեն լինիլ սկզբունք ասութեանց
այսոցիկ, Յարագուարձուի տրամեցելոցն. Իրաւունք
սրբոց. Սրբութի երանելեաց. Ուղղութի մոլորե-
լոցս. Հաստատուն խնդրողացն զփրկութի. Սան-
դուխտ ելանողացն ի յերկինս: Դարձեալ՝ անուն
այս Յս, յարմարի քն, երեք կերպիւ:

եսայ. 12. Նախ՝ ի կողմանէ բնութե, զի որ ըստ ածայինն բնու-
2.26.21 թեանն էր փրկիչ իշխանութբ, և ըստ մարդկայի
43.3. բնութենն լինիցէր փրկիչ սպասաւորութբ, նա և
յատկացուցանիցէր ինքեան զանուն փրկչին:

Երկրորդ՝ ի կողմանէ պատշաճաւորութենն. քանզի
տիտ. 3. վայելէր իսկ, զի ըստ իրին ունիցի զանունն:
5. Ուստի զի փրկեաց ի մեղաց, ի սատանայէ, ի դժո-
խոց, իրաւի ունեացի այնպիսի անուն, որ պատկանի
այնմ բարերարութե: Երրորդ՝ ի կողմանէ մեծի
զօրեղութե, զի քս խորովք չարչարանօք՝ փրկեաց
զմեզ:

Յաղագս մկրտութեան Քի. Գլ. ԺԳ.

Մատթ. 3. 13. ԵՄկրտութիւն Տն՝ բացայայտ խոնարհութիւն նորա, և օգտութիւն մեր: Իսկ խոնարհութիւն նորա՝ ցուցանի չորիւք: Նախ՝ զի եկն Յս, այսինքն, ստեղծողն փրկութեան, և ոչ կարօտանայ փրկութեան: Երկրորդ՝ զի 'ի Յորդանան, ուր ստեղծողն տարերաց, եդ զինքն 'ի ներքոյ խոնարհ տարեր ջրոյն: Երրորդ՝ զի եկն առ մարդ, այսինքն, առ Յովհաննէս, այսինքն, եկն տէրն առ ծառայն. թագաւորն առ սպասաւորն. արեգակն առ արուսեակն: Չորրորդ՝ զի եկն մկրտել 'ի նմանէ, այսինքն, աղբիւրն յառուէն, լիութին 'ի կաթիլ մի ջրոյն, արարողն մկրտութեան 'ի սպասաւորէն: Իսկ օգտութիւն մեր ցուցանի չորիւք՝ 'ի յայնս որք եղեն 'ի մկրտութեան Քի: Նախ՝ զի Քս յետ մկրտելոյն՝ ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի. որով նշանակի հեղումն շնորհաց 'ի մեզ. քանզի մարդն՝ մկրտութբն ազատեալ 'ի մեղաց՝ ելանէ իսկոյն յառաքինութիւն: Երկրորդ՝ բացան երկինք, որ նշանակէ թէ որ մեռանի յետ մկրտութեանն՝ առ ժամայն թռչի յարքայութիւնն: Երրորդ՝ էջ ոգին սբ մարմնաւոր տեսլեամբ, իբրև աղաւնի. որով ցուցանի՝ թէ մկրտութիւնն առնէ զմարդն տաճար ոգւոյն սրբոյ: Չորրորդ՝ եղև ձայն հօր, դա է որդի իմ սիրելի, որով ցուցանի զի մկրտութբ՝ 'ի յորդւոյ բարկութե, լինի որդի շնորհաց: Դարձեալ՝ 'ի մկրտութեն Քի նշանակին գոյացականք մկրտութեանս մերոյ, այսինքն, մկրտողն. մկրտեցեալն. նիւթն. տեսակն. և դիտաւորութին: Մկրտողն Յովհաննէս, որով նշանակի քհնութիւն սպասաւորին: Եւ մկրտեցեալն էր Քս, որ սրբեաց զմկրտութի մեր. զի շօշափմամբ ամենամաքուր մարմնոյն իւրոյ՝ ետ ջուրցն զզօրութի վերստին ծննդեան: Նիւթն էր ջուրն՝ առաւել յարմար, և հասարակագոյն քան զայլ յեղեղուկ նիւթ առ 'ի մկրտութիւնս մեր: Իսկ տեսակն՝ նշանակի վկայութբ սբ Երրորդութեան: Զի եղև անդ՝ հայր՝ ձայնիւն, որդի՝ մարմնովն. և ոգին սբ՝ աղաւնակերպ տեսլեամբն: Իսկ դիտաւորութիւնն հետևի Ա ձեւոյն . զի ձայնն ըստ փիլիսոփային , է՛ նշանական անձանց ախտից ։ Արդ ձայնիւ հօր , որ լուեալ եղեւ 'ի մկրտութեանն Ք՟ի , նշանակին հինգ գերազանցութիւք , և պատիւ Տ՟ն մերոյ Յ՟ի Ք՟ի ։ Քանզի յորժամ ասէ , դա է . գովի Ք՟ս ըստ էական ճշմարտութ՟ն , զի ա՟ծ միայն ունի ճշմարիտ գոլն ։ Զի ա՟մ գոլ՝ 'ի տեսակէ է , իսկ ա՟ծ է՛ առաջին տեսակ առանց նիւթոյ , որպէս ասէ պօէցիոս ։ Իսկ յորժամ ասի՛ որ- կող. 1.15 դի՛ գովի Ք՟ս ըստ յարմարութ՟ե հայրականի նմանութեան ։ Քանզի վ՟ն այսորիկ ասի որդի , զի լինի երկղհայր , ուստի 'ի լատինն՝ որդին առուգաքանի , լինի որպէս ընա. վ՟ն որոյ որդին ասի պատկեր հօր՝ առաւել քան զորդին մ՟ք , վասն պատճառացն որ ճառեցաւ 'ի գլուխ.6 գիրս առաջին ։ Այլ յորժամ ասի , իմ , գովի ըստ անզանազան գոյացութեանն որ ընդ հօր . քանզի ասէ իմ , այսինքն , համագոյակից ինձ ։

Բայց յորժամ ասի , սիրելի , գովի Ք՟ս , ըստ բարեկամութ՟ե հայրական սիրոյն . ըստ այնմ՝ յոհաննու դ՟. յոհ. 3. 35. հայր սիրէ զորդի . և այլն։ Այլ յորժամ ասէ՝ ընդ որ հաճեցայ , գովի ըստ յատկական հաճութ՟ն ։

Այլ ծանիր , զի հաճութիւնն է՝ հանդուցեալ կամք , ուստի ասի 'ի լատինն՝ համահաճեցայ , այսինքն , ոգւով սիրով հանգեայ 'ի յորդի , ըստ առեալ մարմնոյն ։

Յաղագս լրութեան շնորհացն Ք՟ի ։ ԳԼ. ԺԳ.

Յետ այսորիկ՝ քննելի է զլրութ՟ն շնորհաց մարմնացելոյն բանին . քանզի էր ըստ մարդկութեանն լի շնորհօք՝ 'ի կամս . լի իմաստութ՟բ 'ի յիմացականն . լի արդեամբ 'ի գործսն ։ Վասն առաջնոյն առուգապէս հաւատալի է , քանզի 'ի ք՟ս 'ի յղութ՟ե իսկ՝ էր լրութ՟ն շնորհաց , ըստ շնորհաց առանձնական անձին , և ըստ շնորհաց գլխոյն , և ըստ շնորհաց միաւորութեանն . և այսոքիկ երեքեան շնորհք՝ են նոյն ըստ էութ՟ն , բայց տարբերին ըստ գործոյն ։ Արդ շնորհք առանձնական անձին , է շնորհք ունակական , զոր ունէր Ք՟ս լիապէս և կատարելապէս թարց հաւատոյ և յուսոյ , զորս ոչ ունէր . այլ զայն , որ հետեւի նոցա 'ի վերին գա-

փառաւն․ զի հաւատոյն հետեւի ճանաչումն, եւ յուսոյ՝ ըմբռնումն։ Իսկ ըստ այսմ, որ վերոյ ասացեալ շնորհքն առանձնական անձին տուեալ ՚ի Քս, մինչ զի ազդէ ՚ի յանդամս խորհրդական մարմնոյն իւրոյ զզգալն, եւ զհոգեւորական շարժումն՝ ըստ աղերսական լրութե ամենայն շնորհաց բնակելոյն ՚ի նմա, առ յոհ. 1. 16
շնորհք գլխոյ ։ Եւ գիտելի է՝ զի Քս ըստ երկաքանչիւրոյ բնութեանն առ գլուխ եկեղեցւոյ․ քանզի ոչ միայն ըստ այնմ որ ած, այլ եւս ըստ այնմ որ մարդ, ազդէ զզգալն, եւ զշարժումն ոգւոյն, եւ շնորհաց, ՚ի յամենեսեան որք յարին առ նա․ կամ ուղիղ հաւատով, եւ կամ հաւատով խորհրդոյն ։ Այլ արդ՝ ըստ այնմ որ ած, ազդէ զայսպիսի շնորհս իշխանաբար․ իսկ ըստ այնմ որ մարդ, ազդէ զնա կերպիւ արժանաւորութեան արդեանցն․ եւ զի ՚ի ձեռն արդեանն ոչ միայն ըստ պատշաճի, այլ եւ ըստ համարժանաւորութե հեղու անդամոցն իւրոց զշնորհս ։

Եւ զայս ունեաց վասն միաւորութեան ընդ բանին․ Աստի ՚ի յառաջեցելոցս հաւաքեմ, զի Քս ըստ այնմ որ մարդ՝ առ գլուխ եկեղեցւոյ, վասն երից պատճառաց ։ Նախ՝ վասն ազդողութե շնորհացն, որպէս եւ ասացաւ իսկ ։ Երկրորդ՝ վասն համակերպութեան եփես.
բնութեանն, զոր ունի գլուխն առ անդամս․ զի թէ 1. 22.
պէտ Քս գերազանցէ՝ քան զանդամս իւր ըստ ածայնն բնութեանն․ սակայն է համանման նոցա ըստ մարդկային բնութեանն ։ Երրորդ՝ առ գլուխ նմանօրէն, զի որպէս ճշմարիտ մարմինն Քի կազմեալ ՚ի յամենամաքուր անդամոցն, այսպէս խորհրդական մարմինն նորա՝ ՚ի մաքուր հաւատացելոց ։ Քանզի ՚ի լրութե յոհ. 1. 16
նորա՝ առնուն ամենքն զբարերարութիւն շնորհաց, եւ ոգւոյ, որք մատչին առ նա, կամ ուղիղ հաւատով, կամ խորհրդով հաւատոյն ։ Դարձեալ՝ ըստ այնմ, որ նոյն շնորհ առանձնական անձին ճահաւորեաց Ա
զմարդկային բնութիւնն Քի առ միաւորութի բանին, զի լինիցի արժանի միաւորիլ ընդ այնքան ածային բարձրութեանն, կոչի շնորհ միաւորութեան, որով ինքն Քս էր արժանի, ոչ միայն երջանկութե փառացն, այլ եւ ածական երկրպագութե ։

Եւ գիտելի է, զի շնորհ միաւորութեան առի, վասն զի միաւորութիւն մարդկային բնութեան ընդ ածայնոյն, ոչ է ըստ արդեանց, այլ տուեալ ձրի մարդկութեանն Քի ։ Իսկ միաւորութե շնորհս այս կա_ րէ իմանիլ կրկնակի։ Նախ ըստ այնմ, որ շնորհն այն ճահաւորէ զմարդկային բնութիւն առ ՚ի միաւորիլ ընդ բանին, և ըստ այսմ է՛ նոյն ընդ վերոյ ասացեալ շնորհաց առանձնական անձին, և գլխոյն ։ Երկրորդ կերպիւ իմացեալ լինի շնորհք միաւորութեանն վասն նոյն ինքն միաւորութե, և ըստ այսմ զանազանի շնորհք միաւորութեան ՚ի յանձնական շնորհաց, և ՚ի շնորհաց գլխոյն, որպէս զանազանի միաւորութիւն ՚ի յունակական շնորհաց ։ Վասն այսորիկ ասէ յոհան, ոչ թէ չափով տայ ած զհոգին, որ ունի զկրկին մեկնութի. նախ այսպէս՝ ոչ թէ չափով տայ, այսինքն, զի բոլորովինն է տուեալ, և ոչ մասնաւորաբար, զի զոր ինչ կարաց ած տալ նմա ՚ի յոգւոյն սրբոյ, ետ։ Երկրորդ՝ այսպէս՝ ոչ չափով տայ, այսէ՝ ՚ի վեր քան զամ համեմատութի, նկատմամբ պու այլ մարդկին։ Իսկ զայնմանէ որ ասէ՝ լի շնորհօք և ճշմարտութբ. գիտելի է՝ զի բազում կերպիւ զանազանի լիութիւնն։ Առաջինն է՝ բաւականութեան, որ գտանի յիւրաքանչիւր մարդ արդար։

յոհան. 3. 34.

Բ

յոհ. 1. 14.

Երկրորդ՝ առատութն, որ եղև յառաքեալսն. որպէս ասէ՝ գործոյն, լցան ամէքն ոգւով։ Եւ ՚ի ստեփաննոս, որ ասէ, ստեփաննոս այր լի շնորհօք։

գործ. 2. 4.

գործ. 6. 8.

Երրորդն է ընդհանրութն, որ է մէջ եկեղեցւոյ, որոյ ոչ ինչ պարտի պակասել։ Չորրորդն գերազանցութեան, որ եղև յերանուհի կուսին, որ գերազանցեր շնորհօք՝ քան զամ սբս, ըստ այնմ որ ասէ սիրաք, ՚ի յիս է ամ շնորհ կենաց, և ճշմարտութեան, և ղուկաս ասէ՝ ողջոյն լի շնորհօք։ Հինգերորդ է՝ ՚ի վեր քան զառատաղեղութի, որ էր ՚ի Քս, ըստ այնմ որ ասէ՝ լի շնորհօք և ճշմարտութբ։ Այլ վասն անմեղութեանն Քի գիտելի է՝ զի էր անփորձ յամ մեղաց, ըստ ունակութեան, ըստ կարողութե, և ըստ ներգործութեան. քանզի ոչ մեղանչեաց, և ոչ կարաց մեղանչել. և ոչ ՚ի ծնողաց քարշեաց զսկզբնական մեղս. ոչ ՚ի հօրէ, զի ոչ ունէր զհայր մարմնաւոր. ոչ ՚ի մօրէ, զի բոլորովին մաքրեաց զնա ոգին սբ՝ ՚ի յարմատոյ մեղացն։

սիրաք. 24. 25.

ղուկ. 1. 28.

յոհ. 1. 14.

Յա՟

Յաղագս լրութեան իմաստութեն Քի։ Գլ. ԺԵ.

Էր ՚ի Քս, ամ լիութի իմաստութե, ոչ միայն ըստ ճանաչման, այլ և ըստ եղանակացն և ըստ զանազանութեան ճանաչելոյն, որք են հինգ։ Նախ է՝ ճանաչումն մշտնջենաւորական ՚ի կողմանէ ածութեանն, և ըստ այսմ եղանակի՝ ճանաչէ զամ համայնդամայն, այսինքն, զանհունս, և զհունաւորսն. քանզի առ ած՝ ամ անհունն՝ է հունաւոր։ Զի ած տեսանէ զբազումս միով, այս է, ինքեամբ, ուստի ոչ զանազանի անդ՝ զոր տեսանէ, և որով տեսանէ. զի զինքն տեսանէ ինքեամբ, և յինքեան տեսանէ զամ. ոչ միայն զոր արար, այլ և զոր կարէ առնել, որք են անհունք։ Երկրորդ է՝ ճանա- Ա
չումն զգայական ՚ի կողմանէ մարմնոյն. և եղանակս այս է ճանաչումն փորձիւ, որով Քս ոչ գիտաց զամ համայնդամայն. զի զգայութիւնն ոչ է ընդունակ իրաց, եթէ ոչ ներկայ գոլով յառաջեդելոյն։

Երրորդ եղանակն է՝ հոգևորական, ՚ի կողմանէ մտացն. և այս եղև եռակի, այսինքն, բնութեամբ, Ղուկ. 2.52.
շնորհօք, և փառօք։ Արդ՝ բնութեամբն է՝ երրորդ կերպ ճանաչելոյ, որով կերպիւ ճանաչեաց Քս զամ, Եբրայ. 5.8.
որ վերաբերի առ ՚ի կացութի ընդհանուր աշխարհիս, և առաւել գերազանցապէս քան զԱդամ, նախ քան զմեղանչելն։ Չորրորդ է՝ շնորհօք, և ըստ այսմ եղանակի՝ ճանաչեաց Քս զամ ինչ, որք վերաբերին առ ՚ի փրկութի մարդկային ազգի, առաւել գերազանցագոյն քան զհոգիս մարգարէից, և հրեշտակաց։ Քանզի ոչ միայն ունէր Քս զգիտութի ընդաբոյս ունակութբ, որպէս Ադամ, և հրեշտակք. այլ և հեղեալ ունակութբ՝ ՚ի վեր քան զամ սբս զլուսաւորեալս շնորհօք։ Այլ ոչ ունէր զճանաչումն ստացական ունակութբ՝ որ ոչ էր ՚ի նմա, վասն անկատա- Բ
րութե իւրոյ։ Հինգերորդ է՝ փառօք, և ըստ այսմ եղանակի ճանաչեաց Քս զամ, զհունաւորսն ներգործական ճանաչմամբ, իսկ զանհունսն՝ ոչ, բայց միայն ունակական ճանաչմամբ, կամ գերազանցական։

Քանզի հոգին Քի, փառօք տեսութեանն ըմբռնէր, որ քան կարէր ըմբռնել հունաւոր բնութիւն միաւո֊

րեալ ընդ անձնոյն ։ Վասն որոյ գիտելի է , զի իրողութիւնք՝ կարելիք են իմանիլ երկակի ՚ի յարհեստն , այսինքն , ՚ի յարհեստաւորին , և կամ յայլմէ տեսանելի զարհեստն ։ Եւ այսու երկոքումբք կերպիւս ճանաչեաց Քս զիրս , այսինքն , առաջին կերպիւն՝ ածային բնութեն , և երկրորդ կերպիւն՝ փառօք տեսութեն ։ Արդ՝ յայտ են ՚ի նախասացելոցս՝ հինգք տարբերութիւք ճանաչման , որք էին ՚ի Քս , քանզի առաջին կերպիւն ունէր զճանաչումն որպէս ած ։ Երկրորդ կերպիւն՝ որպէս մարդ ։ Երրորդ կերպիւն՝ որպէս ճանապարհորդ ։ Չորրորդիւն՝ որպ լուսաւորեցեալ ։ Հինգերորդիւն՝ որպ ըմբռնող ։ Նաև ասի Քս լոյս ըստ երկաքանչիւրոյ բնութեանն , զի ըստ ածութեն՝ լուսաւորէ ՚ի ներքս զհոգին , և ըստ մարդկութեանն՝ ուսուցանէ արտաքուստ զկեանս մեր ․ և այս եռակի , այսինքն , սքանչելեօք , քարոզութբ , և օրինակօք ։ Որոց առաջինն է՝ կարողութեն ․ երկրորդն իմաստութեն ․ և երրորդն բարութեան ։ Եւ ծանիր՝ զի գիտութիւնն Քի մարդոյն՝ է՝ ամենավճիտ ՚ի մէջ ամ ստեղծեալ գիտութեց , զի ոչ ունի զխառնեալ ինչ յուրոյ ներհակէն , ներգործութբ , կամ զօրութբ ։ Մանաւանդ՝ զի ոչ կարէ անգիտանալ զինչ , վասն միաւորութեան ընդ բանին ․ բայց սակայն՝ զի հոգին Քի էր ստեղծեցեալ , գիտութի նորա ոչ էր այնպէս
Դ. ամենավճիտ , որպ այն ․ թէպէտ գիտէ զամ՝ զորս
ղուկ. 2. գիտէ ած ։ Այլ զի ասէ զարգանայր Յս հասակաւ ,
52. և իմաստութեամբ , առաջի այ , և մարդկան , ոչ է իմանալի թէ յինքեան զարգանայր ․ զի ՚ի սկզբան յղութեն իւրոյ՝ էր լի իմաստութբ ․ այլ առաւել ՚ի յայլս , որք յառաջանային ուսմամբ և օրինակաւ նորին , և այն առաջի այ , այսինքն , ՚ի փառս այ ․ և մարդկան , այսինքն , ՚ի յօգուտ մարդկան ։

Դարձեալ՝ զարգանայր Յս նաև յինքեան փորձական , և զգայական ճանաչմամբ , զի ըստ առաքելոյն
եբր. 5. 8 ուսաւ զհնազանդութի ։

Յս-

Յաղագս արժանաւորութեան Քի ։ Գլ. ԺԶ.

Համանգամայն Քս էր ճանապարհորդ, և ըմբռնող՝ ՚ի սկզբանէ յղութեն իւրոյ, զի յայնմ հետէ սկսաւ արդիւնաւորել և զմայլել։ Այլ արդ արժանաւորեցաւ, ըստ այնմ որ ճանապարհորդ, ոչ ըստ այնմ որ ըմբռնող։ Իսկ կատարելութի, և լրութի արժանաւորութեն Քի ցուցանի ՚ի յեօթն իրս։ Ա Նախ՝ ՚ի կողմանէ այնմ՝ որ արժանաւորիւր․ որ ոչ միայն մարդ էր, այլ և ած։

Երկրորդ՝ ըստ ժամանակին, զի ՚ի սկզբանէ յղութեն իւրոյ արժանաւորեցաւ մինչև ՚ի ժամ մահուանն։

Երրորդ ըստ այնմ, որով արժանաւորիւրն իսկ, զի արժանաւորիւր ունակութբ ամենակատար սիրոյն, և կրթութբ ամենակատար առաքինութե։

Չորրորդ՝ ըստ այնմ՝ որոց արժանաւորիւր․ զի ոչ միայն ինքեան, այլ և մեզ։ Քանզի ամ գործովք իւրովք, որք յառաջ գային յանձնիշխան կամացն, արդիւնաւորեցաւ ինքեան յաւիտենական կեանք, զոր և ունէր իսկ․ նա և մեզ՝ զոր ունելոցք եմք։

Հինգերորդ՝ ՚ի կողմանէ շահեցեալ իրին վասն մեր, քանզի շահեցաւ մեզ զթողութիւն մեղաց՝ զշնորհս, և զփառս, նա և զպատմուճան մարմնոյ, և զբացումն դրանն արքայութե։ Զի նախ քան զմարմնանալն Քի, ունէր սատանայ զձեռն քարշողական, և զձեռն մղողական․ վասն զի քարշէր ուժգնակի ՚ի մեղս․ և մղէր առանց ընդդիմանալոյ ումեք ՚ի լիմբոսն առ ՚ի պատիժ։ Այլ Քս թուլացոյց զառաջին ձեռն՝ արժանաւորութբ արդեանց իւրոց, և զերկրորդն՝ ամենեւին եհատ։ Արդ ՚ի յարժանաւորութե արդեանցն Քի, են արմատացեալ ամ արժանաւորութիք մեր, եթէ փոխարինականք պատժոց, և եթէ արժանաւորականք յաւիտենական կենացն․ քանզի ոչ ՚ի բարկութենէն մր արժանիք եմք զերծանիլ․ և ոչ անչափութեան վարձուն արժանաւորիմք հասանիլ՝ որ է ած, եթէ ոչ արժանաւորութբ մարդոյն Քի։

Վեցերորդ՝ ըստ այնմ՝ զոր շահէր ինքեան, զի թէպէտ ոչ շահէր զփառաւորութի հոգւոյն, զոր արդէն իսկ ունէր․ սակայն խոնարհութբ չարչարա-

նացն շահեցաւ ինքեան զփութանակի յարութիւն, զփառաւորութիւն անմահ խրոյ, և զպատիւ դատաւորական իշխանութեան. որպէս ասէ առաքեալն
Փիլ.2.8 Ք͞ս լեալ հնազանդ մահու չափ, և մահու խաչի : Եւ զենի ասէ՝ վասն որոյ Ա͞ծ զնա առաւել բարձրացոյց՝ ըստ առաջնոյն. և շնորհեաց նմա անուն, ըստ երկրորդին. զի յանուն Յ͞ի Ք͞ի ա͞մ ծունր կրկնեսցի՝ ըստ երրորդին : Եօթներորդ՝ ըստ կերպին որով շահէր, քանզի ասի արդիւնաւորիլ ոք եռակի, այսինքն, 'ի յոչ պարտեացն առնել պարտական. և կամ 'ի պարտուցն՝ առաւել պարտական. և կամ 'ի պարտուցն ըստ միոյ կերպի, առնել պարտական ըստ այլոյ կերպի : Արդ՝ առաջին, և երկրորդ կերպիւն՝ Ք͞ս շահեցաւ մեզ, և ոչ ինքեան. զի ոչ կարէր առնել ինքեան՝ 'ի յոչ պարտականէ պարտական, կամ 'ի պարտուցն՝ առաւել պարտական. զի 'ի սկզբանէ էր ս͞բ, և ոչ կարէր յառաջանալ 'ի սրբութի : Իսկ երրորդ կերպիւն՝ շահեցաւ ինքեան. զի բարի փառացն որ պարտէր նմա վասն շնորհաց միաւորութեան, արար ինքեան պարտական այլով եղանակաւ, այսինքն, արժանաւորութ͞բ բարի գործոյն, քանզի շահեցաւ ինքեան զյաւիտենական կեանս, զոր արդէն իսկ ունէր, սակայն մեզ ունելոց էր :

Յաղագս կամացն Ք͞ի. ԳԼ. ԺԸ.

Ա
Դլու.17 Ի Ք͞ս, կրկին էին կամք, այսինքն, ստեղծեալ, և անստեղծ : Արդ՝ 'ի յանստեղծ կամացն ասացեալ եղև 'ի գիրսն առաջին : Իսկ ստեղծեալ կամքն Ք͞ի կրկին է, այսինքն, բանին, և զգայականութեան : Եւ կամք բանին դարձեալ է կրկին, այսինքն, բանին ըստ այնմ որ բանական է. և բանին՝ ըստ այնմ որ բնութի է : Արդ կամօք բանին՝ ըստ այնմ որ բանական է՝ համաձևացոյց զինքն 'ի յա͞ծնայինն անստեղծ կամացն. այլ կամաւ բանին, ըստ այնմ որ բնութիւն, և կամաւ զգայութեանն՝ կամեցաւ ինչ յատուկ, զոր ոչ
Ղուկ.22.42. կամեցաւ կամաւ բանին ըստ որում բանական, այսինքն, զոչ մեռանիլն. և ըստ այսմ՝ կամքս այսքիկ
Մատ.26.39. ոչ էին ներհակք իրերաց, թէպէտ կամեցեալքն

էին ներհակք ․ զի ըստ կամաց մարմնոյն հրաժարեցաւ 'ի չարչարանացն ․ այլ ըստ ա̄ծային կամացն զոր ինչ պատշաճ էր կամեցաւ ․ և ըստ կամաց բանին իրաւապէս հաւանեցաւ․ և այսու իւրաքանչիւր կամքն, պահեաց զիւրն , այսինքն , ա̄ծային կամքն զարդարութիւնն ․ և բանի կամքն զհնազանդութիւն ․ իսկ մարմնոյ կամքն զբնութիւն ․ այսինքն , զհրաժարումն 'ի չարչարանաց ։ Աստի յայտ է՝ զի կամիլ ինչ է՝ անարժան բանականին, որ ոչ է անարժան զգայականին ․ որպէս էր 'ի ք̄ս կամիլն ոչ մեռանիլ ։

Այլ թէպէտ կամք ոչ մեռանելոյն էր պատճառաբար 'ի զգայականէն , սակայն և էր առիթօրէն 'ի բանականէն ․ քանզի ք̄ս յորժամ կամեցաւ , եած յերևակայութիւնն զապառնելի մահն այն , և յայնժամ բնականապէս հրաժարեցաւ 'ի նմանէ ։ Մատ․ 26․39․

Իսկ կամեցաւ զայս առնել 'ի յուսումն մեր , և ըստ այնմ բանականն բարեխօսէր վասն զգայականին՝ ասելով , Հայր՝ եթէ հնար իցէ անցցէ բաժակս ։

Քանզի խնդրուածն այն էր զգայականութեան , նաև բանականին ․ այլ զգայականին էր՝ իբրև բաղձացողի , և բանականին՝ իբրև մաղթողի ․ և զայս կամեցաւ ք̄ս , առ 'ի յերեքկին ուսումն մեր ։

Առաջինն է՝ զի գիտասցուք թէ են ինչ , որոց կամիլն ըստ զգայականութեան ոչ են մեղք , թէպէտ իցեն ներհակք ա̄ծային կամացն ։ Երկրորդն է՝ զի մարտիրոսքն ք̄սի , ոչ յուսահատեսցին ընդ զարհուրիլն 'ի մահուանէ ․ քանզի և ք̄ս զարհուրեցաւ 'ի մահուանէ ։ Երրորդն է, զի ուսցուք խոնարհաբար խնդրել , այսինքն , ենթադրել զկամս մեր ա̄ծային կամացն ․ և այս յայտ է՝ 'ի յաւելեալ թէականէն՝ , որ ասէ՝ եթէ հնարիցէ ․ և դարձեալ ․ սակայն՝ ոչ որպ̄ ես կամիմ , այլ որպ̄ դու ։

Յաղագս պակասութեանցն՝ զոր էառ քս՟։

ԳԼ. ԺԸ.

Ա ՈՉ միայն էառ քս՟ զմարդկային բնութիւն, այլ և զպակասութիւնս՝ որք շուրջ զբնութեամբս, այսինքն, զայնս որ նմա վերաբերիւր առնուլ. ուստի վասն զի չարչարանքն են կրթականք կատարեալ առաքինութեան, և վկայականք մարդկային բնութեան, վասն այսորիկ ճշմարտապէս, և ոչ առաչօք կրեաց զկիրսն, զհոգևորս՝ նաև զմարմնաւորս, որք նկատեն առ հասարակ բնութիւս մեր, Մատթ. 4. 2 26. 38. ոպ՟ զքաղցն, և զծարաւն, ՚ի պակասել կերակրոյն. զտրտմութիւն, և զերկիւղ, ընդ պատահիլն վնասու ինչ, և զայնպիսիս, ոպ՟ է ջերմութիւն, և ցուրտն, վաստակիլն, և այլն ։ Այլ ոչ զամ՟ մարմնական պակասութիւնս էառ, ոպ՟ են հիւանդութիւնք բազմադիմք. և ոչ զամ՟ հոգևորականն, որ է մեղքն, տգիտութիւն, և ապստամբութիւն մարմնոյն առ հոգին ։ Դարձեալ՝ զի ոչ ոք անմեղ պարտական է յակամայ համբերել տանջանաց. քանզի լինէր այս ընդդէմ կարգի ած՟ային արդարութեան ։ Նմին իրի՝ քս՟ այնպէս կամաւորապէս կրեաց զկիրսն, մինչ զի յակամայ կրել ոչ կարէր. զի չարչարանք իւր՝ ոչ էր ընդդէմ կարգի ած՟ային կամացն. և ոչ ընդդէմ կարգի կամաց բանականութեան. թէպէտ լինէր ընդդէմ կամաց զգայութեան և մարմնոյն ։ Նաև առեմք, թէ քս՟ ճշմարտապէս՝ երկեաւ. ճշմարտապէս՝ ցաւեցաւ, և ճշմարտապէս՝ տրտմեցաւ, ըստ այնմ որ այսօրիկ նշանակեն զարտակիրսն, և ոչ ըստ որում նշանակեն զկիրսն ։ Արդ՝ զանազանին արտակիրքն ՚ի կրիցն, զի յայնժամ ախորժակն ասի արտակիրք, յորժամ հոգին այնպէս ախտանայ, մինչ զի զաչս մտաց ոչ ամբոխէ. իսկ կիրք ասի, յորժամ է այնպէս ուժգին, մինչ զի ամբոխէ զաչս մտացն, և արտաքսեցուցանէ ՚ի յուղղութենէ, և յած՟ային խոկմանէն, և յայնժամ՝ բանն վնասի և կրէ ։ Ուստի տարբերին երկոքեանքս այսօքիկ ոպ՟ տրամադրութիւն. և ունակութիւն ։

Յաղագս չարչարանացն Քի ։ Գլ. ԺԹ.

Խօսելով ՚ի վերայ չարչարանացն Քի, գովեմք
՚ի գործն՝ զանյաղթելի համբերութիւնն
․ ՚ի յեղանակն՝ զզարմանալի
խոնարհութիւն ․ ՚ի պատճառն՝ զանպատմելի
սէրն ։

Վս̄ գործոյն ծանիր, զի Քս̄ կրեաց ՚ի
շօշափելիսն՝ զխստութիւն բևեռացն ։
՚Ի լսելիսն՝ զամօթ նախատանաց ։ ՚Ի ճաշակելիսն զդառնութիւն
քացախին ։ ՚Ի հոտոտելիսն՝ զգարշահոտութիւն
գլխոց մեռելոց, որք ՚ի գողգոթայ ։ ՚Ի յաչսն՝ զըղխումն Ա
արտասուաց ։ ՚Ի միտսն՝ զերկիւղ, և զտրտմութիւն ։
Իսկ զեղանակէ չարչարանացն՝ ստուգապ̄ հաւաստի է,
զի Քս̄ չարչարեցաւ չարչարանօք ընդհանրականօք ․ զի
ըստ ամենայն անդամոց մարմնոյն չարչարեցաւ ․ ըստ
եսայեայ որ ասէ, տեսաք մեք զնա, և ոչ գոյր նորա Եսայ. 53
տեսիլ, և ոչ գեղեցկութիւն ․ այլ գեղեցկութիւն նորա 2.
անարգեալ՝ քան զա̄մ որդւոց մարդկան ։ Դարձեալ՝ ողբ. 1.
չարչարեցաւ յոյժ դառնապէս՝ ըստ ողբոցն ․ ով դուք 12.
ա̄մքն անցաւորք ճանապարհաց, հայեցարուք և տեսէք,
եթէ իցեն երբէք ցաւք, ըստ ցաւոց, որք ՚ի
վերայ իմ հասին ։ Արդ՝ չարչարանքն Քի էր յոյժ
մեծ, վասն սաստկութեանն, վասն գեղեցկայարմար
բարեխառնութեան կրողին, վասն անմեղութեան
կրողին, և վասն գերազանց պատւոյ նորին ։
Քանզի պատուեալ ոք՝ եթէ անարգիցի, առաւել
ցաւի, և մանաւանդ ՚ի մէջ իւրոցն ։
Դարձեալ ծանր եղև չարչարանքն Քի՝ վասն վեհագոյն
առաքինութեանցն որք ՚ի նմա ․ զի այր անարգ
և մոլի, ոչ պարտի ցաւել վասն մահուան իւրոյ, զի
յայնժամ դադարի մոլութիւն գործոց նորա ․ որ ընդդէմ
է զառաքինւոյն ։ Դարձեալ՝ չարչարանք նորա
էր անարգալիր, ըստ եսայեայ որ ասէ՝ տեսիլ նորա Եսայ. 53
անարգ և նուաստ ։ Իսկ անարգութիւս այս՝ մատնեալ 2.
լինի ՚ի տանջանարանս խաչին, որ էր տանջանք չարագործաց Յոհ. 19.
․ և ՚ի յընկերակցութիւն չարագործացն, 18.
այսինքն, աւազակացն ընդ որս համարեցաւ ։ Ղուկ. 23
Արդ՝ վասն պատճառի սիրոյն նկատելի է, զի բժշկել 32.
Քս̄, հասարակ չարչարանօքն զընդհանրական ապա-

կանութիւնն . և դառնագոյն չարչարանօքն՝ զվաւաշոտութիւն . և անարգալից չարչարանօքն՝ զյանդգնութի՟ հպարտութե՟ն ։

Իսկ 'ի պատճառս չարչարանացն՝ իմացեալ լինի վեհագոյն սէրն , որով ազատեաց զմեզ 'ի դժոխոցն , տալով զթողութիւն . որով՝ և զաշխարհս նորոգեաց , աստուածանելով զշնորհս . որով զերկինս եբաց , տալով զշնորհս և զփառս ։ Եւ երեքեանքս այսոքիկ՝ նշանակին 'ի վերնագիրս խաչին . քանզի վասն առաջնոյն ասի Յս՟ . վասն երկրորդին՝ նազովրեցի . վասն երրորդին՝ թագաւոր հրէից ։ Այլ և Քս՟ վեցիցս եհեղ զարիւն իւր , հնգիցս՝ կենդանի , և միանգամ մեռեալ , այսինքն ; 'ի թլփատութեանն . 'ի
ղուկ· բ· իա յաղօթելն . 'ի ճաղելն . 'ի պսակելն փշոք . 'ի բևեռելն
իբ·խդ· 'ի խաչին . և 'ի խոցումն կողին . որ եղև յետ մահ-
յով·ժթ·լդ ուան ։ Առաջնումն ուսանիմք 'ի բաց ընկենուլ զմեղս ։ Երկրորդին ունել 'ի մտի զնեղութիւն վասն փրկութե՟ մերոյ ։ Երրորդին՝ առաքինութե՟ զարդարել զհոգիս մեր ։ Չորրորդին՝ ճնշել և նուաճել զմարմինս մեր ։ Հինգերորդին՝ զանդամս մեր բևեռել 'ի պատուիրանս այ՟ ։ Վեցերորդին՝ սիրով նր՟ խոցել զսիրտս ։ Եւ զի վերջասացեալս չարչարանքս այսոքիկ ոչ հասանէին 'ի Քս՟ , մինչև 'յածային բնութիւն , այլ 'ի մարդկայինն . վասն որոյ 'ի մահն Քի՟ անջատեցաւ հոգին 'ի մարմնոյն , մնալով միաւորութի՟ ածութեանն ընդ հոգւոյն , նաև ընդ մարմնոյն ։

Այլ և գիտելի է՝ զի թէ Քս՟ ոչ էր չարչարեալ , սակայն պակասէր ծերութե՟ . և այս մտածելով՝ զորպիսութիւն մարդկային բնութե՟ն ըստ ինքեան առանց միաւորութեան ընդ ածայնոյն ։ Այլ մտածելով զնա իբր միացեալ՝ էր ընդ իշխանութե՟ միացելոյ բնութե՟ն՝ պակասելի , կամ ոչ պակասելի ։

Յաղագս ներգործութեանց չարչարանացն Քսի ։
Գլ. Ի.

Ներգործութիւն չարչարանացն Քսի՛ է՛
բազմադիմի. ուստի յայտ է՛ 'ի յոտանաւորս ։

Թուլացուցանէ, անար առնէ.
ուսուցանէ խել, և պատուէ ։
յորդորէ զմիտ, և բորբոքէ.
նորոգէ խել, և խաղաղէ ։
սպառազինէ, և բժշկէ.
կենդագործէ, առաջնորդէ ։
քաղցր առնէ յար՛ և հոլանէ.
և 'ի մեղաց դարձուցանէ ։
փակէ՛ բանայ. լուսաւորէ.
և վերջապէս խել՛ զարդարէ ։

Այս թուլացուցանէ զզօրութիւնս դիւաց՛ ըստ յոբայ յոբ. 40.
որ ասէ՛ իբր թէ կարթիւ ըմբռնեցես զլևիաթան ։ 28.
Անար էառ զդժոխս՛ ըստ եսայեայ, որ ասէ կոչեա՛ եսայ. 8. 1.
զանուն նորա արագ արագ, անար հարկանեսջիր ։

Ուսուցանէ մեզ զվարս, բարի օրինակօք՛ ըստ պետրոսի 1. պետ.
որ ասէ՛ Քս չարչարեցաւ վասն մեր, և մեզ 2. 21.
եթող զօրինակ ։ Ուստի Քս՛ է՛ իբրև գիր եղեալ
'ի դրակալս խաչին. յորմէ ուսանիմք զհնազանդութի,
զխոնարհութիւն, և զայլս ։ Արդ՛ ուսիր յատկապէս՛
թէ որ՛պէս կայր յատենի դատաւորի. ուստի ասէ
բեռնարդոս՛ եկաց Քս առաջի դատաւորին՛ խոնարհ
գլխով. պայծառ դիմօք. սակաւ խօսիւք. մեղմ
դիմօք, վայրանկեալ աչօք. պատրաստ 'ի նախատինս.
յօժար՛ 'ի հարկանումն ։

Պատուէ զհետևօղս իւր, ըստ այնմ որ ասէ եսթեր; եսթ. 6.
սոյնպէս պատուեսցի՛ զոր կամի թագաւորն փառաւորել ։ 11.

Յորդորէ 'ի հոգևոր պատերազմ, ըստ այնմ որ ասէ՛ 1. մակ.
մակաբայեցւոց՛ ցուցանէին փղիցն զարիւն ։ 6. 34.

Բորբոքէ առ 'ի սիրել, ուստի ասէ բեռնարդոս՛ 'ի վեր
քան զամ, ո՛վ բարի Յս, առնէ զքեզ ինձ սիրելի ։
բաժակն զոր արբեր, որ նորոգէ զփրկութի մեր ։

Նորոգէ զանկումն հրեշտակաց, քանզի ինքն Քս է՛
վէմ անկեան, որ առնէ զերկոսեանն մի ։

Առնէ խաղաղութի, 'ի մէջ այ, և մարդոյ, 'ի մէջ
հրեշ-

հրեշտակաց, և մարդոյ ՚ի մէջ մարդոյ և մարդոյ. ըստ
սիրաք. այնմ որ ասէ սիրաք, ՚ի ժամանակի բարկութեան, եղև
44.17. խաղաղութիւն:

Սպասաւորն ընդդէմ մարմնոյ, աշխարհի, և սատանայի. ուստի նշանակեցաւ վահանաւն յեսուայ, որ
յեսու. 8 ընդդէմ գայեայ:

18. Բժշկէ զվէրս մեղաց, որ ասէ թուոց՝ հայեցեալք
թուոց. յօձն պղնձի բժշկէին:

21.9. Կենդանացուցանէ. այսինքն, հոգևորապէս. ըստ
առաքելոյն, որ ասէ՝ մինչ էաք մեռեալք՝ կենդանա-
եփես. ցոյց զմեզ, և օգոստինոս ասէ՝ մեռաւ միակն, զի մի՛
2.5. մնասցէ միայն:

ելից. 14 Առաջնորդէ ընդ ծով կենցաղոյս, որ օրինակեցաւ
16. ՚ի գաւազանն մովսէսի:

ելից. 15 Քաղցրացուցանէ՝ որ օրինակեցաւ ՚ի փայտն, որ ար-
25. կաւ ՚ի ջուրն մեռայ:

երգ. 2.3 Հովանաւորէ, ըստ այնմ որ ասէ՝ յերգսն, ընդ հո-
վանեաւ նորա նստայ՝ զոր սիրեցի:

եսայ. 53.5. Դարձուցանէ ՚ի մեղաց. ըստ եսայեայ. և նորա վի-
րօքն բժշկեցաք:

եսայ. Բանայ զերկինս՝ ըստ եսայեայ՝ որ ասէ՝ տաց զփա-
22.22. կանս դաւթի, այսինքն, զխաչն ՚ի վերայ ուսոյ նր:

տօբ. 11. Լուսաւորէ՝ քանզի խաչն է՝ իբրև զաշտանակ խորա-
13. նին. և տօբիթ լուսաւորեցաւ լեղեաւ ձկանն:

Զարդարէ՝ ուստի ասաց երանուհի կոյսն ագնէս, արիւն նր զարդարեաց զծնօտս իմ: Դարձեալ՝ քն չարչարանօքն իւրովք յաղթեաց զսատանայ, զոր և նկարեաց. զգժոխս՝ զոր կողոպտեաց. զմահ՝ զոր պարտեաց. զաշխարհ՝ զոր խոտեաց. զչարչարանս՝ զոր յանձն էառ. զերկինս՝ զոր եբաց: Դարձեալ՝ չարչարանքն քն բառնայ զեօթն մոլութիւնս գլխաւորս. զամբարտաւանութիւնն, խոնարհեցուցանելով զգլուխն:

(Թէպէտ էր դրեալ ՚ի վերայ տախտակին. սա է թագաւոր հրէից:) Զնախանձն տարածմամբ բազկացն, որ նշանակէր զգիրկարկ անուան սիրոյն:

Զագահութիւնն բազմաբաշխութեամբն, քանզի ասէ բեռնարդոս: Ուսիր ով քրիստոնեայ, թէ որ քան պարտիս սիրել զՔս, որ ետ մեզ զմարմին իւր ՚ի կերակուր, և զարիւն իւր ըմպելի. զհոգին ՚ի գին, զջուր կողին ՚ի լուացումն, զհանդերձն խաչողաց: զմաշկինն՝ աշակերտաց, և զմայրն յոհաննու, Զծուլութիւնն փութալով ՚ի չարչարանս:

Զբար.

Զբարկութիւնն՝ կակուղ պատասխանաւն.
Զորկրամոլութիւնն՝ ըմպելով զքացախն, և զլեղին:
Զբղջախոհութիւնն՝ խոցմամբ կողին: Դարձեալ՝ 'ի փրկութիւն մեր, էր զարմանալի շնորհս:

Նախ՝ 'ի կողմանէ շարժման, զի սէրն ա̃յ տեսեալ՝ թէ ոչ մեօք, և ոչ բարեկամօք, և ոչ գնով կարէաք փրկել զմեզ, վասն այսորիկ արար զինքն եղբայր մեր, առնլով զբնութիւն մեր. և ետ զգին հեղլով զարիւն իւր վասն մեր, ուստի ասէ սաղմոս, փրկեա́ զիս, և ողորմեա́, զի միայնակ եմ ես, այսինքն, ոչ ունելով զբարեկամս. և աղքատ, այսինքն, ոչ ունելով զգին: սաղ. 24. 16.

Երկրորդ՝ 'ի կողմանէ փրկողին, քանզի այն որ կարէր ազատել զմեզ իշխանութեա̃մբ, արար զայն մանաւանդ ողորմութեա̃մբ. զի բեւեռեսցէ զմեզ 'ի սէր իւր. և զի հաճանեցուսցէ զարդարութիւնն ա̃յ:

Երրորդ՝ 'ի կողմանէ փրկեցելոյն որ ներեալ լինէր 'ի ծառայութե̃ մեղացն, և արգելեալ 'ի բանտի:

Արդ ընդդէմ առաջնոյն մեծ խնա̃ էր. զի որդին լինէր ծառայ, զի ծառայն լիցի ազատ: Ընդդէմ երկրորդին մեծ խնա̃ էր, զի Տ̃ն էջ 'ի բանտս ծառային, զի ծառայն ելանիցէ յարքայութիւնն վերին: եփց. 3. 8

Չորրորդ, 'ի կողմանէ արդարութե̃ն, զի ոչ արդարութի̃ն խնա̃ լրման համարէր, զի անմեղն պատժեսցի փոխանակ պարտաւորին: Ա Հինգերորդ՝ 'ի կողմանէ ա̃ծային գերազանցութե̃, զի զարմանալի խնա̃ էր, զի որդին՝ լինէր գին անարգ ստեղծուածոյն:

Վեցերորդ՝ 'ի կողմանէ առեալ գնոցն: Քանզի եթէ զմեզ գնեալ իցէր միայն, տակաւին պարտականք էաք շնորհակալութե̃. այլ արդ՝ գնեաց զմեզ հոգւով. մարմնով և կենօք իւրովք, զի զոչ ինչ 'ի մերոց խնայեսցուք 'ի նմանէ: Արդ 'ի չարչարանսն Տ̃ն՝ ծանի՛ր զութն քաղցրութիս: Առաջինն է՝ խոնարհումն գլխոյն առ 'ի համբոյր՝ 'ի նշան հաշտութե̃ մերոյ: 1. կոր. 6. 20.

Երկրորդ է՝ տարածումն բազկացն՝ առ 'ի գիրկս արկանել, 'ի նշան ընդունելոյ 'ի շնորհս՝ զդարձեալսն 'ի մեղաց: Երրորդ է՝ բացումն կողին, 'ի նշան ամենառատ գնոյ՝ փրկութե̃ մերոյ: Չորրորդ է՝ ելումն արեան, և ջրոյն, 'ի լուացումն մեր: Հինգերորդ է՝ պնդումն բեւեռացն ոտից, և ձեռացն, առ 'ի մշտնջենաւոր յիշատակ ունելոյ զմեզ 'ի միտս իւր, ըստ եսայեայ, որ ասէ՝ թէ կարիցէ կին մոռանալ զերեխայս իւր. այլ ես ոչ մոռացայց զքեզ. և այլ ուր յոհ. 19. 34. եսայ. 49. 15.

՚ի ձեռս իմ գրեցի զքեզ։ Վեցերորդ է՝ մերկացումն մարմնոյն ՚ի նշան խոստովանութեան մերոյ, որ պարտի լինել մերկապարանոց։ Եօթներորդ է՝ բարձումն խաչին, առ ՚ի նշան մեզ հետեւելոյ նմին։

Ութերորդ է՝ թագելն փշեղէն պսակաւն ՚ի նշան փառաւորութե մերոյ։

Իսկ ՚ի ներգործութե չարչարանացն ասէ Օգոստինոս. մահուամբ փրկչին մերոյ՝ կոչեցեալք եղաք ՚ի խաւարէ առ լոյս․ ՚ի մահուանէ՝ ՚ի կեանս, յապականութե՝ յանապականութի․ ՚ի յաքսորանաց՝ ՚ի հայրենական գաւառն․ ՚ի սգոյ՝ առ խնդութիւն․ ՚ի յերկրէ, առ յարքայութի։ Դարձեալ ասէ՝ զի Քս էր քահանայ, ՚ի ձեռն որոյ վերստին հաշտեցաք․ էր տաճար, ՚ի յոր հաշտեցաք․ էր միջնորդ հրեշտակաց, եւ հեթանոսաց ժողովրդոցս, եւ ըստ այսմ եւս ասի վէմ անկեան։ Դարձեալ՝ հրեշտակաց եւ մարդկան,
սաղ․ եւ ըստ այսմ ասի խաղաղարար։ Այլ եւ Այ եւ մարդկան,
117․22․ եւ ըստ այսմ անուանի փրկիչ։ Եւ Բեռնարդոս ասէ՝
կող․ 1․ զինչ ինչ պարտէր տանել, եւ ոչ արար։
20․

երեմ․ Ելոյծ զկապեալն, լուսաւորեաց զկոյրն․ դարձոյց
50․34․ զմոլորեալն․ եւ հաշտեցոյց զպարտաւորն։

Դարձեալ Օգոստինոս ասէ՝ ահա վասն ամբարշտին ձաղի գթութիւնն․ վասն յիմարին ծաղր լինի իմաստութիւն, վասն ստոյն՝ բացասացեալ լինի ճշմարտութիւն․ վասն անօրինին դատապարտի արդարութիւն․ վասն անողորմին տանջի ողորմութիւնն, վասն թշուառականին ՚ի բաց մերժի երջանկութիւնն․ քացախաւ եւ լեղեաւ արբենայ քաղցրութիւն․ վասն մեռելոյն մեռանի կեանքն։

Վս մերոց հիւանդութեց Քս եառ զդեղն։ Քանզի բժշկեաց զմեզ․ անուաղութե՝ յորժամ պահեաց զքառասուն տիւ, եւ զքառասուն գիշեր։ Քրտամբք, յորժամ եղեն քրտունքն նր իբրեւ զկայլակս արեան յերկիր հեղեալ։ Երակ հատանելով, յորժամ բեւեռօքն, եւ գեղարդեամբն խոցեցաւ։ Ըմպելեաւ, յորժամ ճաշակեաց զքացախն ընդ լեղւոյն։

Ապեղանեաւ, յորժամ երեսք նորա թքով մածեցաւ։ Յօշարակաւ, եւ մածունաւ, յորժամ զմարմին․ եւ զարիւն ետ աշակերտացն յետ ընթրեաց։

Յաղագս խաչին Քի : Գլ. ԻԱ.

Ի խաչն Քի ծանիր զայս՝ զի էր չարչարանք, որոյ ոչ էին մեծագոյն, ըստ այնմ որ ասէ՝ ո՜վ դուք ամ̃ն անցաւորք ճանապարհի, տեսէք թէ գոյ ցաւ, նման ցաւոյ իմոյ · որոյ ոչ էին մեծագոյն ասեմ, վասն զի չարչարեցաւ արդարն՝ ՚ի յանարդարաց · վասն անարդարաց · ընդ անարդարս, վասն անիրաւ պատճառաց, ՚ի ներքոյ անիրաւ դատաւորաց, և անիրաւ տանջանօք : ողբ. 1. 12.

Ա

Էր նախատինք, որոյ ոչ էին անարգագոյն, ըստ այնմ որ ասէ իմաստութեն բ. անարգագոյն մահուամբ դատապարտեսցուք զնա : Էր գին՝ քան զոր ոչ էին պատշաճագոյն · վասն զի ոպ̃ փայտիւն եղև մեղք, նոյնպէս և փայտիւն վերանորոգումն : 1. պետ. 3. 18. իմա. 2. 20. իմա. 14. 7.

Էր խորհուրդ՝, որոյ ոչ էին խորագոյն, յորմէ ասէ առաքեալն առ եփեսացիս, զի կարասջիք ըմբռնել ընդ ամ̃ սրբս՝ թէ զինչ է լայնութի և խորութի · զոր մեկնէ օգոստինոս, զխաչէն Քի : Նաև էր օրինակ՝ որոյ ոչ էին կատարելագոյն՝ ըստ պետրոսի որ ասէ՝ Քս̃ չարչարեցաւ և ձեզ եթող զօրինակ : Դարձեալ՝ խաչն համեմատի բազմաց իրաց : եփե. 3. 18. 1. պետ. 2. 21.

Քանզի նա է բանալի երկնից : եսա. 22
Լծակ տապանակին : ելից. 25
Նաւ ծովու : եսա. 60
Ծառ դանիէլի : դան. 4.
Արմաւենի պտղոցն : գահաւորակ սաղոմոնի : երգ. 7. 7
Ցուպ յակոբայ, որով էանց ընդ յորդանան : ծնն. 32.
Հայելի հետևման · իմաս. 7.
Սանդուխք ելանելոյ : ծնն. 28.
Կարթ, որով ըմբռնի լևիաթան : յոբ. 40.
Հնձան, որով ճմլի արիւնն Քի : եսա. 63
Քնար՝ որով դևն սաւուղայ սանձահարի : 1. թա. 19
Ձող՝ յոր օձն պղնձի կախի : թւոց. 21
Թաւու՝ որով ճակատ հաւատացելոցն դրոշմի · եզեկ. 9.
Աշտանակ՝ որով խորանն լուսաւորի : ելից. 35
Փայտ՝ որով ջուրն մեռայ քաղցրանայ : ելից. 15
Գաւազան մովսէսի, որ զօձն դիւթից կլանէ : ելից. 7.
Եւ առաջնորդէ ժողովրդեանն ընդ ծովն կարմիր : ելից. 14
Սուր՝ որով գողիաթ գլխատի : 1. թա. 17

թուոց. Նշանակ՝ որ հաւաքէ զժողովուրդ տն , ՚ի հոգեւոր

2.2. պատերազմն ։

եզե.28 Աթոռ, որ ուսուցանէ զաշակերտսն քո ։

եսթ.6. Երիվար՝ որ պատուէ զսիրելիս ։

յեսու.8 Վահան յեսուայ , որ մարտեաւ ընդդէմ գայեայ ։

օրին.31 Գիր՝ ունելով յինքեան զխորհուրդս խորհին ։

եկից.29 Սեղան՝ ուր մատուցաւ յոյժ ընդունելի պատարագ ։

Գիտելի է՝ զի Քս ՚ի խաչին խօսեցաւ զբանս եօթն ։

ղուկ.23 Նախ՝ հայր թող սոցա զմեղս ։

34.43. Երկրորդ՝ այսօր ընդ իս լիցես ՚ի դրախտին ։

յոհ. 19. Երրորդ՝ կին՝ ահա որդի քո ։

26.28. Չորրորդ՝ ծարաւի եմ ։

մատ.27 Հինգերորդ՝ էլի էլի լամմասաբաքթանի ։

ղուկ.27 Վեցերորդ՝ ՚ի ձեռս քո յանձնաւանդեմ զհոգի իմ ։

յոհ.19. Եօթներորդ՝ ամ ինչ կատարեալ է ։

մատ.18 Առաջնով բանիւ , ուսանիմք թողուլ զանօրէնութիւն

35. զարարեալս ընդդէմ մեր ։

ղուկ. 17 Երկրորդիւն , լսել աղաչողաց ։

եկից.20 Երրորդիւն պատուել զծնօղսն ։

մատ.5. Չորրորդիւն ցանկալ փրկութե մերոյ ։

սաղ. Հինգերորդիւն աղաղակել առ Ած ՚ի ժամանակս

106.6. նեղութեան ։

սաղ.54. Վեցերորդիւն զամ հոգս մեր ընկենուլ առ Ած ։

մատ. Եօթներորդիւն կատարել զկեանս մեր պատշաճաւոր

1[illegible].8. վախճանաւ ։

Դարձեալ՝ չորք թեւք խաչին՝ նշանակեն զչորս առաքինութիս , ՚յորս պարտի տարածիլ ներքին մարդս մեր ։ Քանզի վերին մասն՝ նշանակէ զսէրն · ներքինն զխոնարհութի · ահեակն՝ զհամբերութի · աջն՝ զհնազանդութի ։ Դարձեալ՝ ՚ի չորեսին թեւս խաչին նշանակին չորք բարութիք նորա , քանզի մասն վերին նշանակէ զբացումն դրանն երկնից · ներքինն՝ զաւերումն դժոխոց · աջն՝ զբաշխումն շնորհաց · ահեակն զթողութի մեղաց ։ Դարձեալ՝ չորք փայտք էին ՚ի խաչն , որք ասէ վարդապետն ՚ի պատմութե , պատուանդանն՝ նոճի · բունն՝ կիպարի · խոտորնակն՝ արմաւենի . իսկ տախտակ վերնագրին՝ ձիթենի ։ Արդ՝ նոճն՝ նշանակէ զբարձրութի խոկման · կիպարին՝ զանուշահոտ բարեհամբաւութիւն · արմաւենին՝ զպտուղ արդարութե · իսկ ձիթենին զխաղաղութիւն ողորմութեանն ։

Յաղագս իջանելոյն Քի՟ 'ի դժոխս : Գլ. ԻԲ.

ՀՈգին Քի՟՝ յետ մահուանն՝ էջ 'ի դժոխս, որ կոչի լիմբոս, առ 'ի յազատութիւն այնոցիկ, որք գոլով անդանք էին, փոխեցան յայսմ կենցաղոյս : Քանզի սատանայ որով հետեւ ձգեաց զձեռն 'ի նա, 'յորում ոչ ունէր իրաւունս ինչ․ իրաւի կորոյց զիշխանութիւն իւր, որ 'ի վերայ այլոց : Է՛ եւ այլ պատճառ՝ թէ վասն է՞ր Քս՟ էջ 'ի դժոխս․ զի այնքան լինի իջումն փրկողին, որքան էր անկումն փրկեցելոյն : Քանզի առաջին մարդն այնպէս եղեալ էր 'ի կշիռս անձնիշխանականին, մինչ զի կարէր ելանել 'ի կեանս, կամ իջանել 'ի մահն ըստ կամաց իւրոց : Այլ ներգործելով մեղացն՝ ծանրացաւ մի թաթ կշռոյն, եւ էջ 'ի դժոխս ստորին, եւ միւս թաթն էր 'ի ծայրս երկնից :

Այլ արդ՝ ոչ կարէր բարձրանալ ստորաքարշեալ թաթն, եթէ ոչ իջանիցէր բարձրացեալն :

Վասն որոյ էջ որ՟ն 'ի դժոխս զի զերեւալ մարդն բարձրացուցանիցէ մինչեւ յերկինս : Երրորդ՝ թէ վասն է՞ր էջ Քս՟ 'ի դժոխս՝ է՛ զի որպէս 'ի կենդանութեանն էր լոյս աշխարհի մարմնական ներկայութբ՟ն, այսպէս 'ի մեռելութե՟ն լինէր լոյս դժոխոց, փառօք մ՟ծութե՟ն : Չորրորդ՝ զի զնոյն կատարեսցէ Քս՟ ներգործութբ՟, զոր բաւականապէս էր շահեալ չարչարանօքն իւրովք : Արդ՝ զերկու իրս շահեցաւ մեզ Քս՟ չարչարանօքն իւրովք, այսինքն, զթողութիւնն վասն մեղաց, եւ զբացումն դրանն երկնից․ 'նմին իրի զերկոսեանս զայսոսիկ ներգործեաց՝ ընդ իջանելն 'ի դժոխս․ քանզի փոխարինաւն՝ լուծան կապանք գերելոցն, եւ բացմամբ դրանն երկնից, եղեւ լուսաւորութ՟ի բանտոյին, նա եւ ըստ արտաքին լուսոյն : Արդ՝ արձակեաց Քս՟ զն՟մն, որք էին ընդունակ արդեանց իւրոց, որպէս էին սբ՟ հարքն, որք ոչ վասն անձնական պարտաւորութեց, այլ միայն վ՟ս պարտաւորութեան բնութեան՝ բանտարգելեալք լինէին : Իսկ դատապարտեալքն՝ ոչ են ընդունակ այսմ արդեանց, եւ ոչ մանկունքն, որք 'ի լիմբոսն, զի ոչ էին 'ի մարմնոյն Քսի՟ հաւատով․ կամ խորհրդով

Ա

հաւատոյն ։ Նա և ասելն՝ թէ հոգին Ք՟ի երեքօրեայ մահուանն իւրում՝ էր ընդ ս՟բ հարցն 'ի լիմպօսն ։ Անդ էր և աւազակն , որում ասաց Տ՟րն , այսօր ընդ իս լիցես 'ի դրախտին ։ Քանզի անուամբ դրախտին՝ նշանակի զմայլումն ա՟ծային · քանզի յետ կատարման չարչարանացն՝ ինքն աւազակն, և այլք որք էին 'ի լիմպօսն՝ տեսին զա՟ծ էութե՟ ։ Այլ թէ կամիցիս գիտել՝ թէ յո՞ր դժոխք էջ Ք՟ս , ծանիր , զի անուն դժոխոցն կրկին կերպիւ առեալ լինի , այսինքն , վասն պատժոյ , և վ՟ն տեղւոյ պատժոյ ։

Ըստ առաջնոյ կերպին , դևք՝ միշտ ունին զդժոխս ընդ ինքեանս ։ Իսկ ըստ այնմ որ առեալ լինի դժոխք վ՟ն տեղւոյ պատժոյն , զանազանին չորեքկին դժոխք ։ Առաջինն է՝ դժոխք դատապարտեցելոցն , ուր է տանջանք զգայութե՟ , և զրկման , և խաւար արտաքին , և ներքին , որ է զրկումն 'ի շնորհաց , սա միշտ ունի զողբ ։ Երկրորդ է՝ 'ի վեր քան զայս՝ տեղի մանկանցն ուր է պատիժ զրկման , և ո՛չ զգայութե՟ · և է՛ անդ խաւար արտաքին , և ներքին , զի զրկին 'ի շնորհաց ։ Երրորդն է՝ 'ի վերոյ քան զայս , որ է քաւարանն , ուր է պատիժ զգայութե՟ , և զրկման ժամանակաւոր · և է անդ խաւար արտաքին , այլ ո՛չ ներքին · քանզի ունին զշնորհս ա՟յ , որ է լոյս ներքին · զի տեսանեն զինքեանս գոլ փրկելիս ։ Արդ չորրորդ տեղին , որ բարձրագոյն քան զայլս՝ է լիմպօսն , որ է տեղի ս՟բ հարցն · ուր էր պատիժ զրկման , և ո՛չ զգայութեան ։ Նա և էր անդ խաւար արտաքին , և ոչ ներքին որ է պակասութիւն շնորհաց , զի էին Բ. 'ի շնորհս ա՟յ ։ 'Ի տեղիս այս էջ Ք՟ս , և զնոսին ազատեաց անտի · և այսպէս եխած զդժոխսն , զի զմաս մի եթող , և զմաս մի եբարձ · իսկ զմահն՝ ըստ այնմ ովսէ. 13. 14. որ առ ընտրեալսն ամենևին աւերեաց , ըստ յովսեայ որ ասէ՝ ո՛վ մահ , եղէց մահ քո , և դժոխք , խածից զքեզ ։ Նա և տեղիս այս՝ է՛ր գոգ աբրահամու · զի աստ էր աբրահամ · այլ այժմ հրեղէն երկինն ասի գոգ աբրահամու , զի այժմ անդ է աբրահամ ։

Արդ՝ յո՛չ ոմն նախասացելոցս տեղեացս , գոն անցք առ միւսն , եթէ ո՛չ յերրորդէն առ չորրորդն , այսինքն, 'ի քաւարանէն՝ 'ի լիմպօս ս՟բ հարցն ։

Եւ ըստ այսմ յայտ է յասացելոցս , թէ վասն է՞ր երգէ եկեղեցի՝ ազատեաց զհոգիս հաւատացելոց ննջեցելոց , 'ի ձեռաց դժոխոց , և 'ի խորոյ գբոյ ։

Զի անդ առեալ լինի դժոխք՝ վասն քաւարանին , ոչ և այլ ուր առեալ լինի վասն լիմբօսին , յորժամ ասի գ՟քն է , իջեալ ՚ի դժոխս , և աներեալ զնա ։

՚Ի վերոյ ասացելոցդ հաւաքեմ , ՚զի ք՟ս մեռաւ ըստ մարմնոյն , էջ ՚ի դժոխս՝ ըստ հոգւոյն . և յարեաւ ըստ երկոցունցն ։ Նա և ասելի է՝ թէ ք՟ս երեքօրեայ մահուամբն , էր բոլորն ՚ի գերեզմանի , այլ ոչ բոլորովին . և բոլորն էր ՚ի դժոխս , այլ ոչ բոլորովին . զի բոլորն՝ ասէ զանձն . իսկ բոլորովինն՝ զգոյացութիւն , և զբնութիւնն ։ Զի բոլորն՝ ասէ զանձն , որ է յիմ ուրեք , այլ բոլորովինն՝ որ ասէ զբնութիւնն , եթէ իմացեալ լինի վասն ա՟ծային բնութեան , էր ՚ի գերեզմանի , և ՚ի դժոխս՝ բոլորովին ։

Իսկ եթէ ըստ մարդկայնոյ բնութեանն , ըստ այսմ
բոլորովին ոչ էր ՚ի դժոխս , այլ միայն ըստ հոգւոյն.
և բոլորովին ոչ էր ՚ի գերեզմանի , այլ միայն ըստ
մարմնոյն ։ Նմանապէս ասելի է՝ թէ մինչ միաւորու-
թի հոգւոյն և մարմնոյն առնէ զմարդն. ք՟ս ՚ի յերեք-
օրեայ մահուանն՝ ոչ էր մարդ . քանզի հոգին էր
անջատեալ ՚ի մարմնոյն . թէպէտ հոգին , և մարմին Գ
միաւորեալք էին ընդ բանին ։

Յաղագս յարութ՟ն Ք՟ի ։ Գլ. ԻԳ.

Ք՟ս յարեաւ ՚ի մեռելոց յաւուր երրորդի՝ վերստին առնլով զմարմինն իւր , ո՛չ այնպիսի զոր յառաջն ունէր , այլ անչարչարելի , և անմահ ։ Քանզի մարմինն Ք՟ի որ ծաղկեցաւ ՚ի ծնունդն . և թառամեցաւ ՚ի մահուան , վերստին ծաղկեցաւ փառաւոր յարութ՟ն ։

Յայնժամ՝ նորոգեցաւ մանկութիւնն քո , որպէս սաղ.
զարծուի ։ Յայնժամ առիւծն յարոյց զկորիւնն իւր ։ 102.5.
Յայնժամ փիւնիկ հաւն՝ վերստին կենդանացաւ ։ ծննդ.
Յայնժամ՝ ըստ երեմիայի՝ բրուտն ՚ի նոյն կաւոյ 49.9.
խորտակեալ անօթոյ արար զայլ անօթ , որպէս հա- երեմ.
ճոյ թուեցաւ յաչս իւր ։ Յայնժամ յոնան ել անվնաս 18.6.
՚ի փորոյ կիտին ։ Յայնժամ պատեցան աշտանակին յոն. 2.11
ոսկեով ։ Յայնժամ կանգնեցաւ , անկեալ խորանն եզեկ. 37
դաւթի ։ Յայնժամ վերստին ճառագայթեաց արե- ամոս.
գակն . որ էր ընդ մառախլաւն ։ Յայնժամ կեն- 9.11.
դանացաւ հատն ցորենոյ , որ անկեալ յերկիր մեռաւ ։ 1.մնկ. 16
յոհ. 12.

դատ. Յայնժամ՝ եղջերուն վերստին եառ զեղջիւր իւր:
16.3. Յայնժամ՝ սամփսոն եբարձ զդուռն սեմօքն հան-
Ծննդ. դերձ: Յայնժամ՝ յովսէփ հանեալ 'ի բանտէ, և
41.14. փոքրեալ զհերն. կացուցանի Տէր եգիպտոսի:
սաղ.29. Յայնժամ՝ զերծեալ քուրձն՝ զգեցուցանի ուրախու-
12. թեամբ: Արդ՝ Տէրն հաստատեաց զյարութիւն իւր գոլ
մատ. ճշմարիտ վկայուբ հրեշտակաց՝ որք ո՛չ երբէք ստեն,
28.6. որպէս ասէ մատթէոս, պատասխանի ետ հրեշտակն՝
և ասէ՝ չէ աստ՝ քանզի յարեաւ: Դարձեալ՝ ստու-
գեաց թշնամեօք, որոց վկայութիւն էր զօրեղագոյն,
մատ. քան այնմ որ ասէ՝ թէ ահա ոմանք 'ի զօրականացն,
28,11. և այլն: Նա և ստուգեաց զյարութիւնն իւր գոլ
ղուկ.24. ճշմարիտ, և ո՛չ կախարդական արհեստիւ եղեալ,
43. ուտելովն: Այլ և ստուգեաց զյարութիւն իւր ո՛չ լի-
ղուկ.24. նել առաչօք. մարմնոյն չօշափմամբն:
39. Դարձեալ՝ ստուգեաց 'ի նոյնում մարմնոջ, որով և
յօհ. 20. չարչարեցաւն իսկ. և այս ցուցմամբ վիրաց:
27. Դարձեալ՝ ստուգեաց լեալ 'ի փառաւորեալ մարմնոջ.
և զայս մտանելովն 'ի ներքս՝ դրօքն փակելովք:
Դարձեալ՝ ստուգեաց՝ երևելով բազում անգամ:
Քանզի հինգ անգամ երևեցաւ 'ի նոյնում աւուր յորում
Ա յարեաւ: Նախ՝ մարիամու մագդաղենացւոյն, որպէս
յօհ. 20. ասէ յօհան, կին դու՝ զի՞ լաս: Երկրորդ՝ կանանցն
14. իւղաբերից. որպէս ասէ մատթէոս:
մատ. 28. Երրորդ՝ պետրոսի. որպէս ասէ ղուկաս:
9. Չորրորդ՝ երթողացն յէմմաւուս, 'ի նմին աւուր, որպէս
ղուկ.24. ասէ ղուկաս: Հինգերորդ՝ աշակերտացն՝ դրօքն փա-
34.15. կելովք, յորժամ թովմաս չէր ընդ նոսա, որպէս ասէ
յօհ.20. յօհան: Դարձեալ՝ 'ի յարութենէն մինչև 'ի համբար-
19. ձումն՝ այլ ևս երևեցաւ հինգ անգամ:
յօհ. 20. Նախ՝ թովմայի, որ ընդ այլոց: Երկրորդ՝ առ ծովե-
26. զերբն տիբերիայ: Երրորդ՝ յորժամ եկեր ընդ աշա-
յօհ.21.1 կերտսն յերուսաղէմ, որպէս ասէ ղուկաս 'ի վերջն:
ղուկ.24. Չորրորդ՝ 'ի գալիլեայ: Հինգերորդ՝ 'ի լեառն ձի-
41. թենեաց, յորժամ համբարձաւ յերկինս որպէս ասէ
մատ.28. ղուկաս: Արդ յարեաւ Քս, վասն բազմաց պատ-
17. ճառաց: Նախ՝ զի լցուսցէ զգիրս, զի յորժամ ասաց
ղուկ.24. Տէրն ահաւասիկ ելանեմք յերուսաղէմ, յայտնեաց 'ի
30. նոյն և յերիր աւուր յառնել: Երկրորդ՝ զի յորդո-
ղուկ.18. րեսցէ զմեզ 'ի հոգևոր յարութիւնն. քանզի անվայե-
32. լուչ է նստիլ ծառային, յորժամ Տէրն յառնիցէ
առաջի նորա:

Երրորդ՝ զի հաստատեսցէ զգոյն հանդերձեալ յարութեան, Հռոմ.
որպէս զի զնմանութեան իւրոյ զկարողութիւն 6.4.
ցուցանիցէր ․ զի կենդանացուցանել զմեռեալս, ոչէ 1.Թես.
գործ բնութեան, այլ աստուածային կարողութեանն ։ 4.13.

Քանզի ոչէ անդրէն դարձումն ․ ՚ի ապականութենէ առունակութիւն ։
Չորրորդ՝ զի յորդորեսցէ զմեզ առ
՚ի խոտել զերկրաւորս՝ վասն հասանելոյ երկնայնոց
փառաց ։ Իսկ թէ՝ ըստ որում եղանակի յարեաւ Քրիստոս, 1. Կոր.
ասելի է՝ թէ յարեաւ Քրիստոս փութանակի, այսէ՝ յերրորդում 15.4.
աւուր ։ Քանզի որպէս դրօքն փակելովք Յոհ. 20.
եմուտ առ աշակերտսն, և որպէս ամբողջ պահելովն 19.
զկուսութիւն մօրն՝ ել ծննդեամբ ՚ի յորովայնէն ․ այսպէս՝ Ղուկ.
ընդ յառնելն նորա, ոչ վէմն, ընդ որով եդեալ 2.7.
էր, և ոչ պահպանութիւն զինուորաց՝ կարաց արգելուլ ։
Դարձեալ՝ յարեաւ ամբողջապէս, զի մարմնով Բ.
և հոգւով ։ Դարձեալ՝ բազում ընկերօք, զի բազում Մատ.
մարմինք ննջեցելոց սրբոց յարեան ։ Դարձեալ՝ յաւիտենականապէս՝ 27. 52.
ըստ առաքելոյն, Քրիստոս յարուցեալ է ՚ի Հռոմ.
մեռելոց ․ այսու հետև ոչ մեռանի ։ 6.9.

Նմանապէս՝ պարտ է մեզ յառնել հոգևորապէս, որպէս Փիլիպ.
ըստ այնց եղանակաց յարիցուք յաւուրն դատաստանին 3.21.
մարմնաւորապէս ։ Իսկ յարութիւնն Քրիստոսի է՝
պատճառ և օրինակ՝ հոգևոր յարութեան մերոյ ․ արդ՝
առեալ պատճառ շարժողական, և այս երկակի ․ զի է
պատճառ շարժողական համեմատելով առ մեզ, քանզի
յորժամ ՚ի միտ ածեմք զփառս յարութեանն Քրիստոսի,
շարժիմք յառնել ՚ի նորոգութիւն կենաց ։ Դարձեալ՝
է՝ պատճառ շարժողական, քանզի յորժամ ՚ի միտ
ածեմք զառատաբաշխութիւն Աստուծոյ հօր, որ յարոյց և փառաւորեաց
զորդին իւր, յուսամք՝ թէ վասն սիրոյ
նորա, յարուսցէ և փառաւորեսցէ զեղբարս նորա ։
Զօրինակ՝ որպէս յորժամ թագաւորն առնէ զինուոր
զորդին իւր, վասն սիրոյ նորա առնէ նա և զայլս բազումս
զինուորս ընդ նմա ։ Նա և էր օրինակ յարութիւնն
Քրիստոսի, հոգևոր յարութեան մերոյ, զի որպէս Հռոմ.
Քրիստոս յարեաւ ՚ի նորոգութիւն կենաց, սոյնպէս և մեք 6.4.
՚ի նորոգութիւն կենաց գնասցուք ։ Դարձեալ՝ որպէս
որ ուրբաթու մահուանն Քրիստոսի, և որ շաբաթու հանգստեան
նորին, յառաջացաւ քան զօր յարութեան նորա,
սոյնպէս և մեռելութիւն մոլութեանց մերոց, և հանգիստ
յաւիտենականին խոկմանն պարտի յառաջանալ փառաւոր
յարութեան մերոյ ։ Եւ ծանիր՝ զի ով կրկին է
մահ,

մահ , այսինքն , հոգւոյն մեղօք , և մարմնոյն՝ անջատումն հոգւոյն 'ի նմանէ , այսպէս՝ և կրկին է յարութի , այսինքն , հոգւոյն շնորհօք . և մարմնոյն փառօք ։ Ծննդ. 3.19. Եւ ոպ՟ մահ հոգւոյն պատճառեաց զմահ մարմնոյն , որպէս յայտ է 'ի ծննդոցն , սոյնպէս և յարութի՟ հոգւոյն՝ պատճառեսցէ զփառաւորութի՟ մարմնոյն ։ 1.Թագ. 27.12. Դարձեալ գիտելի է՝ զի ոմանք յառնեն առաջօք , որպէս սամուէլ . որ թէպէտ երևեցաւ սաւուղայ , սակայն ոչ էր ճշմարտապէս յարուցեալ՝ որպէս ոմանք ասեն ։ յօհ. 11. 44. Ոմանք յառնեն անկատար , ոպ՟ ղազարոս՝ որ դարձեալ մեռանելոց էր ։ Եւ ոմանք կատարեալ , որպէս Քս՟ յարեաւ , մնալով միշտ կենդանի ։ ղուկ. 24.6. Արդ՝ առաջին յարութիւն՝ նշանակէ զդարձ և զապաշխարութի՟ կեղծաւորաց ։ Երկրորդն՝ զդարձ վերստին գլորելոցն ։ Երրորդն՝ զդարձ յարամնացելոցն ։

Յաղագս համբարձմանն Քի՟ ։ Գլ. ԻԴ.

Զանազանութիւն է՝ 'ի մէջ փոխման , թաքչման , և համբարձման . զի համբարձումն վերաբերի առ Քս՟ . և փոխումն , առ երանուհի կոյսն . իսկ թաքչումն՝ առ այլս սբս՟ ։ Որոյ պատճառ է , քանզի համբարձումն լինի յատուկ զօրութբ՟ համբարձելոյն . այլ փոխումն՝ զօրութբ՟ փոխողին , 'ի յորս որդին յատկապէս սպասաւորէ մօրն ։ յօհ.14.2 Իսկ թաքչումն՝ լինի սպասաւորութբ՟ հրեշտակաց ։ Դարձեալ՝ այլ զանազանութի՟ . զի տեղի թաքչելոցն՝ է որոշեալ դաս . այլ տեղի փոխման երանուհւոյ կուսին՝ է՝ գեր 'ի վերոյ քան զամ՟ դասս հրեշտակաց ։ Իսկ տեղի համբարձմանն Քի՟ , է անդր քան զտեղի տիրամօրն ։ Այլ վասն համբարձմանն Քի՟ , ութ իրս տեսանելի է , որք են պարագայք համբարձմանն ։ Առաջին է՝ զի տեսանելով աշակերտացն վերացաւ , Գոր. 1.9 այսինքն , զի յորդորեսցէ զցանկութի՟ գնալոյ առ նա ։ Երկրորդ՝ զի ամպն կալաւ զնա՝ յաչաց նոցա . հովանեաւ ամպոյն նշանակի՝ թէ 'ի մահկանացու մարմնս այս՝ ոչ կարեմք 'ի բարձունս տեսանել զՅս՟ ։ ղուկ. 24.50. Երրորդ՝ զի համբարձեալ ձեռօք վերանայր յերկինս ։ Արդ՝ ամբառնայր զձեռս՝ վասն երկուց

հուց պատճառաց : Նախ՝ զի զվէրսն ընծայեցոյց հօրն.
Երկրորդ՝ զի զթշնամիսն հարկանիցէ զօրացեալ բազկաւն :
Չորրորդ՝ օրհնեաց զնոսա առ 'ի զինել ընդդէմ
թշնամեացն , և աճեցուցանել երկնային բարեաւն :
Հինգերորդ՝ զի համբարձաւ զուարճութբ, սաղ. 46.
որ վերաբերի առ զուարճալի ձայնս փրկելոցն ընդ 6.
նմա , որք յառաջագոյն արտասուալի ձայնիւ աղաղակէին
'ի դժոխսն ասելով , եկիր՝ անձկալիդ , որում
սպասէաք 'ի խաւարի : Վեցերորդ՝ զի համբարձաւ սաղ.
ձայնիւ փողոյ . և այս վերաբերի առ քարոզութիւն 46.6.
առաքելոցն , որ յայնժամ յանձնեցաւ նոցա , ընդ մատ.
ասել Տն . երթայք յաշխարհ ամենայն քարոզեցէք , 28.19.
քանզի յայնմ հետէ՝ ել բարբառ նոցա ընդ ամենայն Ա
երկիր : Եօթներորդ՝ զի ելեալ 'ի բարձունս , գերեաց հռոմ.
զգերութիւն , այսինքն , զսուրբս , որք էին 'ի 10.18.
դժոխս , զորս ամենայաղթն եհան ընդ ինքեան : եփե. 4.9
Ութերորդ՝ զի ետ պարգևս մարդկան . զի ամենայն գոր. 1.9
պարգևք 'ի վերուստ են յոր համբարձաւ Քս , որոց ղուկ. 24
զառաջին երկուսն՝ ունիմք 'ի գործոց ա . զերրորդն 30.
և զչորրորդն 'ի վախճանի աւետարանին ղուկասու : սաղ.
Իսկ զմնացեալ չորսն՝ ունիմք 'ի սաղմոսէն : 46.6.
Արդ՝ համբարձաւ Քս 'ի յերկինս . որպէս բարի հնազանդ՝ փիլ. 2.8
կատարելով զհնազանդութիւն՝ որ քան առ 1. տիմ.
հայր . ոպ զբարի միջնորդ , արարեալ զխաղաղութիւն 2.5.
, որ քան առ մարդիկ . և ոպ զքաջամարտիկ
ընդդէմ թշնամւոյն : Դարձեալ՝ համբարձաւ Քս ,
վասն բազում պատճառի : Նախ՝ առ 'ի հանգչել 'ի
վաստակոցն , զորս աշխատեցաւ զամս լգ . առ 'ի սպասաւորութն
մեր : Երկրորդ՝ առ 'ի բարեխօսել վս
սիրելեաց , յաղագս որոց օգտակարաբար աշխատեցաւ
: Վասն որոյ ասէ բեռնարդոս՝ ո՛վ մարդ՝ ունիս
բարւոք մուտս առ ած , ուր և ունիս զորդին միջնորդ
, և զմայրն բարեխօս . որդին ցուցանէ հօրն
զկողն , և զխոցուածն . և մայրն ցուցանէ որդւոյն
զկուրծսն , և զստինս : Ո՛չ կարէ լինել անդ 'ի բաց
մերժումն ինչ , ուր հաւաքին այնքան նշանք սիրոյ :
Ապաուրեմն՝ Քս է ամենաբարի բարեխօս , զի այնքան
ունի զգեղեցկախօս լեզու , որ քան զխոցուածս
ընկալաւ վասն մեր . Երրորդ՝ առ 'ի յամբաստանել
զթշնամիսն , վասն որոց ընդունայն վաստակեցաւ .
ըստ եսայեայ որ ասէ՝ ընդունայն վաստակեցայ : եսայ.
Չորրորդ՝ զի պատրաստեսցէ մեզ զտեղիս , ըստ 49.4.

յոհան

յոհ. 14. յոհաննու՝ որ ասէ՝ երթամ և պատրաստեմ ձեզ տե-
3. ղի ։ Հինգերորդ՝ զի տացէ համարձակութիւն յու-
սալոյ 'ի նոյն , եւ զի մուծցէ զմեզ 'ի մտերմաւոր
ստացման յաւիտենականի ժառանգութե ։

Վեցերորդ՝ զի զոգին սբ առաքեսցէ մեզ՝ ըստ
յոհ. 16. յոհաննու որ ասէ , եթէ ես ոչ երթայցեմ, մխիթա-
7. րիչն՝ ոչ եկեսցէ ։ Եօթներորդ՝ զի զցանկութի մեր
երգ. 1. 3 քարշեսցէ զկնի իւր , ըստ այնմ որ ասէ յերգսն ,
ձգեա զիս զկնի քո ։ Ութերորդ՝ զի ցուցցէ մեզ
զճանապարհ երկնից · և վասն այսորիկ առ 'ի ցուցա-
ղուկ. 24. նել զայս՝ եհան զաշակերտսն՝ արտաքոյ քաղաքին 'ի
50. բեթանիա · զի արտաքս հանելով , այնու ցուցանէ՝
ոչ ունել զքաղաք, որ աստէն մնալոց իցէ ։

Եւ զի նախ 'ի բեթանիա եհան , որ թարգմանի տուն
հնազանդութե · որ նշանակի թէ գործով հնազան-
դութե , անցանելոց են ընդ յերկնայինսն ։

Եւ ապա եհան զնոսա 'ի լեառն ձիթենեաց , զի լե-
րամբն իմասցի վերացումն մտաց՝ 'ի խոկումն ածային ·
իսկ ձիթենեաւն , որ ունի զպարարտութի , բացա-
յայտի օծումն ջերմեռանդ և ողորմած սրտին , և յետ
այսորիկ՝ ոչ մնայ այլ ինչ , եթէ ոչ՝ վերացումն հոգւոյ
'ի յերկինս ։ Արդ՝ բարձրացաւ քս, երեքկին, այսինքն ,
'ի յերկրէ արդեամբք բարի վարուց · և 'ի վերայ յեր-
կրի , կախմամբ 'ի խաչէն · 'ի վերոյ երկնից՝ զուարճա-
լի համբարձմամբն ։ Համբարձումն քի եղև զար-
մանալի հրեշտակաց , ըստ եսայեայ , որ ասէ՝ իսկ սա
եսայ. ո՞վ է՝ որ դիմեալ գայ ։ Զարհուրելի դիւաց , որպէս
63. 1. օրինակեցաւ 'ի գիրս թագաւորութեց , ուր ասէին
1. թագ. այլազգիքն՝ յորժամ աղաղակեցին որդիքն իսրայէլի ,
4. 8. ընդ բերել տապանակին Տն 'ի սելովմայ 'ի բանակն , զի
նովաւ ունիցին զօգնութի ած 'ի պատերազմին · վա՜յ
մեզ , զի ածք եկին 'ի բանակս նոցա , ոչ եղև այնպի-
սի ուրախութի , որպէս երէկն և եռանդն ։

փրկական մարդկան , որք յայտ է 'ի վերոյ ասացեալ
բազմապատիկ պտղոց համբարձմանն քի ։

գոր. 1. 9 Դարձեալ՝ համբարձաւ քս բազում կերպիւ , այս-
սաղ. 46. 6 ինքն , յայտնապէս՝ զի մինչ դեռ հայէին նոքա՝ վերա-
ծննդ. ցաւ ։ Կարողաբար՝ զի համբարձեալ ձեռօք վերա-
32. 10. նայր ։ Խնդութե , զի զուարճապէս համբառնայր ։

Վայելչաբար՝ զի երկոքումբք բանակօք համբառնայր
անդրէն , այսինքն , հրեշտակօք , և մարդկամբք ։

Առ հրեշտակք՝ ոչ էին անդ յաղագս հարկաւոր

օժանդակութե՟, այլ 'ի պատուաւորութիւն մեծապատիւ արժանաւորութե՟ Տն՟ ։ Իսկ մարդիկքն՝ էին այնոքիկ, զորս ազատեաց 'ի դժոխոյն, և որք յետ յարութեան մինչև 'ի համբարձումն մնան 'ի թուոց ընտրելոցն, և ոչ կարօտանային մաքրութեան քաւարանին ։

Անոխակալութե՟, զի օրհնեաց զնոսա ։ Իսկ Քս՟ ոչ առժամայն յետ յարութե՟ համբարձաւ յերկինս, վասն երից պատճառաց ։ Նախ՝ զի յարութիւն քի հաստատեսցի բազմաւ կերպիւ, որպէս ասէ՝ 'ի գործս ․ 'ի բազում արուեստս ։ Երկրորդ՝ զի տացէ օրինակ համբերութե՟ մերոյ, որով հանդարտ միտք պարտիմք սպասել վարձուց ․ ոպ՟ մշակն՝ ոչ խնդրէ յետ սերմանելոյն հնձել, այլ համբերէ մինչև 'ի հասումն պտղոյն ։ Երրորդ՝ վասն մխիթարութե՟ աշակերտացն, քանզի մեկնիչն ('ի վերայ գործոց քանիցն՝ որ ասէ՝ զաւուրս քառասուն ․) ասէ՝ որպէս քառասուն ժամք էին մահուանն քի, նոյնպէս և խ՟ օր եկաց առ աշակերտսն յետ յարութեանն, առ 'ի ցուցանել թէ Ածային ուրախութիւնն գերազանցէ քան զմարդկային տրտմութիւն ։ Եւ գիտելի է, զի պատշաճի քի իջանելն յերկնից՝ միայն ըստ Ածայնոյ բնութե՟, զի Ած՟ անդ ասի գալ, ուր երևի յատուկ ներգործութիւն առնել ․ այլ համբառնալ, յատկապէս յարմարի նմա ըստ մարդկային բնութեան, զի ըստ այնմ միայն փոխէ զտեղին, և ոչ Ածային բնութե՟ն ։

ղուկ․ 24․50․

գոր․ 1․3

գոր․ 1․3

Բ

Յաղագս նստելոյն Քի՟ ընդ աջմէ հօր ։

ԳԼ․ ԻԵ․

Համբարձեալ Քս՟ յերկինս, նստի ընդ աջմէ հօր ամենակարողի ։ Արդ՝ երկու ինչ իմացեալ լինի աջմն ։ Առաջինն է՝ հաւասարութիւն մեծութե՟, առ որ նստի Քս՟ ըստ Ածութեանն ։ 'Ի յաջոյս յայսմանէ՝ յառաքելոյն ասի, այնպէս ունիմք քահանայապետ՝ որ նստաւ ընդ աջմէ մեծութե՟ աթոռոյն յերկինս ։ Երկրորդ՝ իմանի աջմն լաւագոյն բարի փառացն, 'ի յորս նստի Քս՟ ըստ մարդկութե՟ ․ զի պարգևեցաւ նմա յԱյ՟, որ ինչ կարէր նմա պարգևել ։ Եւ թէպէտ՝ 'ի սկիզբն յղութե՟ ընկալաւ քրիստոս 'ի հոգին իւր զբարիս շնորհաց, և

մարկ․ 16․19․

եբր․ 8․1․

փա

փառաց . սակայն նոյն բարիքն յայտնեցան 'ի համբարձմանն , պատշաճաւոր տեղեաւն և պատուով նստելոյն ընդ աջմէ հօր ։ 'Ի յաջմէս յայսմանէ , ասէ
կող. 3. 1. առաքեալն , զվերինն խնդրեցէք , ուր նստի Քս՟ ընդ աջմէ այ՟ , ուր ասէ մեկնիչն , թէ վերինն ուր Քս՟ նստի , են լաւագոյն բարիք շնորհաց , և փառաց ։
Ապա ուրեմն ասեմք , թէ համբարձումն Քի՟ եղև ըստ տեղւոյն , և ըստ պատուոյն ։ Ըստ տեղւոյն՝ ել 'ի վեր քան զամ՟ երկինս , այսինքն , 'ի պատուականն տեղւոջ հրեղէն երկնից . և կամ 'ի յամենևին բարձրագոյն մասն նորին . վասն զի ամենապատուական մարմնոյն Քի՟ պատշաճի ամենապատուական տեղի իմն ։
Այլ սակայն՝ ոչ է ասելի թէ մարմինն Քի կալեալ լիցի յայնմ տեղւոջ . այլ զի տեղին այն՝ է տուեալ նմա ըստ պատշաճին ։ Իսկ ըստ այնմ , որ համբարձումն Քի՟ եղև առ պատիւ , ըստ այսմ նստի ընդ աջմէ հօր , սակայն ոչ ըստ տեղւոյն , զի ոչ յարմարի հօր՝ այլ ըստ կրկին գերազանցութե , որպէս ասացեալ է . զի աջովն իմացեալ լինի՝ կամ հաւասարութի մեծութե , որ պատկանի Քի ըստ ած՟ութեն , և կամ կատարելութի վարձուն , որ յարմարի նմա ըստ մարդկութե՟ ։
Նա և ոչ է զանցանելի , զի հաւատամք զՔս՟ նստեալ
Ա ընդ աջմէ հօր . իսկ ստեփաննոս ետես զնա կանգնեալ . զորմէ ասելի է , թէ յորժամ ասի Քս՟ ել 'ի յերկինս , և նստաւ ընդ յաջմէ այ՟ , ասելովն՝ նստաւ , նշանակի թէ Քս՟ յետ աշխատանաց աստի կենացս , թագաւորէ , և հանգչի ։ Ասելովն՝ ընդ յաջմէ՝ նշանակէ թէ Քս՟ որ քան էր 'ի կեանս յայս , էր 'ի ձախ-
սաղ. մէ անազօրութե , ըստ սաղմոսին , որ ասէ՝ չարչա-
37. 7. րեցայ , և խոնարհ եղէ յոյժ . և դարձեալ՝ վաստա-
սաղ. 87. կաւոր եմ ես 'ի մանկութենէ իմմէ ։ Ասելովն՝ այ՟ ,
16. նշանակէ թէ յետ արհամարհանացն , իրաւի պարտի
ղուկ. հետևիլ փառքն . ըստ այնմ որ ասէ . որ խոնարհե-
14. 11. ցուցանէ զանձն , բարձրասցի ։ Իսկ ստեփաննոս՝
գործ. 7 կալով 'ի մէջ նեղութեց , ունէր զՏրն պատերազմա-
55. կից , և ընդունող ինքեան, նմին իրի՝ ետես զնա կանգնեալ , իբրև զօգնական 'ի նեղութե ,

Կատարեցաւ գիրք չորրորդ . որ յաղագս
մարդեղութե Քի ։

Ցանկ գլխոց հինգերորդի գրքոյն, որ յաղագս սրբարարութեն շնորհաց:

ա. Նախ՝ յաղագս թէ զի արդ՝ հոգին բանական, լիցի արժանի յաւիտենականի երանութե :
բ. Յաղագս սկզբան շնորհաց, և առաքինութեց:
գ. Յաղագս զանազանութե շնորհաց:
դ. Յաղագս ներգործութե շնորհաց:
ե. Յաղագս թէ զինչ է առաքինութի:
զ. Յաղագս կատարելուն առաքինութե:
է. Յաղագս հաւասարութե առաքինութե:
ը. Յաղագս կապակցութե առաքինութեանց.
թ. Յաղագս գոյութեան առաքինութեանց:
ժ. Յաղագս ներգործութե առաքինութեց:
ժա. Յաղագս արդեանց առաքինութեանց:
ժբ. Յաղագս նախապատրաստութեան առ շնորհն:
ժգ. Յաղագս թէ յորոց պատճառի արդիւնքն:
ժդ. Յաղագս վախճանի գործոցն:
ժե. Յաղագս թէ զինչ իցէ վարձ արդիւնաւոր գործոցն:
ժզ. Յաղագս բաժանման առաքինութեանց:
ժէ. Յաղագս զանազանութեան մտային առաքինութեանց, և կարդինալականաց:
ժը. Յաղագս մտային առաքինութեանց առհասարակ:
ժթ. Յաղագս հաւատոյ:
ի. Յաղագս ներգործութեան հաւատոյն:
իա. Յաղագս աստիճանաց հաւատոյն:
իբ. Յաղագս յուսոյ:
իգ. Յաղագս սիրոյ:
իդ. Յաղագս զանազանութեց սիրոյն:
իե. Յաղագս ներգործութեց սիրոյն:
իզ. Յաղագս թէ որոց իրաց համեմատի սէրն:
իէ. Յաղագս գերազանցութեան սիրոյն:
իը. Յաղագս նշանաց սիրոյն:
իթ. Յաղագս աստիճանաց սիրոյն.
լ. Յաղագս կարգի սիրոյն.
լա. Յաղագս սիրոյ ընկերին:
լբ. Յաղագս սիրոյ թշնամեացն:
լգ. Յաղագս կարդինալական առաքինութեց առհասարակ:
լդ. Յաղագս խոհեմութե:
լե. Յաղագս ողջախոհութեան:

Լզ. Յաղագս արիութէ :
Լէ. Յաղագս արդարութէ :
Լը. Յաղագս եօթն պարգեւաց ոգւոյն սրբոյ :
Լթ. Յաղագս պարգեւի երկիւղին առ հասարակ :
Խ. Յաղագս պարգեւի ծառայական երկիւղին :
Խա. Յաղագս սկզբնական երկիւղին :
Խբ. Յաղագս որդիական երկիւղին :
Խգ. Յաղագս պարգեւի գթութեան :
Խդ. Յաղագս պարգեւի գիտութեան :
Խե. Յաղագս պարգեւի խորհրդոյն :
Խզ. Յաղագս պարգեւի իմաստութեան, և հանճարոյ :
Խէ. Յաղագս երանութեանց առ հասարակ :
Խը. Յաղագս առաջնոյ երանութեան :
Խթ. Յաղագս երկրորդի երանութեան :
Ծ. Յաղագս երրորդի երանութեան :
Ծա. Յաղագս չորրորդի երանութեան :
Ծբ. Յաղագս հինգերորդի երանութեան :
Ծգ. Յաղագս վեցերորդի երանութեան :
Ծդ. Յաղագս եօթներորդի երանութէ :
Ծե. Յաղագս ութերորդի երանութէ :
Ծզ. Յաղագս հոգևոր զգայութեց :
Ծէ. Յաղագս պտղոց հոգւոյն :
Ծը. Յաղագս պաշտաման, և պատւոյ :
Ծթ. Յաղագս պատւիրանաց հասարակաբար :
Կ. Յաղագս առաջնոյ հրամանին :
Կա. Յաղագս երկրորդի հրամանին :
Կբ. Յաղագս երրորդի հրամանին :
Կգ. Յաղագս չորրորդի հրամանին :
Կդ. Յաղագս հինգերորդի հրամանին :
Կե. Յաղագս վեցերորդի հրամանին :
Կզ. Յաղագս եօթներորդի հրամանին :
Կէ. Յաղագս ութերորդի հրամանին :
Կը. Յաղագս իններորդի, և տասներորդի հրամանին :
Կթ. Յաղագս խրատուց հասարակաբար :
Հ. Յաղագս աւետարանական խրատուցն յատկապէս :

ՏԱՒՌՔՈՒՄՆ

Ածաբանականի Ճշմարտութեն :

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ:

Յաղագս սրբարարութեն շնորհաց :

Յաղագս թէ զիարդ հոգին բանական՝ լիցի արժանի յաւիտենականի երանութեն :
Գլուխ Առաջին :

Որ օրինակ, ած ոչ իջանէ յերկնից ըստ էութեան իւրոյ որ է անփոփոխելի, այլ ազդմամբն հեղեալ 'ի նմանէ. այսպէս և ոչ բանական հոգին բարձրանայ 'ի վերայ ինքեան տեղական կալուածով, այլ ածակերպ ունակութեբ :

Ուստի հարկ է բանական հոգւոյն՝ եթէ պարտի լինել արժանի յաւիտենականի երանութեն, զի լինիցի մասնակից և հոգևոր ազդման ածայնոյ բարութեան, այսինքն, շնորհաց՝ և առաքինութեանց, զորոց հանդերձեալ եմք ճառել այժմիկ :

Յաղագս սկզբան առաքինութեան , և շնորհաց ։

ԳԼ· Բ·

Առ բարին շնորհաց՝ ո՛չ ոք կարէ գալ ինքեամբ . զի այս ո՛չ է լոկ ընթացից բնութե՟ն , այլ լոկ ներազդման առատաբաշխութե՟ն ա՟ծայնոյ ։ Քանզի որպէս ստեղծուածս վասն իւրոյ պակասութե՟ն կարօտանայ սկզբանն իւրոյ՝ զի մնասցէ յոհ. 15. 4 'ի գոլն բնութե՟ն իւրոյ , այսպէս նոյն սկիզբն վասն իւրոյ բարութեան ,ո՛չ դադարի հեղուլ 'ի բանական ստեղծուածս զկեանս հոգևորս , զի բարեպէս մնասցէ 'ի գոլն շնորհաց . զոր ո՛չ կարէ ունել առանց առատաբաշխի պարգևողին ա՟յ ։ Սակայն ո՛չ անմեղադրելի է մարդն եթէ ոչ ընդունիցի զհաճոյարար շնորհն ա՟յ , զի ձրի տուեալ շնորհն՝ միշտ պատրաստ է առ 'ի զարթուցանել և 'ի շարժել զանձնիշխան կամքն՝ որոյ է հաւանիլն այնպիսի զարթուցման, Ա և խրատու . և այս է առնել մարդոյն որ ինչ է յիւրն կողմանէ . յետ որոյ կարիցէ ունել զհաճոյարար շնորհն ։ Վ՟ զի այս է պատրաստել զինքն առ շնորհն. քանզի թէպէտ շնորհն լինի ընկալեալ ներգործական պարգևօքն ա՟յ . սակայն ո՛չ առանց հաւանութե՟ն անձնիշխան կամաց մարդոյն . զի որպէս ասէ օգոստինոս, որ ստեղծ զքեզ՝ առանց քեզ , ո՛չ արդարացուցանէ զքեզ՝ առանց քեզ ։ Արդ՝ հաճոյարար շնորհն՝ է յերից, սակայն այլ և այլ կերպիւ ։ Քանզի , է 'յա՟յ , իբր 'ի ներգործողէ . 'ի ձրիական շնորհէն՝ իբր 'ի յորդորողէ , և 'ի խրատողէ զանձնիշխանականն . իսկ յանձնիշխանականէն՝ իբր 'ի հաւանողէ ։

Քանզի թէպէտ անձնիշխանութիւն ո՛չ կարէ ներգործել 'ի մարդն զշնորհ , սակայն առայն կարէ նախապատրաստել զինքն , և [illegible] . զորօրինակ , ո՛չ ոք կարէ լուսաւորել զտունն , սակայն կարէ բանալ զպատուհանն՝ յետ որոյ մտանէ արեգակն , և լուսաւորէ ։ Իսկ զոր ինչ ասեմ զանձնիշխանականէ հաւանողէ , իմացեալ լինի 'ի չափհասեալսն . զի 'ի տհասսն՝ բաւական է միայն հաւատ ծնողաց , և խորհուրդ եկեղեցւոյ . և արդիւնքն Ք՟ի , և առնէ զնոսա անմեղադրելի անկարութե՟ն իւրեանց ։ Դարձեալ՝ գիտելի է,

զի նախապատրաստութի, կամ ձեռնհասութիւն առ
շնորհն երեքկին է, այսինքն, ներգործական. ունական.
և նիւթական ։ Որոց առաջինն է ՚յԱյ. երկրորդն՝
՚ի ձրի տուեալ շնորհէն. և երրորդն՝ ՚ի
մէնջ ։ Քանզի հոգին ունի ըստ բնութեանն զկարողութի, Բ
և զներգործութիւն ձեռնարկելոյ, և սիրելոյ զԱծ.
այլ ոչ ունի զձեռնարկութիւն ճշմարտութե, և զկարգ սիրոյն, 2. կոր.
եթէ ոչ ՚ի շնորհաց ։ Այլ արդ՝ երեք են որք 5.18.
յորդորեն զմեզ ՚ի գործս բարիս, այսինքն, օրէն տոբ. 4.
բնութե, որ գրեալ է ՚ի սիրտս մարդոյն, ասելովն, 16.
թէ զոր ինչ կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ՝ արարէք մատ. 7.
և դուք ։ Օրէնն՝ որ ասէ զայնս գոլ հեշտալիք՝ 12.
օգտակարք և հաճոյք ։ Շնորհն, որ ասէ՝ թէ յոհ. 1. 13
պարտ է ծառայել Այ, վասն զի է գերագոյն բարի. և ծննդ.
օժանդակել ընկերին, զի է որդի Այ և պատկեր Այ, 1. 26.
և ընկերակից երանութե ։ Այլ շնորհն ոչ լինի տուեալ մատ.
այնոցիկ, որք զինքեանս ոչ պատրաստեն առ 22. 32.
շնորհն. և այս յայտ է բազում օրինակօք. քանզի թէ
որ ոչ տարածէ զձեռն իւր առ բաշխողն՝ ոչ առնու.
այսպէս Ած ՚ի կոչմանէ իւր տայ ամենեցուն առատապէս. յակ. 1. 5
այլ որ ոչ պատրաստէ զինքն, ոչ տարածէ
զձեռն նախ իւր և ոչ առնու ։ Նմանապէս՝ որ փակէ
զաչս ընդդէմ լուսոյն. թէպէտ Ած զարեգակն իւր մատ. 5.
ծագէ ՚ի վերայ չարաց և բարեաց, և այլն ։ 45.
Նա և գտեալ ոք զաղբիւր՝ թէ զներքին կողմն ամանոյն
դնէ ընդդէմ ջրոյն՝ զոչ ինչ ընդունի. զի ասէ
Օգոստինոս՝ թէ Ած մեծամեծ առատութբ լնու զամ երեմ.
ստեղծուածս՝ ըստ չափու ընդունականութե նոցին ։ 23. 24.
Դարձեալ՝ որ զդուռն իւր պատէ փակել, զի մի մտցէ յայտ. 3.
՚ի ներքս սիրելին. Իսկ Ած մշտ կայ ՚ի դուռն և 20.
բաղխէ ։ Դարձեալ՝ որ յագարակին իւրում ոչ խլէ ՚ի
բաց զորոմն, պտուղն ոչ առնի ։ Դարձեալ՝ որ զփայտն մատ.
հանէ ՚ի հրոյն, շիջանի հուրն ։ Դարձեալ, որ հեղգանայ 13. 25.
բանալ զբերան իւր ընդդէմ կերակրոյն՝
իրաւի ՚ի սովու մեռանի ։ Դարձեալ՝ որ ՚ի ժամանակի
պատերազմի ՚ի բաց դնէ զզէնն՝ իրաւի ընկենի,
և վիրաւորի ։ Դարձեալ՝ որ ՚ի ժամանակս այլեկոծութե,
ոչ շարժէ զթեւս նաւին՝ իրաւի ընկղմի ։
Դարձեալ խօթացեալն, ՚ի ժամանակս հիւանդութե,
որ կայ ընդդէմ խրատու բժշկին, ոչ հանդիպի
առողջութե ։ Դարձեալ՝ շնորհն բղխի առ մեզ յԱյ,
որպէս շառաւիղն յարեգակնէ. որպէս բոյսն յար-

մատոյն . որպէս մեղրն՝ 'ի ծաղկէն . որպէս առուն , յաղբերէն . որպէս պտուղերն՝ յարմատատուորէն , ըստ նախագաղափարին որ 'ի նմեքս , և ըստ շնորհածոյն արարքոյ :

Յաղագս զանազանութեան շնորհաց : ԳԼ: Գ.

Շնորհն ասի երեքին . նախ՝ ստեղծականաբար . և ըստ այսմ՝ շնորհն է ա՟ծային օգնականութիւն ձրի տուեալ ստեղծմանց , և անտարբերաբար առ իւրաքանչիւր գործ . առանց որոյ զոչինչ կարեմք սաղ. 41.6. առնել , նա և ոչ մնալ իսկ 'ի գոյն : Երկրորդ՝ տեսականաբար . և այսպիսի եբր. 1.3 շնորհս՝ ասի ձրի տուեալ , այսինքն , պարգևն՝ որով նախապատրաստէ զինքն մարդն՝ առ 'ի ընդունել զպարգևս ոգւոյն սրբոյ : Քանզի այսմ շնորհի է դարձուցանել զանձնիշխանութիւն 'ի չարէն , և յորդորել 'ի բարին . առանց որոյ՝ ոչ ոք կարէ բաւականաբար առնել՝ որ ինչ 'ի յիւր կողմանէ առ 'ի պատրաստել զինքն 'ի փրկութի : Երրորդ՝ յատկապէս , այսինքն , տուեալ պարգևք յաստուածուստ առ 'ի յարդիւնաւորել . և շնորհս այս՝ կոչի հաճոյարար , առանց յոհ 15.5 որոյ ոչ ոք կարէ արդիւնաւորել . և ոչ զարգանալ 1. կոր. 15.10. 'ի բարին . և ոչ ժամանել 'ի փառս : Այս երեքին շնորհս՝ ցուցանի 'ի բանս առաքելոյն որ ասէ՝ շնորհօքն ա՟յ եմ , զինչ և իցեմ . ահա առաջինն : Եւ շնորհն նորա որ 'ի յիս՝ ընդունայն ինչ ոչ եղէն . ահա երկրորդն : Եւ շնորհ նորա միշտ մնայ 'ի յիս . ահա երրորդն : Բաց 'ի նախասացելոյն ասի շնորհ , տուօղն Ա շնորհաց , այսինքն , ա՟ծ : Դարձեալ՝ շնորհ , որ է նշան շնորհաց , որպէս մարգարէութի , և կարողութիւն սքանչելագործութե : Իսկ հաճոյարար շնորհն բաժանի 'ի ներգործօղն , և 'ի գործակիցն :

սաղ. 58. 11. Արդ՝ ներգործօղ շնորհն ասի նախաժամանօղ , և ազատօղ . զի 'ի բաց մերժէ զմեղս : Այլ գործակից շնորհն ասի հետևօղ . կատարօղ . և օգնական . զի օգնէ անձնիշխանութե , և լինի գործակից 'ի յարդիւնաւորելն : Իսկ բարին զանազանի բազմապատկաբար : Քանզի է բարի ըստ էութե . և այս է ա՟ծ . մատ. 10.18. ըստ այնմ , չիք ոք բարի , բայց միայն ա՟ծ :

Է բարի, և ըստ հաղորդակցութեան ․ և այն բաժանի
՚ի բարին շնորհաց, և ՚ի բարին բնութեան ։
Ուստի ասէ Օգոստինոս՝ ամենայն ինչ որ է, ըստ այնմ որ
է՝ բարի է ․ որպէս ասի ՚ի ծննդոց, ետես Աստուած զամենայն,
և ահա բարի են յոյժ ։ Դարձեալ՝ է բարի ըստ սե- ծննդ․
ռին՝ որ է բարի ըստ յառաջեդելոյն, ո՛չ է ողորմու- 1․31․
թիւն ։ Քանզի է անդ գործն ՚ի պատշաճաւոր նիւթն,
թէ և պակասիցի անդ տեսակ գոյացութեց ։
Դարձեալ՝ է բարի ըստ պարագային ․ և այս է՝ յոր-
ժամ բարին ըստ սեռին՝ զգեստաւորի պատկանաւոր
պարագայիւք, ո՛չ է տալ ողորմութիւն կարօտելոյն ՚ի
դէպ ժամանակի, և վասն ցաւակցելոյն, և այլոց
այսպիսեաց ։ Դարձեալ՝ է բարի ըստ առաքինութեան,
և այս է՝ յորժամ առադրի կատարելութիւն գործոյ ՚ի
կողմանէ գործողին, որ է ՚ի ձեռն ունակութեան
մտաց՝ բարւոք կարգաւորեցելոյ ։ Դարձեալ՝ է բա-
րի վարձատրելի որպէս, յորժամ առադրի գործոյն
պատկանաւոր փոխան ․ այս է, բարի դիտաւորու-
թիւն, ՚ի վերայ բնական շարժման ։ Դարձեալ՝ է բա-
րի շնորհաց, որ է նա ինքն ունակութիւն, որ առնէ
հաճոյ Աստուծոյ ։ Դարձեալ՝ է բարի փառաց՝ որ է բարին
յաւիտենականի հատուցման ։

Յաղագս ներգործութեան շնորհաց ․ Գլ․ Դ․

Ներգործութիւն շնորհացն է՝ զարթուցա-
նել զանձնիշխանականն առ բարին, և
բժշկել զնա՝ փոխելով զախորժականն,
և զօրացուցանել զնա ածելով ՚ի գործ ։
Դարձեալ՝ շնորհն հաշտեցուցանէ զԱստուած ղուկ․
ընդ մարդոյն ․ ազատէ ՚ի մեղաց ․ և 15․20․
զյաւիտենական տանջանս փոխէ ՚ի ժա-
մանակաւորն ։ Դարձեալ՝ շնորհն զգործս մեր առնէ Ա
վարձատրելիս ․ և զկորուսեալ բարիսն մեղօք՝ անդ-
րէն դարձուցանէ, և զգոմս անասնոց՝ փոխէ ՚ի ղուկ․
պալատս արքունիս ։ Դարձեալ՝ հոգին՝ շնորհօք լինի 10․34․
հարսն Քրիստոսի ․ դուստր յաւիտենականի արքային, և
տաճար ոգւոյն սրբոյ ։ Դարձեալ՝ շնորհն՝ մաքրէ 1․կոր․
զհոգին, լուսաւորէ, և կատարէ ։ Դարձեալ՝ շնորհն 6․19
բարձրացուցանէ զմիտս, և նմանեցուցանէ Աստուծոյ, և
հոգևոր մխիթարութեամբ կերակրէ ։ Եւ գիտելի է՝

զի թէպէտ հաճոյական առաքինութիւն է համանգամայն ՚ի հոգին հանդերձ շնորհօք, սակայն՝ ոչ ունի այնպէս փաղփաղուկ զներգործութիւն իւր, ոպ՟ շնորհքն: Քանզի ներգործութիւն շնորհին է՝ առնել հաճոյ այ՟, և արժանաւոր յաւիտենական կենաց. և ներգործութիւն այս առժամայն է ՚ի տղայսն՝ յետ մկրտութե՟: Այլ ներգործութիւն առաքինութե՟ է՝ արտաբերել ՚ի զօրութե՟ զգործս վարձաւորելիս. և ներգործութիւն այս՝ ոչ իսկոյն է ՚ի մանկունս յետ մկրտութեան. իսկ այս ոչ է վասն պակասութեան առաքինութեան, այլ վասն անկարութեան բնութեան գործոյն. քանզի մանուկն ոչ է յարմար առ կամաւոր գործս:

Ուստի գիտելի է՝ զի երեքկին է կատարումն:

Առաջինն է շնորհաց, և պատճառէ զհաճոյականն: Երկրորդն է՝ առաքինութեան, և պատճառէ զգործս բարիս: Երրորդն է՝ գործոյ առաքինութեան, և պատճառէ զվարձս: Առաջին կատարումն՝ կատարէ զհոգին: Երկրորդն զզօրութիւնս հոգւոյն: Երրորդն զգործս նոցին:

Յաղագս թէ զինչ իցէ առաքինութիւն:

Գլ. Ե.

Այժմ ճառելի է զառաքինութեանց. և նախ՝ թէ զինչ իցէ առաքինութիւն: Արդ՝ առաքինութիւնն ոպ՟ ասէ օգոստինոս, է բարի որակութիւն մտաց, որով բարւոք կեցեալ լինի. զոր ոչոք չարաչար առնու ՚ի կիր, զոր միայն այ՟ ներգործէ ՚ի մարդն. և սահմանս այս առեալ լինի նկատմամբ առ ներգործօղն, և մեկնի այսպէս. որակութիւն դնի անդ՝ ՚ի տեղի սեռի. և բարի ասի, առ ՚ի զանազանութիւն չար որակութեց հոգւոյն: Նաև ասի բարի՝ զի առեալ լինի յայ՟ (որ բուն ինքեան է բարի). զի բնակի ՚ի բարիս, և առնէ բարիս զունօղս իւր, և ածէ ՚ի բարի վախճան:

Իսկ մտաց՝ ասի, առ ՚ի զանազանութիւն որակութեանց մարմնոյ: Որով բարւոք կեցեալ լինի՝ ասի առ ՚ի տարբերութիւն որակութեանց, որովք ուղղապէս իմացեալ լինի, ոպ՟ գիտութիւնն. իմաստութիւնն. և հանճարն: Զոր ոչոք չարաչար կարէ առնուլ ՚ի կիր՝

դնի , առ 'ի զանազանութեան որակութեանց , զորս չափաւոր, և բարեպէս կարեմք առնուլ 'ի կիր ։

Զոր միայն Աստուած ներգործէ 'ի մարդն դնի , առ 'ի զանազանութեան կարտինալական առաքինութեանց , որ ստանալով լինի կալեալ ։ Դարձեալ՝ ըստ օգոստինոսի , առաքինութիւն է ունակութիւն մտաց , բարւոք կարգաւորեալ . սահմանս այս տուեալ լինի , նկատմամբ առ ենթակայն՝ յորում է . և իմացեալ լինի ունակութեան մտաց բարւոք կարգաւորեալ , առ 'ի նմանութեան թագաւորութեան . որ յայնժամ բարւոք կարգաւորի, ղուկ. 11. 17. յորժամ ուղղապէս խորհեցեալ լինի , բարեպէս հրամայի , և արդարապէս հնազանդին ։ Արդ՝ նմանապէս բարւոք կարգաւորի միտքն , եթէ բանականն ուղղապէս խրատէ . եթէ կամքն՝ ուղղապէս հրամայէ . և եթէ զգայութիւնն՝ պատշաճաւոր կերպիւ հնազանդի ։ Դարձեալ՝ փիլիսոփայն ասէ՝ առաքինութիւն է կամաւոր ունակութիւն , կայացեալ 'ի մէջն 'ի մերս կողմանէ , սահմանեալ բանականաւն ըստ այնմ զոր իմաստունն սահմանեսցէ . իսկ սահմանս այս տուեալ լինի նկատմամբ առ գործն , շուրջ զորովէ .

Դարձեալ՝ թուլլիոս ասէ՝ առաքինութիւն է կարգաւորութիւն կատարեալ իւրն առ ևս բարեգոյնն ։ Եւ սահմանս այս տուեալ լինի նկատմամբ առ վախճանն ։ Դարձեալ՝ իզիդորոս ասէ՝ առաքինութիւն է ունակութիւն հոգւոյ , վայելչութիւն բնութեան . բան կենաց . մաքրութիւն վարուց . պաշտօն աստուածութեան . պատիւ մարդոյ . արժանաւորութիւն յաւիտենականի երանութեան ։ Սահմանս այս տուեալ լինի նկատմամբ առ ներգործութիւն ։ Իսկ ըստ աստուածաբանութեան 'ի լաթինս . առաքինութիւնն ասի վիրդուս . իբր թէ ուժ՝ 'ի ներքուստ . և ուժս այս՝ կայանայ 'ի ձեռնարկելն առ դժուարինս . և 'ի տանիլն՝ անյաջողութեանց . և 'ի պարկեշտանալն 'ի հաճելեաց ։ Դարձեալ ասի վիրդուսն իբր գալարացեալ զօրութիւն ։ Դարձեալ ասի վիրդուսն՝ իբր թէ որպիսութիւն պատուոյ մարդոյն ։

Յաղագս կատարելութեն առաքինութե՛։ Գլ. Ձ.

Եւ զի առաքինութիւնն կայանայ 'ի մէջն, տեսանելի է թէ յորպիսի միջում կայանայ։ Ասելի է, թէ ըստ փիլիսոփային կայանայ 'ի յերիս, այսինքն, 'ի յառնելեան, 'ի յունելեան, և 'ի տանելեան։

'Ի յառնելիս՝ իմացեալ լինի մէջն, 'ի մէջ այնց, որք 'ի վեր, կամ 'ի վայր քան զեղանակին՝ ըստ առաքելոյն որ ասէ, բանաւոր լիցի պաշտօն ձեր։ հռոմ. 12.1. 'Ի յունելեան՝ իմացեալ լինի մէջն անելորդութեան և չքաւորութեան. ըստ այնմ որ ասէ յառակացն՝ զմեծութի, և զաղքատութի մի տար ինձ։ առակ. 30.8. Իսկ 'ի տանելեան՝ իմացեալ լինի մէջն բարձրամտելոյն 'ի յաջողմունս. և սրտակոտոր լինելոյն 'ի յանաջողութիս. ըստ այնմ որ ասէ, մի խոտորեսցիս յաջ, կամ յահեակ։ օրին. 5. 32. Այլ արդ՝ բազմապատիկ է կատարելութին, այսինքն, բաւականութեան. և զայս ունին ամենեքեանք որք կան 'ի սէրն։ 1. կոր. 13.4. Կարգի, և սմա յատուկ է պահել զողջախոհութի։ Կրօնաւորութեան, և սորա յատուկ է հրաժարել յամենից։ ղուկ. 14.33. Վերակացութե՛, և առ սա վերաբերի դնել զանձն 'ի վերայ ոչխարաց իւրոց։ յոհ. 10. 11. Աներկեւանութե՛, և սմա յատուկ է՝ ունել զմահ 'ի յըղձի, և զկեան 'ի համբերութեան։ 2. կոր. 5. 8,

Ա Առաջին կատարելութեանն՝ պարտական է իւրաքանչիւրոք. իսկ վերջնոյն՝ ոչ ոք. այլ երից միջակացն, պարտականք են ոմանք՝ պատճառաւ ինչ, այսինքն, 'ի յուխտէ, և 'ի պաշտօնէ, և այլն։ Առաքինութին՝ համեմատի բազմաց իրաց, այսինքն, ոսկւոյ՝ ըստ այնմ որ ասէ սիրաք, ոսկի փորձի 'ի բովս։ եկլե. 2. 5 Գանձի՝ ըստ մատթէոսի, նման է արքայութի երկնից գանձի ծածկեցելոյ։ մատ. 13. 44. Ականց՝ ըստ այնմ որ ասէ սիրաք, որպէս անօթ ոսկւոյ զարդարեալ ամ ականք պատուականօք։ եկլես. 50. 10. Զինուց՝ ըստ այնմ որ ասէ թագաւորաց. որպէս անկան զինուորք 'ի պատերազմի, և կորեան զէնք պատերազմականք։ 2. թագ. 1 27. Ծառոց՝ ըստ այնմ մատթէոսի, ամ ծառ բարի, պտուղ բարի առնէ։ մատ. 7. 17. Զայնմանէ ասէ օգոստինոս՝ ծառ իմաստութեան, տնկի երկիւղին. ոռոգանի շնորհօք. արմատանայ հաւատով. բուսանի ջերմեռանդ սիրով. աճի բաղձանօք. զօրանայ

սիրով . կանանչանայ յուսով . ոստս արձակէ շրջահայե-
ցութե͞ . ծաղկի խրատով . պտղաբերէ վարդապե-
տութե͞ առաքինութեց . հասանի համբերութե͞ . ժո-
ղովի մահուամբ ։ Դարձեալ՝ նմանի ծաղկոյ , ըստ երգ. 2. 5
այնմ որ ասի ՚յերգսն , հաստատեցէք զիս ծաղկօք ։
Աղբերց՝ ըստ այնմ , աղբիւր պարտիզաց , և ջրհոր երգ. 4.
ջրոյ կենդանւոյ ։ Շաւղաց՝ ըստ առակաց որ ասէ , 15.
Ճանապարհ նորա՝ ճանապարհ գեղեցիկ ։ յառակ.
Հանդերձի՝ ըստ սաղմոսին որ ասէ , ՚ի հանդերձս 3. 17.
ոսկեհուռս ։ Աստեղաց՝ ըստ այնմ որ ասէ բարուք , սաղ.
աստեղք ետուն զլոյս ։ Խնկոց՝ ըստ երգոյն որ ասէ՝ 44. 10.
ո՞վ է սա որ ելանէ իբրև սաեղն խնկոյ ծխոց ։ բար. 3.
Կերակրոյ՝ ըստ յոհաննու որ ասէ , իմ կերակուր՝ այն 34.
է զի արարից զկամս այնմ որ առաքեաց զիս ։ երգ. 3. 6
Թևոց՝ ըստ սաղմոսին որ ասէ , ո՞ տայր ինձ զթևս յոհ. 4. 34
ո͞պ աղաւնոյ ։ Երեք են բարի յատկութիւնք առաքի- սաղ. 54.
նութեան , այսինքն , բազմերժուն փորձութեց , 7.
բազմութիւն գործոյն . և հեշտութի͞ ՚ի բարին ։
Առաջինն՝ հաստատէ զառաքինութիւնն ՚ի յարմանն ։
Երկրորդն՝ զարդարէ իբր ծաղկօք ։ Երրորդն հե-
տացուցանէ իբր համով պտղոյն ։ Նմանապէս ասելի
է՝ թէ ՚ի կատարումն առաքինութեց համահաւաքին
չորեքեանս այսոքիկ , այսինքն , տրամադրութի͞ նա-
խապատրաստող . ունակութի͞ կերպարանող . ներ-
գործութի͞ փորձող և կրթող . և վարձ պսակող ։

։ Յաղագս հաւասարութե͞ն առաքինութեց ։

Գլ. Ե.

ԱՄենայն առաքինութիւնք ՚ի նոյնում մարդոջ համահաւասարք են . թէպէտ ՚ի միմեանց զանազանք են ՚ի ձեռն յատկաց գերազանցութեց . իսկ հաւասարութիւս այս՝ կայանայ ՚ի բաղում իրս ։

Քանզի են առաքինութիւնք հաւասարք ։ Նախ՝ ըստ էութեան , զի ա͞մ առաքինութին է պարզ ։ Երկրորդ՝ ըստ հաւասար արմատանալոյն ՚ի հոգին ՚ի կողմանէ ինքեանց ։

Երրորդ՝ ըստ վերածելոյն առ նոյն վախճան , ՚զի͞ ամենեքեանք վասն ա͞յ գործեն ։ Չորրորդ՝ ըստ հաւասար ներգործութեան , զի հաւասարապէս առնեն արժանի յաւիտենական կենաց ։ Հինգերորդ՝ ըստ հաւասար դիւրութեան առ գործս իւրս, որ քան է 'ի նոսին, եթէ ոչ ունիցին զարգելուած ինչ ։

Արդ՝ որպէս առաքինութիւնք են հաւասարք ըստ մերոյ ասացեալ եղանակիդ. այսպէս են անհաւասարք, ըստ այլոց եղանակաց ։ Նախ՝ ըստ կիրառնըլոյն, զի առաքինութիւնքն են որպէս զէնք. այլ ոմ̃ զինուորին ոչ գիտէ հաւասարապէս պատերազմիլ ամ̃ զինուք զորս ունի, այլ քաջ պատերազմի այնու, որով սովորեալ է միշտ. այսպէս և զառաքինութե̃ց ։

Երկրորդ՝ ըստ մեծապատուութեան. զի ըստ այսմ՝ սէրն է մեծագոյն քան զամ̃ առաքինութիւնս, և իւրաքանչիւր առաքինութիւն̃ կարէ լինել մեծագոյն քան զմիւսն ըստ գերազանցութեան իմիք. զոր ունի ըստ իմիք ներգործութեան ։ Երրորդ՝ ըստ եռանդեանն՝ զի մի առաքինութիւն ջերմագոյն լինի գործեցեալ քան զմիւսն ։ Նաև գիտելի է՝ զի նոյն առաքինութի, ոչ է միշտ հաւասար ընդ ինքեան, զի աճին առաքինութիւնքն բազում կերպիւ ։ Առաջին՝ ըստ սաստկութեան ։ Երկրորդ՝ ըստ արմատոյն ։ Երրորդ՝ ըստ կարողութեան առաքինութեան ։ Չորրորդ՝ ըստ մեծագոյն բացայայտութեան ա̃ծայնոց նմանութե ։

1. կոր. 13.13.

Հինգերորդ՝ ըստ երկարագոյն յարամնայութե̃ ։

Դարձեալ գիտելի է, զի ընդ աճել միոյ առաքինութեան, աճին և ամենեքեանքն, որոյ օրինակն յայտ է 'ի քնարին. 'ի յոր եթէ պարտէ գոլ պատկանաւոր դաշնակաւորութի հնչմանց, հարկէ՝ զի յորժամ մի լարն զնգէ, զնգեսցին և այլք ամենեքեանք, զի մի՛ լինիցի տարաձայնութի 'ի յեղանակելն ։

Ա Իսկ եթէ վասն էր վայլէ ոք՝ ընդ կիրառնուլն զմի առաքինութի քան զմիւսն. բազումք են պատճառք ։

յակ. 1.17 Նախ՝ զի այնպէս հաճոյ է այ̃, որ է տուող առաքինութեանց ։ Երկրորդ՝ բնութի խառնուածոյն, որ առաւել համաձայնի ընդ միոյ առաքինութեան, քան ընդ միւսոյն ։ Երրորդ՝ է ըստ սովորութեան, զի առաւել կրթեաց զինքն 'ի գործ միոյ առաքինութե̃՝ քան միւսոյն ։ Չորրորդ՝ զի սակաւ ունի զպատերազմ 'ի մոլութենէն՝ որ է ընդդէմ այնմ առաքինութե ։ Հինգերորդ՝ զի ունի զմեծագոյն ծանօթութի ընդ գործոյ միոյ առաքինութեան, քան միւսոյն ։

Քանզի իւրաքանչիւր առաքինութիւն, ունի զյատուկ պատճառս իւր ։ Վեցերորդ՝ դժուարութիւն̃

որ.

որպիսութեան բարուցն՝ զի մինչ ունի նորապէս դառնայ
'ի մեղաց, թէպէտ ունիցի զհաւասար, կամ զմեծագոյն
սէր քան զհինն՝ որ էր երկար ժամանակ 'ի
սէրն. սակայն ոչ է այնպէս պատրաստ 'ի գործել
զբարին որպէս զնա. և այս վասն մնացորդաց մեղացն՝
որք դեռևս կան 'ի նմա։ Դարձեալ գիտելի
է՝ զի մեծութիւն գիտութեան, պարտի պատասխանել
մեծութեան առաքինութեան. և այս վասն բազում
պատճառաց։ Նախ՝ ըստ օրինակին Քի, յորմէ ասէ յոհ. 1. 14
յոհան, լի՛ շնորհօք, և ճշմարտութբ. և ղուկաս. զօրաւոր ղուկ.
բանիւ, և գործով. և 'ի գործս առաքելոց 24. 19.
ասի՝ սկսաւ Յս առնել, և ուսուցանել։ գործ.
Երկրորդ՝ ըստ օրինակի հրեշտակաց, որք ո՛ր չափ 1. 1.
առաւել ճանաչեն, այնքան առաւել սիրեն։
Երրորդ՝ ըստ օրինակի սրբոց, ոպ ասէ մատթէոս,
որ արասցէ և ուսուցանէ նա մեծ կոչեսցի։ մատ. 5.
Չորրորդ՝ ըստ բնականի օրինակի, զի 'ի յարեգական՝ 19.
լոյսն, և ջերմութիւն չափակցին։ Հինգերորդ՝ պատճառաւ
պարտուցն՝ ըստ ղուկասու որ ասէ՝ որում ղուկ.
շատ տուաւ, շատ խնդրեսցի. և որում բազում, 12. 48.
առաւել ևս պահանջեսցի։ Վեցերորդ՝ պատճառաւ
մեծագոյն պատժոյն՝ ըստ ղուկասու, ծառայ որ գիտիցէ
զկամս Տն՝ և ոչ պատրաստեսցէ ըստ կամաց ղուկ. 12
նորա, արբցէ գան բազում։ 47.

Յաղագս կապակցութն առաքինութեանց.

Գլ. Ը.

Առաքինութիւնքն՝ կապակցեալք են և շարակարգեալք
առ միմեանս այնպէս մինչ
զի որ ունի զմինն՝, ունեսցի և զամենեսեան. Ա
և այս յայտ է բազում պատճառաւ։
Նախ՝ 'ի յառատաբաշխութենէ
տուողին այ. որ ոչ տայ զմինն առանց յակ. 1. 5.
միւսոյն։ Երկրորդ՝ զի ոպ մի անդամն հռոմ.
կարօտանայ միւսոյն. այսպէս մի առաքինութիւն միւսոյն։ 12. 4.
Երրորդ՝ զի ոպ 'ի քնարն, եթէ մի աղին պակաս
իցէ, ոչ լինի դաշնակաւոր հնչումն՝ այսպէս և ոչ
լինի 'ի հոգին կատարեալ հոգևորական ներդաշնակաւորութիւն,
եթէ ոչ իցեն 'ի միասին ամ առաքինութիւք։
Չորրորդ՝ զի ընդդէմ իւրաքանչիւր մոլութեց
են

են առաքինութիւնք ինչ, ուստի պարտի ունել զա՟մ առաքինութիւս, որով յաղթեսցին ա՟մ մոլութիւք:

յակ. 2. 10 Քանզի ո՟պ աշխարհական զինուորն, ոչ է կատարեալ զինուոր, եթէ ոչ զա՟մ ունիցի զզէնս, այսպէս՝ և ոչ զինուորն Ք՟ի, եթէ ոչ ունիցի զա՟մ առաքինութ՟իս:

Հինգերորդ՝ զի ո՟պ արեգակն, և մոլորականքն՝ են միշտ յիւրեանց պարունակին. այսպէս և առաքինութ՟իքն պարտին լինել 'ի զօրութիւս հոգւոյն:

Վեցերորդ՝ զի հոգին է անօթ ոսկեղէն, զարդարեալ ա՟մ ակամբ պատուականօք, այսինքն, առաքինութ՟բ:

Եօթներորդ՝ զի հոգին է պարտէզ պատուական, յորում ոչ պակասի զարդ ինչ ծաղկանց, կամ ծառոց:

Ութերորդ՝ զի հոգին է ո՟պ զկրպակ, յորմէ ոչ պակասի առողջարար ինչ դեղ, կամ սպեղանի:

Արդ՝ այսոքիկ որք զկապակցութեանց առաքինութ՟եց ասացեալք եղեն, պարտին իմանիլ վասն հաճոյական առաքինութեանց. որք ամենեքեանք ըստ ունակութեան են կապակցեալք, ո՟պ և են իսկ հաւասարք ըստ վարձատրելի գործոցն: Եւ թէպէտ ա՟մ առաքինութ՟իք են նմանք, սակայն ոմանք ասին մարք առաքինութեանց. ոչ զի ունակութ՟ի առաքինութ՟ե ծնանի զառաքինութ՟ի, այլ շարժումն ծնանի զշարժումն, ո՟պ ասէ բեռնարդոս. ընթերցումն, ծնանի զճանաչումն. ճանաչումն՝ զսէր. սէրն՝ զյաճախումն. յաճախումն՝ զընտանութ՟ի. ընտանութ՟ին՝ զհամարձակութ՟ի. համարձակութ՟ին՝ զդիւրաւ ունելն. և ըստ այսմ եղանակի չորք ասին մարք առաքինութեանց, այսինքն, հաւատոն ծննդեամբ. զի 'ի շարժմանէ հաւա-

1. կոր. 13. 13. տոյն՝ ծնանին շարժմունք այլոց առաքինութեանց:

Սէրն՝ սննդեամբ: խոհականութ՟ին՝ կառավարութ՟բ:

ղուկ. 16. 8. խոնարհութ՟ին՝ պահպանութ՟բ: Իսկ մոլութ՟իքն ոչ են կապակցեալք ընդ միմեանս, ո՟պ առաքինութ՟իքն. որոյ պատճառն է. զի մոլութ՟իքն են 'ի մէջ ըստ գործոց մերոց, որք ոչ են նմանք: Իսկ ա՟ծային առաքինութ՟իքն ոչ են 'ի մէջ ստանալով, այլ հեղմամբ:

Բ Է և այլ պատճառ, զի մոլութ՟իքն են հակառակք միմեանց, ո՟պ ագահութ՟ին, և շռայլութ՟ին, որ ոչ է ըստ այսմ 'ի յառաքինութ՟իս:

Յա-

Յաղագս գովութեանց առաքինութեանց ։
ԳԼ. Թ.

Առաքինութիւնն է գովելի ։ Նախ՝ ըստ
արարողական պատճառին որ է ա͞ծ ․
քանզի ասէ օգոստինոս՝ միայն ա͞ծ ներգործէ ՚ի մարդն զառաքինութիւն ։ Ա
Երկրորդ՝ ըստ նիւթական պատճառին,
նորուն է ․ զի ոչ է՝ եթէ ոչ ներամնաց
՚ի բարիս ։ Այլ ոչ է այնպէս զչարեաց
բնականաց, և բախտականաց, զի զայսպիսիս՝ տեղայ
ա͞ծ ՚ի վերայ արդարոց և մեղաւորաց ։ Երրորդ՝ ըստ
տեսական պատճառին ․ զի է գեղեցկութի հոգւոյ՝
ըստ սաղմոսին ա͞մ փառք դստեր թագաւորի ՚ի ներքուստ ։ սաղ․ 44․14․
Չորրորդ՝ ըստ կատարմնական պատճառին․
ուստի ասէ օգոստինոս․ վարձ առաքինութե՝ է՝ նոյն
ինքն ա͞ծ՝ որ ետ զնա ։ Այլ և առաքինութիւնն է բարի
բազում կերպիւ ։ Նախ՝ ըստ ինքեան․ զի որպէս
ասէ օգոստինոս՝ առաքինութիւնն է բարի որակութի
մտաց ։ Քանզի ո͞չ բարի է անդն որ է մերձ քաղաքին,
այսպէս առաքինութին, որ է ներքս ՚ի հոգին ։
Երկրորդ՝ ըստ գործակցութե առ այլ բարիս ․ ըստ
այնմ որ ասէ եբրայեցւոց ․ բարեգոյն է շնորհօք հաստատել
զսիրտս, քան կերակրօք ։ Երրորդ՝ ըստ գործոյն՝ եբր․
զի բարի առնէ զգործս մարդոյն, և վարձատրելի ․ 13․9․
քանզի ոչ լինի գործն վարձատրելի, եթէ ոչ
յառաջ գայցէ յառաքինութե ։ Վ͞ս զի ասէ գրիգոր,
ոչ ինչ ունի դալարութի ոստ բարի գործոյն, եթէ
ոչ մնասցէ ՚ի յարմատ սիրոյն ։ Չորրորդ՝ ըստ փոխման ․
զի ՚ի գայլոյն, առնէ գառն ․ և զխաւարին դարձուցանէ Բ
՚ի լոյս ․ քանզի զչար մեղացն՝ փոխէ ՚ի բարին
շնորհաց ․ և զչարին պատժոյն՝ ՚ի բարին փառաց, յոհ․ 2․9․
որ նշանակեցաւ փոփոխելով զջուրն ՚ի գինի ։
Հինգերորդ՝ ըստ զանազանութե, զի առաքինութե
զանազանին որդիքն ա͞յ, ՚ի յորդւոցն սատանայի ․ ըստ
յոհաննու՝ յայսմիկ ծանիցեն եթէ իմ աշակերտք էք, յոհ․ 13․
եթէ սիրիցէք զմիմեանս ։ Վեցերորդ՝ ըստ օրինակի ․ 35․
զի ա͞մ ս͞բք՝ ջան եղեալ պարապէին ՚ի յառաքինութե ։ ծնն․ 4․4
Ուստի գովի ՚ի յաբէլ՝ անմեղութիւնն ․ ՚ի յաբրահամ ծնն․ 12․
հնազանդութի ․ ՚ի յովսէփ՝ ողջախոհութի ․ ՚ի մովսէս՝ թւոց․ 12
հե-

բ.Թագ. հեզութի. 'ի դաւիթ' խոնարհութիւն, և այսպէս 'ի
6.21. յայլս: Նա և գովելի է առաքինութիւն վասն բազմաց
Մատ. պատճառաց, այսինքն, զի է մեծապատիւ. զի ունէր
11.29. ուսուցիչ զՔ͞ս. ըստ այնմ' ուսարուք յինէն, զի հեզ
եմ: Դարձեալ' զի է մեծի բարձրութեան. ուստի ասէ
Թուլիոս. առաքինութիւնն միայն է որ 'ի բարձունս
ընդեալ է զարմանալիս: Դարձեալ' զի է մեծի զուարճութեան.
սաղ.132 ըստ սաղմոսին որ ասէ' զի՞ բարի, կամ
1. զի՞ վայելուչ: Դարձեալ է մեծի հաստատութեան. զի
սաղ. ասէ սաղմոս, 'ի պահելն նորա' հատուցումն բազում:
18.12. Դարձեալ' զի է մեծի օգտութեան. զի ասէ սքօեցիոս'
ոչ երբեք առանց պատժոց են մոլութիւնք, և ոչ առանց
վարձուց առաքինութիւնք: Դարձեալ' զի է մեծի
անհոգութե' զի ասէ Թուլիոս' այս է վերջին իմաստութիւն.
զի զա͞մ քոյդ' արասցես զեդեալն 'ի քեզ:
Բայց գովելի է ջան առաքինութեան, քան զջան գիտութէ.
և այս յայտ է բազում կերպիւ: Նախ' օրինակաւ
սրբոցն. զի այսպէս արարին նոքա: Երկրորդ'
բանիւ հեղինակութեան. ըստ առաքելոյն որ ասէ' ոչ է
ա. կոր. 'ի բանս արքայութիւնն Ա͞յ, այլ 'ի յառաքինութիւն:
4.20. Երրորդ' պատճառաւ ներգործութեան. զի առաքինութիւն
արտաքսէ զմեղս. իսկ գիտութիւնն ոչ:
Չորրորդ' պատճառաւ սկզբան. զի առաքինութիւնն
հեղեալ լինի յԱ͞յ. և գիտութիւն ստացեալ լինի ջանիւք:
Հինգերորդ' պատճառաւ վախճանին. զի փառքն' է
վախճան առաքինութեան, և ո՛չ գիտութեան:
Վեցերորդ' պատճառաւ յառաջեդելոյն. զի յառաջեդեալն
առաքինութե, է՛ բարին. և գիտութե' ճշմարիտն:
յոհ. 8. Եօթներորդ' պատճառաւ նիւթոյն. զի առաքինութին
47. ոչ է' եթէ ոչ' 'ի յորդիսն Ա͞յ. իսկ գիտութին,
նաև 'ի յայլս: Ութերորդ' պատճառաւ անհոգութե.
զի անհոգագոյն է լինիլ բարի, քան թէ դոլ փիլիսոփայ:
Իններորդ' պատճառաւ համեստութե. քանզի
մեծագոյն փառք է հետևիլ Տ͞ն, քան արիստոտելի:
Տասներորդ' պատճառաւ խորշելոյն 'ի չարէն. զի եթէ
Ծննդ. նախկին ծնօղքն ձգեալք էին զձեռս 'ի փայտն կենաց,
3.6. ո͞չ 'ի փայտն գիտութե, ո՛չ էին հանդիպեալք
այնքան չարեաց' ինքեանք, և որդիք իւրեանց:

Յաղագս ներգործութեան առաքինութեանց ։
Գլ. Ժ.

Խնդութիւն առաքինութեան, գերազանց
է քան զխնդութիւն աշխարհիս բազմօք
իրօք ։ Նախ՝ հանապազորդութեամբ. ըստ
այնմ որ ասէ յառակս. անհոգ միտքն՝ առակ.
է՛ իբր ՚ի հանապազ խրախութեան. այլ 15.15.
խնդութիւն կեղծաւորին, այսինքն, աշխարհի,
իբրև զկէտ մի. որպէս ասէ յոբ ։ յոբ. 20. 8
Երկրորդ՝ մաքրութեամբ խղճի մտաց. որպէս սրբագոյն է՝
հանգչիլ ՚ի ծաղկոցս, քան ՚ի տղմալից տեղիս ։
Երրորդ՝ արժանաւորութեամբ, զի ասէ մեկնիչն ՚ի վերայ
գաղատացւոց. բարձրութիւն միայն է՛ ՚ի յարժանեաց
իւրոց. իսկ խնդութիւն աշխարհիս, ՚ի յանարժանեացն ։ իմս. 8.7
Չորրորդ՝ օգտակարութեամբ, ըստ այնմ որ ասէ իմաստութեան ութն՝ վասն առաքինութեանց. քան զոր
ոչինչ օգտակարագոյն մարդկան ՚ի կեանս ։
Այլ ներհակաբար զխնդութենէ աշխարհի, ասէ առակաց. կատարած խնդութեանց է սուգն ։ առակ. 14.13.
Հինգերորդ՝ ազատութեամբ՝ ըստ առաքելոյն որ ասէ, ՚ի գաղ. 5.
յազատութիւն կոչեցեալք էիք. և դարձեալ ասէ՝ ուր 13.
ոգի Տեառն, անդ է ազատութիւն ։ Իսկ մեղաւորն կապեալ Ա
է. ըստ առակաց, որ ասէ՝ տռուամբք մեղաց իւրոց՝ առակ.
իւրաքանչիւրոք քարշի ։ Վեցերորդ՝ ամենայն ներկայութեամբն. 5.22.
զի ասէ օգոստինոս՝ թէ այնպիսի բարի է
աստուած. մինչ զի ոչ ումեք որ թողու զնա՝ լիցի բարի,
այլ ծանիր զներհակն ՚ի չարս ։
Դարձեալ՝ առաքինութիւնն գործէ զզարմանալիս բազմապատկաբար, այսինքն, յերկինս՝ զոր բռնադատէ.
ըստ այնմ որ ասէ՝ արքայութիւն երկնից բռնադատի՝ մատ.
և բռունք յափշտակեն զնա ։ ՚Ի յերկրի, զի պահէ 11.12.
զմարդն զի մի՛ տոչորեսցի հրով ցանկութեան, և մի՛
խեղդեսցի փշովք ագահութեան. և մի՛ ընկղմեսցի
ջրով հեշտախտութեան. և մի՛ աղտեղասցի տղմով
բղջախոհութեան ։ ՚Ի սիրտ մարդոյն, զի զխոցոտեալսն
բժշկէ. զաղտեղացեալսն սրբէ. զմեռեալսն կենդանացուցանէ. զկուրացեալսն լուսաւորէ ։
՚Ի դժոխս, զի դժոխային հուրն՝ ոչ կարէ վնասել
զա֊

զառաքինիս, որ՝ և ոչ նիւթական հուր՝ զալամանդրոս գազանն:

Դարձեալ՝ առաքինութիւն լուսաւորէ զբանականն՝ առ ճանաչումն ճշմարտին · զցանկականն՝ յորդորէ 'ի սէր բարւոյն· զցասմնականն՝ զօրացուցանէ առ 'ի դարշել 'ի չարէն:

Դարձեալ՝ առաքինութիւնն նմանեցուցանէ զմարդն ա͞յ, այսինքն, հօր՝ զօրութե͞ ուժեղութեան · որդւոյ՝ ճառագայթիւ ճշմարտութեան · իսկ ոգւոյն սրբոյ՝ ջերմեռանդութե͞ սիրոյն: Առնէ կերպարանակից հրեշտակաց · զի ասէ բեռնարդոս՝ 'ի մարմնի՝ անմարմնաբար կեալ՝ հրեշտակաց բնութեան է, և ոչ մարդկան:

Դարձեալ՝ ուրախացուցանէ զմիտս · զարդարէ · բարձրացուցանէ · պատուէ · բժշկէ · կենդանացուցանէ · կերակրէ · փարթամացուցանէ, և սրբէ:

Դարձեալ՝ առաքինութիւն, զանցեալ չարն՝ 'ի բաց մերժէ · ընդ ներկային՝ պատերազմի · 'ի հանդերձելոյն՝ զգուշացուցանէ:

Դարձեալ՝ առաքինութիւնն զմիտսն բարեպէս կարգաւորէ · առնէ զմարդն սիրելի ա͞յ · բերէ զպտուղ արդեանց, և վարձուց · զժամանակաւորս խոհեմաբար մատակարարէ · զգործս որք են անզանազանք ըստ ինքեան՝ առնէ բարիս:

Արդ՝ որպէս այնք որք ասացան՝ բացայայտեն մեզ զհասարակական ներգործութիւնս առաքինութեանց · նմանապէս են յատկականք ներգործութիւնք ոմանք, իւրաքանչիւրոց առաքինութեանց: Որպէս խոնարհութեանն է՝ հնազանդեցուցանել ա͞յ · ապաշխարութեան՝ դարձուցանելն · արդարութեան՝ առաջնորդելն · հնազանդութեան՝ ճանապարհորդակից լինիլն· համբերութեան՝ ընդածելն · յարատեւութեան՝ ներքս ածելն · մաքրութեան՝ համագուգելն · և սիրոյն՝ է միաւորելն:

Յաղագս արդեանց առաքինութեանց։ ԳԼ. ԺԱ.

Արդիւնքն է գործունէութ՟ի բարի գործոյն առ 'ի ընդունիլ զայն, զոր ոչ ունի. և կամ առ 'ի ունել ևս արդարապէս՝ զոր ինչ ունի ։ Ուստի արդեամբքն որ ոչ իւրն՝ լինի իւր․ և նոյն իւրն՝ աւաճել իւր ։ Որպէս թագաւորին որ տայ ձի զինուորի՝ որոյ դեռևս ոչ արժանաւորեցաւ, այլ ընդ բարւոք կիր առնուլ ձիոյն՝ արժանաւորի արդէն իսկ տուեալ ձիոյն։ Արդ՝ առ 'ի յիմանալ զնախասացեալն՝ գիտելի է․ զի երեքկին զանազանին արդիւնքն, այսինքն, 'ի պատշաճաւորն․ 'ի յարժանաւորն․ և 'ի համարժանն ։ Պատշաճաւոր արդիւնն է՝ որով պատրաստի ենթակայն առ 'ի ընդունել զշնորհ, ըստ բանի ա՟ծային արդարութեան․ և այս կոչի պատրաստութ՟ի նիւթոյ, այսինքն, յորժամ առնէ ոք որ ինչ է յիւրն կողմանէ ։ Եւ արժանաւոր արդիւնն է՝ յարմարութ՟ի ներգործողին՝ առ 'ի հասանիլ այնմ, որում արժանաւորի ։ Իսկ համարժանաւոր արդիւնն է՝ հաւասարութ՟ի արդեանց առհատուցման ։ Արդ՝ ասեմ զհաւասարութ՟ի, ոչ զթուական, այլ զերկրաչափականն, այսինքն, ոչ զքանակին՝ այլ զչափակցութեանն ։ Եւ այս յայտ է՝ զի ա՟ծ հատուցանէ 'ի վեր քան զարժանն․ ոչ և պատժէ այսր քան զարժանն ։ Ուստի 'ի մէջ արդեանց և վարձուց՝ ոչ է հաւասար քանակութ՟ի, այլ չափակցութիւն․ քանզի առ ա՟ծ ոչ գոյ արդարութ՟ի փոխարինական, վասն զի ոչ ումեք պարտի զինչ, այլ բաշխողական ։

Արդ՝ փոխարինական արդարութիւնն՝ կոչի արդարութ՟ի վաճառի, որով տուեալ լինի մի հաց՝ միոյ դենարի, կամ մի կանգուն կտաւ՝ ընդ երկուց դանկաց ։ Իսկ բաշխողական արդարութիւն է սկիզբն՝ որով բաշխին պարգևք՝ ըստ չափակցութեան արդեանց․ և այս է առ ա՟ծ ։ Ուստի ասէ առաքեալն, իւրաքանչիւրոք առցէ զվարձս՝ ըստ վաստակոց իւրոց։ 1.կոր. 3.8.

Այս ասելի է՝ թէ ոչոք է արժանի առաջնոյ ա՟ծայնոյ շնորհին՝ արժանաւոր արդեամբ, կամ համարժանաւոր, այլ միայն պատշաճաւոր արդեամբն ։

Նոյնպէս՝ որ կայ 'ի մեղս, ոչ կարէ արժանացուցանել

զայն

ղուկ 1.16. զայլ առաջնոյ շնորհին համարժանաւոր արդեամբն, այլ արժանաւոր և պատշաճաւոր արդեամբն:

Այլ կարէ կացեալն 'ի շնորհի, արժանաւորել աճման շնորհին, ըստ համարժանաւորին, և ըստ այսմ՝ ևս ըստ արժանաւորին, և ըստ պատշաճաւորին. որպէս այսոքիկ 'ի վեր անդր բացայայտեցան:

Այդ՝ նախասացեալ երեքեան եղանակք արդիւնաւորելոյ են հասարակք. ուստի թէ այլք ոմանք պատահիցին, վերաբերեսցին առ երեքեանն.

Ա Այլ յորժամ ասի՝ թէ երանուհի կոյսն արժանաւորեցաւ կրել յինքեան զՔս̃, իմանալի է համեմատաբար, այսինքն, թէ նա առաւել արժանաւորեցաւ ունել քան զայլ ոք, և կամ մարթի իմանել՝ վասն համարժանաւոր արդեան: Դարձեալ՝ ասին չարքն արժանաւորել ժամանակաւորաց, զի ոչ ինչ բարի է առանց հատուցման. որպէս ոչինչ չար՝ առանց պատժոց: Այլ այս ասի անյատկապէս. զի արարեալ գործքն՝ կալոցն 'ի մահուչափ մեղս, ոչ են ուղղապէս բարիք, վասն զի ոչ են տեսակաւորեցեալք սիրով, սակայն զի են այնպիսի գործքն բարի ինչ՝ Տր̃ն ընդունի զայնս իբրև զբարի ինչ, և տայ ինչ փոխանակ այնց: Դարձեալ՝ մեղաւորք երբեմն արժանաւորին շնորհաց՝ պատահմամբ ինչ, զի աղօթքն՝ երբեմն խնդրուածովք արժանացուցանեն շնորհաց զբարերարս իւրեանց՝ որոց աղաչանացն եղև պատճառ՝ ողորմութիւն:

Բ Դարձեալ՝ անյատկապէս առեալ լինի արժանաւորութիւնն այն, ուր ասի՝ բարեբախտ անցանք, որ արժանաւորեցաւ ունել զայնպիսի փրկիչ: Քանզի անդ եդեալ լինի արժանաւորումն փոխանակ պահանջելոյն:

Յաղագս նախապատրաստութեան առ շնորհն:

Գլ. ԺԲ.

Ա Յայտ է՝ ոչոք արժանաւորի առաջնոյ շնորհին, որպէս և ասացաւ իսկ, սակայն կարէ մեղաւորն պատրաստել զինքն առ շնորհն, առնելով որ ինչ է յիւրն կողմանէ. զի ոչ ումեք այսպիսեաց՝ ուրացեալ լինի շնորհ:

Իսկ այս ոչ է արժանաւոր արդեանն,

կամ համարժանաւոր , այլ ըստ պատշաճաւորին :
Եւ պատշաճաւորութիւնս այս՝ եւս առաւել է 'ի կողմանէ այ տուողին զշնորհն , քան 'ի կողմանէ մարդոյն՝ պատրաստողին զինքն առ շնորհն . զի 'ի պատրաստութեան առ շնորհն , և 'ի հեղման շնորհաց , ունի զինքն հոգին ըստ կերպի նիւթոյ . Իսկ Ած՝ որպէս առաջին շարժող , և ներգործող :
Դարձեալ՝ է և այլ պատճառ՝ զի պատշաճաւորութիւնս այս՝ է առաւել յայ , քան 'ի մարդոյն , զի ճահաւորութիւնն այն որ 'ի կողմանէ մարդոյն , միայն տայ տեղի ածային ողորմութեան . զի պահելով զարդարութիւնն , կարիցէ ուրեք տալ զշնորհ . զի լինէր ընդդէմ ածային արդարութեան , եթէ այնպիսոյն տուեալ լինէր շնորհ , 'ի յորում լինէր ներհակն շնորհաց , այսինքն , կամք մեղանչելոյ :
Արդ՝ բաւական ճահաւորութիւն առ շնորհն է , զի արասցէ մարդն որ ինչ յիւրն կողմանէ :
Իսկ առնելն որ ինչ է յիւրն կողմանէ , երեք իրս պարունակէ , այսինքն , զի մարդն թողցէ զգործս մեղաց , և զկամս մեղանչելոյն . և ջանասցէ 'ի բարին ըստ իւրում կարողութեան : Եւ ծանիր՝ զի ամ արժանաւորութի , կամ անարժանաւորութիւն , ստացեալ լինի 'ի կեանս այս : Դարձեալ՝ ոչ բարի առնելն այլ բարւոյս առնելն է գովելի . քանզի ոչ բայիւք , Բ
այլ մակբայիւք արժանաւորիմք . Ուստի տաղանորս :

Մակբայք բայից են իշխանք .
ուր գոն արդիւնաւոր կեանք :

Յաղագս թէ յորոց պատճառի արդիւնքն :

ԳԼ. ԺԳ.

Արդիւնաւոր գործք՝ են ամենեւին 'ի շնորհաց , և ամենեւին 'ի յանձնիշխանականէն , թէպէտ նախկինաբար 'ի շնորհաց . զի շնորհն համեմատի առ անձնիշխանականն , ոպ հեծեալն առ ձին :
Զի որպէս հեծեալն ուղղէ զերիվարն , այսպէս շնորհն ուղղէ զանձնիշխանականն 'ի վարժումն առաքինութեց . քանզի մեք կարեմք առնել զչար , այլ ոչ զբարի : Ա

Արդ՝ երեք են որք զօրեն առ գործունէութի արդիւնաւորելոյ : Առաջինն է՝ դժուարութի գործոյն,
որ յայտ է 'ի մարտիրոսութեան : Երկրորդն է յօժարութի
2. կոր. 9. 7 կամացն . ըստ առաքելոյն որ ասէ՝ զտուրս
ղևտ. 27. զուարթս սիրէ Տր : Երրորդն է՝ մեծութի սիրոյն,
23. քանզի նա է կշռորդ սրբոց , որով զամ ինչ կշռէին
1. կոր. 'ի տաճարին : Դարձեալ առ 'ի լինել գործոյն արդիւնաւոր,
13. 2. երիս իրս պահանջի : Առաջինն զի գործն
գաղ. 5. 2 այն լիցի 'ի սէրն , զի գործք որք լինին արտաքոյ սիրոյ՝
մեռեալք են , որպէս շիջեալ ածուխն :

Երկրորդ՝ զի լինիցի 'ի սիրոյ . զի բազումք գործք լինին 'ի սէրն , այլ ոչ են արդիւնաւորք , վասն զի ոչ լինին 'ի սիրոյ , այսինքն , զի ոչ վերածեն առ պատկանաւոր վախճան : Երրորդ՝ զի նոյն գործն լիցէ վերաբերելի առ բարին . և այս վասն այսորիկ ասի՝ զի չար գործքն ոչ կարեն լինել բարի դիտաւորութբ , ապա թէ ոչ՝ հետևէր զի նոյն գործքն լինէր արդիւնաւոր , և ոչ արդիւնաւոր , որ կարի իմն անհանդէպ է : Դարձեալ՝ 'ի յարդիւնաւոր գործն . երիս իրս նկատեալ լինի 'ի կողմանէ մարդոյն , այսինքն , ենթակայ՝ որ է հոգին , և անձնիշխանութիւնն , նա և դիտաւորութի , կամ վախճան : Երից այսոցիկ պատասխանեն երեք , 'ի կողմանէ այ , այսինքն , շնորհն առաքինութին , և սէրն : Քանզի շնորհն առնէ զենթակայն հաճոյ այ , և առաքինութին՝ ճահաւորէ զանձնիշխանականն . իսկ սէրն ուղղևորէ զդիտաւորութիւնն առ պատկանաւոր վախճան : Արդ՝ ասէ
Բ օգոստինոս , թէ արդիւնն կայանայ առ անձնիշխանութին առիթօրէն . զայս ասէ՝ զի անձնիշխանութին ներգործէ 'ի յարդիւնաւոր գործն , այլ ոչ է բանական : Եւ առ առաքինութին տեսակաբար . զայս ասէ, զի յառաքինութէն յառաջ գայ շարժումն իբր 'ի տեսակէ , և ելանէ 'ի զօրութէ : Իսկ առ շարժումն առաքինութեան՝ էականաբար . զայս ասէ , զի շարժումն էականաբար է արդիւն : Այլ առ շնորհն կայանայ՝
յոհ. 15. 4 գործադրաբար . զայս ասէ՝ զի առանց շնորհի
ոչինչ շարժումն է արդիւնաւոր : Բայց առ գործն՝ գործիքականապէս . զի արտաքին գործն է իբր գործիական պատճառ արդեանց : Ապաուրեմն գիտելի է հասարակաբար . զի ոչ արժանաւորիմք առանց շնորհաց , ոչ կրիւք՝ ըստ այնմ որ կիրք . և ոչ բնական շարժմամբք . զի ասէ փիլիսոփայն , թէ բնութբ՝ ոչ

չա.

չար եմք, և ոչ բարի ։ Նա և ո՛չ յակամայ ․ զի առ օգտութիւնս, ո՛չ ոք յակամայ բարեպէս առնէ, թէ և բարի իցէ զոր առնէ ։ Այլ և ո՛չ կամեալ անձնիշխանութեամբ ․ քանզի որոց ոչ ունի զկիրառութիւն բանականին, և անձնիշխանութեան, ո՛չ գոյ ՚ի նոսա գործ արդիւնաւոր, կամ անարդիւնաւոր, որպէս են՝ երեխայքն ․ քնեալքն ․ մոլաթափքն, և անբան անասունքն ։

Յաղագս վախճանի գործոց ։ ԳԼ․ ԺԴ․

ՔԱնզի՝ ըստ արդիւնաւորութեան, կամ անարդիւնաւորութեան, նկատել լինի ըստ վախճանի գործոցն ․ վասն այնորիկ ճանիր զկանոն որ յաղագս այսմ իրի ։

Առաջինն է՝ զի ՚ի վախճանէն առի գործն կամ չար, կամ բարի ։ Երկրորդ՝ չար գործն ո՛չ կարէ լինել բարի ՚ի վախճանէն ։ Երրորդ՝ մի գլխաւորութեան տեսականորէ զբաղումն ներգործութիւնս ․ որպէս՝ թէ ոք կամիցի տալ զդահեկան մի վասն այ՟, այնպէս՝ մինչ զի օրըստօրէ տայցէ դենար մի ․ և երբեմն մոռանայցէ վերաբերել առ ած՟ զտուումն դենարին այնորիկ, սակայն արդիւնաւոր է խոստումն և տալն՝ վասն առաջնոյ դիտաւորութեանն ։ Չորրորդ՝ վախճան ընդ վախճանի կարէ լինել արդիւնաւոր, զոր օրինակ՝ թէ ոք երթայ ՚ի վաճառանոցն զի գնեսցէ դեղ, և վասն այն գնէ, զի բժշկեսցի ՚ի հիւանդութենէ, և վասն այն ցանկայ բժշկել, զի լաւագոյն ծառայեսցէ այ՟ ։ Արդ՝ մ՟ջ վերջին վախճանիս այս՝ ըստ յառաջընթացքն են բարիք ․ քանզի ըստ վերջնոյ վախճանի, բնաւք կամք նախընթացք, դատին գոլ բարիք, կամ չարք, երբ առաջին ներգործութիւնքն են անզանազանք ։

Հինգերորդ՝ զանազան վախճանք ո՛չ են գնելիք, որոց մինն ոչ վերաբերի առ միւսն ․ ; զոր օրինակ՝ թէ ոք կամիցի պոռնկել զի առողջասցի, և կամի առողջանալ զի ծառայեսցէ այ՟ ։ Արդ՝ յետին վախճանս՝ ոչ տեսականորէ զկամս պոռնկելոյն, այլ ևս առաւել կամքն այն՝ ապեղացուցանէ զայս ․ զի մի թիւր կամք՝ թիւրէ զբաղումն կամս ։ Եւ գիտելի է՝ զի մարմնաւոր ինչ գործ, կարէ վերածիլ առ ժամանակաւոր վախձան. բայց միայն՝ զի յետոյ վերաբերեսցի առ Աստուած. Ա Իսկ հոգևոր գործն՝ որպէս, քարոզութիւն, ոչ կարէ վերաբերիլ առ ժամանակաւոր վախձան, թէ և նոյն ժամանակաւորն՝ վերաբերցի առ Աստուած: Եւ այս է զոր 1. կոր. 9.16. ասէ օգոստինոս, պարտիմք ուտել՝ զի աւետարանեսցուք, այլ ոչ աւետարանել՝ զի կերիցուք:

Իսկ թէ 'ի գործս՝ հուպ վախձան դնիցի Աստուած, և վերջին վախձան ժամանակաւորս, ամենևին թիւր է:

Այլ արդ՝ արժան է դնել զերկու վախձան, այսինքն, զժամանակաւոր, և զյաւիտենական. այլ հանապազ՝ յաւիտենականն եղիցի վերջին վախձան:

Յաղագս թէ զինչ վարձ արդիւնաւորիմք 'ի ձեռն բարի գործոց: Գլ. ԺԵ.

Բարի գործքն են արդիւնաւորք յերկս իրս, այսինքն, 'ի յաւիտենական կեանս, 'ի յաճումն շնորհաց, և 'ի թողութիւն պատժոց: Արդ՝ առաջինն որ է յաւիտենական կեանք որ է վարձ գոյացական՝ տայ պատասխանի արմատոյ գործոյն, որ է սէրն: Իսկ աճումն շնորհի, որ է վարձ պատահական, պատասխանէ սեռի գործոյն, զի մանաւանդ՝ գերազանց, և վերյաւելեալ գործովք արժանաւորիմք աճման շնորհաց, քան այլովք գործովք: Այլ թողութիւն պատժոյն՝ պատասխանէ աշխատութեան գործոյն. քանզի գործք՝ որք են առաւել դժուարինք, են առաւել արդիւնաւորք 'ի թողութիւն պատժոյն: Վասն զի՝ է՝ կանոն 'ի յաստուածաբանութեան. թէ պատիժն է տարալուծող պատժոյ: Արդ՝ ծանիր, զի թէպէտ բոլոր զօրութիւն արժանաւորելոյ կենացն յաւիտենից, նա և այլոց, կայանայ 'ի սէրն, սակայն՝ ոչ բոլոր ներգործութիւն. քանզի ներգործութիւն արժանաւորելոյն կայանայ առ մեծութիւն գործոյն. որպէս յայտ է 'ի թողութեան պատժոյն, որ ոչ միայն կայանայ 'ի սէրն, այլ և 'ի դժուարակիր գործս. և օրինակ յայտ. 3. 8 այսմ ունիմք 'ի Քրիստոս, որ շահեցաւ մեզ զբացումն դրանն արքայութեան, ոչ միայն սիրով, այլ՝ և գերազանցութեամբ գործոյն, այսինքն, իւրոց չարչարանաց: Ա Դարձեալ՝ գիտելի է՝ զի գոյացական վարձուն՝ այնքան արժանաւորի մարդն միով գործով, որ քան հազարաւ՝ ընդ մնալ նոյն արմատոյն, և ընդ ոչ աճիլն ։ Սակայն այսպիսի գործքս են օգուտ ՚ի յայլս բազում իրս ։ քանզի զուարճացուցանէ զմիտս ։ հաստատէ զառաքինութիւնս ։ աճեցուցանէ զարդիւնս պատուհական վարձուն ։ թողու զմեղս՝ ըստ պատժոյ մեղացն այնոցիկ, որոց արդէն իսկ թողեալք են շնորհօք ըստ պարտաւորութեանն ։ թուլացուցանէ զարմատ մեղաց ։ ՚ի բաց մերժէ զծուլութիւն ։ վարժէ զմարդն ՚ի սովորութի բարւոյն, և ՚ի բաց հերքէ զխորձութիւն սատանայի ։

Եւ գիտելի է՝ զի առաջնոյ շնորհին ո՛չք մեղաւոր կարէ արժանաւորել յառաջագոյն ։ և այս վասն բազմաց պատճառաց ։ Նախ՝ զի այնպիսին ոչ ունի զարմատ արժանաւորելոյ, այսինքն, զշնորհ ։ Երկրորդ՝ վ՟ս անարժանաւորութե ։ քանզի մեղաւորն ոչ է արժանի հացին՝ զոր ուտէ ։ ո՟պ ասէ օգոստինոս ։

Երրորդ՝ զի ոչ իմն գործ մարդոյ՝ հաճոյանայ այ՟, եթէ ոչ նախ ինքն հաճոյասցի ։ Ուստի նախապէս ա՟ծ հայեցաւ ՚ի հաբէլ, քան ՚ի պատարագս նորին, որպէս ասի ծննդոց դ՟ ։ Չորրորդ՝ զի ո՟պ բնականաբար պատճառն յառաջանայ իւրոյ ներգործութեան. Ծննդ. 4.4. այսպէս և շնորհն յառաջանայ ա՟մ արժանաւորութե ։ վասն զի նա է պատճառ արդեանց ։ Զի նա ըստ օգոստինոսի՝ կանխէ քան զկամս մեր, զի կամեսցուք. և հետևի՝ զի մի՛ ընդունայն ինչ կամեսցուք ։

Դարձեալ՝ շնորհն որպէս վերադրոյն սասցու, բարի կիրառմամբ նորին ։ Նա և համարժանաւոր արդեամբքն՝ արժանաւորի աճիլ ՚ի ճանապարհի աստի կենացս ։ զի աճեցեալ արժանասցի կատարիլ ՚ի վերին գաւառն ։ Եւ այս ասի յա՟յ ։ որոյ է հեղուլն զշնորհս, աճեցուցանել և կատարել, ըստ գործակցութե կամաց մերոց ։ Քանզի ո՟պ ա՟ծ է աղբերական սկիզբն հեղլոյ զշնորհս ։ այսպէս՝ ինքն միայն է սկիզբն աճեցուցանելոյ, ըստ կերպի հեղողի ։ իսկ շնորհն ըստ կերպի արդեան, և արժանապատուութեան ։ այլ անձնիշխանութիւն՝ ըստ կերպի գործակցութե ։

Եւ որպէս անձնիշխանականն արժանաւորի շնորհօք, համարժանական արդեամբք՝ աճման շնորհաց, ՚ի կացութե ճանապարհի աստի կենացս, այսպէս և համարժանաւոր արդեամբքն՝ արժանաւորի լրման նորին ՚ի կացութե վերին գաւառին ։ Եւ արդ՝ զի համարժանաւորութե՟ շահիմք զկեանս յաւիտենականս, բազում

ղումն են պատճառք ։ Առաջինն է՝ զօրեղութիւն պարգեւաց ոգւոյն սրբոյ, որ գործակցի արդեանն ։ Հռօմ. 4. 5.
Երկրորդ՝ ճշմարտութիւն աստուածային խոստմանն ։ Մատ.
Երրորդն է՝ յիշեցումն խրատու զոր ընդունի անձնիշխանականն, ՚ի յորում և յարամնայ իսկ մինչև իսպառ ։ 24. 47.
Չորրորդ՝ դժուարութիւն որպիսութեան արժանաւորելոյն ։ Հինգերորդն է՝ արժանաւորութիւն Քրիստոսի գլխոյն մերոյ, և միջնորդի, որ պարտի փառաւորել ընդ անդամոց իւրոց ։ 1. Յոհ. 2. 2. Վեցերորդն է՝ առատաբաշխութիւն Աստուծոյ տուողին, որում ոչ վայելէ հատուցանել սակաւ ինչ ։ Ղուկ. 11. 13. Եօթներորդն է՝ պաշտօն հնազանդողին նմա՝ հաւատարմաբար ։ Յոհ. 12. 26. Ութերորդն է՝ պատուականութիւն գործոյն որ յառաջ գայ ՚ի սիրոյ ․ որ այնքան համարի առաջի դատաւորին, որ քան է սէրն՝ յորմէ յառաջ գայ այն ․ և վասն այն ոչ կար է բաւականապէս ունել զհատուցումն, եթէ ոչ ծայրագոյն բարեաւն ։

Իսկ գործք՝ որք ոչ լինին ՚ի սէրն, թէպէտ ոչ են օգուտք առ կեանս յաւիտենականս, սակայն են օգուտք ՚ի յայլս բազում իրս ։ Քանզի պատրաստէ զխիղճն՝ առ ՚ի ընդունելութիւն շնորհաց ․ և նուազեցուցանէ զպատիժն, այսինքն, զայն որում պարտաւորիւր եթէ ոչ լինիցէր գործն այն ․ այլ ոչ նուազեցուցանէ զայն, որում արդէն իսկ է պարտական ։ Տայ զժամանակաւոր բարիս ․ զբաղեցուցանէ զմարդն զի մի լինիցի երբեմն պարապորդ, և այնու լինիցի ընդ չար գործոց ․ սովորեցուցանէ ՚ի բարի գործելն․ հեշտացուցանէ զմիտս ․ հանդարտեցուցանէ զարմատ ցանկութեան ․ և սանձահարէ զհոսումն մեղաց ։ Յետ այսորիկ գիտելի է՝ զի ոչ ինչ բարի լինիցի առանց հատուցման ․ և ոչ ինչ չար առանց պատժոյ ։

Յա-

Յաղագս բաժանմանց առաքինութեանց ։

Գլ. ԺԶ.

Առաքինութիւնքն ըստ մաքրօբիոսի՝ ասին չորք . երբեմն քաղաքականք . երբեմն մաքրողականք . երբեմն մաքրեալ հոգւոյն . և երբեմն օրինակականք ։ Արդ՝ զառաջինսն ուսուցանէ սաղոմոն 'ի գիրս առակաց . զերկրորդսն 'ի ժողովողին . զերրորդսն 'ի յերգսն . զչորրորդսն ընթեռնումք 'ի յա̅ծ ։ Քանզի քաղաքականք ասին . ըստ այնմ որ կառավարեն զկեանս մարդկային ըստ արտաքին գործոց , և ըստ որում պատերազմին ընդդէմ մոլութեանց ։ Մաքրողականք ասին՝ ըստ այնմ որ արդէն իսկ են 'ի յաղթութեան մոլութեանց , և նկատեն մասամբ ինչ 'ի ներքս , և մասամբ ինչ յարտաքս ։ Մաքրեալ հոգւոյ ասին , յորժամ ընդ յաղթելն մեղաց , և ընդ ստանալն առաքինութեանց հանգչին՝ ուր ուրեմն յանձնելով առաջին շարժմանց ։

Օրինակականք ասին՝ որք կային 'ի միտս ա̅ծային . քանզի նախագաղափարք առաքինութեանց՝ են 'ի յա̅ծ . և նա է ճշմարիտ օրինակ ամենեցուն ։ Իսկ արիստոտել՝ բաժանէ զառաքինութիւն 'ի յիմացականս , և 'ի սովորականս ։ Զիմացականսն բաժանէ 'ի յիմաստութիւն . 'ի յիմացութիւն , և 'ի խոհեմութիւն ոգւոյ . և այսոքիկ երեքեանս կարգաւորեն զմիտս առ ա̅ծ . քանզի իմաստութիւն կառավարէ զախորժակն . իմացութիւն զիմացումն . իսկ խոհեմութիւն՝ զերկաքանչիւրն ։ Քանզի խոհեմութիւն ոգւոյ՝ կառավարէ զխոկմունս . և զախորժմունս ։ Իսկ զսովորական առաքինութիւնն՝ բաժանէ 'ի համեստութիւն , և 'ի յառատաբաշխութիւն ։ Այսոքիկ երկոքեանս՝ շարակարգեն զմիտս առ մարդիկ . զի համեստութիւնն կարգաւորէ զմարդն որ քան առ իւր ինքն . իսկ առատաբաշխութիւնն , որ քան առ ընկերն ։ Դարձեալ՝ վարքական առաքինութիւն բաժանի 'ի բարոյական , 'ի տնտեսական , և 'ի քաղաքական ։ Որոց առաջինն ուսուցանէ զբարս , ըստ որում առ ինքն միայն . երկրորդն՝ կարգաւորէ զընտանիսն . երրորդն՝ կարգաւորէ զքաղաքս , և զթագաւորութիւնս ։ Շուրջ զառաքինութիւնս զայն ինչ գիտելի է զի թէպէտ մի է հաճոյարար շնորհ հոգւոյն . սակայն եօթն են առաքինութիւնք՝ որովք կատարելին կեանք մարդկան , այսինքն , երեք աստուածայինք . և չորք կարդինալականքն : Ա Եւ թէպէտ առաքինութիւնքս այսոքիկ են հաճոյականք 'ի ձեռն տեսակաւորողի շնորհացն Աստուծոյ , սակայն կարեն լինել անտեսակ՝ 'ի ձեռն մեղաց , և դարձեալ տեսակաւորիլ ապաշխարութեամբ ընդգալն շնորհաց , որ է սկիզբն , վախճան , և տեսակ ունակութեանց առաքինութեան : Այլ ենթ կանոնաց այսոցիկ՝ ոչ պարփակի սէրն , որոյ կարէ լինել անտեսակ՝ որպէս այլք առաքինութիւնք . վասն զի նա է տեսակ առաքինութեանց : Քանզի յորժամ ունակութիւնք այլոց առաքինութեանց կալեալ լինին առանց շնորհի և սիրոյն , 'ի յորս կայանան կեանք առաքինութեանց , յայնժամ են անտեսակք . այլ ընդ գալ շնորհին 'ի վերայ , տեսակաւորին գեղեցկանան , և լինին ընդունելիք Աստուծոյ : Ուստի անտեսակ առաքինութիւնքն են որպէս զգոյնս 'ի խաւարի . որպէս զշիջեալ ածուխ , որպէս զչորացեալ ծառս . և որպէս զթևս մեռեալս . որպէս ոսկի մթացեալ՝ և որպէս զակունս փոխեալ 'ի քարինս : Իսկ տեսակաւորեալ առաքինութիւնքն՝ են որպէս գոյնք երևեալք 'ի լոյսն՝ և հաճոյ աչաց հայելոյ . և որպէս բորբոքեալ կայծակունք . և որպէս ծառք կանանչացեալք . և որպէս թևք կենդանիք և զօրեղք . որպէս ոսկի փայլեցեալք . և որպէս ակունք պատուականք զարդարեալ զանօթս ոսկեղէնս : Այլ արդ՝ զանազանութիւն է 'ի մէջ առաքինութեանց , հրամանաց , պարգևաց , պտղոց , և երանութեանց : Զի առաքինութիւնքն կարգաւորեն զզօրութիւնս . հրամանքն՝ հային 'ի գործս . պարգևքն՝ յաւելուն գործոց զկատարելութիւն . պտուղքն՝ տան զիշխանութիւն ոգւոյ , և կամ ճաշակելեացն զհոգևոր համս : Իսկ երանութիւնքն՝ համազուգեն առաքինութեանց զվարձն , կամ ըստ յուսոյ՝ որպէս 'ի ճանապարհի աստի կենաց , և կամ ըստ իրին , որպէս 'ի վերին գաւառին : Է՛ և այլ զանազանութիւն . զի առաքինութիւնք՝ գործեն բարեպէս . պարգևօքն՝ դիւրապէս . երանութիւնքն՝ կատարելապէս . և պտուղքն՝ զմայլելիք յոյժ :

Յա-

Յաղագս զանազանութեանց ա̄ծային առաքինութեանց, և կարտինալականաց ։ Գլ. ԺԷ.

ԶԱնազանութի ա̄ծային առաքինութեանց, և կարտինալականացն՝ է այս. զի ա̄ծային առաքինութիւնքն կարգեն առ վախճան. այլ կարտինալականքն առ այնս, որք են առ վախճան ։ Է՛ և այլ զանազանութի. զի վախճան, և յառաջադրեալն ա̄ծային առաքինութեց՝ է ա̄ծ. իսկ կարտինալականաց վախճան է ա̄ծ, այլ ոչ յառարկայես յառաջադրեալ ։ Դարձեալ՝ ա̄ծային առաքինութիւնքն շարժեն 'ի գործս՝ ըստ բանից ունելոց յա̄ծային իրաւանցն. իսկ կարտինալականքն յիրաւանց բնականաց ։ Դարձեալ՝ ա̄ծային առաքինութիւնքն նկատին 'ի ներքին գործս, իսկ կարտինալականքն 'ի յարտաքին ։ Դարձեալ՝ ա̄ծային առաքինութիւնքն կալեալ լինին հեղմամբ. իսկ կարտինալականքն ստացմամբ ։ Դարձեալ՝ ա̄ծայինքն՝ ոչ կարեն ունել առանց պարգևաց, այլ կարտինալականքն կարեն ունել առանց պարգևաց ։ Դարձեալ՝ ա̄ծայինքն՝ են ընտրողականք ներգործութեց որք առ ա̄ծ. իսկ կարտինալականքն՝ գործոց որ առ ընկերն ։ Դարձեալ՝ 'ի յա̄ծայինս է այսպէս. զի ունակութիւնքն ծնանին զներգործութիս. իսկ 'ի կարտինալականսն՝ անդրադարձեալ, զի անդ ներգործութիւնքն ծնանին զունակութիս, ըստ որում ասէ փիլիսոփայն՝ թէ որպիսիք են ներգործութիւնք, նոյնպիսիք են և ունակութիւնք ։ Ա

Յաղագս ա̄ծային առաքինութեանց առ հասարակ ։

Գլ. ԺԸ.

ՀՈգին ըստ վերին մասին 'ի յոր կայանայ պատկեր երրորդութե. ուղղեալ լինի երիւք առաքինութբք ա̄ծայնովք ։ Ծննդ. 1.26.

Ուստի ո̄պ պատկեր ստեղծողին կայանայ 'ի յերրորդութե անձանց՝ և 'ի միութե էութեան. այսպէս և պատկեր վերստին ստեղծման կայանայ 'ի յերրոր-

դութի ունակութեանց , և 'ի մտութի շնորհին : Արդ՝ այսոքիկ երեք ունակութիւնք առաքինութեանս վերածի հոգին 'ի ծայրագոյն երրորդութիւն, ըստ երից յատկացելոց երից անձանցն , այնպէս՝ մինչ զի հաւատոյն ուղղէ 'ի ծայրագոյն ճշմարիտն հաւատալով , և հաւանելովն . և յոյսն՝ 'ի ծայրագոյն բարձրն՝ յենլովն՝ և սպասելովն : Իսկ սէրն 'ի ծայրագոյն բարին՝ բաղձալովն՝ և սիրելովն : Այլ և արդ՝ աստուածային առաքինութիւնքս զանազանին 'ի միմեանց բազում կերպիւ : Նախ՝ ըստ յատուկ գործոյն . քանզի հաւատն տայ հաւանիլ Աստուծոյ . և յոյսն՝ ապաստան լինիլ յԱստուած . իսկ սէրն սիրել զԱստուած : Երկրորդ՝ տարբերին 'ի կողմանէ ենթակային . քանզի հաւատն է՝ 'ի բանականն . յոյսն՝ 'ի ցասմնականն . և սէրն՝ 'ի ցանկականն . սակայն յոյսն և սէրն , են 'ի կամքն . այլ վասն համանմանութեան գործոց նոցա ընդ գործոց ցասմնականին , և ցանկականին , ասին գոլ 'ի նոսա : Երրորդ՝ զանազանին 'ի կողմանէ յառաջեդելոյն . քանզի հաւատն է առ ճշմարիտն . յոյսն՝ առ բարձրն . և սէրն՝ առ բարին :
Ա Չորրորդ՝ 'ի կողմանէ ներգործութեանց . քանզի հաւատն՝ 'ի ներկայս հետևի Աստուծոյ . յոյսն մինչև յերկինս ընկերակցի . իսկ սէրն մշտնջենաբար գիրկս արկանէ : Հինգերորդ՝ 'ի կողմանէ ճանաչման , զի հաւատովն Աստուած ճանաչեալ լինի որպէս ճշմարտութիւն , յուսովն ստացեալ լինի որպէս զյաւիտենականութիւն . և սիրովն սիրեցեալ լինի որպէս զբարութիւն :

§ Յաղագս հաւատոյ : Գլ. ԺԹ.

եբր. 11. 1. Հաւատն՝ ըստ առաքելոյն է գոյացութիւն յուսացելոց իրաց՝ և յանդիմանութիւն որոց ոչն երևին : 'Ի սահմանս այս՝ գոյացութիւն եդեալ լինի 'ի տեղի հիման՝ որ կայանայ 'ի ներքոյ հոգևոր շինուածոյ որ է շնորհն , և փառքն :

Քանզի հաւատն իսկ առնէ զյուսացեալ իրն՝ կերպիւ ինչ կայանալ 'ի մեզ շնորհօք . և յետոյ արասցէ զայն կայանալ փառօք : Եւ կամ վասն այսորիկ ասի թէ հաւատն է հիմն շնորհաց , և փառաց , զի նա է առաջին ունակութիւն առաքինութեանց :
Առաջին ասեմ , ոչ ժամանակաւ , այլ բնութեամբ :

Յուսացելոց իրաց ասի. զի հաւատն հաւանութիւն առնէ 'ի մեզ կայանալ զյուսացեալ իրսն :

Յանդիմանութիւն ասի՝ զի առարկէ մտացն. վասն զի հաւատն խոնարհեցուցանէ զիմացականն առ 'ի հաւատալ զայնս՝ որք ոչն երեւին. վասն որոյ հաւատն՝ առնել ասի առարկութիւն, քան եզրակացութիւն. զի հաւատն հաստատէ զոչ երեւելիսն գոլ. և ինքն ոչ հաստատի : Որք ոչն երեւին՝ ասի. զի հաւատն իւրով լուսով, և պայծառութիւն յայտնէ զայնս, որք ոչն երեւին. եթէ զներկայն. եթէ զանցեալն. և եթէ
զապառնին : Զանցեալն՝ զի ըստ առաքելոյն հաւատով եբր. 11.
իմանամք կազմեալ զաշխարհս : Եւ զներկայս, 3.
զի ասէ օգոստինոս. տացուք ինչ այնմ կարել, և մեզ մատ. 16
ոչ իմանալ : Իսկ զապառնիսն՝ զի հաւատով հաւատամք 9.
զյարութիւն մեռելոց, և զայնպիսիս : 1. կոր.

Արդ՝ հաւատն ասի բազում կերպիւ : 15.22.

Նախ՝ հաւատն է ունակութիւն տեսականաւորեալ սիրով 1. թես.
բանաւորին մտաց առ 'ի հաւատալ. յորմէ ասի 'ի գործոցն՝ 4.13.
թէ հաւատն սրբէ զսիրտս մարդկան : գործ.

Երկրորդ՝ որակութիւն անտեսակ, յորմէ ասէ յակոբոս, 15.9.
հաւատք առանց գործոց մեռեալ է : յակ. 2.

Երրորդն է՝ շարժումն հաւատոյ. յորմէ ասէ օգոստինոս՝ 20.
հաւատն է հաւատալ՝ զորս ոչ տեսանես : մատ. 8.

Չորրորդ՝ հաւատն է դիւրութիւն հաւատալոյ, որպէս ասէ 10.
մատթէոս. ոչ գտի այնպիսի հաւատս յիսրայէլի : մատ.

Հինգերորդ՝ հաւատն է ջերմեռանդութիւն հաւատոյ. 15.28.
յորմէ ասաց Տէրն՝ ով կին դու, մեծ են հաւատք քո : Վեցերորդ՝ հաւատն է առարկան հաւատոյ, զորմէ ասէ աթանաս. այս է հաւատ ուղղափառ. զի հաւատայցեմք, և դաւանիցեմք : Քանզի որպէս յայլս գիտութիւնս, ոմանք են նախընթացք, որպէս ենթադրութիւնք. և ոմանք հետեւեալք, որպէս եզրակացութիւնք. և ոմանք իբր միջինք, որպէս, նախադասութիւնք որք հաւատոյն. այսպէս և 'ի վարդապետութեան հաւատոյ, ոմանք են ըստ կերպի ենթադրութեանց, որպէս այնք՝ որք են յիրաւանց բնականաց. և ամենայն նախընթացք առարկանք հաւատոյ, այսինքն, զի սուրբ գիրք է շարադրեցեալ և մեկնեցեալ ներշնչմամբ ոգւոյն սրբոյ. և թէ ճշմարիտք են զոր ինչ Տէրն խօսի 'ի գիրս սուրբս, սրբովք իւրովք :

Ոմանք են ըստ կերպի եզրակացութեանց. որպէս այնք՝ որք վերաբերին առ բարս. որպէս, ոչ է պոռնկելի.

պոռնսպանանելն է մահացուցանի մեղք, և սոյնպիսիք ։ Ոմանք են ըստ կերպի նախադասութեանց՝ որպէս են առաձանք հաւատոյ ։ Նաև ծանիր՝ զի հաւատն է իբր զմէջ, ՚ի մէջ Թմրելութե՟, և գիտութե՟. զի Թմրելութին, կամ կարծիքն՝ հակամիտէ առ մի կողմն հաւատութեան զանգիտելով ՚ի միւս կողմանէ, և Թարց ճանաչման պատճառին ։ Այլ հաւատն հակամիտէ ՚ի մի կողմն հաւատութե՟, առանց զանգիտելոյ ՚ի միւսոյն, և Թարց ճանաչելոյ պատճառին ։

Իսկ գիտութիւն՝ հակամիտէ ՚ի մի կողմն հաւատութե՟, Թարց զանգիտելոյ ՚ի միւսոյ կողմանէ՝ հանդերձ ճանաչմամբ պատճառին, և հարկաւոր միջոցօք, այսինքն, ապացուցութեամբ ։ Աստի գիտութիւնն է հարկաւորաց. և ըստ այսմ յայտ է՝ Թէ հաւատն հաղորդի ընդ երկոցունց, այսինքն, ընդ կարծեաց, և ընդ գիտութե՟ ։ Արդ՝ առ ՚ի կատարելութի՟ հաւատոյն վերաբերին՝ եօԹն իրք ։ Նախ՝ զի լինիցի յեցեալ ՚ի յառաջին ճշմարտութիւն, որպ՟ հաւատն մովսիսի, որ ուրացաւ
եբր. 11. զինքն լինել որդի դստեր փարաւոնի. առաւել ընտրեաց
24. չարչարիլ ընդ ժողովրդեանն այ՟, քան ունել
եկի. 2. 11 զժամանակաւոր ուրախութի՟ մեղացն ։
ղուկ. Երկրորդ՝ զի լիցի տեսակաւորեալ սիրով, որպ՟ մա-
7. 47. րիամու մոգդաղենացւոյն զոր փրկեաց հաւատն, և որում Թողան մեղք բազումք, զի յոյժ սիրեաց ։
Երրորդ՝ զի լինիցի ջերմեռանդ, որպ՟ կնոջն այն որում
մատ. 15. ասաց Քս՟, ով կին դու՝ մեծ են հաւատք քո ։
28. Ա Չորրորդ՝ զի լինիցի հաստատեալ բարի գործովք, որպ՟
գործ. կուռնելիոսին ։ Հինգերորդ՝ զի լինիցի հաստատեալ
10. 2. արիութե՟. որպէս հաւատն ստեփաննոսի, և լօրեն-
գոր. 6. 5 ցիոսի, և այլոց մարտիրոսաց, որք հաւատով զօրա-
եբր. 11. ցան ՚ի պատերազմի ։ Վեցերորդ՝ զի լիցի զարդարեալ
34. հնազանդութե՟, որպէս հաւատն աբրահամու ։
ծնն. 12. Եօթներորդ՝ զի լիցի նուաճեալ խոնարհութե՟, որ-
4. պէս հաւատն երանուհւոյ կուսին, որ ասաց՝ ահաւա-
ղուկ. սիկ կամ աղախին Տն՟ ։ Եւ ծանիր՝ զի հաւատն առա-
1. 38. ւել յենու ՚ի վկայութիւն սբ՟ գրոց, քան ՚ի յառար-
յօհ. 6. 45 կութիւն բանականին. զի ասէ գրիգոր՝ հաւատն այն
Բ ոչ ունի զվարձ, որոյ մարդկային բանն տայ հմտանեալ բանականապէս ։ Քանզի Թէպէտ հաւատն հաստատի բնական առարկութե՟, սակայն ոչ այնպիսեօք. նաև ոչ գտանի ներհակութե՟ պարտի որ հաւատալ ընդդէմ հաւատոյն, որպէս յայտ է ՚ի տէրունական մար-

մարմնոյն · ուր տեսանելիքն , ճաշակելիքն , հոտոտելիքն , և շօշափելիքն , առեն զայն գոլ հաց՝ և գինի · այլ հաւատն ասէ՝ գոլ մարմին և արիւն Տ՟ն մերոյ Յ՟ի Ք՟ի ։ Ուստի ասէ օգոստինոս . զոր ինչ իմանամք , պարտիմք տալ բանականին · և զորինչ հաւատամք , պարտիմք տալ վկայութ՟ե սրբոց գրոց · և զորինչ կարծեմք , պարտիմք տալ սխալմանն ։

Այդ գիտելի է՝ զի կրկին է ճանաչումն որ զա՟յ , այսինքն , բնական , և պատահական · նա և բնական ճանաչումն է երկեակի ։ Մինն յառաջքան զմեղանչելն, որով մարդն ճանաչէր զա՟ծ 'ի ստեղծուածս յայտնապէս · և միւսն յետ մեղանչելոյն , և այս է հայելեաւ, և 'ի շամանդաղս ։ Իսկ պատահականն է եռակի ։

Առաջինն է՝ ստացեալ՝ բնական առարկութ՟բ , զոր ունէին իմաստունք · և այն ասի գիտութի ։

Երկրորդն է՝ որ ունեցեալ լինի վկայութ՟բ ս՟բ գրոց, և սքանչելեօք · և ճանաչումն այս ասի անտեսակ հաւատ ։ Երրորդն է՝ որ կալեալ լինի հեղմամբ հաճոյարար շնորհաց · և այս ասի տեսակաւորեալ հաւատ · և այսպիսի ճանաչմամբս հաւանի հոգին առաջին ճշմարտութ՟ե վասն նորին իսկ , և 'ի վեր քան զա՟մ ։ Ուստի ընդ գալն սորին՝ կորնչին ա՟մ պատահականք ճանաչմունք գոնեայ լոյս ներգործութեան ։

Քանզի յորժամ այլք ճանաչմունք գան 'ի հոգին , յայնժամ հաւատն իբրև զարաղագոյն՝ խափանէ զշարժումն ամենեցուն ։ Դարձեալ քանզի հաւատն է զոչ երևելեաց , և դժուարին է հաւատալ զայդոնեաց · նմին իրի՝ երկու ինչ հարկաւոր է առայն՝ զի հաստատապէս հաւատասցի ։ Առաջինն է՝ լուսաւորութի ճշմարտութ՟ե , որ բարձրացուցանէ զհոգին ։ Երկրորդն է՝ ուղղելութի սուրբ գրոց որ հաստատէ, և ներկրթէ զհոգին · որոց առաջինն է հաւատով · երկրորդն՝ ս՟բ գրովք արտակացուցեալ 'ի յոգւոյն սրբոյ ։ Ապաւրեմն վկայութիւն ս՟բ գրոց՝ է առաջին հիմն հաւատոյ · և հաւատն հաւանի ս՟բ գրոց վկայութեանն ։ Իսկ երկրքեանն է Ք՟ի , վասն որոյ ասի ճառագայթ , և բան · զի զմիտս լուսաւորէ հաւատով , և զճշմարտութին ցուցանէ վարդապետութ՟բ ։ եբր. 1.3

Նա և այս ինչ գիտելի է , զի մի միայն է հաւատն , 'ի յանցեալն , 'ի ներկայս , և 'յապառնիս · Թէպէտ առաւել յայտ և բացայայտեալ իցէ 'յայնոսիկ՝ որք հետևեին Ք՟ի , քան 'ի յայնս՝ որք յառաջագոյն քան զգա- յոհ. 10. 43.

լուստ

լուսոյ նորա · որպէս և նոր կատարման է՛ յառաջագոյն քան զհինն ։ Քանզի զոր ինչ մեք հաւատամք եղեալ, հնագոյնքն հաւատային լինելոց · բայց 'ի յառաջծանուցն որք տակաւին միայն կատարելիք · որպէս է՝ յարութիւն մեռելոց , և վերջին դատաստանն , հատուցումն արդարոց , և պատիժ ամբարշտաց ։

Յաղագս ներգործութեան հանճարոյ ։

Գլ. Ի.

Հանճարն զբազում բարութիւս առնէ մարդոյն , այսինքն ։

Ղուկ. 7. 50. Փրկէ , ուստի ասացաւ մագդաղենացւոյն · հաւատք քո կեցուցին զքեզ ։

Ա

Գործ. 15. 9. Մաքրէ զմիտս , ուստի ասի 'ի գործոց , հաւատովք մաքրել զսիրտս ։

Եբր. 11. 33. Մարտնչի ընդդէմ աշխարհի · որպէս ասի առ եբրայեցիսն՝ որք հաւատովք պարտեցին զթագաւորութիւնս ։

Մատ. 15. 28. Առնու զոր ինչ խնդրէ , ըստ այնմ՝ ով կին դու՝ մեծ են հաւատք քո · եղիցի քեզ որպէս և կամիս ։

Հռոմ. 11. 20. Տայ զյարամնայութիւն , որպէս ասէ առաքեալն · իսկ դու հաւատով կաս ։

Եբր. 11. 24. Խոտէ զժամանակաւորս , որպէս ասէ եբրայեցւոց · հաւատով մովսէս իբրև եղև մեծ , ուրացաւ զինքն լինիլ որդի դստերն փարաւոնի ։

Հռոմ. 4. 3. Արդարացուցանէ՝ ըստ առաքելոյն · հաւատաց աբրահամ , և համարեցաւ նմա յարդարութիւն ։

Յոհ. 20. 10. Երանելի առնէ , ըստ այնմ , երանի որք ոչ տեսանեն , և հաւատասցեն ։

1. Կոր. 3. 12. Այլ արդ՝ 'ի վերայ հիման հաւատոյն , ոմանք շինեն ոսկի խոկման , զի որ խոկայ առանց հաւատոյ , իբր թէ ջանայ տեսանել զարեգակն թարց աչաց ։

Ոմանք զարծաթ քարոզութեան , զի որ քարոզէ առանց հաւատոյ , ոչ խօսի զբան հաւատարիմ որ ըստ այ ։

Ոմանք զականս պատուականս բարի գործոց , զի որ գործէ զբարիս առանց հաւատոյ , նման է այնմ որ առնէ զշինուած 'ի վերայ աւազոյ ։ Դարձեալ ոմանք շինեն զփայտ , այսինքն , զբորբոքեալ սէր ժամանակաւորաց ։ Ոմանք խոտ , այսինքն , զծուխ մարմնական հեշտութեանց ։ Այլք՝ եղէգ , այսինքն , զդատարկարանութիւն, և զանկար գործս ։ Այդ՝ այսպիսի փրկին արդեամբք հիմանն հաւատոյ, սակայն այնպէս՝ իբր թէ հրով քաւարանին, զի այրեցի շինուածն, որոց յարմարեցին այնմ հիման ։ Դարձեալ հաւատն ունի զներգործութիւնս ոմանս էականս, և նախկինականս, որպէս է՝ առնելն որդիս այ, և արժանաւորս կենացն յաւիտենից, և նմանս այ, և մաքրել զհոգին ՚յաղտեղէ մեղաց, և անհնազանդութենէ ․ և ներգործութիւնքս այսպիսիք են յայ ։ Ունի և զայլս ներգործութիւնս կամաւորականս, և երկրորդականս ․ որպէս են՝ հաւատալն, և ուղղելն զգործս այլոց առաքինութեանց, և հրամայել ամենեցունց ըստ իւրոց եղանակի ։ Բ. յոհ. ա. 12

Եւ ներգործութիւնքս այսպիսիք են 'ի յանձնիշխանականէն ։ Գ.

Յաղագս աստիճանաց հաւատոյն ։ ԳԼ. ԻԱ.

Եթէ նկատեսցի առ այնոսիկ որք արարին զհաւաքումն հաւատոյ ․ յայնժամ են երկոտասան աստիճանք, ըստ թուոյ երկոտասան առաքելոցն ։ Իսկ եթէ նկատեսցին առ այնս՝ որք են իբրև արմատք հաւատալեաց, յայնժամ են չորեքտասան աստիճանք ․ որոց եօթն վերաբերին առ ածութիւն ․ և եօթն առ մարդեղութիւն Քի ․ և այսպիսիկ նշանակեցան 'ի յեօթն աստեղս, և 'ի յեօթն աշտանակս ոսկիս, որոց մէջ շրջէր որդին մարդոյ ․ որպէս յայտ է 'ի տեսիլն առաջին գլուխն ։ յայտ. ա. 13.

Այդ՝ եօթն աստիճանք հաւատոյ որք վերաբերին առ ածութիւն, են այսպիսիկ ․ առաջինն է՝ մի գոլ ած, որ նշանակի անդ՝ հաւատամք 'ի մի յած ։ Երկրորդ՝ զհայր գոլ ած ․ անդ՝ ուր ասէ՝ հայր ամենակալ ։ Երրորդն՝ զորդին գոլ ած ․ անդ՝ ուր ասէ, և 'ի Յս Քս որդին միածին ։ Չորրորդն՝ զհոգին սբ գոլ ած ․ անդ՝ ուր ասէ, հաւատամ զհոգին սբ ․ և որպէս յայտ է թէ չորեքկին աստիճանքս են զմիութէ ածային էութեանն, և զերրորդութէ անձնաւորութեանց ։ Հինգերորդն է՝ հաւատալ զարարչութիւն իւրոց ամենից գոլ յայ ․ անդ՝ ուր ասէ՝ զարարիչն երկնի, և երկրի ։ Վեցերորդն է՝ հաւատալ զթողութիւն մեղաց այնց՝ որք են յեկեղեցւոջ, այնու, որ Ա.

տալ, և 'ի կաթուղիկէ ու͞ղ եկեղեցի՝ հաղորդութիւն
սրբոց, թողութի մեղաց: Եօթներորդն է՝ հաւատալ
զյարութի մեռելոց. անդ՝ ուր ասէ, յարութիւն
մարմնոց. և բարեաց հատուցումն (ընդ որում պարունակի
և պատժումն չարեաց) անդ՝ ուր ասէ, 'ի դատաստանն
Բ յաւիտենականն: Եւ այս երեք վերջինք աստիճանքս՝
վերաբերին առ ա͞ծութին. զի ա͞ծային զօրութեն
լինի անեղծումն, և թողութի մեղաց՝ որ է
կենդանութի հոգւոց. և յարութի մարմնոց, նա և
հոգւոյն, և մարմնոյն փառաւորութի:

Իսկ այլք եօթներկին աստիճանքն՝ որք վերաբերին
առ մարդեղութին Ք͞ի, են այսոքիկ:

Առաջինն է՝ հաւատալ յղացեալ գոլ զորդին ա͞յ 'ի
յհոգւոյն սրբոյ՝ անդ՝ ուր ասէ, որ յղացաւ 'ի
յհոգւոյն սրբոյ: Երկրորդն է՝ զորդին ա͞յ ծնեալ
ղուկ. 1. 'ի կուսէն, անդ՝ ուր ասէ, ծնեալ 'ի մարիամայ կուսէն:
31 և 2. 7. Երրորդն՝ զորդին ա͞յ վասն մեր մեռեալ 'ի խաչին.
անդ՝ ուր ասէ, չարչարեցեալ 'ի ներքոյ պոնտացւոյ
պիղատոսի. խաչեցեալ, մեռեալ, և թաղեցեալ:
յոհ. 19. Չորրորդն է՝ զորդին ա͞յ իջեալ 'ի դժոխս ընդ
30. հոգւոյ. անդ՝ ուր ասէ, էջ 'ի դժոխս:
եփես. 4. 9 Հինգերորդն է՝ զորդին ա͞յ յարուցեալ. անդ՝ ուր
մարկ. ասէ, յերրորդ աւուր յարեաւ: Վեցերորդն է՝ զնոյն
16. 19. ելեալ առ 'ի հաւասարութի հօր. անդ՝ ուր ասէ,
մատթ. 16 նստաւ ընդ աջմէ հօր: Եօթներորդն է՝ որդւոյն ա͞յ
27 և 25 դատել զաշխարհս, և զչարս. անդ՝ ուր ասէ, դատել
31. զկենդանիս, և զմեռեալս: Արդ՝ չորեքտասան աստիճանքս
այսոքիկ ժողովին 'ի հանգանակէ հաւատոյն
զոր արարին առաքեալքն: Զառաջինն և զերկրորդն,
որք վերաբերին առ ա͞ծութին, արար պետրոս:
Զերրորդն՝ անդրէաս: Զչորրորդն՝ բարդուղիմէոս:
Զհինգերորդն՝ սիմոն: Զվեցերորդն՝ թադէոս:
Զեօթներորդն՝ մատաթիաս: Դարձեալ՝ զառաջին
աստիճանն վասն մարդեղութեն Ք͞ի. եդ յակոբոս
զեբեդեայ: Զերկրորդն՝ և զերրորդն՝ յոհաննէս:
Զչորրորդն՝ թովմաս: Զհինգերորդն՝ մատթէոս:
Զվեցերորդն՝ յակոբոս ալփեայ: Զեօթներորդն՝
փիլիպպոս: Բայց արդ երեք են հաւաքումն հաւատոյ:
Առաջինն է՝ առաքելոցն: Երկրորդն է՝ ժողովոյն
նիկիոյ: Երրորդն է՝ աթանասի:

Առաջինն է՝ առ ուսումն հաւատոյ: Երկրորդն՝ առ
'ի մեկնութի հաւատոյ: Երրորդն՝ առ 'ի ջատագո-

վու.

վութիւ հաւատոյ: Իսկ ծանիր՝ զի այլ է հաւատալ զա՟ծ. հաւատալ 'ի յա՟ծ՝ և հաւատալ ա՟յ:
Քանզի հաւատալ զա՟ծ, է՝ հաւատալ գոլ զնա. և հաւատալ 'ի յա՟ծ, է՝ հաւատալ և սիրել զնա, և ընդ հաւատոյն երթալ առ նա. և միաւորիլ ընդ անդամս նր՟: Իսկ հաւատալ ա՟յ, է՝ հաւատալ բանից նր՟:

Յաղագս յուսոյ: Գլ. ԻԲ.

Յոյսն է առոյգ ակնկալութիւն հանդերձեալ երանութեան, յուսացեալ 'ի շնորհացն ա՟յ, և 'ի յառաջ արդեանցն:
Ա. 'Ի առաքինութեանս այսմ ոչ առեալ լինի ապացուցական ստուգութիւն, 'ի յորում՝ լիապէս և 'ի հարկէ լինի հաւանութիւն միոյ կողման. այլ ստուգութիւն կարծեաց, որով հաւանեալ լինի մի կողմն, զի երկեւի առաւելութիւն հակառակին, սակայն ոչ անձնեւին, այլ զանգիտելով հանդերձ: Իսկ նախնական պատճառ այսմ ակնկալութեան է՝ շնորհն ա՟յ, և ոչ արդիւնք մեր. զի գործք մեր՝ ոչ են արդիւնաւորք՝ եթէ ոչ՝ ծնանին շնորհիւն: Բայց յուսալ յիր լինել առանց արդեանց, ոչ է յոյս, որպէս ասէ գրիգոր, այլ յանդգնութիւն:
'Ի նախատեսացեալ սահմանս. սահմանի շարժումն յուսոյ. և ոչ առաքինութիւնն: Իսկ առաքինութիւն յուսոյն սահմանի այսպէս. յոյսն է վստահութիւն մտաց, յղացեալ յառատութենէն ա՟յ, ունելոյ զկեանս յաւիտենականս բարի արդեամբք: Իսկ 'ի մէջ հաւատոյն և յուսոյն է այսպիսի զանազանութիւն:
Զի հաւատն է վասն անցելոյն, և հանդերձելոյն. իսկ յոյսն՝ վասն հանդերձելոց միայն:
Դարձեալ՝ հաւատն՝ զբարեաց, և զչարեաց. իսկ յոյսն՝ զբարեաց միայն: Հաւատն է զբարեաց ինքեան, և այլոց. իսկ յոյսն՝ զբարեաց ինքեան միայն:
Սակայն համաձայնին 'ի յայս. զի հաւատն և յոյսն, զոչ երեւելեաց են: Այլ ստուգութիւն յուսոյն ծնանի յերից, այսինքն, 'ի յա՟ծային առատութենէն, և 'ի յլիութենէ արդեանցն, և 'ի նախասահմանականէ յաւիտենականացն: Իսկ ծանիր՝ զի յոյսն որ է ճանապարհորդաց աստի կենաց, է՝ հանդերձ ստուգութեամբ կարծեաց, որպէս ասացաք իսկ: Իսկ յոյսն այնոցիկ որք

'ի քաւարանն, և որք էին 'ի լիմբոսն, էր համդերձ
ստուգութբ̄ գիտութեան, և ոչ կարծեօք, ոպ̄ այնց
որք են 'ի ճանապարհի կենիս. ուստի յոյսն նոցին'
արտուղղի կերպիւ իմն 'ի յատկապէս ասացեալ յասոյն :
Գործ. Իսկ յոյսն որ էր 'ի ստեփաննոս' յորժամ ետես
7. 55. զերկինս բացեալ. և որ էրն 'ի պօղոս. յորժամ ասաց'
2. տիմ. գիտեմ յո՛ հաւատացեալ եմ. և որ էրն 'ի յադամ,
1. 12. յառաջքան զմեղանչելն, էին համդերձ ստուգութբ̄
Ծննդ. տեսութեանն. սակայն կարի իմն ակարագոյն քան
2. 15. զայն' որ 'ի յերկինս : Ուստի յոյսն առեալ ըստ այսմ
օրինակի է' սակաւին անյատկապէս ասացեալ :

Յայսցանէ յայտ է' զի 'ի վերին գաւառն, ոչ գոյ յոյս
վարձուց. զի անդ է երանութի, որ է ստացուած
ամ̄ բարեաց. բոլորն համանգամայն, և կատարեալ :
Ուստի անդ' ոչինչ է ապառնի յոր յուսացեալ լինի :
Եւ թէպէտ սրբոցն դեռևս համդերձելոյ յարութի
մարմնոցն ըստ իրին, սակայն է ներկայ ըստ ճանաչման :
Արդ' յոյսն այնպէս նկատէ զապագայն, զի̄
զրկէ որ քան 'ի ներկայութե իրին, այնքան և ճանաչման'
ըստ որում որ յոյսն' յատկապէս առեալ լինի :
Դարձեալ կրկին է յոյսն, այսինքն, օժանդակութե,
և յատուկ իշխանութե : Զառաջինն' դնելի է 'ի սբ̄.
զերկրորդն միայն 'ի յա̄ծ :
սաղ. 30. Եւ այս է երեքկին, այսինքն, թողութե. ըստ սաղմոսին.
2. 'ի քեզ Տր̄ յուսացայ, մի' ամաչեցից :
սաղ. Շնորհաց, ոպ̄ ասէ սաղմոս. իսկ որք յուսան 'ի Տր̄,
31. 7. ողորմութի Տն̄ շուրջ եղիցի զնոքօք :
առակ. Փառաց. որպէս ասէ յառակսն' որ յուսայ յա̄ծ, փրկեսցի :
28. 25.
Իսկ ներգործութի յուսոյ' է բազմապատիկ :
սաղ. Նախ' զի աղաչէ 'ի ներողութե ըստ սաղմոսին' 'ի քեզ
21. 5. յուսացան հարքն մեր, և այլն : Որպէս և յայտ իսկ է
դան. 3. 'ի շուշան, և 'ի դանիէլ :
23. Երկրորդ' զօրացուցանէ, ոպ̄ յայտ է 'ի մակաբայեցւոցն'
2. մակ. զկնոջէն, որ ունէր զեօթն որդիս, զորս ետես
7. 41. կորուսեալ 'ի միում աւուր. բարի ոգւով տանէր այնմ,
վասն յուսոյն զոր ունէր առ ա̄ծ :
եսայ. Երրորդ' ամբառնայ զմիտս, ոպ̄ ասէ եսայիաս' որք
40. 31. յուսան 'ի տէր, փոխեսցեն զզօրութիս. առնուցուն
զթևս իբրև արծուի :
սաղ. Չորրորդ' փրկէ, ըստ սաղմոսին. որ փրկես զյու-
16. 7. սացեալս 'ի քեզ :

Հինգ.

Հինգերորդ՝ տալ զժամանակաւորս. որպ ասէ սաղմոսն՝ աչք ամենեցուն 'ի քեզ յուսան : սաղ. 144. 15.

Այլ յոյսն նման է բազմաց իրաց, այսինքն, սաղաւարտի, որպ ասէ Թեսաղոնիկեցւոց՝ առեք զսաղաւարտ յուսոյ փրկութե : 1. Թեսա. 5. 8.

Խարսխի յորմէ ասէ եբրայեցւոց, զյուսոյն զոր իբրև զխարիսխ ունիմք : եբր. 6. 19.

Դեղոյ՝ ըստ սաղմոսին՝ որ ասէ, 'ի ՏՐ յուսացայ զի մի՛ եղեց հիւանդ : սաղ. 25. 1.

Ականի յորմէ ասէ առակաց, ակն յոյժ հաճելի ակնկալութն ստացելոցն : առակ. 17. 8.

Մխիթարութե՝ որպ ասէ եբրայեցւոց, ունիմք զզօրաւորագոյն մխիթարութի, որք ապաւինեցաք առ 'ի ունել զյառաջիկայ յոյսն մեր : եբր. 6. 18.

Բանալեաց՝ զի 'ի վերայ սաղմոսին՝ յուսամ 'ի ՏՐ և արա՛, և այլն : Ասէ մեկնիչն՝ յուսով մտանի առ 'ի տեսանել զայն որ հաւատացեալ լինի :

Նա և կենաց փայտին՝ ըստ այնմ որ ասէ, իմաստութե գ̅, Թէպէտ առաջի մարդկան տանջեցան, սակայն յոյս նոցա լի է անմահութե : իմաս. 3. 4.

Յաղագս սիրոյ: ԳԼ. ԻԳ.

Սէրն ըստ առաքելոյն սահմանի այսպէս. սէրն է վախճան պատուիրանաց՝ 'ի սուրբ սրտէ, և 'ի բարի խղճէ մտաց, և յանկեղծաւոր հաւատոյ : 1. տիմ 1. 5.

Եւ ասեալ լինի աստ վախճանն, 'ի տեղի լրման. զի սէրն է լրումն, և կատարումն ամ պատուիրանաց : Նա և կարէ ասել վախճանն կատարումն ամ պատուիրանաց. զի ամ գործք որք են 'ի պատուիրանն, դնին 'ի սէրն. զի նա բան զնա ունեցին : 'Ի սուրբ սրտէ ասէ՝ այսինքն, 'ի մաքուր իմացականէն. և աստ ասեալ լինի իմացականն վասն գործոյ իմանալոյ, 'ի ձեռն որոյ պատճառի շարժումն սիրոյն : Զի որքան որ առաւել իմանայ զԱծ, առաւել սիրէ՝ եթէ ոչ ունիցի զայլ ինչ արգելումն. և ըստ այսմ նախադասութես այս. 'ի ցուցանէ զառնողական պատճառս : Եւ զի ասէ 'ի բարի խղճէ մտաց, այսինքն, 'ի յուսոյ. զի որ ունի զբարի խիղճ մտաց՝ յուսայ անհոգաբար :

Եւ յանկեղծ հաւատոյ՝ սէր՝ այսինքն, ոչ վերերեւոյթ և գեղերեալ, այլ հաստատուն ՚ի մէջ նեղութեան:

Իսկ փրօսիմեր ՚ի գիրս տեսական կենաց, ենթադրէ զսէրն այսպէս. սէրն է ուղիղ կամք, ՚ի յամ երկրաւոր ներկայից յետս դարձեալ. ամենեւին միաւորեալ ընդ Այ անհատապէս. հրացեալ հրով Հոգւոյն սրբոյ՝ յորմէ է, և առ որ բորբոքեալ վերածի. օտար Ա յամ աղտեղութենէ, և անփորձ յապականութենէ. անպարտ ՚յամ մոլութեանց. բարձրացեալ ՚ի վեր քան զամ, որ մարմնապէս սիրեցեալ լինի. քան զամենայն ախորժակս՝ և ս լաւագոյն, ածային խոկմանն տենչացեալ՝ ՚յամի միշտ անյաղթ. վեհագոյն ամ գործոց բարեաց. փրկութիւն բարուց. վախճան երկնաւոր հրամանաց. մահ մեղաց. կեանք առաքինութեանց. զօրութիւն պատերազմողաց. պսակ յաղթութեանց. սպառազինութիւն սբ մտաց. պատճառ բարի արդեանց. վարձ կատարելոց. առանց որոյ ոչոք երբէք հաճոյացաւ Այ, որով ոչոք կարաց անհաճոյանալ Այ. պտղաւէտ ՚ի զղջացեալսն. բերկրալի ՚ի յառաջացեալսն. փառաւոր ՚ի յարամնացեալսն. յաղթօղ ՚ի մարտիրոսսն. գործունեայ յամ հաւատացեալսն. որով կեայ ամենայն գործ բարի: Դարձեալ՝ սէրն ըստ ներգործութեան, սահմանի քառակի:

Նախ՝ այսպէս, սէրն է սիրելութիւն, որով սիրի Ած վն ինքեան, և ընկերն վն Այ, և ՚ի յԱծ:

Երկրորդ՝ այսպէս. սէրն է կեանք, որ միաւորէ զսիրողն ընդ սիրեցելոյն:

Երրորդ՝ այսպէս. ըստ օգոստինոսի՝ սէրն է առաքինութիւն, որով ցանկամք տեսանել զԱծ, և վայելել ՚ի նմա:

Չորրորդ՝ այսպէս՝ սէրն է առաքինութիւն, որով ախորժակ մերոյ հոգւոյ է՝ ամենեւին ուղիղ: Առաջինն ՚ի սահմանացս այսոցիկ, տուեալ լինի նկատմամբ առ Ած. երկրորդն նկատմամբ առ ստացօղն նորին. երրորդն նկատմամբ առ վերջին վախճանն: չորրորդն նկատմամբ սիրեցելոյն, առ սիրեցեալն:

Յաղագս զանազանութեանց սիրոյն ։ Գլ. ԻԳ.

Եռակի է սէրն, այսինքն, հաճոյական, բնական · և մոլեկան ։ Արդ՝ հաճոյական սէրն՝ է գովելի · զի առաքինութիւն է, և ունի վախճան նախկնական՝ զանփոփոխելի բարին ։ Սա բաժանի 'ի սիրելութիւն, և 'ի բաղձանս ։ Ըստ սիրելութեան՝ սիրէ ոք զա՟ծ պարզաբար, ոչ հայելով յօգտութիւն անձին իւրոյ, այլ 'ի բարութիւն սիրեցելոյն · ըստ այսմ եղանակի՝ մարդն առաւել սիրէ զա՟ծ քան զինքն ։ Ըստ բաղձանացն՝ սիրէ ոք զա՟ծ, զի ակն ունի նմա հատուցման իւրոյ ։
Իսկ բնական սէրն՝ ոչ գովելի է և ոչ պարսաւելի · և ունի վախճան զպէտս, և զօգուտն իւր ։ Նմանապէս և սա բաժանի 'ի սիրելութիւն, և 'ի ցանկութիւն ։
Ըստ սիրելութեանն՝ սիրեմք զմեզ, և զկատարելութիւն մեր, և զպահպանութիւն մեր · և առաւել զայնս որք յոյժ են հարկաւորք որպէս է՝ գլուխն, փոխանակ որոյ դնեմք զբոլոր մարմինս · և այս է հասարակ մեզ և անասնոց ։ Իսկ ըստ ցանկութեանն, սիրեմք զա՟ծ՝ զի առատաձեռնէ մեզ զպէտս կարեաց մերոց · քանզի այսու սիրով ոչ սիրի ինքն վասն ինքեան, այլ վասն կիրառման իւրոյ ։ Ուստի ըստ այսմ եղանակի՝ առաւել սիրէ մարդն զինքն բնական սիրով՝ քան զա՟ծ ։ Այլ մոլեկան սէրն՝ է՝ պախարակելի, զի է մեղք · և ունի վախճան զփափկութիւն, կամ զհեշտութիւնս 'ի ստեղծուածն ։ Նա և սէրս այս բաժանի 'ի սիրելութիւն, և 'ի ցանկութիւն ։ Ըստ սիրելութեանն՝ սիրեմք զստեղծուածն՝ կամ զհեշտութիւն ստեղծուածոյն վասն ինքեան · թէպէտ օգուտ ինչ անտուստ առ մեզ ոչ ունիցիմք · իսկ ըստ ցանկութեանն՝ սիրեմք զփափկութիւն ստեղծուածոյն վասն մեր ։ Դարձեալ՝ յոգնակի է սէրն, այսինքն, բնական շուրջ զինքեամբ · գթած առ ծնօղս · զուարթ առ ընկերս · արդար առ բարեկամս · բռնադատեալ առ թշնամիս · և սէր առ ա՟ծ ։ Դարձեալ՝ եռակի է սէրն · բնական, բարոյական, և շնորհական · բնական սէրն է՝ առ ինքն · բարոյականն է՝ առ ընկերն, և շնորհականն առ ա՟ծ ։
Դարձեալ է՝ տարբերութիւն 'ի մէջ սիրոյն բնականի, բա-

բարոյականի, և շնորհականի։ Զի բնական սէրն, որ 'ի լաթինս ասի, ամօռ. է յատկաբար բնութեան. և ստուգաբանի միացումն սրտից. զի հանգուցանէ զբաղձանս՝ յիրում սիրեցելում։ Իսկ բարոյական սէրն, որ 'ի լաթինս ասի, տիլէքցիօ, է սէր ընկերին. և ստուգաբանի կապող երկուց, զի ընկերակցէ զսիրողն ընդ սիրեցելոյն 'ի սէր. որպէս զի փոխաբերաբար սիրեսցեն զմիմեանս։ Իսկ շնորհական սէրն՝ է սէր առ ա՟ծ. սա բացորոշէ զբարեկամ, և տրամանդառ գեր բաղձալի քան զա՟մ. ուստի 'ի լաթինս ասի, քարիթաս, որ ստուգաբանի, երբուն՝ ըղձալի մեծութ՟ի, կամ երբուն՝ առնօղ ըղձալի առ ա՟ծ։ Է՛ և այլ տարբերութ՟ի 'ի մէջ նախասացելոցս. զի բնական սիրով, սիրեմք զա՟ծ վասն ինքեան. և բարոյական սիրով
Բ
սիրեմք 'ի վեր քան զա՟մ վասն իւրոյ բարերարութ՟ե. վասն զի բարոյական սէրն որ 'ի լաթինս ասի տիլէքցիօ, ստուգաբանի եւս ընտրումն զանազանից. իսկ շնորհական սէրն գրկէ զերկաքանչիւրն, այսինքն, զայն որ 'ի վեր քան զա՟մ, և զվասն ինքեանն։

Դարձեալ՝ սիրելն զա՟ծ, յայտնի տարբերի 'ի բարոյական սիրոյ ընկերին, զի սիրելն զա՟ծ է՝ կամիլ նմա զբարին զոր ունի, այսինքն, զինքն ամենակարող, և ծայրագոյն բարի, և սոյնպիսիք։ Դարձեալ սիրելն զա՟ծ է՝ կամիլ պահել զպատուիրանս նորա դիտաւորութ՟բ զմայլելոյ 'ի նմա։ Դարձեալ սիրել զա՟ծ է՝ կամիլն ստանալն զնա, և ստացեալ լինիլ 'ի նմանէ։ Դարձեալ՝ սիրելն զա՟ծ՝ է՝ նախամեծար առնել
Մատ.22 յա՟մ զկամս նորա կամաց մերոց։ Իսկ սիրելն զըն-
39. կերն, է՝ կամիլ նմա զծայրագոյն բարին, ոչ ըստ
Մարկ.12 էութեանն, այլ ըստ շնորհաց։ Դարձեալ՝ սիրել
31. զընկերն՝ է՝ կամիլ, և ոչ կամիլ զնոյն 'ի բարին։
Ղուկ. Դարձեալ՝ սիրել զընկերն՝ է՝ կամիլ նմա միշտ բարի
10.28. յաջողմունս։ Դարձեալ՝ սիրել զընկերն, է կամիլ նմա զայն, զոր ինքեան կամի։ Դարձեալ՝ զանազանութ՟ի է 'ի մէջ սիրոյն ա՟յ, և ընկերին. զի զա՟ծ սիրեմք 'ի յինքն, և վասն ինքեան. այլ զընկերն 'ի յա՟ծ, և վասն ա՟յ։ Արդ՝ յորժամ ասեմք գոլ կրկին սէր, այսինքն, ա՟յ, և ընկերին. կրկնապատկութիւս այս՝ ոչ իմացեալ լինի վասն ունակութեանց, այլ վասն ներգործութ՟եց. զի միով ունակութ՟բ սիրոյ, սիրի ա՟ծ, և ընկերն։

Սէրն՝ երբեմն առնէ զունակութիւն, ըստ առաքելոյն ․ հռոմ.
սէրն այ սփռեալ է 'ի սիրտս մեր ։ 5.5.
Երբեմն նշանակէ զշարժումն, ըստ այնմ որ ասէ երգ երգ. 2.4.
երգոցն, կարգեցայք յիս զսէրն ։
Երբեմն զնշան սիրոյն, ըստ այնմ որ ասէ՝ մեծագոյն յոհ. 15.
սէր ոչ ոք ունիցի, այսինքն, զնշան սիրոյ մեծի ։ 13.
Երբեմն զերրորդ անձն երրորդութեան ․ ըստ այնմ 1. յոհ.
որ ասէ, ած սէր է, և ըստ այսմ առեալ լինի անձ 4.16.
նականապէս ։

Եւ երբեմն առնանի էականապէս ․ և ըստ այսմ բոլոր երրորդութիւն ասի սէր ։

Երբեմն առնանի վասն եռանդեան սիրոյն, ըստ այնմ, թողեալ լիցին նմա մեղք իւր բազում, զի յոյժ սիր ղուկ. 7.
եաց ։ 47.

Յաղագս ներգործութեանց սիրոյն ։ Գլ. ԻԵ.

Սէրն արտաքսէ զմեղս ․ ըստ այնմ՝ թող-
եալ լիցին նմա մեղք իւր, զի յոյժ սիր ղուկ. 7.
եաց ։ 47.
Զօրէնս պահէ ․ ըստ առաքելոյն՝ որ սի հռոմ.
րէ, զօրէնսն կատարէ ։ 13.8.
Զած միաւորէ ընդ մարդոյն, ըստ յո 1. յոհ.
հաննու, որ մնայ 'ի սէրն, բնակեալ է 4.16.
յած, և ած 'ի նմա բնակի ։ 1. կոր.
Զմիտս զարդարէ առաքինութբ, ըստ առաքելոյն ․ 13.4.
սէրն երկայնամիտ է, քաղցրանայ ։
Ածէ 'ի կատարումն՝ ըստ այնմ, ևս գերազանցագոյն Ա
ճանապարհ ցուցանեմ ձեզ ։ 1. կոր.
Շնորհէ զխաղս, ըստ այնմ, եթէ ոք սիրեսցէ զիս, 12.31.
զպատուիրանս իմ պահեսցէ ․ ես և հայր իմ առ նա յոհ. 14.
եկեսցուք, և օթևանս առ նմա արասցուք ։ 23.
Առնէ արժանաւոր սիրոյն այ ․ ըստ այնմ, եթէ ոք
սիրէ զիս ․ սիրեսցի 'ի հօրէ իմմէ ։
Այլ սփռի սէրն 'ի սիրտս մեր՝ յորժամ տարածի առ յոհ. 14.
ընկերն ։ Արտահոսի՝ քաղցրութբ և գործովք ողոր 23.
մութե ․ հեղի 'ի ներքս՝ լուսաւորութբ շնորհացն ․
վերահեղեալ լինի՝ գործովք կատարելութե, և գոր-
ծովք որ 'ի վերքան զհրամայեալն ։ Նա և սիրով եկն
ած առ մարդիկ մարդեղութբ ․ և 'ի մարդիկ բաշխ-
մամբ շնորհաց ։ Սիրով՝ ընթանան մարդիկ առ ած

'ի ձեռն բարի գործոց , և հասանին առ նա փառօք ։
Երգ. 2.5 Դարձեալ՝ սիրոյն է խոցելն , զի թախանձելի լինի մինչև 'ի ներքսագոյնս սրտին . որպէս ասէ յերգսն .
Երգ. 5.8 խոցոտեալ սիրով եմ ես ։ Դարձեալ՝ նորա է հիւանդացուցանելն , և զայս ցանկութե՟ սիրելոյն . որպէս և ասէ յերգսն , պատմեցէք սիրելոյն , զի խանդակաթ սիրով եմ ես ։ Նա և նորա է արբեցուցանել , զի այնպէս զխմէ առ սիրեցեալն , մինչ զի զինքն և զամ՟ ինչ մոռանայ բաց 'ի նմանէ . ըստ այնմ որ ասէ յերգսն՝ արբէք սիրելիք , և արբեցարուք ։
Երգ. 5.1 Դարձեալ՝ նորա է հալելն , զի այնպէս լուծանէ զսիրտն յանծայլին քաղցրութեն . մինչ զի բաղձացօղն ընդ բաղձալւոյն զարմանալի սիրելութե՟ միաւորի ոպ՟ ասէ յերգսն , հոգի իմ հալեցաւ , յորժամ խօսեցաւ
Երգ. 5.6 սիրելին ։ Դարձեալ՝ սէրն ունի զզօրութիւն տարածական 'ի բարեգործութիւնն . միաւորական 'ի սէր ընկերին . ներփոխական 'ի յարդարացուցանելն ։ Դարձեալ այլապէս ցուցանի այս . զի ունի զուժ տարածական , որպէս յայտ է 'ի ստեղծումն իրողութեց . միաւորական , որպէս յայտ է 'ի մարմնանալն Քի . ներփոխական , որպէս յայտ է 'ի փառաւոր յարութի մարմնոց ,

Յաղագս թէ որոց իրաց հաստատի սէրն ։

ԳԼ. ԻԶ։

Սէրն՝ է սկիզբն բարեաց , զի յայ է . մէջ բարեաց , զի ըստ այ է . և վախճան բարեաց , զի վասն այ է ։ Այս սէրն՝ սկիզբն բարի գործոց . զի շարժէ առայն , ըստ գրիգորի որ ասէ , սէրն գործէ զմեծամեծս՝ թէ է . և թէ դադարի 'ի գործելոյն՝ ոչ է սէր ։ Այս և մէջ՝ զի տեսակաւորէ զգործս ։ Այս և վախճան , զի ուղղէ զգործս . և ածէ 'ի պատշաճաւոր վախճան ։ Եւ թէ՝ որպէս ասի սէրն վախճան . գիտելի է , զի երեքկին է վախճան , այսինքն , սպառական . կատարածական . և վախճանական ։ Ըստ առաջին կերպին՝ սէրն է վախճան մեղաց , զի սպառէ զնոսա ։ Ըստ երկրորդին՝
Հռօմ. 13.10. սէրն է վախճան պատուիրանաց , զի կատարէ զնոսա ։ Ըստ երրորդին՝ սէրն է կեանք յաւիտենական , զի

ինքն ա՟ծ է վախճան վաստակոց մերոց. այլ յաւիտենական կեանքն ասի վախճան, որով հանգչի ոք. իսկ ա՟ծ է եզր՝ նորում հանգուցեալ լինի ։ Դարձեալ՝ սէրն ասի տեսակ առաքինութեանց՝ բազում կերպիւ ։ Ա
Նախ՝ զի շարժէ զա՟մ առաքինութիւն առ արտաքին գործսն, որով կատարին առաքինութիւքն, և արժանաւորին անձին ՚ի փառս ։ Երկրորդ՝ զի ա՟մ առաքինութիւք շարժին առ վախճան սիրոյն, այսինքն, առ բարին ։ Զի սէրն ունի զբարին ՚ի տեղի վախճանի, և յառաջեդելոյ. իսկ այլք առաքինութիւնք՝ ունին զբարին ոչ ՚ի տեղի յառաջեդելոյ, այլ ՚ի տեղի վախճանի միայն. և առաքինութեանց վախճանն այն բացայայտէ զկատարելութի՟ ։ Երրորդ՝ զի սէրն աճեցուցանէ զհեշտութի՟ առաքինութեանց, և բառնայ զծանրութի՟, և թեթևացուցանէ զբեռինս՝ վ՟ս ցանկութե՟ նորին ։ Չորրորդ՝ զի կատարէ զհոգին, ոչ ՚ի գոլ բնութե՟, այլ ՚ի գոլ հաճոյական, և արդիւնական ։

Դարձեալ՝ նմանի սէրն բազում իրաց, այսինքն, ոսկւոյ զոր փորձէ բովն նեղութե՟ց ։ իմաս. 3.6.
Սուաւտոտ՝ որում հեծեալ որ յաւիտենականութե՟ ։ երգ. 6.
Նոյեան տապանի՝ յորում որ ոք ոչ գտանեցաւ՝ կորեաւ ։ Ծննդ. 7.23.
Ծառոյ՝ որ վերընձիւղէ զպտուղս բարիս ։ մատ. 7.
Թևոյ՝ որ յերկինս բարձրացուցանէ ։ սաղ. 54.
Կայրաձիւթոյ՝ որ զհոգին միաւորէ ընդ ա՟յ, և ընդ ընկերին ։ յայտ. 12.14.
Բանալեաց՝ որ բանայ զերկինս ։ յայտ. 3.
Պսակի՝ որ զարդարէ զմիտս ։ եկլե. 45
Գլխոյ՝ որ ազդէ զշարժումն և զզգայ՟ն. զի սէրն տայ զզօրութի՟ արդիւնական այլոց առաքինութեանց. և ազդէ զշարժումն առ գործս վարձատրելիս՝ մինչ լուսաւորէ զմիտն որքան առ ա՟ծ ։ եփես. 1.22.
Դարձեալ՝ նմանի ատրընջեան՝ որ լուսաւորէ զմիտս ։ Ծննդ. 1
Փղոսկրեից՝ յորմէ կազմի աթոռ ա՟յ ։ 3. թա. 10
Սուսանի՝ որ քարշէ առ ա՟ծ ։ երգ. 19
Հաստատութե՟՝ որ անջրպետէ զջուր հեշտութեանց, ՚ի ջուրց յաւիտենականութե՟ ։ Ծննդ. 1 7.
Աղբեր՝ որ ոռոգանէ զմիտս ։ Ծննդ. 2
Ական՝ որ պաճուճէ զհոգին ։ առակ. 17
Բոցեղէն սրոյն՝ որ պահէ զդրախտն ։ Ծննդ. 3
Հրոյ՝ որ բորբոքէ զախորժակս ։ ղուկ. 12

Լծոյ՝

մատ. 11 Լծոյ՝ որ քաղցրացուցէ բեռնի :
եկլէ. 39 Կարմրացեալ վարդի՝ որ բուրէ զանուշահոտութիւն :
ելից. 16 Մանանայի՝ որ իջանէ յերկնից :
եսայ. 11. 1. Արմատոյ՝ որ զհիւթ շնորհաց զոր քարշէ, տարածանէ առ ոստս առաքինութ՟ց, զի այնպէս սնանիցին, և պտղաբերեսցին 'ի բարին :
յայտ. 1. Ճառագայթեալ արեգական :
մատ. 13 Գանձի ծածկելոյ :
ովսէ. 11. 4. Կապանաց՝ որ կապէ զմ՟ պատճառաւ սիրելոյ առ սիրեցեալն :
երգ. 5. Գինւոյ՝ որ արբուցանէ :
մատ. 22 Հանդերձի՝ որ ծածկէ զմ՟ զաղտութ՟ի մեղաց :
առա. 27 Օծանելեաց՝ որ բժշկէ զվէրս մահաբերս :

Յաղագս դերազանցութեան սիրոյն : Գլ. ԻԸ.

մար. 12. Սէրն՝ դերազանցէ զայլովք առաքինութ՟բք
31. բազմօք իրօք : Նախ՝ ըստ ա՟ծակերպութե,
1. յօհ. ըստ յօհաննու որ ասէ. սիրեսցուք
4. 10. զա՟ծ, զի նախ նա սիրեաց :
Երկրորդ՝ ըստ յատուկ պատուոյն, զի
ասէ ռիքարդոս, սէրն է գլուխ ա՟մ առաքինութ՟ց :
Երրորդ՝ ըստ պատուականութե, զի է ոսկի սոփերական : Չորրորդ՝ ըստ գեղեցկութեանն. զի է աստղն լուսաբեր՝ և գեղեցկութի հոգւոյ : Քանզի որպէս գեղեցկութի արտաքին մարդոյն՝ է 'ի վայելուչ կարգաւորութե անդամոցն, և 'ի պայծառութե գունոյն, այսպէս և՛ գեղեցկութի հոգւոյն՝ է 'ի վայելուչ կարգաւորութե գործոյն, և 'ի պայծառ ունակութե. քանզի զայս առնէ սէրն 'ի հոգին, որոյ գործքն է կարգաւորեալ, և ունակու-
երգ. 2. 4 թին պայծառացեալ : Հինգերորդ՝ ըստ տանելոյ աշխատութ՟ց, զի ասէ օգոստինոս, զա՟մ ծանունս և զմեծամեծս՝ սէրն առնէ թեթևս : Վեցերորդ՝ ըստ
երգ. 8. 6 ուժեղութե. ըստ այնմ որ ասէ յերգսն, հզօր է սէրն քան զմահ : Եօթներորդ՝ ըստ օգտութե. ըստ այնմ
Ա որ ասէ օգոստինոս՝ կալջիր զսէրն, և արա զինչ և կա-
սաղ. 76 մեսցիս : Ութերորդ՝ ըստ հեշտութե, զի սէրն ըստ
4. գործոյ իւրոյ հեշտացուցանէ զմեզ 'ի յա՟ծ, ոչ միայն 'ի վերին գաւառն, այլ և 'ի ճանապարհի աստի կենացս :

Յաղագս նշանաց սիրոյն։ Գլ. ԻԸ.

Նշանք սիրոյ են այսոքիկ։
ա. Զի սիրելին յօժարութբ լսէ սիրելւոյն։
բ. Յօժարութբ խօսի զնմանէ։
գ. Բազում անգամ 'ի միտ ածէ զնմանէ։
դ. Առանց ձանձրութեն ծառայէ նմա։
ե. Զմարմին իւր, և զինչս՝ դնէ 'ի վերայ նորա։
զ. Զգուշանայ 'ի վիրաւորելոյ զնա։
է. Եւ թէ վիրաւորեալ լիցէ, հաշտեցուցանէ զնա։
ը. Խնդակից ընդ յաջողութիս նորա։
թ. Լինի ցաւակից նմա 'ի ժամանակի նեղութեն։
ժ. Խնդայ ընդ մերձ գոլն նորա. և ցաւի ընդ հեռանալն։
ժա. Սիրէ՝ և ատէ, զոր ինչ և նա։
ժբ. Ջանայ հաճոյանալ նմա. և երկնչի անհաճոյ լինել։
ժգ. Քարշէ զայլս 'ի սիրելութի նորա։
ժդ. Զպարգևս առեալս 'ի նմանէ՝ ոչ մոռացուցանէ։
ժե. Հաւանի խրատուց նր։
ժզ. Խնդրէ 'ի նմանէ համարձակ յուսով։

Իսկ թէ ոմն գիտասցէ ոք թէ ունի զսէր, ծանիր՝ 1.կոր.
զի ամենք գիտեն զինքեանս ոչ ունել զսէր, որպէս 13.7.
որք են 'ի գործս մահուչափ մեղաց, և կամ ունին 'ի
միտ զմեղանչելն։ Ոմանք են յերկբայս ունել զսէր.
զի ունին զվկայ բարի վասն երկուցունց կողմանց, ոմն,
այնոքիկ՝ որք սկսանին առնել որ ինչ է յիւրեանց կողմանէ։
Ոմանք համարին զինքեանս ունել զսէր, ոմն
որք զբազում գործս բարիս արարին, և 'ի վաղուց
իմն հեռի պահեցին 'ի մեղաց զանձինս, սակայն տակաւին
կրեն զշարժմունս փորձութեց և երևակայացուցանեն
զպաղրալս։ Ոմանք փորձիւ գիտեն ունել Ա
զսէր յինքեանս, ոմն որք ճաշակեն զծայրն քաղցրութեն.
'ի յորս արմատ մեղացն իբր թէ չիջեալ իսկ է.
և միշտ առնեն զբարիս, և կամ բաղձան նմին։

Ոմանք ստուգեն ունել յինքեանս զսէր, ոմն, որոց
յայտնեաց ած, որպիսի էր պօղոս. որոյ ած ասաց. 2. կոր.
շատ է քեզ շնորհն իմ։ 12.6.

Յաղագս աստիճանաց սիրոյն ․ ԳԼ․ ԺԹ․

Չորք՝ աստիճանք սիրոյն են այսոքիկ ։
Առաջինն է՝ յորժամ սիրեմ զիս վասն իմ, սէրս այս՝ ոչ է բարի ։
Ա Երկրորդ՝ յորժամ սիրեմ զա̅ծ վ̅ն իմ, այս է վարձկանական ․ և յայնժամ եղիցի բարի՝ եթէ նախկինական վախճանն լիցի ա̅ծ ։
Երրորդ՝ յորժամ սիրեմ զա̅ծ վասն ինքեան, զի բարի է ․ և սէրս այս է յոյժ բարի, զի այսպիսի սէր՝ միայն մի աչօք, այսինքն, աջովն՝ հայի յա̅ծ ։
Չորրորդ՝ յորժամ սիրեմ զիս վասն ա̅յ, և այս է ևս լաւագոյն ․ զի 'յայսպիսի սէրն ոչ խնդրէ մարդ զիւրն, այլ զա̅յն միայն ։ Այլ 'ի վեր քան զա̅մ սիրելի է ա̅ծ ․ քանզի մինչ նա է նախկին սկիզբն, նմին իրի է և ծայրագոյն բարի ․ և յայնմանէ որ է ծայրագոյն բարի, է և ծայրագոյն երանելի ։ և այսու որ է ծայրագոյն երանելի, է և ծայրագոյն երանացուցիչ, նմին իրի և գերագոյն ցանկալի, և ըստ այսմ, պարտ է գերազանցապէս յենուլ 'ի նա սիրով ․ և 'ի նմին իբրև ընդվախճանում հանգչել ։ Երեք են որք հասարակաբար լինին սիրեցեալք, այսինքն, օգտակարն հեշտալին, և հաճոյն ։ Վասն առաջնոյն սիրելի է նեղութիւնն, զի է օգտակար ։ Վասն երկրորդին սիրելի է առաքինութիւնն, զի է հաճոյ ։ Վասն երրորդին սիրելի է մանաւանդապէս ա̅ծ, զի է հեշտալի ։
Այլ և վասն այսոցիկ ամենեցուն սիրելի է ա̅ծ, զի սիրելին զնա՝ է՝ օգտակար, հեշտալի, և հաճոյ ։
Եւ աստիճանք սիրոյն, ըստ այնմ որ բառնայ զմեզ՝ են այսոքիկ ։

Նախ՝ բառնայ սէրն զմեզ մահուչափս, ոչ ըստ ունակութե̅ն, այլ ըստ ներգործութեանն ․ քանզի ազատէ 'ի մահուչափ մեղաց՝ այլ ոչ 'ի կարողութենէ անկանելոյն 'ի յայն ։
Երկրորդ կերպիւ, սէրն բառնայ զմահուչափ մեղս ըստ ներգործութե̅ն, և ըստ ունակութե̅ն ․ իսկ զներելին՝ ոչ իմ̅ն կերպիւ, ա̅մ յայտ է 'ի սրբացուցեալս ոմանս ։

Երրորդ կերպիւ, բառնայ սէրն զմահուչափ մեղս՝
եր-

երկրորդումն կերպիւ · և զներելին ըստ ներգործութեան այլ ոչ ըստ ունակութեան · այսպիսի էր սէրն 'ի յերանուհի կոյսն, նախ քան զյղութիւն որդւոյն :

Չորրորդ կերպիւ, բառնայ սէրն զերկուսեանն երկաքանչիւր կերպիւ, այլ ոչ զթշնամութիւն · և այսպիսի էր սէրն 'ի յերանուհի կոյսն՝ 'ի յղութեանն Քի, և յետոյ · զի յայնժամ բարձաւ 'ի նմանէ ամենեւին արմատ մեղանչելոյն :

Հինգերորդ՝ բառնայ սէրն զերկուսեան երկաքանչիւր կերպիւ · և ևս և զնոյն թշնամութիւն · և այս լինելոց 'ի վերին գաւառն : Արդ՝ կատարեալ է սէրն, յորժամ է ունակութիւն մեծ · ներքին շարժմամբ ուղիղ · արտաքին գործովքն ժիր · արմատովն հաստատեալ, ջերմեռանդութեամբ խոհեմ · և քաղցրութեամբ մխիթարական : Այլ և սիրելի է ած, բոլորով սրտիւ, այսինքն, անմոլար իմացմամբ · բոլոր անձամբ, այսինքն, աններփոխ կամաւ · բոլոր մտօք, այսինքն, անմոռաց յիշմամբ :

Յաղագս կարգի սիրոյն · Գլ. Է :

Արդ սիրոյն՝ ըստ օգոստինոսի է սիրել նախ զայն՝ որ է 'ի վերոյ քան զմեզ, այսինքն, զած · և ապա զմեզ · յետոյ՝ որ է մերձ առ մեզ, այսինքն, զընկերն · և ապա որինչ է ստորև մեզ, այսինքն, զմարմինս մեր · և 'ի նոյն աստիճանի Ա պարտի պարունակիլ մարմին ընկերին · զի և երկոքեան ունին զբան ստորին բարւոյ՝ նկատմամբ առ հոգիս մեր : Ըստ ամբրոսիոսի՝ նախ սիրելի է ած, ապա ծնողքն · յետոյ որդիքն, ապա ընտանիքն, և վերջապէս թշնամին · այլ զայս իմանան ոմանք յաղագս բարի առնելոյն նմա : Բայց ոմն սիրեցեալ լինի առաւել քան զմիւսն բազում կերպիւ · նախ՝ մեծագոյն յօժարութեամբ · և ըստ այսմ 'ի վեր քան զամ սիրելի է ած · այլ 'ի մէջ մարդկան, առաւել սիրելիք են ծնողքն · յետոյ որդիքն · ապա ազգականքն, ըստ աստիճանի ազգականութեան :

Երկրորդ՝ մեծագոյն ախորժմամբ՝ ըստ այսմ առաւել սիրելիք են որդիքն քան զծնողսն՝ այլ հանապազ ազգականացն՝ նախ պարտ է օգնել առաւել կարօտելոյն :

Երրորդ՝ առ մեծագոյն շնորհն. և ըստ այսմ՝ առաւել
սիրելիք են՝ որք առաւել պատրաստեն զինքեանս
առ շնորհն։ Չորրորդ՝ առ մեծագոյն փառս. և ըստ
այսմ՝ առաւել սիրելիք են՝ որք առաւել հաղորդին
բարւոյ շնորհաց։ Նաև գիտելի է՝ զի նոյն է կարգ
սիրոյ բնութ՟ե, և շնորհաց. բաց յայնմանէ, որ մարդն
Բ բնական սիրով առաւել զինքն սիրէ քան զա՟ծ, այլ
շնորհական սիրով առաւել զա՟ծ սիրէ քան զինքն։
Դարձեալ գիտելի է՝ զի նոյն կարգ սիրոյն որ է ՚ի
ճանապարհի աստի կենացս, եղիցի. և ՚ի վերին գաւառին,
որպէս ասէ օգոստինոս. և վասն զի փառքն կատարէ
զբնութիւն, նմին իրի՝ որ ինչ ոչ է անկատարութ՟ե
բնութ՟ե, մնասցէ ՚ի փառս։

Յաղագս սիրոյ ընկերին։ Գլ. ԼԱ.

հռոմ. Պարտին մարդիկք սիրել զմիմեանս, զի են
12.10. անդամք միոյ խորհրդականի մարմնոյն
1.կոր. Ք՟ի. և զի միով ոգւով սրբով կենդանանան
12.27. հոգևորապէս, և միաւորին. և
եփես. զի ունին զմի հաւատ. և զի ունին զմի
4.5. մկրտութ՟ի. և զի ունին զմի հայր, և
մատթ. զՏ՟ր. և զի դիմեն առ մի արքայութ՟ի։
6.9. Արդ՝ զսէր ընկերին ուսուցանէ բնական իրաւունքն,
մատթ. ըստ այնմ որ ասէ մատթէոս. զոր ինչ կամիք թէ
7.12. արասցեն ձեզ մարդիկ՝ արարէք և դուք նոցա։
մատթ. Նա և գրաւորական իրաւունքն, որ ասէ. սիրեսցես
22.37. զՏ՟ր Ա՟Ծ քո. և զընկեր քո իբրև զանձն քո։
Այլ և օրինակ առեղծուածոց, զի նմանն խնդայ ընդ
նմանին. և ա՟մ նման սիրէ զնմանն իւր։
Բայց արդ՝ լաւագոյն է սիրել քան սիրիլ, յաղագս
չորից պատճառաց։ Նախ՝ զի զոր ինչ սիրեմք, գիտեմք.
այլ թէ սիրիմք, ոչ գիտեմք, այլ համարիմք։
Երկրորդ՝ զի երբ սիրեմք, է՛ յատուկ առաքինութ՟ե
մերոյ, այլ մինչ սիրիմք է՛ առաքինութ՟ե այլում։
Երրորդ՝ զի յորժամ սիրեմք, պարտական առնեմք
զայլս. այլ թէ սիրիմք, պարտական լինիմք այլոց։
Չորրորդ՝ զի յորժամ սիրեմք, շահիմք մեզ. այլ յորժամ
սիրիմք, այլք շահին ինքեանց։
Դարձեալ՝ սիրով ընկերին՝ լինիմք նմանօղք Ք՟ի. ըստ
յոհ. 15. այնմ որ ասէ յոհան. այս է պատուէր իմ, զի սիրես-
2.

Ձեր զմիմեանս , որպէս և ես զձեզ սիրեցի ։ Նաև
աշակերտ Քի · ըստ այնմ որ ասէ՝ յայսմիկ ծանիցեն յոհ. 13.
եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս։ 35.
Այլ և տեսանօղ այ · ըստ այնմ որ ասէ՝ որ սիրէ 1. յոհ.
զեղբայր իւր , մնայ ՚յած , և տեսանէ զած ։ 3. 16.
Դարձեալ՝ եղբայրական ընկերակցութիւն է օգուտ
վասն յարուցանելոյ , որպէս ասէ ժողովօղն · վայ
միոյն՝ եթէ անկանիցի , ո՞վ իցէ որ յարուցանիցէ ։ Ժող. 4,
Եւ վասն մխիթարութե · զի ասէ սաղմոս՝ զինչ բարի , 10.
կամ զինչ վայելուչ ։ Այլ և վասն ունելոյն օրինակ , սաղ.
զի ասէ սէնէքա · միշտ առաջի աչաց քոց պարտիս 132. 1.
դնել զոք՝ որոյ օրինակաւն յառաջասցիս · զի ոչ Ա
կարես ուղղել զթիւրն , եթէ ոչ քանոնաւ , և սիրաք եկլես.
ասէ , ՚ի փոքր կայծէ՝ աճի հուր ։ 11. 34.

Յաղագս սիրոյ թշնամեաց ։ ԳԼ. ԼԲ.

Վասն սիրոյ թշնամեաց ծանիր , զի այլ է սէր յօժարութե , և այլ ներգործութե։ Սէր յօժարութեան՝ է՛ կրկին , զի այլ է անձնասատարարութե , և այլ է բարերարութե ։ Արդ՝ սիրով անձնասատարարութեան՝ պարտականք եմք սիրել զթշնամին , զի ոչ պարտիմք նոցա կամիլ զչար ըստ այնմ որ չար , այլ ըստ այնմ՝ որ է օգուտ նոցին , և կամ հասարակաց ։ Իսկ յօժարութի սիրոյ բարերարութեան է երկեակ , այսինքն , նախինական , և երկրորդական ։ Նախինական է կամիլ թշնամեաց զհոգևոր բարիս · որպէս է՝ շնորհն , և փառքն. և ըստ այսմ եղանակի պարտաւորիմք յօժարութբ սիրել զթշնամիս ։ Իսկ երկրորդականն է կամիլ թշնամեացն զժամանակաւոր բարիս · և ըստ այսմ կերպի , ոչ միշտ պարտաւորիմք սիրել զթշնամիս , զի ոչ միշտ օգուտ է նոցա ունել զժամանակաւոր բարիս ։ Ա

Եւ նոյն կերպիւ զանազանելի է ներգործութի սիրոյ , որ նմանապէս է կրկին , այսինքն , անձնասատարարութե՝ և բարերարութե ։ Ըստ առաջին կերպին՝ պարտաւորիմք ամենեքեանք սիրել զթշնամիս , զի պարտականք եմք ոչ առնել նոցա զչար՝ եթէ ոչ թերևս վն բարւոյ նոցին · և կամ վասն հասարակաց օգտութե ։ Իսկ ըստ երկրորդին՝ զանազանելի է սէր բարերա-

րութեան. զի թէ բարերարութիւն է հոգևոր, և հարկաւոր
մատ. 5. 44. առ 'ի փրկութիւն, յայնժամ պարտաւորիմք
թշնամեացն առնել զայն. որպէս է՝ աղօթել վասն նոցա,
ոչ առանձնակի՝ այլ հասարակաբար, այսինքն,
զի ոչ արտաքսեսցուք զնոսա 'ի հասարակաց աղօթից:
Իսկ եթէ է բարերարութիւն ժամանակաւոր, այսինքն
ոչ եմք պարտական, եթէ ոչ 'ի հարկաւոր ժամանակս:
Սակայն՝ ծանիր՝ զի կարեմք ունել զերկոսին
թշնամիս, այսինքն, անձին մերոյ, կամ եկեղեցւոյ:

հռոմ. 12. 14. Արդ՝ առնել բարի թշնամւոյ անձին մերոյ՝ կատարելութեան է՝
մի թէ պատճառաւ իմն, բարերարութիւն
այն լինիցի 'ի վնաս նորին, կամ այլոց. զի յայնժամ
բառնալ 'ի նմանէ զբարերարութիւն է օգուտ:
Իսկ բառնալ զբարերարութիւն 'ի թշնամւոյն եկեղեցւոյ՝
է օգուտ, և կատարելագոյն, մի թէ գոյ յոյս, զի
վասն բարերարութեան հաշտեսցի ընդ եկեղեցւոյ:

'Ի նախասացելոցս յայտ է, զի կամիլ զժամանակաւոր
բարիս թշնամեաց եկեղեցւոյ՝ անկատարութեան է.
մի թէ պատահմամբ, այսինքն, յորժամ կարծեն
դառնալ այնու. այլ թշնամեաց անձին կամիլ զժամանակաւոր
բարիս, կատարելութեան է, եթէ ոչ՝ պատահմամբ,
այսինքն, յորժամ կարծիցի նոցա կամ
ղեւտ. 19. 17. այլոց, վնասակար լինել: Դարձեալ գիտելի է՝ զի
թէպէտ սիրել զսիրելին, առաւել պարտական է ոք,
մատ. 5: 44. սակայն սիրել զթշնամիս՝ է արդիւնաւոր 'ի թողութիւն
պատժոյն. նաև օգուտ է յայլս բազում իրս:

Նախ՝ զի առաւել մատչի առ կատարելութիւն:
Քանզի մեծագոյն առաքինութեան է, զի է առաւել
շնորհական: Երկրորդ՝ զի շարժումն սիրոյն որով
սիրեմք զթշնամին, է առաւել արդիւնաւոր առ 'ի
թողութիւն պատժոյն. և այս վասն դժուարութեանն.
թէպէտ շարժումն սիրոյն որով սիրեմք զսիրելին իցէ
առաւել արդիւնաւոր յաւիտենական կենացն, բանիւ
նիւթոյ և սաստկութեան: Զի բնական սէրն առնէ
եռանդագոյն զշարժումն սիրոյն, որոյ պատրաստութիւն
նիւթոյ՝ լինի ձեռնտու տեսակին:

Բ Երրորդ՝ զի սիրել զթշնամին՝ է յայտնագոյն նշան սիրոյ,
զի է ընդդէմ շարժման բնութեան. ուստի զի
կարի իմն դժուարին է՝ եթէ ոչ մերձ իցէ շնորհն
որով յաղթեսցի բնութիւն: Դարձեալ ծանիր, զի
այն, որում եղեալ է անիրաւութիւն ինչ, ոչ է պարտական
'ի հարկէ խնդրել զհաշտութիւն, այլ թէ առ-

նիցէ՝ լնու զպարտս կատարելութեան ․ ուստի ասէ ամէնբերանն, զի այնպիսին պարտի խնդրել զհաշտութի, զի հասցէ կրկին փառաց ։ Մինն՝ զի կրեաց զվնասն ․ և միւսն՝ զի յառաջադոյն աղաչեաց ։

Յաղագս կարդինալական առաքինութեց հասարակաբար ։ Գլ․ ԼԳ․

Ա Արդ՝ կարդինալական առաքինութիքն ուղղի հոգին 'ի զօրութիւնն իւր ։ Քանզի խոհեմութին ուղղէ զբանականն ․ արիութին՝ զցասմնականն ․ ողջախոհութին՝ զցանկականն ։ Իսկ արդարութիւնն՝ ուղղէ զամ զօրութիս, ըստ որում բնութի արդարութե պարունակէ, ոչ միայն զարդարութի յատկական, որ է 'ի փոխարինականս, կամ 'ի տրամաբաշխականս, այլ նաև զօրինականն որ է ամ առաքինութի, ըստ որում ներգործութի նորին պատկանի առ պարտաւոր հնազանդութի հրամանաց ։ Քանզի ինքն արդարութիւնն ընդհանրական՝ պարունակէ զամ առաքինութիս որք կարգեն զմարդն առ ընկերն․ ոպ է՝ ուղղութին, և առատաբաշխութիւնն․ և որք կարգեն առ ինքն, ոպ է ապաշխարութին, և անմեղութին ․ և որք կարգեն առ ած, ոպ է ածպաշտութին ․ գթութին․ և հնազանդութին ։ Նմին իրի՝ ասի արդարութին շրջափակել զամ զօրութի ․ զի ոչ միայն է առանձնական զօրութի, կամ առաքինութի, այլ և հասարակական պարունակիչ ուղղութե բոլորի հոգւոյն, ուստի ասի ուղղութի կամաց ։ Դարձեալ՝ կարդինալական առաքինութեք լինի մարդն խելամուտ 'ի գործս իւր, և զինի ընդդէմ մոլութեց ։ Առաջինն՝ լինի կրկնակի ․ քանզի լինի մարդն խելամուտ ըստ այնմ որ առ ինքն՝ խոհեմութբ ․ և ըստ այնմ որ առ ընկերն՝ արդարութբ ։ Նա և երկրորդն՝ լինի երկակի ․ զի մարդն սպառազինի 'ի յաջողմունս՝ ողջախոհութբ, և պարկեշտութբ ․ և յանաջողութիս՝ արիութբ ։

Դարձեալ ասէ օգոստինոս ․ թէ խոհեմութիւնն է 'ի յընտրելիսն ․ արիութին 'ի տանելիս ․ ողջախոհութին 'ի կիրառնլիս ․ և արդարութին 'ի բաշխելիս ։

Դարձեալ ասէ օգոստինոս ․ թէ խոհեմութին է

առ 'ի զգուշանալ 'ի գործնականութ՟եց . արդարութիւնն առ 'ի յօգնել թշուառականաց . արիութիւնն առ 'ի տանել նեղութ՟եց . և ողջախոհութիւն՝ առ 'ի սանձահարել 'ի թիւր հեշտութեանց :

Դարձեալ՝ տայ օգնութիւնս 'ի յերաժշտականութիւնս իւր . թէ խոհեմութեան՝ յաջորդէ տեսութիւնն . արիութ՟ե ' հաստատութ՟ի յեղման . ողջախոհութեան՝ չափ սիրոյն , արդարութեանն՝ պատշաճաւոր կարգաւորութ՟ի առ ա՟ծ , և առ ընկերն : Արդ՝ չորեքեան առաքինութիւնս այսոքիկ կոչին կարդինալականք , այսինքն , ծղնականք՝ զի որպէս դուռն շրջի 'ի ծղնւոջ, այսպէս և 'ի սոսա ուղղի և շրջի կեանք մարդոյն : Կոչին և քաղաքականք , զի կարգեն զմարդն 'ի վարս քաղաքականս : Այսին և մարդկայինք , զի մարդկային ջանիւ ստացեալ լինին . թէպէտ և երբեմն հեղին 'յաստուծուստ : Կոչին և սովորականք . զի ոչ 'ի միոյ գործոյ , այլ 'ի սովորութ՟ե ծնանին , և կամ զի մարդկային համեստութիւն առնել կրթէ զինքն 'ի յայսոսիկ , որպէս և սրբոց ջերմեռանդութի առնել վարժէ զինքն 'ի յա՟ծային առաքինութիս : Իսկ ծանիր, զի խոհեմութեանն է գիտել՝ թէ զինչ կարիցէ . ողջախոհութեանն է՝ ոչ յանդգնիլ յայնս , զորս ոչ կարիցէ : Արդարութեանն է՝ կամիլ 'ի համայնս , որ իցէ հաւասար . Արիութեանն է՝ ոչ կամիլ առնել , քան զոր կարիցէ : Եւ գիտելի է , զի առաքինութիւնս այսոքիկ ունին զզանազան աստիճանս կատարելութ՟ե իւրեանց. ըստ որում այլ կերպիւ տանան սկսելոցն , այլ կերպիւ յառաջացելոցն, և այլ կերպիւ կատարելոցն : Քանզի առաքինութիւնս այսոքիկ երբեմն ասին քաղաքականք , ըստ որում ուղղեն զկեանս մարդոյն առ արտաքին գործս , և մարտնչին ընդդէմ մոլութեանց. և կերպիւս այս՝ են սկսանողաց : Երբեմն ասին մաքրողականք , ըստ այնմ որ արդէն իսկ են 'ի յաղթութ՟ի մոլութեանց, և կայանան 'ի կողմանէ իմն 'ի ներքս, և 'ի կողմանէ իմն արտաքս . և կերպիւս այս՝ են յառաջացելոցն : Երբեմն ասին մաքրեալ հոգւոյ , ըստ այնմ որ նոքօք արդէն իսկ հանգչիցի մարդ՝ ընդ յաղթել մոլութ՟եց , այնպէս՝ մինչ զի ուր ուրեմն յառնեն առաջին շարժմունք մոլութեանց , և ըստ այսմ՝ վերաբերին առ կատարեալս : Երբեմն ասին և նախադաղափարականք . ըստ որում են 'ի յա՟ծային միտս . քանզի որպէս ա՟ծ է օրինակ ամենայն իրողութեանց , այսպէս և նախագաղափարք առաքինութեանց, կայանան 'ի նմին։

Յաղագս խոհեմութեան։ Գլ. ԼԴ.

Խոհեմութիւն ըստ այնմ որ քաղաքական առաքինութիւն, որպէս ասէ մակրոբիոս. է՛ որ ըստ կանոնի բանականին խորհել ուղղել զամենայն, զոր ինչ առնէ . և ոչինչ քան զուղիղն կամիլ, կամ առնել։

Այլ խոհեմութիւն ըստ այնմ որ մաքրողական առաքինութիւն, է՛ որպէս ասէ նոյնն զաշխարհս, և զամենայն որ ինչ են յաշխարհի՝ խոտել աստուածայնով խոկմամբ, և զամենայն ճանաչումն հոգւոյն, միայն ուղղել յաստուածայինս։ Իսկ խոհեմութիւնն՝ ըստ որում է առաքինութիւն մաքրեալ հոգւոյ, է՛ միայն զաստուածայինսն ճանաչել . և այնպէս հայիլ յայնս՝ իբրու թէ ոչ գուցէ այլ ինչ։ Բայց խոհեմութիւն ըստ այնմ որ առաքինութիւն նախագաղափարական, է՛ նոյն ինքն միտն աստուածային, որոյ ամենայն ինչ է մերկապարանոց, և բաց։ Արդ՝ մասունք խոհեմութեան, ըստ Թուլլիոսի, են՝ հանձարեղութիւն . նախատեսութիւն . և յիշողութիւն։ Հանձարեղութիւնն է՝ որով հոգին նկատէ զայնս որք են։ Իսկ նախատեսութիւն է՛ առաքինութիւն, որով տեսանի ինչ լինելոց, նախ քան զլինելն։ Իմաս. 7. 17.

Այլ յիշողականութիւն է՝ որով վերստին յիշեալք լինին եղեալքն։ Եւ ծանիր, զի կրկին է ենթադրութիւն բանականին, այսինքն, ընտրողական, և վերաճարտողական։ Արդ՝ ընտրողական ենթադրութիւնն է՝ որով դատէ բանականն զիր ինչ գոլ առնելի, կամ ոչ առնելի . և առ այսպիսի ենթադրութիւն է գիտութիւն, և ոչ առաքինութիւն։

Իսկ վերաճարտող ենթադրութիւն է, որով բանականն հրամայէ զիր ինչ լինել, կամ ոչ լինել . և առ այս է առաքինութիւն։ Ուստի 'ի յառաջին ենթադրութեանն, գիտութիւնն ունի զինքն առ գործս բարիս որպէս խրատատու։ 'Ի յերկրորդ ենթադրութեանն՝ առաքինութիւն ունի զինքն՝ իբր զհրամայող։

Դարձեալ՝ խոհեմութեանն է՝ ուղղել զայլս առաքինութիւնս 'ի գործս իւրեանց, ըստ ամենայն մասանց բարոյական իմաստասիրութեան, որք են՝ բարոյական . տն-

տեսական , և քաղաքական . որոց առաջինն՝ ուսուցանէ զբարս , ըստ այնմ որ առ ինքն : Երկրորդն՝ կարգաւորէ զընտանիսն : Երրորդն՝ կառավարէ զքաղաքս , և զթագաւորութիւնս : Դարձեալ՝ ծանիր , զի եռակի է խոհեմութիւն : Առաջինն է սրտին . և այս է առ 'ի կարգաւորել զներկայս , և 'ի միտ ածել զանցեալսն , և նախատես լինել ապագայիցն . ըստ այնմ
օրին. որ ասէ յերկրորդում օրինաց , օ՜ թէ իմանային զներ-
32.29. կայս , և 'ի միտ առնուին , այսինքն , զանցեալսն , և լինէին նախատեսք վերջնոցն , այսինքն , ապագայից : Երկրորդն է բերանոյն . և այս չափաւորութե՟ բա-
առակ. նից , ըստ այնմ որ ասի յառակս , որ հանդարտէ
10.19. շրթամբ խօսի՝ է խոհեմագոյն : Եւ սաղմոսն ասէ՝
սաղ. դիր Տ՟ր պահապան բերանոյ : Երրորդն է գործոցն .
140.3. և այս՝ որպէս ասէ Թուլլոս , կայանայ 'ի փախուստ
սաղ. չարին , և 'ի յընտրութե՟ բարւոյն . յորմէ ասէ սաղ-
33.15. մոսն՝ խոտորեա՛ 'ի չարէն , և արա՛ զբարի :

Եւ ծանիր , զի այլ է խոհեմութե՟ աշխարհային , այլ մարդկային . և այլ ա՟ծային : Առաջինն է՝ առ 'ի ստանալ զժամանակաւորսն : Երկրորդն՝ 'ի յօգուտ մարդոյն : Եւ երրորդն՝ 'ի յա՟ծային պաշտամունսն :

Որդ՝ գործ խոհեմութեանն է՝ ուղղել զներգործութիւնս այլոց առաքինութեց : Ուստի ասէ բեռնարդոս . խոհեմութիւն՝ ո՛չ միայն է առաքինութի , այլ և կառավար առաքինութեց : Դարձեալ՝ գործ ն՟ր է՝ ոչ կամիլ խաբել , և ոչ խաբիլ , որ՟պ ասէ սենեքա : Դարձեալ՝ համարել զիրս ըստ ճշմարտութե՟ . և զի ասէ սենեքայ՝ յայնժամ բանականաւն ուղղապէս կեցցես , եթէ զա՟ծայինսն նախընտրագոյն համարեսցիս .
Ա եթէ զարժանաւորութիւն իրաց՝ ո՛չ ըստ կարծեաց բազմաց , այլ 'ի բնութե՟ նոցին կացուցանիցես . եթէ զանձնեցեալսն 'ի քեզ՝ 'ի փառս ա՟յ , և 'ի շինութիւն
ղուկ. ընկերին մատակարարիցես. ըստ այնմ որ ասէ ղուկաս.
12.42. ո՞վ է հաւատարիմ ծառայ և իմաստուն :

Դարձեալ՝ գործ նորա է փախչիլ 'ի փոփոխամտութե՟ . ուստի ասէ սենեքայ . դիտացիր զքեզ , զի յոմանս պարտիս յարամնալ , վասն զի սխալ . և զոմանս ոչ սխալիլ :

Յաղագս ողջախոհութեան ։ Գլ. ԼԵ.

Ողջախոհութիւն՝ որպէս ասէ մակրոբիոս , ըստ այնմ որ քաղաքական առաքինութի՝ է ոչինչ ցանկալ զղջանալեաց. ՚ի յոչինչ իր անցանել զօրինօք չափաւորութե , այլ ընդ լծով բանականութեան նուաճել զցանկութի ։ Ողջախոհութիւն ըստ այնմ որ մաքրողական առաքինութի , է՝ թողուլ զա̄մ , որ ինչ ՚ի պէտս մարմնոյն պահանջի , որքան տեւէ բնութիւնն ։ Ողջախոհութիւն ըստ այնմ որ առաքինութիւն մաքրեալ հոգւոյ՝ է զերկրաւոր ագահութիւն՝ ոչ միայն սանձահարել , այլ ամենեւին Ա մոռանալ ։ Ողջախոհութիւն ըստ այնմ որ նախագաղափարական առաքինութի , է՝ դարձումն իմն ՚ի յինքն՝ յաւիտենական դիտաւորութե̄ ։ Այլ մասունք ողջախոհութեանն ըստ Թուլիոսի , են երեք , այսինքն , ժուժկալութի . անոխակալութի . և համեստութի ։ Արդ՝ ժուժկալութիւն ըստ նոյնոյ Թուլիոսի , է՝ առաքինութի , որով ա̄մ ցանկութի ուղղի կառավարութե̄ խրատոյն ։ Անոխակալութիւն է՝ որով շարժումն ոգւոյ յիմարաբար ամբոխելոյ ՚ի յատելութի ումեք՝ զուարթութե̄ , և գթութե̄ իմն՝ արգելեալ լինի ։

Համեստութիւնն է առաքինութի , որով պարկեշտ ամօթխածութիւն , ստանայ ինքեան զնազելի, և զհաստատ պատկառանս ։ Իսկ տեսակք ողջախոհութե̄ են երեք ։ Զգաստութի . ժուժկալութի . և համեստութի ։ Առաջինն՝ կայանայ առ ճաշակելիսն , ՚ի յորում զգաստութիւն դնէ զկարգ , և զչափ ։ Երկրորդն՝ կայանայ առ շօշափելիսն , ըստ ծննդական զօրութե̄ , ՚ի յորում դնէ զեղանակ, ժուժկալութիւնն։ Քանզի ունի մարդն զսաստիկ իմն յօժարութի առ ՚ի պահել զինքն ՚ի գոլն անհատին սննդականաւն . և ՚ի գոլն տեսակին ծննդականաւն ։ Իսկ յօժարութիւնքս այսոքիկ զայլին զգաստութե̄ , և ժուժկալութե̄ ։ Երրորդն՝ կայանայ ՚ի յասելիս , և ՚ի յառնելիս ։ Իսկ առնելին՝ որպէս աստ առեալ լինի , վերաբերի առ երիս զգայութիս , այսինքն , ՚ի տեսանելիսն , ՚ի լսելիսն , և ՚ի հոտոտելիսն , և ՚ի յատուկ նիւթս նոցա ։ Նա և վերաբերի առնելիս այս՝ առ շօշափելիս , ոչ առայն որ է ծննդական , այլ առ այլս շօշափելիս · որոյ գործիքն են ձեռքն՝ առ 'ի հարկանել, կամ առ 'ի ըմբռնել · և ոտք՝ առ 'ի գնալ· 'ի յամենայնս յայսոսիկ գնէ զեղանակ՝ համեստութին: Իսկ պատուն ողջախոհութե է 'ի յայս՝ զի զարդարէ զհոգին · զի ոպ̄ 'ի բնութիս տեսանի է վայելչագոյն քան զնիւթն, նոյնպէս և 'ի բարս առաւել գովելալինի եղանակն՝ քան նոյն ինքն գործն: Վասն որոյ ողջախոհութին համեմատի արեգական, որ է միջին մոլորակնոցն, և վայելչագոյն 'ի մէջ նոցա:

Դարձեալ՝ զարդարէ հաւաքէ, զի զմէջն ըմբռնեցին երանելիքն: Ուստի ասի՝ թէ ոչ բայիւ արժանաւորիմք, այլ մակբայիւ, այսինքն, ոչ այնու զոր ինչ առնեմք, այլ այնու՝ զոր ինչ բարեպէս առնեմք:

Եւ այս յայտ է 'ի յայրին այնմիկ որ մատոյց զերկուս լումայս, և առաւել գովեցաւ քան զայնոսիկ, որք զմեծամեծ պարգևս արկին 'ի գանձանակն: ղուկ. 21.1. Սանձահարէ զմոլեկան յօժարութի, ոպ̄ 'ի վերոյ իսկ ասացաւ: Ուստի համեմատի սանձի և ղեկի՝ նաև խարազնի, որ զշաւելուած ժանկոյն բառնայ յերկաթոյն: Կերպաւորէ զգործս, ըստ որում խրատէ առաքեալն, ասելով · բանաւոր լիցի պաշտօնն ձեր: հռովմ. 12.1.

Պահէ զմէջն, ոպ̄ ասէ բեռնարտոս · ըմբռնեա զմէջն, եթէ ոչ կամիս կորուսանել զեղանակն: Վն̄ միջոյս այս՝ ասէ ոմն սրբեռոփիկոս, ընդ մէջն անհոգագոյն երթիցես: Եւ Տր̄ն կամեցաւ մեզ ունել զմէջս այս, ծննդ. 2 7:22. յորժամ արար զեւայ՝ ոչ 'ի գլխոյն, կամ 'ի յոտիցն՝ այլ 'ի կողէն · և արար զմարդն մասամբ իմն մարմնաւոր, և մասամբ իմն հոգևոր, զի արժանապատուութբ̄ բնութեանն լինիցեր 'ի ներքոյ հրեշտակական բնութեան, և 'ի վերոյ մարմնական ստեղծուածոց: ղուկ. 22.27.

Նմանեցուցանէ ք̄ի՝ որ եկաց 'ի մէջ աշակերտաց · ղուկ. 2.46. նստաւ 'ի մէջ վարդապետաց · կախեցաւ 'ի մէջ երկուց աւազակաց · յօհ. 19. 17. եդաւ 'ի մսուր 'ի մէջ երկուց կենդանեաց · ամբակ. 3.2. տեսաւ 'ի յօհաննու տեսիլն՝ շրջեալ 'ի մէջ ոսկեղէն աշտանակաց: յայտ. 1. 13. Պահէ զբնութի, զի բնութիւնն հեշտանայ 'ի մէջն, և ապականի եղերօք: Ուստի ասէ փիլիսոփայն · գերազանցութի զգալեացն՝ ապականէ զզգայութիս: Կերակրէ յաւիտենական խորտիկաւ: ծնն. 2.9

Ուստի ողջախոհութին նմանի ծառոյն կենաց՝ որ էր 'ի մէջ դրախտին:

Յա_

Յաղագս արիութեան ։ ԳԼ. ԼԶ։

Արիութիւնն՝ ըստ մաքրոբիոսի, ըստ այնմ որ քաղաքական առաքինութիւն, է՝ ամբառնալ զոգին 'ի վերոյ քան զերկիւղ վտանգին. և յոչինչ իրէ երկնչել եթէ ոչ 'ի զազրութենէ. զօրեղաբար տանել անյաջողութեանց, և կամ յաջողմանց ։ Եւ մաքրողական արիութեանն է՝ ոչ զարհուրել ընդ հեռանալ հոգւոյն 'ի մարմնոյն, և ոչ սարսռիլ 'ի նեղութենէ բնութեան ։ Իսկ արիութիւն մաքրեալ հոգւոյն է՝ անգիտանալ զկիրս, ոչ զանգիտել. ոչ գիտել բարկանալ, և ոչ իմիք անհամեստի ցանկալ ։ Այլ արիութիւն նախագաղափարականին է՝ գոլ անփոփոխելի, զի միշտ նոյն է, և ոչ երբեք տարափոխի ։ Բայց մասունք արիութեանն են չորք, ըստ Թուլլիոսի, այսինքն, մեծագործութիւն. ապաստանութիւն. համբերութիւն. և յարամնայութիւն ։ **Ա**

Արդ՝ մեծագործութիւն ըստ Թուլլիոսի է՝ մեծամեծաց և վերնագոյն իրողութեանց խորհուրդ, և գործածումն, հանդերձ ընդարձակ մտադրութեամբ հոգւոյն ։

Ապաստանութիւնն է՝ առաքինութիւն, որով հոգին 'ի մեծամեծ, և 'ի համեստ իրս՝ ստոյգ յուսով կարի իմն հաստատի յինքեան ։ Համբերութիւնն է կամաւոր և մշտնջենաւոր տևողութիւն մեծամեծ և դժուարին իրաց, պատճառաւ համեստութեան և օգտութեան ։

Յարամնայութիւնն է՝ հաստատ և մշտնջենաւոր յարակայութիւն, բարեպէս քննեալ 'ի բանականութենէ ։

Այլ բազումք են ներգործութիւնք արիութեան ։

Առաջինն է՝ զի յաղթէ թշնամեացն. որպէս ասէ մա-
կաբայեցւոց. յուդա այր զօրեղ՝ արար զյաղթու- 1· մակ·
թիւնս ։ Երկրորդ՝ պահէ մարդոյն զբարիս իւր, որ- 3·3·
պէս ասէ ղուկաս. յորժամ հզօր վառեալ՝ պահէ ղուկ·
զտուն իւր ։ Երրորդ՝ զի փարթամացուցանէ, ըստ 11·21·
այնմ որ ասի յառակաց. ձեռք զօրեղաց պատրաս- առակ·
տեն զմեծամեծս ։ Չորրորդ՝ յափշտակէ զարքայու- 10·4·
թիւն, ըստ մատթէոսի. արքայութիւնն երկնից բռ- մատ·
նադատի ։ Հինգերորդ՝ զի զարդարէ ըստ առակաց, 11·12·
որ ասէ՝ զօրեղութիւն և գեղեցկութիւն, հանդերձ նորա ։ առա՛·
Վեցերորդ՝ զի 'ի վախճանի առնէ անհոգս, որպէս 31·24·
ասէ

առակ. ասէ յառակաց . առիւծ հզօրեղագոյն գազանաց՝ ո՛չ
30.30. զարհուրի ընդ պատահիլն ուրուք ։
առակ. Եօթներորդ՝ զի ակն ունի հատուցման, ըստ առակացն,
31.10. որ ասէ՝ կին զօրաւոր ո՞ գտանիցէ, 'ի հեռաստանէ
և 'ի ծագաց երկրաց վարձ նորա ։

Արիութիւն կայանայ 'ի հինգ իրս, այսինքն, 'ի ձեռնարկութ̄ի
սաղ. 30. բարձրագունից, որպէս ասէ սաղմոս. քաջալերացարուք,
25. և զօրասցին սիրտք ձեր ։
եբր. 'Ի խոստումն երկրաւորաց, ըստ այնմ որ ասէ յեբրայեցւոց
11.24. . մովսէս ուրացաւ զինքն լինիլ որդի փարաւոնի
երգ. 8.6 ։ 'Ի համբերութիւն նեղութեանց՝ որպէս ասէ
յերգն, զօրաւոր է իբրև զմահ սէրն ։
2. տիմ. 'Ի գլխամարտութիւն փորձութեանց, ըստ առաքելոյն
2.5. որ ասէ, ոչոք պսակի, եթէ ոչ ըստ օրինի մարտիցի
յոբ. 7. 1 ։ 'Ի յաղթութ̄ի մհուն̄ց, ո՞մ̄ ասէ յոբ՝ զինուորութի
է կեանք մարդոյ 'ի վերայ երկրի ։

Բազումք են որք օգնեն արիութեանն ։ Առաջինն է
2. մակ. յորդորումն խոհեմից . ուստի ասի վասն յուդայի մակաբեան
8.16. . թէ սպառազինեաց զընկերս իւր՝ ոչ վահանաւ
2. մակ. և նիզակաւ, այլ բարեգոյն բանիւ ։
6.27. Երկրորդն է օրինակ զօրաւորացն . որպէս ընթերցեալ
լինի վասն եղիազարու, որ ընտրեաց զօրէնապէս
մեռանիլ վասն հայրենի օրինացն՝ թողլով զօրինակ
զօրութեան և ուժոյ՝ զհետ եկելոցն ։
դատ. 3. Երրորդ՝ կրթութիւն 'ի պատերազմունս, ուստի
1.2. ասի 'ի գիրս դատաւորաց, թէ Տր̄ ոչ ջնջեաց վաղվաղակի
զթշնամիս որդւոց իսրայէլի, այլ եթող զոմանս
զի նոքօք ունիցին զկրթութիւնս պատերազմաց ։
Չորրորդն է՝ յոյս հատուցման, որպէս ասէ երկրորդ
2. մնաց. մնացորդաց . զօրասցին ձեռք ձեր, և ոչ լքցին .
15.7. զի լինիցին վարձք գործոց ձերոց ։
Հինգերորդ՝ տկարութիւն թշնամեաց՝ յորմէ ասէ
գրիգոր, տկար է թշնամին, և ոչ կարէ յաղթել,
եթէ ոչ զկամեցօղն ։ Վեցերորդն է՝ օժանդակութ̄ե
աղօթից, որպէս յայտ է յելից . զի յորժամ ամբառնայր
ելից. 17 մովսէս զձեռս՝ յաղթէին որդիքն իսրայէլի, այլ
11. թէ թուլանայր՝ յաղթէր ամաղէկ ։ Եօթներորդն է՝
դատ. սպառազինութ̄ե հոգևոր զինուց՝ ուստի սամփսոն յաղթեաց
15.16. զայլազգիսն ծնօտիւ իշոյն, այսինքն, բարեխառնութբ̄
և պարզմտութբ̄ ։ Ութերորդն է՝ յիշատակ
տէրունական չարչարանացն Քի̄, որ նշանակեցաւ 'ի
1. թագ. դաւիթ, որ եւ ընդդէմ գողիաթու ցուպով, և պարսիւ
17.40. ։

սին ։ Իններորդ է՝ հոգևոր կերակուրն ․ յորմէ ասէ սաղմոս, հաց հաստատէ զսիրտ մարդոյ ․ և երրորդ Թագաւորաց ․ գնաց Եղիա զօրութեամբ կերակրոյն այնորիկ՝ մինչև 'ի լեառն այ ։ Ուստի պետրոս՝ արբեալ շնորհօք ոգւոյն սրբոյ, զօրացաւ և ասէ՝ պարտ է առաւել հնազանդիլ այ, քան մարդկան ․ սակայն նոյն ինքն՝ յառաջքան զայնպիսի զօրութիս, ասաց՝ ոչ գիտեմ զայրն զայն ։ սաղ. 103. 15. 3. Թագ. 19. 8. գործ. 5. 29. մար. 14 21.

Յաղագս արդարութե ։ Գլ․ ԼԷ․

Ա Քաղաքական արդարութին ըստ մաքրօպիոսի է՝ պահել իւրաքանչիւր ումեք որ ինչ իւրն է ։ Մաքրողականնի արդարութեանն է՝ ըստ նոյնոյ, պահել զգործ իւրաքանչիւրոյ առաքինութեան, ո՛ և իցէ առաջնորդելոյ, առ մի ճանապարհ, այսինքն, արդարութեան ։

Արդարութեան մաքրեալ հոգւոյ է՝ ընդ վերին մտաց ընկերակցիլ՝ մինչ զի պահեսցէ ընդ նմա զդաշն մշտնջենաւոր, նմանելով նմին ։ Արդարութեան նախագաղափարականին է՝ մշտնջենաւոր, և յաւիտենական օրինօք, ոչ կասիլ 'ի հնազանդութե գործոյն իւրոյ ։

Մասունք արդարութե, ըստ Թուլիոսի, են վեց, այսինքն, կրօնաւորութի ․ գթութի ․ շնորհք ․ վրէժխնդրութի ․ պահպանութի ․ և ճշմարտութի ։

Կրօնաւորութին ըստ Թուլիոսի, է առաքինութիւն, որ վերին բնութեն, այս է ածայնոյն, զպաշտօն, և զառանձնական իմն սպասաւորութի, մատուցանէ ։ օրին. 6. 6.

Գթութին է՝ որով արենակցացն սպասաւորութի բարեկամութե, և սիրով պաշտօն արարեալ լինի ։ մատ. 4. 23.

Շնորհն է՝ 'ի յոր պարունակի յիշատակ բարեկամութե, և սպասաւորութեան այլում, և կամք անդրէն հատուցման ։ Վրէժխնդրութիւնն է առաքինութիւն, որով բռնութիւնն, և անիրաւութիւնն և ամենայն վնասակար, ջատագովելով և վրէժխնդիր լինելով, 'ի բաց մերժի ։ Պահպանութիւնն է առաքինութիւն, որով մարդիկք իւիք արժանաւորութե յառաջացեալք, արժանաւորին պատուոյ իմն, և պաշտման ։ Ճշմարտութիւն է առաքինութիւն, որով փոփոխելիքն այնք՝ որք են, կամ եղեն, կամ լինելոցք են, ասին ։ Եւ ծանիր, զի արդարութին ոչ միայն է առանձնական առաքինութիւն, այլ և հասարակական, որպէս ասացեալ է ՚ի վեր անդր. յաղագս կարդինալական առաքինութեց հասարակաբար ։

Իմաստ. 1. 15. Բայց արդարութիւնն որպէս ասի ՚ի գիրս իմաստութեան՝ է մշտնջենաւոր, վասն բազում պատճառաց ։ Նախ՝ զի առնէ մշտնջենաւոր զհոգին, հաստատելով զնա ՚ի պատշաճաւոր տեղւոջ, այսինքն, ՚ի ներքոյ այ, և ՚ի վերոյ մարմնական ստեղծուածոց ։

Երկրորդ՝ զի մնայ ՚ի վերջին դատաւի ըստ էութեն, և ըստ կիրառմանն ։ Իսկ այլք կարդինալական առաքինութիք՝ թէպէտ մնասցեն ՚ի վերջին դատաւն ըստ էութեան, սակայն ոչ ըստ ամ կիրառման. զի ողջախոհութին ոչ սանձահարեսցէ զզգայական շարժմունսն ։ Խոհեմութին ոչ զգուշացուցանէ ՚ի դարանակալութեց. արիութիւնն՝ ոչ ձեռնամուխ լինի ՚ի զարհուրելիս ։

Արդարութիւն թիւրի երեք կերպիւ, այսինքն, սիրով անձին, կամ արծաթոյ. երկիւղիւ, և հեռիւ ։

Եսայ. 5. 23. Սիրով անձին, կամ արծաթոյ. որպէս ասէ Եսայի, վա՜յ որ արդարացուցանէք զամբարիշտն վասն կաշառաց ։ Երկիւղիւ, ընդդէմ որոյ ասէ՝ մի՛ երկնչիցիք յայնցանէ որք սպանանեն զմարմին ։ Հեռիւ, ըստ այնմ որ ասէ՝ գիտաց, զի առ նախանձու մատնեցին ։
Մատ. 10. 28.
Մարկ. 15. 10.

Սակայն բազումք են որք շարժեն առ ուղղութի արդարութե ։

Առաջինն է՝ ուղղութի մարդկային մարմնոյ. զի անվայելուչ է ՚ի յուղիղ մարմնում ունել զթիւր ոգի ։ Երկրորդ, յօժարութիւն բնական, որպէս ասէ Օգոստինոս, արդարութիւնն է ՚ի սիրտ մարդոյն բնականաբար ։

Երրորդ՝ զի անբան անասունք ուսուցանեն զբազում ինչ որք վերաբերին առ արդարութին. որպէս է՝ անմեղութի, համաձայնութի, և այնպիսիք ։

Եկլես. 4. 33. Չորրորդ՝ գիրք սբք, զի ասէ Սիրաք, մինչև ՚ի մահ պատերազմեա՛ վն արդարութե ։

Այլ և ներգործութի արդարութե է՝ բազում, այսինքն,
Մատ. 5. 6 առնէ երանելի. զի ասէ Մատթէոս՝ երանի որք քաղցեալք և ծարաւիք իցեն վն արդարութե ։

Եւ պետրոս ասէ. եթէ կրէք ինչ վասն արդարութե, երանելիք էք: 1, պետ. 3.14.

Բարձրացուցանէ՝ այ ասէ սիրաք. որ գործէ զարդարութի, բարձրասցի: եկլէս. 20.30.

Սանձահարէ զյօժարութիւն ցանկութե, ըստ եսայեայ որ ասէ, եղիցի արդարութիւնն գօտի երիկամանց նորա: եսայ. 11.5.

Պատրաստէ տեղի այ, որպէս ասէ սաղմոս, արդարութիւնք և իրաւունք, պատրաստութիւն աթոռոյ քոյ: սաղ. 88. 15.

Փրկէ 'ի յաւիտենական մահուանէ. ըստ այնմ՛ առակաց, այլ արդարութի փրկէ 'ի մահուանէ: առակ. 10.2.

Պսակէ՝ այ ասէ առաքեալ առ տիմոթէոս, կայ և մնայ ինձ պսակ արդարութե: 2. տիմ. 4.8.

Վարձատրէ՝ ըստ սաղմոսին որ ասէ, հատուսցէ ինձ Տր՝ ըստ արդարութե: սաղ. 17 25.

Արդարութիւնն կայանայ 'ի հաւատն. ըստ այնմ՛ որ ասէ առաքեալն՝ հաւատաց աբրահամ յած, և համարեցաւ նմա յարդարութի: հռոմ. 4.3.

'Ի յաղօթս՝ ըստ սաղմոսին. աղաղակեցին արդարքն առ Տր, և Տր լուաւ: սաղ. 33. 18.

'Ի մէջ խոկմանն որպէս ասէ սիրաք. երանելի է այր որ բնակեսցի յիմաստութեան, և խոկասցի յարդարութեան: եկլէս. 14.22.

'Ի խոնարհութե, ըստ մատթէոսի. այսպէս վայել է մեզ՝ լնուլ զամ արդարութի. ուր ասէ մեկնիչն՝ կատարեալ արդարութի է՝ նուաճել զինքն փոքրագունին: մատ. 3. 15.

'Ի յուսումն ըստ առակաց որ ասէ, սերմանողին զարդարութիւն, լիցի վարձ: առա. 11 18.

Յաղագս եօթեանց պարգևաց ոգւոյն սրբոյ համառօտաբար: Գլ. ԼԸ.

Որպէս ամ ունակութիւնք առեալք յաստուծուստ կարեն ասիլ հասարակաբար պարգևք այ. սակայն յատկապէս եօթն են պարգևք ոգւոյն սրբոյ, զորս թուէ եսայի, սկսանելով 'ի վերնագունէն, մինչև 'ի ստորնագոյնն: եսայ. 11.2.

Ա Արդ՝ եօթն են պարգևքն, վասն բազմաց պատճառաց: Նախ՝ զի ընդդէմ արտաքսիցին եօթն մո-

մոլութիւնք . քանզի երկիւղն՝ արտաքսէ զհպարտութիւն . գթութիւնն՝ զնախանձ . գիտութիւնն զբարկութիւն, որ է մոլեգնութիւն իմն . զօրութիւնն՝ զծուլութիւն . խրատն՝ զագահութիւն . հանճարն՝ զորկրամոլութիւն . իմաստութիւն՝ զբղջախոհութիւն :

Երկրորդ՝ ասին եօթն գոլ պարգևք, վասն օգնելոյն բնական զօրութեանց : Քանզի ցասմնական՝ կարօտանայ զօրանալ 'ի յաջողմունս երկիւղիւ . և յանաջողութիւնս, զօրութեամբ : Ցանկական՝ կարօտանայ օգնել ըստ ախորժակին որ առընկերն, որ լինի գթութեամբ . և ըստ ախորժակին որ առ Աստուած, որ լինի ճաշակմամբ իմաստութեան : Իսկ բանն կարօտանայ զօրանալ 'ի տեսութիւն ճշմարտութեան, որ լինի հանճարով . 'ի յընտրութիւն ճշմարտին, որ լինի պարգևօք խրատուն . և 'ի գործածելն ընտրելոյն, որ լինի պարգևով գիտութեան :

Քանզի պարգևօքս այս՝ ուղղապէս կենցաղավարիմք 'ի մէջ խեղաթիւր ազգին :

Երրորդ՝ ասին եօթն գոլ պարգևք՝ վասն կատարելութեան գործնական և տեսական կենացն :

Քանզի տեսական կեանքն պարտի ունել զերիս պարգևս, այսինքն, զերկիւղն՝ առ 'ի պատկառանս աստուածային մեծութեան . զհանճարն՝ առ 'ի ճանաչումն ճշմարտութեան . և զիմաստութիւն, առ 'ի ճաշակումն բարութեան :

Իսկ գործնական կեանքն՝ պարտի ունել զգթութիւն՝ առ 'ի գործել . զարիութիւն, այսինքն, զզօրութիւն, առ 'ի համբերել . զգիտութիւն՝ առ 'ի յուղղութիւն գթութեան, և զխրատն՝ առ 'ի յուղղութիւն զօրութեան :

Նա և բազումք են պարգևք որք վերաբերին առ իմացականն . քանզի լոյս ճանաչման յոյժ պիտոյ է առ 'ի ուղղել զոտս մեր 'ի ճանապարհս ուղիղս :

Եւ վասն այն պատճառի լինի լծակցութիւն պարգևացն . ուր իբրու թէ միշտ համագուգի մի ուղղականն՝ ընդ միւսոյն, որ վերաբերի առ առնելն, կամ կրելն . և գրիգոր ասէ 'ի մեկնութեան եզեկիելի, թէ իմաստութեամբ՝ եմք հասուն . հանճարովն՝ նախատես . խրատովն՝ զգուշ . երկիւղիւն խոնարհ . արիութեամբն՝ քաջասիրտ . գիտութեամբն՝ ընտրող . գթութեամբն՝ ողորմած.

Յո-

Յաղագս պարգևի երկիւղին հասարակաբար ։
ԳԼ: ԼԹ․

Երկիւղն՝ ըստ օգոստինոսի, է փախուստ ՚ի չարէն ։ Արդ՝ վեց են տեսակք երկիւղին ։ Առաջինն է բնական, որով իւրաքանչիւրոք երկնչի բնականապէս ՚ի վնասակարէ բնութեն ։ Երկիւղս այս ոչ է արդիւնաւոր, և ոչ անարդիւնաւոր․ զի ոչ անկանի ՚ի ներքոյ անձնիշխանականին ․ և սա է բնական, ոչ ըստ անմեղ բնութե կացուցեալ, այլ ըստ կործանեալ․ վասն զի երկիւղս այս է առեալ պատիժ, վասն մեղաց նախկին ծնողաց․ և երկիւղիւս այսու երկեաւ Քս բնականաբար՝ մեռանիլ ։ Երկրորդն է՝ երկիւղ մարդկային, որով կարի իմն երկնչի ոք ՚ի վնասու մարմնոյն իւրոյ ։ Մատ․ 26 37․
Երկիւղս այս՝ ծնանի ՚ի յառաւել սիրոյ աստի կենացս․ և երբեմն գործ սորա է մեղք մահուչափ, և երբեմն ներելի, այսինքն, յորժամ առաւել կամեցի ոք մեղանչել ներելապէս, կամ մահուչափ, քան թէ սպանանիլ ։ Երրորդն է՝ երկիւղ աշխարհական, որով յոյժ երկնչի ոք յընչից իւրոց կողոպտիլ ․ սա ծնանի ՚ի յառաւել սիրոյ ժամանակաւորացս, և երբեմն է մահուչափ, և երբեմն ներելի ․ նոյն կերպիւն որպէս ասացաւ զմարդկային երկիւղէն ։
Չորրորդն է՝ երկիւղ ծառայական, որով երկնչի ոք մեղանչել նախկնաբար վասն գեհենոյն ։
Հինգերորդն է՝ երկիւղ սկզբնական, որով երկնչի ոք ՚ի գեհենոյն, և ՚ի բարկացուցանելոյն զած ։
Ուստի այսպիսիս՝ իբր թէ ունի զերկուս աչս․ զմինն առ ՚ի պատիժ, և զմիւսն առ ած, և այս է նախկնագոյն ։ Վեցերորդն է երկիւղ որդիական, որով երկնչի ոք միայն ՚ի բարկացուցանելոյն զած, զի մի՛ անջատեսցի ՚ի նմանէ ։ Արդ՝ թիւ նախ ասացեալ երկիւղիցս՝ այսպէս առեալ լինի ։ Երկիւղն՝ ումն է ՚ի յոգւոյն սրբոյ, և ընդ ոգւոյն սբյ՝ որպէս երկիւղն սկզբնական, և որդիական ։ Ումն է ՚ի յոգւոյն սրբոյ, այլ ոչ ընդ ոգւոյն սրբոյ, որպէս է՝ ծառայականն ։ Ումն է ընդ ոգւոյն սրբոյ, այլ ոչ ՚ի յոգւոյն սրբոյ, քզի ոչ է պարգև, ոչ է բնական երկիւղն ։

Եւ ոմն՝ ոչ է ընդ ոգւոյն սրբոյ, և ոչ 'ի յոգւոյն սր-
Ա բոյ, որպէս է՝ մարդկայինն, և աշխարհականն. զորս
ոչ շնորհ ոգւոյն սրբոյ համարիմք ընդ ինքեան, և ոչ
առնեալ լինի ոգւով սրբով: Է՝ տակաւին և այլ եր-
ա.յոհ. կիւղ պատկառանաց, որ միայն 'ի մէջ ամենայն եր-
4.18. կիւղից մնացէ 'ի վերին գաւառն, որպէս ասէ սաղ-
սաղ.18. մոս. երկիւղ Տն̃ մնայ յաւիտեանս յաւիտենից:
9. Այդ՝ պատկառանքն է՝ յետս խորշումն 'ի մտածմանէ
մեծութեանն այ̃, աղբիւրն յատուկ 'նմանատուն:

եկլես. Եւ արդ՝ երկիւղն այ̃ զբաղում բարիս գործէ. քան-
1.27. զի՝ արտաքսէ զմեղս. ըստ այնմ որ ասէ սիրաք, եր-
կիւղ Տն̃ արտաքսէ զմեղս:

եկլես. Ծնանի զիմաստութիւն, ոպ̃ ասէ սիրաք. երկիւղ Տն̃
1.25. արմատ իմաստութե:

եկլես. 'Ի բաց հերքէ զհեղգութիւն, զի ասէ սիրաք՝ որ երկն-
34.16. չի յայ̃, ոչ հեղգանայ:

եկլես. Հաստատէ զմիտս, որպէս ասէ սիրաք՝ եթէ ոչ պա-
27.4. հեսցես զքեզ յերկիւղ Տն̃, վաղվաղակի կործանեսցի
տուն քո:

սաղ. 33 Փարթամացուցանէ հոգևորապէս՝ ըստ սաղմոսին որ
10. ասէ՝ ոչինչ է պակասութիւն երկիւղածաց նորա:

եկլես. Համբերէ զգործս բարիս՝ զի ասէ սիրաք, որ երկնչի
15.1. 'ի Տնէ, արասցէ զբարիս:

եկլես. Հեշտացուցանէ զսիրտս, որպէս ասէ սիրաք, երկիւղ
1.12. Տն̃ հեշտացուցանէ զսիրտս:

առակ. Երկայնակեաց առնէ՝ զի ասի առակաց. երկիւղ Տն̃
19.23. յաւելու զաւուրս բազումս:

առակ. Ոռոգանէ զջերմեռանդութիւն, ոպ̃ ասէ առակն՝
14.27. երկիւղ Տն̃ աղբիւր կենաց:

եկլես. Հատուցանէ յաւիտենականապէս՝ որպէս ասէ սի-
1.12. րաք, որ երկնչի յայ̃, բարի լիցի նմա 'ի վախ-
ճանի:

Յա-

Յաղագս պարգևի ծառայական երկիւղին ։
Գլ. Խ.

Ծառայական երկիւղն է պարգև ոգւոյն սրբոյ, սակայն ոչ է ընդ ոգւոյն սրբոյ. որպէս առաւօտն է յարեգականէն, այլ ոչ ընդ արեգական ։ Արդ՝ ծառայական երկիւղն պատրաստէ տեղի ոգւոյն սրբոյ. մինչ զի զնա մուծանէ 'ի ներքս, որպէս ասեղն զաւխանին. զի ասեղն այնպէս մուծանէ 'ի ներքս զդերձանն, մինչ զի յառաջանայ քան զնա, այլ ոչ ընդ նմին մնայ ։

Ծառայական երկիւղն՝ որպէս ասէ օգոստինոս՝ է բարի զոր ոչ ոք բարեպէս առնու 'ի կիր. Ա զի թէպէտ ունակութիւն ծառայական երկիւղին է բարի ըստ ինքեան, նա և ըստ որում է պարգև ոգւոյն սրբոյ, սակայն՝ գործ նորա երբեմն է մեղք. վասն որոյ ծառայական երկիւղն զերկուս իրս առնէ ։ Առաջինն է որ պատրաստէ զճանապարհ սիրոյն ։ Երկրորդն է որ յետս քարշէ 'ի մեղաց՝ միայն վասն երկիւղի պատժոյն. ըստ առաջնոյն բարի է. ըստ երկրորդին՝ զանազանի ։ Ուստի գիտելի է՝ զի կիրառումն ծառայական երկիւղին՝ է կրկնակի, այսինքն, յորժամ ոք առնու 'ի կիր զէութիւն ունակութեան միայն, կամ 'ի կիրառնու զծառայականութիւնն ։ Առաջնով կերպիւն կիրառումն նորին է բարի, զի այն է սարսռիլ 'ի յաւիտենական պատժոց, որ է բարի ։

Եւ զի այն է ընդ սկզբնական երկիւղին ։ Ըստ երկրորդի եղանակին կիրառումն նորին է չար. զի կիրառումն նորա՝ է՝ բնութբ խորշիլ 'ի չարէն, վասն երկիւղի պատժոյն, սակայն տենչումն չարին է՝ 'ի կամս նորին. և հեռաւոր գործն, եթէ յուսայր մնալ անպատիժ, որպէս ասէ օգոստինոս ։ Եւ այսպէս իմացեալ լինի ասացեալն 'ի նմանէ՝ որ ասէ՝ ծառայական երկիւղն է բարի, սակայն ոչ որ երկնչի ծառայաբար՝ բարեպէս առնէ. զի առնել զբարին՝ է 'ի բարութէ գործեալ իրին. այլ առնել բարեպէս, այսինքն՝, արդիւնաւորապէս՝ է 'ի բարութէ առնողին, որ առնէ զօրութբ սիրոյն, և շնորհաց ։

Յաղագս սկզբնական երկիւղին ։ ԳԼ. ԽԱ.

Եսայ. 26.18.
Ա.յոհ. 4.18.

Սկզբնական երկիւղն՝ նմին իրի այսպիսի անուամբ յորջորջի , զի է նախապէս սկսողացն ապաշխարել ․ ուստի ասէ Եսայի Տ՟ր , յերկիւղէ քումմէ յղացաք , և ծնաք զհոգի փրկութե՛ ։ Քանզի դեռ ևս են ՚ի նեղութեան վասն մեղաց զորս արարին , այլ նեղութիւնս այս արտաքսի՝ յորժամ խիղճ մտացն լիապէս պայծառանայ ։

Ա

Քանզի կատարեալ սիրոյն սասի արտաքսել զսկզբնական երկիւղն՝ ըստ այնմ որ ունի զբնութիւն ծառայական երկիւղին, այսինքն, ըստ որում ունի զաչս առ պատիժն ։ Քանզի սկզբնական երկիւղն ունի զերկուս աչս ․ զմինն առ փառսն որ է նման եական ․ և զմիւսն առ պատիժն , որ է նման պատահական ․ այլ ծառայական երկիւղին է եական ։ Դարձեալ՝ սկզբնական երկիւղն խորշի ՚ի ներելի մեղաց , վասն տանջանաց քաւարանին , որով համաձայնի ընդ կատարելոյն , որ և նա երկնչի ՚ի տանջանաց քաւարանին , ըստ այնմ որ յապաղեցուցանէ ՚ի փառաց , և կամ անջատէ առ ժամանակ մի ։ Եւ ծանիր, զի կրկին է սէրն , այսինքն, որդիական՝ որով սիրեմք զա՛ծ վասն ինքեան միայն ․ և վարձկանական , որով սիրեմք զա՛ծ նախկինաբար վասն ինքեան , և երկրորդաբար վասն վարձու ։

Եւ երկակի սիրոյս այս , պատասխանէ կրկին երկիւղն այսինքն , որդիականն՝ և սկզբնականն ։

Քանզի որդիական երկիւղն պատասխանի տայ որդիական սիրոյն . իսկ սկզբնականն՝ պատասխանի տայ վարձկանական սիրոյն ։

Յա-

Յաղագս որդիական երկիւղին ։ Գլ. ԽԲ.

Որդիական երկիւղն՝ յատկապէս երկնչի բարկացուցանել զա՟ծ․ որ թէ և վ՟ս մեղացն ոչ անջատիւր յա՟յ, սակայն խորշէր 'ի մեղաց, զի մի՛ վիրաւորեսցէ զնա․ և այսու զանազանի որդիական երկիւղն 'ի սկզբնականէն․ զի սկզբնականն երկնչի անջատիլ յա՟յ, վասն խղճի մեղացն․ իսկ որդիականն միայն երկնչի բարկացուցանել զա՟ծ ։

Է՛ և այլ զանազանութ՟ի․ զի սկզբնական երկիւղն՝ է անկատարից, այլ որդիականն կատարելոց ։

Երրորդ զանազանութիւն․ վ՟զի 'ի յերկիւղի պատժոյն՝ են երկու, այսինքն, խթումն, և զգուշութիւն․ այլ արդ՝ խթումն վերաբերի առ սկզբնական երկիւղ․ (զի այնպիսի խթումն՝ է 'ի խղճէ մնաց մեղացն, զոր ոչ գիտէ թէ իցէ թողեալ) իսկ զգուշութիւնն վերաբերի առ որդիական երկիւղն․ քանզի որպէս կատարեալն զգուշանայ 'ի մեղաց, զի մի՛ բարկացուցանիցէ զա՟ծ, այսպէս և հետևաբար զգուշանայ 'ի պատժոյն․ այլ սակայն պատահմամբ ։

Այլ և որդիական երկիւղն՝ ասի ս՟բ, և ողջախոհ ։ Ա. սաղ. 18.9.

Յաղագս պարգևի ա՟ծպաշտութե՟, կամ՝ գթութեան ։
Գլ. ԽԳ.

Պարգև ա՟ծպաշտութե՟ն կայանայ 'ի յերիս իրս, այսինքն, 'ի պաշտօն ա՟յ, և 'ի պատկառանս ս՟բ գրոց, և 'ի պատիւ ընկերին ։ Արդ՝ պաշտօն ա՟յ կայանայ 'ի դաւանութ՟ի ա՟ծային մեծութեան ։ հռոմ. 10.17. յոհ. 5. 39.

Պատկառանք ս՟բ գրոց, կայանայ 'ի յայս, զի նմա հաստատապէս հաւատասցի, զգուշութ՟բ պահեսցի, և հաւատարմապէս ուսուսցի ։ Իսկ պատիւ ընկերին կայանայ 'ի պատկառանս վերնագունին․ 'ի համաձայնութ՟իս հաւասարից․ և 'ի յօգնութ՟ի ստորնագունից ։ Ա. եփես. 4.11. հռոմ. 12.10.

Յաղագս պարգևի գիտութեան ։ ԳԼ․ ԽԴ․

Գիտութե պարգևն՝ ունի նման զգործս իւր ընդ խոհեմութե , որ է քաղաքական առաքինութի ։ Այլ զանազանի 'ի նմանէ բանիւ առնելոյն ։ Զի խոհեմութիւնն ելանէ 'ի սկզբանց բնական իրաւանց․ իսկ գիտութեան պարգևն 'ի սկզբանց հաւատոյ ։ Իսկ յատուկ գործ Ա պարգևի գիտութեանն է՝ ուսուցանելն ուղղապէս կենցաղավարիլ 'ի մէջ խեղաթիւր ազգին ։

Արդ՝ երեք իրք խնդրին առ այն․ զի բարեպէս կենցաղավարեսցի ոք 'ի մէջ խեղաթիւր ազգին ։

Առաջինն է՝ զի ունիցի զառարկութիւնս , որով սպառազինիցի ընդդէմ մարտնչողացն հաւատոյ իւրոյ ։

Երկրորդն է՝ զի խորշիցի 'ի չարէն ։ Երրորդն է՝ զի բարեպէս և խոհեմաբար զժամանակաւորս մատակարարեսցէ ։ Դարձեալ՝ պարգևի գիտութեանն է՝ ուղղել զգործս ըստ կանոնաց բանականին , և ըստ համաձայնութեանն այ̃ ։ Դարձեալ՝ պարգևով գիտութեան գիտացեալ լինի , զի մի 'ի ներքոյ կերպարանաց բարւոյն թաքչիցի չարն ։ Դարձեալ՝ պարգև գիտութեան կառավարէ զա̃ծպաշտութիւն , վս̃ որոյ և համեմատին իրերաց ։ Դարձեալ՝ պարգևով գիտութեան գիտէ մարդն՝ թէ զինչ արդեօք իցէ․ յորմէ իցէ․ և առ ինչ իցէ ։ Դարձեալ՝ գիտութեան պարգևն է գիտութի առնելեացն․ և վասն այնորիկ բանիւ գիտութեան՝ կայանայ 'ի ճանաչման ըստ որոյ ոչ է առաքինութի․ այլ բանիւ առնելեաց՝ կայանայ 'ի գործողութե , ըստ որոյ է առաքինութի ։

2․ տիմ․ 2․5․

Յաղագս պարգևի խորհրդոյն: Գլ. ԽԵ.

Խորհուրդն առեալ լինի ըստ երից եղանակաց. քանզի երբեմն խորհուրդ առի ընտրութիւն այնց իրաց՝ որք օգնեն վախճանին առ որ գնեմք. և այսպիսի խորհուրդս վերաբերի առ խոհեմութիւնն, և կամ՝ նոյն է ընդ խոհեմութեան:

Երբեմն առի խորհուրդ՝ յորդորումն բարձրագոյն իրաց՝ որոց ոչ եմք պարտական, և ըստ այսմ՝ խորհուրդն առի խրատ. ո՟պ այն՝ եթէ կամիս կատարեալ լինել, երթ վաճառեա զոր ունիս, և այլն: Երբեմն առի խորհուրդ՝ խոհեմութիւնն յոյժ հմտացեալ 'ի մէջ տեսականաց՝ և գործնականաց պարգևաց, և ընտրութիւն ումանց դժուարին գործոց. թէ լինիցիմք այնմ՝ պարտական՝ և թէ ոչ. և ըստ այսմ՝ խորհուրդն առի պարգև. և այսպէս՝ խորհուրդն և խոհեմութիւնն՝ են նոյն ըստ էութեան, սակայն խորհուրդն յաւելանայ 'ի վերայ խոհեմութեան միով պատահմամբ՝ ըստ որում նորա է հրամայել: Մատ. 19 21. Ա

Եւ ծանիր, զի որպէս առ պարգև գիտութեան վերաբերի՝ անարգել զչարն, և ընտրել զբարին. այսպէս վերաբերի առ խորհուրդն՝ զգուշանալ 'ի վտանգից, որք են յաքսորս այս: Դարձեալ՝ որպէս պարգև գիտութեան ունի ուղղել զգթութիւն, և զաստուածպաշտութիւն, այսպէս պարգև խորհրդոյն՝ ունի ուղղել զզօրութիւն: Արդ՝ այսու տարբերին խորհուրդն, և գիտութիւնն. զի խորհուրդն՝ է առ դժուարինս և բարձրագոյնս, այլ գիտութիւնն՝ առ բարին, և չարն: Եսայ. 7. 16.

Յաղագս պարգևաց իմաստութեան, և հանճարոյ: Գլ. ԽԶ:

Իմաստութիւն, և հանճարն, զանազանին. զի իմաստութիւնն է ճանաչումն ա՟յ բացարձակապէս: իսկ հանճարն՝ է ճանաչումն համեմատաբար, այսինքն, համեմատելով զստեղծուածս առ ստեղծօղն: Դարձեալ է՝ և այլ զանազանութիւն, զի

հանճարով ճանաչի ըստ լուսաւորութբ լսեցելոյ 'ի սբ
Ա գիրս . իսկ իմաստութբ՝ ճանաչի 'ի ձեռն կրթութե։ Դարձեալ՝ հանճարով ճանաչեմք զած , այլ իմաստութբ ճաշակեմք զքաղցրութի նորա ։ Ուստի իմաստութի՛ն ըստ ստուգաբանութե որ 'ի լատինն ասի իբրու համով առաքինութեց կազմեցեալ գիտութի ։ Դարձեալ՝ որպէս ասէ գրիգոր , հանճարովն եմք նախատեսք , այլ իմաստութբն հասունք ։

Յաղագս երանութեանց առ հասարակ ։

Գլ. ԽԷ.

Ա Արդ՝ եօթն են երանութիւնքն ըստ զանազանութե աստիճանացն . թէպէտ իցեն ութ ըստ էութե, զորս թուէ փրկիչն 'ի բանս քարոզութեան որ 'ի լերինն , այսինքն , աղքատութի հոգւոյ . հեզութի , սուգ . քաղց արդարութե . ողորմածութի . սրբութի սրտի . և խաղաղութիւն ։ Իսկ թիւ երանութեցս այսոցիկ առեալ լինի ըստ ամբողջութեան կատարելութե ։ Քանզի առ ամբողջութի կատարելութե երեք իրք խնդրին, այսինքն , հեռանալ 'ի չարէն , և յառաջանալ 'ի բարին . և կատարեալ կայացումն 'ի լաւագոյնն ։ Արդ՝ չարն , կամ երևի 'ի փքացմանէ հպարտութե , կամ 'ի հեռէ չարութեանն , և կամ 'ի հինանդութե ցանկութե ։

Այլ ընդդէմ երից այսոցիկ՝ են երեք երանութիք , այսինքն , աղքատուի հոգւոյ՝ ընդդէմ չարի փքացմանն . հեզութի՝ ընդդէմ չարի հեռասրարութեան. սուգ՝ ընդդէմ վավաշոտութե ։ Դարձեալ՝ յառաջանալն 'ի բարին՝ իմացեալ լինի ըստ ածային նմանութե , որ է ըստ երկուց ճանապարհաց Տն , այսինքն , ողորմութե և ճշմարտութեան . որպէս ասէ սաղմոսն , ամ ճանապարհ Տն ողորմութբ և ճշմարտութբ են .

սաղ. 24. 10. Եւ ըստ երկուց ճանապարհացս այսոցիկ , առեալ լինին երկու երանութիքն , այսինքն , քաղցն արդարութեան , և ախորժումն ողորմածութեան ։

Իսկ կայացումն 'ի լաւագոյնն՝ իմացեալ լինի 'ի յերկուս , այսինքն , 'ի սրբում ճանաչման , և 'ի հանգստեան ախորժման . և ըստ այսմ առեալ լինին երկոյետին երանութիւնքն, այսինքն, սրբութիւն սրտին առ 'ի տեսանել զԱստուած, և խաղաղութիւն մտաց՝ առ կատարելապէս զմիաւորումն։ Արդ՝ եօթն երանութիւնքս այսոքիկ արտաքսեն զեօթն գլխաւոր մոլութիւնս։

Քանզի՝ աղքատութիւն հոգւոյն՝ բացամերժէ զհպարտութիւն. հեզութիւնն զբարկութիւն. սուգն՝ զնախանձ. (զի որ սգայ վասն մեղաց, այլոց ոչ նախանձի.) քաղց արդարութեան՝ զծուլութիւնն. ողորմածութիւնն զագահութիւն. սրբութիւն սրտին զորկրամոլութիւն. (զի սրբութիւն սրտին՝ ոչ ծառայէ որովայնին ըստ օրինակի անբան անասնոց.) և խաղաղութիւնն՝ արտաքսէ զըղձախոհութիւն. քանզի ընդ ճաշակելն զհոգևորն, անհամանան ամենայն մարմնաւորք։ Եւ որպէս 'ի թուումն պարգևաց՝ է կարգ արհեստական, զի նախ դնին արժանաւորագոյնքն. այսպէս և յերանութիւնսն, է կարգ բնական. զի արժանաւորագոյնքն 'ի վերջ դնին։

Յաղագս առաջնոյ երանութեան։ Գլ. ԽԲ.

Արդ՝ աղքատութիւն հոգւոյն առեալ լինի աստ, վասն հրաժարելոյն 'ի սիրոյ աշխարհի, այսինքն, 'ի սիրոյ մարմնական հեշտութեանց, 'ի փարթամութեանց, և 'ի յատուկ գերազանցութեանց։ Քանզի զերեքեանս զայսոսիկ սպասաւորէ սէր աշխարհիս. ուստի ասէ մեկնիչն 'ի վերայ ղուկասու. աղքատք են՝ որք ոչ խնդրեն զհեշտասխտութիւնս։ Եւ 'ի վերայ մատթէոսի՝ ասէ գրիգոր. աղքատք հոգւով են խոնարհքն, որք երկնչին յԱստուծոյ. և միւս մեկնիչն ասէ. աղքատք հոգւով են, որք ոչ ունին, և զամենայն ունին։ 2. կոր. 6. 10.

Ա.

Յաղագս երկրորդի երանութեան։ Գլ. ԽԹ.

Հեզ է որպէս ասէ արիստոտէլ․ որ ոչ
կրէ՝ և ոչ քարշի։ Իսկ հեզութիւնն է
նոյն ընդ հեզաբարոյութե, որպէս յայտ է
'ի մենինչէն՝ որ 'ի վերոյ մատթէոսի․ ուր
ասէ՝ թէ հեզաբարոյ է, որ ոչ զգայ
Ա զդառնութի ոգւոյ։ Յորմէ յայտ է՝ թէ
հեզաբարոյութիւնն է մաքրեալ հոգւոյն․ և
կարէ ասիլ՝ թէ հեզաբարոյութիւնն է տեսակ արիութեան
միջնորդութբ համբերութե․ սակայն տարբերին
հեզաբարոյութիւնն, և համբերութիւն․ քանզի համբերութիւնն
է՝ տեւումն նեղութեց մարմնականաց․ իսկ հեզաբարոյութիւնն
է՝ տեւումն նախատանաց։

Յաղագս երրորդի երանութեան։ Գլ. Ծ.

Սուգն է՝ սգալ վասն մեղաց, և ատել զնա
այնպէս՝ մինչ զի յարիցուք 'ի յեղծանել
զնա։ Արդ՝ սգալն զչարէն զի փախիցուք
'ի նմանէ, ըստ այնմ որ յետս դարձուցանէ
Ա 'ի սիրեցելոյն, է՝ միայն սիրոյն։
Իսկ սգալն վասն յատուկ ինչ
չարի է՝ իւրաքանչիւրոյ առաքինութե,
զի իւրաքանչիւր առաքինութիւն, սգայ վասն ներհակին իւրոյ։

Յաղագս չորրորդի երանութեան։ Գլ. ԾԱ.

Քաղց արդարութե է՝ սաստիկ տենչումն
արդարութե, կամ ծայրագոյն բաղձոյն։
Արդ՝ քաղց արդարութեան է առաւել
երանութիւն, քան քաղց այլոց կարտինալական
առաքինութեց․ զի արդարութբ
անընդմիջաբար միաւորիմք ընդ
այ, որ ոչ լինի այլովք կարտինալականօք
առաքինութբք։ Քանզի արդարութիւն ըստ այնմ որ
Ա աստ առեալ լինի, պարունակէ զհաւատ, զյոյս, և
1. կոր. զսէր, որք անընդմիջաբար միաւորեն զմեզ ընդ
13.13. այ։

Ցաղագս հինգերորդի երանութեան ։ Գլ. ԾԲ.

Ողորմութիւնն է՝ որով երկրաւորքս շահին երկնաւորքն ։ ՚Ի գործ ողորմութե̃ են չորեքտասանք , այսինքն , եօթն մարմնաւորք . և եօթն հոգևորք ։ Ա

Արդ՝ մարմնաւորականքն են այսոքիկ , Կերակրել զքաղցեալս ։ Արբուցանել զծարաւեալս ։ Զգեստաւորել զմերկս ։ Ժողովել զօտարս ։ Փրկել զգերեալս ։ Այց առնել հիւանդաց ։ Եւ թաղել զմեռեալս ։ Զառաջին վեցն յայտնէ , ունիմք յաւետարանէն . և զեօթներորդն՝ ՚ի տօբիթայ ։ Իսկ գործ հոգևոր ողորմածութե̃ են այսոքիկ , այսինքն . Թողուլ յանցաւորին ։ Ցանդիմանել զմեղուցեալն ։ Ուսուցանել զտգէտսն ։ Խրատել զերկմիտս ։ Մխիթարել զտրտմեալսն ։ Աղօթել վասն փրկութեան ընկերին ։ Եւ համբերել անիրաւութե̃ց՝ ընդդէմ ինքեան ։ Եւ վերջինս յայսմ՝ միայն ասի գործ ողորմութե̃ , զի կակուղ , և խոնարհ պատասխանին՝ խորտակէ զբարկութի̃ . և այս սէ̃ իմն է , այսինքն , հանդարտեցուցանել զսրտմտութիւն բարկացողին ։ մատ. 25 35. տոբ. 2. 9 ղուկ 17. 3. մատ. 5. 44. առակ 15. 1.

Ցաղագս վեցերորդի երանութեան ։ Գլ. ԾԳ.

Սրբութիւն սրտին է՝ որով պայծառանայ և մաքրի սիրտն՝ առ ՚ի տեսանել զա̃ծ , և առ ՚ի սիրել յոյժ ջերմապէս ։ Արդ՝ առեալ լինի աստ սրբութիւն սրտին , ոչ վասն առաքինութեան , այլ վասն ողջախոհութեան լի̃ն , որ է մաքրեալ հոգւոյն ։ Ա

Յաղագս եօթներորդի երանութ՟ն : Գլ. ԾԴ.

Խաղաղութիւնն է՝ կայացումն առաքինութեան, յորմէ է հեշտութի՟ 'ի յամ՟, առանց հակառակութեան մարմնոյ, աշխարհի, Ա և սատանայի. և թէ իցէ այլ ինչ անզօր է: Ուստի յայտ է՝ զի խաղաղութի՟ն է յոյժ մաքրագունելի հոգւոյ: Արդ՝ խաղաղարարքն ասին որդիք ա՟յ առաւել քան զայլսն. զի թէպէտ ողորմութի՟ առաւել նմանեցուցանէ զմարդն ա՟յ ըստ արտաքին գործոյն, սակայն ըստ ներքնոյն, առաւել նմանեցուցանէ խաղաղութի՟ն:

Յաղագս ութերորդի երանութ՟ն : Գլ. ԾԵ.

Ութերորդ երանութիւնն է, զորմէ ասէ՝ երանի որք հալածիցին վասն արդարութ՟ե: Առաքինութ՟իս այս, այսինքն, համբերել հալածանաց վասն արդարութ՟ե, է կապակցեալ ընդ խաղաղութ՟ե. քանզի մինչ խաղաղարարն է՝ առանց հակառակութ՟ե մարմնոյ, աշխարհի, և սատանայի, յայտ է զի լինի պատրաստ 'ի յաղթել զմահ, և զփորձութի՟ մահու: Ուստի տանիլ մահու վասն ՟Քի, է նոյն աստիճան ընդ խաղաղութեան. վասն այսորիկ ասեմ, թէ ութն են երանութիք ըստ էութ՟ն, այլ եօթն միայն՝ ըստ զանազանութեան աստիճանաց. զի 'ի վեր քան Ա զխաղաղութի՟ն ոչ է այլ առաքինութիւն: Զի ասէ Օգոստինոս՝ թէ խաղաղութի՟ն է վերջին և կատարումն ա՟մ առաքինութ՟եց: Իսկ ութերորդ երանութի՟ն ասի դառնալ առ գլուխն կրկին կերպիւ:

Նախ՝ զի նոյն վարձ խոստացեալ լինի, որպէս և առաջնոյ երանութեանն, այսինքն, արքայութ՟ի երկնից: Երկրորդ՝ զի փորձէ զայլս ա՟մ, 'ի վերջնոյն մինչև ցառաջինն՝ թէ ճշմարի՟տք իցեն արդեօք: Ուստի ասէ գրիգոր, թէ ո՞րպիսի իցէ իւրաքանչիւրոք ծածկեալ յինքեան, փորձէն զնա կրեալ նախատինքն: 'Ի յասացելոցս հաւաքի՝ թէ ոճակութի՟ք

կար.

կարդինալական առաքինութեանց , նախկինաբար պատրաստեն 'ի վարժումն գործնական կենաց . իսկ ունակութիւնք պարգևացն՝ պատրաստեն 'ի վարժումն տեսական կենաց . այլ ունակութիւնք երանութեանցն , պատրաստեն առ 'ի կատարելութիւն երկոցունցն ։

Յաղագս հոգևոր զգայութեանց ։ ԳԼ. ԾԶ.

ԻՋեան հոգևոր զգայութեանց , իմանալ հոգւոյն զհոգևորսն՝ զորս 'ի գեղեցկութե փեսային իւրոյ ճաշէ իմանալ ։ Ա
Քանզի ըստ այնմ որ ճառագայթ՝ լսէ զգերագոյն քաղցրանուագ երգն ։
Ըստ այնմ որ բան մարմնացեալ , ճաշակէ զծայրագոյն քաղցրութիւն ։
Ըստ այնմ որ իմաստութիւն , որ պարունակէ զերկոսեան , այսինքն , զբան և ճառագայթ , հոտոտէ զվեհագոյն անուշահոտութի ։ Ըստ այնմ որ բան փչող 'ի սիրոյն , շօշափէ զգերագոյն փափկութի ։ 1. կոր. 13.4. իմաս. 13.5.
Ըստ այնմ որ բան մարմնացեալ՝ և բնակեալ 'ի մեզ մարմնապէս , և ըստ տեսելոյն զինքն մեզ շօշափելի , և համբուրելի , ըմբռնէ զամենաբորբոք աչերն ։ երգ. 1.2 յոհ. 20.7 ղուկ. 24 39.
Արդ՝ յասացելոցս յայտ է զի հոգևոր զգայութիւնքն՝ են մտաւորականք իմացմունք զճշմարտութե , որ է խոկալի . և խոկումն այս՝ սկսանի 'ի զգայութե , և հասանի առ երևակայութիւնն . և անտի առ բանականն ։ և 'ի բանականէն՝ առ իմացումն , և յիմացմանէն առ հանճարն . և 'ի հանճարէն՝ առ իմաստութիւն , կամ առ գերազանցական ճանաչումն . որ սկսանի 'ի կենաս այս , և կատարի 'ի փառս ։ 1. կոր. 12.31.

Յաղագս պտղոց հոգւոյն ։ ԳԼ. ԾԷ.

ԵՐկոտասան պտուղք հոգւոյն , ոչ ասին նոր ունակութիւնք . այլ որպիսութիւնք մխիթարութեանց , որովք մխիթարին հոգիք արդարոց . և մխիթարութիւնքս այսոքիկ հետևին 'ի կատարեալ գործոց ։
Եւ արդ՝ պտուղ հոգւոյն՝ են այսոքիկ . Ա
սէր . խնդութի . խաղաղութի . համբերութիւն . երկայնամտութիւն , բարութիւն . հեզու- գաղ. 5. 22.

ղութի · քաղցրութի · հաւատ. համեստութի · ժուժկալութի և ողջախոհութի :

Յաղագս պաշտման, և պատուոյ : ԳԼ. ԾԲ.

Ա Ածային պաշտօնն է պատկառանք, և ծառայութի, մատուցեալ այ · ուստի թէ
մատուցի ստեղծուածոյ ինչ պատիւն
որ պարտի այ, է կռապաշտութի :
Իսկ պաշտօնն այ պարունակէ զհինգ
իրս, այսինքն, զհաւատ · զիմաստութի ·
զնուէրս, զպատկառանս, և զաղօթս :
Առաջին երկուքն՝ են սրտին · և միւս երկուքն են
գործոյն · և վերջինն՝ բերանոյն : Այլ պատիւն պարտի
ստեղծուածոյ՝ ըստ այնմ որ պատկեր այ : Ուստի
պատիւն է յարգումն, որ պարտի սրբոց · ոպ՝ երանուհւոյ
կուսին, և այլոց : Եւ գիտելի է՝ զի ըստ այնմ
որ երանուհի կոյսն է անձն սբ, պարտի նմա պատիւն·
այլ ըստ այնմ որ է մայր այ, պարտի նմա վերնագոյն
պատիւն : Արդ՝ եթէ անձն որում պարտի պատիւ,
է կացուցեալ 'ի յառաջնորդութե, պարտի նմա պատկառանքն
որ կայանայ 'ի հնազանդութի հրամանաց,
և 'ի հատուցումն պատուոյ : Իսկ եթէ է անձն պարզ,
պարտի նմա միայն պատկառանք՝ որ կայանայ 'ի հատուցումն
պատուոյ : Այլ վերնագոյն պատիւն՝ պարտի
Բ տի գերագանց ստեղծուածոյ, ոպ՝ մարմնոյն քի իմացեալ
ըստ ինքեան, (քանզի ըստ այնմ որ է միացեալ
ընդ բանին՝ պարտի նմա ածային պաշտօն) նա և երանուհւոյ
կուսին, և փայտին՝ յորմէ կախեցաւ քս,
պարտի վերնագոյն պատիւ : Եւ գիտելի է՝ զի ճշմարտի
Գ փայտի խաչին յորմէ կախեցաւ քս, եթէ ոչ իցէ
ձևացեալ իբր զխաչ, պարտի վերնագոյն պատիւ,
զի է գործիք փրկութե մերոյ · իսկ եթէ իբր զխաչ,
պարտի նմա ածային պաշտօն, զի է նշան խաչեցելոյն
· բայց այլ խաչիցն՝ ըստ որում են փայտք, կամ
այլ նիւթ ինչ կազմեալ, ոչ ինչ պատիւ պարտի նց,
այլ ըստ այնմ որք են նշան խաչեցելոյն քի, պարտի
Դ ածային պաշտօն : Իսկ պատկերաց՝ պարտի նոյն երկրպագութի,
որ ինչ պարտի այնոցիկ, որոց են պատկերք
: Ուստի ոչ երկրպագեմք խաչին, կամ պատկերաց,
ըստ որում են կազմեալք, և կամ նկարեալ իրք,
այլ ըստ այնմ որք են նշանք, կամ պատկերք այնոցիկ,
զորս պատուեմք :

Յաղագս պատուիրանաց հասարակաբար ։
ԳԼ. ԾԹ.

ՊԱտուիրանն է հրաման՝ առնելոյ ինչ, կամ ոչ առնելոյ ։ Իսկ 'ի պատուիրանացն՝ ոմանք են ստորասականք, որպէս այն՝ պատուեա՛ զհայր քո, և զմայր. և ոմանք բացասականք, ո՟պ այն՝ մի՛ շնար։ Այլ ստորասական պատուիրանքն նեղագոյն առեալք, ասին հրամանք . իսկ բացասականքն՝ ասին արգելմունք ։ Ստորասական պատուիրանքն առնեն պարտական միշտ, և ոչ առ միշտ. բայց բացասականքն միշտ, և առ միշտ ։

Արդ՝ տասնաբանեայ պատուիրանքն կարեն իմանիլ,
կամ իբր տուեալք, և կամ իբր ներածնեալք ։ Ա
Ըստ առաջնոյ կերպին, միայն վերաբերին առ խորհրդական
ժողովուրդն . իսկ ըստ երկրորդին՝ առնեն
պարտական զամենեսեան . զի զոր ինչ պարունակէ
տասնաբանեան որոշապէս՝, զնոյնն պարունակէ և բնական
օրէնքն անորոշապէս, որ է գրեալ 'ի սիրտ իւրաքանչիւր Ելից.
ումեք ։ Քանզի բնական պատուիրանս այս՝ 20.2.
որ ասէ, զոր ինչ քեզ ոչ կամիս լինիլ, այլում մի՛ Հռոմ.
արասցես, պարունակէ զհրամանս զայսոսիկ՝ որ ասէ. 2.15.
մի՛ սպանաներ . մի՛ գողանար . մի՛ շնար, և զայլս տոբ. 4.
բացասականս, զորս տասնաբանեանն շարադրէ որոշակի 16.
։ Իսկ պատուիրանս այս օրինի բնութեան, այսինքն, ղուկ.
զոր ինչ կամիս թէ լինիցի քեզ, առնիցես այլոց, 6.31.
ներպարունակէ զպատուիրանս զայսոսիկ . պատուեա՛ մատ.7.
զհայր քո և զմայր . և զայլս ստորասականս ։ 12.
Արդ՝ պատուիրանք ոմանք աւանդին հրամայականապէս, Ելից.
այսինքն, ստորասականքն . իսկ ոմանք ցուցականապէս, 20.13.
այսինքն, բացասականքն. և այս վասն այնորիկ՝
զի դժուարագոյն է առնել զբարին, քան խոտորիլ
'ի չարէն ։ Քանզի բազումք պարագայք պահանջին Ծննդ. Է.
առ 'ի առնել զբարին ։ Իսկ 'ի պատուիրանս 21.
ոմանս՝ արգելանին՝ գործն, ունակութիւն, և ախորժակն.
որպէս յայտ է յայսոսիկ, որ ասէ, մի՛ շնար .
մի՛ ցանկար կնոջ ընկերի քում, զի յօժարութիւնն է
կարի իմն անկարգ առայս ։ 'Ի յոմանս միայն արգելանի
գործն, որպէս մինչ ասի՝ մի՛ սպանաներ . և զայս

ասեմ՝ միայն ըստ կերպի աւանդելոյն, և ոչ ըստ ճշմարտի իմացման. քանզի ըստ ճշմարտի իմացմանն ա͞ծ՝ բացասական պատուիրանք արգելուն զսիրտն, և զձեռն :

Եւ գիտելի է՝ զի բազում կերպիւ լինիմք պարտականք առ բարին, այսինքն, ըստ բնական օրինաց, որպէս է՝ սիրել զա͞ծ 'ի վերքան զա͞մ. և ոչ ումեք
տոբ. 4. առնել զոր ինչ մեզ լինել ոչ կամիմք :

16. Ըստ ա͞ծային պատուիրանաց՝ որպէս էր ադամ պարտական
Ծննդ. ա͞ծային պատուիրանաց ինքեան տրեցելոց.
2. 16. նոյնպէս և հրէայքն՝ տուեալ հրամանաց նոցին :

ղևտ. Ըստ ուխտին՝ զի ըստ օգոստինոսի, ուխտելն է կամացն.
18. 26. այլ հատուցանելն՝ հարկաւորութեան. որպէս
սաղ. 75 կրօնաւորքն պարտականք են ուխտի կանոնաց իւրեանց :
12. Ուստի 'ի յոմանս այնք որք են խրատք, լինին հրամանք, թէպէտ յառաջքան զուխտելն ոչ էին պարտականք :

Ըստ հրամանաց սրբոց հարցն, ո͞պ պահել զպահս, զվիճիլս սրբոց, և այլք նմանք :

եբր. 13 Ըստ պատուիրանաց առաջնորդաց, ըստ այնմ որ
17. ասէ, յաթոռն մովսիսի նստան դպիրքն : Դարձեալ՝
մատ. 23 որ ձեզ լսէ, ինձ լսէ :

2. Ըստ սովորութե, քանզի պարտական է ա͞մ ոք՝ կեալ
եկլէս. 5 ըստ սովորութեան գաւառին իւրոյ, եթէ ոչ իցէ
2. 7. ընդդէմ ա͞ծային օրինաց, և բարի վարուց :

1, պետ. Ըստ խղճի մտաց՝ զի ըստ օգոստինոսի, որ ինչ լինի
2. 2. ընդդէմ խղճի մտաց, չինէ առ գեհեանն :

Բայց թիւ պատուիրանաց առեալ լինի այսպէս. զի ոմանք կարգեն զմեզ առ ա͞ծ, և ոմանք առ ընկերն.
ելից. և զայս կամեցաւ ա͞ծ ցուցանել՝ յորժամ գրեաց զնոսա,
32. 15. յերկուս տախտակս : 'Ի յառաջին տախտակն էին երեք հրամանք՝ որք վերաբերին առ ա͞ծ. որոց առաջինն վերաբերի առ հայր, զի է զա͞ծայնոյ միութե՟ :

Երկրորդն է՝ առ որդին ա͞յ, զի է զճշմարտութենէ երդման : Երրորդն առ հոգին ս͞բ, զի է զհոգևոր պարապմանէ : Իսկ յերկրորդի տախտակին էին եօթն հրամանք, որք վերաբերին առ ընկերն. որոց առաջինն է՝ զբարեաց՝ որք են առ ընծայելիք. ո͞պ այն՝ պատուեա զհայր քո : Իսկ այլք վեցքն՝ վասն զգուշանալոյ 'ի չարեն, որք կարեն լինիլ սրտիւ, բերանով, և գործով : Արդ՝ գործովք վնասեմք ընկերին երեք կերպիւ, կամ 'ի յատուկ անձն, կամ 'ի զուգակցեալ

ցեալ անձն , և կամ ՚ի յիւրս նորին ․ վասն որոյ և
տուեալ լինին երեք հրամանք․ առաջինն է՛ մի՛ սպանաներ ․ Ելից 20․13․
երկրորդն մի՛ շնար ․ երրորդն մի՛ գողանար ։
Իսկ բերանով վնասեմք ընկերին ․ և ընդդէմ այսմ է
այն որ ասէ ․ մի՛ առնիցես ընդդէմ ընկերի քոյ սուտ
վկայութի ։ Այլ սրտիւ վնասեմք ընկերին կրկնակի ․
երբեմն նկատմամբ առ բանաւոր իրն ․ և զայսմանէ
ասէ , մի՛ ցանկար կնոջ ընկերի քոյ ։ Եւ երբեմն
նկատմամբ առ անբան իրս ․ վասն որոյ ասէ՝ մի՛
ցանկանայցես ընչից այլոց ։

Յաղագս առաջնոյ հրամանին ։ Գլ․ Կ․

Առաջին հրամանն ունի երիս մասունս ։ Ելից 20․3․
Առաջինն է՛ մի՛ ունիցես զա՟ծս օտարս
առաջի իմ․ ուր արգելեալ լինիմք երկրպագանել
հոգևոր ստեղծուածոյ , այսինքն
, հրեշտակի ։ Երկրորդն է՛ մի՛
առնիցես կուռս ձեռագործս , այս է՝
զպատկերս ձուլածոյս , որք ոչ են յայտնիչք
բնական իմն իրողութեանց ։ Երրորդն է՝ և ոչ
զամ՟ նմանութի , այսինքն , զպատկեր բնական իրի ․
և յարէ ՚ի նոյն որ է յերկինս ՚ի վեր , որ՟ արեգական ,
և լուսնոյ ․ և յերկիր ՚ի խոնարհ , որպէս մարդոյ ․
եզին ․ և սոյնպիսեաց ։ Եւ մի՛ այնոցիկ որք են ՚ի
ջուրս ՚ի ներքոյ երկրի , այսինքն , ձկանց ։
Եւ մի՛ երկիրպագանիցես նոցա , այսինքն , արտաքին
գործով․ և մի՛ պաշտեսցես , այսինքն , ներքին ախորժակօք
։ Յայտ է յայսմանէ՝ զի ոչ են յանդիմանելիք Ա
քրիստոնեայք՝ որք առնեն զպատկերս․ քանզի ոչ առնեն
վասն երկրպագանելոյ և պաշտելոյ զնոսա ըստ
ինքեան․ այլ զայնս՝ որոց յանունն նկարեալ է պատկերն
։ Իսկ առաջին մասն հրամանիս այս՝ որ ասէ՝ մի՛
ունիցիս զա՟ծս օտարս , ցուցանէ զհրէայս , և զհագարացիս
, լինիլ կռապաշտս ․ զի զարս սատանայացեալս
, և զօտարս պաշտեն իբրև զա՟ծայինս , այսինքն ,
հրէայք զնեռն ․ և հագարացիքն զիւրեանց մոլորեցուցիչն Բ
։ Ընդդէմ երկրորդի մասին , այսինքն , մի՛
առնիցես քեզ դրօշեալս , առնեն հերետիկոսքն՝ որք
ոչ հաւատան զա՟յ , եթէ ոչ՝ զոր ինչ երևակայութի , Գ
և կարծիք իւրեանց կերպաւորեն ,

Ընդ․

Ընդդէմ երրորդիս՝ առնեն չար քրիստոնեայքն. զի հպարտն՝ պաշտէ զնմանութիւն այնոցիկ, որք են յերկինս 'ի վեր. վասն զի սիրէ լինել նախագահ 'ի վերայ այլոց: Ագահն պաշտէ զնմանութիւն այնոցիկ, որք են յերկրի, այսինքն, զարծաթ, և զփարթամութիւն: Փիլիպ. 3.19. Հեշտասէրքն՝ պաշտեն զնմանութիւն այնոցիկ, որք են 'ի ջուրս, այսինքն, զփափկութիւն:

Յաղագս երկրորդի հրամանին: Գլ. ԿԱ.

Երկրորդ հրամանն է՝ մի՛ առնուցուս զանուն ա՟յ քո ընդունայն: Աստ արգելեալ լինի երդումն, որ լինի առանց պատճառի, և ստերդմնութիւն:

Զի երկաքանչիւրն, այսինքն, որ երդնու վասն ոչ ինչի. և որ սուտ երդնու, առնու զանունն ա՟յ ընդունայն. զի առաջին առանց պատճառի անուանէ զծայրագոյն ճշմարտութիւնն. և երկրորդն՝ զանուանեալն արհամարհէ: Այլ երեք կերպիւ մեղանչէ ոք ընդդէմ հրամանիս այս, կամ երդնլով ընդդէմ գիտութե՟ իւրոյ, կամ երդնլով զանպատշաճն. և կամ առնելով ընդդէմ երդմանն: Եւ գիտելի է՝ զի երդմունքն զորս առնէ Ա ոք գիտութ՟բ, և տան ցոյցք հայհոյութե՟, ո՟պ երբ ոք երդնու 'ի յայլս, և 'ի գլուխն ա՟յ, և նմանք սոցին. և կամ որք տան ցոյցք անպատկառութե՟, որպէս թէ ոք երդնուցու 'ի խոցուածսն ք՟ի, այսպիսիքս են մեղք մահուչափք, կամ ծանունք, նա և թէ ճշմարիտք իցեն վասն որոյ երդնունն: Եւ հրամանս այս՝ ոչ միայն իմացեալ լինի ըստ նախասացեալ բանին որ ըստ ձայնին, այլ և ըստ բարոյականի իմացմանն: Քանզի անունն ա՟յ առեալ լինի ընդունայն բազում կերպիւ, այսինքն, սրտիւ. բերանով. և գործով: Սրտիւ՝ որպէս չարք, որք միայն անուամբ՝ առանց իրին՝ են քրիստոնեայք, որք թէպէտ ընկալեալք իցեն զսուրբ մկրտութե՟, սակայն զիր խորհրդոյն, այսինքն, զշնորհն՝ ոչ ունին: Բերանով, այսինքն, չար երդմամբ. ուխտազանցութ՟բ, բարողութ՟բ՝ որ լինի ընդունայն դիտաւորութ՟բ. Եսայ. 29.13. և անջերմեռանդ աղօթիւք, զորմէ ասի, Ժողովուրդս այս՝ շրթամբք պատուէ զիս. և սիրտք իւրեանց հեռացեալք են յինէն: Գործովք՝ ըստ այնմ որ կեղծաՄատ. 25.8.

ւորքն

Նորքն առնուն զանունն ա̄յ ըստ վերերևութե̄ արտաքին գործոց , և ոչ սրբութբ̄ սրտի ։ Ուստի այնպիսիքն առնուն զանունն ա̄յ ընդունայն , զի առին Մատ. 6. 2 զվարձս իւրեանց ։

Յաղագս երրորդի հրամանին ։ Գլ. ԿԲ.

Երրորդ հրամանն է՝ յիշեա զի զօր շաբաթուն սբ̄ արասցես , ոչ արասցես 'ի նմա զա̄մ գործս ։ 'Ի հրամանս այս է Ելք. 20. 10. իմն բարոյական՝ ո̄ր պարապիլն առ ա̄ծ, աղօթելով , պաշտելով զնա , և խոկալով զնմանէ . և է իմն խորհրդական, որպէս Ա առնշանութի̄ն պահպանութեան եօթներորդի աւուրն , որ օրինակէր զդադարումն մեղաց. և ըստ այլաբանութեան , զհանգիստ մարմնոյն Քի̄ 'ի գերեզմանին. այլ հոգևորապէս՝ զյաւիտենական հանգիստն ։ Արդ՝ հրամանս այս , երեք եղանակօք առեալ լինի ։ Նախ հասարակաբար , զի դադարեսցուք 'ի մոլութեանց ։ Յայտ. 14. 13. Երկրորդ՝ յատկապէս , զի դադարեսցուք 'ի մարմնական գործոց , որք խափանեն զպարապումն յա̄ծայինս ։ Երրորդ՝ ևս յատկապէս՝ որ լինի յարս տեսականս , որք որոշեն զինքեանս յա̄մ աշխարհական գործոց , զի բոլորովին պարապեսցին ա̄յ ։

Արդ՝ առաջին պարապումն է՝ հարկաւորութե̄ ։

Երկրորդն է՝ պատշաճաւորութե̄ ։ Երրորդն կատարելութեան ։ Արդ՝ ըստ այնմ որ շաբաթն ասի հանգիստ , կամ պարապումն յա̄ծայինսն , որ կիրակէին Յայտ. 1. 10. կարէ ասիլ օր շաբաթու . նա և ա̄մ օր՝ որ սահմանեցեալ է 'ի պատիւ ա̄յ , 'ի յորս պարտէ դադարիլ 'ի Բ ծառայական գործոց , այսինքն , 'ի մեղաց , և 'ի գործոց՝ որք առնեն զխափանումն ա̄ծային պարապմանց ։ Իսկ ծառայական գործք՝ սահմանեալ յեկեղեցւոյ , են ա̄մ արուեստական գործք , այսինքն , հողագործութի̄ . վաճառականութի̄ . դատական ատեան. և այլք նմանք ։

Յաղագս չորրորդի հրամանին. Գլ. ԿԳ.

Ելից. 20. 12. Չորրորդն է՝ պատուեա՛ զհայր քո, և զմայր: Արդ՝ հրամանիս այս յաւելեալ լինի խոստումն, այսինքն, զի երկայնակեաց լինիցիս 'ի վերայ երկրի. քանզի վայել է, զի պահպանօղն կենաց այլոց՝ արժանասցի պահպանութե՟ կենաց իւրոց: Արդ՝ ասի հայր 'ի յայսմ հրամանի մանաւանդ այն՝ որ է սկիզբն ծննդեամբ՝ ըստ գոլոյ բնութեան, որպէս է՝ մարմնաւոր հայրն. և կամ որ է սկիզբն սպասաւորութե՟ վերստին ծննդեան ըստ գոլոյ շնորհաց, որ է՝ հոգևոր հայրն: Առեալ լինի հայրն՝ և ըստ այլոյ եղանակի, ո՛չ ըստ յատուկ բանին, այլ ըստ հասարակ՝ փոխանակ ծերոյ, որ ասի հայր՝ ըստ տիոցն. և կամ վասն թագաւորի, որ ասի հայր՝ ըստ պաշտպանութեան: Իսկ պատիւն իմացեալ լինի աստ՝ ըստ կրկին կերպի, այսինքն, վասն տալոյ զմարմնական պէտս՝ և վասն առնելոյ զպատկառանս, և զհնազանդութիւն: Այլ հնազանդութիւն զանազանի՝ ըստ զանազանութե՟ հարանցն. զի հոգևոր հօրն, այսինքն, առաջնորդի՝ պարտիմք հնազանդել 'ի հոգևոր իրս: Աշխարհական հօրն, այսինքն, թագաւորի, 'ի ժամանակաւորս՝ հասարակի իրի: Իսկ մարմնաւոր հօրն՝ 'ի տնօրէնութիւնս իրաց որ վասն ընտանեաց:

4. Թագ. 6. 21.

Ա

Յաղագս հինգերորդի հրամանին: Գլ. ԿԴ.

Ելից. 20. 13. Ա Մատ. 5. 21. Հինգերորդն է՝ մի՛ սպանաներ. աստ որոշակի արգելեալ լինի մարդասպանութիւն. այլ անորոշակի՝ ամ՟ շարժումն բարկութե՟ ընդդէմ ընկերին. թէ իցէ այն սրտին միայն, որպէս բարկութիւն. թէ բերանոյն՝ որպէս նախատինքն. թէ գործոյն՝ որպէս հարկանումն որոց առ 'ի մահ. կամ փետտումն հերաց և մօրուաց: Նաև արգելեալ լինի աստ՝ ամ՟ անիրաւ սպանութի. իսկ անիրաւ սպանումն լինի երիւք եղանակօք:

Մինն 'ի կողմանէ պատճառին ․ որպէս այն որ սպանանի առանց մեղաց ։ Երկրորդ՝ 'ի կողմանէ կարգին , որպէս յորժամ սպանանէ այն , որ ոչ է սպասաւոր օրինաց ։ Երրորդ՝ 'ի կողմանէ սրտին՝ որպէս , յորժամ սպանանէ սպասաւոր օրինաց , ոչ սիրով արդարութեան, այլ ցանկութեամբ վրէժխնդրութեան ։ Այլ և բաժանի մարդասպանութիւնն կրկնակի ․ 'ի ճշմարիտն՝ որ ասի մարմնաւոր ․ և 'ի համարեալն՝ որ ասի հոգևոր ։

Այլ հոգևոր մարդասպանութիւնն լինի կրկին կերպիւ ։ Մինն՝ զանցառնելով , որպէս՝ յորժամ տեսանէ ոմն զայլ ոք 'ի վերջին հարկաւորութեան՝ և ոչ օգնէ նմա , ասի սպանանել զնա՝ ըստ համարեալ եղանակին ։ Եւ միւսն՝ առնելովն , այսինքն , երբեմն սրտիւ , այսէ ատելով ․ ըստ այնմ որ ասէ յոհան , թէ՝ որ ատէ զեղբայր իւր՝ մարդասպան է ․ երբեմն բերանով , այսինքն , բամբասելով , զի այն որ բամբասեալ լինի , սպանանի 'ի միտս այնմ , որ լսէ զբամբասանս , 'ի յորում յառաջագոյն էր կենդանի բարի համբաւովն ։ Երբեմն գործով , որպէս չար օրինակ տալով լինել պատճառ գլորման ումեք ․ և յայնժամ ասի՝ սպանանել զնա ըստ համարեալ եղանակին ։

1․յոհ․ 3․15․

մատ․ 18․6․

Բ․

Յաղագս վեցերորդի հրամանին ։ Գլ․ ԿԵ․

Վեցերորդն է՝ մի՛ շնար ․ 'ի հրամանս այս՝ արգելանի ամենայն անօրէն շաղաչարութիւն , որպէս ասէ օգոստինոս , և ամենայն ապօրինաւոր գործ՝ այնց անդամոց ։ Զայսմանէ խնդրեա՛ 'ի գիրս երեք , 'ի ճառս բղջախոհութեան ․ և 'ի միւս ճառն՝ որ զկնի նորին ։

ելից․ 20․14․

Ա․ գլուխ․ 21․և 22․

Յաղագս եօթներորդի հրամանին: Գլ. ԿԶ.

ԵՕթներորդ հրամանն է՝ մի՛ գողանար. այս ըստ օգոստինոսի՝ արգելանի ամենայն կիրառութիւն օտար իրի, ագահութեան պատճառաւ: Այլ արդ՝ կիրառութիւն իրաց օտարաց, կարէ լինել օրինաւոր երեք կերպիւ: Նախ՝ յորժամ լինի ոչ
Ա ՚ի յագահութենէ, այլ ՚ի հնազանդութենէ. որպէս արարին որդիքն իսրայէլի յափշտակելով զանօթս եգիպտացւոց: Երկրորդ՝ յորժամ լինի ՚ի զգուշութենէ, որպէս՝ թէ ոք գողանայցէ զսուր մոլեգնելոյն, զի մի՛ ինքեան, կամ այլոց վնասեսցէ: Երրորդ՝ յորժամ լինի ՚ի հարկէ՝ որպէս թէ ոք քաղցեալ մինչև ՚ի մահ, գողանայցէ զհաց. զի ՚ի հարկաւոր ժամանակի, ամենայն ինչ է հասարակաց:

Յաղագս ութերորդի հրամանին: Գլ. ԿԷ.

ղեւտ. 19. 11.

ՈՒթերորդ հրամանն է՝ մի՛ խօսեսցիս ընդդէմ ընկերի քո զսուտ վկայութիւն. աստանօր արգելեալ լինի ամենայն ստութիւն, որպէս ասէ օգոստինոս, որ բաժանի երիւք տարբերութեամբ: Քանզի է՝ ստութիւն վնասակար, որ վնասէ. և է՝ ստութիւն օգտակար, որ օգնէ. և է՝ որ յաղագս կատակի, որ հեշտացուցանէ:
Ա Նա և պարունակի ՚ի հրամանս այս՝ ըսել զճշմարտութիւնն ՚ի հարկաւոր ժամանակս. սակայն պատճառն և դէպ ժամանակին առնէ ըսել զճշմարտութիւն գոլ պատկանաւոր:

Յաղագս իններորդի, և տասներորդի հրամանին ։
ԳԼ. ԿԸ.

Իններորդ, և տասներորդ հրամանն է՝ այն ․ մի՛ ցանկար տան ընկերի քո ․ և մի՛ ցանկար կնոջ նորա ․ ոչ ծառայի նորա, ոչ աղախնոյ նորա ․ ոչ եզին, և ոչ իշոյ նորա ․ և ոչ ա̃մի, որ ինչ նորա իցէ ։ Արդ՝ երկու արգելեալ լինի աստ, այսինքն, ցանկութի մարմնոյն՝ 'ի կին ընկերին ․ և ցանկութիւն աչաց՝ 'ի յիրս այլոց ։ ելից․ 20․17․ 1․յոհ․ 2 16․

Քանզի առ երկոսեանս այսոսիկ, կարի իմն ձգի ապականեալ բնութիւն ․ առ մինն վասն պահպանութեանն իւրոյ 'ի գոլ անհատին ․ և առ միւսն՝ առ 'ի պահպանութի ինքեան 'ի գոլ տեսակին ։

Ա Յայսմ վայրի ոչ արգելեալք լինին յօժարութիւնք այնք, որք ոչ են ընդ մերով իշխանութեամբ, որք են 'ի յառաջականութենէ արմատոյ, այսինքն, լուցկին, կամ 'ի հեշտութենէ զգայութեան ․ զի անկարելի է թէ ցանկութիք այնոքիկ ոչ իցեն 'ի մեզ, այլ արգելի յօժարութիւնն այն՝ որ է 'ի հաւանութենէ բանականին ։ Եւ թէպէտ հրամանս այս տուեալ լինի ընդդէմ երկուց ցանկութեանց միայն, սակայն իմացեալ լինի անդ արգելեալ ա̃մ ցանկութի չար կամաց ։

Յաղագս խրատուց հասարակաց ։ ԳԼ. ԿԹ.

Խրատն՝ բաց այնմ որ բաժանի ընդդէմ հրամանին է՝ յիշեցումն լաւագոյն բարւոյն, որ ում ոչ եմք պարտական ։ Արդ՝ խրատքն 'ի բազում իրս տարբերին 'ի հրամանաց ։ Նախ՝ զի առ հրամանն եմք պարտական․ իսկ առ խրատսն ոչ ․ զի պահել զհրամանս՝ է՝ հարկաւորութեան ․ իսկ զխրատսն՝ կամաց ։ Ա Դարձեալ՝ հին օրէնն՝ տայ զհրամանսն, այլ աւետարանականն՝ յաւելու 'ի վերայ և զխրատսն ։ Դարձեալ խրատն վերաբերի առ կատարեալսն ․ իսկ հրամանն՝ առ այնս որք են կատարելք ․ այլ թոյլ տալն առ անկատարսն․ ելից․ 34․27․ մարկ․ 10․34․

մատ. բայց արգելումն առ թիւրսն : Դարձեալ՝ հրամանքն
10.12. որոշեն զմեզ ՚ի յոչ արժանեացն, այլ խրատն ՚ի յարժա-
մատ. 5. նեացն : Դարձեալ՝ հրամանօք խոտորիմք ՚ի մեղաց . եւ
29. խրատուք՝ ՚ի պատճառէ մեղացն : Դարձեալ՝ հրա-
Բ մանօք փախչիմք ՚ի պատժոյն , այլ խրատիւք հաւա-
քեմք զվարձս : Դարձեալ՝ պահեալ խրատն՝ ունի
զվարձս , եւ ոչ պահեալն՝ ոչ ունի. եւ ոչ ածէ զտան-
ջանս : Դարձեալ՝ առ հրամանս հարկիմք ըստ պար-
սաղ. 75 տուց . իսկ առ խրատս՝ ոչ, եթէ ոչ ՚ի յուխտելոյն :
12. Դարձեալ՝ խրատն ուխտիւ դառնայ հրաման . որ-
պէս ասէ օգոստինոս , քանզի ուխտելն է՝ կամացն .
այլ կատարելն՝ է՝ հարկաւորութեան :

Դարձեալ՝ լաւագոյն է ՚ի փոքրագոյն խոստմունս լի-
նիլ ջերմեռանդ , քան ՚ի մեծագոյն խոստմունս լինիլ
անջերմեռանդ : Ուստի լաւագոյն է զսոսկ հրամանսն
պահել ջերմեռանդութեամբ , քան առնել զինքն
եզկ. պարտական խրատուց , եւ հեղգանալ ՚ի յայնս :
18.25. Եւ ծանիր , զի մովսիսական օրէնքն էին դատաստա-
ղեւտ. նականք . խորհրդականք . եւ բարոյականք :
10.10. Այլ աւետարանական օրէնքն, բարեխառնէ զդատաս-
օրին. 4.2 տանականն՝ բառնալով զմահն ինչ . դատարկացու-
մատ. 5. ցանէ զխորհրդականն ըստ որում բառնայ զօրինակն եւ
40. տայ զճշմարտութիւնն . կատարէ զբարոյական հրա-
յոհ. 6.32 մանսն՝ յաւելլով , քանզի յաւելու ՚ի նոսա զերիս իրս,
4.24. այսինքն , զխնելամտութիւնս ուսմանց . զխոստումն
մար. վարձուց , եւ զկատարելութիւն խրատուց :
10.11. Եւ վասն այնորիկ՝ ասի մովսիսական օրինացն տարբե-
1. կոր. րիլ ՚ի յաւետարանականէն . զի այն է օրինակացն , եւ
10.6. այս՝ ճշմարտութեան . այն պատժոցն , եւ այս՝ շնոր-
2. կոր. հացն . այն գրաւորական , եւ այս հոգեւորական . այն
3.7. սպանանող , եւ այս՝ կեցուցանող . այն երկիւղի , եւ
յոհ. 1.17 այս՝ սիրոյ . այն՝ ծառայութեան , եւ այս՝ ազատութեան .
հռոմ. այն՝ բեռին , եւ այս՝ պատուոյ :
8.15.

Յաղագս աւետարանական խրատուցն յատկապէս։

ԳԼ. Հ.

Երեք՝ զորս յաւել Քս 'ի վերայ հրամանացն՝ են այսոքիկ։

Նախ է աղքատութիւն, որ կայանայ 'ի հրաժարումն յատուկ ընչից։ Ուստի ասէ ղուկաս՝ որ ոչ հրաժարեսցի յամ ընչից՝ ոչ կարէ իմ Ղուկ. 14. 33.
աշակերտ լինել։ Եւ մատթէոս ասէ, Մատ.
որ թողու զտուն, կամ զագարակս վասն անուան իմոյ՝ 19. 29.
հարիւրապատիկ առցէ. և զայսմանէ ասէ Ջերոնիմոս, աբեղայ որ ունիցի դրամս մի, ոչ արժէ դրամսն։

Երկրորդն է հնազանդութի. ուստի ասէ Տէրն՝ յաթոռն մովսիսի նստան դպիրքն, և այլն։

Եւ մատթէոս ասէ, եթէ ոք գայ զկնի իմ, Մատ.
ուրասցի զանձն, և այլն։ Այլ գիտելի է՝ զի կրկին է 16. 24.
հնազանդութի, այսինքն, կատարեալ, որ առնէ զամ ինչ որ հրամայի նմա, որք ոչ լինիցին ընդդէմ այ, կամ կանոնաց ինչ զոր ուխտեալ իցէ, և որոց ոչ կարէ առաջնորդն տալ հրաման։ 'Ի հնազանդութենէս այսմանէ ասէ բեռնարդոս, կատարեալ հնազանդութիւն՝ զօրէնս ոչ գիտէ. եզերօք՝ ոչ անձկանայ. ոչ պարունակի նեղութբ ուխտին։ Առայս ոչք պար- 1. Կոր.
տական է պարտօք հարկաւորութեան, այլ միայն կա- 12. 31.
տարելութեան, որով պարտիմք մեք նախանձաւոր լինել լաւագոյն շնորհաց։ Եւ այլ է հնազանդութի անկատար. սակայն բաւական առ փրկութի, որով ոք հնազանդի միայն 'ի յայնս զորս խոստացեալ է պահել, և կամ 'ի յայնս որք անորոշակի պարունակին 'ի յայնոսիկ, որպէս այնք՝ առանց որոց ուխտք կրօնաւորութեան ոչ պահին. որպիսի է՝ յանձն առնուլ զգործաւորութի. և այլք սոյնպիսիք. և այսպիսի հնազանդութիւն է հարկաւոր։ Իսկ յորժամ ասէ երանելոյն պէնէտիքտոսի կանոնքն. եթէ առաջնորդն հրամայեսցէ անկարելի ինչ՝ պարտ է փորձել՝ եթէ կարէ արդեօք առնել. խօսի անդ զկատարեալ հնազանդութենէն. զոր մինչ պահէ ստորադրեալն 'ի յայնս առ որս ոչ պարտաւորի ըստ հրամանի առաջնորդին է՝ խրատու, և մեծի կատարելութեան. և ոչ հար-

Ա կամօրութեան. այլ թէ պահեսցէ զայն առանց հրամայելոյ, միայն սոսկ ասելոյն՝ է՛ մեծագոյն կատարելութեան:

մատ. 19. Երրորդն է՝ ողջախոհութիւն. յորմէ ասէ տէրն, են
12. ներքինիք՝ որք յորովայնէ եղեն ներքինիք. և
են՝ որք զանձինս իւրեանց արարին ներքինիս,
և այլն: Եւ առայս վերաբերի այն՝ զոր ասէ Մատ-
մատ. 5. թէոս. լուարուք զի ասացաւ յառաջնոցն՝ մի՛ շնար.
28. այլ ես ասեմ, ամենայն որ հայի ՚ի կին առ ՚ի ցանկանալոյ
ելից. նմա, և այլն: Ցուցանի աստ՝ թէ ոչ միայն դատա-
20. 14. պարտելի է հաւանումն ՚ի գործ շնութեան, այլ և
հաւանումն ՚ի հեշտութիւն: Եւ գիտելի է, զի ցան-
կալն ՚ի յանկարծ շարժմանէ, է՛ ներելի. այլ ցանկալն
Բ ընտրութեամբ առ ՚ի կատարումն՝ է՛ մահուչափ:
Նախասացեալ երեք խրատքս՝ են գոյացականք ամենայն
կատարեալ կրօնաւորութեան, զի զպահօղս իւրեանց
հեռացուցանեն ՚ի չարէն՝ ոչ միայն ըստ մեղաց, այլ
և ըստ պատճառին: Զի ամենայն չար՝ ծնանի ՚ի յերեքին
արմատոց, այսինքն, ՚ի ցանկութենէ մարմնոյ. ՚ի ցան-
1. յոհ. կութենէ աչաց. ՚ի հպարտութենէ կենաց: Իսկ վերոյ-
2. 16. ասացեալ երեքեան խրատքս՝ հեռացուցանեն զմեզ ՚ի
յերեքին արմատոցս յայսցանէ:

Գ Չորրորդ խրատն է՝ զսիրոյ թշնամեաց, որպէս ասէ
մատ. 5. Մատթէոս՝ սիրեցէք զթշնամիս ձեր: Եւ այս
ըստ սիրոյ ախորժակին՝ է հրաման. այլ ըստ
44. յայտնի սիրոյ ներգործութեան՝ է՛ խրատ. զի կամիլ
թշնամւոյն զշնորհս և զփառս, հարկ է. այլ ցուցանել
նմա զնշանս բարեկամութեան, է՛ կատարելութեան, և
խրատու. ուստի առայս ոչ ամենեքեան են պար-
ղուկ. տականք: Արդ՝ ուրանալ մարդոյ զնշան բարեկա-
17. 3. մութեան յորժամ խնդրէ զթողութիւն, և կամ յորժամ
հարկն պահանջէ, վրէժխնդրութիւն է, և կամ յոր-
ժամ ոք որ թշնամի համարեալ էր, և խառնէ զինքն
՚ի բարեկամութիւն, և եթէ վստահասցի որոշ կեղծաւո-
րութեամբ, և կամ կատականօք առնիցէ զայն, յայն-
ժամ սիրելի է, և պարտ է համարել զնա ընդ բա-
րեկամս: Այլ թէ ոք կամաւ խառնիցէ զինքն ՚ի
բարեկամութիւն թշնամւոյն, այս կատարելութեան է:
Ուստի՝ այն որ կրեալիցէ զվնասն, եթէ խնդրէ
զհաշտութիւն և զբարեկամութիւն, ոչ է ՚ի հարկաւորու-
թենէ փրկութեան, այլ է կատարելութեան և խրատուն,
որում անկեալ լինի մեծի վարձուց:

Հինգերորդն է՝ հեզութիւնն , յորմէ ասէ Մատթէոս , Մատ. 5. 39.
եթէ որ ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո ,
դարձո՛ նմա և զմիւսն ։ Արդ՝ այս իմացեալ լինի ,
ըստ այնմ օրինակի , եթէ լինիցիս պատրաստ՝
տանել համբերութեամբ միւսոյ ապտակին . և այս է
խրատ համբերութ՟ե , ՚ի կողմանէ վնասու մարմնոյն ։
Նա և առայս վերաբերի համբերութիւնն , որ ՚ի կողմանէ Մատ. 5. 40.
յափշտակութ՟ե ընչիցն . որպէս այն որ ասէ՝
եթէ որ կամեսցի վիճիլ ընդ քեզ ՚ի դատաստանի , և Ղուկ. 6. 29.
հանել ՚ի քէն զբաճկոն քո . թող նմա և զշապիկս ։
Եւ ծանիր, զի կրկին կերպիւ պատահի խնդրել զիւրն
առաջի հաւատարիմ դատաւորի , այսինքն , վիճաբանութ՟բ
և պատրանօք , կամ սիրով ։ Առաջինն, ոչ ումեք
է արժան . իսկ երկրորդն՝ արժան է տկարաց՝ և
անկատարից . այլ կատարելոց ոչ ։ Ուստի ոչ անդրէն
խնդրելն՝ է՛ խրատ տկարաց . այլ կատարելոցն՝ հրաման։ Դ
Իսկ այնոցիկ որք հրաժարեցան ՚ի յատուկ ընչից՝
ոչ է արժան խնդրել զիւրն իբրև զիւր , այլ իբր
ժողովոյն . ոչ վասն ինքեան՝ այլ վասն բարւոյ հասարակին ։

Վեցերորդն է՝ ողորմութիւն , և բաշխել զինչս . Ղուկ. 6. 30.
որպէս այն , ա՟մ որ խնդրէ ՚ի քէն, տուր . և
այն՝ եթէ կամիս կատարեալ լինիլ՝ երթ վաճառեա Մատ. 19. 21.
զոր ինչ ունիս , և այլն ։ Եւ ծանիր , զի տալ
զաւելորդն ՚ի ժամանակս վերջին հարկաւորութ՟ե , է՛ Ղուկ. 11. 5.
հարկաւոր . այլ տալ զայն՝ որոց կարօտանամք , խրատուն .
ուստի ասէ օգոստինոս , լաւ է սակաւուց կարօտանալ , Մատ. 7. 12.
քան զաւելի ինչ ունել ։ Իսկ զի ասէ Տ՟րն,
թէ զա՟մ զոր ինչ կամիք թէ արասցեն ձեզ մարդիք , Ղուկ. 6. 31.
արարէք և դուք . այսպէս իմանալի է՝ զոր ինչ կամիք
բանականապէս՝ և ըստ ուղիղ սիրոյն . ուստի եթէ
խնդրեաք զիր ինչ և տեսանէաք զայն ոչ գոլ բանաւոր .
ոչ կարէաք կամիլ բանաւորապէս զայն տալ մեզ ։

Եօթներորդ խրատն է՝ զպարզութ՟ե բանից . որ՟պ Մատ. 5. 37.
այն՝ որ ասէ , եղիցի ձեր բանն այոն այո . և
ոչն ոչ ։ Որոյ իմացումն է , թէ ստորասութ՟ին ,
կամ բացասութիւնն որ է ՚ի բերանն՝ նոյնն եղիցի ՚ի
սիրտն ։ Առ խրատս այս՝ վերածի և այն , լուարուք Մատ. 5. 33.
զի ասացաւ յառաջնոցն՝ մի՛ երդնուցուս սուտ . այլ ես
ասեմ ձեզ , ամենևին մի՛ երդնուլ ։ Եւ գիտելի է՝
զի երդնուլն երբեմն վերաբերի առ տկարութիւնն .

և

Ե և այս է թոյլ տալոյն: Իսկ ոչ երդնուլն առ կատարելութիւն
մատ. 5. 34. խրատուն: Նա և արգելու Տ՟րն երդնուլ
'ի ստեղծուածս, այսինքն, զի մի՛ հաւատասցուք գոլ
'ի նոսա ա՟ծային ազդումն ինչ: Սակայն լինին երդմունք
աւետարանաւ և խաչիւ, այսինքն, նովաւ, որում
այսոքիկ են նուիրեալք:

մատ. 18. 9. Ութերորդն է՝ վասն խորշելոյ 'ի պատճառէ մեղաց՝ ուստի ասէ, եթէ ակն քո գայթակղեցուցէ
զքեզ՝ խլեա՛ զնա 'ի քէն: Ըստ օգոստինոսի, ոչ
որ 'ի յանդամոցն խլել հրամայի ըստ գրոյն, այլ պատճառի
մեղացն: Քանզի կարէ լինել պատճառ 'ի հայելոյն,
և յայնժամ գայթակղեցուցանէ ակն ահեակ.
Իսկ մինչ լինի բարի դիտաւորութբ, յայնժամ աջ
ակն: Եւ կամ կարէ լինել պատճառ 'ի շօշափելոյն, և
բարի դիտաւորութբ, և յայնժամ աջ ձեռն
մատ. 6. 23. գայթակղեցուցանէ: Դարձեալ՝ կարէ լինել պատճառ
մեղանչելոյ յայլմէ, այսինքն, 'ի խրատու ուրուք, որ
ասի աչք, կամ յօգնականէ, որ ասի ձեռն. և աջ
խրատու, կամ օգնականն ասի 'ի հոգևորս. և ահեակն՝
ասի 'ի ժամանակաւորս, և այսպիսիքս եթէ գայթակղեցուցանիցեն,
'ի բաց ընկենլիք են. զի պարտ է
փախչել 'ի պատճառէ մեղանչելոյ:

Զ մատ. 6. 1. 3. Իններորդ խրատն է՝ 'ի յուղղութէ դիտաւորութե,
և կամ վախճանին: Ուստի ասի, զգոյշ լերուք,
մի՛ առնիցէք զարդարութի ձեր առաջի
մատ. 5. 16. մարդկան: Եւ այն, ոչ գիտասցէ ձախ քո, զինչ գործէ
աջ քո: Եւ այն՝ այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր
առաջի, և այլն: Եւ ծանիր զայսցանէ, զի պատահի
կացուցանել զերկուս վախճանս, այսինքն, ժամանակաւոր,
և յաւիտենական, այլ թէ յաւիտենականն է
վերջին վախճան՝ բարւոք է. Իսկ հոգևոր գործն,
կամ քարոզութի, ոչ կարէ վերածիլ առ ժամանակաւոր
վախճան, նա և թէ ժամանակաւորին այն վերածիցի
հռոմ. 3. 8. առ ա՟ծ. վ՟ զի ոչ է առնելի չար՝ զի եկեսցէ
բարին: Եւ այս է զոր ասէ օգոստինոս, ոչ պարտիմք
աւետարանել՝ զի կերիցուք. այլ ուտել՝ զի աւետարանեսցուք:
ա. կոր. 10. 31. Սակայն գիտելի է՝ զի պարտիմք զայնս
գործս վերածել առ ա՟ծ՝ զորոց ունիմք զտէրութիւն
կող. 3. 23 'ի յիշխանութէ բանականին. որ է՝ ուտելն, խորհիլն,
և ընտրելն, և նմանք սոցին. այլ ոչ պարտիմք վերածել
առ ա՟ծ զգործս զօրութեց այնց՝ որք ոչ հնազանդին

դին բանականին, որպէս է, սննդականն. շնչականն. և սոյնպիսիք։

Տասներորդ խրատն է՝ ՚ի համաձայնութե̄ գործոյն առ վարդապետութիւն. որպէս անդ՝ ուր ասէ. կապեն զբեռինս ծանունս, և դժուարակիրս՝ և մատամբ իւրեանց ոչ կամին շարժել զնա. զի ասեն և ոչ առնեն։ Նա և վերաբերի առ այս՝ այն որ ասէ. կեղծաւոր, հան նախ զգերանդ յականէ։ Մատ. 23.4. Մատ. 7.5.

Եւ ծանիր, զի քարոզութիւն երբեմն քարոզի հասարակաբար, այսինքն, զայնցանէ, որք վերաբերին ՚ի յորդորութե̄ փրկութե̄. իսկ երբեմն քարոզի ըստ որպիսութեան կատարելութեան, որպէս է՝ կրօնաւորութիւնն։ Ըստ առաջնոյ կերպին՝ պարտական է քարոզօղն առնել զոր ինչ ասէ. վասն զի քարոզէ զայն ինչ, որում ամենեքեան են պարտականք։

Այլ ըստ երկրորդի կերպին, ոչ է պարտական, եթէ ոչ և ինքն ուխտեալ իցէ զկատարելութիւն զայն։

Իսկ թէ արդեօք չարն մեղանչիցէ ՚ի քարոզելն, զանազանելի է. զի կամ ՚ի հռչակեալ մեղս, մեղանչէ յորժամ քարոզէ. թէ արասցէ զայն ՚ի հարկաւորութե̄ գործաւորութեան, և թէ ՚ի կամաց իւրոց. քանզի գայթակղեցուցանէ։ Այլ կամ ՚ի մեղս ծածուկս՝ եթէ քարոզէ, և ոչ ջանայ ՚ի ձեռն ասացուածոց իւրոց ուղղել զինքն, նա և սա մեղանչէ. զի երևի թէ խոտէ։

Մետասաներորդ խրատն է՝ վասն խորշելոյն ՚ի հոգացողութե̄՝ որպէս այն՝ որ ասէ, մի՛ հոգայք թէ զինչ ուտիցէք, կամ զինչ ըմպիցէք։ Եւ այն՝ մի՛ խորհիք վասն վաղուին։ Արդ գիտելի է՝ զի եռակի է հոգացողութիւնն. առաջինն է գովելի, և է հոգևոր նախահոգութի. զորմէ ասէ առաքեալն, թէ որ անկինն է՝ հոգայ զՏ̄ն, թէ որպէս հաճոյ լինիցի ա̄յ։ Նոյնն ասէ, և առ հռովմայեցիս, մի առաջնորդաց. որ վերակացուն է՝ հոգացողութե̄։ Մատ. 6.25. 1. կոր. 7.32. Հռով. 12.8.

Երկրորդն է՝ տանելի. և հոգացողութիւն այս՝ է ժամանակաւոր իրաց՝ ըստ այնմ որ առ մարթին. որպէս ասէ ղուկաս, մարթա՛, մարթա՛, դու հոգաս և զբաղում իմիք զբաղեալ ես։ Երրորդն է՝ պարսաւելի. և այս է զաւելորդս գանձելն, ըստ այնմ որ առ ագահութիւնն. յորմէ ասէ ժողովօղն. մեղաւորին ետ ա̄ծ զբաղումն՝ զի յաւելցէ և ժողովեսցէ. և այս ընդունայնութիւն է, այսինքն, հոգւոյ և մարմնոյ։ Ղուկ. 10.41. Ժող. 2.26.

Արդ՝ առաջին հոգացողութիւնն՝ հրամայի ։
Երկրորդն՝ թոյլ տուեալ լինի ։
Երրորդն՝ արգելանի ։

Մատ. 18 15. Երկոտասաներորդ խրատն է՝ եղբայրական յանդիմանութիւնն. ո՞չ այն որ ասէ. եթէ մեղիցէ քեզ եղբայր քո, երթ յանդիմանեա ։

Եւ ծանիր, զի յանդիմանել զեղբայրն, երբեմն է խրատ. ո՞չ յորժամ յանդիմանի ոք մի ՚ներելեացն ։ Երբեմն է հրաման. ո՞չ յանդիմանելն վասն մահուչափին. և ըստ երկրորդի եղանակիս այսորիկ՝ վերաբերի առ ամենեսեան, և առնէ պարտական միշտ, զի ըստ տեղւոյ, և ըստ ժամանակի, այսինքն, յորժամ կարէ՝ և արժան է, և համարի թէ օգուտ է յանդիմանութիւն ։ Դարձեալ գիտելի է՝ զի եռակի է յանդիմանութիւն, այսինքն, սիրով, երկիւղիւ, և ամօթոյ ։

Մատ. 18 16. Զկարգ եղբայրական յանդիմանութեան այս ուսուցանէ Տ՟ր ՚ի յաւետարանն ։ Նախ՝ զի ցուցանէ դարձուցանել զեղբայրն սիրով. յորժամ հրամայէ առանձինն յանդիմանել, ասելով, յորժամ դու և նա միայն իցէք։ Եւ եթէ այս ոչ օգտեսցէ, ցուցանէ դարձուցանել զնա երկիւղիւ, ասելովն. եթէ ոչ լուիցէ քեզ, առ ընդ քեզ մի, կամ երկուս. և եթէ այս ոչ իցէ օգուտ, ուսուցանէ դարձուցանել զնա ամօթով, ասելովն, եթէ և նոցա ոչ լուիցէ, ասասջիր եկեղեցւոյն ։

Եւ եթէ եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրև զհեթանոս, այսինքն, պարտի բանադրիլ, և այսպէս՝ ամենեցունց պարտ է խորշիլ ՚ի նմանէ ։ Արդ՝ նախադասեալ կարգ եղբայրական յանդիմանութեան, իմացեալ լինի միայն մի քրէականացն. զի մի այլոց հասարակաց յանցանաց, սովորք են կրօնաւորքն ամբաստանել զինքեանս՝ յիւրեանց ժողովարանին, առանց իմն յառաջագոյն խրատելոյ, և յանդիմանութե՟ ։

Սակայն որ ամբաստանէ զայլ ոք, զգուշասցի առեալ՝ զի մի՛ արասցէ զայն առ ՚ի վաստահամբաւել, այլ առ ՚ի յուղղել. քանզի թէ ոք գիտութբ՟ զհակառակն արասցէ, մեղանչէ մահուչափ ։

Կատարեցաւ գիրք հնգերորդ. որ յաղագս սրբարարութե՟ շնորհաց.

Ցանկ գլխոց վեցերորդի գրքոյն, որ յաղագս զօրութեան խորհրդոց:

Նախ՝ յաղագս բժշկականութե խորհրդոց:
Բ. Յաղագս սահմանի խորհրդոց:
Գ. Յաղագս խորհրդոց նորոյ օրինի, կամ շնորհաց:
Դ. Յաղագս ներգործութե խորհրդոց նորոյ օրինի:
Ե. Յաղագս թուոյ խորհրդոց:
Զ. Յաղագս իշխանութե մատակարարութեան խորհրդոց:
Է. Յաղագս երից կացութեանց հաւատացելոց:
Ը. Յաղագս կացուցմանց խորհրդոց:
Թ. Յաղագս մկրտութե:
Ժ. Յաղագս ուսման հաւատոյ, և հրաժարելոյ 'ի սատանայէ:
ԺԱ. Յաղագս դրոշմին:
ԺԲ. Յաղագս հաղորդութեան:
ԺԳ. Յաղագս մեծապատուութեան հաղորդութե:
ԺԴ. Յաղագս զարմանալեաց՝ որք են 'ի հաղորդութե:
ԺԵ. Յաղագս ներգործութեան հաղորդութեան:
ԺԶ. Յաղագս Ճաշակողաց զհաղորդութի:
ԺԷ. Յաղագս 'ի բաց կալոյ 'ի հաղորդութենէ:
ԺԸ. Յաղագս գերազանցութեան պատարագին:
ԺԹ. Յաղագս հեղգութեց, որք լինին 'ի պատարագն:
Ի. Յաղագս խորհրդոյ ապաշխարութե:
ԻԱ. Յաղագս ներգործութեան ապաշխարութեան:
ԻԲ. Յաղագս մասանց նորին առ հասարակ:
ԻԳ. Յաղագս զղջման:
ԻԴ. Յաղագս խոստովանութե:
ԻԵ. Յաղագս որակութեան, և ներգործութե խոստովանութեան:
ԻԶ. Յաղագս թէ որու՞մ պարտիցէ խոստովանիլ:
ԻԷ. Յաղագս ծածկելոյ զխոստովանութին:
ԻԸ. Յաղագս փոխարինին:
ԻԹ. Յաղագս մասանց փոխարինելին առ հասարակ:
Լ. Յաղագս իւրաքանչիւր

չիւր մասանց փոխարինին ։

ՃԱ. Յաղագս արդարացուցման ամբարշտին։

ՃԲ. Յաղագս ապաշխարութեան ներելի մեղաց ։

ՃԳ. Յաղագս թէ որով լինի թողութիւն ներելի մեղացն ։

ՃԴ. Յաղագս վերջին օծման ։

ՃԵ. Յաղագս խորհրդոյ կարգին ։

ՃԶ. Յաղագս որպիսութեան կարգաւորաց։

ՃԷ. Յաղագս խորհրդոյ պսակին ։

ՀԱ.

ՀԱՒԱՔՈՒՄՆ

Ա՟ծաբանականի ճշմարտութե՟։

ԳԻՐՔ ՎԵՑԵՐՈՐԴ։

Յաղագս զօրութե՟ խորհրդոց։

Յաղագս բժշկականութեան խորհրդոց։
Գլուխ Առաջին։

Երկնաւոր բժիշկն, և Նորոգօղն ազգի մարդկան, այնպէս բժշկեաց զխօթացեալն որպէս վայելէր իւր խօթացելոյն, հիւանդութեանն, և պատճառի հիւանդանալոյն, և բժշկութե՟ հիւանդութե՟։ Արդ՝ հիւանդս այս՝ է մարդն։ իսկ հիւանդութիւն է սկզբնական մեղքն, և ներգործականն։ Այլ սկիզբն մեղաց՝ թէպէտ նախկնաբար եղև հաճանութե՟ բանականին, սակայն էառ զառիթ ՚ի մարմնական զգայութեանց։

Արդ՝ առ այն զի դեղն պատասխանի տայցէ հիւանդութեան՝ պիտոյ եղև՝ զի ոչ միայն լինիցէր հոգևոր, այլ և ունիցէր ինչ ՚ի զգալեաց նշանացն. զի որպէս զգալիքն եղեն հոգւոյն առիթ գլորման, այսպէս և լինիցին նմա պատճառք յարութեան : Վասն այսորիկ դնէ զդեղն ըստ հարուածոց մերոց, որ կայանայ 'ի յեկեղեցական խորհուրդս :

Յաղագս սահմանի խորհրդոց : ԳԼ. Բ.

Ըստ օգոստինոսի՝ խորհուրդն՝ է անտեսանելի շնորհացն տեսանելի կերպ : Արդ՝ սահմանս այս է ընդհանրական, և յարմարի խորհրդոց հնոյն, և նորոյս. քանզի այնք, և այսք, ըստ նմանութեան են ցուցականք, և ըստ կացուցման՝ նշանականք : Իսկ ըստ այնմ որ նոյն սահմանն պատկանի նորոյ օրինաց խորհրդոյս՝ այս ինչ յաւելլի է՝ այնպէս՝ զի զնմանութիւն նորին բերցէ, և լիցէ պատճառ : Զի ոչ միայն ըստ նմանութեանն ցուցանեն, կամ ըստ կացուցմանն նշանակեն, այլ և ըստ աստուածային զօրութեանն մաքրեն 'ի մեղաց, և տան զշնորհս որով հոգին բժշկի 'ի հիւանդութենէ մոլութեանց :
Եւ այս է զոր ցուցանէ օգոստինոս 'ի միւս սահմանն՝
ասելով. խորհուրդն է 'ի յոր ենթ ծածկութի երևե-
լեաց իրաց՝ աստուածային զօրութիւն ծածկապէս ներգործէ
զփրկութիւն : Նաև է երրորդ սահման օգոստինոսի,
որ ասէ, խորհուրդն է նիւթական տարր՝ արտաքուստ
ենթադրեալ աչաց. ըստ կացուցման՝ նշանական, և
Ա ըստ նմանութեան՝ ցուցական. և ըստ սրբարարութեան,
աներևոյթ իմն շնորհաց առողջական :
Երեք իրք յիշեցեալք լինին աստ. որք են զբանէ
խորհրդոյն՝ նեղագոյն և յատկապէս առեալ :
Բ Առաջինն է՝ բնական նմանութիւն, յորմէ ունի զճա-
հաւորութիւն նշանակելոյ : Երկրորդն է՝ ներգործա-
կան կացուցումն, յորմէ ունի զբացայայտեալ կարգա-
ւորութիւն ըստ նկատման նշանակեցելոյս այսորիկ :
Երրորդն է՝ հոգևոր սրբարարութիւն. յորմէ ունի
զզօրութիւն ներգործելոյ զնշանակեցեալն զայն :
Դարձեալ՝ ասէ օգոստինոս, խորհուրդն է նշան սրբոց
իրաց. իսկ այս ոչ է սահման, այլ առաւել մեկնութիւն
խորհրդոյ :

Յաղագս խորհրդոց նորոյ օրինի, կամ շնորհաց ։

ԳԼ. Գ.

Արդ՝ զխորհուրդս օրինի շնորհաց՝ զամէկացոյց Քս՟. իբր զօրէնսդիր նորոյս օրինաց՝ յորում կոչեաց առ փրկծս, ետ զհրամանս՝ եւ կացոյց զխորհուրդս ։ Քանզի Քս՟ բանն հօր, մի գոլոյն ծայրագոյն բարութի, ծայրագոյն ճշմարտութի, եւ գերագոյն զօրութի. վասն բարութեանն՝ խոստացաւ զերանաւէտ փրկծս. վասն ճշմարտութեանն՝ ետ զուղղորդիչ հրամանս. մի զօրութեանն՝ կացոյց օգնական զխորհուրդս. զի խորհրդովք նորոգեսցի զօրութիւնն առ ՚ի լնուլ զհրամանս. եւ հրամանօքն՝ ժամանեսցի առ փրկծս ։

Արդ՝ կացոյց Քս՟ զխորհուրդս իւր ՚ի բանս, եւ ՚ի տարերս. որպէս առէ օգոստինոս. քանզի առէ՝ մատչի բանն առ տարրն, եւ լինի խորհուրդ. եւ է անդ տարրն ՚ի տեղի նիւթոյ. եւ ձեւ բանին՝ է ՚ի տեղի տեսակի ։ Քանզի վասն այն կացուցեալ եղեն խորհուրդքն ՚ի բանս, եւ ՚ի տարերս, զի ունիցին զբացայայտութի նշանակելոյ, եւ զզօրութի մաքրելոյ. մի զի յորժամ տարրն աչաց, եւ բանն ունկանց՝ մատուցանեն զինքեանս, որք են երկու զգայութիք մանաւանդ ճանաչողականք, տան զբացայայտութի նշանակութեանց ։ Եւ սոյն բանքն սրբեն զտարերսն, զի լիագոյն լինիցի մարդկային առեղծման գործունէութի ։ Իսկ ած՟՝ ետ զխորհուրդս՝ ըստ զանազան եղանակաց, զոմանս նախ քան զգալուստ իւր. որպէս զապաշխարութին, եւ զպսակն ։ Այլ զերկուսեանս զայս՝ հաստատեաց եւ կատարեաց ՚ի յաւետարանական
օրէնս, յորժամ բարձեաց զապաշխարութի, եւ զնոյն Ա
՚ի հարսանիսն ։ Բայց զայլս հինգ խորհուրդս՝ յետ Բ
գալստեան իւրոյ սկսաւ. քանզի զդրոշմն կացոյց, Գ
դնելով զձեռն ՚ի վերայ տղայոցն ։ Իսկ զօծումն, յոր- մարկ.
ժամ առաքեաց զաշակերտսն առ ՚ի բժշկել, որք 10. 13.
զհիւանդսն օծանէին իւղով, որպէս առէ մարկոս ։ մարկ. 6
Զմկրտութին, ընդունելով ՚ի յինքն, եւ սոյն տալով 13.
զտեսակն. ընդ առելն՝ մկրտեցէք զնոսա յանուն հօր, մատ. 3.
եւ որդւոյ, եւ հոգւոյն սրբոյ ։ Այլ զկարգն՝ տալով 16.

մատ. զիշխանութիւն կապելոյ և արձակելոյ , և օրհնելոյ
28.19. զխորհուրդ սեղանոյն ։ Բայց զպատարագն՝ համեմա-
յոհ. 20. տելով զինքն հատոյ ցորենոյ . և տալով աշակերտացն
23. մերձ 'ի չարչարանան զխորհուրդ մարմնոյ և արեան
մատ. իւրոյ ։ Նաև կացուցեալ եղեն խորհուրդքն՝ վասն
26.26. բազմաց պատճառաց ։ Նախ՝ վասն խոնարհութեան,
մատ. որով խնդրէ մարդն զփրկութի 'ի տարրնագունից
18.18. իւրոց ։ Երկրորդ՝ վասն ուսման . վասն զի 'ի ձեռն
յոհ. 12. երևելեացս՝ յանիշատակի մարդն առ 'ի ճանաչել զանե-
24. րևոյթս ։ Երրորդ՝ յաղագս կրթութե , որով մեկնի
ղուկ. մարդն 'ի վնասակար զբաղմանց և 'ի դատարկութեց ։
22.19. Չորրորդ՝ վասն յարմարութեան բժշկին առ դեղն .
քանզի բժիշկն է ած և մարդ՝ պատշաճ էր զի դեղն
ունիցէր զեր ինչ ածային , այսինքն , զաներևոյթ
ղուկ. շնորհսն . և զեր ինչ մարդկային , այսինքն , զերևե-
4.19. լի տեսակ շնորհին ։ Հինգերորդ՝ վս պատշաճաւո-
մատ. 9. րութե 'ի կողմանէ հիւանդին . քանզի հիւանդն է
37. մարդ՝ կազմեալ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ . իսկ հոգին 'ի
սաղ. 6.3 մարմնոջն՝ ոչ բարեպէս ըմբռնէ զհոգևորն եթէ ոչ
մարմնական իրօք . վասն որոյ պատշաճ էր տալ զհո-
գևոր դեղն՝ մարմնական իրօք . որպէս պատեալ լինի
դառն դեղն քաղցր իմն ուտելեաւ ։ Վեցերորդ՝
վասն աճման վարձուն . քանզի յոյժ օգտակար է առ
վարձսն , յորժամ հաւատացեալ լինի այ 'ի յայնս՝ ուր
մարդկային բանականութիւնն ոչ կարէ հասանիլ հըմ-
տանալոյն ։ Արդ՝ յայտ է 'ի նախասացելոցս՝ թէ ո՛ր
է ներգործական պատճառ խորհրդոցս , քանզի է
ածային կացուցումն . Եւ ո՛ր՝ տեսականն , զի է առ
բարարութի շնորհին . և ո՛ր կատարունականն , զի
է բժշկութիւն մարդկային տկարութեանս . և ո՛ր
նիւթականն՝ զի է տարրն արտաքուստ ենթադրեալ
աչաց ։

Յաղագս ներգործութեան խորհրդոց նորոյ օրինաց ։ Գլ․ Դ․

Ներգործութիւն նորոյ օրինացս խորհրդոց՝ է՛ բազմապատիկ ։ Առաջին զի սրբեն ՚ի մեղաց ։ Երկրորդ՝ հաստատեն ՚ի բարին ։ Երրորդ՝ միաւորեն ՚ի խորհրդական մարմինն Քրի ։ Չորրորդ՝ արդարացուցանեն։ Հինգերորդ՝ նախապատրաստեն առ հանդերձեալ կեանս ։ Վեցերորդ՝ ուսուցանելով լուսաւորեն ։ Եօթներորդ՝ պահեն ՚ի չարէն ։ Եւ այսպէս կարգաւ երևին ՚ի յեօթն խորհուրդս ։ Զառաջինն ներգործէ մկրտութիւնն ։ Զերկրորդն դրոշմն ։ Զերրորդն հաղորդութիւն ։ Զչորրորդն ապաշխարութիւն ։ Զհինգերորդն վերջին օծումն ։ Զվեցերորդն կարգն։ Զեօթներորդն պսակն ։

Խորհուրդքն ասին անօթք և պատճառք շնորհաց , ոչ
զի ՚ի նոսին պարունակի շնորհն գոյացաբար՝ և ներգործի
պատճառաբար , քանզի միայն ՚ի հոգին եղեալ Ա
լինի , և միայն յայ հեղանի․ այլ՝ զի ՚ի նոսին, և նոքօք
զշնորհս բժշկութեան պարտ է արտաքարշել ՚ի ծայրագոյն
բժշկէն՝ որ է Քս․ թէպէտ ոչ իցէ կապեալ
զօրութիւն իւր ՚ի խորհուրդս․ քանզի նա և այլովք
ճանապարհօք կարէ տալ զշնորհս իւր , յորժամ կամի ։
Խորհուրդքն միշտ ունին զնշանակութիւն ճշմարտութեան․
այլ ոչ միշտ զզօրեղութիւն բժշկութեան․ և պակասութիւնն
ոչ է ՚ի կողմանէ իւրմէ․ այլ ՚ի կողմանէ Բ
ընդունողին․ զի շնորհն ոչ տուեալ լինի հակառակողի
ումեք․ և ոչ մարտնչողի ումեք ընդդէմ աղբերն
շնորհաց ։ Ուստի և խորհուրդքն ոչ սրբեն եթէ ոչ
զարժանաւորս մերձեցեալսն , առանց այլ կեղծաւորութեան ։ Գ
Սակայն երբեմն զօրութն այ , և խորհրդոյ՝ ՚ի բեկանելոյն (այսինքն , յանկատար զղջմանէն),
լինի խորտակեալ , (այսինքն , կատարեալ զղջացեալ)
այնպէս՝ մինչ զի պակասութի արժանաւորութեանն,
կամ նախապատրաստութեան ՚ի կողմանէ ընդունողին՝
լցեալ լինի ածային զօրութն՝ որ պարունակի
՚ի խորհուրդս․ բայց միայն զի ոչ մատիցի դնելով
զինքն ՚ի մեղս մահուչափս , կամ ունելով ՚ի մտի զմե-

ղանչելն ։ Ուստի գիտելի է՝ զի ոմանք առնուն զխորհուրդ միայն , ոպ̅ կեղծաւորութբ̅ մերձեցեալքն ։ Ոմանք զիրս միայն , որպէս որք զղջմամբ և ջերմեռանդութբ̅ հաւատոյ, ընդունին զշնորհն՝ նախ քան զգալն առ խորհուրդն ։ Ոմանք ընդունին զխորհուրդն՝ և զիրն , որպէս արժանապէս մերձեցեալքն։ Սուրբ խորհուրդ՝ առ ՚ի սրբելոյն , որ կարէ լինել երեք կերպիւ , կամ առնելովն միայն զսրբութիւն , կամ նշանակելով միայն զսրբութի , և կամ համանգամայն առնելովն և նշանակելովն զսրբութի ։

Ըստ առաջնոյ կերպին բան մէ̅ խորհրդոյն յարմարի նշանակեալ իրացն ՚ի ձեռն խորհրդոց , թէ հնոյ և թէ նորոյ օրինաց։ Ըստ երկրորդի կերպին՝ յարմարի նշանաց հնոյ օրինաց։ Ըստ երրորդի կերպին՝ յարմարի նորոյ օրինացս ։ Եւ օրինակ այսմ ունիմք ՚ի բնութիւնս , զի դեղն առ ի բժշկել՝ առնելով միայն ․ այլ քրտունքն՝ ցուցանելով միայն ․ իսկ կրթութիւն , կամ պատառումն վիրին՝ առնելով և նշանակելով ։

Արդ՝ հինգ են որք արդարացուցանեն զհոգիս ․ այլ զանազան կերպիւ ։ Քանզի ա̅ծ արդարացուցանէ
Գ իշխանութբ̅ ․ շնորհքն՝ ներգործաբար , արտաքսելով զհոգևոր հիւանդութիւնն ․ կատարումն պատուիրանաց արդարացուցանէ , որպէս և կարգաւորումն բժշկին առողջացուցանէ զհիւանդն ։

Իսկ խորհուրդքն՝ որպէս դեղական անօթք , որով բաշխի շնորհն ։ Այլ քահանայն՝ սպասաւորութբ̅ ։ Եւ զօրինակ սոյին ունիմք , ՚ի բժշկութեան մարմնական հիւանդութեան ։ Քանզի ա̅ծ բժշկէ զմարմին իշխանութբ̅ ․ դեղն՝ ներգործաբար ․ կարգաւորումն բժշկին պահպանութբ̅ ․ աման դեղոյն , պարունակօրէն (ուստի ասի՝ թէ ուսիս այս բժշկեաց զիս․) իսկ բժիշկն՝ սպասաւորութբ̅ ։

Յաղագս Թուոյ խորհրդոց ։ Գլ․ Ե․

Խորհուրդք նորոյ օրինացս՝ են եօթն՝ ըստ եօթնեանց զանազանութեանց մարդկանց որք են յեկեղեցւոջ ։ Առաջինն է՝ մտելոցն, որպէս մկրտութիւն ։ Երկրորդն պատերազմելոց՝ որ դրոշմն ։ Երրորդն վերստին զօրացելոց՝ որ է հաղորդութիւն ։ Չորրորդն է՝ վերստին կանգնելոցն որ է ապաշխարութիւն ։ Հինգերորդն՝ ելելոցն՝ որ է վերջին օծումն ։ Վեցերորդ՝ սպասաւորողացն՝ որ է կարգն ։ Եօթներորդն է՝ նոր զինուորս ներս մուծողացն, որպէս է՝ պսակն ։

Այդ՝ խորհուրդքս նշանակեցան 'ի յեօթն կնիքն որով
կնքեալ էր գիր հին կտակարանացն, զոր եբաց գառն՝ յայտ․
որ ունէր զբանալին դաւթի, որ փակէ, եւ ոչոք բա- 5․6․
նայ ։ Դարձեալ՝ յեօթն փողն՝ զոր փողեցին հրեշ- յայտ․
տակք ։ Դարձեալ՝ յեօթն աստեղս, զորս ունէր 3․
նմանն որդւոյ մարդոյ՝ յաջոյ ձեռին իւրում ։ յայտ․
Դարձեալ՝ յեօթն նկանակն, որով յագեցոյց Տէրն 1․16․
զժողովուրդս ։ Դարձեալ՝ յեօթն աչսն որ 'ի վերայ մատ․
վիմին, եւ յեօթն ճրագս խորանին եդեալ 'ի վերայ 15․34․
աշտանակաց ։ Դարձեալ՝ յեօթն անգամ շուրջ գալն զաք․3․9
զերիքովաւ․ եւ յեօթն անգամ լուացումն նէեմանայ 'ի Թուոց․
յորդանան ։ Եօթն են խորհուրդք, որք պատրաս- 8․2․
տեն 'ի յունել զեօթն առաքինութիւնս ։ Քանզի մկր- յեսու․
տութիւնն է խորհուրդ հաւատոյ ։ Դրոշմն՝ յուսոյ ։ 6․4․
Հաղորդութիւնն՝ սիրոյ ։ Ապաշխարութիւնն, արդա- 4․Թագ․
րութեան ։ Վերջին օծումն՝ յարամնայութեան՝ որ է լրումն 5․14․
արիութեան ։ Կարգն՝ խոհեմութեան ։ Պսակն՝ ողջախոհութեան ։ Է՛ եւ այլ պատճառ թուոյ խորհրդոցն․ զի կարգին ընդդէմ երից մեղաց, եւ չորից պատժոց ։ Ուստի մկրտութիւն կարգի ընդդէմ սկզբնական մեղաց ։ Ապաշխարութիւնն՝ ընդդէմ մահուչափ ներգործական մեղաց ։ Վերջին օծումն՝ ընդդէմ ներելի մեղաց ։ Կարգն՝ ընդդէմ տգիտութեան ։

Հաղորդութիւնն՝ ընդդէմ չարութեան ։ Դրոշմն՝ ընդդէմ անկարութեան ։ Պսակն՝ ընդդէմ ցանկութեան, զոր բարեխառնէ, եւ անմեղադրելի առնէ ։ Նա եւ է՝ այլ պատճառ թուոյ, զի խորհուրդքն են առողջարարք հո-

հոգևորի հիւանդութե · ըստ օրինակի մարմնական դեղոց ։ Իսկ մարմնաւոր դեղն է քառակի , այսինքն , բժշկողական · պահողական · զգուշական · և լաւագունական ։ Նմանապէս և խորհուրդքն բժշկեն · քանզի մկրտութիւնն բժշկէ միանգամայն , և բոլորովին ։ Ա Իսկ ապաշխարութիւնն՝ առ սակաւ սակաւ ըստ պատժոյն , մինչև մնացէ մարդն պարտական պատժոյ իմիք։ Վերջին օծումն բժշկէ ՚ի թեթևագոյն հիւանդութեանց , այսինքն , ՚ի ներելեաց · որպէս մկրտութի , և ապաշխարութիւնն , ՚ի մահուչափ մեղաց ։

Ապաուրեմն այսպէս՝ նախ ասացեալ երեքեան խորհուրդքն՝ են իբրև զբժշկական դեղ · իսկ դրոշմն է՝ դեղ պահողական՝ հոգևորական առողջութեան · ՚ի յոր տուեալ լինի ոգին սբ առ ՚ի զօրացումն , և առ ՚ի պահպանութե շնորհաց պարգևեցելոց ՚ի մկրտութե ։ Եւ պսակն է՝ դեղ զգուշական ՚ի յապառնի չարէն ։ Կարգն է՝ դեղ լաւագունական , որով առաւելանայ շնորհն ։ Այլ հաղորդութիւնն՝ զայս ամենայն առնէ համանգամայն · քանզի բժշկէ զներելիսն որք են պատճառք մեծագոյն գլորման · նաև պահէ ՚ի նմա զընկալեալ շնորհն · և աճեցուցանէ · և լաւագոյնս առնէ · և զգուշացուցանէ ՚ի մեղաց ։

Յաղագս իշխանութե մատակարարութե խորհրդոց։

Գլ. Ձ։

Կարողութի մատակարարելոյ զխորհուրդս կանոնաւորապէս վերաբերի միայն առ ազգս մարդկան ։ Արդ՝ ՚ի յամ խնամարկելի խորհուրդս՝ հարկաւոր է դիտաւորութե ՚ի մատակարարին , որով դիտեցէ առնել՝ զոր կարգեց Քս ՚ի փրկութե մարդկան · և կամ գոնեայ առնել՝ զոր ինչ առնէ եկեղեցի , յորում պարփակի հասարակաբար վերոյ ասացեալ դիտաւորութի · զի ինքն եկեղեցի՝ որպէս էառ զխորհուրդս ՚ի Քսէ , այնպէս տնօրինէ զայնս՝ առ ՚ի փրկութի հաւատացելոց ։

Դարձեալ՝ զի կարգ արժանաւորութեան պահանջէ , զի մեծագոյնքն մեծագունից , և փոքրագոյնքն փոքրագունից յանձնեալք լինիցին . և զի ոմանք նկատեն առ գերազանցութի պատուոյն՝ որպէս՝ խորհուրդ

դրոշ֊

դրոշմին, և կարգին · նմին իրի՝ այսորիկ տուեալք լինին յեպիսկոպոսաց ։ Իսկ ոմանք նկատեն 'ի կարգս հարկաւորութեան, որպէս մկրտութիւն, և ապաշին · որոց մինն ծնանի, և միւսն վերստին ծնանի ։

Վասն այսորիկ սպասաւորութիւն սոցին լինին ստորինագոյն անձամբք· և մանաւանդ մկրտութիւնն, 'ի հարկաւոր ժամանակի ։ Իսկ այլք խորհուրդք՝ են իբր թէ միջինք, այսինքն, հաղորդութիւն, ապաշխարութիւնն · և վերջին օծումն ։ Եւ սպասաւորութիւն սոցա վերաբերի միայն առ քահանայսն՝ որք են իբրև մէջ եպիսկոպոսաց, և փոքրագոյն անձանց ։

Արդ՝ խորհուրդքն կարեն մատակարարիլ 'ի չարաց,
և 'ի բարեաց · 'ի հաւատացելոց, և յանհաւատից · 'ի Ա.
յուղղափառաց, և 'ի հերետիկոսաց ։ Քանզի՝ եթէ 'ի
բարեաց միայն կարէին սպասաւորիլ՝ ոչոք լինէր ստոյգ վասն ընդունելութեան խորհրդոյն՝ վասն զի ոչոք է ստոյգ զբարութէ սպասաւորին, որպէս իւրոյ անձին · և այսպէս՝ միշտ պարտ էր կրկնել զխորհուրդ· և չարութիւն միոյն՝ վնասէր փրկութեան միւսոյն ։

Ցաղագս այնորիկ մատակարարութեան խորհրդոյն՝ է յանձնեալ մարդոյն, ոչ վասն սրբութեան որ փոփոխի, այլ ըստ իշխանութեան ա͞յ որ միշտ մնայ ըստ ինքեան ։ Եւ գիտելի է, զի 'ի խորհուրդս՝ ոմանք են գոյացականք և ոմանք խորհրդականք ։ Արդ՝ ըստ գոյացականաց՝ ոչ է առնել գործ բարւոյ սպասաւորին քան չարին · զի ա͞ծ ներգործէ անդ որպէս զհեղինակ, և մարդն որպէս սպասաւոր ։ Այլ ըստ խորհրդականաց՝ որպէս են աղօթք, առնել օգտակարք են գործք բարւոյ սպասաւորին, քան չարին · իսկ այս է պատահմամբ, և ոչ ըստ ինքեան, այսինքն, ըստ ոմանց պատահականաց ներգործութեանց, և ոչ ըստ էութենականաց ։ Արդ՝ թէպէտ առ հերետիկոսն իցեն ճշմարիտ խորհուրդք, սակայն ոչ են 'ի յօգուտ ընդունողացն եթէ ոչ դարձցին 'ի միաբանութիւն ս͞բ եկեղեցւոյն ։ Ուստի ասէ օգոստինոս՝ եկեղեցին համեմատեալ դրախտին՝ ցուցանէ՝ զի մարդիկ արտաքոյ կարեն առնել զմկրտութիւն, այլ զփրկութի ոչ ունել ·
քանզի և գետք յաղբերէ դրախտին առատաբար բղ‿ Ծնն. 2. 10
խեցին առ արտաքս՝ մինչև յասորեստանեայս, և յեգիպտոս, սակայն բարեբաստութի դրախտին՝ ոչ ժամանէ ընդ նոսին անդ ։

Յաղագս երից կացութեանց հաւատացելոց . Գլ. Ե.

Երեք են կացութիւնք հաւատացելոց ՚ի ճակատս զինուորեալ եկեղեցւոյ, այսինքն. ծնեալ հաւատոյ, զօրացեալ հաւատոյ, և բազմացեալ հաւատոյ : Ըստ առաջնոյն լինի զանազանութիւն հաւատացելոց՝ ՚ի յանհաւատիցն, մկրտութե՟ · երկրորդին լինի զօրաւորաց՝ ՚ի տկարացն, և այս խորհրդով դրոշմին : Ըստ երրորդին՝ լինի զանազանութիւն եկեղեցականացն՝ յաշխարհականաց, խորհրդով կարգին : Նմին իրի երեքեան խորհուրդքս այսորիկ անջնջելի տպաւորեն զկնիքն, որով զանազանին յայլոց՝ և ոչ բնաւ կարեն կրկնիլ :

Ուստի կնիք մկրտութեն, է սկսելոցն · դրոշմին, յառաջելոցն · իսկ կարգին՝ կատարելոցն : Նախասացեալ երեքկին զանազանութիւնքն լինին առ ՚ի նմանութիւն զանազանութե՟ զօրաց : Քանզի ըստ առաջնոյն՝ բաժանեալ զօրք հաւատացելոց զանազանին մկրտութեամբ՝ ՚ի զօրաց անհաւատից : Ըստ երկրորդին՝ զանազանին զինուորքն ՚ի ժողովրդականացն դրոշմիւն :

Ըստ երրորդին՝ զանազանին զօրավարքն ՚ի յերկոցունցն, և այս խորհրդով կարգին : Արդ՝ առաջինն է հասարակ ամ՟ քրիստոնէից · երկրորդն է յատուկ ոմանց · երրորդն ևս յատկագոյն : Դարձեալ՝ զի կնիքն է նշան զանազանողական՝ հոգևոր և անջնջելի · վասն այսորիկ ոչ առեալ լինի ՚ի խորհուրդսն՝ որք սովորք են կրկնիլ · որպէս, ապաշխարութիւն. և պսակն. հաղորդութիւնն . և վերջին օծումն : Այլ գիտելի է, զի կնիք մկրտութեան է հիմն ամ՟ կնքոց · և վս՟ այսորիկ ոչ ունելոյն զնա՝ ոչ կարեն տպաւորիլ այլք կնիքն · յաղագս այնորիկ հարկ է նախ ունել զնա, և ապա այլքն տպաւորեսցին : Ուստի թէ ոք ոչ մկրտեցեալ առնուցու զկարգ ոք, ոչինչ լինի առնելին : Եւ թէպէտ նախասացեալ խորհրդքս ոչ կրկնին վասն տպաւորելոյ կնքոյն՝ որպէս և ցուցաւ իսկ · սակայն՝ և այս հասարակ է ամենից խորհրդոց՝ ոչ կրկնիլ ՚ի վե՟ Ա. միոյ անձին, և միոյ նիւթոյ, և վասն նոյնոյ պատճառի, և այս վս՟ այսորիկ, զի մի՛ լիցի անկարգութիւն խորհրդոյն : Քանզի յայսմանէ կարէ ոք կարծել՝ թէ նա-

Նախատեալ խորհուրդքն՝ էին տկարք և անյարմարք ․ թէպէտ ոմանք վասն հարկաւորութեան իւրեանց՝ և վասն այլոց պատճառաց՝ կարէին կրկնիլ ։

Արդ՝ ոմանք են զգոյացութեան խորհրդոյն ․ և ոմանք զպատշաճաւորութեան ։ Վասն այսորիկ եթէ որ զանցառնիցէ զայնոսիկ որք են զգոյացութեան, ունայնք են խորհուրդքն ․ և պարտին կրկնիլ ։ Իսկ զանցանել զայնոսիկ, որք են զպատշաճաւորութեան՝ ոչ ունայնացուցանեն զխորհուրդն․ բայց մեղանչեն․ սակայն ոչ է պարտ կրկնիլ ։

Յաղագս կացուցման խորհրդոց ։ Գ․Լ։ Ը․

Սկզբանէ կացուցան խորհուրդք՝ առ ՚ի բժշկութիւն մարդկան․ և միշտ ընթանան զհետ հիւանդութեան ։ Քանզի ՚ի բնական օրէնս՝ էին նուէրք․ պատարագք․ և տասանորդք ։ Իսկ ՚ի գրաւորական օրէնս հաստատեցաւ թլփատութիւն․ նա և յաւելաւ իսկ քաւութիւն․ և բազմակերպ զանազանութիւնք նուիրաց, տասանորդաց, և պատարագաց ։ Այլ ՚ի նոր օրէնս՝ կացուցան խորհուրդք՝ սակաւագոյնք ըստ թուոյն, այլ լաւագոյնք ըստ օգտութեանն, ազդողագոյնք ըստ զօրութեան, արժանապատուագոյնք ըստ վերաբերութեան, և յստակագոյնք ըստ նշանակելոյն ․ ՚ի յորս է համեմատականոյն լրումն, և խափանումն ամենից նախատպեցելոց ․ որպէս ասէ օգոստինոս ․ խորհուրդք առաջնոյ ժամանակին՝ էին որպէս զստուերս ․ միջին ժամանակին՝ որպէս զձև կամ պատկեր ․ իսկ ՚ի յետին ժամանակին, այսինքն, շնորհաց, որպէս զմարմին՝ որ պարագրէ ՚ներ իւրեան զճշմարտութիւն և զշնորհ, զոր նշանակութիւնք ցուցանեն, և նախապատկերաբար շարաբերեն, և խոստանան ։ Արդ յայտ են նախատպեցեալքս՝ զի նմանութիւն իւր խորհրդոյն, այսինքն, շնորհաց՝ գտանէր ՚ի նուէրս բնական օրինացն, սակայն գաղտաբար․ իսկ ՚ի թլփատութիւնս, յայտնագոյնս երևի ․ բայց մկրտութեամբ՝ կարի ևս յայտնագոյնս պայծառանայ ։

Դարձեալ՝ խորհուրդք հին օրինաց՝ ուսուցանէին զտհասսն, վարժէին զկատարեալսն, և ընտանեցուցանէին զխիստսն ։ Իսկ խորհուրդք նորոյ օրինին՝ շարաբերէն զայնս՝ զորս հինքն ցուցանէին հեռաստէս ։ Ուստի առաջին խորհուրդքն նախապատրաստեցին , և ածին առ նորս , որպէս Ճանապարհն առ օթևանն . որպէս նշանն՝ առ նշանակեալն . որպէս օրինակն՝ առ Ճշմարտութիւնն . և անկատարն՝ առ կատարեալն ։

Է՛ և այլ զանազանութիւն որ է հասարակ ամ՟ խորհրդոց , զի կայանան 'ի զգալիս՝ որք նշանակեն զանտեսանելի շնորհն ։ Այլ և յատուկ է խորհրդոց նոր օրինացս՝ զի նաև կայանան 'ի բանս ։

Դարձեալ՝ խորհուրդք նորոյս օրինաց՝ ներգործեն զորինչ նշանակեն . այլ զայս ոչ առնէին խորհուրդք հին օրինաց։Դարձեալ՝ խորհուրդք նոր օրինացս՝ արդարացուցանեն ըստ ներգործութե՟ գործոյն, և ըստ ներգործութեան գործեցելոյն . այլ խորհուրդք հին օրինացն՝ արդարացուցանէին միայն՝ ըստ ներգործութեան գործողացն . զի ոչ էին յօգուտ գործողացն Ա եթէ ոչ ըստ չափու սիրոյ և ջերմեռանդութե՟ նոցին հաւատոյ ։ Բայց այս ոչ իմացեալ լինի զթլփատութե՟ն որ ոչ էր տուեալ ըստ օրինացն . վասն որոյ և ոչ լինի թուեալ 'ի մէջ օրինականաց . զի նա 'ի տղայոցն բառնայր զսկզբնական մեղս՝ և տայր զշնորհս . ըստ կարծեաց վարդապետաց ոմանց . զորս ոչ առնէին օրինական խորհուրդքն ։ Դարձեալ՝ 'ի յորէնան՝ թլփատութիւնն որոշէր զժողովուրդսն 'ի յայլոց ազգաց . այլ այժմ՟ զանազանէ կնիք մկրտութե՟ ։

Դարձեալ՝ օրինական խորհուրդքն՝ ըստ օգոստինոսի, էին կենդանիք նախ քան զչարչարանսն Տ՟ն . և իսկոյն յետ չարչարանացն մեռեալք . և յետ որոյ պայծառացաւ ճշմարտութիւն աւետարանին , թաղեցան ։ Իսկ մերս խորհուրդք՝ մինչև 'ի կատարած աշխարհի մնան միշտ 'ի զօրեղութե՟ իւրեանց ։

Յաղագս մկրտութե՟ ։ Գլ. Թ.

Մկրտութիւնն ըստ օգոստինոսի , է լուացումն 'ի ջուր , սրբեալ բանիւ կենաց . այսինքն , կոչմամբ անուան սրբոյ երրորդութեանն ։ Արդ՝ մկրտութիւնն է դուռն ամ՟ խորհրդոց . քանզի յառաջ քան զնա ոչ լինի տուեալ յեկեղեցւոջ այլ խորհուրդ ։ Իսկ զգոյացութենէ մկրտու-

տութեանն են հինգ ։ Առաջինն՝ ձայնական արտա- Ա
յայտումն ձեւոյն կացուցեալ ՚ի Տ՟նէ . որ է այս . ես
մկրտեմ զքեզ՝ յանուն Հօր, եւ որդւոյ , եւ ոգւոյն սր-
բոյ ։ Առանց պակասութե , եւ կամ առաւելութեան Բ
ատութէ . առանց յետ եւ առաջադրութե կարգին . եւ
առանց փոփոխման անուանց . զի չորեքեան կերպիւքս
այսքիւք ապականի ձեւ բանին . այսինքն՝ պակասե-
ցուցանելով . յաւելլով . յետ եւ յառաջ դնելով . եւ Գ
փոփոխմամբ . այսինքն , եթէ դնիցի ՚ի տեղի Հօր եւ
որդւոյ եւ ոգւոյն սրբոյ , յանուն հզօրին , իմաստնոյն,
եւ բարւոյն . քանզի յոր լեզուս մկրտի , ոչ պարտին
դնել յատկացեալքն երից անձանց . այլ բացայայտ
անուանք անձանց ։ Իսկ ՚ի տեղի այնմ որ ասէ , մկր-
տեմ , ոչ է պարտ ասել ընկղմեմ , կամ թանամ ։
Երկրորդն է՝ լուացումն տարրին ջրոյն որ եւ իցէ .
այսինքն . կամ ծովու , կամ աղբեր , կամ գետոյ . թէ
ցուրտ , եւ թէ ջերմ . լուանալ զբոլոր մարմինն , կամ
զանեայ զպատուականն մասն , այսինքն , զգլուխն ։
Երրորդն է՝ զի ընկղմումն այն լինիցի ՚ի միջէ , եւ ՚ի
նոյն ժամանակի յորժամ եւ ձեւ բանիցն խօսի արտա-
բերի . այնպէս՝ զի ոչ մինն ընկղմեսցէ զտղայն , եւ
միւսն արտաբերեսցէ զբանն ։ Չորրորդն է՝ դիտա-
ւորութիւնն . կամ յատուկ կամ հասարակ ։
Իսկ յատուկ դիտաւորութիւնն է՝ զի այս որ մկրտի
սրբեսցի ։ Իսկ հասարակն է՝ առնել զորինչ առնէ
եկեղեցի ։ Նա եւ պահանջի դիտաւորութի այնմ որ
մկրտի . եթէ ՚ի չափ հասեալ իցէ . զի որք բռնութբ
մկրտին՝ ոչ ընդունին զխորհուրդն ։ Հինգերորդն է՝
հաւատ մկրտելոյն . զի ՚ի չափ հասելոյն խնդրի յա- Դ
տուկ հաւատ . իսկ ՚ի տղայսն՝ ՚ի ձեռն այլոց . զի
տղայքն մկրտին հաւատով եկեղեցւոյ ։
Արդ՝ մկրտութիւնն իրաւի լինի ՚ի ջուրն , եւ ոչ յայլ
ինչ յեղեղուկ նիւթ . քանզի մարդն՝ վասն մեղաց
նախկին ծնողաց՝ անկաւ ՚ի պղծութի , ՚ի աղօտու-
թի , եւ ՚ի ցանկութի . իսկ մկրտութեն ազատի յե-
րիցս յայսցանէ ։ Եւ այս նշանակի ՚ի յատկութեան
ջրոյն . այսինքն , ՚ի յստակութեանն , ՚ի փայլողութեն .
եւ ՚ի ցրտութեն ։ Քանզի ջուր մկրտութեան իւրով
յստակութեն սրբէ . փայլողութեն՝ լուսաւորէ . եւ
ցրտութեն՝ զովացուցանէ ՚ի տօթոյ ցանկութեց ։
Դարձեալ՝ մկրտութիւնն լինի ՚ի ջուրն՝ զի մի՛ որ
զչքաւորութին պատճառեսցէ , եւ մի՛ վասն պակա-

սուտութեանն զրկեսցին մարդիկ 'ի մկրտութենէն՝ եթէ լինէր յայլինչ յեղեղուկ նիւթ . և զի գտանիցի առ ամենայն հասարակ նիւթ մկրտութեան : Արդ՝ երեքկին է մկրտութիւն , այսինքն , ջրոյ , հրոյ , և արեան :

Մկրտութիւն ջրոյն ազատէ յամենայն մեղաց , և 'ի պատժոց . և հեղու զշնորհս ունակութեամբ . և տաճարէ զինքն : Իսկ մկրտութիւն հրոյն , այսինքն , Հոգւոյն սրբոյ , ջնջէ զմեղս , ոչ միայն միանգամ, այլ բազում անգամ . և ունի զշնորհս 'ի կիրառութեան , 'ի յոր և կայանայ իսկ արդիւն: Այլ մկրտութիւն արեան՝ ազատէ յամենայն փորձութեանց , և առժամայն տայ զվարձն . զի յառնուլ է մարտիրոսաց թաչիլ խակոյն ,

Յայսցանէ յայտ է թէ , որ է լաւագոյն 'ի մէջ մկրտութեանց այսոցիկ . զի իւրաքանչիւրն 'ի նոցանէ գերազանցէ , և գերազանցի : Այլ արդ՝ 'ի մկրտութեան է իմն խորհուրդ միայն , որպէս՝ լուացումն արտաքին . և իմն որ իր միայն , որպէս՝ ներքին շնորհն . և է իմն , իր և խորհուրդ՝ որպէս կնիքն:

Բայց ութն են 'ի հանդիսութենէ մկրտութեանն , որք ոչ են զգոյացութենէ , այսինքն , աղն , ձէթն . մեռոնն . մոմեղէնն . սպիտակ հանդերձն . թուքն . փչումն . և կնքահայրն : Սոքա նշանակեն զզօրութիւն մկրտութեան , և ոչ փոփոխեն զգոյն , այլ զարդարեն :

'Ի չորս տեղիս օծանի երեխայն , այսինքն , 'ի ճակատն . զի զհաւատն յայտնապէս դաւանեսցէ : 'Ի գագաթն , զի առնելիքն նրբագոյնս իմասցին 'ի նմանէ :

'Ի թիկնամէջն , զի լուծն Քրիստոսի քաղցրապէս տարցի :

'Ի կուրծսն , զի ջերմեռանդ սրտիւ սիրեսցէ զԱստուած :

մատ . 3 . Իսկ մկրտութիւն նիւթականապէս կացուցաւ՝ յորժամ
16 . Քրիստոս մկրտեցաւ . տեսականաբար՝ յորժամ ասաց՝ երթայք
մատ . 28 մկրտեցէք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ :
19 . Վախճանապէս՝ յորժամ ասաց Նիկոդեմոսի , եթէ որ
յոհ . 3 . 5 ոչ ծնցի վերստին 'ի ջրոյ , և 'ի յոգւոյ՝ ոչ մտցէ յարքայութիւն : Արարողապէս՝ յորժամ չարչարեցաւ Քրիստոս :

Ներգործութիւն մկրտութեանն է բազմապատիկ . քանզի պատրաստէ առ յայլս խորհուրդս՝ զի է խորհուրդ մտանողաց . սրբէ 'ի մեղաց՝ որ նշանակեցաւ 'ի ծովն
ելից . 14 կարմիր , ուր և ընկղմեցան եգիպտացիքն . իսկ որդիքն
29 . Իսրայէլի գնացին ընդ ցամաք : Այլ գիտելի է , զի 'ի մկրտութենէն ջնջի արատ սկզբնական մեղաց . բայց արմատ մեղացն ոչ բառնի , այլ թուլանայ :

Թողու զպատիժն՝ վասն որոյ զգեցուցանին տղային

հանդերձք սպիտակք 'ի նշան անմեղութեն : Լուսաւորէ զբանականն՝ ուստի դնի աղ 'ի բերանն :
Բորբոքէ զցանկականն առ բարին , ուստի օծեալ լինի մանուկն 'ի ձեռս տղային։ Արիացուցանէ զցասմնականն . ուստի խրատել յաղթեաց զանձանէն յետ անցանելոյն ընդ ծով կարմիր : Պարզէ զմիտն՝ որ նշանակեցաւ աղաւնեաւն , որ նստաւ 'ի վերայ Քի , յորժամ մկրտեցաւ : Տպաւորէ զկիրս , որ նշանակի 'ի յապականեղէն ծածկն՝ որպէս ասէ ատեանն : ղուկ. 3. 22.
Հանդարտեցուցանէ զարմանս մեղաց՝ զոր նշանակէ՝ ջրոյ ցրտութիւնն : Պարզէ զհաղորդութիւն եկեղեցւոյ , որպէս թլփատութիւնն երեմիայի . զի թեպէտ էր սրբեալ յարգանդէ , սակայն թլփատեցաւ , զի միաբանեսցի ընդ ազգին իւրոյ : Ազատէ 'ի յարտաքին աշխատութէ . զի մկրտութիւնն ոչ խնդրէ զծեծեծումն , և զողբումն . իմն զարտաքինն . քանզի ներքինն խնդրի 'ի չարէ հատանել , այսինքն , զղջումն: յայտ. 4. 6. երեմ. 1. 5. Ե
Պակասեցուցանէ զիշխանութի սատանայի , զոր նշանակէ փչումն : Բանայ զդուռն երկնից . որ նշանակեցաւ 'ի մկրտելն Քի , յորժամ բացան նմա երկինք: ղուկ. 3. 11.
Այլ գիտելի է , զի չարչարանքն Քի եբաց զդուռն արքայութե , վասն արդիւնաւոր պատճառին, և ընդհանրական փոխարինին : Իսկ մկրտութիւնն բանայ արարողական եղական պատճառաւ . քանզի զայս եղական մարդ՝ առնէ թռչել : Զերբանն բանայ՝ առ 'ի գովել և զականջն՝ առ'ի լսել . ուստի դնի թուք 'ի յականջս , և 'ի բերանս երեխայից : Ունէ տաճար Քի . ուստի առի մկրտեցելոյն . եւ՛ պինդ ոգի , և տուր տեղի 'ի վերայ եկեղեց ոգւոյն սրբոյ : յայտ. 4. Ի 1. կոր. 6 19.
Ունէ գովելի առաջի այ . ուստի 'ի մեռոնն խառնի պալասան : Մկրտութիւնն Քի , և յովհաննու՝ համաձայնին 'ի նիւթն , և 'ի կերպ ընկղմելոյն . այլ զանազանին 'ի ձևն . զի մկրտութիւնն յովհաննու տուեալ լինէր 'ի յանուն այնմ՝ որ գալոց էր : Դարձեալ զանազանին և ներգործութե . զի մկրտութին Քի կեցուցանէ . և յովհաննուն ոչ : Դարձեալ և վախճանաւն , զի յովհաննուն էր կարգեալ առ մկրտութեն Քի . քանզի սովորեցուցանէր առ այն :

Յա-

Յաղագս ուսման հաւատոյ, և հրաժարեցուցանելոյ ՚ի սատանայէ: ԳԼ. Ժ.

Ա Ուսումն հաւատոյ, և հրաժարումն ՚ի սատանայէ, իբրև նախապատրաստիչ յառաջնան մկրտութեան. զի ՚ի նմին շնորհն զօրեղագոյնս ներգործեսցէ: Արդ՝ վասն երեք պատճառի պարտի յառաջնալ ուսումն այս. նախ՝ առ ուսումն հասարակ սկզբանց հաւատոյն առ ՚ի ընդունել զհաւատն. երկրորդ, վասն պատասխանելոյ դաւանութեան հաւատոյն. երրորդ՝ վասն խոստման պահպանութեան հաւատոյն:

Քանզի չափահասեալն, ունի զյատուկ մեղս՝ և կարէ ինքեամբ պատասխանել, նմին իրի խնդրին այսոքիկ ՚ի նմանէ: Իսկ մանուկն՝ որ ոչ ունի զներգործական մեղս՝ և ոչ ինքեամբ կարէ պատասխանել, խնդրին այսոքիկ ՚ի նմանէ փոխանորդաւն, որ պատասխանեսցէ ՚ի տեղի նորա, վասն պահպանութեան հաւատոյ: Իսկ հրաժարումն կացուցաւ, զի իշխանութիւն սատանայի ՚ի բաց մերժեսցի յերեխայէն:

Քանզի վասն մեղաց առաջին մարդոյն, սատանայ զիշխանութիւն եառ ՚ի վերայ մարդկան. և ՚ի վերայ այնց՝ զորս ՚ի կիր առնուն մարդիկ: Ուստի չափահասեալքն, նաև տղայոքն՝ պարտին հրաժարեցուցանիլ առ ՚ի բաց մերժումն այնպիսի չարակար իշխանութեան:

Յաղագս դրոշմին: ԳԼ. ԺԱ.

Դրոշմն է խորհուրդ պատերազմողաց. իսկ գոյացութենէ դրոշմին են վեց: Երկուքն ՚ի կողմանէ խորհրդոյն ըստ ինքեան, այսինքն, նիւթ խորհրդոյն, և ձևականին. որ ըստ առաւել հասարակ սովորութեան է այսպէս. Նշանեմ զքեզ նշանաւ խաչին, և հաստատեմ զքեզ միւռոնաւ փրկութեան, յանուն Հօր և Որդւոյ և
Ա Հոգւոյն սրբոյ: Եւ երկուքն ՚ի կողմանէ սպասաւորին.

րին, այսինքն, եպիսկոպոսական պատիւն, և ուղիղ դաւանութեան ։ Իսկ երկու ՚ի կողմանէ ընդունողին, այսինքն, ճակատն, ՚ի յորում պարտի լինել մեռանելն ։ Եւ զի այն որ դրօշմի, իցէ մկրտեցեալ ։

Արդ՝ օծումն մեռոնին եռապատիկ լինի ՚ի յերիս խորհուրդս ․ որոց զանազանութիւն առեալ լինի ՚ի վախճանէն ։ ՚Ի մկրտութեանն՝ լինի ՚ի գագաթն՝ առ ՚ի նշանակել զընդունելութիւն հաւատոյն, զի գագաթն է տեղի փորձառածոյ բանականին ։ Իսկ ՚ի դրօշմն, լինի ՚ի ճակատն՝ առ ՚ի նշանակել զհամարձակութիւն խոստովանութեանն՝ որոյ արգելումն է երկիւղն, և ամօթն, որք յայտնապէս յայտնին ՚ի գեղնութիւն, կամ ՚ի կարմրութիւն ճակատին, վասն մերձաւորութեան փորձառածոյ երևակայականին ։ Իսկ ՚ի կարգն լինի օծումն ՚ի ձեռս, առ ՚ի նշանակել զիշխանութիւն օրհնելոյ զխորհուրդ Տէրունական մարմնոյն ։

Այլ օգտութիւն այսմ խորհրդոյ, է բազմապատիկ ․ քանզի հաստատէ զառեալ շնորհն, որ ՚ի մկրտութեան, ըստ սաղմոսին, որ ասէ ․ Հաստատեա ա՟ծ զայս՝ զոր գործեցեր ՚ի մեզ, այսինքն, ՚ի մկրտութե՟ ։ սաղ․ 67․ 29․

Նախապատրաստէ առ հոգևոր զինուորութիւն ․ ուստի որք դրօշմին, օծանին իբր ըմբշամարտք պատերազմօղք, զի մի՛ ՚ի թշնամեացն ըմբռնեսցին ։

Եւ զի ա՟մ քրիստոնեայք պարտին լինել ՚ի պատերազմ Ք՟Ի, նմին իրի ամենեքեան պարտին ընդունիլ զխորհուրդս զայս, զի դիւրագոյն կարասցեն պատերազմիլ ընդ աշխարհի մարմնոյ, և սատանայի ։

Եւ խրախուսէ առ հաստատուն խոստովանութիւն անուանն Ք՟Ի, զոր պարտ է դաւանիլ ճշմարիտ ա՟ծ, և ճշմարիտ մարդ ։ Արդ՝ նախ խոստովանիմք զնա ըստ ա՟ծային բնութեանն հաւասար հօր, և ոգւոյն սրբոյ ․ որ նշանակի ՚ի ձև բանիցն, ՚ի յոր անուանի հայր և որդի և ոգի ս՟բ ։ Երկրորդ՝ խոստովանիմք զնա ըստ մարդկային բնութեանն՝ համբերեալ չարչարանաց խաչին, որ ցուցանի ՚ի ճակատն, խաչաձև նշանաւ մեռոնին ։ Զարդարէ զմեզ ներքուստ և արտաքուստ՝ հոգևոր գեղեցկութ՟բ ։

Ներքուստ՝ մաքրութ՟բ խղճի մտաց ․ և արտաքուստ՝ անուշահոտ բուրմամբ համբաւոյն ։ Ուստի՝ մեռոնն կազմեալ լինի ՚ի ձիթոյ, վասն առաջնոյն ․ և ՚ի պալսանէ, վասն երկրորդին ։ Զօրացուցանէ ՚ի գործել զբարիս, և տևել չարեաց ․ քանզի առեալ լինի ոգին

ս՟բ

մբ առ 'ի յուժգնութի ։ Սպառազինէ զհոգի և զմարմին ․ զհոգին՝ ապաւորութբ կնքոյն ընդդէմ մոլութե երկչոտութեան ․ իսկ զմարմինն՝ վահանաւ խաչին ընդդէմ դիւական արձակմանց ։ Տայ համարձակութի ընդդէմ ամօթոյ, և երկիւղի՝ 'ի խոստովանութեան անուանն Քի ։ Առաջինն՝ նշանակի 'ի մեռոնելն զճակատն՝ որ է տեղի ամօթոյ ։ Եւ երկրորդն՝ 'ի յիշխանութե սպասաւորին ։ Պսակէ յետ պատերազմին ․ որ նշանակի 'ի կապն՝ որով շուրջ պատի գլուխ դրոշմեցելոյն ։

Այլ են ամենք առ դրոշմին որք ոչ են գոլոյ խորհրդոյն ․ այլ իբր 'ի բարւոք գոլն ․ որք են այսքիկ ․ զի նօթի լինիցի տուօղն, և առօղն ․ և զի 'ի ձեռն ուրուք մատուցի առ եպիսկոպոսն, և լինիցի կնքահայր ․ և զի կապ գլխոյն շրջապատեսցի ։

Արդ՝ խորհրդովս այս լինին հաւատացեալքն կատարեալ քրիստոնեայք ։ Եւ ասեմ կատարեալ՝ ըստ առատութեանն ․ քանզի մկրտութբ են կատարեալք, ըստ բաւական կատարելութե ։ Այլ խորհուրդքն գերազանցեն զմիմեամբք, և գերազանցին ։

Քանզի հաղորդութիւնն գերազանցէ ըստ գոլոյն ․ մկրտութիւնն ըստ ներգործութեանն պսակն՝ ըստ խորհրդոյն, քանզի նշանակէ զմիաւորութիւնն Քի և եկեղեցւոյ ։ Դրոշմն՝ ըստ արժանապատուութեան սպասաւորին, վն զի ոչ լինի տուեալ, եթէ ոչ յեպիսկոպոսաց ։ Իսկ ապաշխարութիւնն ըստ բազում անգամ թողութեան մեղաց, այպէս և վասն այլոց խորհրդոց ։

Յաղագս հաղորդութեան ։ Գլ․ ԺԲ․

Հաղորդութիւնն է խորհուրդ սրբոյ՝ ածայնոյ և մարդկայնոյ ․ զի ած այսու խորհրդով եցոյց մեզ զմեծամեծ նշան սիրոյ և նոյնով խորհրդով բորբոքեաց յատկաբար առ ինքն՝ զգութ սիրոյ մերոյ ։

Արդ՝ չորս են պտոյացութե այսմ խորհրդոյ ։ Առաջինն է՝ զի օրհնող այսմ խորհրդոյ լիցի քահանայ ։ Երկրորդն է՝ տեսակ հացին, և գինւոյն ։ Երրորդն է՝ դիտաւորութի օրհնողին ։ Չորրորդն է՝ ձև բանից, որ է այս ։

Քանզի այս է մարմին իմ։ Եւ քանզի այս է բաժակ ղուկ.
արեան իմոյ նորոյ և յաւիտենականի ուխտի, և այլն։ 22.11.
Իսկ առ 'ի յիմանալ զայսոսիկ լիապէս, ծանիր շուրջ 1. կոր.
զդիտաւորութ̄ն՝ զի այլ է դիտաւորութի, և այլ 11.24.
ուշադրութի. զի դիտաւորութիւնն միշտ է հարկաւոր. կամ հասարակաբար, կամ յատկապէս. որպէս և ասացաւ իսկ վասն մկրտութեն։

Իսկ ուշադրութիւնն՝ ոչ է 'ի գոյացութե, որպէս՝ յորժամ յափշտակի միտքն առ այլ ինչ 'ի յասելն զձևական բանսն, որ երբեմն պատահի 'ի տկարութե, երբեմն 'ի հեղգութե, և յանփոյթութե, և յայնժամ է մեղք։ Դարձեալ գիտելի է. զի ոչ միայն խնդրի դիտաւորութի սպասաւորին, այլ և դիտաւորութի կացուցանողին զխորհուրդս զայս. ուստի թէ քահանայ ոք արտաբերէր զբանս՝ 'ի վերայ ամ̄ հացից որ 'ի վաճառանոցին, նաև դիտաւորութ̄ե օրհնելոյ՝ ոչ լինէր անդ փոխումն գոյացութ̄ե. և այս՝ ոչ լինէր վս̄ պակասութե զօրութեան բանիցն. (քանզի քահանայն կարէ միանգամայն՝ այնքան նշխար օրհնել՝ որ բաւական լինէր ամ̄ աշխարհի, եթէ պահանջէր հարկ եկեղեցւոյ) այլ է վասն պակասութ̄ե դիտաւորութեանն այնորիկ, որ կացոյց զխորհուրդս զայս. որոյ դիտաւորութիւնն ոչ էր՝ զի այնպիսի կատականօք և յիմարութ̄ե լինիցէր օրհնութիւն. այլ վս̄ օգտութեան կամ հարկի, ընդհանուր կամ մասնաւոր եկեղեցւոյ։ Ա

Նաև գիտելի է վասն ձևոյ բանից, զի յորժամ ասէ. քանզի այս է մարմին իմ. շաղկապս այս, քանզի, ոչ է 'ի յէութ̄ե տեսակին. այլ 'ի բարեպէս գոլոյ նորին։ Ուստի զանցանել ոչ է պարտ. քանզի այլ ինչ է հարկաւոր տեսակին առանց որոյ ոչ կարէ լինել գոյացական փոխումն. և այլ ինչ է տեսակ պատշաճաւոր, առանց որոյ ոչ է պարտ լինել։ Ըստ նոյնոյ կերպի ասելի է և վս̄ տեսակի գինւոյն։

Նմանապէս գիտելի է զնիւթոյ. զի այլ է նիւթ հարկաւոր, և այլ պատշաճաւոր։ Արդ՝ նիւթ հարկաւոր այսմ խորհրդոյս, է՛ հաց ցորենի. զի առանց նր̄ ոչ կարէ լինել. իսկ նիւթ պատշաճաւոր՝ է՛ բաղարջ հացն. զի թէպէտ խմորունն կարէ լինել, սակայն ոչ է պարտ առնել վասն երկուց պատճառաց։

Առաջինն է, զի բաղարջ հացն յարմարի կացուցմանն. քանզի Քս̄ զբաղարջ հացն օրհնեաց 'ի մարմինն իւր,
և ետ աշակերտաց իւրոց։ Երկրորդ՝ զի այսպիսի ղուկ. 22

հացն յարմարի նշանակեցելոյն . քանզի Ք՟ս էր առանց
խմորոյ մեղաց ։ Նմանապէս ասելի է և վասն նիւթոյ
բաժակին . զի այլ է նիւթ հարկաւոր . և այլ պատշաճաւոր ։
Նիւթ հարկաւոր բաժակին է գինի որ 'ի
յորթոյ . զի արիւնն Ք՟ի ոչ կարէ լինել յայլինչ յեղեղուկ
նիւթ քան 'ի գինին ։ Իսկ նիւթ պատշաճաւոր
է՝ զի ջուր խառնիցի ընդ գինւոյ . և այս վ՟ն
ղուկ. 22. 20. երից պատճառաց ։ Առաջինն է , զի այսպիսի նիւթ
պատկանի կացուցման . զի Ք՟ս ետ զարիւնն իւր այնպիսաւ
նիւթով ։ Երկրորդն է , զի այսպիսի նիւթն
յարմարի և նշանակեցելոյն . զի եկեղեցի որ նշանակի
ջրովն միաւորի ընդ Ք՟ի հաւատով և սիրով ։
կոր. 21. 26. Երրորդն է , զի է նշանակ մահուանն Ք՟ի , զոր պարտ
է պատմել մեզ ըստ առաքելոյն ։ Դարձեալ՝ գիտելի
է , զի 'ի քացախն և 'ի յաղօխն , ոչ լինի . զի քացախն
ոչ է գինի , այլ էր . և աղօխն ոչ է գինի , այլ
լինելոց է ։ Իսկ 'ի խորհուրդ արեանն այնքան սակաւ
մի ջուր պարտ է խառնել 'ի գինին , մինչ զի կարիցէ
կլանել 'ի նմանէ . ապա թէ ոչ , արգելի խորհուրդն ,
այսինքն , թէ գինին յաղթեսցի 'ի ջրոյն ։
Եւ այս նշանակէ՝ զի յորժամ դառնամք առ Ք՟ս , ոչ
նա 'ի մեզ , այլ մեք 'ի նա փոխիմք . զի միաւորիմք
ընդ խորհրդական մարմնոյ ն՟ր ։ Իսկ թէ մի կաթ գինի
արկցի 'ի յարիւնն , վասն անփոյթութեան , կամ
Բ պատահմամբ ինչ , ոչ պակասի վասն այնորիկ գոլ
արիւն , և ոչ վասն խառնման գինւոյն ընդ արեան ,
փոփոխի , այլ իւրաքանչիւր տեսակ մնայ յիւրն բնութե՟ն ։
Այլ թէ յոլով գինի դիցի 'ի մի կաթ արիւնն
Ք՟ի , որպէս երբեմն լինի 'ի լուացման յայնժամ ոչ
մնայ անդ արիւն Ք՟ի , զի տեսակ կաթիլ մի գինւոյն
այնորիկ , 'ի ներքոյ որոյ է արիւնն Ք՟ի , կլանի 'ի վերայ
հեղեալ բազում գինւոյն ։
Արդ՝ վասն խորհրդոյ հաղորդութեանն ծանիր . զի
է ինչ որ է խորհուրդ միայն . ո՟պ տեսակ հացի և
Գ գինւոյ . և է ինչ անդ՝ իր միայն . ո՟պ խորհրդաւոր
մարմինն Ք՟ի . և է ինչ անդ՝ իր և խորհուրդ . ո՟պ
ճշմարիտ մարմինն Ք՟ի , զոր եառ 'ի կուսէն . քանզի
այն՝ է՝ իր առաջնոյն , և խորհուրդ երկրորդին ։
Արդ 'ի ներքոյ երկաքանչիւրոց տեսակացն , այսինքն ,
հացի , և գինւոյն , է Ք՟ս անբաժանելի , այսինքն ,
մարմինն՝ հոգին , և ա՟ծ . և վասն այնորիկ 'ի յերկաքանչիւրն
է ամենևին մի պարզ խորհուրդ ։

Զի 'ի ներքոյ տեսակի հացին է մարմինն Քի փոխմամբ, և արիւնն կապակցութբ, հոգին համաղուգութբ, և ածութին միաւորութբ ։ Քանզի չորեքեանս այսոքիկ, ոչ կարեն բաժանիլ, և ոչ տարորոշիլ 'ի միմեանց, նմանապէս ասելի է և վս արեանն ։

Դարձեալ՝ բոլոր Քս այնպէս է 'ի տեսակի հացին և գինւոյն, որ և է իւր յիւրաքանչիւր մասն նորին. եթէ տեսակն իցէ ամբողջ, և եթէ բաժանեալ. և վասն այնորիկ ոչ է անդ Քս որպէս պարագրեալ, կամ տեղակալ, և կամ զգալի մարմնական ինչ զգայութբ ։

Եւ զօրինակ այսմ ունիմք 'ի հայելւոջ. որ թէ բաժանեսցի 'ի յոլով մասունս, 'ի յամն երևի պատկերն ; որպէս նախ երևիւր 'ի բոլորն ։ Նոյն օրինակ է և զբանէն. զի նոյն բոլոր բանն՝ լինի լսելի 'ի բազմաց. ուստի թէպէտ բանն է միակի 'ի յարտաբերօղն, սակայն բոլորն է 'ի յիւրաքանչիւր լսօղն ։ Արդ՝ նշխարն բեկանի յերիս մասունս, վասն բազում պատճառաց ։

Նախ՝ վասն երից ածային անձանց 'ի մի էութեան ; քանզի են երեք մասունք 'ի նշխարն. բայց մի է քս ։ Երկրորդ՝ վասն երից որպիսութեց եկեղեցւոյ, այսինքն, զինուորելոց, յաղթողաց, և քաւարանին տանջելոց ։ Երրորդ՝ վասն երից որպիսութեցն Քի, յորս եղև, այսինքն, մահկանացութեան, մահուն, և անմահութե ։ Չորրորդ՝ վս երից խոցեալ մասանցն Քի, 'ի ժամանակի չարչարանացն, այսինքն, ձեռաց, ոտից, և կողին ։ Հինգերորդ՝ վասն երից գոյացութեանցն՝ 'ի քս. այսինքն, ածութե, հոգւոյն, և մարմնոյն ։

Բայց խորհուրդ մարմնոյն Քի՝ յառաջագոյն օրինակեցաւ բազում կերպիւ, այսինքն, 'ի նուէրս Մելքիսեդեկի. 'ի յորում ունիմք զարտաքին տեսակ խորհրդոյս. և զառաջին ներգործութիւնն ; այսինքն, զկազդուրումն։ Զի անդ յառաջեցին օրինակք հոգևոր կազդուրման՝ 'ի հացն և 'ի գինին. իսկ 'ի հաղորդութիս է հոգևոր կազդուրումն կենաց 'ի յիւրն ։ Ծննդ. 14. 18.

Դարձեալ՝ 'ի մանանայն՝ ուր օրինակեալ լինէր ներգործութն շնորհին ։ Դարձեալ՝ 'ի զատն պասեքական, ուր նշանակեալ լինէր ազատութի յեգիպտական ծառայութէն. այսպէս և մեր զատն է նշան ազատութե 'ի սատանայէ ։ Դարձեալ՝ 'ի զանազան պատարագսն՝ որպէս յայտ է 'ի գիրս ղևտացւոց, 'ի յորս օրինակեալ լինէր մատուցումն չարչարանացն քի, Ելից. 16. 4. Ելից. 12. 6. Ղևտ. 11. 8.

զի եղեւ պատարագ առ 'ի հաշտութի, եւ զոհ, առ 'ի թողութի մեղաց. եւ ողջակէզ՝ վասն կատարեալ նուասու բոլոր մարմնոյն իւրոյ: Դարձեալ՝ 'ի նուէրն մանուէի, որպէս յայտ է 'ի գիրս դատաւորաց. 'ի յոր նշանակիւր, թէ նորում եւ 'ի վերայ որոյ պարտի մատչիլ պատարագն. զի 'ի հաւատոն Քն՝ որ նշանակի վիմաւն: Դարձեալ՝ 'ի մեղրաթաթաւ գաւազանն յոնաթանու, 'ի յոր նշանակեալ լինիւր՝ թէ ով պարտի մատուցանել. զի յոնաթան՝ նշանակէ զքահանայ. իսկ խորիսխն՝ նշանակէ զջերմեռանդութի մատուցանողին:

դատ. 13. 10.

1. թագ. 14. 27.

Այլ օրինակ արեանն Քի՝ էր գինին շտեմարանին սաղոմոնի, յորմէ ասէ յերգսն՝ եմոյծ զիս արքայ 'ի տուն գինւոյ: Դարձեալ՝ ջուրն առ 'ի նշանակել զլուացումն. բստ եզեկիէլի որ ասէ, տեսի զի ելանէր յաջմէ կողմանէ տաճարին ջուր: Դարձեալ՝ արիւնն՝ առ 'ի նշանակել զփրկութի. որպէս ասէ առաքեալն առ եբրայեցիս. զի առանց արեան ոչ լինէր փրկութի:

երգ. 2. 4

եզեկ. 47. 1.

եբր. 9. 22.

Յաղագս մեծապատուութեան խորհրդոյ հաղորդութե: ԳԼ. ԺԳ.

ՊԱտիւ, եւ գերազանցութի այսմ խորհրդոյ, երեւի 'ի բազում իրս: Նախ՝ զի որպէս արդէն իսկ ասացաւ, յառաջքան զօրէնս, նա եւ յօրէնս, նշանակեալ եղեւ: Երկրորդ՝ զի եւ 'ի մարգարէից նախագուշակեցաւ. ուստի ասէ սաղմոսն՝ զհաց հրեշտակաց կերին մարդիք. եւ դնէ զանցեալն վասն ապագային մարգարէական ստուգութե: Երրորդ՝ զի կացուցաւ 'ի Քսէ, կրկնակի, այսինքն, բանիւ, եւ գործով: Բանիւ, ոպ յայտ է 'ի յօհաննու. որ ասէ, ես եմ հացն կենաց: Իսկ գործով՝ որպէս յայտ է 'ի մատթէոս՝ որ ասէ. առէք կերէք այս է մարմին իմ: Չորրորդ՝ զի պահեցաւ յառաքելոց. որպէս յայտ է՝ առ կորնթացիս. 'ի ժողովիլն ձեր ի միասին. ոչ է տուն Տն ձեզ տեղի հաց ուտելոյ, եւ այլն: Հինգերորդ՝ զի է հանդիսացուցեալ 'ի ծայրագոյն քահանայապետից. որք կարդեցին զերգս եւ զաղօթս՝ եւ զտեղին, եւ զժամանակն. զզգեստս, եւ զզանազան պայաս անօթից՝ որք են առ վայելչութի այսմ խորհրդոյս: Նա եւ երեւի մեծապա-

սաղ. 77. 25.

յօհ. 6. 51.

մատ. 26. 26.

1. կոր. 11. 20.

Ա

տու-

ռութեն այսմ խորհրդոյս, վասն զի Քս կայանայ յերից գոյացութեց, այսինքն, յածութէ, 'ի հոգւոյ, և 'ի մարմնոյ. և ինքն իսկ ածութիւնն՝ գերազանցէ զամենեքումբք. ըստ սաղմոսին որ ասէ. Մեծ է Տր, և գովեալ յոյժ, և մեծութե նր ոչ գոյ չափ ։ սաղ։ 47.2.
Դարձեալ՝ հոգի նորա գերազանցէ քան զամ հոգի. յոհ. 1.
վասն զի լի՛ է շնորհօք և ճշմարտութբ, այսինքն, կատարելագունեղ 'ի յախորժականն, և 'ի ճանաչողականն ։ 14.
Դարձեալ՝ մարմին նր գերազանցէ զամ մարմնով. որ առեալ եղև 'ի մաքրեալ մարմնոյ ամեներանուհւոյ կուսին, և միաւորեալ ընդ ածութեանն ։ Ապա ուրեմն են միաւորեալք 'ի Քս՝ այնք որք են պատճառականագոյնք 'ի յերկինս, և 'ի յերկրի ։ կող. 2. 9

Յաղագս զարմանալեաց՝ որք են 'ի հաղորդութե ։

ԳԼ. ԺԴ.

ԱՅԼ արդ՝ բազում զարմանալիք են խորհրդոյս այսորիկ ։ Առաջինն է՝ զի անդ է մարմինն Քի այնչափ քանակութբ, որպէս էր 'ի խաչին, և այժմ 'ի յերկինս. սակայն ոչ երևին արտաքոյ կողպրի հացի և գինւոյն այնորիկ ։ Երկրորդ՝ զի են անդ պատահմունք առանց գոյացութե ։ Երրորդ՝ զի հացն այնպէս փոխի 'ի մարմին Քի զի ոչ լինի նիւթ մարմնոյն Քի, նա և ոչ դառնայ յոչինչ ։ Չորրորդ՝ զի մարմինն Քի ոչ աճի 'ի յօրհնելն զբազում նշխարսն. և ոչ նուազի 'ի ճաշակելն զնոսա ։ Հինգերորդ՝ զի նոյն մարմին թուով է՝ 'ի բազում տեղիս, այսինքն, 'ի ներքոյ ամ նշխարաց սրբացելոց ։ Վեցերորդ՝ զի յորժամ նշխարն առեալ լինի 'ի ձեռս և տեսանի աչօք, մարմինն Քի ոչ տեսանի աչօք, և ոչ շօշափի ըստ ինքեան, այլ միայն տեսակն շօշափի, և տեսանի աչօք ։ Եօթներորդ՝ զի յորժամ բաժանի նշխարն, ոչ բաժանի մարմինն. այլ 'ի ներքոյ իւրաքանչիւր մասնկանն է բոլոր Քս ։ Ութերորդ՝ զի ընդ պակասիլ անդ տեսակացն ընդ նմին դադարի անդ և գոլ մարմին և արիւն Քի ։ Իններորդ՝ զի թէպէտ ոչ է անդ հաց և գինի ըստ գոյացութեն, սակայն պատահմունքն անդ՝ ունին զնոյն ներգործութի, որպէս և յառաջագոյն իսկ, այսինքն, զյագեցուցանելն, և զարթուցանելն ։ Եւ գիտելի է , զի Ա՟յ յարմարի գոլ ա՟մ ուրեք պարզաբար և յատկապէս․ իսկ ստեղծուածոյն՝ յարմարի լինել միայն 'ի միում տեղւոջ ։

Այլ մարմինն Ք՟ի է միջակօրէն , քանզի մինչ լիցէ ստեղծուած ըստ մարդկութեանն , ոչ պարտի համահաւասարիլ ստեղծողին այնմ , զի լինիցի յա՟մ ուրեք ։ Իսկ զի է միաւորեալ ընդ ա՟ծութեանն , պարտի այնու գերազանցել զա՟մ մարմնովք , այսինքն , զի նոյնժամայն , և համանգամայն կարիցէ լինել 'ի բազում տեղիս , այսինքն , 'ի ներքոյ այսմ խորհրդոյս ։

Դարձեալ՝ 'ի խորհուրդ հաղորդութեանն է ինչ ըստ բնութե , այսինքն , զի պատահմունքն են անդ 'ի յեղերեալ տեղւոջ ։ Եւ է՝ ինչ անդ 'ի վերքան զբնութի․ Ա բայց ոչ 'ի վերքան զիմացումն , զի անդ են պատահմունքն առանց ենթակայի ։ Եւ է ինչ անդ 'ի վեր քան զիմացումն , և զբնութի․ քանզի բոլոր Ք՟ս է՝ անդ այնքան՝ որքան և էր 'ի խաչին․ սակայն ոչ անցանէ ընդ կապարաւ այնմիկ փոքրիկ տեսակի հացին ։ Բայց յաղագս հրաշալի գոյացական փոփոխման գիտելի է․ զի երեքկին է փոփոխումն ։ Մին արուեստական , ո՟պ յորժամ շինի արձանն 'ի մետաղոյ , և միւսն բնական , և այս երկեակն․ այսինքն՝ գոյացական , և պատահական ։ Պատահական է՝ յորժամ նոյն ենթակայն մնայ 'ի ներքոյ զանազան պատահմանց յաջորդողաց զմիմեանս ։ իսկ գոյացական է՝ յորժամ նոյն նիւթն , մնայ 'ի ներքոյ զանազան տեսակաց գոյացականաց․ որպէս յայտ է 'ի փոփոխման տարերացն 'ի միմեանս․ իսկ երրորդ փոփոխումն է՝ 'ի վեր քան զբնական՝ ո՟պ յորժամ ոչ մնայ , ոչ նիւթն և ոչ ենթակայն․ այլ միայն պատահմունքն՝ առանց ենթակայի , և այսպիսի փոփոխումն է 'ի գոյացական փոփոխման հաղորդութե ։ Դարձեալ ծանիր․ զի 'ի փոփոխումն իրողութեանց , կարէ խմանիլ երեքկին դժուարութի , մին 'ի կողմանէ կապարին՝ յորմէ․ մին 'ի կողմանէ կապարին՝ առոր․ և միւսն՝ 'ի կողմանէ տարակայութե կապարացն առ միմեանս ։ Ըստ առաջնոյ կերպին ստեղծումն է զարմանագոյն քան զա՟մ փոփոխմունս․ զի է ա՟նեւին յոչ էակէն ։ Ըստ երկրորդի եղանակին փոփոխումն հացին 'ի մարմին Ք՟ի է՝ զարմանահրաշագոյն ա՟մ փոփոխմանց , զի փոխի 'ի յէակն՝ որ նախ էր ներգործութե ։ Այլ ըստ երրորդի եղանակին , մարդեղութիւնն Ք՟ի էր զարմանագոյն քան զա՟մ փոփոխմունս․

մանս ․ զի լինի անդ միաւորութի անհուն տարակացելոց ։ Արդ՝ մանաւանդ դնէ զչորեսին գոյացական փոփոխումն ․ առաջինն է՝ յոչ էակէն յէակն ․ և այս կոչի ծնելութի ։ Երկրորդն է՝ յէակէն յոչ էակն՝ որպէս՝ ապականութի ։ Երրորդն է՝ յէակէն 'ի յէակն ․ որ այժմ ոչ է՝ այլ լինելի ․ որպէս՝ յառաջածումն ։ Չորրորդն է՝ յէակէն յէակն՝ որ արդէն իսկ կայ ․ և այսպիսի է փոփոխումն հացին 'ի մարմինն Քի ։ Փոփոխումն այս՝ ոչ ունի զնմանութի 'ի բնութեան , այլ է իբր ներհակ այլայլման ․ քանզի աստ փոխի մի գոյացութիւնն 'ի միւս այլն , և մնան նոյնք պատահմունքն ․ իսկ 'ի յայլայլութե , է՝ հակադարձն ․ զի անդ փոփոխին պատահմունքն , և մնան գոյացութիւնքն ․ որպէս յայտ է 'ի մարմնականս՝ երբ 'ի սպիտակէն լինի սեաւ ․ և 'ի հոգևորականս յորժամ 'ի յարդարոյն լինի ամբարիշտ ․ կամ 'ի տգիտէն գիտուն ։ Եւ ծանիր , զի նախդիրս այս՝ 'ի , բազում կերպիւ առեալ լինի ․ քանզի երբեմն նշանակէ զներգործական պատճառն , որպէս՝ յորժամ ասի Քս յղացաւ 'ի յոգւոյն սրբոյ ։ Երբեմն զնիւթական պատճառն , որպէս՝ յորժամ ասի՝ Քս ծնեալ 'ի կուսէն ։ Երբեմն ասէ զնոյնութի գոյացութեան որպէս յորժամ ասի որդի ծնեալ 'ի հօրէ ։ Երբեմն նշանակէ զփոփոխումն գոյացութե ․ որպէս՝ յորժամ ասի՝ մարմինն Քի լինել 'ի հացէն ։ Երբեմն զկարգն ․ որպէս՝ յորժամ ասի ստեղծուածքն գոլ 'ի յոչընչէ ։

Յաղագս ներգործութեան հաղորդութեան ։

ԳԼ. ԺԵ.

Արժանապէս ճաշակողքն մարմնոյն Քի , հանդիպին բազում բարութե ։ Ա ղուկ 22.19.

Առաջինն է՝ յիշատակութիւնն քի ․ որպէս ասէ , զայս արարէք առ իմոյ յիշատակի , այսինքն , 'ի յիշատակ սիրելութե , պատուութե , և հեծեմանն ։

Երկրորդն է՝ ներքին կենդանութի ․ զի երբեմն զօրութեամբ այսմ խորհրդոյս բեկեալն լինի խորտակեալ ։ Քանզի որպէս կերակուր փայտին կենաց՝ Ծնն.3.22 տայր զկեանս , այսպէս շնորհօք հաղորդութեան մաքրիմք , լուսաւորիմք , կատարիմք , կազդուրիմք , և կենդանանամք ։ Եւ իրաւի դառնայ կեանքն կերակրով, որով և եմուտ մահն ։

Երրորդն է՝ միաւորութի ընդ խորհրդաւոր մարմնոյն Քի ․ որպէս ասէ օգոստինոս 'ի դիմաց քի , ոչ դու փոխեսցես զիս 'ի քեզ ․ այլ դու փոխեսցիս 'ի յիս ․ և ոչ իմանի աստ նոր միաւորութիւն ընդ խորհրդական մարմնոյն , այլ աճումն նորին ․ քանզի հաղորդութին ոչ միաւորէ զաննմանսն ։

սաղ․ 22․ 2․ Չորրորդն է՝ հոգևոր յաղեցումն ․ որպէս ասէ սաղմոս ․ 'ի վայրի դալարւոջ անդ բնակեցոյց և այլն ։ Քանզի ած՝ ոչ միայն կացոյց զխորհուրդն որ վերբուսին ծնանէր զմեզ 'ի գոլ շնորհին , որպէս մկրտութիւնն ․ կամ որ զծնեալս զօրացուցանէր, ոպ դրոշմն, այլ և զայն՝ որ զզօրացեալսն սնուցանէր , որպէս հաղորդութիւնն․ վ որոյ երեքեան խորհուրդքս այսոքիկ պարգևին ամ հաւատացելոց , որք մասոյին առ հաւատոն ։

սաղ․ 22․ 5․ Հինգերորդն է՝ աճումն ջերմեռանդութե ըստ սաղմոսին, որ ասէ , օծեր իւղով զգլուխ իմ ։ Քանզի սնունդն որ ստացեալ լինի մեզ ըստ գոլոյ շնորհին , 'ի յերկիս իւր իմացեալ լինի , այսինքն , 'ի պահպանութի ջերմեռանդութեանն առ ած , և սիրոյն առ ընկերն, և հեշտութեանն որ 'ի ներքս 'ի մեզ ։

սաղ․ 22․ 2․ Վեցերորդն է՝ հանդարտութիւն արմատոյ մեղաց , ուստի ասէ սաղմոսն ․ առ ջուրս հանգստեան սնոյց զիս ։ Ուստի որպէս ջուրն զովացուցանէ , այսպէս և խորհուրդս այս զովացուցանէ 'ի ջերմութենէ ցանկութեան ։

ելից․ 16․ 14․ Եօթներորդ՝ պարգևումն շնորհաց ․ և օրինակ այսմ ասի յելիցն , թէ ընդ իջանել մանանային , իջանէր և ցօղ ընդ նմին ։

Թուոց․ 11․ 9․ Ութերորդն է՝ զօրացուցումն առաքինութեց՝ ըստ սաղմոսին որ ասէ ․ հաց հաստատէ զսիրտ մարդկան ։

սաղ․ 103․ 15․ Իններորդ է՝ թողութի մեղաց ․ զի կերակրովս այսու՝ լինի միշտ գիւտ կորուսելոյն ․ նմին իրի՝ յորժամ ասի 'ի Տէրունական աղօթան՝ զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր , առժամայն յարէ 'ի նոյն՝ թող մեզ զպարտս մեր ։ Իսկ այս իմացեալ լինի վասն ներելեացն , և ոչ վասն մահուչափիցն ․ զի որպէս բնական կերակուրն է օգուտ կենդանւոյն՝ և ոչ մեռելոյն, նոյնպէս և հոգևոր կերակուրն ։

Տասներորդ է՝ ապաւինութի ընդդէմ սատանայի ․

ուստի ասէ սաղմոսն , պատրաստ արարեր զսեղան , ան յանդիման նեղչաց , եւ այլն : սաղ. 23. 5.

Մետասաներորդն է՝ վերացումն յուսոյն ըստ առաքելոյն որ ասէ , զիարդ ոչ նովաւ հանդերձ զա̃մ շնորհեսցէ մեզ : հռոմ. 8. 32.

Երկոտասաներորդ՝ զարթուցումն սիրոյն. ուստի ասէ բեռնարդոս , ուսիր քրիստոնեայ , թէ որքան պարտիս սիրել զՔս̃ , որ ետ զմարմին իւր վասն քո 'ի կերակուր . զարիւն իւր ըմպելի . զհոգին իւր 'ի գին . եւ զվտակ կողին 'ի լուացումն :

Երեքտասաներորդ է՝ դիւրութիւն հաւատոյն. զի 'ի խորհուրդս այս՝ համբառնի միտքն 'ի վերքան զբնութիւն , զզգայութիւն , եւ զիմացումն . ուստի ասէ առաքեալն գերեմք զա̃մ միտս , 'ի ծառայութիւն քի̃ : 2. կոր. 10. 5.

Չորեքտասաներորդ է՝ հրեշտակական խրախճանութիւն , ըստ սաղմոսին որ ասէ , զհաց հրեշտակաց կերան մարդիկք : սաղ. 77 25.

Հնգետասաներորդ է՝ պարգեւումն արքայութեան երկնից . որպէս ասէ յոհան . որ ուտէ զմարմին իմ , եւ ըմպէ զարիւն իմ , ունի զկեանս յաւիտենականս : յոհ. 6. 55

Վեշտասաներորդն է՝ զի դնէ զհեշտութիւն հոգւոյ , որպէս ասի 'ի գիրս իմաստութ̃ , զհաց երկնից ետուր նոցա , ունելով զամենայն հեշտութիւնս , եւ զհամս անուշութե̃ : իմաս. 16. 20.

Եօթնեւտասաներորդն է՝ լուսաւորութիւն իմացման , ոպ̃ օրինակեցաւ յառաջին թագաւորաց , ուր ասէ , ճաշակեաց յոնաթան 'ի մեղրէն , եւ լուսաւորեցան աչք նորա : 1. թագ. 14. 27.

Դարձեալ զներգործութիւն հաղորդութե̃ , ասէ բեռնարդոս . մարմինն քո է՝ խօթացելոցն դեղ . եւ ճանապարհորդացն թոշակ . զտկարսն զօրացուցանէ . զառողջսն հեշտացուցանէ . զհիւանդութիւնս բժշկէ , զառողջութիւն պահէ : Եւ սովաւ լինի մարդն հեզագոյն առ 'ի յանդիմանութե̃ . համբերող , առ 'ի վաստակն . ջերմագոյն՝ առ սէրն . ճարտարագոյն առ զգուշութիւն . յօժարագոյն առ հնազանդութե̃ , եւ ջերմեռանդագոյն առ գոհութիւն :

Բայց ծանիր , զի որպէս արժանապէս ճաշակօղքն հանդիպին բազում բարեաց , նոյնպէս եւ անարժանքն դիպին բազում չարեաց : Քանզի ոչ ուրուք գործ հաճոյանայ այ̃ , եթէ ոչ նախ ինքն հաճոյասցի :

Վասն զի անարժան հաղորդութին թակարթէ զմարդն մեղօք՝ պատրաստէ զկորուստ · դայթակղեցուցանէ զընկերն · կուրացուցանէ զմիտս . նուաճէ 'ի ներքոյ փորձութե · զայրացուցանէ զած · կարճէ զժամանակաւոր կեանս · և կողոպտէ 'ի շնորհաց :

սաղ. 68 23. Եւ զայսցանէ ամենեցունց՝ ասէ սաղմոսն կարգաւ · եղիցի սեղան նց յորոգայթ · ահա առաջինն : Եւ 'ի հատուցումն, ահա՛ երկրորդն : Եւ 'ի գայթակղութի · և այս երրորդն : Կուրասցին աչք նոցա զի մի՛ տեսցեն, ահա չորրորդն : Եւ զթիկունս նց կորացո՛, ըստ հինգերորդին : Հեղ 'ի վերայ նց զբարկութի, և սրտմտութի բարկութե քո հասցէ, ըստ վեցերորդին : Եղիցին բնակութիք նց աւերակք, ըստ եօթներորդին : Եւ 'ի յարկս նց մի՛ ոք իցէ որ բնակիցի, ըստ ութերորդին :

Յաղագս ճաշակողացն զհաղորդութիւն · և վասն կերալի ճաշակելոյն : ԳԼ. ԺԶ.

Արդ՝ չորս կերպիւ լինի ճաշակումն մարմնոյն քի : Քանզի ոմանք առնուն հոգևորապէս միայն · որպէս՝ որք առնուն զիր խորհրդոյն, այսինքն, զշնորհն և ոչ զխորհուրդ մարմնոյն քի · և 'ի կերպէ ճաշակմանս այսորիկ, ասէ օգոստինոս, հաւատա՛, և կերեր, այսինքն, միացար ճշմարիտ հաւատով ընդ խորհրդաւոր մարմնին քի : Ոմանք առնուն խորհրդապէս միայն · ոպ՝ որք ճաշակեն մահուչափ մեղօք, քանզի թէպէտ ած է ամուրեք էութե · բայց ո՛չ շնորհօք : Ոմանք հոգևորապէս՝ և խորհրդաբար, որպէս որք առնուն զիրն, և զխորհուրդն · այսք են որք հաղորդին 'ի շնորհս : Ոմանք ոչ հոգևորապէս, և ոչ խորհրդաբար · որպէս՝ որք ոչ առնուն զիրն · և ոչ զխորհուրդն :
Արդ՝ առաջինքն՝ ոչ ճաշակեալք ճաշակեն :
Երկրորդքն ճաշակեալք, ո՛չ ճաշակեն :
Երրորդքն՝ ճաշակեալք, ճաշակեն : Չորրորդքն՝ ոչ ճաշակեալք, ո՛չ ճաշակեն : Բայց արդ՝ ընդդէմ հաղորդութեան մեղանչէ ոք՝ երիւք կերպիւ :
Նախ՝ յորժամ ոչ հաղորդի 'ի սահմանեալ ժամանակին · յորմէ ասէ յօհան, եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ, և արբջիք զարիւն նորա՝ ոչ ունիք զկեանս յան- յօհ. 6. 54

յանձին ։ Երկրորդ՝ յորժամ ճաշակէ ոք 'ի յիւրում ժամանակի , այլ ոչ արժանապէս ․ յորմէ ասէ առաքեալն , որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ , դատաստան անձին իւրում ուտէ ։ Երրորդ՝ յորժամ ոք յետ հաղորդելոյն՝ ոչ պահէ զինքն 'ի մեղաց , և այսու անկանի յերկիս չարիս ։ Նախ՝ զի զքս̅ զոր ընկալաւ, նախատանօք արտաքսէ յինքենէ ․ զի առաւել նախատինք է արտաքսել զհիւրն , քան բնաւ ոչ ընդունիլ ։ Երկրորդ՝ զի այնպիսին է նման յուդայի, որ յետ ընթրեացն ընդ քի՝ մատնեաց զնա ։ այսպէս և աբիսողոմ կոչեաց զեղբայր իւր 'ի խրախութի ․ և եսպան զնա անդ ։ Երրորդ՝ զի զկարգ համեստութե յեղաշրջէ , վասնզի այնմ՝ որ մինչ գալոցն է , առնէ զպատկառանս , և մինչ եկեալ արդէն՝ զնախատինս ․ ուստի նման է այնոցիկ՝ որք ոստովք ձիթենեաց ելին ընդառաջ քի ․ այլ սակաւ մի յետոյ խաչեցին զնա ։

1. կոր. 11.27.

յոհ. 13. 30.

2. թագ. 13.28.

մատ. 21.8.

Ա

Իսկ թէ որպէս պարտ է մատչիլ առ հաղորդութիւնն․ կարեմք ուսանիլ 'ի յուտելոյն զգառն պասեքական ։ Քանզի ուտէին զնա հրեայքն ․ գօտի ընդ մէջ ․ կօշիկս՝ յոտս ․ ցուպ 'ի ձեռին ․ եղեգամբք հանդերձ ․ բաղարջով , և փութապէս ։ Առաջինն՝ նշանակէ մաքրութի ողջախոհութե , յորմէ ասէ ղուկաս , եղիցին երիկամունք ձեր գօտեորեալք ։ Երկրորդին՝ անարժումն ջերմեռանդութե , որպէս ասէ 'ի յերգս ․ որպէս , գեղեցիկ են 'ի գնացս կօշկաց դուստր իշխանի ։ Երրորդին՝ յիշատակ Տէառնական չարչարանաց ․ ուստի ասաց յակոբ 'ի ծննդոց ․ ցպով միով անցի ընդ այս յորդանան ։ Չորրորդին՝ դառնութիւն զղջման․ որպէս ասէ սաղմոսն՝ ջամբեցեր մեզ հաց արտասուաց, և արբուցեր , և այլն ։ Հինգերորդին՝ յօժարութի բարի կամաց՝ և գործոց ․ յորմէ ասէ յառակաց , տեսեր զայր փոյթ 'ի գործս իւր , առաջի թագաւորաց կացցէ ։

ելից. 12.11.

ղուկ. 12.35.

երգ. 7.1

ծննդ. 32.10.

սաղ. 79. 6.

առակ. 22.29.

Դարձեալ՝ թէ որպէս պարտին գոլ հաղորդեցեալքն՝ ցուցանի 'ի զգեստս քահանայականս ․ զի խնդրին այսոքիկ, այսինքն, ենթադասութի ընտրողութեանն ․ մաքրութե ողջախոհութե ․ սպանումն մարմնոյն ․ քաջութի արիութեանն ․ յարատեւութի երկայնմտութե ․ և կատարելութի սիրոյն ։ Առաջինն նշանակի 'ի խոյրն․ երկրորդն՝ 'ի շապիկն ․ երրորդն՝ 'ի գօտին․ չորրորդն՝ 'ի բազկուրանն որ դնի 'ի բազուկն որպէս զվահան ։ հինգերորդն՝ 'ի յուրարն ․ վեցերորդն՝ 'ի նափորտն ։

Դար_

Դարձեալ՝ ճաշակի մարմինն Քի՟ ծածկեալ պատահմամբք, վասն բազում պատճառաց: Նախ՝ վն՟ վարձուց բարի արանց. զի ըստ Գրիգորի՝ հաւատն ոչ ունի զվարձ, որոյ մարդկային առարկութիւնն առնէ զհաւաստումն: Երկրորդ՝ վասն անարժանութե՟ չարաց. ուստի բեթսամիւսացիքն հարան, զի տեսին
1. Թագ. 6. 2. զտապանակ տեառն: Երրորդ՝ վասն տկարութեան ամենեցուն. վասն զի ոչ կարեմք հայիլ 'ի պայծառութի՟
Ելից. 34. 30. փառաւորեալ մարմնոյն Քի՟, ըստ օրինակի Մովսիսի, որոյ յերեսն ոչ կարէին հայիլ որդիքն Իսրայէլի,
2. Կոր. 3. 13. վասն ճառագայթիցն: Չորրորդ՝ վասն խորշելոյ 'ի սարսռմանէ գաղանաբարոյութե՟, եթէ զմարմինն Քի՟ ատամամբք ծամէաք: Արդ՝ յաղագս երից պատճառաց ոչ լինի տուեալ աշխարհականաց խորհուրդս այս 'ի ներքոյ կրկին տեսակաց:

Առաջինն է՝ զի կարէին կարծել՝ թէ բոլոր Քն՟ ոչ է 'ի ներքոյ երկաքանչիւրոց տեսակաց: Երկրորդ՝ վասն վտանգի, զի դիւրաւ կարէ հեղուլ արիւնն Քի՟:
Օրին. 12. 27. Երրորդ՝ զի ճշմարտութիւն պատասխանեսցէ ստուերին, զի յորժամ՝ ընծայաբերէին ոչ լինէր առնուլն 'ի գինւոյ զոհիցն:

Յաղագս 'ի բաց կալոյ 'ի հաղորդութենէ:

Գլ. ՃԼ.

Արդ՝ 'ի բաց կան ոմանք 'ի հաղորդութենէն վասն յատուկ մեղաց իւրեանց. այլք առանց մահուչափ մեղաց, սակայն վասն պատկառանաց խորհրդոյն, որպէս որք գիտեն զինքեանս ոչ բաւական սբ՟ս մտօք, կամ մարմնով, կամ ոչ ջերմեռանդս. և այսպիսիքս բարւոք առնեն. բայց միայն զի արդարապէս, և առանց դայթակղութե՟ կարասցեն 'ի բաց կալ: Ուստի ուր ոչ պահանջէ հարկն, խրատ տալի է այնպիսեաց, 'ի բաց կալ 'ի հաղորդութե՟ մինչև կարասցեն մատչել պատրաստք, ջերմեռանդք, և մեծաւ զգուշութե՟: Սակայն ոչ ինչ հարկ պարտի բանադատել զոք մահուչափ մեղօք գիտութե՟ հաղորդիլ: Արդ՝ մեղքն առնէ զմարդն անարժան հաղորդութե՟ երեք կերպիւ. նախ՝ ունակութե՟, յորժամ ոք մատչի ոչ զղջացեալ, և ոչ խոստովանեալ

դան

զանցեալ մեղսն : Երկրորդ՝ ներգործութե̄ , որպէս յորժամ փոփոխէ ոք զձև խորհրդոյն , և առանց պատկառանաց ձեռնարկէ 'ի նա : Երրորդ՝ յառաջադրութե̄ . որպէս՝ յորժամ ոք 'ի միտ ունի զմեղանչելն : Դարձեալ՝ 'ի բաց մերժի ոք 'ի հաղորդութե̄ վասն պատկառանաց՝ եռակաբար : Նախ՝ վ̃ պատուոյ արտաքին խորհրդոյն . և ըստ այսմ՝ արտաքսէ , գիշերային հոսումն , և մարմնական պղծութիւնն :
Երկրորդ՝ վասն պատուոյ պարունակեալ իրին 'ի ներքոյ տեսակին , և ըստ այսմ՝ 'ի բաց մերժէ պակասութի̄ ընթագատութե̄ , ող̃ 'ի մանկունս , և 'ի մոռաթափսն : Երրորդ՝ վասն պատուոյ նշանակեալ իրին՝ որ է միութի̄ խորհրդաւոր մարմնոյն , և ըստ այսմ՝ 'ի բաց մերժէ կապ եկեղեցական արգելման , կամ բանադրութե̄ . նա և եթէ լիցէ անիրաւաբար տուեալ , արգելումն , և բանադրութիւն այն : Եւ ըստ այսմ՝ միայն վասն պատուոյ խորհրդոյն 'ի բաց մերժին բազումք 'ի հաղորդութե̄ թէպէտ և լիցեն առանց մեղաց: Եւ այս մանաւանդ յայտ է 'ի տղայս , որք սակայն եթէ լիցեն մերձ 'ի չափ հասեալ ուխ , այսինքն , 'ի տասն , կամ յերկոտասան ամս , և երևեսցի 'ի նոսա նշան անմեղութե̄, կամ պատուելոյ զխորհուրդս , կարեն հաղորդիլ , ապա թէ ոչ՝ ոչ հաղորդին :
Նոյնն յայտ է 'ի խելագարսն՝ որք 'ի բաց մերժին՝ թէպէտ ոչ ունին զմեղս . սակայն կարեն հաղորդիլ՝ յորժամ երբեմն ունիցին զխելս : Դարձեալ՝ յորժամ ոք ունիցի զձեռս աղտոտեալս , թէպէտ այս է առանց մեղաց , սակայն միայն վասն պատուոյ խորհրդոյն ոչ պարտի շօշափել զմարմինն քի̄: Երեք ազգ մարդկանց 'ի յօրէնս արգելեալ լինէին 'ի յուտելոյ զգառն , այսինքն , անթլփատք , որք նշանակեն զայնոսիկ , որք անպատկառաբար մատչին առ հաղորդութիւն . ուստի ընթերցեալ լինի 'ի գիրս թագաւորաց , թէ ոզիա հարեալ եղև , զի մերձեցաւ 'ի տապանակն Տ̃ն : 2.թագ. 6.7.
Նաև այլազգիքն , զի սոքա նշանակեն զանհաւատսն , ծննդ.
զորոց ասի 'ի ծննդոց , գազան չար եկուլ զորդի իմ: 37.33.
Այլ և անմ̃ք՝ որք նշանակեն զմահուչափ մեղաւորսն.
յայսցանեցս ասէ եսայի , սրբեցարուք որք բառնայք եսայ.
զսպաս Տ̃ն : Զերիցս այսցանէ ծանիր , զի անարժանաբար ճաշակէ , որ ոչ ճաշակէ պատկառաբար . կամ ոչ ճաշակէ ուղղափառապէս . և կամ ճաշակէ ունելով զմահացու մեղս գիտութե̄ : 52.11.

Դար-

Պարծեալ՝ գիտելի է, զի պատահին բազում չարեաց որք ոչ հաղորդին 'ի ժամանակի իւրում : Նախ՝ զի այնպիսին զրկի 'ի բազմաց բարութեց, զորս գրեալ է 'ի վերանդր՝ յաղագս ներգործութեց հաղորդութե : Զի եթէ ռահաբ փրկեցաւ վասն ընդունելոյն զլրտեսսն . ո՞րչափ ևս առաւել որ ընդունիցի զՔս : Երկրորդ՝ զի լինի առանձնանոց կացուցման եկեղեցւոյ . քանզի սահմանեաց եկեղեցի, եթէ որք ոչ հաղորդեսցի 'ի զատկի . 'ի կենդանութեանն արգելցի 'ի մտանելոյ յեկեղեցին, և 'ի մահուանն զրկեսցի յեկեղեցական թաղմանէն : Երրորդ՝ անկանի յանէծս, ըստ այնմ՝ վայ միոյն, եթէ անկանիցի, ո՞ յարուսցէ զնա : Այդ՝ խրատէ միայնէ՝ որ զՔս ոչ ունի : Ժող. 4. .01 Չորրորդ՝ զի ո՛չ հատուցանէ փոխարէն Տն, յորմէ առէ օգտակարն . ամօթ է ոչ լինել առայնջական այնմ, որ առնէ բանալ ամ բաղխողաց : Հինգերորդ՝ զի կորուսանէ զհոգևոր զօրութիւ . զի ամ որ է առանց մահուչափ մեղաց, է անդամ խորհրդաւոր մարմնոյ քն : Իսկ անդամն պարտի սնանիլ կերակրով Ճշմարիտ մարմնոյ քն, ապա թէ ոչ՝ գօսասցի, որպէս և անդամ մարմնոյն որ ոչ առնու զսնունդ մարմնաւոր կերակրոյն :

Յաղագս գերազանցութեան պատարագին :
Գլ. ԺԸ.

Զբազում գերազանցութի պատուոյ ունի պատարագն : Նախ՝ զի պատարագի 'ի նօթեաց : Երկրորդ՝ զի միայն յեկեղեցւոջ, և 'ի վերայ սբ սեղանոյն . մի թէ 'ի հարկաւոր ժամանակի լինիցի երբեմն 'ի ներքոյ վրանի . կամ 'ի յայլ համեստ տեղիս : Երրորդ՝ զի պէտս է պատարագողին լինիլ քահանայ : Չորրորդ՝ զի պարտ է նմա զգեստաւորիլ սբ զգեստիւք :

Հինգերորդ՝ զի միայն լինի 'ի տուէնջեան, և ո՛չ 'ի գիշերի . եթէ ոչ՝ 'ի գիշերի ծննդեան Տն :

Վեցերորդ՝ զի միշտ պարտ է պատարագել վառեալ լուսով, թէպէտ եկեղեցին լինիցի պայծառացեալ լուսով արեգական : Եօթներորդ՝ զի անդ բարբառին բանք ածայինք, հրեշտակայինք, և մարդկայինք.

Ածայինք յորժամ ընթերցեալ լինի հայր մերն , և աւետարանն ։ Հրեշտակայինք՝ յորժամ ընթերցեալ լինի , փառք 'ի բարձունս . և սբ̃ սբ̃ն ։ Իսկ մարդկայինք՝ որպէս խնդրուածք աղօթիցն ։

Ութերորդ՝ զի հանդիսացեալ լինի երիւք պատմականութիւնք լեզուօք, այսինքն , եբրայեցերէն . ոպ̃ սաբաւօթ , և ովսաննայն . և յունարէն , որպէս կիրելեիսոն , և օթեօսն . և լատիներէն՝ որպէս այլք ամ̃ք ասացեալք . քանզի երեքեան լեզուովքս այսոքիւք գրեաց պիղատոս զտախտակն , որ 'ի վերայ խաչին ։

Իններորդ՝ զի պատարագն ըստ իւրում եղանակին՝ այնքան լի է խորհրդովք , մինչ զի որպէս ծով̃ չթիւք ջուրց , արեգակն հիւղօք , հաստատութիւն աստեղօք, և հրեղէն երկինն հրեշտակօք սրբովք ։

Տասներորդ՝ զի քահանայքն 'ի հանդիսի յեկեղեցիս՝ ունին զբաղում սպասաւորս 'ի ժամանակի պատարագին , այսինքն , սարկաւագ , և կիսասարկաւագ , և դպիր ։ Մետասաներորդ , զի կան անդ բազմութիւնք հրեշտակաց առաջի այնպիսի մեծի Տ̃րութեանն ։

Երկոտասաներորդ , զի անդ է Տէրն երկնի , և երկրի ։

Արարողութի̃ պատարագին բարոյականապէս բացատրի այսպէս ։ Փամփուշտն՝ նշանակէ զսկսումն բարի գործոյն . իսկ զի կրկնեալ լինի , նշանակէ թէ 'ի սկսանելն մեր , պարտիմք խոտորիլ 'ի չարէն , և առնել զբարին ։ Իսկ Տ̃ր ողորմեայն՝ որ կրկնի ինն անգամ , նշանակէ զխնդրումն ողորմութեանն ա̃յ՝ որոյ կարօտանամք ինն կերպիւ . նախ ըստ թողութե̃ մեղաց . և ըստ այսմ կարօտանամք ողորմութեանն ա̃յ երիւք կերպիւք . զի մեղանչեմք երեք եղանակօք , այսինքն , սրտիւ , բերանով , և գործով . և կարօտիմք երից . այսինքն , զղջման , խոստովանութե̃ , և ապաշխարութե̃ ։ Երկրորդ՝ ըստ պարգեւի շնորհացն որում կարօտանամք զի պատճառեսցէ 'ի մեզ զունակութիւնն հաւատոյ , յուսոյ , և սիրոյ ։ Երրորդ՝ ըստ փառաւորութեանն . որով խնդասցուք 'ի վեր քան զմեզ՝ 'ի յա̃ծ . ներս 'ի մեզ՝ զմեզ . և մերձ 'ի մեզ՝ զընկերն ։ Իսկ փառք 'ի բարձունսն՝ նշանակէ զշնորհակալութիւն ։

Աղօթքն՝ զջերմեռանդութե̃ խնդրուածոյն ։

Ընթերցուածն , և աւետարանն՝ զպահպանութի̃ պատգամաց , և նորոյ օրինացն ։ Իսկ մեսեդին և ալէլուն՝ նշանակէ զկատարելութի̃ տեսական՝ և գործնական կենաց ։ Սրբասացութիւնն՝ նշանակէ զպատարագզղջացեալ հոգւոյն : Ծածուկն՝ զուրախութի̄ աստի կենաց : Իսկ փրէֆացիօն՝ զուրախութի̄ վերին գաւառին : Սբ̄ սբ̄ն՝ զցնծութի̄ հրեշտակաց, որք կան անդ : Կանոնն՝ զփոխարկելն անդամոցն ՚ի խորհրդական մարմինն Քի : Հայր մեր որ յերկինսն՝ զշնորհօք որդեգրութիւնն : Գառն այ̄, զազատութի̄ ա̄ծային ողորմութե̄ն, իսկ զի երեքնի գառն այ̄, զի ազատիցուք ՚ի չարեաց, այսինքն, յանցելոց, ՚ի ներկայից, և յապագայից : Եւ լռումն հաղորդելոյն, կամ հաղորդումն, նշանակէ զեզերումն բարի գործոց :

Իսկ ըստ այլոց որք են ՚ի պատարագն՝ ծանիր ըստ այլաբանութե̄ : Զի սբ̄ սեղանն՝ նշանակէ զխաչն . սկիհն՝ զգերեզմանն . մաղզմայն՝ զկափարիչ վէմ̄ . գօրբուրայն՝ զպաստառակալն, որով պատեցաւ մարմինն Քի : Եւ գիտելի է՝ զի թէպէտ ամ̄ պատարագ համապատիւ են բարիք ըստ գործեցեալ գործոյն . վասն զի յամենեսեանսն՝ է նոյն Քս̄ . բայց սակայն զանազանին ըստ գործոյ գործողին : Ուստի լաւագոյն է լսել զպատարագ բարի քահանայի՝ քան չարի . օր̄ ՚ի մարմնաւոր սեղանն զնոյն կերակուրն զհաճագոյն ընդունիմք ՚ի սբ̄ սպասաւորէն քան յանսրբոյն :

Դարձեալ՝ ծանիր, զի վտանգաւոր է թէ պատարագեսցէ վատատեան . կամ որ ունի զձեռս դողդոջեալս . կամ որ յանկարծակի զդեռնի . կամ խեշն . և կամ որ կարի ՚ոլդեւ լիցէ . ուստի այսպիսեացս հրամայելի է ՚ի բաց կալ ՚ի պատարագելոյ :

Դարձեալ՝ յորժամ ոք կրկին անգամ պատարագելոց լիցէ, ոչ պարտի ըմպել զլուացումն սկւոյն յառաջին պատարագն . ապա թէ ոչ՝ առ երկրորդ պատարագն՝ ոչ մնանէր նօթի :

Յաղագս հեղգութե̄ց, որք լինին ՚ի պատարագն :

ԳԼ: ԺԹ·

Եթէ վասն անփոյթութե̄ պատահեսցի՝ զի յետ ասելոյն զկանոնն՝ ոչ գտանիցի ՚ի սկւոջն գինի, և ջուր, առժամայն պարտ է դնել զերկոսեանն . և քահանայն կրկնեսցէ զօրհնութիւնն յայնմ տեղւոջէ, որ ասէ, ըստ նմին օրինակի յետ, և այլն : Եւ ասիցէ զբովանդակն մին_ մինչեւ 'ի վերջն · բայց այնպէս՝ զի մի՛ թողցէ զերկուանգամ խաչակնքելն՝ որ սովոր է լինիլ 'ի վերայ հացին ։ Եւ կամ կարէ լինիլ այլ ազդ · որ և լաւագոյն իսկ է · զի առցէ զայլ նշխար, և սկսանիցի զկանոնն 'ի սկզբէն ։ Իսկ թէ միայն գինւով, կամ միայն ջրով լինիցի օրհնութիւնն, միայն գինւովն՝ կատարի խորհուրդն · բայց սոսկ ջրովն՝ ոչ ։ Իսկ թէ յարեանէ Տն կաթեսցէ 'ի վերայ գօրբուրայլին, և կամ փալլային · և կամ 'ի վերայ շապկին, և նափորտին, տեղին այն հատցի, և պահեսցի ընդ նշխարս սրբոց · բայց յառաջագոյն ծծեսցեն, որքան կարասցեն, և ապա՝ լուասցեն · և զլուացուս ըմպեսցեն ։ Այլ թէ 'ի վերայ գետնոյ, կամ քարի, կամ փայտի՝ անկցի, պարտ է լիզել, սրբել, և քերել զտեղին․ և զփոշին պահել 'ի սբ տեղւոջ ։ Բայց թէ յարիւնն անկցի ճանճ, կամ սարդ, կամ այնպիսի ինչ որ հազիւ առանց փսխելոյ, և կամ երկիւղի մահու կարիցէ առնուլ · հանցեն 'ի սկհոյն և լուասցեն զգուշաբար 'ի սբ անօթոջ, և զլուացումն առցէ քահանայն · բայց զճանճն, և ըզսարդն այրեսցեն 'ի վերայ աւազանին որ մերձ ասբ սեղանն ։ Եւ թէ 'ի մարմնոյն Քի անկցի 'ի վերայ փալլային, կամ 'ի վերայ այլոց հանդերձից, ոչ հատցեն · այլ լուասցեն գինեաւ, և սպասաւորն ըմպիցէ ։ Եւ թէ հիւանդ ոք փսխեսցէ զՏէրունական մարմինն, ժողովեսցեն որքան հնար է, և պահեսցեն ընդ նշխարաց սրբոց · բայց լաւագոյն է՝ թէ ոք առնուցու զայն՝ եթէ հիւանդն վերստին ոչ կարէ առնուլ ։

Յաղագս խորհրդոյ ապաշխարութեն ։ Գլ․ Ի․

Ապաշխարութիւնն է ըստ Ամբրոսիոսի, զանցեալ չարն ողբալ, և զողբալին ոչ եւս գործել ։ Դարձեալ՝ գրիգոր ասէ՝ ապաշխարութիւն է զյառաջագոյն գործեցեալ մեղսն լալ, և զլալին ոչ գործել ։ Գիտելի է, զի սահմանք ոմանք տրին ըստ էութեան, որպէս՝ մարդն է կենդանի բանաւոր, Ոմանք ըստ պատճառին, որպէս տիւն է՝ արեգական լուսաւորելն 'ի վերայ երկրի ։ Իսկ սահման ապաշխարութեան առեալ աստ՝ է ըստ պատճառին, և ոչ ըստ էութեանն ։

Սակայն ապաշխարութիւնն սահմանի ըստ կրկին գործոյն. մինն նկատմամբ առ անցեալն, այսինքն, ողբալ զանցեալ չարիսն. և միւսն նկատմամբ առ ապառնին, այսինքն, զղջալն վերստին ոչ առնել մտօք, կամ գործովք: Արդ՝ առաջին գործն է՝ ըստ ներգործութե՟. երկրորդն դնելով 'ի մտի:

Ապաշխարութիւնն է կրկին. մինն 'ի ներքս միայն. և այս է ըստ բնական իրաւանց. և միւսն արտաքոյ՝ որ լինի յականջս խոստովանահօրն. և այս է ըստ ա՟ծային իրաւանց: Առաջինն ոչ է յատկապէս խորհուրդ. այլ երկրորդն է խորհուրդ: Քանզի ապաշխարութիւնն ինքեամբ առեալ՝ ոչ ասի յատկապէս խորհուրդ եկեղեցւոյ՝ մինչ այսպիսիս նա և կարէ լինիլ յառաջ քան զմկրտութիւնն. այլ ապաշխարութիւն եդեալ 'ի ձեռն սպասաւորաց եկեղեցւոյ՝ է խորհուրդ: Դարձեալ գիտելի է. զի ողբալ վասն մեղաց իւրոց՝ է՛ գործ ապաշխարութե՟ որ է առաքինութի՟ արդարութեան. այլ լալ վասն չարեաց այլոց, է այլոյ առաքինութե՟, այսինքն, ողորմութե՟. բայց լալ վասն բարեաց յաւիտենական կենաց՝ է գործ երրորդի երանութե՟, յորմէ ասի, երանի սգաւորաց: մատ. 5. 5

Իսկ վասն երկարութե՟ ապաշխարութե՟ գիտելի է. զի արտաքին ապաշխարութիւնն ոչ է պիտոյ զի լինիցի մշտնջենաւոր. այլ ըստ ներքնոյն զանազանելի է:

Զի այլ է ապաշխարութի՟ ներքնային ըստ ունակութե՟, և այս պարտի լինիլ մշտնջենաւոր. և այլ է ըստ ներգործութեանն, և այս ոչ է հարկ գոլ մշտնջենական: Քանզի պարտական է միշտ ներքին ունակական ապաշխարութեանն, որով կամեսցի թէ ոչ երբէք էր մեղուցեալ, և կամի յայնմհետէ այլ ոչ ևս մեղանչել. այլ արտաքին ապաշխարութեանն ոչ է միշտ պարտական: Դարձեալ՝ այլ է ցաւ բանականին, որ է գարշութի՟ մեղաց, և այլ զգայականին՝ որ է կիրք: Առաջին ցաւն միշտ պարտ է լինիլ 'ի յապաշխարութե՟ն. իսկ երկրորդն՝ ոչ է 'ի հարկաւորութե՟: Ա

Դարձեալ՝ թէպէտ մարդն ոչ երբէք է ստոյգ վասն թողութե՟ մեղաց իւրոց, սակայն վասն այսորիկ ոչ է հարկ արտաքին ապաշխարութե՟ լինիլ մշտնջենաւոր. զի ոչ պահանջի առ այսպիսին՝ ստուգութի՟ գիտութե՟. այլ բաւական է ստուգութի՟ հաւաստական կարծեաց. որպէս յորժամ արար մարդն հաւաստապէս որ ինչ է յիւրն կողմանէ. ցաւելով, խոստովանելով, առնելով Բ լով զփոխարէն, և զգուշանալով ։ Եւ մինչ 'ի յամ խորհուրդ նորոյ օրինացս՝ է նիւթ ինչ երևելի տարեր որ է նշան և պատճառ շնորհին, պիտոյ է նաև 'ի խորհուրդ ապաշխարութեան այնպէս լինել. այլ առեալ լինի աստ ընդարձակագոյն և զգալի նիւթն, փոխանակ ամ իրի, եթէ իրն այն իցէ արտաքին գոյացութիւն, և եթէ մարդկային ներգործութի. ուստի 'ի յապաշխարութեանն ըստ այնմ որ խորհուրդ, գոն իրք և բանք. Արդ՝ բանքն են 'ի խոստովանութենն, և 'ի յարձակմանն. իսկ իրն է մարդկային ներգործութի ։ Բայց առ 'ի իմանալ զայսոսիկ լիապէս՝ ծանիր, զի որպէս 'ի մարմնական բժշկութիւնս՝ ոմանք կայանան միայն 'ի կիրս հիւանդին, որպէս հատումն վիրին. իսկ ոմանք 'ի ներգործութեան նորին. որպէս է՝ կրթութիւն նորին ։ Նմանապէս և 'ի խորհուրդս՝ ոմանք կայանան 'ի կիրս սրբեցելոյն, և ոչ 'ի ներգործութիւնսն, եթէ ոչ պատահմամբ, որպէս մկրտութիւնն. դրոշմ. հաղորդութիւնն. վերջին օծումն. և կարգն ։ Իսկ ոմանք կայանան էականապէս 'ի ներգործութիւս այնմ որ սրբի. որպէս են այլք երկու խորհուրդքն, այսինքն, ապաշխարութիւն, և պսակն ։ Արդ՝ 'ի յառաջինսն՝ որք ներգործին առանց մերոյ ներգործութեան, խնդրի արտաքին նիւթ՝ որ նշանակէ զպատճառ և զիր խորհրդոյն. իսկ 'ի յայլսն՝ ներգործութի մեր՝ է փոխանակ զգալի նիւթոյ ։

Իսկ յասացելոցս յայտ է. զի 'ի յապաշխարութեանն, ոմն է խորհուրդ միայն. որպէս արտաքին գործ ապաշխարողին ։ Եւ ոմն՝ իր միայն, որպէս թողութի մեղաց. և է ինչ՝ որ է իր և խորհուրդ, որպէս՝ ներքին զղջումն ։

Յաղագս որակութեան ապաշխարութեան ։

ԳԼ. ԻԱ.

Ապաշխարութիւնն է բազմադիմի, ոմն է ճշմարիտ. ըստ օգոստինոսի, ճշմարիտ ապաշխարութիւնն է՝ ոչ առնել զզղջալիսն. և զարարեալն սգալ ։

Ոմն է սուտ ապաշխարութի. որպէս ասէ իզիդորոս, քամահօղ է և ոչ ապաշխարօղ. որ դեռևս առնէ՝ զորմէ ապաշ-

խարէ ։ Դարձեալ՝ ոմն է բռնադատեալ. զորմէ ասէ
սաղ. 31 սաղմոս, դարձայ 'ի թշուառութի իմ, զի հարան յիս
4. փուշք ։ Ոմն է անագան, զի ասէ օգոստինոս. եթէ
յայնժամ զղջանաս, յորժամ մեղանչել ոչ կարես,
մեղքն զքեզ թողին. և ոչ դու զմեղս ։

մատ. Ոմն է անօրէն. որպէս էր զղջումն յուդայի, որ զղջացեալ
27.3. դարձոյց զարծաթն ։ Ոմն է յուսահատեալ,
իմս. 5.3 որպէս ասի 'ի գիրս իմաստութե. առ նեղութե անձանց
իւրեանց՝ յոգւոց հանիցեն. և զղջացեալ ասասցեն ։ Ոմն է ոք, և արդիւնաւոր՝ յորմէ ասէ բեռնարդոս, ով բարեբախտ խոնարհութի ապաշխարողաց. ով բարի յոյս խոստովանողաց, թէ որպէս կարօղ ես հուպ ամենակարողին. և թէ որպէս դիւրա՛ յաղթես զանյաղթելին. թէ որպէս փութով զզարհուրելի դատաւորն դարձուցանես 'ի գթածագոյն
երեմ. հայր ։ Արդ՝ ապաշխարութիւնն պարտի լինել դառն
6.26. ուստի ասէ երեմիաս. սուգ միածնի արա՛ քեզ ։

Կամաւոր. զի ասէ օգոստինոս. ուրախութե պարտի առնել՝ որ հանդերձեալն է անմահանալ զոր ինչ առնէ մահկանացուն վասն յապաղելոյ զմահն ։

Կատարեալ. զի ասէ օգոստինոս. ոչ ո՛ք ապաշխարութի է անագան, եթէ իցէ ճշմարիտ ։

եկլես. Փութով, որպէս ասէ սիրաք. մի՛ յամեր դառնալ առ
5.8. Տր. և Ջերոնիմոս ասէ, զնաւակին խորեցելոյ 'ի ծովս, առաւել պարտիս խզել զպարանն, քան արձակել ։

Զօրաւոր, զի ասէ Ջերոնիմոս, թէպէտ ընկողմանիցի 'ի վերայ սեանց դրանց հայր, և թէպէտ զստինս, որով սնուցեալ էր զքեզ՝ ցուցանիցէ մայր. կոխեա՛ ոտիւքդ զհայր. կոխեա՛ ոտիւքդ զմայր. և թռուցեալ
երգ. 5.3 հաս առ դրօշակ խաչին ։ Յարամնացօղ. ըստ այնմ որ ասէ յերգսն լուացի զոտս իմ, զի արդ աղտեղացուցից ։ Ուստի հոգևոր յարութի որ է ապաշխարութին, պարտի լինել ընդ միշտ կենդանույն Քի, և ոչ ընդ ղազարու, որ մեռանելոց էր ։ Դարձեալ՝ իսկոյն պարտ է լինել ապաշխարութիւնն, և ոչ յապաղեալ՝ նախ՝ զի մի՛ դուցէ լինիցիմք անպտուղ. զի երկար համ-
եսայ. բերէ մեզ ած, ըստ այնմ որ ասէ եսայիաս. մնացի զի
5.2. բերցէ խաղող, և եբեր փուշ ։ Երկրորդ՝ զի կոչիմք
ծննդ. առ մեծամեծս. որպէս ասէ ծննդոց. ես եղէց վարձ-
15.1. քո մեծ յոյժ ։ Երրորդ՝ զի մի՛ 'ի յաւիտենական հար-
մատ. 25 սանեացն մնասցուք յարտաքս. որպէս յիմար կուսանքն.
10. որք յապաղեցին զինքեանս պատրաստել ։

Չորրորդ՝ զի մի՛ արգելեալ լիցուք 'ի թշնամեաց, որ- Ելից.
պէս որդիքն 'Իսրայէլի 'ի փարաւոնէ, զի մի՛ ելանիցեն 8.12.
յեգիպտոսէ ։ Հինգերորդ՝ զի առ 'ի թողուլ զմեզ
բռնադատոլիմք և պատժօք ․ ուստի գրիգորիոս ասէ ,
խռովելի է աշխարհս , նաև թէ յղփանայր յաջողմանէ․
այլ արդ՝ զի այնքան անյաջողութ՟բ բաղխէ զմեզ ․
և զայնքան թշնամութիւս կրկնապատկէ , զի՞նչ այլ
ինչ եթէ ոչ աղաղակէ զի մի՛ սիրիցի ։

Վեցերորդ՝ զի մի՛ խաբիցիմք փաղաքշութ՟բ ․ որպէս
հաւն սուլելով հաւորսին ․ և ձուկն խայծիւն որ 'ի
կարթն ․ և որպէս արջն՝ մեղրովն ։ Եօթներորդ՝ զի
մի՛ մեզ նախաժամանիցէ մահն, ուստի ասէ գրիգոր ․
ոչ ինչ ստուգագոյն քան զմահն ․ և ոչ ինչ անստու-
գագոյն քան զօր մահուն ։ Ութերորդ , զի մի սովո-
րութ՟բ ըմբռնիցիմք ․ քանզի ծառ՝ կարի իմն արմա-
տացեալ, ոչ դիւրաւ խլի , ուստի ասէ երեմիաս․ մի Երեմ.
թէ եթովպացին փոխիցէ զմորթ իւր ։ 13.23.

Դարձեալ առ 'ի գործել զապաշխարութիւն շարժեն
չորս ինչ՝ զորոց ասէ բեռնարդոս . կարի իմն է խս-
տասիրտ , զոր ոչ կակղացուցանեն բարերարութիւնք ․
ոչ զարհուրեցուցանեն , տանջանք․ ոչ քարշեն խոստ-
մունքն․ և ոչ խրատեն հարուածքն ։ Իսկ արգելմունք
ապաշխարութե են այսոքիկ ։ Առաջինն է՝ երկչոտու-
թիւն ձեռնարկելոյն ․ այսպիսիքս են որպէս զձի
ստուերախրտոյց որ երկնչի 'ի ստուերէ ։

Երկրորդ է՝ ամօթ խոստովանելոյն ․ այլ սակայն ըստ
օգոստինոսի , ամօթն է մեծ մասն ապաշխարութե ։

Երրորդն է՝ զարհուրութ՟ւ փոխարինին․ թէպէտ թեթ-
և, և առժամանակեայ իցէ նեղութիւն՝ ըստ առա-
քելոյն ։ Չորրորդն է հեշտութիւն մեղաց ․ և այն՝ զի 2. Կոր.
ժամանակաւոր է որ հեշտացուցանէ ․ յաւիտենական 4.17.
է որ տանջէ ։ Հինգերորդն է՝ յոյս երկար կենդանու-
թե․ և այն՝ զի տապար առ արմին ծառոց դնի ։

Վեցերորդ՝ յուսահատութի ընդունելոյ զշնորհս, ընդ- Մատ.
դէմ որոյ ասէ եզեկիէլ․ յորում պահու յոգւոց հանի- 3.10.
ցէ մեղաւորն , կեցցէ ։ Եօթներորդ՝ երկիւղ վերըս- Եզեկ.
տին անկանելոյն 'ի մեղս ․ ընդդէմ որոց ասէ օգոստի- 18.9.
նոս ․ յորժամ անկայ, կանգնեաց զիս ․ յորժամ կանգ-
նեցայ, ըմբռնեաց զիս ․ և յորժամ գնացի , տարաւ
զիս ։ Ութերորդ՝ օրինակ մեղանչելոյ ․ այլ յիմար է,
որ տեսանիցէ զոք անկեալ , և ոչ զգուշագոյն 'ի նոյն
տեղւոջ լինիցի ։ Իններորդ՝ սովորութի մեղանչելոյն

Թուոց. 22.28. որպէս բաղաամ, որ սովոր էր 'ի զարմանալիսն · վն ոչ հոգայր, յորժամ խօսէր էշն ։ Տասներորդ է՝ ապաստան լինիլն յողորմութիւն այ, այսինքն, իբր թէ
Ա կարիցէ ընդունել զայն՝ յորժամ զղջանայցէ · այլ այս է մեղանչել ընդդէմ ոգւոյն սրբոյ · ուստի ասէ գրիգոր · պարտիմք գոնեայ ամաչել յողորմութենէն այ, եթէ ոչ կամիմք երկնչիլ յարդարութենէ նր ։

Յաղագս ներգործութեան ապաշխարութեան ։ Գլ. ԻԲ.

Ապաշխարութեամբ արձակի մարդն 'ի մեղաց· դառնայ անդրէն առ եկեղեցի · հաշտի ընդ Քի· պարգեւօք փարթամանայ · յորդւոյ սատանայի, լինի որդի այ · բացեալ լինի նմա արքայութիւն ։ Սա է՝ որ ուրախացուցանէ զհրեշտակս · արդարացուցանէ զամբարիշտս · զկորուսեալ բարիսն անդրէն դարձուցանէ, զկեանս յաւիտենականս պարգեւէ · զյաւիտենական պատիժն 'ի բաց մերժէ ։
Դարձեալ՝ ապաշխարութիւնն է երկրորդ տախտակ յետ նաւաբեկութեան ; առ որ կարէ ապաւինել մեղաւորն, որ չուի է 'ի կեանս այս · յորժամ, եւ քանիցս անգամ կամիցի աղաչել զբարերարութիւն այ ։
Այլ արդ՝ կրկին է նաւաբեկութիւն, այսինքն, մեղաց սկզբնականի, եւ մեղաց ներգործականի · արդ՝ 'ի յառաջնոյն արձակիմք տախտակաւ մկրտութեան, որ էառ զզօրութիւն եւ զազդումն 'ի տախտակէ խաչին Քի· իսկ յերկրորդէն ազատիմք տախտակաւ ապաշխարութեան, զոր ածային անխախտութիւնն պատրաստեաց մարդոյն · զի վասն ներգործական մեղացն՝ ոչ կարէ դարձեալ մկրտիլ ։ Այս ծանիր՝ զի 'ի պարտաւորութենէ մեղացն ազատիմք շնորհօք · այլ 'ի հետեւմանց մեղացն, ապաշխարութեամբ եւ մասամբք նորին. իսկ 'ի թշուառութենէ, ազատիմք փառօք ։
Դարձեալ գիտելի է․ թէ մահացուցեալ գործքն որպէս
Ա կենդանանան · զի թէպէտ ճշմարիտ է՝ որ 'ի պակասութենէ առ ունակութիւնն ոչ գոյ անդրադարձումն 'ի բնական կեանս · սակայն ոչ է ճշմարիտ 'ի բարոյական կեանս · քանզի 'ի պակասութենէն առ կամաւոր ունակութիւնն է վերստին դարձումն, այսինքն, 'ի մահուանէ մեղաց՝ առ կեանս շնորհաց ։

Ուստի ասելի է ․ թէ որպէս ներգործական մեղքն անցանեն ըստ ներգործութեանն՝ և մնան ըստ պարտեաց, այդպէս բարի գործք անդրանցանեն ըստ ներգործութե, և մնան ըստ արդեանց ։

Այդ՝ ըստ որում մնան, ասին մեռանիլ ․ կամ կենդանանալ ։ Քանզի բարի գործքն՝ որ չափ միաւորեալք են ՚ի յարմամտ սիրոյն՝ ասին կենդանիք ․ և յորժամ անջատին յայնմանէ, ասին մեռեալք ․ բայց յորժամ վերստին դառնան, ասին կենդանանալ, զի վերադառնան առ որպիսութի սկզբան իւրեանց, այսինքն, սիրոյ ․ և զի զօրեն ըստ մեծագունի հիմնաւորութե սիրոյն ։

Յաղագս մասանց ապաշխարութե առ հասարակ ։

ԳԼ․ ԻԳ․

Երեք են ամբողջական մասունք ապաշխարութե, այսինքն, զղջումն, խոստովանութի ․ և փոխարէնն ։ Զի թէպէտ կատարումն մեղաց՝ կարէ լինիլ ներգործութբ բերանոյն միայն ․ կամ սրտին միայն ․ կամ սրտին, բերանոյն, և գործոյն՝ միանգամայն, սակայն առ ՚ի կատարելութի ապաշխարութեանն, պահանջի ամբաստանումն երից սոցա ․ թէպէտ առ սպառ գոլ ապաշխարութե, բաւական է զեղջն ներգործութբ ․ իսկ առ խոստովանութիւնն, և փոխարէնն՝ դնելով ՚ի մտի ։ Քանզի ոչ պահանջի յայնս որք ունին յաջորդական գոլն՝ զի ամբողջական մասունքն լինիցին համանգամայն ․ այլ այն պահանջի ՚ի բոլորն, որ ունի զմիացական գոլ ։ Եւ թէ իցեն երեք մասունք ապաշխարութե, ցուցանի ըստ այսմ օրինակի ։

Քանզի ապաշխարութիւնն է կամաւոր իմն դատաստան, ՚ի յոր զղջումն է իբր կոչումն իմն առ դատաստանն ․ ուր հետեւի առաջի դատաւորին կամաւոր խոստովանութի պարտաւորին ․ և անտուստ հետեւի եդեալ փոխարէնն ՚ի դատաւորէն ։ Բայց այսու զանազանի դատն աշխարհական ատենին, ՚ի հոգեւոր դատաստանէն, զի անդ որ խոստովանի, դատապարտի ․ իսկ աստ արձակի ։ Գոյ և այլ պատճառ բաւականութե մասանց ապաշխարութե ․ վասն զի

ամ մեղք լինի սրտիւ, բերանով, և գործով. Իրաւի է զի այսոքիկ բժշկին ներհակօքն, այսինքն, զի մեղաւորն զղջասցի սրտիւն ՚ի մեղաց. ամբաստանեսցէ բանիւ, և պատժեսցի գործով: Դարձեալ՝ մեղօք զայրացուցանէ մարդն զա՟ծ. գայթակղեցուցանէ զեկեղեցի, և վնասէ զինքն. այլ զղջմամբն հաշտի մարդն ընդ ա՟յ. խոստովանութե՟, ընդ եկեղեցւոյ. և փոխարինաւն՝ ընդ ինքեան: Դարձեալ՝ այս երեք մասունք ապաշխարութեանս են երեքօրեայ Ճանապարհն այն, որով երթեալ լինի յերկիրն աւետեաց.
ելից. 3. 18. յորմէ առէ ելիցն՝ երթիցուք զճանապարհ երից աւուրց: Դարձեալ՝ երեքին մասունքս այսոքիկ. կենդանացուցանեն բարոյականապէս զերիս մեռեալսն.
մատ. 9. 25. զորս յարոյց Տ՟ր. քանզի զղջմամբն յարուցանի աղջիկն ՚ի տան.
ղուկ. 7. 18. խոստովանութե՟, երիտասարդն ՚ի դրան. և փոխարինաւն՝ ղազարոս ՚ի գերեզմանէն:
յով. 11. 44.

Յաղագս զղջման: ԳԼ. ԽԴ.

Զղջումն է ցաւ, կամաւորապէս առեալ վասն մեղաց, ունելով ՚ի միտ զխոստովանելն, և զփոխարէնն: Սահմանս այս է վարդապետական. և դնի անդ ցաւն, փոխանակ սեռի. իսկ կամաւորապէս առեալ՝ դնի առ ՚ի զանազանութի բնական ցաւոց, որ ոչ է արդիւնաւոր, վս զի ոչ է ՚ի սեռէ բարոյականի. այլ կամքն միայն դնի ՚ի սեռի բարոյականի: Վասն մեղացն՝ դնի յաղագս նիւթոյ ցաւոյն, առ ՚ի զանազանութ՟ ցաւոյ նախանձուն որ է վասն այլոց բարեաց: Արդ՝ այսպէս սահմանի զղջումն, ըստ այնմ որ է գործ առաքինութե՟. այլ ըստ այնմ որ է մասն խորհրդոյ ապաշխարութե՟, պիտոյ է յաւելուլ զմի վս բաղդատութե՟ առ այլս մասունս. և վասն այսորիկ դնի՝ ունելով ՚ի միտ զխոստովանելն և զփոխարէնն: Եւ դիտելի է զի ասի խստասիրտ, յորժամ ոչ տայ տեղի ա՟ծային պատուիրանն մերձ եղելոյ նմա՝ այլ ընդդիմանայ յամելովն՝ և ունելովն ՚ի միտ զմեղանչելն: Իսկ բեկնիլ ասի, յորժամ յետս դառնայ ՚ի մեղանչելոյ կամացն. Թէպէտ տակաւին ոչ դառնայ բոլորովին: Այլ խորտակիլ ասի յորժամ կամքն կատարելապէս յետս վազէ ՚ի

յախորժակաց, և ՚ի գործոց մեղաց ։ Եւ ծանիր՝ զի կրկին է ցաւն ՚ի զղջումն . մինն է կամաց, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ տրտմութիւն մեղաց . և միւսն է զգայականին ։ Արդ՝ առաջինն է ՚ի յէութեան զղջման . և ՚ի ցաւոյս այս խնդրեալ լինի այն՝ զոր ասէ Երեմիա. սուգ Երեմ.
միածնի արա քեզ . քանզի մարդն՝ ըստ բանականին 6.26.
պարտի առաւել կամիլ զոչ մեղանչելն երբէք, քան զայրին միածնին իւրոյ ։ Իսկ երկրորդ ցաւն՝ ոչ պահանջի զհարկաւորութեան զղջման, այլ զկատարելութեան նորին . զի այսպիսի ցաւս՝ ոչ է ընդ մերով իշխանութեամբ ։ Եւ գիտելի է, զի զղջումն այնքան կարէ տարածիլ, մինչ զի ոչ միայն մեղքն, այլ և պատիժն թողցի, և այս կարէ լինիլ կրկնակի ։

Միով կերպիւ ՚ի կողմանէ սիրոյն այ՟, որ պատճառէ զտրտմութիւն մեղաց . զի երբեմն այնքան կարէ բորբոքիլ սէրն ներգործութեամբ, մինչ զի հետևեալ զղջումն անտի՝ արժանացի թողութեան ամ՟ պատժոց . որպէս ՚ի մագդաղենացին ։ Այլով կերպիւ եղանի ՚ի Ղուկ.
կողմանէ զգալի ցաւոյ զոր կամքն զարթուցանէ ՚ի 7.41.
զղջմանն . և զի ցաւն այն է պատիժ իմն, որ կարէ այնքան ներտարածիլ՝ մինչ զի բաւականասցի առ ՚ի ջնջումն մեղաց, և պատժոյն ։ Արդ՝ զանազանութիւն է ՚ի մէջ բեկման, և խորտակման, որպէս ՚ի մէջ անտեսակի, և տեսակաւորի . որպէս ասի զանտեսակէ և զտեսակաւոր է հաւասարոյ ։ Իսկ թէ բեկումն լինիցի խորտակումն, զանազանելի է . զի խորտակումն ասի շնորհօքն այ՟ քարշումն, և այս կարէ լինիլ կրկին կերպիւ ։ Նախ՝ ընկերակցութեամբ, զի շնորհն ընկերակցի շարժման որ կայ ՚ի հոգին, և տեսակաւորէ զնա. թէպէտ և ոչ պատճառէ զնա ։ Երկրորդ կերպիւ, պատճառաւ, այնպէս՝ մինչ զի շարժումն պատճառեսցի ՚ի շնորհաց ։ Առաջին կերպիւն՝ բեկումն լինի խորտակումն . զի պարզ ներգործութիւնն այն մնալով ՚ի հոգին տեսակաւորի ՚ի վերայ եկելոյ շնորհացն՝ որպէս գոյն ՚ի գալ լուսոյն ։ Երկրորդ եղանակաւն՝ անկարելի է զի բեկումն լիցի խորտակումն ։ Եւ թէ խնդրեսցի, արդեօք որքան ժամանակս պարտի ցաւիլ ոք վասն մեղաց, ասելի է, որպէս ասէ օգոստինոս, թէ յորժամ արձակէ ած՟ զմարդն ՚ի կապանաց մեղաց, կապէ զնա մշտնջենաւոր կապով գարշութեան ։

Այլ մշտնջենաւոր գարշութիւն մեղացն է կրկին . ամ՟ ունակութեամբ, ասոր միշտ պարտական է մարդն . նա և յետ կատարեալ թողութեան մեղացն . զորմէ ասէ օգոստինոս , խօսելով զապաշխարողէն , թէ ապաշխարողն միշտ ցաւեսցի , և 'ի ցաւոյն խնդասցէ . և վասն ոչ միշտ ցաւելոյն՝ ցաւեսցի ։ Է և այլ պարզումն՝ ներգործութեամբ , և առայս ոչ է միշտ մարդն պարտական ։

Եւ ծանիր , զի երանեալքն՝ և դատապարտեալքն, և որք 'ի քաւարանն , ոչ ունին զզղջումն յատկապէս . որոյ պատճառն է . զի 'ի զղջմանն՝ յատկապէս առեալ են երեք , այսինքն , շնորհ . ցաւ . և արդիւնաւոր ներգործութիւն ապաշխարողին . իսկ յերանեալսն ոչ գոյ ցաւ , և 'ի դատապարտեալսն՝ ոչ գոյ շնորհ . և 'ի յայնս որք են 'ի քաւարանն ոչ են արդիւնաւոր ներգործութիւնք ։

Յաղագս խոստովանութեան ։ Գլ. ԽԵ.

Խոստովանութիւնն է՝ որպէս ասէ օգոստինոս , որով թագուցեալ հիւանդութիւնն յայտնի , յուսով թողութեան ։

Աստանօր բաւականապէս ենթադրի խորհրդական խոստովանութիւնն , որ է մասն ապաշխարութեան , ըստ նիւթոյ որ է մեղքն , և ըստ գործոյն՝ որ է յայտնելն , և ըստ վախճանին՝ որ է յոյս թողութեան ։

Իսկ խոստովանութիւնն է երկակի . մին է մտաւորական , որ լինի Աստուծոյ . և այս է ըստ բնական իրաւանց . և մին է ձայնական , որ լինի մարդոյ . և այս ոչ է ըստ բնական իրաւանց , այլ աւետարանական ։

Արդ՝ նախքան զմարմնանալն Քրիստոսի, բաւական էր մտաւորական խոստովանութիւնն , զի դեռևս Աստուած ոչ էր լեալ մարդ . իսկ յետ որոյ եղև մարդ , պարտի լինել խոստովանութիւնն մարդոյ՝ փոխանորդին Քրիստոսի ։

Քանզի այնու , որ Քրիստոս սպասաւորացն խորհրդոց ետ զիշխանութիւն կապելոյ և արձակելոյ , եցոյց թէ խոստովանութիւն նոցա պարտ է լինել իբր դատաւորաց ։

Ապա ուրեմն Քրիստոս կացոյց զխոստովանութիւն լռելեայն. այլ յառաքելոցն յայտնեցաւ , և հռչակեցաւ . որպէս ասէ յակոբոս . խոստովան լերուք միմեանց զմեղս ձեր ։ յակ. 5. 16.

Արդ՝ թէպէտ 'ի զղջումն թողեալ լինի մեղքն , սակայն ձայնական խոստովանութիւնն է հարկաւոր . կամ ներգործութեամբ , յորժամ ունի զդիպուկ ժամանակ . և կամ

դնե-

Ա

դնելով 'ի մտի , յորժամ ոչ կարէ . և այս թարց արհամարհման կրօնի . և հարկաւորութիւն խոստովանութեան այս՝ յետ ճշմարիտ զղջմանն , 'ի յայնպիսի դիպւածս ոչ է վասն հարկաւորութեան հնարին . վասն զի մեղքն արդէն իսկ թողեալ է 'ի զղջանալն , այլ վասն հարկաւորութեան հրամանին ։ Քանզի խոստովանութիւնն , և փոխարէնն՝ հարկաւոր է , ոչ միայն վասն հաշտութեան 'ի դատաստանին այ՟ , այլ նաև 'ի դատաստանին եկեղեցւոյ ։ Բայց արդ՝ զպարագայից մեղաց՝ զոր պարտիմք խոստովանիլ , գիտելի է , զի պարագայք ոմանք քարշեն առ այլ սեռս մեղաց , որպէս՝ ննջելն ընդ առնակնոջ , և զայս պարտի խոստովանիլ մարդն ։ Իսկ ոմանք են՝ որք ծանրացուցանեն զմեղս 'ի նոյն տեսակի . և յայսցանէ ոմանք են , որք կարի յոյժ ծանրացուցանեն , որպէս թէ ոք ընդ առնուլն զօտարին , արասցէ նմա զմեծ վնաս ։

Եւ զայսպիսիս պարտէ խոստովանիլ . քանզի ոչ է բաւական այնմ որ էառ յօտարէն զհարիւր դահեկան , ասել թէ առի զօտար ինչ , մինչ այս լինէր ճշմարիտ թէ և առեալ իցէ զմի դենար ։ Եւ ոմանք են, որք ոչ կարի յոյժ ծանրացուցանեն , որպէս գիտութիւն , և այնպիսիք . և զայսոսիկ ոչ է պարտական ոք խոստովանիլ զի են իբրու ներելիք ։ Եւ ծանիր՝ զի պարագայքն որք ծանրացուցանեն զմեղսն, են հնգետասան, այսինքն , կարգն , տեղին , յամելն , պատճառն . գիտութիւնն . ժամանակն , սակաւ փորձութիւն, ուխտն. տեսակ մեղացն , աստիճան պատւոյն . թիւն . տիքն , դայթակղութիւնն , սերքն , եղանակն ։

Դարձեալ ծանիր՝ զի թէ մեղք ուրուք լինիցի յայտնի քահանային , սակայն պարտի խոստովանիլ զայն , զի ոչ է նմա յայտնի , որպէս դատաւորի ։ Իսկ թէ որքան ժամանակս կարէ ոք յապաղել զխոստովանութիւնն , երկու են կարծիք . քանզի ոմանք ասեն թէ՝ մեղաւորն պարտի խոստովանիլ առժամայն , յորժամ ունի զդիպօղ ժամանակ ։ Եւ այլք ասեն թէ՝ վասն զի խոստովանութիւն է 'ի ստորասական հրամանայն՝ ոչ առնէ պարտական , եթէ ոչ ըստ տեղւոյն , և ըստ ժամանակին . և կարծիքս այս է հաստատագոյն ։

Իսկ եկեղեցին սահմանեաց, զի խոստովանեսցի մարդն՝ դոնեայ մի անգամ 'ի տարւոջն , և իւրաքանչիւր չափահասակ հաղորդեսցի 'ի հարկաւորութեան . սակայն վասն չորից պատճառաց, պարտական է ոք խոստովա-

նիլ յառաջ քան զսահմանեալ ժամանակս եկեղեցւոյ :
Նախ՝ վասն պատճառի խորհրդոյն, այսինքն, յորժամ
կամիցի ոք հաղորդիլ, կամ պատարագել : Երկրորդ՝
վասն պատճառի վնասուցն . այսինքն, թէ իցէ երկիւղ
մահու : Երրորդ՝ վասն պատճառի խղճի մտացն ,
այսինքն , թէ նեղեսցէ զնա խիղճ մտաց իւրոց խոստովանիլ
առ ժամայն : Չորրորդ՝ վասն կարծեաց՝ թէ
ոչ ակն ունիցի ունել զխոստովանահայր յայնմ տարւոջ,
զոր յայժմ ունի, և կամ թէ ունիցի զմեղ ինչ յորմէ
միայն պապն կարէ արձակել, և այժմ ունի պատրաստ
զխոստովանահայր կացուցեալ ՚ի պապէն :

Իսկ թէ խնդրեսցի օգ՞ուտ է խոստովանութեն այնորիկ
որ է ՚ի մահուչափ մեղս . ասելի է, թէ խոստովանութիւն
է՛ հնար, և է՛ հրաման . ըստ այնմ որ է հնար՝
Բ ոչ է օգուտ , որ քան է ՚ի մեղս մահացուս . սակայն
պատուի ՚ի հրամանացն . որ՟ կեղծաւորաբար մկրտեցեալն,
թէպէտ ընդունի զխորհուրդ , բայց ոչ զիր
խորհրդոյն : Դարձեալ՝ արդեօք զխոստովանութիւն
կրկնելի է . ասելի է , թէ զխոստովանեալն միանգամ
բարի հաւատով՝ ոչ է պարտ կրկնել , եթէ ոչ վասն
չորից պատճառաց . որոց երկուքն են ՚ի կողմանէ
խոստովանահօր, և երկուքն ՚ի կողմանէ խոստովանորդւոյն
: Առ՝ առաջինն է՝ եթէ խոստովանահայրն ոչ
ունիցի զբանալի իշխանութե՟ , ՚ի մեղաց այնպիսեաց
արձակելոյ : Երկրորդ՝ եթէ ոչ ունիցի զբանալի գիտութե՟
, այսինքն , որ ոչ գիտիցէ ընտրել ՚ի մէջ գողութե՟
, և ոչ գողութե՟ : Երրորդ է՝ եթէ խոստովանօղն
կիսատեաց զխոստովանութիւնն , քանզի պիտոյ
է զբոլորն խոստովանիլ միում , զոր ինչ ունիցի
Գ ՚ի միտի : Իսկ եթէ ոմանք մեղք մոռանեցեալք եղեն ,
վասն այսորիկ ոչ է համարելի զխոստովանութիւն կիսատեցեալ
: Չորրորդ՝ թէ խոտեաց կամ անփոյթ
արար , և մոռացաւ զփոխարէնն . քանզի թէ գիտէ .
և կամիցի կատարել՝ ոչ է հարկ կրկնել զխոստովանութիւնն
: Իսկ թէ ոք անկանիցի ՚ի մեղս , յետ որոյ խոստովանեցաւ
բարի հաւատով , խնդրի թէ՝ արդեօք
պարտի կրկնել զնախկին արարեալ խոստովանութիւն.
ոմանք ասեն այո , այլ հասարակագոյն կարծիքս է, թէ
ոչ է պարտական կրկնել յատկապէս , այլ ընդհանրականապէս
: Եւ ծանիր՝ զի խոստովանութիւնն արարեալ
պատգամաւորօք , կամ նամակաւ , թէպէտ է
բարի գործ և արդիւնաւոր , սակայն ըստ այնմ որ է՛

մասն խորհրդոյս՝ ոչ կարէ լինել այսպէս • զի խորհուրդն ունի զբացայայտեալ իմն նիւթ , այսինքն , զձայնական խոստովանութիւն զմեղուցելոյն , որով խիղճ միայն մարդոյն աւելորդ է յայտնել , ուստի առանց հարկի իմն ոչ է պարտ խոստովանել բաց այլ կերպի • իսկ 'ի հարկաւորութեանն , կարէ լնանել պակասութիւնն հանդէտ գործով։

Յաղագս որակութեան , և գործոյ խոստովանութեան։

ԳԼ. ԻԶ։

Որակութիւն խոստովանութեանն է , զի լինիցի պարզ • խոնարհ • մաքուր • հաւատարիմ • ճշմարիտ • յաճախ • մերկապարանոց • խոհեմ • կամաւոր • ամօթխած , ամբողջ • 'ի ծածուկ • արտասուալից • փութով • արի • և ամբաստանող ինքեան • և լինիցի պատրաստ առ 'ի հնազանդել ։ Արդ՝ խոստովանութիւն է օգուտ 'ի բազում իրս ։ Քանզի ազատէ 'ի մահուանէ • զի որպէս որ խոստովանի 'ի մեղսական առնելն՝ դատապարտի , այնպէս՝ 'ի հոգևոր առնելն ազատի ։ Զած յայտնէ մարդոյն • զի ասէ օգոստինոս • եթէ ոչ կամիցիմ խոստովանիլ , ոչ կարեմ ծածկել զիս 'ի քէն՝ այլ զքեզ յինէն ։ Զվէրս միայն բժշկէ • ուստի ասէ Ջերոնիմոս • խոցուած ոչ իմացեալ , յամի բժշկի ։
Զարքայութիւն բանայ • զի ասէ օգոստինոս • ով բան
հակիրճ , մեղայ , որ բանայ զդուռն արքայութեան • ղուկ.
ըստ օրինակի աջակողմեան աւազակին ։ 23.43.
Ծածկէ զմեղս • ուստի ասէ օգոստինոս • եթէ մարդն
բանայ զմեղս , ած ծածկէ ։ Զողորմութիւն այ կակ-
ղացուցանէ • զի 'ի վերայ սաղմոսին՝ որ ասէ զմեղս իմ սաղ.
ցուցից քեզ Տր • ասէ մեկնիչն ,, եթէ մարդն ճանա- 31.5.
չէ՝ ած թողու ։ Զհոգին զուարճացուցանէ , որպէս սաղ. 41.
ասէ սաղմոս • 'ի ձայն ցնծութեան խոստովան եղէց 5.
քեզ Տր ։ Զբարեխօսս բազմացուցանէ • քանզի քահա- եբր. 7.
նայք աղօթեն վասն իւրեանց խոստովանորդեացն ։ 27.
Զխիղճ միայն սրբէ • զի ասէ օգոստինոս • խոստովանելով լինի մարդն 'ի տգեղէն գեղեցիկ ։
Զդաշն սատանայի քակէ • որպէս յորժամ ոք յայտնէ զծածուկս ուրուք ։ Զմարդն ընդ այ միաւորէ • զի

ասէ օգոստինոս առ ա̃ծ · զինչ մերձաւորագոյն քեզ քան զսիրտ խոստովանողին · և կեանք որ է ըստ հաւատոյ ։ Ուղղէ 'ի ճանապարհս փրկութե̃ · զի ասի յառակաց · որ թագուցանէ զմեղս իւր, ոչ յաջողեսցի նմա ։ Ջնջէ զմեղս · որպէս ասէ սաղմոս· ասացի թէ պատմեցից ինձէն զմեղս · և այլն ։
Լնու զպակաս փոխարինէն · զի ասէ մեկնիչն 'ի վերայ մատթէոսի · հրամայիմք խոստովանիլ զմեղս մեր զի զամօթն կրեսցուք փոխանակ պատժոյն ։
Զգուշանայ 'ի չարեն · ըստ օրինակի փտեալ ատամանց, որք արտաքս խլին, զի մի՛ և այլք ապականեսցին ։

Յաղագս թէ որու՞մ պարտ իցէ խոստովանիլ ։
Գլ. ԻԵ.

Ընդհանրական կայցի, զի խոստովանութիւնն պարտի լինիլ քահանայի, ունողի զբանալիս · որք են գիտութի̃ ճանաչելոյ և ընտրելոյ, և իշխանութիւն կապելոյ և արձակելոյ ։ Այլ գիտելի է՝ զի որպէս մկրտութիւնն է խորհուրդ հարկաւորութե̃, նոյնպէս և ապաշխարութիւն ։ Ուստի որպէս մկրտութիւն ունի զկրկին պաշտաւորս · մին, որոյ յարմարի մկրտելն ըստ գործաւորութե̃, որպէս՝ քահանային · և միւսն որոյ յանձնեալ լինի անուանութե̃ մկրտութե̃ պատճառաւ հարկաւորութե̃ · այսպէս, և պաշտաւորն խոստովանութեան է կրկին · մին է՝ որոյ լինի խոստովանութիւն ըստ գործաւորութեան՝ որպէս է քահանայն ։
Իսկ միւսն է՝ որ միայն յաւելումն զխոստովանութիւն կարէ լսել զտեղի քահանային 'ի հարկաւոր ժամանակի, Ա որպէս է աշխարհականն ։ Սակայն ոմանք ասեն թէ՝ յորժամ ո՛չ իցէ քահանայ, ո՛չ է պարտ խոստովանիլ աշխարհականին՝ այլ միայն ա̃յ ։ Եւ արդ՝ թէպէտ ա̃մ քահանայ ունիցի զբանալիսն, սակայն ո՛չ ամենեքեանք կարեն կապել և արձակել · որպէս են՝ բանադրեցեալքն, արգելեալքն, և դատապարտեալ հերետիկոսքն ։ Եւ այս ո՛չ է վասն պակասութե̃ կարգին, այլ զի ո՛չ ունին զնիւթ, այս է զհնազանդեալս, որք բառնին 'ի նոցանէ՝ յորժամ բանադրին ։

Բայց սակայն այսպիսիքն կարեն մերժել՝ զի այս է խորհուրդ հարկաւորութեան, և թէ պատարագեսցեն, կատարի խորհուրդն ․ զի այս գոյացաբար յարի կարգին ․ իսկ կապել և արձակելն յարենայ կարգին պատահօրէն ։ Նաև ասելի է թէ ոչ ոք կարէ արձակել զխոստովանողն, եթէ ոչ յատուկ քահանայն իւր ․ այլ յատուկ քահանայն ասի ըստ վեց եղանակի ։ Նախ՝ ինքն հովիւն եկեղեցւոյ. երկրորդ՝ փոխանորդ նորին ․ երրորդ՝ որոց շրջաբերականաւ լիցի շնորհեալ, որպէս են կարգ քարոզողաց, և միաօնարաց ․ չորրորդ՝ որոյ տացցէ հրաման յատուկ քահանայն ․ սակայն ո՛չ է պարտ տալ, եթէ ոչ իցէ քահանայն խոհեմ, համեստ, և ծանօթ ․ հինգերորդ՝ վասն հարկաւորութեան ․ զի յորժամ մերձ իցէ ուրուք վտանգ մահու, իւրաքանչիւրոք քահանայ կարէ արձակել զնա ։ Եւ օտար ճանապարհորդք, և ուխտաւորք՝ կարեն արձակիլ յայնց՝ որոց են մերձ ։

Վեցերորդ՝ վասն պակասութեան քահանայի իւրոյ ․ այս է, թէ իցէ տգէտ ․ կամ յայտնող խոստովանութե՟ ․ կամ սովոր իցէ զխոստովանողն ինքեան քարշել առ մեղս ։ Քանզի յայնժամ եթէ ոչ գտանիցէ զայլք քահանայ որ ունիցի զիշխանութի՟, եղիցի նմա յատուկ քահանայ, ո՛չ ո՟ և իցէ, այլ խոհեմ ոք, որ իցէ ծանօթ, ըստ կարգին, և ըստ անձին ։

Յաղագս ծածկելոյ զխոստովանութի՟ ։

ԳԼ. ԻԲ.

Որ ինչ լինին 'ի խորհուրդս արտաքոյ՝ են նշանք իրացն որք լինին 'ի ներքոյ. և զի խոստովանութիւնն, որով հնազանդի ոք քահանային՝ է՛ նշան ներքին, որով հնազանդի ոք այ՟ ։ Իսկ զմեղս այնպիսւոյն ծածկէ ա՟ծ, որ ստորադրէ զինքն այ՟ 'ի ձեռն ապաշխարութե՟ ․ վասն այսորիկ, պարտ է՝ 'ի հարկաւորութենէ խորհրդոյն՝ զի և քահանայն ծածկեսցէ զխոստովանութիւնն ։ Են և այլք օգտութիւնք այսմ ծածկութեանս ․ զի այսու մարդիկք առաւել քարշին 'ի խոստովանութի՟, և պարզագոյն խոստովանին զմեղս իւրեանց ։ Նաև՝ քահանայն ո՛չ միայն պարտի ծածկել զմեղսն՝ զոր լուաւ 'ի խոստո-

Ա

վանութեան . այլ և զայն ամենայն , որով կարէ յայտնել մեղաւորն , կամ մեղքն . այլ կարէ խոստովանօղն առնել զի զոր ինչ քահանայն գիտէր խոստովանութեամբ որպէս զԱստուած , լինիցի այնմ գիտակ որպէս մարդ . և զայս առնէ , յորժամ տայ նմա հրաման ասելոյ . և ըստ այսմ՝ ոչ լինի յայտնիչ խոստովանութեան :

Իսկ թէ խնդրեսցի . արդեօք զայն զոր գիտէ քահանայն ՚ի ձեռն խոստովանութեան , և թէ գիտիցէ և այլ կերպիւ , կարիցէ՞ յայտնել . ՚ի վերայ այսորիկ զանազանք են կարծիք . այլ այս է ճշմարտագոյն , զի քահանայն թէ գիտէր զմեղքն զայն ճշմարտապէս , թէ յառաջ քան զխոստովանութիւնն , և թէ յետոյ , ոչ է պարտական ծածկել , ըստ այնմ որ գիտէ իբրև զմարդ . սակայն զգուշասցի ՚ի գայթակղութենէ :

Եւ ծանիր . զի կերպ ասելոյս՝ ասեմ քեզ զայս խոստովանութեամբ , ոչ փակէ ՚ի ներքոյ կնքոյ խոստովանութեան . զի ոչ պահի անդ ձև խոստովանութեան , կամ կարգ .

Յաղագս փոխարինին : Գլ. ԻԹ.

Որպէս ՚ի պատերազմունս՝ յետ առնելոյն զհաշտութիւն , ոչ առժամայն թողեալ լինին պարտք արարեալ վնասուն . այնպէս՝ յետ թողութեան մեղացն զղջմամբ և խոստովանութեամբ , մնայ փոխարինական պարտք պատժոյն : Արդ՝ դնէ զհիմն խոստովանահայրն ՚ի վերայ խոստովանորդւոց , առ ՚ի հիմն փոխարինին . որպէս՝ ՚ի բաց կալն անդրէն ՚ի մեղացն . և անդրէն հաստուցանել զգրկանքն :

Եւ դնէ ինչ առ ՚ի յօգուտ փոխարինին . որպէս է ՚ի բաց կալն յընկերակցութենէ չարաց : Եւ հրամայէ ինչ , առ գոյացութիւն փոխարինին . որպէս է հսկելն . պահելն . առնելն զողորմութիւն , և այլ ինչ պատժական գործ : Եւ դնէ զոմանս՝ առ ՚ի կատարելութիւն , և անհոգութիւն փոխարինին . որպէս են գերազանցական բարեգործութիւնքն : Արդ՝ փոխարէնն պարտի պատասխանել մեղացն ՚ի յերիս իրս . ըստ թուոյն ,
սաղ. 6. 7. որպէս ասէ սաղմոս . լուացի զամենայն գիշեր զմահիճս իմ : Ըստ կշռոյն . ուստի ասէ օգոստինոս , յօժարութեամբ պարտ է առնել , որ հանդերձեալն է անմահանալ .

զոր ինչ առնէ մահկանացուն վասն յապաղելոյն զմահ ։ Ըստ չափոյն . ուստի առէ գրիգոր՝ այնքան ժամանակս պարտի լինել պատիժն 'ի յապաշխարութեանն որ քան հեշտութիւն եկաց 'ի մեղս ։ Եւ երբեմն այսպիսի խնդրին 'ի յապաշխարութեն՝ ըստ պատշաճաւորութեանն , և ոչ ըստ հարկաւորութեն ։

Յաղագս մասանց փոխարինելոյն առ հասարակ ։

ԳԼ. Լ.

Փոխարինականք՝ են ոմանք նախնականք մասունք , այսինքն , պահքն . աղօթքն , ողորմութիւն ։ Իսկ ոմանք երկրորդականք՝ որք և վերածին առ այսոսիկ . որպէս է՝ հսկելն , երթալն 'ի յուխտ , և գանել զինքն ։ Արդ՝ ասելի է , թէ ա՟մ գործք որք կշտամբեն զմարմինն , վերածին առ պահքն . և ա՟մ հոգևորք առ յաղօթքն . և ա՟մ գործ գթութե , առ ողորմութիւն ։

Իսկ բաւականութիւն նախնական մասանցն առաւել լինի 'ի կողմանէ կապարին՝ յորմէ է շարժումն փոխարինին . զի պահօքն յետս նահանջիմք 'ի ցանկութենէ մարմնոյ . ողորմութեամբն , 'ի ցանկութենէ աչաց . աղօթիւքն՝ 'ի յամբարտաւանութենէ աստի կենաց ։ Եւ այլ կերպիւ առաւել լինի բաւականութիւն այս՝ 'ի կողմանէ կապարին՝ առոր լինի վճարումն . զի պահօքն կարգաւորի մարդն 'ի յինքն . ողորմութեամբն առ ընկերն . և աղօթիւքն՝ առ Ա՟ծ ։ Ըստ երրորդի եղանակի առաւել լինի բաւականութիւն այս , 'ի կողմանէ նիւթոյն , յորմէ լինի փոխարէնն ։ Զի ողորմութեամբ լինի փոխարէն 'ի բարեաց արտաքին գոյից . պահօքն՝ 'ի բարեաց մարմնոյն . աղօթիւքն՝ 'ի բարեաց մտացն ։ 1. յոհ. 2. 16.

Ըստ չորրորդի եղանակին՝ առաւել լինի բաւականութիւն 'ի կողմանէ կերպից փոխարինելոյ ։ Քանզի լինի փոխարէն ըստ երից եղանակաց , այսինքն , կամ պատժելով . կամ տալով զփրկանս . կամ աղաչելով ։ Զառաջինն առնեմք պահելով . զերկրորդն՝ ողորմութեամբ տալով . զերրորդն՝ աղօթելով ։ Ըստ հինգերորդին առաւել լինի բաւականութիւն այս՝ 'ի կողմանէ ներգործութեն ։ Քանզի փոխարինաւն հանդիպիմք երից մեծամեծաց բարեաց , այսինքն , ընդունելու- Ա թեան շնորհի. թողութե̄ պատժոց. և մաքրութե̄ մնացորդաց մեղաց: Առ առաջինն երևի գոլ օգուտ ողորմութիւնն, վասն բազմութե̄ բարեխօսացն. առ երկրորդն՝ պահքն. և առ երրորդն՝ աղօթքն:

Յաղագս իւրաքանչիւր մասանց փոխարինին:

ԳԼ. ԼԱ.

Երկին կերպիւ առեալ լինի ողորմութիւն. կամ դիտաւորութե̄ լնլոյ զպէտս կարեաց ընկերին, և ըստ այսմ է գործ ողորմութեան. և կամ դիտաւորութե̄ առնելոյ զփոխարէն, վասն պարտուց վիրաւորելոյն զա̄ծ, և ըստ այսմ է գործ արդարութեան: Ուստի ըստ առաջնոյ կերպին, յատկապէս վերաբերի առ արդիւնաւոր Ա կեանս. և ըստ երկրորդին՝ վերաբերի առ ՚ի թողութիւն մեղացն. զի այսպէս արարեալ ողորմութիւնն, է՛ յատկապէս փոխարինական: Այլ վասն պահոցն գիտելի է, զի երկու ինչ գոն ՚ի մարմինն. մինն է բնութի̄, որ պարտի պահիլ. և միւսն մոլութի̄, որ պարտի ճնշիլ: Այլ պահքն որ պահէ զբնութիւնն, և ճնշէ զմոլութիւնն, ըստ այսմ կերպի բարի է, և փոխարինական. բայց ըստ այլում կերպի՝ ոչ:

Նաև աղօթքն կրկին կերպիւ պարտի լինիլ. կամ վ̄ ընդունելութեան խնդրեցեալ բարեացն, և ըստ այսմ է մասն, կամ գործ՝ խոկման. և կամ վասն փրկելոյ ՚ի չարէն, և ըստ այսմ է յատկապէս մասն փոխարինին:

Յաղագս արդարացուցման ամբարշտին:

ԳԼ. ԼԲ.

Արդարանալն ամբարշտին՝ է շարժումն յանարդարութենէ առ արդարութի̄:

Արդ ՚ի յարդարանալն ամբարշտին չորք իրք խնդրին, այսինքն, շարժումն անձնիշխանականի. զղջումն. հեղումն շնորհաց. և թողութի̄ մեղաց: Որոց առաջին երկուքն՝ են ՚ի կողմանէ ընդունողին և միւս երկուքն՝ են ՚ի կողմանէ առնողին ։ Այդ՝ վերոյ ասացեալ չորեքեանս՝ են համանգամայն ժամանակաւ , այլ ոչ բնութ՟բ ։ Իսկ նախկնութիւնն և վերջաւորութիւնն , որ է ըստ կարգի բնութ՟ե , կերպին իմն վերածի՛ առ կարգ պատճառին , և պատճառեցելոյն ։ Իսկ ՚ի մէջ այսոցիկ երևի գոլ այս կարգ պատճառելութ՟ե ։ Քանզի պատճառաբար՝ շարժումն անձնիշխանականին է նախկնագոյն քան զայլ երեքեանն . զի առ այսպիսի փոփոխմունս խնդրի հաւանութի կամացն ։ Իսկ կամքն՝ և անձնիշխանութիւնն, առեալ լինին աստ վասն նոյնոյ իրի ։ Նաև շարժումն այս՝ կոչի շարժումն անձնիշխանականի ։

Իսկ շարժումն այս՝ որ ՚ի ձեռն անձնիշխանին հաւանի ա՟յ որպէս առաջնոյ շարժողի , կոչի շարժումն հաւատոյ . զի ունի զիմն ձևացման , և զիմն ախորժման որպէս հաւատոն ։ Այս ասեմք , թէ շարժումն անձնիշխանականին , և կամ շարժումն հաւատոյն ՚ի յա՟ծ , պատճառաբար է նախկին քան զշարժումն . որով ոք զղջայ ՚ի մեղաց . զի որպէս ՚ի ծնունդ մեղացն՝ նախկինն է՝ դարձումն առ ստեղծեալսն , քան յետս դարձումն ՚ի ստեղծողէն . փոխանակ զի դարձումն պատճառէ զյետս դարձումն . այսպէս և ՚ի յեղծումն մեղաց՝ նախկին է դառնալն առ ա՟ծ անձնիշխանական կամօք , քան զյետ դառնալն ՚ի ստեղծեալսն, զղջալովն ՚ի մեղաց ։ Քանզի որ է առաջին ՚ի շարամանելն, է՝ վերջին ՚ի տարալուծանելն ։ Այդ՝ երկոքեան շարժմունքս այսոքիկ , այսինքն , անձնիշխանականին , և զղջմանն՝ են նախկինք՝ քան զհեղումն շնորհաց . զի են նախապատրաստական պատճառք՝ որովք շնորհն պարգևի ։ Զի թէպէտ ա՟ծ առանց ա՟մ նախապատրաստութ՟ե կարէ արդարացուցանել զամբարիշտն , սակայն՝ խնդրի նախապատրաստութիւնն ՚ի մերս կողմանէ . զի որպէս խնդրի նախապատրաստութիւն ՚ի Ա
կողմանէ նիւթոյն ՚ի բնական փոփոխումն առ ՚ի ընդունել զտեսակ , նոյնպէս և ՚ի փոփոխութիւնս կամաւորականս . և այս ոչ է ՚ի յանկարութ՟է առնողին , այլ ընդունողին ։ Է և այլ պատճառ , զի ՚ի յարդարացուցանել ամբարշտին . լինի ներմուծումն միոյ տեսակի , և արտաքսումն ներհակին . նմին իրի՝ խնդրին նախասացեալ երկոքեանքն , այսինքն , շարժումն անձնիշխանականին , որ պատրաստէ առ ՚ի յընդունելութիւն շնորհացն . և զղջումն , այսինքն , հեռացումն ՚ի մեղացն.

զայն , որ պատրաստէ առ 'ի յարտաքսումն մեղաց : Իսկ շնորհն՝ նախ հեղեալ լինի քան զթողութիւն մեղաց . զի 'ի ձեռն շնորհաց՝ թողանի մեղքն . որպէս՝ 'ի ներմուծութեան տեսակին՝ բնականաբար նախընթացն է տեսակն , որ արտաքսէ 'ի կողմանէ առնողին՝ քան զայն՝ որ է արտաքսելի : Իսկ թէ զի անդ արդարանալն լինիցի իսկոյն , կամ մի զկնի միոյ . ծանիր զզանազանութիւնս : Քանզի արդարանալն կրկին կերպիւ առնեալ լինի . որպէս և ծնունդն . միով կերպիւ որպէս զի առնիցէ զշարժումն առ արդարութիւն հանդերձ կազմպատրաստութեամբ նորին . և ըստ այսմ լինի յաջորդաբար . որպէս՝ յորժամ յառաջանայ նախապատրաստութիւնն , և հետևի շնորհն ; և թողութիւնն :

Եւ միւս կերպիւ առնեալ լինի արդարանալն , զի աասցէ զփոփոխումն առանց շարժմանց . և ըստ այսմ եղանակի լինի արդարանալն իսկոյն . և այս երեքկին պատճառաւ : Առաջինն է՝ զի լինի անհուն և պարզ զօրութեամբ , որ անընդմիջաբար գործէ :

Երկրորդն է՝ զի լինի 'ի պարզ ենթակայոջ , այսինքն , 'ի միում : Երրորդ՝ զի տեսակն որ արտաքսի , այսինքն , մեղքն , ոչ մերժի յառաջագոյն քան զներմուծումն շնորհաց . այլ ամենևին ըն նոյնում պարզ բոպէի լինի երկաքանչիւրն : Իսկ առ այն՝ որ ասէ Օգոստինոս , թէ մեծագոյն է արդարացուցանել զամբարիշտն՝ քան ստեղծանել զերկին , և զերկիր . ասելէ , թէ մեծագոյն է ըստ իրին այն որ լինի , զի լաւագոյն է . այլ ոչ ըստ կերպի առնելոյն :

Քանզի թէպէտ 'ի յարդարանալն ամբարշտին լինի տեսակաբար ընդդիմակայութեամբ , այսինքն , ներհակին առ ներհակն . սակայն ոչ է անդ ընդդիմակայութիւն առնողական . որով ընդդիմակայեսցի ինչ առնողին , այսինքն այ , որոյ զօրութեանն ոչ ինչ կարէ ընդդիմանալ : Արդ՝ 'ի յարդարանալն ամբարշտին , է՛ ինչ 'ի կողմանէ այ , և է՛ ինչ՝ 'ի կողմանէ մեղաւորին , և է՛ ինչ 'ի կողմանէ եկեղեցւոյ : 'Ի կողմանէ այ , են երկու . այսինքն , ողորմութիւն , որով թողու զպարտաւորութիւնն . և արդարութիւնն , որ պահանջէ զփոխարէն իմն . կամ աստ , կամ 'ի քաւարանին , և այսորիկ նշանակին երկոքումբք աշակերտօքն , զորս առաքեաց Տր յամ տեղիս՝ ուր ինքն երթալոց էր անդ մարմնապէս . իսկ աստ շնորհօք և հոգևորապէս :

Ղուկ. 10.1.

Այլ և 'ի կողմանէ մեղաւորին , են երկու . այսինքն ,

ցաւ

կաւ, և այր. որպէս են երկու քար աղօրեաց ; որով օրին.
փշրի մեղքն . զոր ըստ օրինացն ոչ է պարտ գրաւել 24.6.
ստանայի : Նախ՝ 'ի կողմանէ եկեղեցւոյ՝ են երկու : Առաջինն է՝ արդիւնն ; և մանաւանդ Քի , որոյ արդիւնքն է անչափ ; նաև այլոց սրբոց , որք արարին զաղուամս գերազանց գործս ; որք ամէնք են եղեալք 'ի ներքոյ իշխանութե քահանայից . որպէս զի որ ինչ պակասիցի միում անդամոյ եկեղեցւոյն, լցցի 'ի միւսոյն : Ուստի՝ եթէ ոք ոչ է յանդամոց եկեղեցւոյն . յոհ. 15. 6.
ոչ առնու 'ի նմա վերոասացեալ արդիւնս :

Երկրորդն է՝ ներողութիւնն , զոր տայ եկեղեցի ձեռամբ պապին , և եպիսկոպոսացն . սակայն զի ներողութիւնն այն՝ այնքան օգտիցէ , որքան խոստացեալ լինի , պահանջի իշխանութի . և պատճառ , այսինքն՝ հասարակաց օգուտն, 'ի յոր պարտի նկատել տուօղն . նաև պահանջի հաւատ տեղեկացեալ , և հնազանդութիւն . որով արասցէ զայն ինչ՝ վասն որոյ տուեալ լինի ներողութին , և երկուքեանքս այսոքիկ խնդրին 'ի կողմանէ ընդունողին :

Յաղագս ապաշխարութեան ներելի մեղաց :

Գլ. ԼԳ.

Ապաշխարութիւն է հնար , կացուցեալ առ 'ի յարտաքսել զմեղս , որում պարտի զգալի պատիժ , որ ոչ միայն վասն մահուչափ մեղացն ; այլ և վասն ներելւոյն պարտի : Յայտ է՝ զի ապաշխարութիւն է հնար՝ ընդդէմ երկոցունցն . սակայն ապաշխարութիւնն , ոչ է պարտաւոր ներելեացն , այլ վասն մահուչափ մեղացն . զի ապաշխարութիւնն է կարգեալ առ 'ի վերստին նորոգումն շնորհելութեան այն , զոր բառնայ մահուչափ մեղքն . և թէպէտ ապաշխարութիւնն ոչ է պարտաւոր վասն ներելեացն , սակայն լինի պատշաճօրէն . և այս ըստ երից եղանակաց : Նախ՝ պատճառաւ երկբայութեան . որպէս յորժամ կարծեսցուք լինիլ մահուչափ :

Երկրորդ՝ պատճառաւ կացուցմանն . որպէս յորժամ պարտական է մարդ խոստովանիլ մի անգամ 'ի տարւոջն , և ոչ ունիցի զմեղս՝ եթէ ոչ՝ զներելիս :

Երրորդ՝ պատճառաւ վտանգի . որպէս յորժամ

հեշտութիւնք ներելւոյն այնքան յառաջանայ, մինչ զի թէ ոչ յետս դարձցի, քարշեսցէ զնա 'ի մահուչափս: Այլ վասն թողութեան ներելի մեղացն գիտելի է, զի վասն երկուց պատճառաց ոչ լինի թողեալ:

Առաջինն է՝ թէ ունի այնպիսին զմեղս մահուչափս. զի առանց թողութեան մահուչափ մեղացն ոչ լինի թողութիւն ներելի մեղացն. թէպէտ ընդդէմն կարէ լինել, այսինքն, զի թողանիցի մահացուն առանց ներելւոյն: Վասն զի մինչ մահուչափ մեղքն բառնայ զսէրն որ ծածկէ զա̅մ մեղս, յայտ է՝ զի կալեալն 'ի մեղս մահուչափս՝ ոչ ոք ներելի թողեալ լինի:

Երկրորդն է՝ յորժամ կամքն մնայ բեւեռեալ 'ի սէր ներելի մեղաց ուրուք բացորոշեցելոյ. զի այն ոչ կարէ թողանիլ. եւ այս վասն բազում պատճառաց:

Նախ՝ զի զա̅մ մեղք կարօտանայ թողութեան ըստ կրկին իւրաց, այսինքն՝ ըստ մեղաց, եւ ըստ պատժոյն. այլ ոչ կարէ լինիլ թողութի̅ երկրորդին թարց առաջնոյն. զի որքան ունի մարդ զմեղս, է՝ պարտական պատժոյն: Իսկ մեղքն կայանայ 'ի յանկարգութիւն կամաց. ուստի այնպէս 'ի խոտորութեան մնացեալ կամքն ոչ է կարգաւորեալ. ապա թէ ոչ՝ երբէք հանդիպեսցի լինելն 'ի նոյնում: Երկրորդ՝ զի ընդ մնալ պատճառին, ոչ կարէ բառնիլ պատճառեցեալն. այլ անկարգաւորեալ կամքն առ իր ինչ է՝ պատճառ ներելի մեղացն. ուստի մնալով կամացն բեւեռեալ 'ի յայն, ոչ լինի թողեալ ներելի մեղքն այն: Նաեւ գիտելի է, զի մի ներելի մեղքն կարէ թողանիլ առանց միւսոյն. զի մահուչափ մեղքն որ առաւել տգեղացուցանէ, կարէ թողանիլ առանց ներելւոյն: Դարձեալ՝ զի մեղք մահուչափն այնպէս անհամաձայն է ա̅յ, մինչ զի զմեղանչօղն առնէ անհամաձայն ա̅յ. այլ ներելին թէպէտ անհամաձայն է ա̅յ, վասն զի է՝ անկարգ ին̅, սակայն ոչ զրկէ 'ի շնորհացն. այլ նուաճանայ ըստ այնմ՝ որ յառաջադիմութիւնն ն̅ր առ անդրագոյնն լինի արգելեալ. եւ վասն այսորիկ մի ներելին, ոչ արգելու զթողութիւն միւսոյն: Դարձեալ՝ զի ներելի մեղքն ոչ են կապակցեցեալք ընդ միմեանս, ոչ 'ի կողմանէ յետս դառնալոյն՝ զի ոչ յետս դարձուցանեն 'ի ծայրագոյն բարւոյն, եւ ոչ 'ի կողմանէ դառնալոյն. նմին իրի՝ մինն կարէ թողանիլ առանց միւսոյն: Այլ ոչ է այնպէս զմահուչափ մեղացն. ուր մինն ոչ թողեալ լինի առանց միւսոյն. զի ունին զկապակցութիւն առ իրեարս 'ի կողմանէ յետս դառնալոյն։ Զի իւրաքանչիւր մահուչափ մեղք՝ յետս դարձուցանէ յԱյ, թէպէտ ոչ ունիցին զկատարելութի 'ի կողմանէ դարձմանն։ Այլ յասացելոցս հանաքեմ, զի այլ կերպիւ ունին զինքեանս առ իրեարս մահուչափ մեղքն, և այլ կերպիւ մահուչափքն առ ներելիսն։ Քանզի մահուչափքն այնպէս են առ իրեարս, մինչ զի մինն ոչ լինի թողեալ առանց միւսոյն։

Այլ մահուչափքն այնպէս են ընդ ներելեաց, մինչ զի մահուչափքն թողեալ լինին առանց ներելեացն. այլ ոչ ներելին առանց մահուչափին. որոյ կրկին է պատճառ։ Առաջինն է՝ զի մահուչափն և ներելին, ունին զինքեանս որպէս ունակութի և տրամադրութիւն. իսկ բարձմամբ ունակութե կարէ մնալ տրամադրութի. և ոչ անդրադարձեալ։ Երկրորդ՝ զի մահուչափ մեղքն հակակայ սիրոյն. իսկ ներելին եռանդեան նորին. արդ՝ բարձմամբ սիրոյն՝ բառնի եռանդն, այլ ոչ անդրադարձեալ։

Յաղագս թէ որով լինի թողութի ներելի մեղացն։

Գլ. ԼԴ.

Արդ՝ առ 'ի թողութի ներելի մեղացն ոչ պահանջի նոր ունակութի սիրոյն. այլ բաւական է նոր շարժումն. զի ներելի մեղքն ոչ բառնայ զունակութի առաքինութե, այլ արգելու զգործ նորա։ Ա Նա և գիտելի է, զի ներելի մեղքն ոչ երբեք թողեալ լինի թարց զղջման. որոյ նշանն է; քանզի որքան բևեռեալ մնայ կամքն 'ի ներելի իմն մեղք, ոչ երբեք թողեալ լինի. այլ պարտ է յետս դարձուցանել զկամքն յայնմանէ, զոր նախկնաբար կամէր. որ է անհաճոյ լինել նմա զոր կամեցաւ. և այսպիսի տհաճութիւն, ասի ցաւ զղջման։

Այլ սոսկ զղջումն առեալ լինի ըստ երից եղանակաց, այսինքն; կամ ունակութբ; կամ ներգործութբ, և կամ միջակօրէն։ Արդ՝ զղջումն ունակութբ ոչ է բաւական առ 'ի թողութի ներելի մեղացն. զի յայնժամ որ ունէր զունակութի առաքինութե, ոչ կարէր ընդունել զներելի մեղս. և ըստ այսմ ներելի մեղքն ոչ կարէր լինել ընդ շնորհաց։ Նաև զղջումն որ ներգործութբ, ոչ միշտ պահանջի. զի հետևէր թէ մեղքն՝ զոր ոք ոչ ունէր 'ի մտի, ոչ լինէր թողեալ: Վասն որոյ պահանջի զղջումն միջակօրէն, այսինքն, զի լինիցի նմա մեղքն անհաճոյ ներգործաբար. որոշակի, կամ անորոշակի: Արդ ասեմ անորոշակի, զի ամ՟ ներելի մեղք ոչ կարեն մտածիլ առանձնակի. նմին իրի՝ բաւական է այն 'ի զղջումն, մինչ զի՝ թէ զներելի իմն 'ի միտ ածիցէ որոշակի, ոչ հաճոյասցի նմա: Այլ գիտելի է, քանզի այնքան ջերմեռանդ լինիլ կարէ զղջումն սիրոյն առ Ած՟, մինչ զի ծախեսցէ զամ՟ մեղս նորա ներելիս, նա և առանց ներգործական մտածեցման նոցին. զի յորժամ ոք ջերմեռանդութբ՟ վերածի առ Ած՟, անհաճոյ է նմա ամ՟ ինչ որ ցապաղեցուցանէ յԱյ՟. Եւ այսպէս՝ թէպէտ որոշակի ոչ ածիցէ ոք 'ի միտ զներելի մեղսն, սակայն 'ի շարժումն այն պարունակի անորոշակի անհաճութի՟ ներելի մեղացն. կամ միոյն, կամ ամենեցուն:

Նա և գիտելի է, զի 'ի զղջումն ներելեաց՝ ոչ պահանջի զնելն 'ի միտ ոչ մեղանչել ներելապէս, որպէս 'ի զղջումն մահուչափ մեղացն: Այլ բաւական է զի անհաճոյասցի նմա անցեալ մեղքն՝ և տկարութիւն, որով ձգտի առ ներելի մեղքն. թէպէտ 'ի նմանէ ոչ կարիցէ լինիլ ամենևին սուրբ. սակայն այնպէս՝ զի կամքն ոչ մնասցէ բևեռեալ 'ի մի ներելի մեղս, զի այնպիսի մեղքն ոչ լինի թողեալ, ոչ 'ի հասարակ, և ոչ 'ի յատուկ զղջմանէ. որոյ պատճառն է, զի խորշելն 'ի մահուչափ մեղաց՝ է ընդ մերով իշխանութբ՟. ոչ միայն իւրաքանչիւրքն, այլ և ամենեքեան. իսկ 'ի ներելեացն թէպէտ յիւրաքանչիւրոցն կարեմք խորշիլ, այլ ոչ յամենեցունց՝ որ պատահի վասն տկարութե՟ բնութեանն: Արդ՝ բազումք են որք բառնան զմեղս ներելիս, որք և պարունակին 'ի յերիս. նախ 'ի յայնս՝ որք պարգևեն զշնորհս, որպէս են՝ ամ՟ խորհուրդք եկեղեցւոյ: Երկրորդ՝ 'ի յայնս, որովք բառնին արգելմունք ջերմեռանդութեց՟, և շնորհաց, որպէս է օրհնեալ ջուրն, որ յետս ընկրկէ զզօրութիս թշնամւոյն. և եպիսկոպոսական օրհնութի՟, և այլք սրբազնականք: Երրորդ է կրթութի՟ խոնարհութեան 'ի մերս կողմանէ, որպէս է՝ բախումն կրծոցն. տ՟րունական աղօթք. ողորմութիւն, և պահքն, և այլք այնպիսիք: Որոյ պատճառն է, քանզի ներելիքն թողեալ լինին եռանդիւ սիրոյն, որ որոշակի, կամ անորոշակի, պարունակէ զայնս ամ՟ս որք բնաւորեալք են ըստ իւրեանց՝ զարթուցանել զջերմեռանդութիւն սրտից ։ Նմին իրի՝ այսպիսիքս թողուն զմեղս ներելիս · քանզի մինչ ըստ քանակութեան ջերմեռանդութեան լինի քանակութիւն թողութեան, յայտ է՝ զի ըստ որում 'ի ձեռն համաթուեցելոցս՝ մեծագունայիւս , կամ փոքրագունայիւս զարթուցանի ջերմեռանդութիւն , որ որոշակի , կամ անորոշակի պարունակէ զզջումն , յոլով կամ սակաւ ներելիք թողանին · ոչ սակայն միշտ բնաւ քն ։

Յաղագս վերջին օծման ։ ԳԼ. ԼԵ.

Միջնորդն ա͞յ և մարդկան , ոչ միայն կոչի
Յ͞ս ըստ այնմ որ փրկիչ , այլ և Ք͞ս ,
ըստ այնմ որ հեղու 'ի յայլս զշնորհս օծ-
ման · որ նշանակեցաւ 'ի դաւիթ որ
երիցս օծաւ ։ Նախ՝ 'ի տան հօր իւրոյ,
'ի նշան հանդերձելոյ թագաւորութեան · 1. Թագ.
և այս նշանակէ զօծումն որ լինի 'ի մկր- 16. 13.
տութեան ։ Երկրորդ՝ 'ի քեբրոն՝ 'ի վերայ յուդայ · և 2. Թագ.
յետ այնորիկ ունէր զբազում պատերազմունս · և այս 2. 4.
նշանակէ զօծումն դրոշմին ։ Երրորդ՝ դարձեալ 'ի
քեբրոն 'ի վերայ ա͞մ իսրայէլի · և յետ այնորիկ թա- 2. Թագ.
գաւորեաց խաղաղութ͞բ , և այս նշանակէ զվերջին 5. 3.
օծումն ։ Արդ՝ 'ի գոյացութ͞ե այսմ խորհրդոյս են
հինգ ։ Նախ՝ զի օծօղն լինիցի քահանայ ։

Երկրորդն է՝ դիտաւորութիւն պատշաճաւոր ։

Երրորդն է՝ նիւթն պատկանաւոր , այսինքն , իւղ հիւանդաց ։ Չորրորդն է՝ ձև բանին, որ է այսպէս · ս͞բ օծմամբս այս՝ և իւր ամենագութ ողորմութ͞են , թողցէ քեզ ա͞ծ, զոր ինչ մեղար տեսանելեօք , և այլ զգայութ͞բ · և զձև բանիս այս , պարտի ասել օծօղն ։

Հինգերորդն է՝ տեղի օծմանն , որ է աչքն · ականջն , ունչն · բերանն · թիկնամէջն · և ձեռքն ։

'Ի խորհուրդս այս՝ ձև բանիցն է մաղթողական · քանզի խորհուրդս այս , պարտի աղօթիւք եկեղեցւոյ՝ և կերպին օժանդակութ͞ե օգնել ։ Քանզի տուեալ լինի առ 'ի ներգործութե , այսինքն , 'ի մաքրութիւն մնացելոց մեղացն · որոյ մարդն գործօղք իւրովք , այսինքն, ապաշխարութ͞բն՝ կարէր հասանիլ , եթէ ոչ արգելլոյր հիւանդութիւն ։

Ուստի ծանիր, զի 'ի խորհուրդ իւղ՟ ձևբանիցն է
յակ. 5. 14 'ի յաղօթս միայն՝ որպէս ասա: Զի ասէ յակոբոս. կոչեսցեն զերիցունս եկեղեցւոյ, և արասցեն զաղօթս 'ի վերայ նորա: Իսկ 'ի խորհուրդս ոմանս, կայանայ միայն 'ի յարտաբերութե՟ բանիցն. որպէս յայտ է 'ի
Մատ. մկրտութենէ: Զի ասէ Տ՟ն, մկրտեցէք զնոսա յա-
28. 19. նուն հօր, և որդւոյ, և այլն, ոչ յիշելով անդ՝ ինչ զաղօթից: Այլ 'ի խորհուրդ իւղ՟, որ՟ ասեն ոմանք. կայանայ ձևն 'ի յաղօթս, և 'ի յարտաբերութե՟ բանից, որպէս խորհուրդ ապաշխարութեան:

Քանզի սովոր են խոստովանահայրքն, նախ աղօթել ասելով՝ զարձակումն և զթողութե՟ շնորհեսցէ քեզ ամենակարողն և ողորմածն, և յետոյ ասեն, ես արձակեմ զքեզ յամ՟ մեղաց քոց. անուամբ հօր, և որդւոյ, և հոգւոյն սրբոյ, ամէն: Քանզի 'ի մեղս՝ անարգի ա՟ծ, և եկեղեցի. վասն այսորիկ ըստ առաջնոյն՝ լինի աղօթք. և ըստ երկրորդին՝ արձակումն:

Արդ՝ խորհուրդս այս ոչ լինի տուեալ, եթէ ոչ 'ի չափ հասելոցն, որք կարեն ունել զմեղս ներելիս, ընդդէմ որոց կացուցեալ է խորհուրդս այս. նաև ոչ տուեալ լինի այլոց; եթէ ոչ՝ միայն հիւանդաց, որք լինին 'ի վտանգի մահու: Քանզի առողջացն ոչ լինի տուեալ; վասն զի ունին պատրաստ զայլ հնար, այսինքն, զապաշխարութի՟ն: Նա և ոչ է պարտ տալ եթէ ոչ՝ խնդրողացն, որք ջերմեռանդութբ՟ ուղղին 'ի բարձունս: Իսկ թէ ոք բազում անգամ հիւանդանայ մերձ 'ի մահ, բազում անգամ օծեալ լինի. այլ 'ի մի անգամ հիւանդութեանն ոչ պարտի ոք կրկին օծանիլ. մի թէ նոյն հիւանդութիւնն երկարեսցի անդր քան զտարին. և վերջապէս լիցի այնպէս՝ մինչ զի 'ի միում տարւոջ, վասն միոյ հիւանդութե՟ ոչ օծանիցի բազում անգամ:

Բայց ներգործութե՟ն խորհրդոյս՝ այսորիկ է բազմապատիկ: Արդ՝ առաջինն է առողջութի՟ն, և է կրկնակի. մինն՝ նախնական, այսինքն, ազատութե՟ն 'ի հոգևոր հիւանդութե՟ց, որ պատճառի 'ի ներելի մեղացն՝ որովք հոգին տկարանայ առ 'ի հասանել գործոց շնորհաց, և փառաց: Իսկ միւսն երկրորդական, որ է իբր ներգործութե՟ն, և նշան առաջնոյ առողջութե՟, այսինքն՝ մարմնաւոր առողջութիւնն, և այս ճշմարիտ է, յորժամ մարմնաւոր առողջութիւնն է օգուտ առողջութե՟ն հոգևորի: Քանզի յայնժամ խորհուրդս

այս պատճառէ զերկուսանն՝ 'ի յարժանաւորս ընդունողին : Քանզի երբեմն է, օգուտ առողջութեան մարմնոյն առ 'ի շահել զարդիւնս փառաց :
Նա և է օգուտ առ 'ի զարթուցանել զջերմեռանդութիւն . այլ և առ 'ի փութանակի անցանել յերկինս :
Արդ՝ 'ի խորհուրդս այս՝ որպէս և յայլս՝ են երեք իրք:
Մինն է՝ խորհուրդ միայն. այսինքն արտաքին օծումն:
Միւսն է՝ իր միայն . այսինքն՝ ներգործութիւն կրկին առողջութեան , որպէս ասացաք : Իսկ երրորդն է՝ խորհուրդ և իր , այսինքն , օծումն իմն հոգևոր 'ի ներքս, որ է զուարճութիւն և մխիթարութիւն մտաց :

Յաղագս խորհրդոց կարգին : ԳԼ. ԼԶ:

Արդ՝ հինգ խորհուրդքն , զորոց ճառեցաք , վերաբերին առ որպիսութիւն անձին : Այլ երկուքս այս՝ զորոց ճառելոցք եմք , վերաբերին առ հասարակ որպիսութիւն եկեղեցւոյ . զի կարգն վերաբերի առ ծնունդս հոգևորս . իսկ պսակն առ ծնունդս մարմնաւորս :
Արդ՝ յառաջանայ քան զկարգն՝ առաջին հարթումն հերաց . զի յայս անցս , 'ի յորպիսութենէ 'ի յորպիսութիւն , յարմարաբար միջադրի պատրաստութիւն իմն միջակին : Ուստի 'ի յանցանելն 'ի յորպիսութենէ աշխարհականաց 'ի յորպիսութիւն սպասաւորացն այ , պատշաճաւոր դնի 'ի մէջն՝ առաջին հարթումն :
Նա և 'ի յառաջին հարթմանս այս՝ թողեալ լինի իբրև և 'ի հերացն 'ի ձև թագի , զի առեալ լինի 'ի սպասաւորութիւն այնմիկ , որոյ ծառայելն է թագաւորել :
Արդ 'ի կարգառողսն , է կրկին նշան զանազանական . այսինքն , արտաքոյ հարթումն հերաց , և 'ի ներքոյ կնիքն : Արդ՝ ոչ առ 'ի գոլ կարգին նախապահանջի հարթումն , այլ առ 'ի բարեպէս գոլն . զի հարթումն՝ է պատրաստութիւն պատշաճաւորութեան առ կարգն՝ և ոչ հարկաւորութեան : Իսկ Օգոստինոս այսպէս ենթադրէ զկարգն . կարգն է նշան իմն , ՚ի յոր աւանդի կարգեցելոյն հոգևոր իշխանութիւն , և գործաւորութիւն . քանզի որպէս 'ի բնականսն՝ եդ ած զվերնական մարմինս 'ի կարգաւորութիւն ստորնագունիցս , այսպէս՝ և 'ի հոգևոր ազդմունս , զոմանս եդ վերնագոյնս , և

զո.

զամենայն վայրագոյնս. զի այնոքիկ ունիցին զիշխանութիւն ՚ի վերայ այսոցիկ. որպէս՝ եկեղեցականք, են վերակացուք ՚ի հոգեւորս. եւ իշխանքն՝ կամ աշխարհական դատաւորք՝ ՚ի ժամանակաւորս։

Արդ՝ ՚ի գոյացութեան այսմ խորհրդոյս են վեցք։

Առաջինն է՝ իշխանութիւն տուողին զկարգն. զի պարտ
է լինել եպիսկոպոս։ Երկրորդ՝ նիւթն այսինքն,
օծումն ՚ի քահանայս, եւ շօշափումն այնոցիկ որք են
շօշափելիք։ Երրորդն է ձեւ բանին։ Չորրորդն է՝
Ա արական սեռն. վասն զի կինն ոչ ընդունի զնիշ կար-
գին։ Հինգերորդն է՝ ուղիղ դիտաւորութիւն։

Վեցերորդն է՝ զի կարգաւորն իցէ մկրտեցեալ՝ զի մկրտութիւնն է դուռն ամենայն խորհրդոց։

Եւ ՚ի խորհուրդս այս է ինչ, խորհուրդ միայն. որպէս երեւելի նշանն՝ որով ցուցանի ընձեռումն իշխանութեան։ Եւ է ինչ՝ իր միայն, այսինքն, շնորհն՝ որ տուեալ լինի արժանապէս ընդունողացն։

Եւ է ինչ իր եւ խորհուրդ, որպէս կնիքն։

Եօթն են կարգք։ Առաջինն է՝ դռնապանութիւնն. երկրորդն է՝ ընթերցողութիւն. երրորդն է՝ երդմնեցողութիւն. չորրորդն է ջահակալութիւն. հինգերորդն է՝ կիսասարկաւագութիւնն. վեցերորդ՝ սարկաւագութիւն. եօթներորդ՝ քահանայութիւն; որ է կատարելագոյն ամենայն կարգաց. եւ վախճան այլոց. Իսկ այլքն են իբրեւ զելից աստիճանս, որովք ելանեն ՚ի յաթոռն սաղօմոնի։ Արդ՝ գործ դռնապանութեան է՝ պահել զտեղի օրհնութեան խորհրդոցն յայնցանէ, որք պիղծք են. այսինքն, բանադրեցեալք։ Գործ ընթերցողին է՝ ընթեռնուլ զմարգարէականս։ Գործ երդմնեցուցչացն է՝ արգելուլ զդեւս մի՛ տիրել մարմնոց ոչ մկրտեցելոց, այսինքն, երդմնեցուցմամբ։

Գործ ջահակալացն է՝ ունել ՚ի ձեռին զվառեալ մոմեղէնս՝ որ նշանակէ զլոյս աւետարանին։

Գործ կիսասարկաւագացն է՝ առնուլ զնուէրս ՚ի մատուցանողացն, եւ մատուցանել զայն սարկաւագին. Իսկ ընթեռնուլն զառաքելական ընթերցուածս՝ ո՛չ է նախկնական գործ նոցին, այլ յարմարի նոցա։

Գործ սարկաւագացն է՝ սպասաւորել զսպաս պատարագի. Իսկ ընթեռնուլ զաւետարանն՝ կամ քարոզել՝ է գործ երկրորդական։ Գործ քահանային է՝ օրհնել զմարմին. եւ զարիւնն Քրիստոսի. եւ այս է նախկին գործ նորին. է եւ այլ հետեւողական գործ, այսինքն՝

կապել և արձակելն . որով պատրաստի խորհրդաւոր մարմին Քրի , զի լինիցի յարմար և պատշաճաւոր՝ առ 'ի վերընդունել զճշմարիտ մարմինն Քրի :

Այլ 'ի յիւրաքանչիւր կարգ , տպաւորի կնիք . այլ թէ յորժամ լինի , այժմ ասելի է : Քանզի կնիք դռնապանին տպաւորի , յորժամ առեալ լինի նոցա բանալք , և ասի նոցա՝ այսպէս արարէք , որպէս թէ տալցէք զհամարս ոց̃ , վասն իրացն որք փակեցեալ են 'ի ներքոյ բանալեացս այսոցիկ :

Ընթերցողացն տպաւորի կնիքն , յորժամ եպիսկոպոսն տայ նց̃ զգիրքն պատշաճաւոր ձևով բանիցն :

Երդմնեցուցչացն տպաւորի, յորժամ առեալ լինի նց̃ գիրք երդմնեցողութե , հանդերձ ձևական բանիւ :

Ջահավառացն՝ տպաւորի բանիւքն՝ զոր ասէ եպիսկոպոսն , 'ի տալ նոցա զմոմակալն : Կիսասարկաւագացն տպաւորի , յորժամ եպիսկոպոսն հանդերձ ձևական բանիւք տայ զսկիհն ունայն, և զայլս անօթսն որք պիտոյք են 'ի սպասաւորութի հաղորդութե :

Սարկաւագաց և քահանայից տպաւորի կնիքն, յորժամ եպիսկոպոսն տայ 'ի ձեռն սարկաւագին զաւետարան, և 'ի ձեռն քահանային զսկիհն գինեաւ, և զմաղզմանն նշխարաւ , հանդերձ բանիւք սահմանեալ առ այնու:

Զնախասացեալ կարգս 'ի կիր էառ քս̃ : Զդռնապանութի, Մատթ.
յորժամ եհան 'ի տաճարէն զգնողս . և զվաճառողսն : 21.12.
Զընթերցողութի , յորժամ 'ի մէջ ծերոցն բացեալ Ղուկ. 4.
զգիրս եսայեայ ընթերցաւ : 17. և
Զերդմնեցութիւն յորժամ զայսահարսն բժշկեաց : 11.14.
Զջահընկալութի , յորժամ ասաց , ես եմ լոյս աշ- Յոհ. 8.
խարհի : 12. և
Զկիսասարկաւագութիւնն , յորժամ ածածեալ ղեն- 13.4.
ջակաւն լուաց զոտս աշակերտացն : Մատթ.
Զսարկաւագութիւն , յորժամ 'ի ժամ ընթրեացն՝ 26.26.
զմարմին և զարիւն իւր բաշխեաց աշակերտաց իւրոց . Ղուկ.
և զարթոյց զնուաղեալսն յորժամ ննջէին : 22.46.
Զքահանայութի , յորժամ մատոյց զինքն պատարագ Յոհ. 19.
'ի սեղան խաչին . և յորժամ 'ի յընթրիսն զհացն և 18.
զգինին փոխեաց 'ի մարմին և յարիւն իւր : 1. Կոր.
11.23.

Յաղագս ուրախութեան կարգաւորացն :
ԳԼ: ԼԸ·

Արդ՝ ուրախութի̃ կարգաւորացն՝ կայանայ 'ի յերկու իրս, այսինքն, 'ի յառնելման, և 'ի խորշելման : Առնելիքն են այսոքիկ, զի լինիցի բարուքն ողջախոհ. հանդերձիւ̃ն համեստ · 'ի կերակուրն և 'ի յըմպելին չափաւոր · բաւականապէս հմուտ ուսման · հեզ · համեստ :

Ունելով զհարթութիւ̃ն հերաց ըստ եկեղեցականաց · հեռաւէր · ուսուցանող · յանդիմանիչ մոլութեանց · տայցէ բարի օրինակ՝ վարուքն և համբաւովն · Մնասցէ յեկեղեցին իւր, և 'ի Թօշակն · ունիցի միայն մի եկեղեցի ժողովրդարան · լինիցի բարւոք վերակացու ընտանեացն : Իսկ խորշելիք եկեղեցականաց 'ի հարկաւորութե̃՝ են այսոքիկ, ա̃մ մահուչափ մեղք · ո՛չ կռուասէր · ո՛չ ագահ, ո՛չ խաղացող · ո՛չ վաճառական, ո՛չ արասցէ որս աղաղակաւ, ո՛չ լինիցի անժուժկալ · ո՛չ բնակակից կանանց, ո՛չ շատակեր կամ որ կորասէր 'ի յուտելն · ո՛չ դատարկաբան · ո՛չ երթիցէ 'ի Թէատրոնն, և յանհամեստ տեսարանս · ո՛չ ձեռնամուխ լինիցին յաշխարհական իրողութիւնս · ո՛չ գնիցեն ուշ կատակերգողաց, և գուսանաց · ոչ մտանիցեն 'ի
Ա գինեվաճառանոցն : Զժամս ոչ ասասցեն հեղգաբար · ոչ վաճառեսցեն զարդար դատաստանն · զխորհուրդս եկեղեցւոյ, ո՛չ դաշամբ և գնով, այլ ձրի տացցեն, ոչ լինիցի բանադրեցեալ, կամ արգելեալ, կամ անկանոնական · ո՛չ կարգուրաց · ո՛չ սիմոնական 'ի կարգն կամ 'ի Թօշակի · և ոչ հանդիսի ապաշխարող :

Նախ քան զառնուլն կարգին, պատրաստեսցէ իւրաքանչիւրոք զինքն խոստովանութե̃ :

'Ի մահուչափ մեղս՝ ոչ մերձեսցի · զառաջին հարթութի̃ւն ունիցի : Ոչ ումեք տացցի կարգ յառաջ քան զքննութիւն: Ոչ առնուցուն համանգամայն զկիսասարկաւագութիւնն ընդ չորից փոքրագոյն կարգացն · և ոչ զերկու սէ̃ կարգսն համանգամայն · և ոչ 'ի մէջ Թողլով զմի կարգն՝ առնուցուն զմիւսն · և ոչ յօտարէ եպիսկոպոսէ, այլ յիւրմէ · և ոչ ընդդէմ արգելման եպիսկոպոսին իւրոյ․ և ոչ առանց տեղւոյ, և թօշակի․ և ոչ գողութեամբ առնուցու զկարգն ։

Զպատարագն 'ի յոր ձեռնադրի ամբողջաբար լիցէ․ Շօշափեսցէ զամ, որք շօշափելիք են զիւրաքանչիւրս 'ի յընդունելութեն կարգին իւրոյ ։ Ոչ յառաջ մատուցէ, եթէ ոչ լիցէ ընծայեցեալ, և ունիցի զհրաման ։ Նօթի առցէ 'ի նօթոյն․ ոչ առնուցուն կարգ, և ոչ տայցեն, եթէ ոչ 'ի ժամանակս կացուցեալս եկեղեցւոյ ։ Եւ ծանիր, զի բազումք են որք արգելուն զկարգաւորսն, նաև առանց մեղաց, այլ ոչ առանց պատճառի ։ Քանզի ոչ է պարտ տալ կարգ անծանօթին․ և ոչ երկկանամբոյն․ և ոչ նորամտոյն․ և ոչ 'ի յանօրէն անկողնոյ ծնելոյն․ ոչ ծառայի․ ոչ այնմ որ պարտական է տալոյ զհամարս․ և ոչ արատաւորացն ։ 'Ի նախասացելոցս յայտ է կղերիկոսական պատուին․ զի ոչ տուեալ լինի յիւրաքանչիւր ումեքէ․ և ոչ իւրաքանչիւր ումեք, և ոչ յիւրաքանչիւր ժամանակի․ և ոչ յիւրաքանչիւր տեղւոջ․ և կամ յիւրաքանչիւր ժամու, այլ 'ի ժամ պատարագի ։

Յաղագս խորհրդոյ պսակին ։ ԳԼ․ ԼԸ․

Պսակն է՝ արդար զուգակցութիւն, արուի և իգի, ունելով զանբաժանելի կենցաղավարութիւն ։ Արդ՝ պսակն սկսանի նշանադրութեամբ․ հաստատի՝ հաւանութեամբ սրտից յայտնեալ ներկայական բանիւն․ կատարի մարմնոյն զուգաւորութեամբն ։ Եւ գիտելի է, զի կրկին է կատարելութիւն․ առաջինն է 'ի պարզաբար գոլն․ երկրորդն՝ 'ի կատարեալ գոլն․ որպէս յայտ է 'ի մանուկն 'ի յոր է կատարելութիւն, որքան առ գոլն մարդոյն պարզաբար․ այլ ոչ է 'ի նա կատարելութիւն ըստ կատարեալ գոլոյն ըստ քանակութեան, և ըստ ներգործութեան մարդոյն․ ըստ նմին օրինակի ասելի է զպսակէն, 'ի յորում է կրկին կատարելութիւն ։

Առաջինն է՝ որ առնէ զպսակն, այսինքն՝ հաւանումն սրտից յայտնեալ ներկայական բանիւք․ և առայս ոչ պահանջի մարմնական միաւորութիւն ։ Երկրորդն է՝ որ կատարէ զնա․ և առայս պահանջի մարմնական միաւորութիւն ։ Արդ՝ բարին պսակի է եռակի․ այսինքն՝

հաւատոյ · զի ոչ ոք 'ի յերկրացունց պղծեսցի օտար անկողնօք ։ Ա Զամուսինն որ միացանի առ 'ի պաշտօն ա̃յ · խորհուրդն, զի մի՛ քակտեսցի · զի թէպէտ եկեղեցին կարէ բաժանել վասն արգելման պսակին․ սակայն ոչ երբէք պարտի, նա և ոչ կարէ խզել քակտել զպսակն՝ որ օրինաւորապէս է պարակցեալ, բստ այնմ՝ թէ զոր ա̃ծ զուգեաց, մարդ ոչ կարէ մեկնել, որքան և իցէ մեծագունեղ իշխանութ̃ · սակայն արձակի պսակն մահուամբ ։ Այլ գիտելի է, զի կրկին է շաղկապ պսակին․ և կրկին է մահն, որ պատասխանէ նոցին։ Քանզի է շաղկապ հոգևոր, այսինքն, հաւանութ̃ սրտից․ և այս արձակի հոգևոր մահուամբ, որով մեռանի մարդն յաշխարհի՝ մտանելովն 'ի կրօնաւորութ̃ի։ Եւ է՝ շաղկապ մարմնաւոր, որ լինի խառնմամբ երկուցն, որ արձակի մարմնաւոր մահուամբ ։ Մատ. 19. 6.

Իսկ պատճառ պսակին է քառակի · այսինքն, արարչական, որ է հաւանութիւն սրտից յայտնեալ ներքնական բանիւն ։ Նիւթական այսինքն օրինաւոր անձինքն ։ Ձևական որ է օրհնութիւն, և դնել մատանւոյն 'ի մատն, և սոյնպիսիք ։ Եւ կատարունական պատճառն է կրկին, մինն է նախկինական, որպէս է ծնունդ զաւակին, և խորշումն 'ի պոռնկութենէ · զի պսակն ոչ միայն է 'ի պայմանաւորութ̃ի ծննդեան, այլ և է հնար ընդդէմ մեղաց · թէպէտ նախկնաբար՝ է 'ի պայմանաւորութ̃ի ծննդեան ։ Եւ միւսն է երկրորդական, և այս է բազմապատիկ · քանզի հաշտեցուցանէ զթշնամիս · և նուէր ստանանի ժառանգ · երկկեցս հապէ · զբարձրագոյնս նշանակէ, զիրաւունս անդրաբերէ · զպատիւս աճեցուցանէ · և ընդարձակեցուցանէ զսիրելութ̃ի ։ Արդ՝ զանազանի պսակն չորեքկին · առաջինն է՝ մարմնաւոր 'ի մէջ առն և կնոջն ։

Երկրորդն բարոյական՝ 'ի մէջ ա̃յ և հոգւոյն ։

Երրորդ՝ հոգևոր, 'ի մէջ Ք̃ի և եկեղեցւոյ ։

Չորրորդ նմանօրէն, 'ի մէջ ա̃յ և հոգւոյ՝ 'ի յաղթող եկեղեցւոջ միաւորութ̃բ փառաց ։ Դարձեալ ծանիր, զի կարէ ոք մտանել առ կինն իւր, վս չորից պատճառաց · այսինքն՝ պատճառաւ զաւակին · պատճառաւ հատուցման պարտուց, պատճառաւ խորշելոյն 'ի յանժուժկալութ̃ե · և բստ երից եղանակացս այսոցիկ կարէ լինիլ առանց մեղաց ։ Չորրորդ՝ կարէ լինիլ պատճառաւ լցուցանելոյ զվաւաշոտութիւն, և բստ այսմ կերպի է մեղք՝ կամ մահուչափ, կամ ներելի · բստ որում

վաւաշոտութիւն է ներելի, կամ մահուչափ ։ Բայց բազում
կերպիւ լինի մեղք 'ի զուգակցական միաւորութե .
այսինքն, յորժամ այրն . չարաչար առնու 'ի կին Բ
զկին իւր, ժամանակաւ, միօք, տեղեաւ, որպիսութբ,
և կերպիւ ։ Դարձեալ ծանիր, զի թողեցեալ
կինն վն պոռնկութե, հաւասարի ընդ առն բազում
կերպիւ, այսինքն՝ նախ՝ թէ նա իցէ լեալ պատճառ
պոռնկութեն այն . երկրորդ՝ եթէ ոք խաբէութբ
ննջէ ընդ նմա, և նա կարծիցէ զայրն իւր . երրորդ՝
եթէ բռնադատեցեալ իցէ . չորրորդ՝ եթէ և այրն
իցէ 'ի նոյն մեղս ։

Երեքեն զարդք հարսին, որք պարտին հոգևորապէս
լինել 'ի հոգի մարդոյն . այսինքն մատանին 'ի մատն .
կապ կոճակին 'ի վերայ կրծոց . և թագ 'ի գլուխն ։
Առաջինն՝ նշանակէ զմաքրութի գործոյն . զի գործն է
'ի ձեռն ։ Երկրորդն՝ նշանակէ զպարզութի սրտոյն .
զի սէրն է 'ի սիրտն ։ Երրորդն՝ զպայծառութի խոկման .
քանզի 'ի գլուխն է պայծառութի իմացականին ։
Երանուհի կոյսն եղև խօսեցեալ առն՝ վասն բազում
պատճառաց ։ Նախ՝ զի երանուհի կոյսն նշանակէ զեկեղեցի,
խօսեցեալ Քի, որ նմանապէս է կոյս ։
Երկրորդ՝ զի յօսեփաւ ցուցանիցի ծածկումն նորին . զի
արամբք եռանհիւսիցի աղքատութիւն ։ Երրորդ՝ զի
յօսէփ լինիցի վկայ ամենամաքրողջի ողջախոհութե նր ։
Չորրորդ՝ զի մի՛ վատահամբաւեսցի ընդ ծնանելն՝ ոչ
ունելով զայր ։ Հինգերորդ՝ զի մի՛ իբրև զանժուժկալ
դատապարտեսցի . զի էր 'ի քահանայական ցեղէ .
և այսպիսիքն այրեցեալք լինէին . իսկ այլք չնացողքն
քարկոծ լինէին ։ Վեցերորդ՝ զի կոյսն լինէր սփոփեալ .
և կազդուրեալ ապաստանութե՝ յառնէ ։
Եօթներորդ՝ զի զծնունդն Քի թաքուսցէ 'ի սատանայէ ։
Ութերորդ՝ զի մի՛ հրէայքն համարելով զՔս
ոչ ունել զօրինաւոր ծնունդ, երևեսցին իրաւի հալածել
զնա ։ Իններորդ՝ զի մի՛ երևեսցի Տէրն հակառակ
օրինաց, որ գովէր զպսակն ։

Եւ ծանիր . զի երկոտասանքեն արգելմունք պսակին . Գ.
այսինքն, սխալումն . ծառայութի . ուխտն . արենակցութին .
մեղք . այլափառութին . բռնութին . կարգն .
կապն . համեստութի . խնամութին . և անկարութին ։

Կատարեցաւ գիրք վեցերորդ . որ յաղագս
զօրութեց խորհրդոց ։

Ցանկ գլխոց եօթներորդի գրքոյն, որ յաղագս վերջնոց ժամանակաց:

Նախ՝ Յաղագս կատարածի աշխարհի:
Բ. Յաղագս քաւարանին:
Գ. Յաղագս դժնդակութեան քաւարանին:
Դ. Յաղագս օժանդակութեան եկեղեցւոյ:
Ե. Յաղագս թէ որոց օժանդակութիւնքն օգնեն, և առ յորս:
Զ. Մի թէ ներողութիւնքն օգնեն ննջեցելոց:
Է. Յաղագս գալստեան նեռին:
Ը. Յաղագս չար վարուց նեռին:
Թ. Յաղագս չորից խաբէութեանց նեռին:
Ժ. Յաղագս հետեւողաց նեռին:
ԺԱ. Յաղագս գովգայ՝ և մագովգայ:
ԺԲ. Յաղագս եղիայի, և ենովքայ:
ԺԳ. Յաղագս Յամելոյ հալածանացն:
ԺԴ. Յաղագս մահուան նեռին:
ԺԵ. Յաղագս այրման աշխարհի:
ԺԶ. Յաղագս ընդհանուր յարութեան:
ԺԷ. Յաղագս վերջին դատաստանի:
ԺԸ. Յաղագս դատաւորացն:
ԺԹ. Յաղագս դատելեաց:
Ի. Յաղագս նորոգման աշխարհի:
ԻԱ. Յաղագս տանջանաց դժոխոց:
ԻԲ. Յաղագս զանազանութեանց տանջանացն:
ԻԳ. Յաղագս երկնային փառաց սրբոց:
ԻԴ. Յաղագս բաժանեացն առ հասարակ:
ԻԵ. Յաղագս բաժանեաց հոգւոյն հասարակաբար:
ԻԶ. Յաղագս բաժանեաց հոգւոյն յատկապէս:
ԻԷ. Յաղագս բաժանեաց մարմնոյն հասարակաբար:
ԻԸ. Յաղագս բաժանեաց մարմնոյն յատկապէս:
ԻԹ. Յաղագս ոսկեղէն փոքրիկ պսակացն հասարակաբար:
Լ. Յաղագս ոսկեղէն փոքրիկ պսակացն յատկապէս:
ԼԱ. Յաղագս թուելոյ զերկնային խնդութիւնն:

ՀԱՒԱՔՈՒՄՆ

Աստուածաբանական ճշմարտութ̃ե։

ԳԻՐՔ ԵՕԹՆԵՐՈՐԴ։

Յաղագս վերջնոց ժամանակաց։

Վասն կատարածի աշխարհի։
Գլուխ Առաջին։

Վերջին դատաստանի՝ ոմանք են յառաջընթացականք. ոմանք են իբր համընթացականք. և ոմանք հետևողականք։ Արդ՝ յառաջընթացականք դատաստանին՝ են երեք, այսինքն, պատիժ քաւարանին. օժանդակութ̃ի եկեղեցւոյ. և հալածումն նեռին։ Իսկ համընթացականք դատաստանին՝ են կրկին։ այսինքն, այրեցումն աշխարհի. և յարութ̃ի մարմնոց։ Իսկ հետևողականք դատաստանին՝ են երկու, այսինքն, տանջանք դժոխոց. և փառք երկնային։ Զորոց կարգաւ ասելի է։

Յաղագս քաւարանին, Գլ. Բ.

Հուր քաւարանին է մարմնական. 'որով միայն հոգիք արդարոց տանջին, ոյք 'ի կենանս յայս ոչ կատարեցին զապաշխարութիւն, և ոչ զբաւական փոխարէնն: Արդ՝ որք են 'ի քաւարանի, ունին զյոյս զերծանելոյ. զի գիտեն զինքեանս ոչ գոլ 'ի դժոխս. սակայն վասն սաստկութե̄ տանջանացն՝ երբեմ̄ զայն ոչ զմտաւ ածեն:

Բայց բազումք են պատճառք՝ թէ վասն էր պիտոյ է լինիլ քաւարան: Առաջինն է՝ զի ըստ Օգոստինոսի երեք են ազգ մարդկան. ոմանք են յոյժ չարք՝ որոց ո՛չ է օգուտ օժանդակութիւն եկեղեցւոյ:

Ոմանք կարի խիս̄ բարիք՝ և ո՛չ ունին պէտս օժանդակութեց եկեղեցւոյ: Իսկ ոմանք ոչ յոյժ չարք, և ոչ յոյժ բարիք, որք ունին զմեղս ներելիս, և այ̄ պարտ է տանջիլ 'ի քաւարանի: Երկրորդ՝ զի որպէս ծայրագոյն բարութիւնն՝ ո՛չ թողու զբարութիւն առանց հատուցման բարւոյ, այսպէս և ծայրագոյն արդարութիւնն ոչ թողու զչարն մնալ առանց պատժոյ:

Երրորդն է, զի ա̄ծային լոյսն՝ է այնքան պատուականութե̄, մինչ զի միայն սուրբքն արժանի կարեն տեսանել զայն. ուստի պիտոյ է իւրաքանչիւր ումեք դառնալ 'ի սրբութիւնն, զոր ունէր 'ի մկրտութեան. և ապա կացցէ առաջի ա̄ծային տեսութեն: Չորրորդ՝ զի մեղքն է վիրաւորիչ ա̄ծային հանդիսավեհութե̄, և վնասիչ եկեղեցւոյ, և աղտեղացուցիչ ա̄ծային պատկերին որ 'ի մեզ: Այլ վիրաւորելութին խնդրէ զպատիժ. և վնասն զփոխարէն. և աղտեղութիւնն՝ զմաքրութի̄. վասն այսորիկ հարկ է՝ զի մեղացն պատասխանեսցէ պատիժ, կամ աստ. կամ յայլ ուրեք:

Հինգերորդն է, զի ներհակքն բժշկին ներհակօք. այլ արդ՝ մեղքն ծնանի 'ի ցանկութե̄, և 'ի վաւաշտութե̄. ուստի պարտի ջնջիլ պատժով:

Վեցերորդ, զի հեղգութիւնն ոչ ումեք պարտի լինիլ յօժանդակ. արդ՝ եթէ ո՛չ պատժիցիւր այնպիսին 'ի հանդերձելումն՝ երեւիւր ունիլ օգտութի ինչ 'ի հեղգութե̄, վասն յապաղելոյն զապաշխարութի̄:

Եօթներորդ, զի երանունքէ, թէ հոգին որ խո-

տե

տեսլով զծայրագոյն բարին՝ նուաճեաց զինքն ենթ ստորնագունի , այսինքն, մեղաց , յետոյ անկցի 'ի ներքոյ ստորնագունից , այսինքն , պատժոց ։ Իսկ յետ որոյ հոգիքն բաւականապէս իցեն մաքրեցեալք 'ի հրում , իսկոյն թռչին 'ի փառս ։ Եւ այս յայտ է բազում պատճառաւ ։ Նախ , զի յետ մաքրութ՟ե ոչ ինչ աննմանութ՟ի ընդ փառաց մնայ 'ի հոգին. ուստի իրանի պարտ է միաւորիլ ընդ նմա ։ Երկրորդ՝ զի դուռն երկնից միշտ է բացեալ նոցին՝ որք ոչ ունին զարգելումն ինչ ։ Երրորդ , զի հարկ է ոգւոց այնոցիկ 'ի յորս գոյ վերամբարձողական սէր , և ոչ ինչ յամեցուցական , վերանալ 'ի փառս ։ Չորրորդ՝ զի մ՟ծ է յօժարագոյն առ 'ի ողորմել՝ քան առ 'ի պատժել. իրաւն պարտի զմաքրեալսն միաւորել 'ի փառս , որ զմաքրելիս եդ 'ի ներքոյ պատժոց ։ Հինգերորդ , զի ոչ պատժէ մ՟ծ կրկին անգամ զոք՝ ընդ նոյնում . ուստի զի սա բաւականապէս կրեաց զփոխարէնն հրեղէն պատժովն. նմին իրի ոչ՝ պարտի վերստին պատժիլ յապաղելով 'ի փառաց ։ Վեցերորդ , զի յետ մաքրութ՟ե ոչ պարտի այնպիսին մնալ 'ի քաւարանի . և ոչ 'ի լիմպոսն , զի ոչ է 'ի թուոյ տղայոցն . և ոչ 'ի դժոխս , զի ոչ ունի զմեղս մահուչափս՝ ապաուրեմն պարտի լինել յերկինս . զի յետ մահուան ոչ գոն այլք օթևանք հոգւոց ։ Եօթներորդ՝ զի զօրեղագոյն է սէրն քան զանօրէնութ՟ի . այլ արդ՝ անօրէնութիւնն առժամայն ածէ 'ի տանջանս . ապաուրեմն և սէրն՝ իսկոյն ածէ 'ի փառս ։ Ութերորդ՝ զի ընդ դադարիլ արգելմանց՝ ծանր մարմինք քարշին 'ի վայր , և թեթևքն 'ի վեր , նոյնպէս հոգիք չարացն ընդ բացահեռանալն 'ի լծոյ մարմնոյ վասն ծանրութեան մեղաց՝ առժամայն տարեալ լինին 'ի տեղի տանջանաց. իսկ հոգիք բարեացն եթէ ոչ ունին զարգելումն ինչ մեղաց, կամ պատժոյ, իսկոյն տարեալ լինին 'ի տեղի փառաց ։

Յաղագս դժնդակութեան պատժոյ քաւարանին ։
ԳԼ․ Գ․

Ի Քաւարանն կրկին է պատիժ ։ Մինն է պակասութե․ այսինքն, զրկման ա̃ծային տեսութե ։ Եւ միւսն է զգայութեան ի այսինքն տանջանք հրոյ ․ և ըստ երկոցունս այսոցիկ՝ չնչին տանջանք քաւարանին՝ մեծագոյն է քան զա̃մ պատիժս աշխարհի ։ Եւ այս յայտ է 'ի պատիժն զրկման․ զի բաղձանքն որով տենչացեալ լինի ծայրագոյն բարին 'ի յամենից սրբոց յետ աստի կենացս, մեծագոյն է քան զտենչումն մեծագոյն ինչ իրի 'ի կեանս յայս ժամանակաւոր․ մանաւանդ՝ յորժամ հասեալ իցէ ժամանակ ունելոյն․ վասն այսորիկ դժուարագոյն իմն է տանիլ կարօտութեան նորին ։

Նաև յայտնի է այս 'ի պատիժ զգայութե․ վասն զի ցաւն էականապէս ոչ է նոյն ինքն վնասն․ այլ զգացումն վնասուն․ և այնքան առաւել ցաւի հոգին՝ որքան առաւել զգայ զզգայական իմն․ նմին իրի 'ի հրոյ որ առնէ 'ի յինքն, առաւել տանջի ։ Իսկ պատճառ դժնդակութե քաւարանի է այս․ վասն զի ա̃ծ առաւել խնդրէ զուղղութիւն քան զպատիժ․ վասն այսորիկ առաւել սիրէ 'ի յապաշխարութե զառաքինութ բարի կամաց, քան զպատիժ տանջանաց ։

Ուստի առաւել համարի զսակաւ կամաւոր պատիժ 'ի կեանս յայս, քան զբազում մեծագոյն անկամաւոր 'ի քաւարանն․ ո̃պ առաւել արժէ սակաւ ինչ ոսկին՝ քան զբազումս կապարս ։ Նմին իրի պիտոյ է՝ զի որ ինչ անդ պակասի 'ի կամս, վճարեսցի դժնդակութե տանջանաց ։ Արդ՝ վասն հրոյն որ մաքրէ զհոգին, ասելի է կրկնակի․ կամ ըստ այնմ որ միջնորդաբար տանջէ զհոգիս, և ըստ այսմ է մարմնաւոր․ և կամ ըստ այնմ որ մերձաւորագոյն տանջէ և անընդմիջաբար, և ըստ այսմ է անմարմին ։ Ըստ առաջնոյ կերպի ասի
Ա հուր ճշմարիտ․ ըստ երկրորդի կերպի ասի հուր նմանօրէն․ ո̃պ ասի առիւծ ճշմարիտ, և առիւծ նկարեալ ։ Եւ զերկոսին զայնոսիկ ասէ գրիգոր․ այրին 'ի նմա՝ յորժամ տեսանեն զայրեցումն ։

Քանզի մարմնաւոր հուրն այն կարէ իմանիլ կրկնակի ։

նախ ըստ այնմ որ է գործի բնութեան , և ըստ այսմ կարէ ներգործել 'ի մարմինս , և ոչ 'ի հոգի ։ Բ

Երկրորդ ըստ այնմ, որ է գործի ա̃ծայինն արդարութեան . և ըստ այսմ ներգործէ 'ի հոգին՝ տպաւորելով 'ի նմա զտեսակ իւր ընդ որում և տանջի իսկ . վասն զի բնութիւն ձեւանայ տեսակին այն ։ Զի ո̃պ ըստ կարգի բնութեան միաւորի հոգին ընդ մարմնոյ , զի կացուցանիցէ զկեանս . այսպէս և [illegible] ըստ կարգի արդարութեան միաւորի ընդ հրոյ , զի տանջեսցի 'ի նմանէ ։ Եւ ծանիր՝ զի դևք ոչ տանջեն զհոգիս 'ի քաւարանին . այլ տանին զնոսա անդ . և կամ կան առ ընթեր յանդիման . որպէս ասի հասարակաբար ։ Սակայն թոյլ տալովն ա̃յ 'ի կեանս այս՝ դևքն երբեմն տանջեն զարս բարիս . որոյ պատճառ է , զի 'ի ներկայս տակաւին մնայ պատերազմ 'ի մէջ դիւին և մարդոյն . որ և դևն ունի 'ի նմա զիշխանութիւն 'ի կրթել զնա . այլ յետ աւուր կենացս՝ ոչ այսպէս ։ Ուստի և աղջամղջին օդս այս Եփես 6.12. է մանաւանդ առաւել վասն գործոց փորձութեան , քան վասն տանջանաց ։ Այլ վասն տեղեաց տանջանաց թէ քանիք են , և ուր . խնդրեա՛ 'ի վեր անդր . 'ի չորրորդ գիրս . 'ի ԻԲ ճառն , իջանելոյ Քի 'ի դժոխսն ։ Սակայն գիտելի է վասն տեղւոյ քաւարանին , զի բացայայտի երկակի . կամ ըստ հասարակ տեղւոյ նր̃ . և ըստ այսմ է 'ի միում տեղւոջ , այսինքն , 'ի մի մասն դժոխոց , մերձ 'ի լիմբոսն հարց ։

Կամ ըստ յատուկ տնօրինելոյն , և ըստ այսմ մաքրին հոգիք՝ երբեմն 'ի զանազան տեղիս , ուր և մեղանչեցին ։ Եւ այս լինի վասն փարատելոյ նոցին 'ի տանջանաց իւրեանց՝ օժանդակութ̃բ այնոցիկ որոց երևին 'ի տեղիսն յայնոսիկ . նաև վասն շինութեան կենդանեաց ։

Արդ հուրն այն առաւել կամ նուազ տոչորէ՝ ըստ 1.կոր որում որք առաւել կամ նուազ ունիցին այրելի ըստ 3.12. նիւթեան ։ Քանզի պիտոյ է նախ քան զտեսանելն զերեսն ա̃յ , զի փայտն , եղէգն , և խոտն , այսինքն , մեծագոյնք , միջակագոյնք . և փոքրագոյնք ներելիքն՝ բոլորովին ծախեսցին տոչորմամբ ։ Արդ՝ նախասացեալ զանազանութիւն տանջանաց , ո՛չ է 'ի զանազանութե հրոյ այրողին կամ առնողին , այլ ենթակային կրողին . ո̃պ 'ի ներքոյ միոյ արեգական , մի ոմն առաւել ջերմանայ քան զմիւսն , ո̃պ ասէ Գրիգոր ։

Քանզի հարկ է , որպէս ասէ օգոստինոս , զի այնքան տևեսցէ ցաւն , որ քան յարեցեալ էր սէրն 'ի ժամանանախաւորս : Վասն զի այնքան չարչարեսցի ոք յերկար՝ որ քան ախորժակ նորին առնել կարենայր 'ի ներելի մեղս :

Յաղագս օժանդակութե՟ եկեղեցւոյ : ԳԼ. Դ.

Եւ որպէս վերաբերի առ խստութիւն ա՟ծային արդարութե՟ պատժել զբարիս՝ վասն ներելեաց 'ի քաւարանն , այսպէս վերաբերի առ բարութի՟ ողորմութե՟ն՝ զնոյն օժանդակութե՟ եկեղեցւոյ՝ թեթևացուցանել 'ի տանջանաց :

Ապաուրեմն օժանդակութիւնք եկեղեցւոյ են 'ի յօգուտ ննջեցելոց՝ ոչ առ արդիւնս յաւիտենական կենացն , այլ առ 'ի յազատութի՟ տանջանաց . կամ առ 'ի հանդարտութի՟ պատժոց . և կամ առ 'ի վաղագոյն ազատութի՟ : Արդ՝ չորք են ընդհանրականք օժանդակութիւնք եկեղեցւոյ , առ որս վերածին այլք ամենայնք , այսինքն , աղօթք , պահք , ողորմութի՟ , և պատարագ : Որոց բաւականութիւն առնել լինի այսպէս . քանզի մեռեալքն կարեն ազատիլ 'ի տանջանաց կրկին կերպիւ . կամ ճանապարհաւ շնորհաց , կամ ճանապարհաւ արդարութեան :

Արդ՝ ճանապարհաւ շնորհաց՝ կրկին կերպիւ : Նախ՝ յայտնի բարեխօսութե՟ գլխոյն մերոյ , որ է նուէր մե՟ պատարագին : Երկրորդ , ծածուկ և առանձնական մաղթանօք անդամոցն , այսինքն , աղօթիւք արդարոց : Նմանապէս և ճանապարհաւ արդարութե՟ երկակի : Մինով կերպիւ՝ տալով փրկանս պատժոյ , որ լինի առատաբաշխութե՟ ողորմութե՟ : Երկրորդ՝ հատուցմամբ տանջանաց . և այս լինի ըկանօք՝ պահոց : Իսկ եթէ խնդրեսցի թէ՝ յո՞րժամ ակնանիցի լինել 'ի յօգուտ մեռելոյն , այն զոր պատուիրեաց առնել ինքեան . ասելի է՝ թէ գործունեայ գործն , այսինքն արդիւնք առնողին՝ առժամայն օգնեն ննջեցելոյն , մ՟ պատուիրելոյն առնել 'ի բարեաց իւրոց զինչ մ՟ իւրոյ հոգւոյն՝ այլ գործեալ գործն , այսինքն պտուղ գործոյն այն , ոչ լինի նմա օգուտ՝ մինչև կատարեսցի . որոյ պատճառն է . քանզի առաջինն լինի օգուտ բացարձակ արդեամբք . այլ երկրորդն՝ թէական արդեամբք :

Ա

Յաղագս թէ որոց օժանդակութիւնք օգնեն, և առորս ։ Գլ. Ե.

Արդ՝ առայն՝ զի լինիցի յօգուտ օժանդակութիւն, խնդրի ինչ 'ի կողմանէ առնողին. և իր ինչ 'ի կողմանէ մեռեալ ընդունողին ։ 'Ի կողմանէ առնողին խնդրի՝ զի լինիցի 'ի սէրն. և զի զդիտաւորութիւն ուղղեսցէ առ այնոսիկ որոց կամի. զի գործ իւր լինիցի 'ի յօգուտ ։ Այսպէս զանազանելի է, զի օժանդակութիւնք 'ի ձեռն չարաց՝ կարեն լինել կրկին կերպիւ. կամ ըստ այնմ որ է առնօղ, և ըստ այսմ ոչ է օգուտ. մի թէ գուցէ արդեօք պատահմամբ, այսինքն, ըստ այնմ, որ մն̃ ողորմութե̃ չար մարդոյն՝ յորդորին բարի աղքատքն առ 'ի աղօթել վասն ննջեցելոյ ։ Եւ կամ ըստ այնմ որ է սպասաւոր. և այս ևս երկակի. զի կամ առնէ զայն իբրև յայտնի սպասաւոր ա՟ծ և եկեղեցւոյ, ո՟պ յորժամ չար քահանայն առնէ պատարագ՝ կամ հրակու՟մն ննջեցելոց, և այսպիսիքն միշտ օգնեն. զի չարութի̃ սպասաւորին ոչ վնասէ գործոյ՝ բարի առնողին. յայտ է 'ի յարդար Տ՟նէ, որ տայ ողորմութ̃ի ձեռամբ չար ծառային ։ Իսկ եթէ առնէ զայն ո՟պ սպասաւոր առանձնական անձին ուրուք կայացելոյ 'ի սէրն՝ թէ մեռեալ իցէ, և թէ կենդանի, նա և այսպիսիքս են յօգուտ. զի թէպէտ գործն այն է մեռեալ ըստ սպասաւորին, այլ ոչ ըստ հրամայողին ։ Այլ թէ չար սպասաւորն առնէ ինչ հրամանաւ այնմիկ որ ոչ է 'ի սէրն, ոչ է յօգուտ։ Իսկ խնդրի ինչ և 'ի կողմանէ ընդունողին առայն՝ զի օժանդակութիւնքն այնք օգնեսցեն նմա ։

Նախկինն է զի լինիցի 'ի սէրն. ուստի ոչ են օգուտ այնց որք են 'ի դժոխս՝ զի են անջատեցեալք 'ի խորհրդաւոր մարմնոյն Ք՟ի. վասն որոյ ոչ ինչ հոգևոր ազդումն հասանի առ նոսա. որպէս և ոչ ազդումն մարմնաւոր, լինի օգուտ հատեալ անդամոց ։

Երկրորդն է՝ զի լինիցին կարիք. ուստի երանեցելոցն ոչ օգտեն, զի ոչ են 'ի ճանապարհի. այլ յօթևանի. և ոչ ևս կարեն երանել 'ի բարձրագոյն այլ մանաւանդ օժանդակութիւնք նոցին՝ լիցի օգուտ մեզ ։

Այլ երկոքեան են 'ի յայնս՝ որք են 'ի քաւարանն, այսինքն, սէրն, և կարիքն ։ Ուստի ոպ՟ մարդ կարէ՝ հատուցանել զպարտս կենդանեաց ուրուք՝ զոր նա ոչ կարէ, այսպէս կարէ և վասն մեռելոյն ։ Եւ՝ գիտելի է՝ զի օժանդակութիւնքն լինին օգուտ ննջեցելոց՝ առաւել և նուազ՝ ըստ զանազանութե՟ն արդեանց մեռելոց . կամ ըստ սիրոյ կենդանեաց՝ որք առաւել հոգան վասն միոյն՝ քան միւսոյն ։ Քանզի այնք օժանդակութիւնք որք յատկապէս լինին վասն ումեք, առաւել օգտակար լինի նոցա՝ քան այլոց . թէպէտ և այլոց կերպիւ ինչ հաղորդեսցին ։ Իսկ օժանդակութիւնք որք Ա լինին հասարակաբար վասն ննջեցելոց, թէպէտ են օգուտ ամենեցուն ըստ կերպի իւրեանց, սակայն առաւել այնոցիկ՝ որք մինչ էին 'ի կեանս յայս՝ առաւել արժանացան այնմ, զի լինիցի օգուտ նց՟ ։

Արդ՝ թէպէտ ոպ՟ ասացեալ է, օժանդակութիւնքն ոչ լինին օգուտ այնոցիկ՝ որք են 'ի յերկինս . և ոչ որոց 'ի դժոխս . սակայն կերպիւ իմն լինիցի և յօգուտ նց՟ ։ Ուստի ծանիր՝ զի են օգուտ այնց՝ որք 'ի քաւարանն՝ ըստ կերպի մաքրութե՟ն . և են 'ի յօգուտ փրկեցելոցն որ 'ի յերկինս՝ ըստ կերպի միաւորութե՟ն . զի բազմութե՟ն փրկեցելոցն աճեցուցանէ զպատահական փառս ։ Նաև են օգուտ դատապարտեցելոց 'ի դժոխս՝ կերպիւ բաժանման, զի որքան յոլովք փրկին արդեամբք եկեղեցւոյ, այնքան սակաւք դատապարտին ։ և ըստ այնմ փոքրագոյն լինիցի տանջանք՝ վասն պակասութե՟ն ընկերակցութե՟ն նոցա ։ Այլ և են օգուտ առնողացն ըստ կերպի արդեանց ։ Իսկ վասն զի և յաղագս մեռեալ տղայոցն ասեն զննջեցելոց պատարագ, այս ոչ լինի վասն կարեաց նոցա . զի նոքա առժամայն թռչին առ փառս . այլ միայն առ 'ի գոհութե՟ն մատուցանել Տն՟ ։

Եթէ ներողութիւնք օգտիցեն ննջեցելոց ։
Գլ. Զ.

Ներողութիւնքն որք լինին տուեալք 'ի ծայրագոյն քահանայապետէն հռոմայ, լինին 'ի յօգուտ ննջեցելոց որք են 'ի քաւարանն ։ Եւ այս յայտ է, զի երբեմն տուեալ լինի նշան խաչին վասն երկուց ննջեցելոց, կամ երից, երբեմն վասն չորից, եւ երբեմն վասն տասանց հոգւոց քաւարանին՝ այնոցիկ որք կամին ելանել ընդդէմ անհաւատից 'ի պատերազմ ; Քանզի յեկեղեցւոջ է գանձ արդեանց Քի, եւ կատարեալ արանց · զորոց ունի զբանալիսն պապն միայն · որ վասն հարկաւորութեան եկեղեցւոյ՝ կարէ առնուլ, եւ բաշխել ։ Մատ. 16. 19. Յոհ. 21. 15.

Իսկ այլք եպիսկոպոսունք · ոչ ունին 'ի յայսոսիկ զընդհանրական իշխանութիւն, այլ զկզերեցեալ · եւ որպէս նա աւանդէ նոցա ։ Արդարեւ ասելի է թէ պապն յատկապէս ոչ արձակէ զմեռեալս 'ի տանջանաց, այլ հատուցանէ վասն նոցա 'ի հասարակ գանձուց եկեղեցւոյ · ոմ̄ այլով կերպիւ ազատէ փոխատուն զպարտապան՝ յորժամ արձակէ զնա 'ի պարտուցն · եւ այլով կերպիւ բարեկամ պարտապանին, յորժամ վասն նորա հատուցանէ զպարտսն ։ Այլ զկենդանիս երկոքումբք արձակէ պապն, այսինքն, որպէս փոխատու · եւ որպէս բարեկամ պարտապանի · իսկ այնոցիկ որոց տուեալ լինի թողութիւն, ոչ կարեն զայն տալ այլում · ոչ կենդանեաց, եւ ոչ մեռելոց ։ Եւ այս վասն երկուց պատճառաց ։ Նախ՝ զի թողութիւն ոչ է պարգեւատուօղ շնորհաց · այլ բարձօղ պատժոց, եւ պակասեցուցանօղ · եւ զի պակասութիւն ոչ ինչ է, նմին իրի ոչ կարէ հաղորդիլ այլոց ։ Երկրորդ՝ զի տալ զթողութիւն վերաբերի առ իշխանութիւն · զոր ոչ ունին աշխարհականք · ուստի նոքա կարեն ընդունիլ զթողութիւն, այլ ոչ կարեն բաշխել մեռելոց զներողութիւն իշխանութբ̄ · բայց միայն օժանդակութբ̄ բարի գործոց իւրեանց՝ հանդերձ սիրով ։ Իսկ պապն զերկոսեանն կարէ, այսինքն, իշխանութբ̄ · եւ օժանդակութբ̄ ։

Յաղագս գալստեան Նեռին : ԳԼ. Է.

2. Թեսս. 2.7. Նախ քան զգալուստ Տն՟ 'ի դատաստան դադարեսցի Տէրութիւն հռօմայեցւոց : Զի 'ի վերայ բանին երկրորդ. Թեսաղոնիկեցւոյ երկրորդի գլխոյ . եթէ ոչ նախ եկեսցէ ապստամբութիւն , և յայտնեսցի մարդն անօրէնութեան . ասէ մեկնիչն . նախ լինել բաժանումն 'ի յերկրացունց կողմանց Տէրութեանն . և յետ այնորիկ առ ժամոյն եկեսցէ Նեռն : Սա յղանիցի 'ի սերմանց ծնողաց . այլ յետ յղութեան իջանէ ոգի չար 'ի յորովայն մօրն . որոյ զօրութբ՟ և ներգործութբ՟ ծնցի մանուկն՝ անանիցի և հասանիցի յերիտասարդութի՟ . վասն որոյ և ասի որդի կորստեան : Արդ՝ ծնանի 'ի բաբիլօն 'ի ցեղէն դանայ . որպէս ասէ մեկնիչն 'ի մեկնութեն տեսլեանն յոհաննու : Եւ յետ այնորիկ եկեսցէ յերուսաղէմ, և թլփատեսցէ զինքն . և ասասցէ հրէից՝ թէ եսեմ քս՟ խոստացեալն ձեզ . և հրէական ժողովն յարեսցի 'ի նա . որպէս ասէ այխմ 'ի մեկնութեն տեսլեանն :

յայտն. 11.3. Մինչև Ենովք և Եղիա քարոզեսցեն . և յայնժամ հաւատասցեն 'ի Քս՟ այնոքիկ՝ որք փրկելիք են նոքօք : Հրեշտակ բարի՝ նախ կարգեսցի 'ի պահպանութիւն Նեռին , այլ յորժամ խստանայցէ 'ի մեղս՝ այնպէս՝ մինչ զի ասասցէ զինքն գոլ ած՟ , և հպարտանայցէ 'ի վերայ ամ՟ի որ անուանի ած՟ , և կամ պաշտի . որպէս ասէ առաքեալն . յայնժամ 'ի բաց կացցէ 'ի նմանէ հրեշտակն բոլորովին . զի յետ այնորիկ ոչ ունիցի զնա առ 'ի պահպանութի , այլ մանաւանդ առ 'ի ամբաստանութիւն : 2. Թեսս. 2.4.

Յաղագս չար վարուց Նեռին ։ Գլ. Ը.

Նեռն եղիցի բղջախոհ , և 'ի ցանկութիս կանանց՝ որպէս ասէ դանիէլ . բայց ըստ վերերևութեան , ցուցանէ զսրբութի , զի դիւրաւ կարիցէ խաբել ։ դան. 11.37.

Զսիրտ իւր մեծացուսցէ ամբարտաւանութբ . և ո՟պ ասէ դանիէլ 'ի ը՟ գլուխ ընդդէմ իշխանաց իշխանին յարիցէ , դան. ընդդէմ ա՟յ ։ Եւ որպէս ասէ մեկնիչն 'ի 11.36. վերայ դանիէլի ը՟ գլխոյ , և այնքան հպարտութիւնն բարձրասցի , մինչ զի ջանասցէ փոխել զօրէնս , և զկրօնս , և զընթացս ժամանակաց ։ Նաև այնքան ունիցի զյանդգնութի , մինչ զի ոչ համարեսցի պատժիլ 'ի յա՟յ . վասն զի յապաղի դատաստանն . ո՟պ ասի 'ի սաղմոսի . բարձեալք են իրաւունք յերեսաց ն՟ր ։ սաղ. 10.5.

Այլ և լինիցի հայհոյիչ . որպէս ասի 'ի տեսլեան ։ յայտ. 12.6.

Սուտ ասէ դանիէլ . խօսեսցի բան ընդդէմ բարձրելոյն . և առ 'ի մեծագոյն նախատինս ա՟յ , տացցէ երկիրպագանել պատկերին իւրոյ . և զամենայնն դան. 11.36. դրոշմեսցէ նշանով իւրով 'ի ճակատն՝ և 'ի յաջոյ ձեռին . ըստ տեսլեանն յոհաննու ։ Նաև խոստովանեսցի զինքն ճշմարիտ որդի ա՟յ , և որդի մարդոյ . մինչ յայտ. 13.16. զի նստցի 'ի տաճարին ա՟յ որպէս թէ ինքն իցէ ա՟ծ . և տացէ երկիր պագանել ինքեան ։ Քանզի հրէայքն մատ. 24.15. շինեսցեն զտաճարն , զոր հռոմայեցիք աւերեցին ։

Եւս և ասասցէ՝ թէ յառաջ քան զիս ոչ ոք էր ճշմարիտ քրիստոնեայ . այլ ամենեքեանք նեռինք ։ 2. թես. 2.4.

Նաև ասէ մեկնիչն 'ի վերայ կողոսացւոց . թէ որպէս 'ի ք՟ս բնակի ա՟մ լրումն ա՟ծութե , այսպէս և 'ի նեռն ա՟մ լրումն անօրէնութե . զի 'ի նմա բնակի գլուխն ա՟մ չարեաց սատանայ ։ կող. 2.9. Ա

Յաղագս չորից կերպից, որովք խաբեսցէ նեռն:
Գլ. Թ.

Ծննդ. 49. 17. Յիրաւի համեմատի նեռն սերաստէս օձին: Որպէս ասի 'ի Ծննդոցն, դան՝ օձ դարանակալ. քանզի սերաստէսն՝ է օձ եղջերաւոր որ նշանակէ զնեռն՝ որ զինեսցի չորիւք եղջերօք, այսինքն, խորամանկ յորդորմամբ. սքանչելագործութ՟բ. առատելութ՟բ պարգեւաց. եւ խստութ՟բ տանջանաց: Արդ՝ առաջին կերպն պատրելոյ զմարդիկ, լինի խորամանկ յիշեցումն. քանզի քարոզեսցէ թիւր գոլ զաւետարանական օրէնս. եւ ըստ կարողութեն իւրոյ ջանասցէ խափանել: Եւ՟ քարոզիչք նորին սփռին ընդ ա՟մ կողմանս աշխարհի, եւ արգելուցուն զվարդապետս ուղղափառս՝ զի մի՛ քարոզեսցեն, եւ կամ մեկնեսցեն զգիրս սբ՟ս ըստ ճշմարտութե՟ն. նաեւ զհաւատացեալսն արգելուն 'ի լսելոյ զբանս ա՟ծայինս: Իսկ նոքա կեղծաւորութ՟բ բարի ցուցանեն զինքեանս. սակայն ուսուցանիցեն զչարիս: 1. Տիմ. 4. 1. Երկրորդ կերպն պատրելոյ զմարդիկ՝ եղիցի սուտ սքանչելագործութ՟բ. զի կախարդական արհեստիւ առնէ զայն: Որպէս մեկնիչն 'ի մեկնութե՟ն տեսլեան Ժգ. գլխոյ ասէ, թէ կախարդական արուեստիւ արասցէ խօսիլ բագնեաց, եւ զհանդերձեալն նախապատմել: Նաեւ արասցէ, որ՟ ասէ տեսիլն՝ հուր իջանել յերկնից. զորմէ ասէ մեկնիչն, այսինքն, զչար Յայտ. 13. 13. ոգի իջուցանէ 'ի վերայ իւրոցն. զի խօսեսցին այլ եւ այլ լեզուս: Քանզի պիղծ ոգին իջցէ 'ի նոսա առաջի մարդկան, որպէս ոգին սբ՟ էջ 'ի վերայ առաքելոցն Ք՟ի: Որպէս պարծեսցին զինքեանց գոլ լաւագոյն քան զառաքեալս Ք՟ի, որք առին զոգին սբ՟ 'ի վերնատան ներփակեցելոյ: Դարձեալ՝ կախարդական արուեստիւ երեւեցուցանէ զինքն մեռեալ. եւ վերասցի 'ի գինւաց 'ի յօդս, որպէս թէ ելանիցէ յերկինս. եւ այսպէս համարիցի յամենեցունց՝ յարուցեալ. որ նախ կարծեցեալ լինիւր երեքօրեայ մեռեալ. եւ յայնժամ սքանչասցին ժողովուրդքն, եւ երկիրպագցեն նմա, եւ գովեսցեն զնա: Իսկ եկեղեցի յայնժամ ո՟չ արասցէ զսքանչելիս: Արդ՝ զկերպն խաբէութեան

այսո

այսորիկ՝ ասէ սաղմոսն . դարանի դաղոնի՝ ոպ̄ առիւծ սաղ. 10.9.
'ի մորւոջ իւրում . ուր ասէ մեկնիչն . իրաւի նեռն
համեմատի առիւծու՝ դարանեցեալ 'ի յորջս . զի 'ի
նմա ուժեղութի և խաբէութի ներգործի . քանզի
ուժն իմացեալ լինի առիւծիւն, և նենգութի որջիւն ։
Եւ գրիգոր ասէ . 'ի միտ ածցուք թէ որքան իցէ
մարդկային մնաց փորձութին այն , յորժամ բարե-
պաշտ մարտիրոսն զմարմին իւր ստորադրէ տանջա-
նաց . սակայն տանջողն առաջի աչաց առնէ զքանչե-
լիս ։ Եւ ոպ̄ նեռն ցուցանէ զինքն յարուցեալ 'ի մե-
ռելոց , նոյնպէս երևեցուցանէ և համբառնալ 'ի յեր-
կինս . զի ասէ տեսիլն 'ի ծգ գլուխն ; վէրք մահու յայտ.
նորա բժշկեցան . ուր ասէ մեկնիչն . կախարդական 13.3.
արուեստիւ ելանէ նեռն 'ի յօդ՝ վերացուցանելով
զնա դիւաց ։ Նաև զծառս փութով ծաղկեցուցանէ ,
և չորացուցանէ . զծովս խռովեցուցանէ . զբնութիս
'ի զանազան ձևս փոխէ . այլ և զմեռեալս յարու-
ցանէ առաջի մարդկանց ։ Երրորդ՝ խաբեսցէ տրօք .
քանզի ինքն նեռն գտանիցէ զգանձս ծածկեալս ,
որովք խոնարհեցուցանէ զքաղաքս՝ երթալ զկնի նր̄ ։
փարթամացուցէ զմեծատունս աշխարհիս այսորիկ .
և յայնժամ զսուտ բարեբաստութի նոցա՝ ցուցցէ այ-
լոց՝ առ 'ի խաբել և զնոսա ։ Չորրորդ՝ բռնադատես-
ցէ զնոսա սպառնալեօք , և տանջանօք , զորս այլ կեր-
պիւ ոչ կարասցէ յաղթել ։ Իսկ այնքան եղիցի նե-
ղութի . ոպ̄ ասէ Տ̄ր̄ն . զի թէ հնար իցէ՝ ածցեն 'ի մատ.
մոլորութին այն , և ընտրեալքն ։ Եւ այս ուսուցանի 24.24.
'ի տեսլեանն՝ ուր ասի . ոտք նորա 'ի նմանութի պղնձի յայտ.
որպէս 'ի վառեալ հնոցի ։ Ոտիւքն նշանակին յետին 1.15.
անդամքն Ք̄ի . և վառեալ հնոցիւն , սաստիկ նեղու-
թին ։ Քանզի չարչարեսցէ ամ̄ ազգ տանջանօք . որովք
առաջին մարտիրոսքն տանջեցան . այլ 'ի ժամանն այն
սաստկագոյն չարչարեսցին հաւատացեալքն , ուր և
Տ̄ր̄ն իսկ խաչեցաւ ։ Եւ որպէս ասէ այլոմ̄ , 'ի մեկ-
նութեն տեսլեանն . փորձութին այն՝ ոչ մասն մասն ,
այլ զբոլոր աշխարհս համանգամայն փորձեսցէ ։
Քանզի արձակեսցին դևք՝ որք այժմ կապեալք են ,
և ոչ կարեն վնասել որքան կամին ։ Հաւատացեալքն
յայնմ ժամանակի՝ իբրև բանադրեցեալս համարեսցին,
և ոչ վաճառեսցեն նց̄ ինչ . և ոչ գնեսցեն 'ի նոցանէ,
եթէ ոչ ունիցին զկնիք , այսինքն, զնշան ինչ դրոշմ զի
յարեցեալքն 'ի նա՝ ճանաչեսցին, և այլքն սպանցին ։

Նաև ունիցին զնշան գազանին. այսինքն, զխոստովանութի բերանոյն. և զթիւ անուան նր՟, այսինքն, զբազմութի գործոյն. ոպ՟ ասէ տեսիլն: Արդ՝ որպէս
յայտ. 13.17. նեռն լինիցի անողորմ՝ քան զամ՟ հալածիչսն, այսպէս սք՟ ժամանակին այնորիկ՝ լինիցին զօրեղագոյնք քան զամ՟ յառաջագոյն մարտիրոսսն:

Յաղագս հետևողաց նեռին: Գլ. Ժ.

ՆԱխստացեալ չորեք եղանակօք՝ նեռն քարշէ ընդ ինքեան զբազումս. ուստի ասէ տեսիլն. տուտ նր՟ քարշէր զերրորդ մասն աստեղացյերկնից՝ ի յերկիր:
յայտ. 12.4. Արդ՝ քարշեսցէ զչարսն՝ որք. զբարեսն՝ տանջանօք. զպարզամիտսն՝ քարոզութբ՟, և սքանչելեօք: Քանզի որք արդարք սք՟ կարծեալք լինէին, յարեսցին ՚ի նա՝ իւրեանց անձնիշխան կամօք. թէպէտ ոչ ամենեքեան: Ունիցի ընդ ինքեան զկախարդս, և զչարագործս, զթագաւորս, և զիշխանս. ուստի ասէ ՚ի
յայտ. 13.1. տեսիլն, տեսանէի զի ՚ի ծովէ ելանէր գազան. որ ասէ մեկնիչն, այսինքն, նեռն. և ունէր զգլուխ եօթն, այսինքն, զամ՟ իշխանս: Եւ զեղջիւրս տասն, այսինքն՝ զայնոսիկ որք մարտնչին ընդդէմ տասնաբանեան օրինացն: Արդ՝ ծանիր, զի նեռն նախ ցուցանէ զբարեպաշտութի, և զսքանչելագործութիւն, և
յայտ. 11.3. յայնժամ՝ ընկալեալ լինի ՚ի հրէից. որք յառակապէս յարեսցին ՚ի նա. և առ ՚ի դարձուցանել զնոսա՝ եկեսցեն
մաղ. 4.5 Ենովք, և Եղիա. և յայնժամ՝ նեռն յայտնապէս յարուցանիցէ զհալածանս:

Յաղագս գողգայ և մագողգայ: Գլ. ԺԱ.

ԼԱն գողգայ և մագողգայ, ասենոմանք՝ թէ են տասն ցեղքն իսրայէլի. որք փակեցան ՚ի մէջ լերանցն կաղբից, սակայն ոչ այնպէս՝ զի մի՛ կարասցեն ելանել՝ եթէ թոյլ տուեսցի նց՟, այլ ոչ տայթոյլ ելանել դշխոյն ամազոնայ. ենթ որոյ թագաւորութեն և Տէրութեն կեան:

Զոր-

Զատա ասեն հրէայքն 'ի կատարածի աշխարհի եղանել և գալ յերուսաղէմ. և իւրեանց մեսիայիւն ամերել զեկեղեցի : Այլ ասեն՝ թէ գովգաւ, և մագովգաւ իմացեալ լինին զօրք նեռին . որ 'ի կատարածի աշխարհի եկեսցեն մարտնչել ընդ եկեղեցւոյ . քանզի գովգաւն՝ ըստ մեկնչին, իմացեալ լինին այնոքիկ որովք սատանայ գաղտաբար հալածեսցէ զհաւատացեալս : Իսկ մագովգաւ, այնք՝ որովք յայտնապէս տանջի եկեղեցին : Կամ նոյնք, որք 'ի ժամանակի նեռին նախ գաղտաբար, և յետոյ յայտնապէս հալածեսցեն զեկեղեցի : Իսկ ըստ օգոստինոսի, գովք այսին հեթանոսք . իսկ մագովք, սատանայ . զի գոգն թարգմանի գաղտնութիւն . իսկ մագոգն, յետս ընկղկումն . կամ կործանումն : յայտ. 20.7.

Յաղագս եղիայի, և ենովքայ : Գլ. ԺԲ.

Ի ՄԷՋ գաղտնի գալստեան նեռին, որ է ծնունդն . և յայտնի գալստեանն, որ է թագաւորութիւն, և յայտնապէս հալածումն եկեսցեն ենովք, և եղիա . և դարձուցանիցեն զսիրտ հարցն յորդիս . որպէս ասէ մաղաքիաս, այսինքն, ուսուցանեն զանցելոցն . զհաւատոյ փրկչին . յոր և ինքեանք հաւատացին: մաղ. 4.5. Եւ դարձուցանեն զսիրտ որդւոց առ հարս . ուր ասէ մեկնիչն . զի ընկալցին զհաւատն՝ զոր նոքա ունէին : Ուստի հրէայքն, և քրիստոնեայք՝ յայնժամ հաւատասցեն նոյնով կրօնիւ և պաշտեսցեն զՔս : Արդ՝ վասն քարոզութե նոցին և սբ վարուցն ասի 'ի տեսլեանն . տաց երկուց վկայից իմոց, այսինքն, եղիայի, և ենովքայ . և մարգարէասցին, այսինքն, քարոզեսցեն՝ յաւուրս հազար, երկերիւր և վաթսուն : յայտ. 11.3. Ուստի ասէ մեկնիչն, այսինքն, երեք ամս ու և կէս . որպէս և ինքն Քս քարոզեաց : Եւ ագանիցեն խորգ . ուր ասէ մեկնիչն, զի զապաշխարութիւն քարոզեն և ցուցանիցեն զբարի օրինակս . նոքա են երկու ձիթենիքն . այսինքն, օծեալք ոգւով սրբով . և երկու աշտանակքն, այսինքն որք տան զլոյս այլոց : Յետոյ նեռն սպանանէ զնս յերուսաղէմ . և անկեալ կացցեն մարմինք նց 'ի հրապարակս, զերիս տիւս, և զերիս գիշերս . զի ոչոք համարձակեսցի թաղել զնս, վասն ահի նեռին. իսկ սպաննողքն ուրախասցին ՚ի մահ նոցա. և յետ երից աւուրց և կիսոյ յարիցեն. և սպաննողք նոցին լուիցեն զայսպիսի բարբառ. Եղիա և Ենովք. ելէք աստ. և ելանիցեն յերկինս ամպովք: Իսկ նեռն թագաւորեսցէ հնգետասան օր յետ մահուան նոցին:

Յաղագս յամելոյ հալածանաց: Գլ. ԺԳ.

ԹԱգաւորեսցէ նեռն. որպէս ասէ մեկնիչն
՚ի վերայ բանի առաքելոյն. զերիս ամս,
Դան. 12.7. և զվեց ամիս: Ուստի ասէ դանիէլ ՚ի
ժԲ գլուխն. երդուաւ հրեշտակն ՚ի
կենդանին յաւիտենից, զի ՚ի ժամանակ,
որ է ամ մի. և ժամանակք, որ է երկու
ամ. և ՚ի կէս ժամանակի, այս է կէս ամ:
Մատ. 24.22. Ուր ասէ մեկնիչն, ՚ի յայսքան միջոցի լինի հալածումն
նեռին, որպէս ասէ մատթէոս, եթէ ոչ կարճեին
աւուրքն այն: Ուր ասէ գրիգոր, քանզի անբարտաւանս և տկարս տեսանէ զմեզ ա՟ծ, զաւուրս չարագործս յառաջապէս ետ ա՟ծ ողորմութ՟բ կարճեալս ասէ: Եւ մեկնիչն ՚ի վերայ մատթէոսի ասէ. նեղութիւնն այս որքան ծանրագոյն քան զայլս՝ այնքան հանդարտագոյն կարճութ՟բ:

Յաղագս մահուան նեռին: Գլ. ԺԴ.

ՏԷր իշխանութ՟բ իւրով սպանցէ զնեռն,
2.Թես. 2.8. որպէս ասէ մեկնիչն ՚ի վերայ տեսլեան
յօհաննու. եթէ ինքեամբ, և եթէ ՚ի
ձեռն միքայելի: Արդ՝ սպանցի ՚ի լեառն
ձիթենեաց՝ ՚ի վրանի և յաթոռ իւր ՚ի
տեղին ուստի համբարձաւ Ք՟ս:
Իսկ ըստ սպանանելոյ նեռին՝ ոչ առժամայն գայցէ Տ՟ր ՚ի դատաստան, այլ ըստ մեկնչին որ
Դան. 12.13. ՚ի վերայ դանիէլի, տացի քառասուն և հինգ օր առ ՚ի
հանգիստ սրբոց, և ՚ի յապաշխարութի թիւրելոց:
Եւ թէ որքան միջոց լինիցի ՚ի մէջ քառասուն և հնգից աւուրցն այնոցիկ, և կատարածի աշխարհիս, ոչ ոք գիտէ: Իսկ արբանեակք նեռին յետ մահուան

նր

նորա ուրախասցին · և տացեն իւրեանց կանոյս`, և ասասցեն · Թէպէտ մեռաւ Իշխան մեր, սակայն մեք ունիմք զիշխանութի · զանհոգութի, և զխաղաղութի: Մինչ ասասցեն զայնպիսիս, յանկարծակի եկեսցէ ՚ի վերայ նց սատակումն : Եւ հրեայքն յայնժամ դարձցին ՚ի հաւատս : Եւ ոք եկեղեցին մինչև ՚ի կատարած աշխարհի խաղաղութբ հանգիցէ · զի յայնմ հետէ պատրանք և դժնդակութիւնք սատանայի նուաղեսցին : մատ. 24.38. Ա երեմ. 33.7. մատ. 28.20.

Յաղագս այրման աշխարհի : Գլ. ԺԵ.

Հուր մեծ ընթանայցէ առաջի երեսաց դատաւորին, զի ամենայն զօրութբ ոչ միայն հուրն այն որ է յիւրում պարունակի, այլ ամ հուր որք են յերկինս, և ՚ի վերայ երկրի, միահամուռ ժողովեսցին ՚ի այրումն աշխարհի : Արդ՝ հուրս այս ունիցի զգործ չորից հրոց, այսինքն, զժոխային հրոյ՝ պատժելով զանարժանսն · զքաւարանի հրոյ, մաքրելով զբարիս ՚ի ներքի մեղաց · զերկրաւոր հրոյ՝ ծախելով զունկայնս, և զզգայականս · և զմարմինս ամ մարդկան դարձուցանելով յաձինն · և զաստղական հրոյ՝ անօսրացուցանելով և տրամադրելով զտարերս առ ՚ի նորոգումն : սաղ. 96.3. եսայ. 66.15.

Արդ՝ հրովն այնու այրեսցին երեսք երկրի · և կորիցէ ձև աշխարհի այսորիկ՝ ոչ կանխաւ եղև ջրհեղեղաւ: Եւ յիրաւի առաջին դատաստանն ոչ եղև ջրով ընդդէմ ջերման բղջախոհութե, որ զօրանայր յայնժամ: Իսկ վերջին դատաստանն լինիցի հրով ընդդէմ ցաղջութե սիրոյն, որ յայնժամ իբր թէ ընդ ծերանալ աշխարհիս ցրտանայցէ : Եւ գործ հրոյ այսորիկ լինիցի միջնի միոյ · քանզի ունի զսկիզբ · զմէջ, և զվախճանս: Քանզի նախ ժամանեսցէ քան զգալուստ դատաւորին · և իբր թէ համանգամայն հրովն այնու լինիցի մաքրութի արդարոց, և պատժումն չարաց, և յաձինն դարձումն մարմնոց, և ծախումն ամ բուսոց : Եւ ընդ լինելն այսոցիկ՝ լինի առժամայն յարութիւն մարմնոց · և եկեսցէ դատաւորն ՚ի դատաստան · և յայնժամ բորբոքեսցի ամ աշխարհ շուրջանակի : ծննդ. 7.11.

Իսկ ընդ աւարտիլ դատաստանին · ամ ջերմութիւն

հրոյն այնորիկ կատարեսցէ զվճիռ դատաւորին. քանզի
շուրջ պատեսցէ զմեղաւորօք, և քարշեսցէ զնոսա
՚ի դժոխս : Եւ յայտ է, զի հուրն այն յառաջեսցէ
քան զգալուստ դատաւորին. համ ընթասցի, և հետևեսցի :
Եւ յետ աւարտելոյ լինիցի նորոգումն աշխարհի.
այլ ՚ի մէջ մաքրութեան և նորոգութեան, է
բազում զանազանութիւն : Նախ՝ զի մաքրութիւն
լինիցի ՚ի բաց բարձումն պատժական որակութեանց.
այլ նորոգումն լինի ՚ի զգեցումն գեղեցկագոյն տեսակի :
Երկրորդ. զի մաքրումն է փոփոխումն տարերց
յանմաքրութենէ ՚ի մաքրութիւն, զոր ունի ՚ի խառնմանէ.
իսկ նորոգումն երկնից՝ է՛ փոփոխումն ՚ի յորպիսութենէ
հնոյ՝ ՚ի յորպիսութիւն նորոյ. և այս դադարմամբ
՚ի շարժմանէ : Քանզի յերկինս՝ վասն անխառնութեան
ոչ է անմաքրութիւն ինչ այլ միայն անկատարութիւն
շարժման : Ուստի ոչ եղիցի ՚ի նոսին մաքրութ
Ա հրով. այլ դադարումն ՚ի շարժմանէ : Արդ՝ այնպէս
մաքրեսցին տարերք, մինչ զի ՚ի հրոյն հատանիցի այրեցողական
զօրութիւն. և մթութիւն ՚ի օդոյ, սառուցական
ցրտութիւն ՚ի ջրոյ. ծանրութիւն և խաւարամածութիւն
՚ի հողոյ. և եղիցի ոպ զապակի և զբիւր

Յաղագս ընդհանուր յարութեան : Գլ. ԺԶ.

Ած որպէս է ամենակարող ՚ի կայացում
բնութեանց, այսպէս է ամենագթած ՚ի
1.Կոր. պարգևումն շնորհաց, և ամենարդար ՚ի
3.10. հատուցումն Թօշակաց : Եւ արդ՝ զի
մարդն արժանաւորեցաւ, կամ անարժանաւորեցաւ,
այն եղև համանգամայն
հոգւով և մարմնով. նմին իրի երկոքումբք
վարձատրեսցի, կամ պատժեսցի. ուստի նոյնիւք
2.Թես. պարտի յառնել : Արդ՝ ձայնիւ փողոյ յարիցեն
4.15. մեռեալք. ոպ ասէ առաքեալն : Իսկ կրկին կերպիւ
1.Կոր. իմացեալ լինի ձայնն այն. քանզի ըստ ոմանց՝ ձայն
15.52. փողոյն է հրամանն քն. հրամայողի զյարութիւն. բայց
ըստ այլոց՝ ձայն փողոյ է յայտնի երևումն քի :
Ուստի ասէ գրիգոր, հնչել փողոյն ոչ այլինչ է, քան
ցուցանել աշխարհի զորդին այ դոլ դատաւոր :
Արդ՝ յարիցեն համանգամայն ամենեքեան ոչինչ զանազանութիւն
եղեալ ՚ի նոսա, ըստ կարգի ժամանակի

այլ եղիցի մեծ զանազանութիւն ըստ կերպի պատուոյ։ Զի չորք յարիցեն ազգեք և չարչարելք · իսկ 'ի բարեաց բնութիւն պահեսցի և մոլութիւք բարձցին ։

Ա
եփես. 4.13.

Այլ ամենայնք բարիք և չարք յարիցեն ամբողջ մարմնով պատշաճաւոր հասակաւ ըստ տիոց կատարման Քի ։ Արդ՝ յարութիւն զերիս իրս ուղղեսցէ 'ի բնութիս, այսինքն, զպակասութի, որպէս 'ի տղայս, և 'ի յանդամահատս · կամ՝ 'ի նուաղեալ բնութի անդամոցն ։ Եւ զաւելորդսն, այսինքն, եղնգանց, և հերաց · և սոյնպիսեաց ։ Զխամրութի, որպէս է, խանգարումն անդամոց ։ Նաև յարիցեն մարմինքն նոյն թուով, որ նախ էին · 'ի նոյնոյ հողոյ՝ յոր տարալուծեցան, մինչ զի յոր կողմն և 'ի խորշս հասեալ իցէ փոշին, դառնայցէ այն առ նոյն հոգին, որ զնոյն յառաջագոյն հոգևորեաց՝ զի կեցցէ և աճեսցի ։ մատ. 24.11.

Եւ ոչ միայն յարիցեն մարմինքն ըստ նախնական անդամոց, այլ և ըստ հերաց՝ և ըստ այլոց որք էին 'ի գեղեցկութի մարմնոյն ։ Քանզի յարիցեն մարդիք ըստ գունոյն, և ըստ ամբողջ գունոյն, և ըստ գեղեցիկ գունոյն · և յարիցէ իւրաքանչիւր մարմին 'ի բարեգոյն և 'ի նախկին գոյ իւր ։ Եւ որպէս կրկին է մահ, այսինքն, հոգւոյն մեղօք, և մարմնոյն տանջանօք · այսպէս պատասխանէ նմա կրկին յարութի, այսինքն, հոգւոյն շնորհօք, և մարմնոյն փառօք · և ոպ 'ի նախկին ծնողն մահն մեղաց եմուտ զմահ պատժոյ, այսպէս յարութի հոգւոյն շնորհօք, պատճառեսցէ զյարութի մարմնոյն փառօք։ 'Ի յարութեն համահաւաքեսցին չորք պատճառք, այսինքն, առնողական, որ է Ած · նիւթական որ է հողն · տեսական որ է միաւորութի հոգւոյ և մարմնոյ · կատարունական · այսինքն, զի ընդունիցի իւրաքանչիւրոք զոր ինչ արար մարմնովն եթէ չար, և եթէ բարի։ Յայնժամ յարիցեն մարդիք արագապէս ամբողջօրէն, ընկերակցապէս և յաւիտենականաբար ։ Լինիցի յարութին այն արդար՝ ըստ Այ · կատարեալ՝ ըստ յարուցելոյն · սքանչելի՝ ըստ յարութեան ։ հռօվ. 6.4 եբր. 9.28. 2.կոր. 5.10. փիլիպ. 3.21.

Յաղագս վերջին դատաստանի: ԳԼ. ԺԷ.

Յետ յարութեան խնդրոյն լիցի դատաստան. այլ յառաջ քան զդատաստանն զայն՝ լինին երեք հրաւէրք կոչման: Առաջինն եղև մարգարէիւք. առակ. 1.24. ուստի ասէ կոչեցի և հրաժարեցայք: Երկրորդն՝ առաքելովք, ղուկ. 14.17. և քարոզողօք, որպէս ասէ ղուկաս, առաքեաց զծառայս իւր:

Երրորդն, լինիցի վերջին ձայնիւ փողոյն, և հրաւէր կոչմանս այսորիկ՝ լինիցի վերջնական: Արդ՝ ըստ ռիքարդոսի՝ երեքկին է դատաստան: Առաջինն է միաձև, այսինքն, դատաստան այժմեայ եկեղեցւոյ, որ ոչ դատէ եթէ ոչ միայն զորակութիւն հաւատացման, և ըստ սեռի միայն, այսինքն, զի բարեաց՝ բարիք. և չարեաց՝ չար հատուցցի՝, այլ զթիւն և զքանակութիւն հատուցման ոչ գիտէ: Երկրորդն՝ ասի բազմաձև, այսինքն, զի իւրաքանչիւր ոք ընդունիցի 'ի ժամու մահուան, առնլով զվարձս վասն ամ̄ բարեաց՝ և չարեաց, զոր արար. այլ ոչ խնդրոյն զամ̄ բարիս, կամ զչարս ընդունի. քանզի ընդունի միայն 'ի հոգին, և ոչ 'ի մարմինն: Երրորդն ասի ամենաձև, այսինքն, վերջին դատաստան. յորժամ ըստ թուոյ և ըստ քանակութեան ընդունիցի իւրաքանչիւր ոք զբարի, կամ զչար՝ 'ի հոգին և 'ի մարմինն: Իսկ վերջին դատաստանն լինիցի ահագին յամ̄ կողմանէ. զի 'ի վերուստ՝ լիցի դատաւորին բարկացեալ. 'ի վայր կոյս՝ դժոխքն բացեալ. 'ի ներքուստ՝ մատ. 13.42. խղճմտանաց խածանող. յարտաքուստ՝ աշխարհ բորբոքեալ. ընդ աջմէ՝ մեղքն ամբաստանիչ. ընդ ահեկէ՝ դևք չարչարեցուցիչք. շուրջ զինքեանք՝ բարի հրեշտակք, որք մղեն 'ի դժոխս. և ամ̄ սուրբք հաստատողք զվճիռ դատաստանին. և ամ̄ չարք՝ հանդերձ բարեօք՝ ձայնակցօղք զմեղս դատապարտեցելոցն: Արդ՝ վասն ահագնութե դատաստանին ծանիր՝ զի լինիցի սարսռելի, վասն զի զօրութիւնք երկնից շարժեսցին, ղուկ. 21.26. որպէս ասէ ղուկաս: Անտանելի, որպէս ասէ յոբ, ո՞վ շնորհեսցէ ինձ, զի 'ի դժոխս պահ- յոբ. 14. 13. պանեսցէ զիս, մինչև անցցէ սրտմտութի Տն:

Անխուսելի, ըստ առաքելոյն. ամենեքեան կալոց եմք 2. կոր. 5.10. առաջի բեմին Քի: Անխարծելի, որպէս ասէ առաքեալն, որ Տն իբրեւ գող եկեսցէ 'ի գիշերի ։ Անմաղթելի, 1. Թես. 5.2. որպէս ասէ յառակաց՝ լի է նախանձու սրտմտութիւն առն նորա ․ առակ. 6.34. եւ ոչ խնայեսցէ յաւուր դատաստանի ։ Ամօթալի, ըստ առաքելոյն, զինչ պտուղ ունէիք Հռօմ. 6.21. յայնժամ, որով այժմ զամօթի հարկանիք ։

Արդ՝ նախասացեալ ամօթս լինիցի յերկուս իրս ․ դան. 13.35. նախ՝ ընդ գալն 'ի դատաստան ․ զի չարք վասն ունելոյն մարմինս ծանունս՝ պիտոյ է զի 'ի հրեշտակաց տարեալ լիցին անդ, որպէս Ամբակումն 'ի բաբելոն 'ի գուբ առիւծուց ։ Երկրորդ, ընդ գալ նոցա առաջի դատաւորին, զի մեղք նոցա լինիցին յայտնիք ամենեցուն ․ ըստ այնմ Նաւումայ գ․, Նաւ. 3.5 յայտնեցից զամօթ առաքինոց քոց ։ Իսկ տեղի դատաստանին լինիցի ձորն յովսափաթու ․ եւ այս վասն բազում պատճառաց ։ Նախ, զի տեղի դատաստանին պարտի լինել հասարակաց, իսկ երուսաղէմ, եւ շրջակայ վայրքն՝ երեւի լինել հասարակաց ․ վասն զի երեւի իբր թէ է մէջ տեղի մերոյ բնակութեան ։ Երկրորդ, զի պարտէ լինել յայտնի ․ այլ արդ՝ տեղին այն է՝ յոյժ անուանի, վասն գործոց փրկութեան մերոյ, որ անդ կատարեցաւ ։ Երրորդ, զի յարմարի տեղին այն իրին որ անդ լինելոց է, այսինքն, գործոյ ողորմութեան, եւ արդարութեան ․ քանզի լեառն ձիթենեաց, որ է մերձ 'ի ձորն այն, նշանակէ զողորմութիւն ․ եւ յովսափաթ՝ որ թարգմանի դատաստան, նշանակէ զարդարութիւն ։

Յաղագս դատաւորաց ։ Գլ․ ԺԸ․

Ոչ միայն ըստ ածային իշխանութեան, այլ մատթ. 25.31. եւ ըստ մարդկային կերպարանին դատեսցէ Քս․ զի դատեսցէ իբրեւ զմարդ՝ յանձնեալ իշխանութբն ․ եւ որպէս Ած՝ բնական իշխանութբ, հանդերձ բոլոր երրորդութբն ։ Ուստի դիտելի է, զի հինգք են եղանակ դատելոյ ․ առաջինն է նախկին իշխանութեան, որով դատեսցէ բոլոր երրորդութիւն ։ Երկրորդն է՝ երկրորդի իշխանութեան, որով դատեսցէ մարդն Քս ։ Երրորդն է՝ աթոռակցական արժանաւորութեան, որով դատեսցեն առաքեալք, Ղուկ. 22.30. եւ կատարեալ արքն, որք նախագահեն նոցին ընդ դատաւորին՝ իբրեւ տեղեկացեալք օրինաց, եւ

1. Կոր. առաքելութեց աստուածութեան այ , որք ամ կատարութիւն
6·2. ճանաչողին զմիտս և ձանձրացուցանել զայս : Չորրորդն է՝ հա-
ճոյութիւն՝ որով զառաքելոցն ամ ուխք , և հրեշտակք .
Հինգերորդ եղանակ դատողութեան է՝ յայտնել զմեզս դա-
տաւորաց , և ընդ այսմ չարքն են դատողին ։
Ի դատելն՝ ունիլ երևել Քս զերկուս ներգործութիւնս
հանդիսակս , այսինքն . զմինն կրողականն , և զմիւսն առ-
նողականն . քանզի առաջինն է տկարութեան , և միւսն
Մատթ. իշխանութեան ։ Արդ՝ ի առաջին գալստեանն եկն Քս ի
24·30. դատաստան կրողականապէս . իսկ յերկրորդն եկեա-
Փիլ. 2·8. լէ ի դատաստանն առնողականապէս ։ Ի յառաջինն
եկն տեսանելի տկարութեամբ . իսկ յերկրորդումն երև-
եսցի փառաւոր տեսանելի ։ Վասն որոյ տեսանիցեն
զՔս արդարքն ի դատաստանի՝ մարդկային բնութեամբ ,
և աստուածային . իսկ չարքն միայն մարդկային բնութեամբ . և
անարգանաւորիլ . քանզի ոչ երբեք տեսցեն զաստուածային
բնութիւնն , և այս վասն կրկին պատճառաց ։
Նախ՝ վասն պակասութեան պատրաստութեան ի տեսողն .
զի բնութիւնն առանց շնորհաց ոչ է բաւական առ ի
տեսութիւն այ ։ Երկրորդ , վասն անարժանութեան հե-
ռութեան , որ է ի տեսութեան մեծութեան . զի տեսանելին
Յոհ. 17·3 զնա՝ ըստ յոհաննու , է՝ կեանք յաւիտենական , որ ոչ
կարէ հաղորդիլ անարժանեցելոց ։ Յայտ է յասացելոցս ,
զի Քս երևեսցի արդարոց բարեգթաբար . այլ անէ-
զրելոց . և մեղաւորաց՝ ահագնաւորապէս . այլ երևե-
Ելից. ցաւ և նշանակեցաւ ի սիւն ամպոյ ի տուէ , և ի սիւն
13·21. հրոյ ի գիշերի ։ Քանզի տեսանիցեն չարքն զմարդ-
Յոհ. 19. կութիւն Քի , զի երկիցեն , և ոչ զմեծութիւնն , զի մի
37. խնդասցեն ։ Իսկ բարիքն՝ զերկնաւոր բնութիւնն Քի
Ղուկ. 24. տեսանիցեն ։ Նաև զայլս խոցոտմանցն՝ զնշանն Քի .
Յոհ. 20. և զնշանս չարչարանացն , այսինքն , զխաչն , և զբևեռս
Մատթ. Արդ՝ նստի Քս ի վերայ բազմաձողոյն անեղանելի ար-
24·30. քայութե հանդերձ . իսկ չարքն ի վայր յերկիր . զոր օր-
Մատթ. ինեցին ։ Եւ յերևելն Քի յայտնի ամ սրտացն զդատա-
25·31. տան . քանզի գիտէ զարդարանութիւն իւ յարարածոց
Կող. 2·3. ումբք . վասն զի ի նմա է՝ ծածկեալ ամ գանձք իմաս-
Եբր. 7. տութեան և գիտութեան այ . և զի ոչ է արարածոց յան-
26. ցանել զորոց վասն դատէ զայլս . քանզի ոչ արար
Յոհ. 3·7. զմեղս , և ոչ գտաւ նենգութիւն ի բերան նր . և երկի-
Եսայ. քենակս այսպիսի՝ կարէ ինձ վայելչին դատաւորին ։
53·9.
1 Պետր.
2·22.

Յաղագս դատեցելոց ։ Գլ. ՃԹ.

Չորք կարգ լինիցին 'ի դատաստանի . քանզի ոմանք դատեսցին, և դատապարտեսցին . որպէս այնք' որոց դատապարտելի գործք են խառնեալք 'ի բարի ինչ, որք ունին զնմանս տանանց գործոց ։ մատ. 25.31.

Ոմանք դատեսցին, և փրկեսցին . որպէս այնք' որոց բարի գործքն են խառնեալք ընդ ներելի մեղս ։ Ոմանք ոչ դատեսցին, այլ դատապարտեսցին . որոց չար գործք ամենեքին անխառն են 'ի բարեաց . որպէս այնք . որք կարօտանան հիման հաւատոյ ։ Ոմանք ոչ դատեսցին, այլ դատեսցեն, և փրկեսցին . որոց բարի գործքն անխառն են 'ի չարեաց . որպէս կատարեալ աշակերտացն Քի . զորոց ասէ Քս . դուք որք եկիք զհետ իմ, նստջիք յաթոռ ։ մատ. 19.28.

Վասն նախասացելոյ չորից կարգաց' գիտելի է . զի միայն միջինք դատեսցին դատաստանաւ հատուցման . այլ ոչ դատաստանաւ քննութեան ։ Քանզի անհաւատք որք ոչ էին քաղաքականք քաղաքին այ , այլ թշնամիք պատժեսցին առանց քննութեան և խնդրոյ գործոյ նոցա ։ Իսկ չար հաւատացեալքն' որպէս քաղաքականք, հանդերձ քննութեամբ գործոց նոցա, և խնդրով պատժեսցին ։ Բայց արդարքն ոչ վասն այսորիկ դատեսցին' զի գործք նոցին նորագոյնս քննեսցին' թէ բարիք իցեն արդեօք' թէ չար, այլ' զի գերազանցութիւն բարեաց յայտնի լինիցի ամենից, և զի հարթ երևեսցի վճիռն որ 'ի վերայ չարեաց ։ Արդ' երկու վճիռք հատցին 'ի դատաստանի . մին վասն բարեաց, և միւսն ընդդէմ չարաց ։ Վճիռն որ վասն բարեաց' պարունակէ յինքեան զեօթն մասունս . առաջինն է' կոչումն սիրական . անդ' ուր ասէ . եկայք ։ Երկրորդն է' ածային օրհնութիւն . անդ' ուր ասէ . օրհնեալք ։ Երրորդն է հայրական սէր . անդ' ուր ասէ' . հօր իմոյ ։ մատ. 25.34.

Չորրորդն է հատուցումն բարեաց . անդ' ուր ասէ . ժառանգեցէք ։ Հինգերորդն է' բազմայայտութիւն թագաւորութեան . անդ' ուր ասէ . արքայութիւն ։ Վեցերորդն է' նախապատրաստութիւն փառացն . անդ' ուր ասէ . որ պատրաստեալ է ձեզ ։ Եօթներորդն է յաւիտենական նախասահմանութիւն , անդ' ուր ասէ .

Իսկ

իսկզբանէ աշխարհի : Դարձեալ՝ վճիռն որ ընդդէմ չարաց՝ պարապրէ յինքեան զվեց մասունս. առաջինն՝ ասէ զհեռացումն յԱյ, անդ, ուր ասէ. երթայք յինէն : Երկրորդ, զանէծս, անդ՝ ուր ասէ. անիծեալք: Մատ. 15. 14. Երրորդ, զմատնարկեալ լինիլն, զոր ցուցանէ նախդիրն. ի: Չորրորդ՝ զդժնդակութի տանջանաց, անդ՝ ուր ասէ, հուրն : Հինգերորդ, զյուսահատութիւն ազատութե, անդ՝ ուր ասէ . յաւիտենական : Վեցերորդ զընկերակցութի դիւաց, անդ՝ ուր ասէ. որ պատրաստեալ է սատանայի, և հրեշտակաց նորա:

Յաղագս նորոգման աշխարհի : Գլ. Ի.

Ընդ անարտիլ դատաստանի՝ առժամայն լինի նորոգումն աշխարհի, որ ոչ կատարեսցի՝ ցորքան մնալոցք են յաշխարհի, այսինքն, մինչև արկեսցին 'ի դժոխս : Քանզի որպէս մեծ հուրն այն որբեսցէ զաւերս՝ մի ունելոյն զարտաքսողական զօրութի արտաքին տեսակին. այնպէս նորոգէ զաշխարհս վասն ունելոյն զանօսրացուցանող զօրութեն : Արդ՝ նորոգիլ աշխարհիս է նորոգիլ 'ի գեղեցկագոյն տեսակ . որ պարտի լինիլ վասն բազում պատճառի : Նախ՝ զի որպէս ապականեցան տարերք վասն յանցանաց մարդոյ . այսպէս արժանէ զի նորոգեսցի աշխարհ ընդ փառաւորիլ մարդոյն :

Ա Երկրորդ՝ զի ստեղծուածք առցեն զհատուցումն վասն Մատ. վաստակոց՝ որք սպասաւորեցին մարդկան :
16. 27. Երրորդ, զի բոլոր աշխարհս որքան է հնար՝ համա-
Հռոմ. ձևեսցի նորոգման մարդոյ փառաւորեցելոյ :
1. 20. Չորրորդ, զի աշխարհս եղև՝ որպէս զի մարդն այժմ
1. տիմ. հայելեաւ ստեղծուածոց ծանիցէ զԱծ, զոր ոչ կարէ
6. 16. տեսանել յիւրում բնութե . ուստի 'ի հանդերձեալն
1. յոհ. 4. պիտոյ է պայծառանալ հայելւոյն և մաքրիլ. զի 'ի գե-
12. ղեցկութի ստեղծուածոց՝ առաւել փառաւորեսցի
յոհ. 1. 18 հրաշափառութի ստեղծողին . և այս ոչ լինիցի առ 'ի հարկաւորութիւն՝ իբրու թէ ոչ կարէ տեսանել զԱծ բաց այլ կերպի, որպէս և այժմ , այլ լինիցի առ 'ի զուարճութի , այսինքն , զի քաղցրութե 'ի մեցականի տեսութե , յաւելցի քաղցրութի զգայական տեսութեան : Արդ՝ երկնային պարունակքն , և տարերք

վասն անխախտութե ոչ ունին զանմաքրութի ինչ ոչ
ունին տարերքդ, այլ միայն զանկատարութի շարժման՝
յորմէ դադարեսցին. վասն որոյ նորոգեսցին իսկ.
այլ ոչ մաքրեսցին ։ Իսկ նորոգումն ՚ի նոսին պահանջէ
զերկուս իրս, այսինքն, զդադարումն շարժման,
և զառաւել պայծառութի փայլման, յորժամ կանգնեսցի
արեգակն ՚ի յարևելս, և լուսինն ՚ի յարևմուտս,
ուր և ստեղծան իսկ ։ Որոյ պատճառն է՛, զի վերին
մարմինքն եղեն ՚ի սպասաւորութիւն մարդկան՝ կրկին
կերպիւ ։ Նախ, վասն հարկաւորութե մարմնոյ,
այսինքն՝ վասն լինելութե, և ապականութե. վասն
այսորիկ ընդ դադարիլն այնց՝ դադարեսցի և շարժումն ։
Երկրորդ, վասն հեշտանալոյ ՚ի գեղեցկութի
ստեղծուածոյն. և վասն ճանաչելոյ ՚ի նոսա զած. Եսայ.
նմին իրի՝ լոյս նոցա ոչ նուազեսցի, այլ մանաւանդ 30.26.
աճեսցի ։ Իսկ վասն տարերացս ծանիր. զի երկիրս 1.կոր.
լինիցի իբրև զմիօր, և լինիցի հարթ և հաւասար ։ 15.41.
Օդդ լինիցի յստակագոյն, և ոչ ունիցի զաղդմունս Եսայ.
որպէս այժմ. զի ոչ լինին ամպք, ոչ հողմք, ոչ անձրևք 40.4.
ոչ ձիւնք, ոչ որոտմունք, ոչ փայլատակմունք,
և այլք ։ Հուրն, նաև ջուրն՝ լինիցին մաքրագոյնք. և
մնասցեն ոչ միայն ըստ գոյացութե իւրեանց, այլ և սաղ.
ըստ որակութե իւրեանց զոր ունէին ըստ ունակութե. 101.27.
այլ ոչ ըստ ներգործութե. քանզի ՚ի յերկոսին
տարերս այսոսիկ առաւել զօրանան ազդողական
որակութիւնքն, այսինքն, ցրտութին ՚ի ջուրն. և ջերմութիւնն
՚ի հուրն. և առաւել են սկիզբն ծննդեան,
և ապականութե, վասն այսորիկ այնպիսի ներգործութիւն
ոչ ևս լինիցի ՚ի նոսա ։ Աստի և ըստ այսմ
յոմանց ասին կորնչիլ երկոցունց տարերաց այսոցիկ.
ըստ այնմ, որ ասէ սաղմոսն. Ձայն Տն հատանէ զբոց սաղ.
՚ի հրոյ ։ Զի որպէս ասէ բասիլիոս. այրեցողական 28.7.
ջերմութի, և սառուցողական ցրտութին, հալեսցին
՚ի վայրկեան. իսկ մնասցէ յստակութի ՚ի ջուրն, և լուսաւորութիւն
՚ի հուրն. քանզի յամենից տարերց
անարգն իջցէ ՚ի ստորին կողմն. որպէս է թանձրութի,
զխմահարութի, և մթութի երկրի. ապա ուրեմն ղուկ.
յայտ է՝ զի երկին, և երկիր՝ անցցեն ըստ տեսակին. 21.33.
այլ ոչ ըստ գոյացութե ։ Նաև և յայտ է յասացելոցս՝
զի զվախճան առնուցուն փոփոխմունք տարերաց.
ծնունդք կենդանեաց, և բուսոց. վասն զի
պատճառք սոցին դադարեսցին. և վասն այսորիկ

ասին կորնչել տարերաց. ոչ ըստ գոյացութեան, այլ ըստ առնելոյ և կրելոյ: Իսկ երկնային մարմինքն որք են անփոփոխք, հանգիցեն. և ունիցին զպայծառագոյն լոյս. և ըստ այսմ ասին վերանորոգիլ: Եսայ. 30.26.

Սակայն այնք որք ասին կորնչել՝ պահեսցին 'ի մարդն որ ունի զնմանութիւն ընդ ամ՟ ազգ. ստեղծուածոց. և վասն այսորիկ, 'ի նորոգման և 'ի փառաւորութե՟ մարդոյ՝ կարեն ասիլ ամենեքեան նորոգիլ և վարձատրիլ:

Յաղագս տանջանաց դժոխոց. ԳԼ. ԻԱ.

ՈՐպէս երեւի ա՟ծային կարողութիւնն 'ի ստեղծելն. իմաստութիւն 'ի նախախնամելն. և անոխակալութիւն 'ի նորոգելն. այսպէս երեւեսցի արդարութիւն 'ի պատժելն: Քանզի արժան իսկ է, զի տգեղութիւն մեղացն ոչ մնասցէ առանց գեղեցկութեան արդարութեանն:

Եւ թէպէտ մեղքն է՛ անցաւորական, սակայն պատիժն՝ է յաւիտենական. և այս վասն բազում պատճառաց: Նախ՝ զի որպէս մարդն մեղանչեաց յաւիտենին իւրում, այսպէս պատժեսցի յաւիտենին ա՟յ: Երկրորդ, զի նիւթ դժոխային հրոյ՝ է՛ յաւիտենական. այսինքն, արատն մեղաց. վասն այնորիկ և պատիժն: Երրորդ, զի մեղքն է ընդդէմ այնմ, որ է յաւիտենական. վասն այսորիկ և պատիժն լինիցի յաւիտենական. ոչ ըստ դժնդակութեան, 'այլ ըստ տևողութե՟: Չորրորդ, զի մարդն 'ի յինքն սպանանէ մեղօք զբարին՝ որ կարէր լինիլ յաւիտենական. վասն այնորիկ արժանապէս հանդիպի մշտնջենական չարի: Հինգերորդ, զի չար կամքն անարգեցելոց՝ է՛ յաւիտենական, զի կամին յաւիտենականապէս հեշտանալ 'ի մեղս՝ եթէ կարէին. վասն որոյ և պարտին պատժիլ յաւիտեան: Վեցերորդ, քանզի անհնապէս սխալի բանականն՝ նախամեծար առնելով զվախճանականն քան զանվախճանն. նմանապէս ցանկականն 'ի տենչալն, և ցասմնականն 'ի յարենալն. ուստի և պատիժն լինիցի յաւիտենական: Եօթներորդ, զի դատապարտեցեալն զգործեցելոց մեղացն՝ ո՛չ երբէք ունեսցի զճշմարիտ ապաշխարութի՟. վասն այնորիկ

Մատ. 25.46.

ա͞ծ ոչ երբեք փոփոխեսցէ զվճիռ պատժելութեան նորին ։ Իմաս. 3. 13. Ութերորդ . զի մեղքն որոշէ 'ի յաւիտենական կենաց՝ այսինքն , յա͞յ . նմին իրի և անկանի 'ի մահն յաւիտենական ։ Նաև այս յայտ է՝ բազում օրինակաւ . քանզի տեսանեմք՝ զի գնելն լինի 'ի սակաւ ժամանակի . սակայն տայ իրաւունս ստանալոյ յաւիտեան ։ Դարձեալ խոցումն 'ի վայրկեան ժամանակի՝ ածէ 'ի ներս զմահ յաւիտենական ։ Դարձեալ՝ անկումն 'ի խորխորատ՝ է ժամանակաւոր . այլ մնալն անդէն՝ է՛ յաւիտենական ։ Դարձեալ՝ քրէականն՝ որ լինի ընդդէմ թագաւորական մեծութեան՝ է՛ ժամանակաւոր . այլ պատիժն յաւիտենական ։ Դարձեալ՝ վիրաւորիլն է ժամանակաւոր , և սպին է յաւիտենական ։ Ե͞ւ քանզի 'ի մեղս է հեշտութի հանդերձ արհամարհմամբ ա͞յ . ուստի իրաւի անկանի մեղաւորն 'ի խոտան տեղի , և կարի իմն հեռի 'ի տեղւոջէ փառացն ա͞յ , այսինքն , 'ի դժոխս , ուր և տանջեսցի 'ի յանարդ իրաց , այսինքն , 'ի միրոց երկրաւոր մարմնոց . վասն զի 'ի նորոգման աշխարհի՝ որ լինելոց է անարդ յաշխարհի , ամենայնն հոսեալ իջանէ 'ի տեղի տանջանաց . և անդ բազմացուսցէ զարհաւիրս բանտին ։ Յոբ. 20. 26. Ե͞ւ դարձեալ՝ ըստ բասիլոսի , ա͞ծ յետ աւաներոյ զմաքրութի աշխարհի , բաժանէ 'ի ջերմութէ զպայծառութիւն . և զբոլոր ջերմութին արկցէ 'ի տեղւոջ , ուր են դատապարտեցեալք . զի առաւել տանջեսցին , և զբոլոր պայծառութին 'ի տեղւոջ , ուր են երանեցեալք . զի առաւել հրճուեսցին ։

Յաղագս զանազանութեն տանջանաց։ Գլ. ԺԲ.

Որպէս 'ի դատապարտեցեալս է զանազանութի մեղաց , այսպէս և զանազանութի պատժոց . ուստի մինչ 'ի մեղսն է յետս դարձումն 'ի ստեղծողէն , և դարձումն առ փոփոխական բարին , և անկարգութի կամաց , որ է ընդդէմ ենթադասութեն բանականին , յիրաւի և պատիժն վասն սոցին զանազանեսցի։ Ուստի վասն յետս դարձման՝ լինիցի զրկումն յա͞ծային տեսութէ . այլ վասն դարձման՝ լինիցի պատիժ նիւթական տօչորման . իսկ վասն անկարգութեն բանին , և կամացն , լինիցի պա-

տիժ

տուժ ընդհանրական՝ որ կայանայ 'ի այլեւայլս նեղութիւնս
դժնդակս՝ և յաւիտենականն Հուր դժոխոցն՝ ոչ միապէս
չարչարեսցէ զամենեսեան․ քանզի 'ի միոյ հրոյ՝
ոմանք աւելի, և ոմանք նուազ չարչարեսցին, ըստ
այնմ որ աւելի կամ նուազ մեղանչեցին․ որպ 'ի մի
և 'ի նոյն հրոյ՝ այլ կերպիւ այրի յարդն, և ըստ այլում
կերպի փայտն ։ Զի թէպէտ հուրն այն է մարմնաւորն,
Ղուկ. և ոչ կարէ այրել 'ի հոգին ջերմացուցանելով
6.23. զնոսա․ սակայն այրէ 'ի նոսա՝ որպէս գործի Աստուծոյ արդարութեան,
տանջելով զնոսա․ և ցաւն այն լինիցի եւս
մեծագոյն․ և այս վասն կարողութեան Աստուծոյ մեծութեան
շարժողին զհուրն զայն․ նաև վս զգալոյ կրողին․
այլ և վս անընդմիջաբար շարունակութեանն․

Յոբ. 10. Իսկ դժոխքն է՝ տեղի խաւարամած՝ վս գոլոյ տեղի
22. տրտմութե․ իսկ լոյսն թէպէտ է՝ հեշտալի ըստ ինքեան,
այլ ըստ պատահման պատճառէ զտրտմութի,
ըստ այնմ որ ցուցանէ զիրս տրտմական․ ուստի 'ի դըժոխս
լինիցի լոյս ինչ նսեմացեալ, որով դատապարտեալքն
կարասցեն տեսանել՝ ուստի ցաւեսցին․ այլ ոչ
ուստի ուրախասցին ։ Անարգեցեալքն տեսանեն մինչև
զօր դատաստանին զփառս երանելեացն ընդ հանրապէս,
այլ ոչ մասնաւորապէս․ զի տեսանեն զնո 'ի
Ղուկ. մեծ փառս, այլ ոչ 'ի յորպիսիս ։ Իսկ 'ի յայսպիսւոյ
16.23. տեսութե ոչ ուրախանան, այլ տրտմին․ և այս վասն
նախանձելոյ ընդ բարեբաստութիւն այլոց․ նաև վասն
զրկելոյն 'ի յաստուածային երանութե իւրմէ ։ Իսկ յետ դատաստանին՝
այս ևս բարձցի 'ի նոցանէ առ 'ի տանջանս
իւրեանց՝ յորժամ անարժան համարեսցին նաև 'ի տեսանել
զայն ։ Լինի 'ի դատապարտեալսն լալիւն հոգևոր,
Մատթ. այսինքն, ցաւ ներքին, և ոչ լալիւն մարմնաւոր,
13.42. որ է հանդերձ հեղմամբ արտասուաց․ քանզի ընդ
դադարել շարժման երկնի, ոչ լինիցի ծնունդ, կամ
ապականութի․ սակայն լինիցի անդ այլ ինչ որք են
մարմնաւորապէս 'ի լացողսն, այսինքն, ամբոխումն
ուղեղին․ ձաւաղխմութի երեսաց ։ Նաև որդն՝ զոր
ասացեալ Տր̃, ոչ լինիցի նիւթական․ զի ոչոք կենդանի
մնասցէ բաց 'ի մարդոյ․ այլ լիցի անդ որդն խղճի
Ա մտաց՝ կրծելով զհոգին, և ոչ զմարմինն ։ 'Ի վերնագոյն
տեղւոջ՝ է միայն ուրախութի, 'ի վայրագոյն տեղւոջ
Եսայ. միայն տրտմութի․ իսկ 'ի միջակ տեղւոջ, այսինքն,
65.24. յաշխարհի, են խառնեցեալք յերկոցունց այժմիկ․ իսկ
յետ աւուր դատաստանի միայն յերկս տեղիս լինիցի

ընդ

բնակութիւն. այսինքն, յերկինս. 'ի դժոխս. և 'ի լիմբոսն :
Այլ թէ քանիք են տեղիք տանջանաց, է ասացեալ
'ի չորրորդ գիրս, 'ի ճառն որ յաղագս իջմանն քի
'ի դժոխս : Այլ ութ ազգ պատժոց գոլ 'ի յօրէնս
գրեաց Թովմաս, այսինքն կողոպտումն, կապանք. հարկանումն.
անդամահատումն. ո՛չ ակն ընդ ական. ծանակումն.
արտաքսումն. ծառայութիւն. և մահ : Արդ
ամենեքեան կարեն համեմատիլ դժոխային պատժոց :
Քանզի ըստ առաջնոյն կերպի դատապարտեալքն կորուսին
զած, և զամ բարի շնորհաց, և փառաց. ոչ
միայն ըստ իրին, այլ և ըստ յուսոյն. ըստ եսայեայ, եսայ.
որ ասէ. ոչ մնասցէ խեցի որով հանցի ջուր 'ի գբոյն. 30.14.
այսինքն յողորմութենէ այ, և կամ բառնիցի սակաւ մի հուր
'ի հնոցէ, այսինքն, 'ի սիրոյն այ. զի ըստ երեմիայի երեմ.
փոխանակեալ է անուն, և ասացեալ հունձն : 7.20.
Ըստ երկրորդին՝ ասէ Տէրն, կապեցէք զդորա զձեռան մատ.
և զոտս : Ըստ երրորդին ասէ առակաց. կռանք հար 22.13.
կանիցեն զմարմինս անբարշտաց. որ ոչ խնայեսցեն լինել առակ.
մի նիւթական կռանաց, այլ մի զանազան տանջանաց 19.29.
որովք հարկանիցին անբարիշտքն : Ըստ չորրորդին՝ ասէ յայտ.
տեսիլն. որչափ փառաւորեաց զինքն, և մնաց 'ի հեշ 18.7.
տութեան, այնքան տուք նմա տանջանս : Ըստ հինգե
րորդին, ասէ եսայի. երեսք նոցա այրեցեալք : Եւ այն եսայ.
պէս ծանուցեալ լինի մարմինն անդամօքն մինչև հոգին 16.8.
տարածեսցի ընդ ամենայն զնա. և կամիցի ունել զնա
այնպէս, ո՞չ դժուար լիցի կերակուր 'ի յորդանց :
Ըստ վեցերորդին, ասէ Տէր. հանէք զնա 'ի խաւարն մատ.
արտաքին : Ըստ եօթներորդին՝ ասէ 'ի յողբսն. իշխանն 22.13.
գաւառաց եղև ընդ հարկաւ : Եւ ծանիր, զի դատա ողբ. 1.1
պարտեցեալքն ենթ հարկի պատժոց միշտ ծառայեն.
և սակայն ոչ երբէք վճարեն : Ըստ ութերորդին՝ ասէ
գրիգոր. անդ միշտ կեայ մահ. ո՞չ ասէ տեսիլն՝ եղիցի
անդ մահ երկրորդ : Արդ՝ 'ի նախասացելոցս, համարեա, յայտ.
զի լինի անդ ջերմութի, 'ի հրոյ. կիզանել տառամանց. 'ի ցր 20.14.
տոյ. խաւար, ծուխ, արտասուք ներքին. տեսիլ դիւաց, ղուկ.
աղաղակ նախատանաց. պապակումն ծարաւոյ. հոտ ծծըմ 16.24.
բոյ. որդն խղճի մտաց. կապանք. բանտ՝ երկիւղ ցաւ. մատ.
անմօթ. նախանձ. հեռ. տրտմութի. զրկումն 'ի տեսլեն է այ. 13.42.
քարշումն յասոյ ամ փրկութե : Նաև լինքն դոյն որում եսայ.
տանջան ամ ասէ զծնանդ, եղիցին նոցա պատիժ. վաղ խնդ 66.24.
րեսցեն զմահ՝ և ոչ գտանիցեն : Եղիցի անդ՝ ո՞չ ասէ յայտ.
դիոնէսիոս, երևակայութի չարակարծիք. ցանկութի 9.6.
յիմարեալ. ցասմնականն ոռամոլեալ :

Յաղագս երկնային փառաց ։ ԳԼ. ԺԳ.

Իւրաքանչիւր իր այնքան է կատարելագոյն՝ որքան առաւել միաւորի սկզբան գոլոյ ։ Իսկ մարդն որ ազատ է կատարելագոյն գոլոյ, ունի զկրկին վերջին վախճան . զմին ներքին որ է ստեղծեալ երանութիւն . որ երանացուցանէ զմեզ տեսականաբար ՚ի վերին գաւառն և զմիւսն արտաքին , որ է անստեղծ երանութի , որ երանացուցանէ զմեզ ներգործաբար՝ որ է ինքն ա՟ծ ։

Արդ՝ առաջին երանութիւն , այսինքն , ստեղծեալն է իբրև վախճան յոր յուսացեալ լինի. իսկ երկրորդն, այսինքն անստեղծն՝ է իբրև զվախճան առ յոր լինի հանգուցեալ ։ Բայց փիլիսոփայք ըստ այլում կերպի ենթադասէին զերանութի , սակայն թիւր ։

յոհ. 17. 3. Քանզի ասէին ստոյիկեանքն՝ երանութիւն կայանալ
՚ի առաքինութի հոգւոյ ։ Իսկ Ճեմականքն ՚ի Ճանաչումն
Ճշմարտութեան . այլ եպիկուրեանքն ՚ի հեշտութիւնս ։
Այլ մեք ասեմք գոլ կրկին երանութի . որպէս
և նախ իսկ ասացաւ . զի ա՟ծ հատուցանէ իւրայնոց
ա. կոր. ըստ արդեանց՝ որպէս ասէ առաքեալն . ընկալցի
3. 8. իւրաքանչիւր ոք ըստ վաստակոց իւրոց ։

յոհ. 1. 17 Եւ վասն արդեանց , որպէս ասէ յոհաննէս , շնորհս՝
մատ. փոխանակ շնորհաց ։ Եւ մատթէոս ասէ . երթայք
20. 7. և դուք յայգին ։ Եւ ՚ի վեր քան զարդիւն , ըստ այնմ
ղուկ. որ ասէ . չափ զեղուն թաթաղուն շարժուն տացեն
6. 38. ՚ի գոգս ձեր ։

Յաղագս բաժնեաց առհասարակ ։ ԳԼ. ԺԴ.

Բաժինք ՚ի վերին գաւառն է այն որ անընդմիջաբար և նախ միաւորէ զհոգին ընդ ա՟յ . որպէս է՛ տեսութիւն , հեշտութիւն , և ըմբռնումն ։ Քանզի են պարգևք ոմանք վերին գաւառին , ո՟պ է իմաստութիւնն , և հանճարն . որք թէպէտ միաւորեն զհոգին ընդ ա՟յ , սակայն ոչ անընդմիջաբար . վասն որոյ ոչ ասին բաժինք , այլ մարձաւորութիւնք հոգւոյ ։ Նա և ոչ կոչին բաժինք իւրաքանչիւր պարգևք որք տուեալք լինին հոգւոյ 'ի մուծանիլ իւրում 'ի փառս. այլ նախապէտական պարգևք, որովք պատրաստի հոգին առ գործ փառաւորեալ կենաց ։ Որպէս և 'ի ներկայս՝ ոչ կոչին բաժինք յատկապէս իւրաքանչիւր պարգևք որք լինին տուեալ հարսին ընդ մուծանիլ իւր 'ի տուն փեսային, այլ նախապէտական պարգևն , որով և պարտի հոլ լնուլ զկարիս իւր ։ Արդ՝ կրկին են բաժինք . ոմանք են 'ի կողմանէ հոգւոյ , որովք անընդմիջաբար միաւորի ընդ այ՝ որպէս ընդ սկզբան կենաց իւրոց , և որովք մուծանի 'ի գիրկարկումն փեսային , և 'ի յանլուծանելի զմայլումն ։ Իսկ բաժինք ոմանք են 'ի կողմանէ մարմնոյ՝ որովք մարմինն նմանի հոգւոյ , երբ սկզբան կենաց իւրոց՝ զի մի՛ յապաղեսցի նովաւ 'ի գործոց փառաց ։ Նաև գիտելի է , զի բաժինք հոգւոյ՝ են զգոյացականէ վարձու . իսկ բաժինք մարմնոյն՝ զպատահականէ վարձու ։ Քս ոչ ունի զբաժինս , զի է փեսայ. իսկ հոգին է հարսն ։ Իսկ բաժինքն է առագունած հարսին՝ զորոյ զկիրառումն ունիցի յետ մահուան առն ։ Նմանապէս և ոչ հրեշտակք ասին ունել զբաժինս . քանզի 'ի հարսանիսն՝ լինի հաւանումն հոգւոց . և միաւորութի մարմնոց . երկրորդս այս՝ ոչ է 'ի հրեշտակս , թէպէտ ունին զառաջինն ։ Ըստ որում հրեշտակք ոչ կարեն ասիլ հարսն՝ որպէս մարդն . վասն որոյ ոչ ասին յատկապէս ունել զբաժինս ։ Արդ՝ մարմնաւոր հարսին տուեալք լինին երեք իրք , այսինքն , բաժինք՝ օժիտք վասն հարսանեաց . և պարգևք ։ յոհ. 3. 29

Բաժինքն է՝ պարգևք տուեալ հարսին 'ի կողմանէ հօրն . և այս 'ի պէտս փեսային՝ վասն ծանրութեան պսակին , սակայն առ 'ի առագունած հարսին ։

Իսկ 'ի յածայինս , ած հայր՝ տայ բաժինս հարսին առ 'ի տանել զնա , 'ի փառս և 'ի պատիւ փեսային Քի . և ոչ առ 'ի կիրառնուլ . զի ոչ կարօտանայ բարեաց մերոց ։ Իսկ օժիտք վասն հարսանեացն է՝ որ 'ի փեսայէն տուեալ լինի հարսին, և այս լիցի խնդութիւնն այն՝ զոր ունեսցի հոգին 'ի տեսութէ մարդկային Քի ։ Այլ պարգևք են այնք, զորս ունի հարսն բաց 'ի բաժնեացն . այն են ընծայք , որք նմա տուեալք լինին 'ի բարեկամաց . և այս լիցի ուրախութիւնն այն՝ զոր ունիցի հոգին 'ի վերին դասուն 'ի ընկերակցութէ սրբոց , և յուրախակցութէ բարեբաստութէ նոցին ։ Ա

Յաղագս բաժնեաց հոգւոյն հասարակաբար .
ԳԼ. ԻԵ.

Երեք են բաժինք հոգւոյն , այսինքն , ճանաչումն , սիրելութիւն . զմայլումն, և կամ ըմբռնումն : Արդ՝ բաւականութիւն՝ կամ թիւ բաժնեացս այսոցիկ , բազում՝ կերպիւ առեալ լինի . նախ՝ ՚ի կողմանէ մտային առաքինութեանց , զի ճանաչումն յառաջորդէ հաւատոյն . սիրելութիւն, սիրոյն, և ըմբռնումն կամ զմայլումն՝ յուսոյն : Երկրորդ՝ ՚ի կողմանէ զօրութեանց հոգւոյն . քանզի ճանաչումն կարէ յատկանալ իմացականին . սիրելութիւն , կամաց . ըմբռնումն յիշողականին : Նաև յատկացուցանին յոմանց՝ այլոց երից կարողութեանց , այսինքն, ճանաչումն՝ բանականին . սիրելութիւն՝ ցանկականին . և ըմբռնումն ցասմնականին . սակայն ոչ յատկապէս , զի մտ ոչէ յառաջեդեալ զգայականին , այլ իմացականին : Դարձեալ, կարեն նախասացեալ բաժինքն առնանիլ ըստ երից յատկացելոց մտային անձանց . քանզի ըմբռնումն նկատէ առ կարողութիւն հօր . ճանաչումն առ իմաստութիւն որդւոյ, և սիրելութիւն առ բարութիւն հոգւոյն սրբոյ : Վասն բաժնեացս այսոցիկ ծանիր . զի ճանաչումն դնէ զներկայութիւն տեսեալ իրին , ըմբռնումն զհասանումն . իսկ սիրելութիւն դնէ զկապակցումն՝ սիրողին առ սիրեցեալ իրն :

Յաղագս բաժնեաց հոգւոյն յատկապէս :
ԳԼ. ԻԶ.

Առաջին բաժինք հոգւոյն է՝ ճանաչումն , որով բոլոր մտային էութիւն ճանաչիցի յամենեցունց . այլ ոչ բոլորովին , այսինքն , ըստ այնմ՝ որ է անհուն :

Սակայն տեսանիցի մտային էութիւնն յատկագոյն ՚ի միոյն , քան ՚ի միւսոյն . և պակասութիւս այս լինի ՚ի կողմանէ տեսողին , և ոչ տեսանելոյն . զի նոյն լիցի տեսանելին : Քանզի երանութիւն կայանայ ՚ի կատարեալ ներգործուչութեն վեհագունի կարողութեն, այսինքն, իմացականին, առ գերագոյն յառաջեդեալն՝ այսինքն, ած ։ Արդ՝ 'ի կողմանէ յառաջեդելոյն՝ վասն զի է մի և պարզագոյն, ոչ կարէ լինել զանազանութի իմն · այլ 'ի կողմանէ զօրութեանն ։ Վասն զի մի զօրութի առաւել լինիցի կատարեալ լուսով փառաց, քան զմիւսն · և ըստ այսմ կատարելագոյն տեսանիցէ զմի և զնոյն յառաջեդեալն · որպէս նոյն արեգակն՝ զանազան կերպիւ առեալ լինի 'ի զանազան ընդունողաց · և նոյն գիրն 'ի զանազան ընթերցողաց · ըստ այնմ որ աչք առաւել՝ և նուազ է պատրաստ առ 'ի տեսանել ։

Այլ արդ՝ երեք կերպիւ ճանաչի իր ինչ, այսինքն, որ է, և որպիսի է, և զինչ է ։ Ըստ առաջնոյ կերպի՝ ճանաչի ած 'ի ճանապարհի աստի կենացս, 'ի բարեաց՝ և 'ի չարաց ։ Ըստ երկրորդի կերպի՝ տեսանիցի 'ի բարեաց 'ի վերին գաւառն · ըստ այնմ որ ասէ յօհաննէս, նման նմա լինելոց եմք · զի տեսանելոց եմք 1 Յօհ· 3· 2
զնա որպիսի է, այսինքն՝ զմեծութի նորա, զպայծառութի, և զբարութին ։ Ըստ երրորդի կերպի՝ ոչ տեսանիցի, ոչ 'ի բարեաց, և ոչ 'ի չարաց, ոչ աստ՝ և ոչ 'ի հանդերձելումն · զի հունաւորն ոչ երբեք ըմբռնէ զանհունն ։ Այլ տեսանիցեմք զած՝ յինքեան · և զած 'ի մեզ · և զմեզ 'ի յած, և զած 'ի յստեղծուածս · և զստեղծուածս 'ի յած ։ Արդ՝ ճանաչել զած Ծննդ· 2·
'ի յէութեն իւրում, է տեսութի հասարակօրեայ · 19·
իսկ ճանաչել զստեղծուածս 'ի բանն, է տեսութին առաւօտեան · այլ ճանաչել զստեղծուածս 'ի յինքեանս, այսինքն 'ի յատուկ սեռս իւրեանց՝ կոչի տեսութի երեկոյեան ։ Նաև տեսանիցէ իւրաքանչիւրոք զխորհուրդս միւսոյն՝ ըստ այնմ որ կամիցի խորհօղն յայտնել · ուստի ասէ գրիգոր, մարմին իւրաքանչիւրոյ ուրուք, ոչ թաքուսցէ զմիտս իւր յաչաց միւսոյն ։ Արդ՝ տեսանիցեն արդարք զած, զի խնդասցեն · տեսանիցեն զփառս սրբոց՝ զի խնդակից լինիցին ։ Նաև տեսանիցեն զպատիժս անարգեցելոց, զի գոհասցին զայ, վասն զերծանելոյ իւրեանց յայնպիսի վտանգէ ։ Բայց արդ՝ առ 'ի գիտել թէ որպէս տեսանի ած առանց միջոյ, ծանիր, զի երեքկին է միջն, այսինքն, տարօղ · նմանացուցանօղ՝ և պատրաստօղ ։ Արդ՝ տարօղն է որպէս օդդ ։ Նմանացուցանօղն է՝ ոփ ամփն · և պատրաստօղ՝ որպէս լոյս ։ Արդ՝ առանց բերօղ միջոյ՝ տեսանիցի ած · զի տեսութին այ ոչ է

հեռաւորութիւն , այլ ներկայութիւն . զի ա̃ծ է էութիւն յամենայն ուրեք : Տեսանիցի և առանց նսեմացուցանող միջոյ . զի 'ի բաց բարձցի հայելին , և շամանդաղն, որք երկրորդեանն են 'ի ճանապարհի աստի կենացս . և քանզի տեսութիւնս մեր 'ի ներկայումս վասն տկարութեան ոչ կարէ հայիլ յայնքան գերազանց լոյսն , հարկ է ունել զմէջ , այսինքն , զհայելի ստեղծուածոցս :

Եւ զի անհուն է տարակայութիւն 'ի մէջ հայելւոյ , և տեսեցեալ իրին . վասն այսորիկ մեծագոյն երևի աննմանութիւն ա̃յ . ուստի տեսանեմք 'ի շամանդաղ , այսինքն ,նսեմաբար : Նաև տեսանիցի ա̃ծ առանց միջոյ պատկերականի . զի ա̃ծ ճանաչի ինքեամբ , և ոչ արտաքարշեալ ինչ նմանութեամբ . այլ թէ ոչ ստեղծուածն լինէր եզր, և ա̃ծ ոչ լինէր ճշմարիտ վախճան ամենեցուն : Բայց ոչ տեսանիցի ա̃ծ առանց պատրաստող միջոցի , որ է շնորհն , և լոյս փառաց . քանզի պիտոյ է լինել շաղկապութիւն 'ի մէջ տեսողին, և տեսեցելոյն : Իսկ պատրաստութիւնս այս լինիցի 'ի կողմանէ տեսողին՝ և ոչ տեսեցեալ իրին : Դարձեալ գիտելի է , զի բազում կերպիւ ասի մէջ . նախ է մէջ
եսայ. մեղքն , որպէս ասէ Եսայի . մեղք ձեր որոշեն 'ի մէջ
59.2. ձեր՝ և 'ի մէջ ա̃յ : Եւ այս է մէջ ամբարշտաց :

հռոմ. Երկրորդն է մէջ ստեղծուածոցս . զորմէ ասէ առաքեալն ,
1.20. աներևոյթքն ա̃յ երևելի արարածովս իմացեալն
տեսանին . և այս է մէջ փիլիսոփայից :

Երրորդն է՝ մէջ օրինակի , զորմէ ասէ առաքեալն .
1.կոր. ա̃մ օրինակաւ անցանէր ընդ նոսա . և այս էր մէջ նահապետաց՝
10.11. և մարգարէից : Չորրորդն է՝ մէջ ս̃բ
սաղ.118 գրոց . զորմէ ասէ սաղմոս . յայտնութիւն բանից քոց՝
130. լուսաւորէ և իմաստուն առնէ զտղայս . և այս է մէջ
յայտ. ա̃ծաբանից : Հինգերորդն է մէջ հաւատոյ , զորմէ
2.10. ասէ տեսիլն . լեր հաւատարիմ մինչև 'ի մահ . և տաց
քեզ զպսակ . և այս է մէջ հաւատացելոց . որով լոկ
ընդ շամանդաղ տեսանեմք զա̃ծ :

Երկրորդ բաժինք հոգւոյ է՝ սիրելութիւն : Արդ՝ 'ի մէջ սիրոյ որ առաքինութիւն ; և 'ի մէջ սիրելութեան որ բաժինք , է կրկին զանազանութիւն . մինն է ըստ ունակութեան . զի առաքինութիւն է յատկապէս այն ինչ , որով ոք 'ի յորդեգրութենէ շնորհաց անցանէ 'ի յորդեգրութիւն փառաց . իսկ բաժինք է այն՝ որ տուեալ լինի 'ի վերջան զարժանն ընդ ներածիլ հարսին :

Եւ միւսն է ըստ յառաջեղելոյն . զի թէպէտ յառաջ եղեալն երկաքանչիւրոյ ուրուք եղիցի ա̅ծ. ո՛չ սակայն ըստ որում ա̅ծ. այլ՝ եղիցի յառաջեղեալ առաքինութեն ըստ այնմ՝ որ է ծայրագոյն բարի. իսկ յառաջեղեալ բաժնեաց՝ է՛ ըստ այնմ, որ է միաւորելի 'ի միոգի: Եւ ծանիր, զի հաւատ, և յոյս, ըստ լինելն և ներգործութեն, խափանեսցին 'ի հանդերձելումն. իսկ սէր, ո՛չ ըստ լինելն, և ո՛չ ըստ ներգործութե. այլ ըստ կերպին, զի բարձցի անկատարութի նորին: 1. կոր. 13. 8.

Նաև ասէ օգոստինոս, թէ հաւատոյ յաջորդեսցէ տեսութի, որով տեսանիցեմք. իսկ յուսոյ՝ երանութիւն՝ առ որ ժամանելոց եմք. իսկ սիրոյ ոչ ինչ յաջորդեսցէ. այլ և առաւել աճեսցի:

Երրորդ բաժինք հոգւոյ՝ է ըմբռնումն, որ է կալումն տեսեցելոյ և սիրեցելոյ, կամ կալումն ճշմարտի և առաջնոյ բարւոյ, և վարձուց. և այս ճշմարիտ է՝ ըստ այնմ որ ըմբռնելն առեալ լինի փոխանակ հասանելոյ, և ո՛չ փոխանակ պարփակելոյ զանչափութին ա̅յ:

Յաղագս բաժնեաց մարմնոյն հասարակաբար:

ԳԼ. ԻԵ.

Երկաքանչիւր մասն՝ ունի կատարելագոյն գոլ 'ի բոլորն իւր. քան առանձին ըստ ինքեան: Ուստի ո̅պ հոգին այժմ որոշեալ 'ի յապականացու մարմնոյ՝ իւիք կերպիւ ունի զկատարելագոյն գոլ քան միաւորեալ ընդ նմին, այսպէս և 'ի հանդերձելումն վերստին միաւորեալ ընդ անապական մարմնոյն՝ կատարելագոյն ունիցի զգոլ բացարձակապէս, քան այժմ որոշեալ. մանաւանդ՝ զի ոչ արգելցի յայնժամ 'ի մարմնոյ՝ որպէս այժմ. և առաւել՝ զի 'ի փառաւորութենէ մարմնոյն՝ ունեսցի զյատուկ ուրախութի: Արդ՝ բաժինք մարմնոյ են չորք, որոց բանականութի կամ թիւն այսպէս առեալ լինի. քանզի առայն զի կատարելապէս մարմինն հնազանդիցի հոգւոյ, և ոչ խափանեսցէ զնա 'ի ներգործութենէ փառաց՝ չորք իրք խնդրին. յորոց երկուքն վերաբերին առ զգայութին. և երկուքն առ շարժումն. Առ զգայութեն խնդրին երկու ինչ. մի՝ զի դիւրաւ լինիցի ընդունակ զգալի տեսակաց. առ որ պատրաստէ՝

յստակութիւն : Եւ միւսն , զի ոչ լինիցի ընդունակ անկարգ կրից . առ որ պատրաստէ՝ անչարչարելութիւն : Նաև առ շարժումն երկու ինչ խնդրին . մինն է , զի ներհակ ձկտմամբ՝ ոչ ընդդիմասցի շարժողին բերում , առ որ պատրաստէ արագութիւնն :

Իսկ միւսն է , զի մարմինքն ընդ որս շարժին , ոչ լիցին ընդդիմահար նմին . և առ այս պատրաստէ անօսրութիւն: Դարձեալ՝ և այլ բանականութի ըստ այսմ օրինակի . զի ըն մարդումն է՛ չորեքկին բաղադրութի :

Առաջինն է ներհակաց որակութեց , և բաղադրութիւս այս յայնժամ եղանի կատարեալ . յորժամ որակութիքն այնպէս հաւասարեսցին , մինչ զի ոչ պատերազմեսցի մինն ընդ միւսոյ , և զայս առնէ անկրելութիւն : Երկրորդ բաղադրութի է՝ նիւթոյ ընդ տեսակի . և բաղադրութիս այս յայնժամ լինի կատարեալ , յորժամ նիւթն բոլորովին յաղթեսցի 'ի տեսակէ , և ըստ այսմ կատարելութե առեալ լինի անօսրութիւնն : Երրորդ բաղադրութի է՝ գործիքական մարմնոյ ընդ հոգւոյ . և կատարելութի բաղադրութես այսպիսի է , զի ամ գործիք առանց արգելման լինիցին, և շարժիցին 'ի հոգւոյ . և ըստ այսմ կատարելութեան առեալ լինի արագութիւնն :

Չորրորդ՝ բաղադրութի է՝ մարմնոյ ընդ լուսաւոր ոգեաց , որովք շարժեսցի մարմինն 'ի հոգւոյ . և բաղադրութե այսմիկ՝ ըստ կատարեալ որպիսութեանն , պատասխանէ յստակութիւն : Երրորդ առեալ լինի բանականութի կամ թիւ նախասացելոցս ըստ յատկութեց որք դոն 'ի տարերս : Քանզի ըստ թափանցութե ջրոյ՝ առեալ լինի յստակութի . և ըստ խստութե հողոյ՝ առեալ լինի անկրելութի . ըստ նրբութե հրոյ՝ առեալ լինի անօսրութի . և ըստ շարժելութե օդոյ , առեալ լինի երագութի : Չորրորդ , առեալ լինին բաժինք այսոքիկ ըստ չորից պակասութեանց , զորս ունի մարդկային մարմինն 'ի քառից տարերաց , յորոց և բաղադրի իսկ : Քանզի ունի մարդկային մարմինն՝ 'ի հրոյ զջերմութի , և անտի զսևութիւն . 'ի հողոյ զթանձրութի . 'ի յօդոյ՝ զկրելութին. 'ի ջրոյ՝ զցրտութի , և անտի զյամրեղութի : Այլ այսոքիկ բառնին չորեք բաժնեօք մարմնոյն : Այլ Քն ընկալաւ զչորեսին բաժինքս զայսոսիկ յառաջքան զչարչարանս իւր , որպէս ասէ օգոստինոս : Զյստակութի 'ի յայլակերպիլն . զերագութի , յորժամ գնաց 'ի վերայ

ծուլին · զնրբութիւն 'ի ծննդեան · զի ծնաւ անխախտելի մնալով կուսական ամբողջութիւն մօրն ։
Զանկրելութիւն 'ի վերնատան, 'ի ժամ ընթրեաց՝ յորժամ զմարմին իւր ետ յուտել աշակերտացն · զոր իմանալի է՝ թէ անչարչարելի էր ներգործութեամբ, և Ա
ոչ ունակութեամբ · ապա թէ ոչ՝ արատաւորիւր սքանչելագործութեան ա̅ծային ։

Յաղագս բաժնեաց մարմնոյն յատկապէս ·
ԳԼ։ ԻԸ·

Առաջին բաժինք մարմնոյն է յստակութիւն ։
Այլ ծանիր, զի ասի ինչ յստակ, կրկին կերպիւ · կամ ըստ այնմ որ թափանցիկ, որպէս ասի ապակին յստակ · և կամ լուսափայլեալ · և ըստ այսմ աստղն ասի յստակ ։ Իսկ փառաւորեալ մարմինն եղիցի թափանցիկ, և լուսաւոր · ուստի ըստ երկուց եղանակաց լինիցի մարմինն յստակ ։
Քանզի երկու են որք այժմ պատճառեն զնսեմութիւն 'ի մարդկային մարմին · մինն է՝ անմաքրութիւն նիւթոյն, և միւսն է՝ պակասութիւն լուսոյն · այլ յայնժամ բարձցին երկոքեանն · այսինքն, անմաքուր թանձրութիւն, և մթութիւնն, որ է 'ի սակաւութենէ լուսոյ · վասն որոյ լինիցի և մարմինն յստակ յոյժ ։ Եւ դիտելի է, զի փառաւորեալ մարմինքն եղիցին եօթնապատիկ պայծառ քան զարեգակն՝ որ այժմ է · քանզի ասէ տրն · արդարքն փայլեսցին իբրև զարեգակն ։ մատ. 13.43.
Այլ վկայէ եսայի · և եղիցի լոյս լուսնի իբրև զարեգակն · և լոյս արեգական եօթնապատիկ իբրև զլոյս եօթանց աւուրց ։ Եւ ծանիր, զի մարմինք սրբոց ոչ հաւասարապէս լինիցին յստակ · զի լաւագոյն հոգին՝ ունեսցի զլուսաւորագոյն մարմին ։ Ուստի թէպէտ մարմինն Ք̅ի 'ի վեր քան զչափն գերազանցեսցէ զպայծառութիւն այլոց սրբոց, սակայն համեմատելով առ ա̅ծն, կարէ յստակութիւն նորա նմանիլ յստակութեան արեգական · ըստ այնմ, ձեզ երկիւղածաց իմոց՝ ծագեսցէ զարեգակն արդարութեան, այսինքն, զՔ̅ս ։ եսայ. 30.26.
մաղաք. 4.2.
Այլ պայծառութիւն սրբոց՝ կարէ համեմատիլ լուսոյ աստեղաց՝ նկատմամբ առ Ք̅ս · ըստ առաքելոյն, որ ասէ, թէ որպէս զանազանի աստղ՝ յաստեղէ յստա- 1. կոր. 15.41.

կութ՟ի , այսինքն , զի սբ՟ք աւելի կամ նուազ փայլեն՝ ըստ զանազանութեց՟ արդեանց իւրեանց:

Իսկ պայծառութի տղայոց , որք յետ մկրտութե՟ մեռանին նախ քան զհասանիլ 'ի յամս խելամտութե՟ , կարէ համեմատիլ լուսոյ լուսնի. զի որպէս լուսինն ոչ ունի լոյս յինքենէ . այլ յարեգականէ . այսպէս և նոքա ոչ ունին զփառս 'ի յատուկ արդեանց իւրեանց , այլ 'ի արդեանց Ք՟Ի . քանզի մկրտութի՟ն 'ի չարչարանացն Ք՟Ի ունի զզօրութի՟ :

Երկրորդ բաժինք մարմնոյն է՝ անչարչարելութիւն , որ պատճառի 'ի զօրութե՟է հոգւոյն կատարեալ իշխողին մարմնոյ իւրում , այնպէս մինչ զի ո՛չ յումեքէ արտաքին առնողէ կարիցէ փոփոխիլ: Դարձեալ , թէպէտ մարմինք սրբոցն իցեն բաղադրեալ 'ի ներհակաց . սակայն ներհակութիւն այն յայնժամ դարձցի յամ՟ հաւասարութի և համաձայնութի : Այլ ոմանք ասացին՝ թէ անկրականութի՟ն սրբոց պատճառեսցի 'ի բնութե՟է հինգերորդի մարմնոյ : Այլ այս ո՛չ է ճշմարիտ , զի ոչ ինչ 'ի հինգերորդ է մարմնոյ գայ 'ի նիւթական բաղադրութի մարմնոյ ստորինայնոյ:

Բայց զանազանութի՟ է 'ի մէջ անկրականութե՟ սրբոց , և ադամայ 'ի որպիսութե անմեղութեանն , և մանկանցն որք 'ի լիմբոսն . զի անկրականութիւն սրբոց լինի՝ ոչ կարելն չարչարիլ : Այլ անկրականութիւնն ադամայ՝ է կարելն ոչ չարչարիլ : Իսկ անկրականութիւն մանկանցն որ 'ի լիմբոսն , լինիցի զոչ ինչ կրել , և այս ոչ լինիցի 'ի զօրութե՟է ընդդիմանալոյ արտաքին վնասու , զոր ո՛չ ունիցեն . այլ 'ի սահմանելոյ ա՟ծային տնօրինութեանն , որ ոչ տացէ թոյլ պատահիլ ինչ նց՟ , որով կարասցեն վնասիլ : Ուստի յայտ է՝ զի այնպիսի մանկունք՝ եթէ արկանիցին 'ի հուր , յետ յարութե՟ , վնասեսցին , եթէ ոչ ընդդիմանայցէ ա՟ծային տնօրինութիւն : Այլ ոչ է այսպէս փառաւորեալ մարմնոց . որք թէ և անկանիցին 'ի դժոխս , ոչ կրեսցեն զվնաս ինչ յայնմանէ :

Երրորդ բաժինք մարմնոյ է նրբութիւն , որ բառնայ զթանձրութի մարմնոյ՝ զպատճառեցեալն 'ի բաղադրութե՟է տարրականաց որակութեց : Եւ ծանիր , զի կրկին է՝ անօսրութիւն . մինն յանդգայութե՟ մասանց ոչ կայելոց հուպ առ իրեարս , և 'ի այնպիսի անօսրութե՟ լինի մարմինն դիւրաբաժանելի . և այս ոչ լինիցի 'ի փառաւորեալ մարմինն : Եւ միւսն՝ 'ի կատարեալ յաղթութէ տեսակին , 'ի վերայ նիւթոյ. և այսպիսի անօսրութիւն է միացելոյ գոյացութեան. որպէս արեգակն սաստ անօսր. և ըստ այսմ կերպի լցի անօսր՝ փառաւորեալ մարմինն ։ Նաև գիտելի է , զի որպէս երկու ոչ փառաւորեալ մարմինք՝ ո՛չ կարեն համանգամայն լինել 'ի նոյն տեղւոջ . նոյնպէս և երկու փառաւորեալ մարմինք , ապա թէ ոչ՝ հետևէր անպատկանութիւն իմն այսինքն . զի մի փառաւորեալ մարմին մտանել կարէր 'ի մտուտնս միւսոյ փառաւորեալ մարմնոյ . և միւսն ոչ ունէր զզօրութիւն ընդդիմանալոյ ։ Այլ՝ փառաւորեալ մարմինն՝ ոչ՝ կարէ համանգամայն լինել ընդ ո՛չ փառաւորեալ մարմնոյ՝ ըն նոյնում տեղւոջ , եթէ ոչ՝ սքանչելեօք ։ Քանզի որպէս 'ի յոչ փառաւորեալ մարմինն , արգելու թանձրութին , զի մի՛ երկու մարմինք 'ի նոյնում տեղւոջ կարիցեն լինել , զի մինն ընդդիմանայ միւսոյ , այդպէս թանձրութիւս այս, զօրութբ̄ ա̄ծայնով որ գործէ սքանչելաբար՝ բառնի , զի ոչ փառաւորեալ մարմինքն՝ ո՛չ կարիցեն ընդդիմանալ փառաւորեալ մարմնոյ , և այնպէս՝ զի փառաւորեալ մարմինք՝ մտանեն ընդ ոչ փառաւորեալ մարմին ո՛չ բաժանելով զնա , այլ ներսամտելով , յնալով զանազանութիւն բաժանմանց երկաքանչիւրոց մարմնոց ։

Չորրորդ բաժինք մարմնոյն է՝ երագութիւն, որ այնքան լինիցի , որպէս ասէ օգոստինոս , մինչ զի խոկոյն ուր կամիցի հոգին՝ անդ լինիցի և մարմինն ։

Սակայն՝ որպէս լաւագոյն հոգին ունեսցի զլուսաւորագոյն մարմին , այդպէս և զերագագոյն . բայց այնպէս , զի կամք սրբոց ամենևին լցի կատարեցեալ ընդ բանականին . ուստի կամք նոցին ո՛չ երբէք յօժարեսցին յայն՝ որ ո՛չ է պարտ ։ Այլ կամք լաւագոյն հոգւոյ՝ կամեսցի բանականապէս երագագոյն շարժիլ մարմնոյ իւրոյ՝ քան զմիւսոյն ։ Եւ հոգի նուաղ փառաւորեցելոյն՝ ոչ կամեսցի մարմնոյ իւրոյ այնքան երագագոյն շարժիլ՝ որպէս միւսոյն ։ Ուստի յայտ է՝ թէ ճշմարտի 'ի համայնս ասացեալն յօգոստինոսէ , թէ ուր կամեսցի հոգին՝ անդ եղիցի խոկոյն և մարմինն ։

Այլ թէ վասն է՞ր մարմինքն են այժմ յամր . և յայնժամ երագունք . այս է պատճառն . զի այժմ 'ի մարմինս կրկին է շարժօղ , այսինքն , բնութիւն տիրօղ տարեր որ շարժէ 'ի սահմանեալ տեղին . և կամքն հոգւոյ՝ որ շարժէ անզանազանաբար առ յիւրաքանչիւր տեղի։

Արդ՝ այժմ մարմինքն են յամր, վասն ներհակ ձգտման բնութեան առկայծքն․ զի ուր առաւել տիրէ հող, բնականաբար քարշէ ՚ի վայր։ Իսկ ՚ի հանդերձելումն, բնութիւն ամենևին լիցի ենթարկեալ կամացն․ ուստի և շարժեսցի մարմինն ըստ հրամանաց հոգւոյն։

Յաղագս ոսկեղէն փոքրիկ պսակացն հասարակաբար։

ԳԼ. ԻԹ.

Ոսկեղէն պսակիկն է յատուկ խնդութիւն մտաց՝ յառաջեկեալ յիմեքէ գերազանցէ և առանձնականէ գործոյ։ Եւ գիտելի է, զի որպէս ՚ի խնդութենէ էական վարձու, որ է ոսկեղէն պսակն, արտահեղեալ լինի ՚ի մարմինն գեղեցկութիւն իմն, որ է փառք մարմնոյ․ այսպէս և ՚ի խնդութենէ ոսկեղէն փոքրիկ պսակին՝ արտահեղի գեղեցկութիւն իմն ՚ի մարմինն․ և ըստ այսմ ոսկեղէն պսակիկն ոչ միայն է ներքնապէս ՚ի միտս, այլ՝ արտահեղութեամբ իւիք փայլէ և ՚ի մարմինն։ Սակայն գիտելի է․ զի գեղեցկութիւն այնոց, որք երևեսցին ՚ի մարմինս մարտիրոսաց, ոչ կարէ ասիլ ոսկեղէն պսակիկ, զի մարտիրոսք ամենք, ոչ ունին սպիս խոցուածոց․ ոչ որք հեղձան ՚ի ջուրս, կամ սովալլուկ, և բանտարգեալք եղեալք մեռան․ սակայն ունիցին սոքա զոսկեղէն պսակիկ։ Երից սեռից մարդկանց պատկանի ոսկեղէն պսակիկն, այսինքն, մարտիրոսաց․ վարդապետաց, և կուսանաց։ Եւ այս յայտ է բազում պատճառաւ։ Նախ՝ ՚ի գերազանցագոյն գործոց երից զօրութեց հոգւոյն։ Արդ՝ գերազանցագոյն գործ բանականին է՝ քարոզութիւն ճշմարտութեան․ և գերազանցագոյն գործ ցանկականին է՝ պահպանութիւն կուսական ամբողջութեան․ և գերազանցագոյն գործ ցասմնականին է համբերելն մահու։ Ուստի յայտ է, զի վարդապետաց, կուսանաց, և մարտիրոսաց՝ պատկանի ոսկեղէն պսակիկն։ Երկրորդ, երևի թէ և բանականութեամբ սոյին ՚ի թշնամեաց՝ զորս յաղթեն ուժգին պատերազմաւ․ որք են՝ աշխարհ․ մարմին․ և դևք։ Քանզի մարտիրոսք յաղթեն աշխարհի․ կուսանք մարմնոյ, և վարդապետք՝ սատանայի․ որք ո՛չ միայն ՚ի յինքեանց, այլ՝ արտաքսեն և յայլոց սրտից․

Երրորդ՝ երեւի նոյնն՝ յաղթութ̄ք երից կրից ։
Քանզի են կիրք՝ բնաւորեալք ․ եւ կիրք ներածեալք ․
եւ կիրք հարեալք 'ի սիրոյ այլոց ։ Զբնաւորեալ կիրսն՝
յաղթեն կուսանք ․ զներածեալսն , մարտիրոսք ․ իսկ
զայնոսիկ որք 'ի սիրոյ այլոց , յաղթեն քարոզողք ։

Չորրորդ , զանազանին ոսկեղէն պսակքն ըստ այնց,
որովք ազնուապէս համաձեւանան Քի ․ քանզի Ք̄ս
էր վարդապետ՝ ըստ այնմ որ զճշմարտութիւնն մատ․
յայտնեաց աշխարհի ․ նաեւ էր մարտիրոս՝ ըստ այնմ 22․24․
որ չարչարանաց համբերեաց աշխարհի ․ նմանապէս յոհ․ 19․
էր կոյս՝ ըստ այնմ որ պահեաց զմաքրութի ։ 23․

Հինգերորդ , առեալ լինին ոսկեղէն պսակքն ըստ յոհ․ 8․46
օրինակելոյն 'ի օրէնս հինս ։ Քանզի երեք էին որք
ունէին զոսկեղէն պսակին ․ որպէս ընթերցեալ լինի
'ի գիրս ելից , այսինքն , սեղանն խնկոց ․ եւ տապանակ ելից․25․
ուխտին ․ եւ սեղանն առաջաւորութե ։ 25․եւ 37

Առաջինն՝ նշանակէ զոսկեղէն պսակին մարտիրոսաց ․ 11․
որք մատուցին զմարմինս իւրեանց 'ի վերայ սեղանոյ
չարչարանացն ։ Երկրորդն՝ նշանակէ զոսկեղէն պսակին
կուսանաց ․ քանզի որպէս տապանակ ուխտին էր
ներքոյ եւ արտաքոյ զարդարեալ ոսկւով , այսպէս կուսութիւնն
զարդարէ զհոգի , եւ զմարմին ։

Երրորդն նշանակէ զոսկեղէն պսակին քարոզողաց ․ մատ․
որք որպէս զսեղան առաջաւորութե , տան զհաց վարդապետութե 4․4․
, եւ ուսման ։ Արդ՝ գիտելի է , զի ոսկեղէն
պսակին՝ ասի փաղաքշօրէն ․ եւ այս համեմատելով
առ ոսկեղէն պսակն ։ Սորին ծանիր , զի է՝ զանազանութի
'ի մէջ ոսկեղէն պսակին , եւ ոսկեղէն փոքրիկ
պսակին , եւ արմաւենւոյն ։ Քանզի ոսկեղէն պսակն
է գոյացական վարձն , որ նմանօրէն՝ ասի պսակ ․ եւ
այս 'ի կողմանէ արդեան ․ զի ոչ պատասխանէ սեռի
գործոյն , այլ՝ արմատոյ սիրոյ ․ նաեւ 'ի կողմանէ վարձուն
․ զի նովաւ լինի մարդն հաղորդ ա̄ծութեան , եւ
հետեւաբար թագաւորականի իշխանութե ․ այլ եւ վ̄ս
կատարելութեան , զոր նշանակէ բոլորակ ձեւն ։

Իսկ՝ ոսկեղէն պսակիկն է պատահական վարձն ․ բայց Ա
ոչ իւրաքանչիւր պատահական , այլ՝ այն , որ պատասխանէ
գերազանց եւ առանձնական գործոյ ․ այսինքն ,
մարտիրոսութե , կուսութեան , եւ քարոզութե ։

Իսկ արմաւենին՝ է պատահական վարձն , որ ոչ արմատոյ
, եւ ոչ գործոյ պատշաճի , այլ կամաց ․ այսպիսի
վարձ ունէր ս̄բն Մարթինոս ․ որ ցանկայր մար-

տիրոսութեն , թէպէտ գործն ոչ էառ զկատարումն , ուստի երգեալ լինի զնմանէ . թէպէտ սուր հալածչին ոչ եբարձ զհոգին. սակայն ոչ կորոյս զմարտիրոսութեն արմաւենին : Եւ արմաւենիս այս՝ ոչ ոսկեղէն պսակ, և ոչ ոսկեղէն պսակիկ պարտի կոչիլ :

Յաղագս ոսկեղէն փոքրիկ պսակին յատկապէս :

ԳԼ. Լ.

ՈՍկեղէն պսակին , Նախ տուեալ լինի մարտիրոսաց . 'ի յորս է՝ կատարելագոյն յաղթութի զարտաքնոյ պատերազմէ . և Եբր. 11. 4 կատարելութի յաղթութեանս այսորիկ իմացեալ լինի 'ի յերկուց : Նախ՝ 'ի մեծութենէ չարչարանաց , որ 'ի մէջ ամենից արտաքուստ ներածեալ կրից՝ մահն ունի զնախագահ տեղի : Դարձեալ, ցաւ շօշափականին գերազանցէ քան զամ ցաւս . և վասն այսորիկ 'ի նմանէ Փիլ. 1. 19. է՝ փառաւորագոյն յաղթութի : Երկրորդ՝ իմացեալ լինի կատարումնական պատճառ պատերազմին , որ է՝ ինքն Քս . քանզի մարտիրոս ոչ առնէ տանջանքն , այլ պատճառն , այսինքն , մահն ընկալեալ վասն Քի :

Եւ գիտելի է , զի մարտիրոսութեն ոչ պարտի վարձ ըստ այնմ որ չարչարի 'ի յարտաքուստ, այլ ըստ այնմ, որ կամաւ համբերէ վասն անուանն Քի . զի ոչ արժանաւորիմք՝ եթէ ոչ այնոքիւք , որք են 'ի ներքս 'ի մեզ . և ոչ այնոքիւք , որք են արտաքոյ մեր . որպէս և ոչ պարտաւորիմք , եթէ ոչ այնոքիւք՝ որք Ա են 'ի ներքս 'ի մեզ : Քանզի որքան դժուարագոյն է այն զոր կրէ ոք կամաւորապէս , այնքան կամքն որ համբերէ այնմ վասն Քի , ցուցանի հաստատագոյն բևեռեալ 'ի Քս . վասն այսորիկ և գերագոյն վարձ պարտի նմա : Երկրորդ ոսկեղէն պսակին՝ տուեալ լինի կուսանաց , վասն եզական յաղթութեն, զոր ունին 'ի յիւրեանց մարմնոյ . ընդդէմ որոյ է հանապազ պատերազմ : Քանզի թէպէտ այրիքն պատերազմին ընդդէմ մարմնոյ , սակայն կատարելապէս յաղթեն կուսանք . քանզի ազնուագոյն ազգ յաղթութեն է ոչ երբէք տալ տեղի թշնամւոյ : Երդ՝ ոսկեղէն պսակին միայն պարտի կուսանաց այնոցիկ որք եղին 'ի մտի պահել զմշտնջենաւոր կուսութի . թէպէտ մտադրու-

թես

Թէ այս խնդրեսցի երբեմն, առնոյն մնալով ամբողջութեն մարմնոյ, և այն թէ ՚ի փոխմանէ կենաց գտանիցի դարձեալ ՚ի յառաջնում մաքրութեն · զի կուսութիւնն մտաց կարէ նորոգիլ, այլ ոչ մարմնոյն ։

Իսկ թէ ոք լինիցի կոյս մարմնով, նաև թէ ոչ ունիցի ՚ի միտի մշտնջենաւորապէս պահելոյ զկուսութին, առ-կայն ոչ է կարծիք որ ոչ ունիցի յատուկ ուրախութի, վասն ոչ ապականելոյ զմարմինն, ՚ի վերայ էացականի ուրախութեան · որպէս և անմեղ մանկունք խնդացեն զայնմանէ՝ որ մնացին անարատ ՚ի մեղաց · թէպէտ ոչ ունէին զժամանակ մեղանչելոյ ։

Դարձեալ գիտելի է, զի այն որ բռնութեամբ ապականի ըստ մարմնոյ՝ ընդդէմ կամաց իւրոց, ոչ կորուսանէ զոսկեղէն պսակին · որպէս ասաց երանուհին Լուցիա · եթէ ակամայ արասցես զիս ապականել, կրկնապատկեսցին ինձ վարձ առ պսակն · զոր ո՛չ է իմանալ վասն ունելոյ զկրկին պսակին, այլ՝ զի ունիցի զկրկին վարձս ։ Մինն, վասն պահեալ կուսութեն · և միւսն, վասն կրեալ անիրաւութեն ։ Նաև գիտելի է, զի կուսանաց պարտի հարիւրաւոր պտուղ, և այս՝ զի կեան երկնային կենցաղավարութեամբ · զոր նշանակէ հարիւրն · զի թիւն այն անցանէ յահեկէ առ յաջն ։ մատ· 13·23·

Իսկ այրեաց՝ պարտի վաթսնաւոր պտուղն · զի այնպիսիք պարտին կրթիլ ՚ի գործս ողորմութեն, որ նշանակի վաթսնաւորաւն ։ Իսկ զուգաւորեցելոց տուեալ լինի երեսնաւոր պտուղն, զի այնպիսեաց բաւական է լնուլ զտասնաբանեան հրամանն՝ հաւատով երրորդութեան · զի տասնեակ թիւն երեքպատկեալ՝ առնէ զերեսուն ։ յակ· 1· 21· Երրորդ ոսկեղէն պսակին է պատերազմողաց, կամ քարոզողաց, որ զկատարելագոյն ունին զյաղթութիւն ընդդէմ սատանայի, յորժամ ոք ոչ միայն ոչ տայ տեղի սատանայի մարտնչողի, այլ նաև արտաքսէ զնա ՚ի թագաւորութենէ նորին · և ոչ միայն ՚ի յինքենէ, այլ և յայլոց հալածէ զնա ։

Նաև ո՛չ է ասելի, թէ ոսկեղէն պսակին միայն յարմարի առաջնորդաց՝ որոց ըստ գործաւորութեն իւրեանց պատկանի քարոզելն, այլ և իւրաքանչիւր ումեք որ զգործս զայս արժանապէս առնուցու ՚ի կիր · քանզի առաջնորդաց ո՛չ պարտի ոսկեղէն պսակին վասն գործաւորութեանն զոր ունին առ ՚ի քարոզել, եթէ Բ ոչ ներգործութեամբ քարոզիցեն · զի ոսկեղէն պսակին ոչ պարտի ունակութեան, այլ գործոց պատերազմի, ըստ առաքելոյն որ ասէ, ոչ պսակեսցի, եթէ 2. տիմ. 2. 5. ոչ ըստ օրինի մարտիցի: Եւ ծանիր, զի քարոզելն, և ուսուցանելն, վասն զի է՛ գործ ողորմութե՟, թուեալ լինի ՚ի մէջ հոգևոր ողորմութե՟:

Յաղագս թուելոյ վերջնային խնդութիւնսն:

ԳԼ. ԼԱ.

Յետ ամ՟ի համառօտաբար թուեսցուք վերջնային խնդութիւնս. ոչ զեզականսն որք ընդ սեռին, այլ զսեռս եղականեացն: Քանզի այնքանք են մասնաւոր խնդութիւնք, զորս իւրաքանչիւրոք ունի ՚ի յերկինս, կամ ՚ի յայլս, մինչ զի միայն գիտութիւնն այ՟ ընդունեսցէ զնոսա. և այնոքիկ՝ զորս ծայրագոյն իմաստութիւնն կամի այնց դնել: Զի այնքան խնդասցէ իւրաքանչիւր որ ՚ի բարեաց այլոց, որքան ՚ի յառաւել բարւոյ իւրմէ. սակայն ոչ է՛ իմանալ զառատութե՟ խնդութեան, այլ վասն թուոյ խնդութեց. վասն զի այնքան՝ և այնչափ սաղ. 86. 3. են անդ խնդութիւնք, մինչ զի ամ՟ թուականք աշխարհիս ոչ կարեն թուել զայնս. և ոչ ամ՟ երկրաչափք չափել. և ոչ ամ՟ քերթողք՝ տրամաբանք, ճարտասանք, և ամ՟ ածաբանք՟՝ արտայայտել բանիւք. զի 1. կոր. 2. 9. զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ, և ՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր պատրաստեաց ած՟:

Արդ՝ խնդասցեն սրբքն ՚ի վեր քան զինքեանս, ՚ի տեսութե՟ այ՟. և ՚ի վայր քան զինքեանս՝ ՚ի գեղեցկութե՟ երկնի, և այլոց մարմնաւոր արարածոց:

՚Ի ներքս յինքեանս՝ ՚ի փառաւորութե՟ հոգւոյ, և մարմնոյ: Արտաքոյ ինքեանց, ՚ի ընկերակցութե՟ հրեշտակաց՝ և մարդկան: Ած՟ զամ՟ հոգևոր զգայութիւնս լցուսցէ անձառելեաւ հաճութե՟. քանզի ինքն հանդերձեալ է լինել ամ՟ հոգևոր զգայութեանց յաւաջնեդեալ: Քանզի լինի ած՟ հայելի տեսանելեաց, քնար՝ լսելեաց, մեղր ճաշակելեաց. պալասան հոտոտելեաց. ծաղիկ շօշափելեաց: Անդ՝ լինիցի պայծառութիւն լուսոյ ամառնային. բարեխառնութիւն գարնանային. առատութի՟ աշնանային. հանգիստ ձմեռնային: Անդ՝ ըստ օգոստինոսի, է՛ ճառագայթ, զոր ոչ ընդունի տեղի. է՛ հնչումն, զոր ոչ ընդունի ժամանակ.

նակ . է՛ բուրումն , զոր ոչ ցրուէ փչումն . է՛ համեղութիւն ,
զոր ո՛չ նուազեցուցանէ կերումն :
Անդ՝ որպէս ասէ օգոստինոս , տեսանիցի ա͞ծ առանց
վախճանի , սիրեսցի առանց տաղտկութեան . գովասանեսցի ,
առանց վաստակելոյ : Անդ՝ յիմարութիւն 3. Թագ.
երեւեսցի իմաստութիւնն սողոմոնի : 3.12.
Անդ՝ լիցի տգեղութիւն՝ գեղեցկութիւնն աբիսողոմայ , 2. Թագ.
անդ՝ լիցի յամրութ͞ի երագութիւնն ասայելի : 14.25.
Անդ՝ համարեսցի տկարութիւն՝ ուժեղութ͞ին սամփսոնի : 2. Թագ.
Անդ՝ կարճակեցութիւն համարեսցի՝ երկարակեցութիւնն 2.18.
մաթուսաղայի : Անդ՝ աղքատութ͞ի Դատ.
համարեսցի՝ թագաւորութիւնն օգոստոսի : 16.3.
Անդ՝ ըստ օգոստինոսի՝ ոչ ինչ վնասէ . ոչ ինչ պակասի Ծննդ.
. ոչ ինչ յաւելու . ոչ ինչ ծորի . ոչ ինչ արտաքոյ 5.27.
որում բաղձասցի . եւ ոչ ինչ ՚ի ներքս յորմէ տաղտկասցի Ղուկ.
: Անդ՝ ըստ բեռնարդոսի՝ լինիցի ա͞ծ բանականին 2.1.
լիութիւն լուսոյ . կամացն բազմութ͞ի խաղաղութ͞ե ,
մտացն՝ յարատեւութիւն յաւիտենականութ͞ե :
Եւ օգոստինոս ասէ , ո՛վ դու՝ այնմ կենաց գիրկ ա͞ծ ,
ուր է՛ կեանք առանց մահու . ուր երիտասարդութ͞ի
առանց ծերութեան , ուր՝ լոյս , առանց խաւարի
. ուր խնդութիւն՝ առանց տրտմութ͞ե . ուր խաղաղութ͞ի
, առանց տարաձայնութեան . ուր կամք
առանց ամբոխութ͞ե , ուր թագաւորութ͞ի . առանց
փոփոխման : Եւ բեռնարդոս ասէ , վարձք սրբոց է՛
այնքան մեծ , որ չափել ոչ կարէ . այնքան բազում՝
որ ոչ կարէ թուել . այնքան առատ , որ ո՛չ կարէ
սպառել . այնքան պատուական , որ ոչ կարէ արգահատել :
Եւ օգոստինոս ասէ , զոր ինչ խոստանայ ա͞ծ , Մատ.
ո՛չ կարէ ըմբռնել հաւատով . ո՛չ հասանել յուսով , ո՛չ 5.8.
պարփակել սիրով : Անդրագոյն է քան զա͞մ բաղձանս
եւ զկամս . կարելի է առնուլ , այլ անկարելի է վճառանել :
Անդ՝ ըստ օգոստինոսի , երգքն ոչ դադարին
, վարձքն ոչ պակասին : Անդ՝ որ ինչ սիրեսցի
ո՛չ լինի ՚ի բացեայ . ոչ ինչ ցանկասցի , որ ոչ լինիցի
հուպ : Երանութիւնն այն որպէս ասէ օգոստինոս , սաղ.
կայանայ յերկու իրս , այսինքն ՚ի հարկաւորութեան 83.1.
ներկայութ͞ե ա͞մ բարեաց . եւ ՚ի հարկաւորութ͞ե բացակայութեան
ա͞մ չարեաց :
Զփառաց արացանէ՝ այսպէս խօսի օգոստինոս . ո՛վ սաղ.
կենդանական կեանք , քաղցր , եւ սիրելի , եւ միշտ յիշելի 35.9.
. ուր ծայրագոյն անհոգութիւն . անհոգ հան_ յոհ. 14.
գիստ_ 21.

դարտութիւն , հանգստեան զուարճութիւն . զուարճ երջանկութիւն . երջանիկ՝ յաւիտենականութիւն . յաւիտենական՝ երանութիւն . ուր երանելի առողջութիւն . ուր առոյգ տեսութիւն . և անվախճան գովութիւն : Անդ՝ յղփութիւն փարթամութեանց . 'ի ներս հեղումն Ա հեշտութեանց համահեղումն բարեաց . և պատուոց յամենայն կողմանց : 'Ի բոլոր նախասացելոցս հաւաքեալ . զի խնդութիւնք ոմանք վերաբերին՝ առ հոգին . ոմանք՝ առ մարմինն . և ոմանք՝ առ զուգաւորեալն . զոր իւրաքանչիւր երանելի ըստ իւրոց արդեանց ընկալցի առ 'ի երջանիկ վախճան, առանց վախճանի: Զոր և մեզ շնորհեսցէ սկիզբն և վախճանն ամենից . որ է օրհնեալ յաւիտեանս :

Ամէն :

ՄԻԱՅՆՈՅ ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՏԻՒ ԵՒ ՓԱՌՔ :

Վ Ա Խ Ճ Ա Ն .

Ցանկ նշանաւորաց իրաց՝ որք պարունակին նայամիկ բոլորոշ համառօտի ա̅ծաբանականի ճշմարտութեան ։

Ա

Ագահութե̂ն սահման․ 211
Ագահն վատթարագոյն քան զա̅մն․ 211
Ագահութե̂ դստերքն․ 213
Ագահութիւնն պատճառ բազմաց չարեաց․ 212
Ագահութիւն ե՞րբ մահացու, և ե՞րբ ներելի․ 221
Ադամ ո՞պ̅ անկաւ․ 165
Ադամ դիւրին հրաման ընկալաւ․ 164
Ադամ առաւել մեղաւ, թէ Եւա․ 166
Ամպք՝ ո՞պ̅, և յո՞րժամ եղանին․ 92
Անձինք ա̅ծայինք նո՞րում իցեն հաւասարք․ 30
Անբան կենդանիքն շուտով ներընդունին զազդումն առաջնոյ շարժողին քան զմարդիկ․ 128
Անկումն հրեշտակաց․ 111
Անուանք, և բայք, և այլք մասունք բանի, զի՞արդ ոչ կարեն առասրիլ ա̅յ․ 53
Անչափութի̅ ա̅յ․ 34
Անըմբռնելի է ա̅ծ․ 35
Անհատս յիւրաքանչիւրս երեք իրք գտանին․ 28
Անհնութի̅ ա̅յ․ 33
Անհունն եռակաբար առնանի․ 34
Անթողլի ասի իմ̅ե եռաբար․ 225
Անձնիշխանն զի՞նչ․ 149
Անձնիշխանութե̂ ազատութիւն է եռակի․ 150
Անդամք անդամոց ծառայեն․ 152
Անուանք ա̅յ․ 50
Անունս այս՝ ոչի ս̅է, ո՞րպէս, և զի՞նչ․ 25
Անձինք ա̅ծայինք են հաւասարք․ 30
Անձն ՚զի՞նչ, և յորմէ է ասացեալ․ 31
Անձրեւն զի՞նչ․ 93
Անարգումն զի՞նչ, և զո՞րքանս պարունակէ․ 97
Աշխարհս ամի հետ ստեղծողին․ 17
Աշխարհս է եռակի․ 91
Աշխարհի նորոգումն, և մաքրումն, ոչ են նոյն․ 475
Աշխարհի անմաքրութիւքն վայրահակեսցին ՚ի դժոխս․ 475
Ապաշխարութիւն ո՞րպիսի պարտի գոլ․ 419
Ապաշխարութե̂ն ներգործութիւք․ 422
Ապաշխարութե̅ն են երեք մասունք․ 423
Ապաշխարութի̅ն զի՞նչ․ 417
Ապաշխարութի̅ն է կրկին․ 418
Ապաշխարութի̅ն որքան ժա-

ժամանակ տևելի է․ 418
Առնելն որ ինչ է յիւրն կողմանէ՝ պարունակէ զերիս․ 307
Առաքումն որդւոյն մէն, և որդւոյն, կրկին․ 22
Առաքել 'ի յա̄ծայինն՝ զի՞նչ․ 23
Առաքել՝ և առաքիլ՝ 'ի յա̄ծայինն՝ որ՞ոյ է․ 23
Առաջնոյ մարդոյն տրեցաւ երիս աչս․ 163
Առաջին շարժումն զի՞նչ․ 189
Առաջին սկիզբն մի միայն է․ 13
Առնչականաց յատուկն զի՞նչ է․ 31
Առաքինութեանց ա̄ծաբանականաց՝ և կարդինականաց՝ զանազանութի̄․ 315
Առաքինութիւնք կարդինալականք վասն է՞ր այսպէս ասացեալք․ 340
Առաքինութե̄ աստուածաբանութիւն զի՞նչ․ 295
Առաքինութիւնքն են կապակցեալք․ 299
Ասեմք զի̄ն զո̄յ՝ բազմապատկաբար․ 54
Ասումն է կրկին․ 92
Ա̄ծային գոլն ցուցանի․ 9
Ա̄ծ մի է․ 11
Ա̄ծ բազմապատկաբար ճանաչի 'ի մէնջ։ 36
Ա̄ծ է միայն առաջին սկիզբն․ 13
Ա̄ծ բացասականաբար ճանաչի 'ի մէնջ․ 37
Ա̄ծ ըստ չափու արարածոցն ճանաչի 'ի վերին գտնուն․ 33
Ա̄ծ տեսանելեաւ, ճաշակելեաւ, և լսելեաւ ճանաչի․ 36
Ա̄ծ եռակաբար ճանաչի․ 37
Ա̄ծ անունն, եռակաբար առնանի․ 13
Ա̄ծ 'ի մէնջ և 'ի յերանեցելոց ճանաչի զանազան կերպիւ․ 28
Ա̄ծ ո՞րպիսի կերպիւ է անչափ․ 32
Ա̄ծ է յա̄մ ուրեք․ 38
Ա̄ծ ո՞ւր էր մինչ աշխարհս ոչ էր․ 38
Ա̄ծ բազմապատկաբար է 'ի յիրս․ 39
Ա̄ծ մի՞թէ լցէ 'ի դևս․ 40
Ա̄ծային պարգևն է բազմադիմի․ 146
Ա̄ծ է պատճառ իրաց եռակաբար․ 79
Ա̄ծ վ̄է՞ր արար զմարդն մեղանչական․ 266
Աստեղաց բնութիւն․ 86
Ա̄ծաբանութիւն կրկնակի․ 52
Արիութիւնն զի՞նչ․ 345
Արիութե̄ մասունք․ 345
Արիութիւնն կայանայ 'ի հինկ իրս․ 346
Արիութե̄ օգնիչք․ 346
Արմատ մեղաց ապականէ զբնութիւն, և զանձն․ 236
Արդարացուցման ամբարշտի չորք վերախնդրին․ 434
Արդարացուցումն ամբարշտի ո՞րպ̄ եղանի․ 434

Ար֊

Արդարացուցմամբն կրկին սէր տուեալ լինի. 22
Արդարացուցման հոգւոյ վեց իրք պահանջին. 436
Արդարութիւն զինչ. 347
Արդարութե͞ն մասունք. 347
Արդարութեանն ներգործութիւնք. 348
Արդարութիւնն 'ի յորս կայանայ. 349
Արդարութ͞ի կրկնակի. 305
Արդարութիւն ա͞ծային եռակաբար առնանի. 72
Արժանաւորութ͞ի Ք͞ի. 264
Արդիւնն է եռակի: 305
Արիւն վեցիցս անգամ հեղաւ 'ի Ք͞սէ. 270
Աւետումն կուսին ընդէ՞ր եղեւ 'ի ձեռն հրեշտակի:

Բ

Բարին է բազմապատկաբար. 272
Բաժինքն զինչ. 480
Բաժինքն են կրկին. 481
Բաժինք հոգւոյ երեք են. 482
Բաժինք մարմնոյ չորք են. 485
Բարկութիւն զիա՞րդ իցէ մահուչափ, և զիա՞րդ ներելի. 220
Բարկութիւն զինչ. 205
Բարկութիւնն ունի 'զկրկին գոլ. 205
Բարկութեանն դստերք. 206
Բարկութիւնն պատճառ բազմաց չարեաց. 206
Բազմութ͞ի կրկնակի. 55
Բան բնական զինչ. 61
Բանն զինչ, և մասունք նորին ո՞րքանք. 140
Բանն եռակի. 109
Բերանոյն մեղքն. 227
Բղջախոհութիւն ե՞րբ մահուչափ. և ե՞րբ ներելի. 224
Բղջախոհութ͞ի զինչ. 215
Բղջախոհութեան տեսակք. 215
Բղջախոհութե͞ դստերք. 216
Բղջախոհութ͞ին վնասէ բազում կերպիւ. 216

Գ

Գաբրիէլ զինչ թարգմանի. 111
Գանձե՞լն մի թէ ի՞ցէ օրէն. 211
Գերազանցութ͞ի ա͞յ. 47
Գետնաշարժն զինչ. 94
Գթութե͞ պարգեւն յերիս կայանայ. 355
Գիսաւոր աստղն զինչ է. 92
Գիտութե͞ պարգեւն զինչ առնէ. 356
Գիտութիւն ա͞յ է լիակատարագունեղ: 62
Գիտութիւն ա͞յ ասի ըստ բազմաց անուանց. 63
Գիտել կարեմք զբազու͞մ այլ ո՛չ իմանալ. 137
Գործողութ͞ի 'ի ա͞ծայինն է կրկին. 64
Գործէ ա͞ծ կրկնակաբար. 80
Գործելն ա͞յ, և տեղ-

Ծռնածոց , տարբերին . 79
Գործք վեցից աւուրց ո՞ր իմանին բարոյականաբար . 81
Գործոց մեղքն որք են . 228
Գործք ողորմութե . 361
Գործք արդիւնաւորք յորմէ՛ են . 307
Գործք մահացուցեալք որպէս կենդանանան . 422
Գործոյ ո՞չ վե իցէ արդիւնաւոր՝ ո՛րքանք վերախնդրին . 308
Գործք արարեալք արտաքոյ սիրոյ առ ինչ օգտեն . 312
Գործոց սեռքն են հինգ . 170
Գովելի է ջան առաքինութե քան ջան գիտութե . 302
Գունոյն զո՛ր քան թիւս պարունակէ . 112
Գօտ , և մագօտ՝ զինչ . 464

Դ

Դարք աշխարհի . 95
Դատապարտեցելոց ողբումն զիարդ . 478
Դատապարտեցեալք մի՛թէ տեսանիցեն զփառս երանեցելոց . 478
Դատապարտեցեալք վասն էր յաւիտենականապէս պատժեսցին . 73
Դատաստան աշխարհի՝ նախկինն վասն էր ջրով, և երկրորդն հրով . 467
Դատաստանն է եռակի . 470
Դատաստանն վերջին ո՛րպիսի . 470
Դատաստանի յաւուրն որպէս երևեսցի Քս . 471
Դատաւորք ընդհանրականի դատաստանին . 141
Դատումն փիլիմնի վասն հիփոքրատէսի . 157
Դեւք ընդէ՛ր ՚ի խաւարային օդս բնակին . 113
Դժոխքն կրկնակաբար առնանի . 278
Դիւաց յատկութիք . 114
Դիտաւորութի , և յուշադրութի, տարբերին . 401
Դպրութի կենաց . 56
Դրոշմին վերախնդրին վեց . 398
Դրոշմին օգտակարութի . 399
Դրախտ երկրային . 165

Ե

Ելումն ՚ի ծածկայինս կրկին . 19
Եղանակն զինչ . 51
Եղանակ նշանակելոյ զինչ . 51
Եղանակ՝ և կերպ ճանաչելոյ . 135
Եղանակ ճանաչելոյ զած՝ ո՛րին է . 135
Եղանակք ճանաչելոյ են հինգք . 263
Եղեամն զինչ , 93
Ենոք , և եղիա ընդդէմ նեռան . 465
Ենթադատութիւն բանականի կրկին է . 341

Երանութիքն զիա՞րդ են եօթն՝ և ութն. 358
Երկինք, և երկիր, որպէս անցանեն. 475
Երկնից բնութի, և որպիսութի. 84
Երկնային մարմինք ձգտեցուցանեն, և ոչ բռնադատեն. 84
Երևակայական զօրութի. 125
Երկիւղն զի՞նչ, և տեսակք նորին. 351
Երրորդութիւն անձային եռակաքար ծանուցանի. 26
Երրորդութի բազում կերպիւ առի. 29
Երեք են հաւաքումն հաւատոյ. 322
Եւա զիա՞րդ կերպաւորեցաւ 'ի կողէն. 164

Զ

Զանութիւնն ո՞յք են որք բազմապատկեն. 12
Զանազանութի տանջանաց դժոխոց. 477
Զանցառութեան մեղք. 228
Զգայութիք հոգևորք ո՞րք են. 363
Զգայութիք մարմնաւորք հինգ. 123
Զգայութին հասարակ՝ է աղբիւր ամից զգայութեց. 124
Զգայականութիւնն զի՞նչ. 130
Զգայական շարժողական զօրութի որպէս շարժի. 130
Զմարթելեան վասն ումանց դիպուածոց ոչ պարտիմք առնել. 170
Զօրութի բնական՝ և կենդանական. 131

Է

Էութին որպիսի կերպիւ տարբերի 'ի յանձնէ. 31

Ը

Ընկերին ո՞րպէս սիրելի է. 316

Թ

Թլփատութիւնն է Քրի վասն որոյ պատճառի. 256
Թլփատել Քրի 'ի յիւրում քառակաքար. 257
Թլփատութին հոգևոր՝ կրկին. 257
Թշնամիք ո՞րպիսի կերպիւ են սիրելիք. 337
Թշնամին է կրկնակի. 338

Ժ

Ժամք բարոյականք երեք. 25
Ժամանակն զի՞նչ. 94

Ի

Ի յարտաքարշմանն երկու ներգոն ։ 136
'Ի միութեան ա՟ծայնոյ էութեան են երեք անձինք ։ 26
Իմացութիւն 'ի գործն՝ և այն՝ որ առ ի ստացեալ, տարբերին ։ 134
Իմացութին առնող, և կարելի, զինչ ։ 137
'Ի յա՟ծայինս միայն երկու սեռք գտանին ։ 30
Իրինչ լինի 'ի տեղւոջ բազմապատկաբար ։ 38
'Ի վեր քան զբնութի, զատ 'ի բնութէ, և ընդդէմ բնութե, որք են ։ 60

Լ

Լուծթի շնորհաց հնգապատիկ ։ 262
Լոյսն զինչ ։ 87
Լոյսն որ երևի 'ի շիշերի զինչ իցէ ։ 92

Խ

Խաւարումն երբ եղանի ։ 96
Խիղճմտացն զինչ իցէ ։ 145
Խիղճմտացն զինչ ստուգաբանի ։ 143
Խոստովանութիւնն զինչ իցէ ։ 426
Խոստովանութին կրկին է ։ 426
Խոստովանութին երբ է առնելի ։ 427
Խոստովանութին արարեալ 'ի մահացու մեղս, մի թէ զօրիցէ ։ 428
Խոստովանութիւնն երբ պատշաճի վերակրկնել ։ 428
Խոստովանութիւն գրովք մի թէ զօրիցէ ։ 428
Խոստովանութե որակութիք ։ 429
Խոստովանութեն օգտութիք ։ 429
Խոստովանութին որում է առնելի ։ 430
Խոստովանութեանն կնիք, և կամ հարկաւորութի ծածկելոյ ։ 431
Խոհեմութին զինչ ։ 341
Խոհեմութիւնն է եռակի ։ 342
Խոհեմութեն մասունք ։ 341
Խոհեմութե գործն զինչ է ։ 341
Խորհրդոց սահմանն զինչ է ։ 384
Խորհուրդք եկեղեցւոյ հաստատեցեալք 'ի Քսէ, և որ պիտի կնքայիւ ։ 385
Խորհրդոց նորոյ օրինին ներգործութիք ։ 387
Խորհրդոց հնոյ և նորոյ օրինի տարբերութիք 393
Խորհուրդք եկեղեցւոյ ընդէր են եօթն ։ 389
Խոտանալ սրտի մարդոյն եռակաբար առ ի ։ 67
Խրատն՝ այսինքն, խորհուրդն՝ եռակաբար առնանի ։ 357
Խրատն զինչ է ։ 373
Խրատք աւետարանականք որք են ։ 375

Ծայ

Ծ

Ծայրագունի բարութե եռակի ելմունք ․ 79
Ծանօթութիք այ̅ ․ 49
Ծիածանն զինչ ․ 93
Ծիր յարդգողին զինչ ․ 86
Ծուլութին զինչ ․ 208
Ծուլութեան դստերք ․ 208
Ծուլութին պատճառ բազմաց չարեաց ․ 209
Ծուլութին երբ մահացու, եւ երբ ներելի ․ 221
Ծնունդն ՚ի ա̅ծայինս որպէս ասի ․ 14
Ծնունդն Քի եռակի ․ 254

Կ

Կարծողական զօրութին որպէս տարբերի յերեւակայականէ ․ 123
Կարծողականի զօրութեան գործք ․ 126
Կարկուտն որպէս ծնանի ․ 93
Կախարդութին վասն է՛ր թոյլ տրեցեալ է սատանայի ․ 116
Կարգն զինչ, եւ որքանք առնա վերախնդրին ․ 443
Կարգք են եօթն ․ 444
Կարգք ամենեքեանք կիրառեցան ՚ի Քսէ ․ 445
Կարգաւորք որպիսի գոլ պարտին ․ 446
Կատարելութին բազմապատիկ ․ 296
Կարողութիք հոգւոյ շարժականի ․ 141
Կացութի առաջնոյ մարդոյ որպիսի ․ 161
Կամք այ̅ կրկնակի ․ 69
Կամն վասն է՛ր ոչ կարէ բռնադատիլ ՚ի բարւոյ ․ 142
Կամք երկու ՚ի Քս̅ ․ 266
Կեալ առանց ներելի մեղաց մի՛թէ իցէ կարելի ․ 195
Կենին յամբոխենականի արժանաւորինք ըստ համարժանւոյն ․ 318
Կիրք եռապատիկք ․ 333
Կիրք, եւ արատակիրք տարբերին ․ 268
Կնիքն զինչ իցէ ըստ սահմանին ․ 392
Կրթումն նորահաւատից՝ եւ երդմնեցուցումն վասն է՛ր սահմանեցեալք ․ 398

Հ

Համբարձումն Քի որպիսի ․ 282
Համբարձումն, վերափոխումն, եւ թռումն, տարբերին ․ 282
Համբարձաւ Քս̅ ՚ի յերկինս զիարդ ․ 283
Համբարձումն Քի ընդ է՛ր ոչ իսկոյն յետ յարութե ․ 285
Հաստատութեան կատարեցելոյ՝ երեք իրք պահանջին ․ 235
Հաղորդօղն արժանաւորապէս՝ հանդիպի բազմաց բարեաց ․ 407

Հաղորդութիւն ո՛րպիսի կերպիւ ճաշակելի է. 411
Հաղորդութեան աշխարհականաց վասն էր ՚ի ներքոյ միոյ տեսակի. 412
Հաղորդութեան խորհուրդն՝ յորո՞ց արգելեալ լինի. 412
Համաձայնութիւն կամաց մերոց առ ա՟ծային կամն, է կրկնակի. 70
Համանէտակիցք են նախկնական ստեղծմանք իրողութեանց. 81
Համանունն մեղաց. 192
Հաւատալ ա՟յ, հաւատալ ՚ի յա՟ծ, և հաւատալ զա՟ծ, տարբերին. 9
Հաղորդութեան կրկնակի նիւթ. 401
Հաղորդութեան գոյացականք են չորք. 400
Հաղորդութեան արժանապատուութի. 404
Հաղորդութեան պարմանալիք. 405
Հաւատոյ սահմանն զինչ. 316
Հաւատն՝ բազմապատկաբար առի. 317
Հաւատոյ կատարելութե վերաբերին եօթն իրք. 318
Հաւատոյ ներգործութիք. 320
Հաւատ, և յոյս, ո՛րպիսի կերպիւ տարբերին. 323
Հաւատով ճանաչի ա՟ծ ՚ի ճանապարհի աստի կենաց. 35
Հայր՝ բազմապատկաբար առի. 14
Հայր է ՚ի ա՟ծայինսն. 14
Հայր, և որդի, ո՛րպէս սիրեն զմիմեանս ոգեւորբով. 20
Հեշտութիւն կրկնակի. 193
Հերահատանումն կղերիկոսաց վասն էր ՚ի ձև պսակի. 441
Հնազանդութիւն՝ կրկնակի. 375
Հոգւոյ ախորժմունք են չորք. 130
Հոգին ունի զբազում անուանս. 120
Հոգին զինչ իցէ ըստ սահմանին. 117
Հոգւոյ ներգործութիւնք եռակի. 120
Հոգին եռակաբար օտարանայ ՚ի զգայութեց. 124
Հոգւոյ բանականի կարողութիք. 132
Հոգւոյ քանակութիք. 147
Հոգին է անմահ. 148
Հոգին ո՛չ ունի զկարգ ՚ի գործողութիւնս իւր. 146
Հոգին ո՛րպէս ճանաչէ. 146
Հոգին սակս միաւորութե ընդ մարմնոյ կրէ զբազում անհանգստութիւս. 159
Հոգացողութիւն՝ եռակի. 379
Հողմն զինչ, և ո՛րք նախադէտականք. 93
Հոլովեալ մասնկունքս, յորմէ, որով, յորում, զինչ նշանակեն. 27
Հպարտութին՝ ո՛չ է սկիզբն ամենից մեղաց: 199

Հպար-

Հայրութիւն ո՛չ տարբերի ՚ի անախտութենէ ։ 200
Հայրութեան անուանք, և աստիճանք ։ 201
Հայրութիւն պատճառ բազմաց չարեաց ։ 202
Հրեշտակաց սահման ։ 96
Հրեշտակ, և հոգի, տարբերին ։ 97
Հրեշտակաց յատկութիւնք ։ 99
Հրեշտակաց վերակացութիւնք ։ 104
Հրեշտակաց գործք, և պաշտօնք ։ 100
Հրեշտակաց շարժմունք եռակի ։ 103
Հրեշտակաց ճանաչումն՝ եռակի ։ 102
Հրեշտակականի պահպանութեան գործք ։ 106
Հրեշտակք սակս երից իրաց ծառայեն մեզ ։ 107
Հրեշտակն մի՛ թէ բորբոքիցէ զախորժակս ։ 108
Հրեշտակք ո՛րպէս խօսին ։ 109
Հրեշտակաց ո՛րքանք անկան ։ 112
Հրեշտակաց կարգք ո՛րքանք ։ 112
Հրամանքն տասնբանեան ո՛րպէս իմանին ։ 363

Ձ

Ձիւնն որպէս ծնանի ։ 93

Ճ

Ճանաչեմք զի՟մն բազմապատկաբար 483
Ճանաչելիքն են ՚ի յեռակի տարբերութե ։ 36
Ճանաչումն՝ կրկնակի ։ 122

Մ

Մտունք հաւատոյ ո՛րքանք ։ 321
Մառախուղն զինչ ։ 93
Մարմին Քի՟ վասն էր ճաշակեցեալ լինի ծածկեալ պատահմամբք ։ 412
Մարմին մարդկային ունի զնմանութիւն աշխարհի ։ 151
Մարմին առաջնոյ մարդոյն ո՛րպիսի 162
Մարմինն Քի՟ ո՛րպիսի կերպիւ է ՚ի ներքոյ նշխարին ։ 39
Մարդն ունի զկրկին վախճան ։ 480
Մարդն է եղեալ առ պատկերն այ՟ ։ 17
Մարդն վասն էր է ուղղորդ հասակաւ ։ 151
Մարդոյ յատկութիւնք ։ 160
Մարդն առ պատկեր այ՟ մանաւանդ՝ քան հրեշտակն ։ 18
Մարդոյ արժանապատուութի ։ 158
Մարդոյ առաջնոյ չորեքկին օգնականութի տրեցաւ ։ 163
Մարդոյ հնդապատիկ որպիսութի ։ 167

Մարդեղութին Քրի էր յարմար բազում կերպիւ. 241
Մարմնաւորութեն Քրի զարմանալիք. 251
Մարիամ՝ միայն զեօթն բանս խօսեցաւ. 234
Մարիամու քառակի սրբութի. 257
Մարիամու երեքկին սրբութի. 256
Մարիամ կոյսն՝ վասն է՞ր հարսնացաւ առն. 447
Մահն կրկնակի. 469
Մասնաւորք ճանաչին ՚ի մէնջ ընդհանրականօք և հակադարձեալ. 136
Մեղքն վնաս է բազմաց. 184
Մեղաց մահուչափից, և ներելեաց՝ զանազանութի. 194
Մեղաց եօթանց մահուչափից բաւականութին. 198
Մեղք մահուչափք՝ եօթն գազանաց՝ և եօթն հիւանդութեց են համեմատեալք. 199
Մեղք մահուչափք՝ չարչարանօքն Քրի բժշկին. 199
Մեղքն ունի զբազում անուանս. 186
Մեղքն զինչ. 171
Մեղքն ասի ոչինչ. 174
Մեղքն յորմէ, և յորում. 175
Մեղքն զբազում չարիս առնէ. 179
Մեղքն որպէս ծնանի ՚ի մեղաց. 180
Մեղք մահուչափի առանց ներելեաց թողանի, այլ ոչ հակադարձեալ. 439
Մեղք առ ոգին սուրբ՝ ո՞ր է անթողլի. 225
Մեղք առ ոգին սբ՝ ունի վեց տեսակս. 226
Մէջն է բազմապատիկ. 484
Մէգն զինչ է. 92
Միքայէլ որպիսի կերպիւ թարգմանի. 110
Մկրտութին Քրի է օգուտ մեզ. 259
Մկրտութին ընդէր լինի ջրով. 395
Մկրտութին եռակի. 396
Մկրտութե ներգործութիւնն. 396
Մկրտութիւն Քրի, և յօհաննու, տարբերին. 397
Մոլորականք աստեղք զինչ. 86
Մոլորականաց որակութիք և ընթացք. 86
Մոլութիւնքն ոչ են կապակցեալք. 300

Յ

Յաւիտենականութիւնն զինչ. 41
Յաւիտենական է ած. 41
Յատկացուցեալքն ածայնոց անձանց. 57
Յանդիմանութիւն եռակի. 180
Յատուկ քահանայն ըստ որում կերպի ասի. 431
Յառնեն բարիք, և չարք, այլ զանազան կերպիւ. 469

Յարութի ընդ հանրական. 468
Յարութե Քի ստուգութի. 280
Յարութին Քի զիարդ. 290
Յիսուս անուանն արժանապատուութի. 257
Յս անունն բազմապատկաբար յարմարի Քի. 258
Յիշողութիւն զինչ, և որն է տեղի նորին. 129
Յիշողութի, երևակայութի, և վերայիշողութի տարբերին. 129
Յորդորօղք զմեզ առ գործս բարիս են երեք. 291
Յոյն կրկնակի. 324

Ն

Նախադրութիս այսմ, բազմապատկաբար առնանի. 16
Նախադրութիւնս այս, առ, նշանակէ զինչ. 17
Նախադրութիւնս այս, 'ի ձեռն, զինչ նշանակէ. 21
Նախադաղափարք իրաց, և օրինակք, և բանք, ուր են 'ի յած. 54
Նախանձն երբ է մահուչափ, և երբ ներելի. 219
Նախանձն զինչ. 203
Նախանձուն դստերք. 203
Նաւաբեկութի կրկնակի. 222
Նախասահմանութի զինչ, և պատճառք նորին. 64
Նախասահմանութին, արդարացուցումն, և մեծացուցումն, ուր տարբերին. 64
Նախասահմանութիւնն որպէս օգնեալ լինի աղօթիւք. 66
Նախադիտեցեալք մի՛թէ կարիցեն արդիւնաւորիլ. 68
Ներգործութի մեղաց, և պարտաւորութի, տարբերին. 174
Նեռն որպէս յղանի. 460
Նեռան վարքն որպիսի. 461
Նեռն չորիւք հնարագիտութբ վարի. 462
Նեռան մահն. 466
Ներածել զխորհուրդ, բորբոքել, և լուսաւորել զմիտ, տարբերին. 108
Ներողութիք ո՛րպէս են օգտակարք ննջեցելոց. 459
Ներգործութիւնք զանազան կերպիւ վերաբերին առ ած. 46
Ներգործութիք հոգւոյ. 146
Ներելի մեղքն զինչ. 193
Ներելի ներգործութիւնն քառակաբար լինի մահուչափ, 294
Ներելի մեղաց ներգործութիւնք. 193
Նշխարն վասն էր յերկս մասունս բեկանի 'ի քահանայէ. 403
Նշանք բարեհաճութե են հինգք. 69
Նորոգումն աշխարհի ո՛րպիսի և զիարդ. 474
Նստիլ ընդաջմէ այ զինչ է. 185

Շար-

Շ

Շարժումն եռակի· 45
Շարժումն երկնից՝ կրկին . 87
Շնորհն սրբացուցման ո՛րպէս մեծագոյն քան զշնորհ միութ̃ե . 233
Շնորհն է բազմապատիկ . 292
Շնորհաց ներգործութ̃ի . 293
Շնորհն հաճոյարար յորմէ՛, 290
Շնորհաց արժանաւորիմք 'ի ձեռն երից նախապատրաստութ̃եց . 291

Ո

Ոգին սբ̃ է սէր . 19
Ոգին սբ̃ ո՛րպէս կրկնակաբար յառաջանայ 'ի հօրէ . 19
Ոգին սբ̃ ո՛րպէս առաքի . 23
Ոգին սբ̃ սէր հօր և որդւոյ . 20
Ոգին սբ̃ ո՛րպէս սէր՝ և պարգև ասի . 22
Ոգին սբ̃ տուաւ զանազան կերպիւ . 23
Ոգին սբ̃ ո՛պ̃ տրի . 22
Ոգին սբ̃ զանազանաբար անուանի . 25
Ոգին սբ̃ յո՛րում ժամանակի առաքեցաւ առաքեալս . 24
Ողորմութ̃ե ստուգաբանութ̃ի . 75
Ողջոյնն հրեշտակական է գովելի . 232
Ողջախոհութ̃ին զի՛նչ . 341
Ողջախոհութ̃ե պատիւն ո՛ւր կայանայ . 344
Ոսկեղէն պսակին զի՛նչ , 490
Ոսկեղէն պսակին ո՛րոց պարտի . 491
Որդին վասն էր մանաւանդ մարմնացաւ քան թէ այլոքն 'ի յանձանց ա̃ծայնոց . 243
Որդի ա̃յ ասացեալ լինի բազմապատկաբար . 16
Որդին ա̃յ է իմաստութ̃ի հօր . 16
Որդին ա̃յ է պատկեր հօր . 17
Որդին ա̃յ վասն էր ասի բան : 18
Որդւոյն ա̃յ եռակի գերապանցութ̃ի . 18
Որկրամոլութ̃ին ե՛րբ մահուչափ . 223
Որկրամոլութ̃ին զի՛նչ . 223
Որկրամոլութ̃ե՛ն դստերք . 214
Որկրամոլութ̃ին մեղանչէ բազմապատկաբար . 214
Որկրամոլութ̃ե՛ն հնարք և դեղք . 435
Որոտումն զի՛նչ . 93
Որդն դատապարտեցելոց զի՛նչ է . 478

Չ

Չարն որ՛պէս ճանաչի յա՟յ ․ 63
Չարն է եւակի ․ 172
Չարն ո՛րպէս է օգտակար ․ 172
Չարչարանացն Ք՟ի ներգործութիւնք ․ 271
Չարչարանացն Ք՟ի դառնութիւն ․ 269
Չարչարանք Ք՟ի բառնան զեօթն գլխաւոր մեղս ․ 272

Պ

Պարագայք մեղաց որ՛ք են ․ 427
Պակասութիւնք առեցեալք ՚ի Ք՟սէ ո՛րք են 268
Պատիւ աւուր կիրակէի ․ 96
Պարգեւք ոգւոյն սրբոյ ո՛րք են եօթն ։ 349
Պատիժն զի՞նչ, և որո՛ւմ պարտի ․ 364
Պաշտելութիւն զի՞նչ, և որո՛ւմ պարտի ․ 364
Պատկերն է եւակի ․ 17
Պատկեր մարդոյ ո՛րպէս է ՚ի յորդւոջ իւրում ․ 17
Պատկեր երրորդութեան ըստ որո՛ց իրաց է ՚ի մեզ ․ 19
Պարտականք եմք առբարին բազմապատկաբար ․ 366
Պատարագին դերազանցութիւն ․ 404
Պատարագին բարոյական մեկնութիւն ․ 415
Պատկերացուցութիւն մարդոյ ․ 153
Պատժոց ութն են սեռք ․ 479
Պատժիմք աստ վասն բազմաց պատճառաց ․ 74
Պարզութիւն ա՟յ ․ 46
Պահն է քառակի ․ 448
Պահլին բարին է եւակի ․ 447
Պահլին սրբելմունք ․ 449
Պտուղք հոգւոյ ո՛րք են ․ 363

Ս

Սատանայն որպիսի կերպիւ խօսի ընդ մարդոյ ․ 110
Սատանայն կրկին կերպիւ անկաւ ․ 111
Սատանայի մեղքն զիա՛րդ է անթողլի ․ 113
Սատանայի բազում անուանք ․ 114
Սատանայի խորամանկութիւն առ մարդն ․ 116
Սատանայ մի անգամ յաղթեցեալ մի՛թէ համարձակիցի յայնմհետէ փորձել ․ 116
Սուտն զի՞նչ է ․ 93

Սադայէլն որպիսի էր, և մեղք նորին զի՛նչ ։ 117
Սէրն է բազմապատիկ ։ 327
Սէրն բնական, բարոյական, և շնորհական, տարբերին ։ 327
Սէրն հաճոյական որ ՚ի մեզ յորմէ՛ իցէ ։ 20
Սէրն զինչ իցէ ըստ սահմանի ։ 325
Սէրն է եռակի ։ 21
Սէրն բազմապատկաբար սահմանի ։ 326
Սէրն է տեսակ առաքինութեց ։ 331
Սէրն բազմաց իրաց առնմանի ։ 331
Սէրն գերազանցէ զայլս առաքինութիս ։ 332
Սիրոյ ներգործութիւնք ։ 329
Սիրոյ կարգն ։ 335
Սիրելութին ըստ որում բաժինք, և առաքինութիւն, տարբերին ։ 484
Սիրել զած, և զընկերն, զինչ ։ 328
Սիրելութէ նշանք ։ 333
Սիրելին է լաւագոյն քան զսիրելն ։ 336
Սիրելին զբարեկամն, և զթշնամին, որն իցէ մեծագոյն ։ 338
Սկզբնական մեղքն՝ որպիսաբար է ՚ի մարմինն, և ՚ի հոգին ։ 186
Սկզբնականի մեղաց զանազան անուանք ։ 188
Սկզբունք իրաց են անմիջաբար յայ ։ 80
Սնափառութե եօթն դստերք ։ 200
Սնափառութիւնն երբ մահուչափ, և երբ ներելի ։ 218
Սուրբն զինչ նշանակէ ։ 25
Ստեղծուածոց եռակի մեծութիւն ։ 30
Ստեղծուած հոգևոր և մարմնաւոր զինչ են ։ 18
Ստեղծել՝ ծնանիլ և առնել՝ տարբերին ։ 79
Ստեղծուածքն ըստ որում կերպի իմանին համանգամայն ստեղծեցեալք ։ 80
Ստեղծուածն եռակի ։ 81
Ստեղծուածն մարմնաւոր է հետ ստեղծողին ։ 18
Ստեղծուածն հոգևոր է նմանութիւն ստեղծողին ։ 18
Ստեղծուածն յառաջագոյն էր ՚ի յած քան թէ յիւրեան ինքեան ։ 56
Սրբացուցումն եռակի ։ 234
Սքանչելիքն զինչ, և որքանք վերախնդրին առայն ։ 60

Վ

Վախճանն է եռակի ։ 330
Վախճանն եռակաբար առնանի ։ 34
Վերջին օծումն վասն ներելեաց և մնացորդաց մեղաց կարգեցեալ ։ 441
Վերջին օծումն երբ է վերակրկնելի ։ 442
Վերջին օծման որքանք վերախնդրին ։ 441

Վեր-

Վերնագոյն պատուին զի՞նչ, և որու՞մ պարտի ․ 364
Վերանորոգու՟մն անկման հրեշտակա՟ց ․ 113
Վիշապն զի՞նչ ․ 92

Տ

Տարաչափութիւնք մարմնաւորք մտաւորի կերպիւ են ՚ի յԱ՟ծ ․ 30
Տարրն, տարրեղէնն, և հինգերորդ էութիւնն, տարբերին ․ 81
Տարերաց որակութիւն, և բնութի՟ն ․ 90
Տեղիք՝ ուր յետ դատաստանին են բնակելոց, ո՞րք իցեն ․ 478
Տիք մարդոյ ․ 95
Տպաւորմունք որ ՚ի յօդս ․ 92
Տրամախոհութիւնն զի՞նչ ․ 126
Տրամախոհութիւնք բազումք են ՚ի մաղձոտս և ՚ի հիւանդս ․ 127
Տրոնջականն զի՞նչ ․ 143

Փ

Փառաց արքայութեան գերազանցութի՟ն ․ 494
Փորձութիւնն բազմապատիկ ․ 169
Փ ~ ձութենց հնարք ․ 168
Փ ~ սարինի երեք մասունք ․ 433
Փ ~ խոխումն է եռակի ․ 406

Ք

Քահանայապետութիւն եռակի ․ 98
Քարողելն զի՞նչ ․ 379
Քաւարանի դուռն ցուցանի ․ 432
Քաւարանի փոքրագոյն պատիժն է մեծագոյն քան զմեծագունեղ պատիժն աշխարհի ․ 454
Քաւարանի պատիժն վասն էր սաստկագունեղ ․ 454
Քաւարանի հուրն մի՞թէ իցէ մարմնաւոր ․ 454
Քաւարանի հուրն որպէս առնէ ՚ի հոգին ․ 455
Քաւարանի տեղին է կրկնակի ․ 455
Ք՟ի եռակի միաւորութի՟ն ․ 246
Ք՟ի մարդոյն բազում ներգործութիւնք պատկանին ․ 250
Ք՟ի պատկանին բազումք գերազանցութիւնք ․ 260
Ք՟ի գալուստն ընդէ՞ր ոչ եղև յառաջագոյն կամ յետնագոյն ․ 238
Ք՟ս ՚ի յղանեցմանէն էր լի շնորհօք ․ 260
Ք՟ս զո՞րս պակասութիւնս էառ ․ 268
Ք՟ս գլուխ եկեղեցւոյ ․ 261
Ք՟ս լի իմաստութեամբ ․ 263
Ք՟ս որպիսի կերպիւ է լոյս ․ 264
Ք՟ս որպիսի կերպիւ զարդա-

դանայր իմաստութե · 264
Քս ճանապարհորդ և համարմինող · 265
Քս ո՛րպիսի կերպիւ հրաժարեցաւ 'ի մեռանելոյ · 266
Քս եթէ ոչ չարչարէր իւր՝ ա՛րդեօք պակասիցիւր ծերութե · 270
Քս զո՞րս ազատեաց 'ի դժոխոց · 277
Քս ընդէր էջ 'ի դժոխս · 277
Քս, և հրեշտակք ո՛չ ունին զբաժինս · 43
Քս 'ի յերկինս աւուրս մահուան, ոչ էր մարդ. 279
Քս ո՞րքանիցս երևեցաւ յետ յարութե · 280

Օ

Օժանդակութիւնք՝ ո՛րպէս ի՛րովք, և յո՛րժամ օգտեն ննջեցելոց · 456
Օրինակն, և հայելին, տարբերին · 56

ՎԵՐՋ։